ISSN 1829 - 1864

Վավերագրեր

ՀՅ Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները

Ավագ Ա. Հարությունյան

համահայկական հանդես

VEM Pan-Armenian Journal

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները

Հովհաննես Թումանյանի դատական գործը

Համո Օհանջանյանի դատական գործը

Գարեգին Նժդեհի դատական գործը

Գարեգին Խաժակի դատական գործը

Համազասպ Սրվանձտյանցի դատական գործը

Աբրահամ Գյուլխանդանյանի դատական գործը

Հովհաննես Քաջազնունու դատական գործը

Ավետիք Սահակյանի դատական գործը

Հայ հոգեւորականների դատական գործերը

ՀՅԴ մարտական կազմակերպության անվանացանկը՝ ըստ դատական որոշման

ՀՅԴ մարտական կազմակերպության անվանացանկը

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ*

Հովհաննես Թումանյանի դատական գործը

1905-1907թթ. Ռուսաստանյան կայսրության ողջ տարածքում տեղի ունեցած հեղափոխական շարժումները ոչ ռուս ժողովուրդների պարագայում ուղեկցվում էին նաև ազգային հիմնախնդիրների առաջադրման գործընթացով: Ինչ վերաբերում է հայությանը, ապա «հեղափոխական շարժում» կոչվածը մեր դեպքում զուգորդվեց գրեթե ողջ Անդրկովկասում ընթացող հայ-թաթարական կռիվների հետ, որոնք հրահրվել էին ցարական իշխանությունների կողմից: Ուժեղացած անիշխանությանն ու կովկասյան թաթարների ջարդարարական նկրտումներին դիմակայելու համար Անդրկովկասի հայությունը արագորեն համախմբվեց ՀՅ Դաշնակցության շուրջը, որն ինքնապաշտպանական կռիվների ընթացքում ձևավորեց հայաբնակ գավառներում փաստացի իշխանություն ունեցող մարմինների մի կուռ համակարգ իր կոմիտեների, ենթակոմիտեների, զինվորական խորհուրդների ու դատական մարմինների միջոցով: Արդյունքում՝ ցարական իշխանությունների կողմից հրահրված կռիվներում Անդրկովկասի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով ստեղծված կառույցները շուտով դարձան թիրախ նույն ցարական իշխանությունների համար:

Անգամ հայ-թաթարական կռիվների ավարտից և 1906թ. սկսված՝ ՀՅԴ հարյուրակների լուծարումից հետո էլ, ի տարբերություն համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստ-հեղափոխական կուսակցությունների, ՀՅԴ-ն և նրա կողմից առաջնորդվող Անդրկովկասի հայությունը, լուրջ ուժ էին հանդիսանում: Ավելին, չնայած ցարական Օխրանայի (պահնորդություն) հետևողական ջանքերին, հայազգիների շրջանում ոստիկանական գործակալների թիվը չափազանց փոքր էր, քանի որ վերջիններս իրենց գլխավերևում մշտապես նշմարում էին

* ՀՅԴ Մեծ դատավարության թղթածրարների տպագրությունը «ՎԷՄ»-ում կրելու է պարբերական բնույթ: Հաշվի առնելով Ամենայն Հայոց բանաստեղծի ծննդյան 140-ամյակը, հրապարակման հերթականը՝ պատմական գիտությունների թեկնածու Ավագ Հարությունյանը, սկսում է Հովհ. Թումանյանի դատական թղթածրարի տպագրությունից՝ միաժամանակ ներկայացնելով համառոտ վերլուծություն-տեղեկանք՝ ՀՅԴ Մեծ դատավարության վերաբերյալ: Հաջորդ հրապարակումը ներկայացնելու է Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանի դատական թղթածրարը: *Խմբ.*

ՀՅԴ-ի պատժիչ ձեռքը: Այսպես, դեռևս 1918թ. տպագրված Վ. Ագաֆոնովի «Արտասահմանյան պահնորդություն» գրքում, ուր ներկայացվում էր Ռուսաստանից դուրս գործող ցարական ոստիկանության գաղտնի գործակալների ցուցակը, հիշատակվում էին ընդամենը երկու հայազգի գործակալներ. 1. Մինաս Սամվելով, 2. Մկրտիչ Ծատուրյան[1]:

Հասկանալի է, որ նման պայմաններում հետաղիմության գրոհն առաջնորդող Ռուսաստանի վարչապետ և փաստացի դիկտատոր Պ. Ստոլիպինը հենց ՀՅԴ-ին էր համարում ցարական վարչակարգի համար ամենավտանգավոր քաղաքական ուժն Անդրկովկասում: Նրա հիշողության մեջ դեռ թարմ էր մասնավորապես Հայաստանյայց Եկեղեցու գույքի բռնագրավման դեմ հայոց հզոր ընդդիմությունը: Ուստի, ցարական իշխանությունները 1908թ. վերջերից նախաձեռնեցին ՀՅԴ-ի ու նրա միջոցով՝ Անդրկովկասի հայ մտավորականության ընտրանու դեմ ուղղված հալածանքների, ձերբակալությունների, դատավարությունների մի լայնածավալ գործընթաց, որը պատմության մեջ մտավ իբրև ՀՅԴ «Մեծ» կամ «լիժինյան» դատավարություն՝ հաճախ նույնանալով այդ գործը վարող Նովոչերկասկ քաղաքի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով դատական քննիչ Ն. Լիժինի անվան հետ:

1908թ. տարեվերջին սկիզբ առած զանգվածային ձերբակալությունների պայմաններում ակնհայտ դարձավ, որ ՀՅԴ-ի դեմ սկսված հալածանքները օբյեկտիվորեն վերածվել են ողջ արևելահայության և առաջին հերթին՝ նրա մտավորական հատվածի դեմ ուղղված քաղաքական արշավի: Պատճառն այն էր, որ ՀՅԴ-ի շարքերում կամ նրա համակիրների թվում էին ժամանակի հայ նշանավոր գրողների և հրապարակախոսների նշանակալի մասը: Ուրեմն, ՀՅԴ-ի դեմ ուղղված հալածանքները հայ ժողովրդի լավագույն զավակների դեմ ուղղված քաղաքական հետապնդումներ էին:

Հաջորդ՝ 1909 թվականին ՀՅԴ-ն սկսեց լրջորեն մտահոգվել հետաղիմության հակահարձակման պայմաններում իր շարքերի ու Կովկասի հայ մտավորականության հանդեպ բռնարարքներից: Մասնավորապես, 1909թ. սեպտեմբերին կայացած ՀՅԴ 5-րդ (Վառնայի) Ընդհանուր ժողովի ընդունած «Յայտարարագիր Կովկասեան գործունէութեան առթիւ» փաստաթղթում նշվում էր. «Կռիւը դաշնակցական շարքերի և ընդհանրապէս կովկասահայ մտաւորականութեան դէմ՝ երկարօրէն խնամքով նախապատրաստուած, մղւում է հայ ժողովրդի տականքների աջակցութեամբ ու խրախուսանքով, յաճախ նոյն պաշտօնեաների ձեռքով, որոնք դեռ երեկ մեր կօմիտէների թոյլտուութեանն էին սպասում՝ իրենց պաշտօնատեղին երթալու համար, դաշնակցական մարմինների ու դատարանների աջակցութեանն էին դիմում և յեղափոխական դրօշակի ետևից քարշ ընկած՝ կազմակերպութեան մարտական ու գաղափարական կորովն էին գովաբանում»[2]: Միապետության դեմ պայքարում կարևորելով տարբեր կուսակցություններին համակած պասիվությունը հաղթահարելու գործը, Ընդհանուր ժողովն առաջ էր քաշում

[1] Տե՛ս Агафонов В. К., Заграничная охранка, Петроград, 1918, сс. 371, 374.

[2] Հ.Յ.Դ. Ե.-րդ Ընդհանուր Ժողով: Յայտարարագիր Կովկասեան գործունէութեան առթիւ, «Դրօշակ», Ժնև, 1909, թ. 10-11, էջ 129-130:

Ռուսաստանի սոցիալիստական ու ժողովրդավարական կուսակցությունների ջանքերի միավորման խնդիրը, քանզի «… մօտակայ գործունէութեան ծանրութեան կենտրոնը պէտք է համարել կռիւը միապետական ընդհանուր ռեժիմի դէմ, որի գոյութեամբ չափազանց դժուարին, յաճախ ապարդիւն են աշխատաւորների տնտեսական նւաճումները և անխուսափելի՝ ազգային հալածանքները»[3]:

Ուստի, իր «Որոշումներ» բաժնում Ընդհանուր ժողովն առաջարկում էր ՀՅԴ մարմիններին՝ «Նախաձեռնութիւն ստանձնել հրաւիրելու թէ Ռուսիոյ մէջ ընդհանրապէս և թէ Կովկասի մէջ մասնաւորապէս՝ ընկերվարական և ասոնց համաձայնութեամբ ուրիշ դեմօկրատիկ կուսակցութիւններու համագումար մը՝ ընդհանուր պահանջներ, տակտիկ և գործունէութեան ձևեր մշակելու համար»[4]:

Սակայն, ցարական հետադիմության ձեռնարկած հետապնդումների ու բռնությունների արդյունքում ձերբակալվել էին հարյուրավոր դաշնակցականներ, նաև՝ համակիրներ, այդ թվում՝ մտավորական, քաղաքական, մարտական գործիչներ, անգամ հոգևորականներ: Ցարական Օխրանայի կողմից կազմված այսպես կոչված «159-ի» գործի քննությունը իրականացնող Հարավային Ռուսաստանի Նովոչերկասկ քաղաքի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով դատական քննիչ Ն. Լիժինը, չնայած իր անհավասարակշիռ պահվածքին, այնուամենայնիվ, նման գործեր «թխելու» մեծ փորձ ուներ: Ուստի, վերջինիս կողմից կազմվեց հիրավի մի հսկայածավալ գործ, որն անկասկած յուրատեսակ հաշվեհարդարի նպատակ էր հետապնդում[5]:

Հիշատակության է արժանի այն փաստը, որ եվրոպական ու ռուսական առաջադեմ գործիչները զորավիգ կանգնեցին հայ մտավորականությանն ու քաղաքական առաջնորդներին: Մասնավորապես, ՀՅԴ դատապաշտպանների թվում էին Ռուսաստանում հայտնի այնպիսի իրավաբաններ, ինչպես՝ Ա. Կերենսկին (հետագայում՝ Ժամանակավոր կառավարության ղեկավար), Օ. Գրուզենբերգը (վերջինս նաև Հովհ. Թումանյանի դատապաշտպանն էր):

ՀՅԴ-ն մեղադրվում էր գործող ցարական վարչակարգը բռնի, ահաբեկչական եղանակով տապալելու ձգտման մեջ, և անխտիր բոլորը, ովքեր ՀՅԴ անդամ էին, պատժվում էին քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով (պետական հանցագործություն): Կազմված դատական գործն իր ծավալով աննախադեպ էր անգամ Ռուսաստանի նման երկրի պատմության մեջ: Նրա ամբողջական էջերը մինչ օրս իրենց ուսումնասիրողին են սպասում, քանզի այս գործի միայն մեքենագիր ամփոփ օրինակն է Դոնի Ռոստովի արխիվից Հայկոմկուսի գլխավոր քարտուղար, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի դիմումի համաձայն, 1927թ. տեղափոխվել Երևան: Այն սկզբում պահվել է Հայաստանի հեղափոխության թանգարանում, իսկ այժմ՝ Հայաստանի ազգային արխիվի ՀՅԴ ֆոնդում[6]:

[3] Նույն տեղում, էջ 130:

[4] Նույն տեղում, էջ 133:

[5] Մ. Վարանդյանը, ինչպես նաև նրան հետևելով՝ հետագա բոլոր հեղինակները, գործի ընդհանուր ծավալը նշում են 40.000 էջ, սակայն մեր ձեռքի տակ եղած դատական գործի մեքենագիր օրինակում գտանք հետևյալ հիշատակությունը. «հատոր 135, գործի թերթ 45166»: Այսինքն՝ ՀՅԴ դատական գործը նվազագույնը անցել է 45.000 էջի սահմանը, ինչը թերևս վերջնական ծավալը չէ:

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գգ. 1-6:

Հենց սկզբից նշենք, որ այս դատական գործը բաղկացած է 6 ծավալուն հատորներից և այդ շրջանակներում պարփակվող՝ ՀՅԴ ողջ դատավարության փաստաթղթերի ամփոփ, մեքենագիր պատճենն է, որի բոլոր նյութերի վերջում դրանց վավերական լինելը հաստատող ձեռագիր ստորագրություններ կան: Այսինքն՝ սա լիժինյան դատավարության փաստաթղթերի թեպետ ամփոփ, բայց վավերական տարբերակն է: Նրա ամբողջական՝ մի քանի տասնյակ հազար էջերից բաղկացած տարբերակի ճակատագիրն առայժմ անհայտ է, ուստի նշված 6 հատորյակի Երևան տեղափոխվելու փաստը ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն: Այս հատորների շրջագծում պահպանվող դատական գործը բաղկացած է 4915 էջ ընդհանուր ծավալից, բուն գործը՝ 4607 էջ, մեղադրական ակտը՝ 251 էջ, մեղադրյալների ցուցակը՝ 8 էջ, վկաների ցուցակը՝ 14 էջ, վճիռը՝ 41 էջ:

Դատական գործում զետեղված են նաև ռուսերեն թարգմանությամբ ՀՅԴ գործիչների հարյուրավոր նամակներ, հեռագրեր, թռուցիկներ, կոչեր, ինչպես նաև՝ հոդվածներ, գրքույկներ, պատմական տեսություններ: Նրանում առանձնակի տեղ են զբաղեցնում ցարական ոստիկանության ձեռքին խաղալիք դարձած չարահամբավ խմբապետ Միհրանի ցուցմունքները: Վերջինս մատնել էր ՀՅԴ Բյուրոյի անդամներին, մտավորականներին, կուսակցական գործիչներին, խմբապետներին, վրիժառուներին, կուսակցության ազդեցության տակ հայտնված ռուս պաշտոնյաներին, բարձրաստիճան պաշտոնյաների դեմ ահաբեկչություն կազմակերպողներին, կուսակցության խորհրդանշանները, կարգախոսները, ծածկագրերը, զենքի գնման և պահեստավորման ձևերն ու վայրերը[7]:

Ուստի ՀՅԴ-ի դեմ ցուցմունք տված 283 հոգանոց վկաների ցուցակը գլխավորում էին Գաբրիել Քեշիշյանը (Միհրան) և նրա գործակից Հաբեթ Վարդերեսյանը: Վկաների մեծ մասը հայեր չէին, զգալի էր ոստիկանների և դատական ոլորտի աշխատակիցների թիվը: Դատական գործի փաստաթղթերի՝ հայերենից թարգմանիչն էր վրացի Սերգեյ Նադիրաձեն (Թիֆլիսի նահանգային ոստիկանական վարչությանը կից), ձեռագրերի համեմատության փորձագետներն էին հայազգի Իվան Սրաբովը (Թիֆլիսի նահանգային ոստիկանական վարչությանը կից), Գրիգորի Մալյարովը և Եվգենի Կազակովը (Նովոչերկասկ):

Ինչ խոսք, ՀՅԴ գործունեության առումով ցարական իշխանությունները եթե անգամ կոնկրետ խնդիրներ ունեին, ապա դրանք ամենևին էլ զանգվածային դատական հետապնդման առարկա չէին կարող լինել: Քանզի, ինչպես Մ. Վարանդյանն է նկատում. «Անշուշտ, հայահալած բռնակալութեան դէմ Դաշնակցութիւնը Կովկասի մէջ կատարեր էր ծանրակշիռ ակտեր – անգամ զուտ ինքնապաշտպանական շարժումներու ընթացքին – որոնց համար մեղադրուելու էր և խստօրէն պատժուելու էր… Պատժուելու էր ոչ միայն այն պատճառով, որ յանդգներ էր զինուած վաշտերով հրապարակ գալ ջարդարար հորդաներու դէմ, այլ և անխնայ կոտորեր էր հայու արիւնով գինովցած ցարական մեծ ու փոքր պաշտօնեաները…»[8]:

Ինչևէ, ցարի հրամանով Կառավարող Սենատը Հատուկ Ներկայացուցչությամբ պետական հանցագործության գործով 1912թ. հունվարի 17-մարտի 20-ին

[7] Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հտ. Բ, Թեհրան, 1981, էջ 332:

[8] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 335:

կայացրեց իր վճիռը: Դատավորներն էին սենատորներ Ա. Ն. Կրիվցովը, Վ. Ի. Մարկևիչը, Ն. Պ. Գարինը, Վ. Յ. Բախտեյարովը, Ա. Ի. Պոլլոնը:

Դատական վճիռ կայացվեց 146 հոգու վերաբերյալ. Արշակ Մեհրաբյան, Սարգիս Մանասյան, Մինաս Բերբերյան, Համո Օհանջանյան, Ավետիք Սահակյան, Սիրական Տիգրանյան, Հովսեփ Արղության, Լևոն Թադևոսյան, Հովհաննես Թումանյան, Աբրահամ Գյուլխանդանյան, Համազասպ Սրվանձտյանց, Լևոն Աթաբեկյան, Գերասիմ Բալայան, Գարեգին Նժդեհ և ուրիշներ (հերթականությունն ըստ դատական գործի): Սրանց հիմնական «մեղքը» ոչ պակաս, ոչ ավել այն էր, որ 1905-1909թթ. մասնակցել էին ՀՅԴ գործունեությանը...:

Նրանց մեծ մասը (94 հոգի) ազատվեցին՝ համարվելով արդարացված դատական կարգով (այդ թվում՝ Մ. Բերբերյանը, Ս. Տիգրանյանը, Հ. Արղությանը, Լ. Թադևոսյանը, Հովհ. Թումանյանը, Աբր. Գյուլխանդանյանը, Լ. Աթաբեկյանը, Գ. Բալայանը, Գ. Նժդեհը): 52 հոգի դատապարտվեցին կարճաժամկետ բանտարկության և աքսորի ու անմիջապես ազատվեցին՝ արդեն իսկ բանտարկություն կրած լինելու և համապատասխան ժամկետը լրանալու պատճառով: Միայն Ս. Մանասյանը (6 տարի), Հ. Օհանջանյանը, Հովհաննես Ղազարյանցը և Արշակ Մուրադյանը (4-ական տարի) դատապարտվեցին տաժանակիր աքսորի՝ ունեցվածքի իրավունքից զրկումով: Երկու հոգի չդիմանալով բանտի զրկանքներին մահացան (Սարբաղ Խեչոն և Չիչինյանը), մեկը խելագարվեց (Հովհաննես Մեղնիկյանը): Այս ամենը դեռ քիչ էր՝ դատական գործով ծախսերի հատուցումը հավասարապես դրվեց բոլոր դատապարտյալների վրա՝ փոխադարձ պատասխանատվությամբ:

ՀՅԴ գործը «թխած» Ն. Լիժինին ևս հետագայում դատեցին, բայց հաշվի առնելով վերջինիս «վաստակը», ստիպված էին նրան պաշտոնապես հայտարարել հոգեկան հիվանդ և գործը մոռացության մատնել:

Ողջ դատավարության ընթացքում և դրա արդյունքում, ի մեծ հուսախաբություն լիժինների, ՀՅԴ-ն ոչ միայն չքայքայվեց ու չվերացավ, այլև ընդհակառակը՝ ընդամենը հինգ տարի հետո ասպարեզից հեռացավ նրան դատել փորձող ցարական ինքնակալությունը. «Վարագոյրն իջաւ դաշնակցական Գողգոթայի այդ յուզումնալից դրուագին վրայ և Ռուսիոյ ժողովուրդներուն ու ողջ քաղաքակիրթ աշխարհի առջև մեղադրեալի նստարանին վրայ բազմեցին իսկական չարագործները, քննիչներու, դատաւորներու և նախարարներու հայատեաց ու մարդատեաց խուժանը: Ոչինչ շահեցաւ Պետերբուրգի կամարիլլան: Լոկ ամօթանք ու նուաստացում: Հայ ժողովուրդի արդար դատը չմարեցաւ: Ընդհակառակն, նոր փայլ ու հմայք ստացաւ: Հ. Յ. Դաշնակցութիւնը չքայքայուեցաւ, չթուլացաւ: Ընդհակառակն, այդ ամբողջ դատավարութիւնը երկու ամիս շարունակ, աշխարհի մեծ բեմին վրայ, իր արտակարգ հանդիսութեամբ նոր, թարմ սնունդ բերաւ Հայ Մարտական Կազմակերպութեան անունին ու հռչակին»[9]:

«ՎԷՄ» համահայկական հանդեսը, հենց առաջին համարից, առանձին խոր-

ագրով, հաջորդականությամբ հրապարակելու է ՀՅԴ Մեծ կամ «լիժինյան» դատավարության գործի հատորներում պարունակվող կուսակցության հայտնի գոր-

[9] Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 340-341:

ծիչներին վերաբերող փաստաթղթերը: Հրապարակելու է, անշուշտ, ոչ թե նրա համար, որ հավատ է ընծայում նրանց ներկայացված մեղադրանքներին, այլ որովհետև այս ահռելի դատական գործի հատորներում պարունակվում է մինչ օրս անհայտ հարուստ տեղեկատվություն ՀՅԴ գործունեության տարբեր դրվագների վերաբերյալ: Իսկ ահա պատմական ճշմարտությունն ակնհայտ հերյուրանքներից ու ցարական քննիչների հնարած վարկածներից տարանջատելու գործը աղբյուրագիտական և պատմահամեմատական հսկայական աշխատանք է պահանջում թեման ուսումնասիրողներից:

Անգամ քրեական դատավարության հետ բոլորովին առնչություն չունեցած ուսումնասիրողի համար ակնհայտ է այն փաստը, որ դատավարությունը «կազմակերպված» էր բավականին հապշտապ, անասելիորեն անփույթ կերպով (հատկապես ձևակերպումների, անձնանունների, տեղանունների հիշատակման, և այլնի առումով): Մեղադրանքները ներկայացվել էին առանց իրավական լուրջ հիմնավորումների, այսպես կոչված «ըսի-ըսավ»-ների վրա հենվելով: Դրանք հաճախ ուղղակի անհեթեթ էին. օրինակ, ՀՅԴ Արևելյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջ»-ի հաջորդական անվանափոխումներից մեկը դարձած «Խարիսխ»-ի խմբագիր Արշակ Մեհրաբյանը մեղադրվում էր սոսկ դաշնակցական թերթ հրատարակելու և նրա էջերում կուսակցական բովանդակությամբ նյութեր տպագրելու համար:

Պարզորոշ կերպով երևում է, որ ՀՅԴ Մեծ դատավարությունը ցարական իշխանություններին անհրաժեշտ էր ոչ միայն ՀՅԴ-ին, այլև նրա օրինակով՝ կայսրությունում գործող այլ կուսակցություններին ահաբեկելու նպատակով: Սակայն, տեղի ունեցավ միանգամայն հակառակ գործընթացը՝ ՀՅԴ-ն ինքը սկսեց ամբաստանել ցարական վարչակարգին:

Քանի որ ՀՅԴ Մեծ դատավարության պատմությունը գրեթե ուսումնասիրված չէ, հույս ունենք, որ «ՎԷՄ»-ի կողմից սկսվող հրապարակումները հնարավորություն կտան մի օր ընթերցողի սեղանին դնել այս դատավարության ամբողջական, քննական պատմությունը:

* * *

Հովհաննես Թումանյանը թե՛ գրչով և թե՛ ազգային-հասարակական բուռն գործունեությամբ չէր կարող շրջանցել հայության կյանքում տեղի ունեցած քիչ թե շատ նշանակալից որևէ երևույթ: Նա անընդհատ թոհուբոհի մեջ էր, անգամ իր գրական-ստեղծագործական կյանքում կատարվող զոհողությունների հաշվին: Անշուշտ, Հովհ. Թումանյանը հայության համար առաջին հերթին գնահատելի է որպես բանաստեղծ, թեև ոչ պակաս բեղմնավոր է եղել նաև նրա ազգային գործունեությունը: Ահա՛ այդպիսի մի դրվագի մասին է ներկա հրապարակումը՝ նրա ՀՅԴ-ին անդամակցության և կուսակցության այլ անդամների հետ դատավարության վերաբերյալ:

Գիտական ուսումնասիրությունները[10] և Հովհ. Թումանյանի կողմից իր ընկերներին գրած ու նրանցից ստացած նամակները ցույց են տալիս, որ Ամենայն Հա-

[10] Ավելի մանրամասն տե՛ս Կարապետյան Լուսիկ, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ), Երևան, 1992, էջ 7-30: Տե՛ս նաև՝ Խուդինյան Գևորգ, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006, էջ 189-190:

յոց բանաստեղծը ի սկզբանե եղել է ՀՅԴ ձևավորման գործընթացի մասնակիցը, հաճախել կուսակցության կազմավորման մեջ առանցքային դեր խաղացած «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության ժողովներին, իսկ Հայ Յեղափոխականների Դաշնակցության ձևավորման շրջանում՝ նաև անդամագրվել կուսակցությանը: Սակայն, արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր հեղափոխական ուժերին միավորելու համար ստեղծված այդ կազմակերպության ներքին տրոհումների և ապա՝ Անդրկովկասում Ս. Դ. Հնչակյան կուսակցության գործունեության ակտիվացման պայմաններում, ամենայն հավանականությամբ իր անբաժան ընկեր Ղազարոս Աղայանի ազդեցությամբ, 1890-ականների կեսերին որոշ ժամանակ համակրել է վերջիններիս: Բայց Հայաստանյայց Եկեղեցու գույքի բռնագրավման դեմ Անդրկովկասում ՀՅԴ համառ պայքարի շրջանում՝ 1904 թվականին, Հովի. Թումանյանը ոչ միայն վերադառնում, այլև ակտիվ գործունեություն է ծավալում ՀՅԴ-ի շարքերում, մանավանդ՝ 1905թ. սկիզբ առած հայ-թաթարական կռիվների շրջանում: Նրան մտահոգում էր առաջին հերթին՝ հարազատ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման գործը, իսկ նեղ կուսակցական խնդիրների հանդեպ բանաստեղծը որոշակիորեն վերապահ մոտեցում ուներ: Հովի. Թումանյանն իր էությամբ կուսակցական չէր՝ այդ բառի կազմակերպական ըմբռնումով, նա բանաստեղծ էր՝ մեծ բանաստեղծ, որի սիրտը, սակայն, համաչափ կերպով բաբախում էր՝ արձագանքելով հայ ժողովրդի հերոսական մաքառումներին ու ողբերգական կորուստներին, ուստի չէր կարող չդառնալ իրեն գրական գործունեությունից կտրող գործընթացների մասնակիցը:

Հետագայում՝ ՀՅԴ Մեծ դատավարության շրջանում, ոստիկանական գաղտնի գործակալները Հովի. Թումանյանի մասին չստուգված տեղեկություններ էին հաղորդում՝ նրան մեղադրելով ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամներին հետապնդող գործակալների սպանության կազմակերպման, Թուրքիայից Փոթի և Բաթում զենքի տեղափոխության, ոստիկանների սպանության, և անգամ՝ կառավարության դեմ ապստամբության նախապատման մեջ[11]: Բանաստեղծին իր մեծ որդու՝ Մուշեղի հետ ձերբակալեցին 1908թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը: Հովի. Թումանյանի առաջին հարցաքննությունը կատարվել է 1909թ. հունվարի 3-ին՝ Թիֆլիսում: Թվարկելով իր անմեղությունն ապացուցող փաստերը, նա մասնավորապես հայտնում էր, որ առաջնորդվել է ոչ կուսակցական մղումով կամ «ոչ ինչոր մեկին դուր գալու համար, այլ խորը գիտակցությամբ և մաքուր խղճով, դատելով իբրև գրող-բանաստեղծ, որը ծառայում է հանուն լավ և ազնիվ գործի: Այդպես եմ ես հասկացել ժողովրդի շահերը»[12]:

Դրանցից մեկում նա մասնավորապես նշում էր. «Դուք ենթադրում եք, որ ես կարող եմ հեղափոխականների նման զենք գործածել: Իսկ ինչպե՞ս կարող էր պատահել, որ ես չօգտվեի մի այլ զենքից, իմ բանաստեղծական տաղանդից և իմ գրչից, որոնք, Դուք էլ կհամաձայնեք, ավելի զորեղ են ամեն մի ատրճանակից… Ոչ մի տեղ չե՛ք կարող դա ցույց տալ: Չե՛ք կարող, բայց, այնուամենայնիվ, ես նստած եմ բանտում…»[13]:

[11] Տե՛ս Կարապետյան Լ., նշվ. աշխ., էջ 7-30:

[12] Նույն տեղում, էջ 24-25:

[13] Թումանյան Հովի., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, Երևան, 1999, էջ 483:

Դատական գործի կապակցությամբ նա 1909թ. հունվարի 24-ին համապատասխան դիմումներ էր հղել նաև Թիֆլիսի ժանդարմական վարչության պետ Երյոմինին և Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին, իսկ մարտի 20-ին՝ Թիֆլիսի նահանգի և Զաքաթալայի օկրուգի գեներալ-նահանգապետ Մ. Լոզինա-Լոզինսկուն[14]: Մասնավորապես, Ի. Վորոնցով-Դաշկովին նա հայտնում էր. «Իմ ամբողջ հասարակական գործունեությունը կայանում է նրանում, որ հայ-թուրքական խառնակությունների ժամանակ 1905-1906թթ. իմ հայրենիքում՝ Բորչալուի գավառի Լոռու շրջանում, ես օգնել եմ մեր գավառի պետերին և ուրիշ պաշտոնական անձանց, իրենց իսկ խնդրանքով, և միշտ իրենց գիտությամբ, ես ջանացել եմ բոլոր միջոցներով կանխել խռովություններն ու արյունահեղությունը: Եվ իմ հայրենիքը ամենախաղաղ անկյուններից մեկն է եղել ամբողջ Կովկասում, միակ տարածաշրջանը, որը խաղաղության սպիտակ դրոշ բարձրացրեց և խաղաղ մնաց խառնակությունների և անկարգությունների ամբողջ ընթացքում»[15]:

ՀՅԴ դատավարության ժամանակ Հովհ. Թումանյանի դեմ ցուցմունքներ էին տվել Ղազախի շրջանի թաթարները (որ իբր նա գլխավորել է Բորչալուի գավառի ՀՅԴ կառույցը):

Ի դեպ, հետաքրքրական է, որ քննչական գործում պահպանվող ՀՅԴ «Անտառապատի» կոմիտեի զենքի ընդունման-բաժանման մատյանում գրված էր. «Հովհ. Թում. – պարտքը 5 փութ ավազի (ըստ քննիչի՝ վառոդ) – 136 ռուբլի, Հովհ. Թում. – 10 ռուբլի բերդան և 1 բրաունինգ փամփուշտով»: Ուշագրավ է նաև այն փաստը, որ հայտնի մատնիչ խմբապետ Միհրանի վկայությամբ, Թումանյանը եղել էր ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեի անդամ[16]:

Ըստ Հովհ. Թումանյանի դեմ հիմնական ցուցմունք տվող Իգահատ (Այգեհատ) գյուղացի Հարություն Շահվերդովի վկայության՝ այս գյուղում (Սիմոն Զավարյանի ծննդավայրը) բանաստեղծի հիմնած ՀՅԴ կառույցի գործունեությանն աջակցել է Ղազախի շրջանում ՀՅԴ մարտական ուժերի հրամանատար Սևքարեցի Սաքոն (Սարգիս Ծովիանյանը): Ի դեպ, դատական գործում նրա անուն-ազգանունը աղճատված կերպով նշվում է իբրև «ոստիկանության կողմից հետախուզման տակ գտնվող, Ղազախ գյուղից Սարգիս Սովյան», ով 1905թ. օգոստոսի կամ հոկտեմբերի 12-ին ժամանել է Իգահատ, բնակվել մարտական ջոկատի պատասխանատու Արտեմ Քոչարյանի տանը, սակայն գյուղապետ Արշակ Փերիխանովը մատնել է նրան և ձերբակալվելուց խուսափելու համար Սարգիսը հեռացել է գյուղից: Արժանահիշատակ է այն փաստը, որ մատնիչ գյուղապետի պատժիչ հատուցումը չուշացավ. նա սպանվեց (ըստ դատական գործի՝ Հովհ. Թումանյանի և Ա. Քոչարյանի կարգադրությամբ), ավելին, բանաստեղծը Սևքարեցի Սաքոյի մատնիչին սպանելու համար անգամ «Վանո Զավարովին երեք գծանի հրացան էր տրամադրել»[17]: Արժե նշել, որ դրանից հետո, 1906թ. մարտին «կուսակցության հա-

[14] Մանրամասն տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ, հտ. 10, ռուսերեն լեզվով՝ էջ 65-66, 66-67, 71-76, հայերեն թարգմանությունը՝ էջ 484-485, 486-487, 490-494:

[15] Տե՛ս Թումանյան Հովհ., ԵԼԺ, հտ. 10, էջ 486:

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 116-117:

[17] Տե՛ս նույն տեղում, թթ. 428-429:

մակիրների կողմից գյուղապետ ընտրվեց կուսակցության անդամ Արամ Աբովյանը, ով գյուղում հիմնեց զենքի վերանորոգման կուսակցական արհեստանոց»[18]:

Մեկ ուշագրավ փաստ ևս: Ըստ նույն Հ. Շահվերդովի, նույն շրջանում իր հարազատ գյուղ է ժամանել է նաև ինքը՝ Սիմոն Զավարյանը, քրոջ՝ «Մարիամի» (Մարո Մելիքի Զավարյան-Մատինյան) հետ, ովքեր ՀՅԴ անունից բնակիչներից ընդունում էին խնդրագրեր, բողոքներ, քննում նրանց գործերը և լուծում տալիս՝ արգելելով դիմել պետական դատարաններ ու ռուսական իշխանություններին[19]:

Մեկ հետաքրքիր փաստ ևս: Հովի. Թումանյանը միջնորդել էր, որպեսզի Ղազախի գավառում իր հաշտարար գործունեության առումով հարցաքննեն ցարական պաշտոնյաներ Շանշիևին և Ռյազանովին, ինչպես նաև՝ Լոռվա տանուտերներին[20]: Սակայն, դա Ն. Լիժինին չբավարարեց, քանզի նրա համոզմամբ բանաստեղծը հաշտարար գործունեություն ծավալել էր իբր՝ նրա համար, որ հայ-թաթարական ընդհարումները խանգարում էին հեղափոխական գործունեությանը, և դիտմամբ էր անդամակցել հաշտարար հանձնաժողովին, որպեսզի թաթարներին մղի կռվել ռուս կառավարության դեմ: Ավելին, ըստ քննիչի՝ Հովի. Թումանյանի հաշտարար գործունեությունը «բոլորովին չի բացառում նրա մասնակցությունը ՀՅԴ մեջ»[21]: Սա, անշուշտ, Ն. Լիժինի հիվանդ երևակայության արգասիքն էր:

Ակնհայտ է նաև, որ ստորև հրապարակվող իր ցուցմունքներում Հովի. Թումանյանը չի խնայել Լոռու գյուղերում բռնի հանգանակությամբ զբաղվող խմբապետ Միհրանի զինվորներին՝ նրանց հաճախ տալով «թալանչիներ» բնորոշումը, իսկ ահա բուն դաշնակցականների՝ Սիմոն Զավարյանի, Սևքարեցի Սաքոյի և այլոց մասին լռել է ու հետևողականորեն քողարկել նրանց գործունեության մանրամասները և դրանում իր սեփական մասնակցությունը: Դա միանգամայն հասկանալի է, քանի որ 1907թ. կայացած ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովը, խստագույնս դատապարտելով խմբապետ Միհրանի գլխավորած «Ժամանակավոր զինվորական խորհուրդ» ապօրինի մարմնի գործունեությունը, նրա անդամներին արտաքսել էր կուսակցության շարքերից:

Չնայած դրան՝ հիմնվելով տեղի մատնիչների ու միհրանականների ցուցմունքների վրա, մեղադրական եզրակացության մեջ Հովի. Թումանյանը ներկայացվում էր որպես ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեի անդամ, ով 1906թ. Իգահատ գյուղում կազմակերպել էր կուսակցական կոմիտե, իրականացրել ստիպողական դրամահավաքներ գյուղի բնակիչներից և անգամ … կուսակցության հանձնարարությամբ շրջելով Ղազախի գավառում՝ մահմեդական բնակչությանը խռովարարության կոչ է արել, խոստանալով նրանց ՀՅԴ աջակցությունը զենքով մատարարելու տեսքով[22]:

Վերջին անհեթեթությունը, անկասկած, ցարական իշխանությունների յուրահատուկ փոխվրեժն էր Հովի. Թումանյանից, ով իրոք, հարազատ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը զուգահեռ, հանդես էր գալիս նաև հայ-

[18] Տե՛ս նույն տեղում, թթ. 429:

[19] Տե՛ս նույն տեղում, թթ. 429:

[20] Տե՛ս նույն տեղում, թթ. 4426, 4427, 4499:

[21] Տե՛ս նույն տեղում, թթ. 4594, 4595:

[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 243:

թաթարական ընդհարումները կասեցնողի՝ խաղաղարարի դերում: Հովի. Թումանյանի այս հաշտարար առաքելությունը «խփում էր» ցարական իշխանությունների հիմնական խաղաքարտը՝ հայ-թաթարական ընդհարումների կազմակերպման միջոցով «բաժանիր, որ տիրես» սկզբունքի կենսագործումը: Ուստի, հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ Հովի. Թումանյանը մի կողմից՝ մեղադրվում էր իբրև ՀՅԴ «ահաբեկիչ-մարմնի գործադիր ահաբեկչական խորհրդի անդամ» (տե՛ս Մեղադրական եզրակացությունը), իսկ մյուս կողմից էլ՝ ցարական իշխանությունների դեմ ուղղված «հայ-թաթարական խռովությունների» ջատագով, ինչն ավելի քան անհեթեթություն է: Այս ամենը ցույց է տալիս, որ ցարական իշխանությունների համար ամենաատելի գործիչները նրանց խորքային նպատակներն ըմբռնող Հ. Թումանյանի նման անհատներն էին:

Հովի. Թումանյանի Մետեխում անցկացրած բանտային կյանքի ու հոգեվիճակի պատկերացման առումով ուշագրավ է ազատվելուց հետո իշխանուհի Մարիամ Թումանյանին գրած նրա նամակի հետևյալ հատվածը. «... ես ունեի այն, ինչ որ ամենից էական է – հոգու լիակատար հանգստություն, միշտ և անվերջ հանգստություն ու համարձակություն, երբ գործ ունեի հետները: Ես գիտեի, որ ոչ մի հանցանքի բնավորություն ունեցող հանգամանք, թեկուզ ամենաչնչին, չեն կարող դեմս բերել, այնինչ ես նրանց առջև կդնեմ անթիվ փաստեր, թե ինչպես եմ ես վարվել այն ժամանակ, երբ ամեն մարդ թողնված էր իր խղճին ու իր հասկացողությանը, վերջապես այն ժամանակ և այն երկրում, ուր ես այնքան մեծ ազդեցություն ունեի՝ չէ որ ասված է – իշխանություն տուր ու փորձի մարդու հոգին: Ես համարձակ կարողանում էի ասել ամեն բան, ինչ որ չի կարող ասել մեղավոր մարդը կամ չպետք է ասի»[23]:

Ինչևէ, 1909թ. հունիսի 13-ին Հովի. Թումանյանը ազատվում է բանտից իբր՝ գործը մանրամասն քննության ուղարկելու պատճառաբանությամբ: Սակայն նրա նկատմամբ շարունակվեց ոստիկանական խիստ վերահսկողությունը: Ոստիկանները «հանգիստ» չէին գտնում, քանզի բանաստեղծը նորից ազատության մեջ էր: Այդ իսկ պարզ պատճառով՝ 1911թ. հունվարի 19-ին «Հորիզոն»-ի խմբագրատունը խուզարկվեց, Հովի. Թումանյանը կրկին բանտարկվեց: Նրա տունը ևս չորս ժամ խուզարկվեց՝ զենք և գաղտնի նամակագրություն էին փնտրում, քանզի ըստ գաղտնի գործակալների իբր՝ Հովի. Թումանյանն էր տնօրինում Թիֆլիսում կուսակցական զենքի պահպանման գործը և իր տանը պահում ՀՅԴ գաղտնի գրագրությունը: Ինչևէ, ոչինչ չգտնելով՝ Հովի. Թումանյանին մեկ օրից բաց թողեցին[24]:

Այս էլ քիչ համարվեց՝ Ռուսաստանի կառավարական սենատի կարգադրությամբ Հովի. Թումանյանը 1911թ. հոկտեմբերի 31-ին կրկին ձերբակալվեց և տեղափոխվեց Պետերբուրգ, և միայն հատուկ դատական ատյանում անպարտ ճանաչվելով՝ 1912թ. մարտի 20-ին ազատվեց:

Հարց է առաջանում՝ ինչո՞վ էր պայմանավորված նման «հատուկ ուշադրությունը» մեծ բանաստեղծի նկատմամբ, քանզի քննիչների համար պարզ էր, որ նա կուսակցական ֆունկցիոներ չէ՝ այդ բառի իսկական իմաստով: Կարծում ենք, այստեղ

[23] Թումանյան Մարիամ, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 141:

[24] Կարապետյան Լ., նշվ. աշխ., էջ 27-28:

վճռական դեր էր խաղում Հովի. Թումանյանին որպես հայ ժողովրդի մեծ սերն ու համակրանքը վայելող անձի, հնարավորինս նեղելու, ստորացնելու, կոտրելու ձգտումը, ինչի համար նրա կուսակցական պատկանելությունը հարմար առիթ էր:

Ուստի, Հովի. Թումանյանն իր հերթին ընտրել էր ՀՅԴ գործունեության դրվագներից սահմանազատվելու պաշտպանական մարտավարությունը: Այս կապակցությամբ Արշակ Ջամալյանը հետագայում գրած իր հուշերում վկայում է. «Թումանյանը մինչև Հ. Յ. Դ. դատի վերջը պաշտօնապէս համարւում էր դաշնակցական: Թէ ե՛րբ է մտել նա մեր կուսակցութեան մէջ – ինձ յայտնի չէ: Սակայն, գիտեմ, որ նա 1905թ. Կովկասեան առաջին Ռայոնական ժողովին (ապրիլ) մասնակցում էր իբրև Թիֆլիսի, կամ «Մեծ Քաղաք»-ի Կենտրոնական Կոմիտէի անդամ»[25]: Օրակարգի վրայ դրված ծրագրային և կազմակերպչական լուրջ խնդիրներ նրան բնավ չէին հետաքրքրում. «Միակ խնդիրը, որ նրան զբաղեցնում էր այդ ժողովում՝ դա հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդիրն էր»[26]:

Նա վկայում է նաև, որ նման պաշտպանական մարտավարություն ընտրելու պատճառով դատից հետո «Կովկասեան Ռայոնական ժողովի» թէ «Մեծ Քաղաք»-ի Կենտրոնական Կոմիտէի որոշումով – Թումանեանը, մի քանի ուրիշ ընկերների հետ միասին, հեռացւեց Դաշնակցութիւնից: Պատճառն այն էր, որ նա, դատավարութեան ժամանակ, ուրացել էր իր դաշնակցական լինելը: Այն ժամանակ բոլշևիզմի բերած բարոյական ըմբռնումները դեռևս չէին աղտոտել մարդկանց հոգիները, և կուսակցական ինքնութիւնը չխոստովանելը ծանր յանցանք էր համարւում յեղափոխականների աչքում...

Դաշնակցութիւնից հեռացվելուց յետոյ ևս Թումանեանը իր բոլոր համակրանքներով մնաց Դաշնակցութեան և դաշնակցականների հետ: Նա օրն ի բուն մեզ հետ էր և ազգային-քաղաքական բնաւորութեամբ որևէ հարց ծագելու դէպքում անմիջապէս մեր խորհրդին և աջակցութեան էր դիմում: Ուրիշ կերպ լինել չէր կարող: Որովհետև Թումանեանի հայրենասիրութեամբ պայմանաւորած ազգային մտահոգութիւնները – թիւրքահայ դատ, հայկական ինքնապաշտպանութիւն, ազգային մշակութային արժէքների սատարում եւն – միմիայն Դաշնակցութեան մէջ և դաշնակցականների կողմից կարող էին կենդանի արձագանգ գտնել»[27]:

Այսպիսով, ՀՅԴ-ն հիմնվելով իր անխախտ նորմերի վրա, չի ներել անգամ Հովի. Թումանյանին, որը դրանից հետո էլ մնաց կուսակցության ջերմ համակիրը, նրա գաղափարների քարոզիչը, խմբագրեց ՀՅԴ «անպաշտոն-պաշտոնաթերթ» «Հորիզոնը», բայց մնաց շարքերից դուրս:

Ի դեպ, ուշագրավ է այն հանգամանքը, որ Ա. Ջամալյանը որպես իր այս եզրակացության լրացուցիչ փաստարկ հիշատակում է բոլշևիկ գրականագետ Պողոս Մակինցյանի հետևյալ կարծիքը. «Թումանյանը դուրս է գալիս Դաշնակցությունից, բայց իր ողջ աշխարհայեցողությամբ, իր ազգային մտայնությամբ և ներքին զգացողությամբ մնում է դաշնակցական ընդմիշտ»[28]:

---

[25] Ջամալեան Արշակ, Ամենայն Հայոց Բանաստեղծը, «ՎԷՄ», Փարիզ, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, թ. 1, էջ 21-22:

[26] Նույն տեղում, էջ 22:

[27] Նույն տեղում, էջ 23:

[28] Տե՛ս «Նոր Ուղի», Երևան, 1929, թ. 2-3, էջ 200:

Ինչ խոսք, իր կուսակցության անցյալը լավ իմացող Ա. Ջամալյանին չհավատալու հիմքեր չենք տեսնում, իսկ ահա՝ Պ. Մակինցյանի դիպուկ բնորոշումը ապացուցվել է Հովի. Թումանյանի համար հիմնական՝ գրական գործունեության ընթացքում: Քանզի մեծ բանաստեղծի ողջ ստեղծագործությունը շնչում էր այն գաղափարներով, որոնց գործնական իրականացման համար 1905-1907թթ. հեղափոխության շրջանում նա ժամանակավորապես մխրճվեց իր համար ոչ այնքան հարազատ քաղաքական գոր - ծունեության մեջ:

Այսպիսով, ցարական իշխանությունների կողմից կազմակերպված և հիմնականում 1908-1912թթ. տևած ՀՅԴ հալածանքներին ու դատավարությանը՝ տխրահռչակ քննիչ Ն. Լիժինի անմիջական հսկողությամբ, «մասնակցեց» նաև Հովի. Թումանյանը՝ որպես 159 մեղադրյալներից մեկը: Ցարն ապարդյուն կերպով փորձեց դատել բանաստեղծին, այդպես էլ չհասկանալով, որ Հովի. Թումանյանի «դատը» արդարացիորեն պատմությունն է կատարել՝ նրա համար վճռելով անմահ փառք հայ և համաշխարհային պոեզիայի անդաստանում:

ՀՅԴ Մեծ դատավարության հարուստ փաստաթղթերի հրապարակումը սկսելով Հովհաննես Թումանյանի դատական գործից, **նախ և առաջ**՝ հաշվի ենք առնում բանաստեղծի ծննդյան 140-ամյակի փաստը, ինչը մնալու է մեր ուշադրության կիզակետում ողջ 2009 թվականի ընթացքում: **Երկրորդ**՝ Հ. Թումանյանի դատը միայն ՀՅԴ-ի դատավարության անբաժանելի մասը չէր, այլև ողջ հայ ժողովրդի դեմ ուղղված ակնհայտ մարտահրավերը և վերջապես՝ **երրորդ**, սույն հրապարակումը թույլ կտա ավելի ամբողջական ու հստակ պատկերացում կազմել Հովի. Թումանյանի՝ ՀՅԴ կազմակերպության մեջ հայ-թաթարական կռիվների շրջանում ծավալած գործունեության, Լոռու և Ղազախի հայկական գյուղերի ինքնապաշտպանության կազմակերպման աշխատանքների՝ մինչ օրս անհայտ դրվագների մասին:

Հովի. Թումանյանի դատական գործի հետ կապված փաստաթղթերը հրապարակում ենք արխիվային բնագրին հավատարիմ: Հաշվի առնելով նման անհրաժեշտությունը, կատարել ենք միայն լեզվաոճական բնույթի որոշ խմբագրական շտկումներ (ռուսերեն տեքստը անտրամաբանական կերպով խրթին ու հակասական է), ուղիղ փակագծերի մեջ առնված բացատրական բառերը մերն են, իսկ ծանոթագրությունները տրված են տողատակերում: Հուսով ենք, որ հրատարակվող փաստաթղթերը օգտակար կլինեն Հովի. Թումանյանի կյանքը և գործունեությունը ավելի խոր ու ամբողջական կերպով ուսումնասիրելու համար:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF THE ARMENIAN REVOLUTIONARY DASHNAKTSUTYUN

Judical Case of Hovhannes Toumanyan

Avag A. Haroutyunyan

ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄ

1909 թվականի մարտի 13-ից մինչեւ ապրիլի 20-ը Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի.

Բ. ԱՀԱԲԵԿԻՉ-ՄԱՐՄՆԻ ԳՈՐՇԱԴԻՐ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

130. Թումանյան Հովհաննես Տեր-Թադևոսով - կուսակցության [ՀՅԴ] նշանավոր անդամ, բոլոր կոմիտեներում մասնակցություն ունեցած: Նրա 1907թ. հուլիսի 15-ի N. 7546 հեռագիրը, Թիֆլիսից Ղարաքիլիսա, կուսակցության անդամ Սերգեյ Եդիգարովին[29]՝ «կարգադրություն անել» [նշումով], հուլիսի 23-ի N. 9594 հեռագրով, Թիֆլիսից Մանգլիս, [ՀՅԴ] Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտեի գլխավոր ահաբեկիչ «Արտյուշը»[30] հարցնում է Թումանյանից կուսակցության անդամ Զարգարյանցի[31] գտնվելու վայրի մասին և խնդրում է հաղորդել «Խարիսխ»[32] կուսակցության հասցեով, երբ է վերջանում Վահրամ Նալբանդյանցի[33] կալանքի տակ մնալու ժամկետը: Օգոստոսի 2-ի N. 37 հեռագրում, Մանգլիսից Պյատիգորսկ, Թումանիանը[34] խնդրում է կուսակցության անդամ Բուդուգովին[35] փոխանցումով ուղարկել 200 ռուբլի Թիֆլիս՝ հրատարակության համար (գործի թերթեր NN. 1012, 1017, 2205, 2205 դարձերես, 5203, 5203 դարձերես):

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թ. 339:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1909 թվականի մայիսի 26: Քաղաք Թիֆլիս: Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության օրենսգրքի 403-405-րդ հոդվածների հիման վրա որպես մեղադրյալ հարցաքննեց ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

Իմ անունը, հայրանունը և ազգանունը - Հովհաննես Տեր-Թադևոսով Թումանյան, 40 տարեկան եմ, իմ կոչումը - Թիֆլիսի նահանգի տոհմական ազնվական, իմ մշտական բնակության վայրը - քաղաք Թիֆլիս, Բեհբութովյան փողոց, N. 44, իմ ծննդավայրը - Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Դսեղ գյուղ, դավանանքս - հայ-գրիգորյան, գրագետ եմ, ամուսնացած եմ, իմ զբաղումունքը - բանաստեղծ-գրականագետ, ունեմ անշարժ սեփականություն Շուլավեր և Դսեղ գյուղերում՝ տներ, այգիներ և վարելահողեր, հատուկ նշաններ չունեմ, զինվորական պարտքս կատարել եմ, քննության տակ չեմ գտնվում, դատված չեմ:

Ներկայացված հարցերին. [ստորև շարադրվում են Հովի. Թումանյանին քննիչի կողմից ներկայացված մեղադրանքները]

Ճանաչում եմ ես ինձ մեղավոր[36] այն բանում, որ ես պատկանել եմ 1905-1908 թվականներից[37] Ռուսական պետության մեջ ձևավորված «Դաշնակցու-

[29] Սարգիս (Սերգեյ) Փաշոյի (Պողոսի) Եդիգարյանը կուսակցական գործիչ էր, զբաղվում էր Թիֆլիսի «Հերմես» տպարանում ՀՅԴ գրականություն հրատարակելով: Ձերբակալվել է լիժինյան գործով:

[30] «Արտյուշը» Արտեմ Ստեփանի Քոչարյանն է: Նրան որպես ՀՅԴ անդամի մատնել էին խմբապետ Միհրանը և Հ. Շահվերդովը: Ըստ լիժինյան գործի «ահաբեկիչ» պիտակով մեղադրվողները իրականում՝ ինքնապաշտպանության գործի կազմակերպողներն էին: «Արտյուշը» Մեծ Ղարաքիլիսայում (ներկայումս՝ Վանաձոր) ՀՅԴ զենքի ընդունման-բաշխման պահեստի վարիչն էր, այսինքն՝ ամենայն հավանականությամբ, ներգրավված էր ՀՅԴ Զինական ֆոնդի («Զինֆոն») գաղտնի աշխատանքների մեջ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 243: Արտեմ Քոչարյանը ձերբակալվել է լիժինյան գործով ու նստել է Ռոստովի բանտում իր եղբոր (Սարգսի) հետ: Ի վերջո, ապացուցվեց, որ նրա դեմ վկայություններ տված Հ. Շահվերդովի ցուցմունքները «աննորմալ և կեղծ» են: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թթ. 4402, 4403, 4444:

[31] Դատական գործում հիշատակվող Զարգարյան/g/-ը Զարգարյան Արիստակեսն է՝ Ռուստեմը (1864-1935) – մանկաբույժ, հասարակական գործիչ: Գրել է պատմվածքներ և վոդևիլներ՝ զոկերի բարբառով: Եղել է Հովի. Թումանյանի մտերիմ բարեկամներից մեկը: 1910թ. ընտրվել է Հայոց հրատարակչական ընկերության նախագահ:

[32] «Խարիսխ» օրաթերթը 1906-1909 թվականների ընթացքում հրատարակված ՀՅԴ Արևելյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջ»-ի 14 անվանափոխումներից մեկն էր՝ «Ալիքի», «Երկրի», «Զանգի», «Ժամանակի», «Փայլակի», «Ժայռի», «Վորոի», «Կովկասի առավոտի», «Նոր ալիքի», «Վտակի», «Զանգակի», «Գործի», «Բորբայի» (ռուսերեն) հետ միասին: «Խարիսխ»-ը հրատարակվել է Թիֆլիսում 1907թ., 44 համար, 4 էջ ծավալով: Խմբագիր-հրատարակիչը շուլավերցի Արշակ Պետրոսի Մեհրաբյանն էր, ով նույնպես ձերբակալվել էր լիժինյան գործով և դարձել առաջին մեղադրյալը:

[33] Վահրամ Վահրամի Նալբանդյան/g/ը կամ Նալբանդովը, ըստ դատական գործի տվյալների, մեղադրվել է որպես ՀՅԴ Մեծ Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 243:

[34] Այստեղ և հետագայում «իան» գրելաձևը դատական գործի ոճն է:

[35] Ճիշտը՝ Բուդուլյան Արտաշես (1864-1915) – բժիշկ, հասարակական գործիչ, ապրել է Պետերբուրգում:

[36] Սա մեղադրականը կազմողի և ընդհանրապես՝ ցարական դատաքննությանը բնորոշ ամբաստանությունն առաջ տանելու գրելաձևն է և ոչ թե՝ Հովի. Թումանյանի ցուցմունքը, ով մինչև վերջ էլ իրեն մեղավոր չճանաչեց:

[37] Ակնհայտ է, որ ՀՅԴ ձևավորման այս ոչ ճիշտ ժամկետների մատնանշումը պատահականություն չէր՝ ցարական քննիչների գործելակերպի առումով, քանզի սրանով փորձ էր արվում ջախջախել հենց այդ շրջանից Անդրկովկասում ՀՅԴ-ի շուրջը ձևավորված կառույցները, որոնք 1905-1906թթ. հայ-թաթարական պարտադրված կռիվների արդյունքում վերածվել էին հայկական գավառների փաստացի ինքնավարության ամբողջական ու կուռ համակարգի:

թյուն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության խնդիր էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնի ոտնձգությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի են ունեցել 1905-1908թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ՝ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների[38] հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ (Ահաբեկիչ-Մարմին)-ի խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908 թվականներին Ռուսաստանում իրականացվել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացվել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցագործ նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության իրավասությունը՝ իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես՝ Հովհաննես Թումանյանս [սա կրկին քննիչի կողմից ներկայացված մեղադրանքի տեքստն է], լինելով նշյալ կուսակցության անդամ, մասնակցել եմ նրա տարբեր կոմիտեների [աշխատանքներին] և այդ ընկերակցության տարբեր անդամների հետ կուսակցական համակագրություն եմ վարել:

Այսպես, օրինակ, 1907թ. հունիսի 15-ի N. 7546 հեռագրով, Թիֆլիսից Ղարաքիլիսա, նա հարցնում է Սերգեյ Եդիգարովին՝ «կարգադրություն անել» [նշումով], իսկ նույն թվի հուլիսի 23-ի N. 9594 հեռագրով, Թիֆլիսից Մանգլիս, կուսակցության անդամ Արտյուշը Թումանյանին հարցնում է նույն կուսակցության անդամ Զարգորյանցի գտնվելու վայրի մասին՝ կուսակցական թերթ «Խարիսխ»-ի հասցեով, և ե՞րբ է վերջանում Վահրամ Նալբանդյանի (Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ) ժամկետը, այսինքն՝ Քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների մեջ, պատասխանում եմ, [սա արդեն Հովի. Թումանյանի խոսքն է] որ ես ինձ մեղավոր չեմ ճանաչում:

Ի արդարացում ինձ պարզաբանում եմ: 1905 թվին, ամռանը, Թիֆլիսից, ինձ մոտ եկավ Դսեղ գյուղից իմ դպրոցական ընկեր Երվանդ Մամիկոնյանցը[39] և հաղորդեց ինձ, որ իրեն ցանկանում է սպանել «Դաշնակցություն» կուսակցությունից ոմն Սուրեն[40]: Բացի դրանից, ինձ մոտ եկավ Մախարդ[41] գյուղից իմ յուրային Վասիլի Մուսինովը և հաղորդեց ինձ նույնը իր վերաբերյալ: Այդ ժամանակ ես գնացի Բորչալուի գավառի գավառապետ Սանշիևի[42] մոտ և ասացի ինձ հաղորդվածի մասին: Երբ ես վագոնով ուղևորվում էի երկաթգծով՝ այդ ժամանակ վագոնում ինձ դիմեց փափախով ինչ որ մի հայ և սկսեց խոսել ինձ հետ իմ ստեղծագործությունների մասին, ապա խոսակցության մեջ նա ասաց, որ պետք է օգնեմ «Դաշնակցությանը»: Երբ ես ասացի, թէ ինչու է «Դաշնակցությունը» ուղարկել մեր գյուղ ինչ-որ …Սուրենի, որը նեղում է բնակիչներին, այդ ժամանակ նա հեռացավ մեր վագոնից: Երբ ես հասա գյուղ՝ զրուցեցի գավառապետ Սանշիևի, հայկական եկեղեցիների հոգաբարձուների և գյուղի այլ հարգարժան անձանց հետ, որպեսզի վերանվանյալ թալանչիներից պաշտպանության ծրագիր մշակվի: Այդ գյուղում, ինչպես պարզվեց, Սուրենն իր համախոհներ Մուշեղ Կոփեցու (Խեչո)[43] և ինչ որ Սամսոնի[44] և

[38] Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:

[39] Երվանդ Մամիկոնյանը Հովի. Թումանյանի կնոջ հեռավոր ազգականներից էր:

[40] Բանաստեղծի ազգականին սպանել փորձող «Սուրենը» խմբապետ Միհրանի թիկնապահ Կոփեցի Մուշեղի մարդն էր, հետևաբար նրան տրված «Դաշնակցություն կուսակցությունից» բնորոշումը իրականում վերաբերում է այդ տարիներին ՀՅԴ-ի անունից ինքնագլուխ կերպով դրամահավաքով զբաղվող միհրանականներին, որոնց գործելակերպը մերժվում էր հենց իր՝ ՀՅԴ-ի ղեկավարության կողմից: Նույնն էր նաև միհրանականների հանդեպ Հովի. Թումանյանի որդեգրած վերաբերմունքը: Ուրեմն՝ այս հատվածում «Դաշնակցություն» անվան ներքո վկայաբերվող միհրանականներին չպետք է շփոթել ՀՅԴ-ի անդամների հետ:

[41] Ճիշտ անվանումը՝ Մղարթ (գյուղ Բորչալուի գավառում, ներկայումս՝ Լոռու մարզում):

[42] Ճիշտը՝ Շանշիև (Շանշյան) Կոստանդին Զախարի: 1904-1905թթ. եղել է Բորչալուի գավառապետ, իսկ 1910թ.՝ Թիֆլիսի գավառապետ:

[43] Կոփեցի Խեչոն խմբապետ Միհրանի մերձավոր զինակիցն էր:

[44] Անձը պարզել չհաջողվեց, բայց ակնհայտ է, որ սա էլ Միհրանի կողմնակիցներից էր:

այլ անձանց հետ արդեն ուղարկել էին սպառնալից պահանջներ «Դաշնակցություն» կուսակցության կարմիր կնիքներով՝ փողի պահանջներով: Տեղի բնակչության և հարգարժան անձանց ժողովում ես սկսեցի համոզել, որ հակահարված տրվի այդ թալանչիներին, չկատարեն նրանց այդ ապօրինի պահանջները: Բոլոր բնակիչները համաձայնվեցին: Հենց այնտեղ գյուղում ես չտեսա Սուրենին, բայց նրա համախոհները հեռացան հաջորդ օրը, սակայն միայն Մուշեղը մնաց՝ իբր պարտքի վճարման համար: Տեղի գյուղացիները համաձայնվեցին՝ միայն թե նա հեռանար: Դրանից հետո նա հեռացավ գյուղից և այլևս չերևաց այնտեղ: Իսկ բնակիչներին ես հայտարարեցի, որպեսզի նրանք չընդհարվեն թաքարների հետ, այլ նրանց հետ ապրեն հաշտ: Արդյունքում, մեզ մոտ գավառում, թաքարների հետ ընդհարումներ և անկարգություններ չեղան: Կարծես թե 1906 թվականին, թե որ ամսին՝ չեմ հիշում, հիշյալ գյուղում[45] սպանվեց տանուտեր Արշակ Փերիխանովը և հարձակում կատարվեց տեղի բնակիչ Հարություն Շահվերդովի[46] վրա, որոնց «Դաշնակցություն» կուսակցությունը կասկածում էր իր տարբեր գաղտնիքները ոստիկանությանը մատնելու, հարկերով և փողի պահանջներով ահաբեկչությամբ բնակիչներին տուրքադրելու մեջ: Հարություն Շահվերդովը՝ չգիտես թե ինչու, ինձ կասկածեց այդ հարձակման մեջ: Դրանում, ինչպես պարզվեց, նրան համոզել էին «Դաշնակցության» գործակալները[47] նրա համար, որ ես կազմալուծեցի նրանց պլանները ոչ միայն գյուղում, այլեւ ողջ շրջանում: Ինքը՝ Հարություն Շահվերդովը, որ հոգեպես անհավասարակշիռ մարդ էր, ընկավ այդ ազդեցության տակ, և հավատալով այդ փչոցներին՝ սկսեց բամբասել ինձ, տարածելով այդ մասին անհավանական լուրեր այդ հանցագործության մեջ իմ մասնակցության վերաբերյալ: Նրա վրա, ըստ գյուղացիների խոսքերի, թե ում կոնկրետ չեմ հիշում, և հենց Հարություն Շահվերդովի խոսքերից, հարձակվել են հենց այն անձինք, որոնք մասնակցել են և տանուտեր Փերիխանովի սպանությանը: Ես գիտեմ, որ Հարություն Շահվերդովը, շատ չանցած, սպանեց նաև իր հարազատ եղբորը՝ կարծես թե գույքային վեճի պատճառով: Ապա, նա թաքնվեց: Այնուհետև, նրան ձերբակալեցին այդ սպանության համար և նա սկսեց ինձ վերագրել այդ ձերբակալության պատճառները՝ տարածելով, որ պրիստավը[48], գավառապետը և այն ժամանակ ժամանակավոր զինվորական նահանգապետ գնդապետ Զոլոտարյովը (այժմ Ջելալ-Օղլի [Ստեփանավան] գյուղում բնակվող) գործում էին իմ ազդեցությամբ: Գնդապետ Զոլոտարյովը[49] Հարություն Շահվերդովին ուղղակի անվանեց հոգեկան հիվանդ: Նույն կարծիքին էր նրա մասին և գավառապետ Ռյազանովը[50]: Շնորհիվ իմ ցուցումներով ձեռնարկված միջոցների՝ Բորչալուի գավառի Լոռու շրջանում «Դաշնակցություն» կուսակցությունը գոյություն չուներ, ոչ մի հեղափոխական բան չկար: Ես նույնիսկ խնդրեցի գավառապետ Ռյազանովին ստուգել գյուղերը, և նա ինձ հետ միասին այցելեց այդ օկրուգի գյուղերը: Գյուղերում հավաքված ժողովրդի առջև ես ելույթ ունեցա պ. Ռյազանովի ներկայությամբ՝ մատնանշելով, որ մենք հակակառավարական ոչ մի բան չպետք է անենք և ենթարկվենք կառավարության ներկայացուցիչներին: Ժողովուրդը ցնծում էր: Իսկ Ռյազանովը ասում էր, որ կառավարությունը ինքնապաշտպանության դեմ ոչինչ չունի: Որոշ ժամանակ անց, Բորչալուի գավառ եկավ Թիֆլիսի նահանգապետը: Նա հիացած էր Բորչալուի գավառով: «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության գործունեության մեջ ես ոչ մի մասնակցություն չեմ ունեցել: Նրա նպատակների և խնդիրների մասին ես չգիտեմ[51]:

Սարգիս Մանասյանցին[52] ես ճանաչում եմ, առաջին անգամ ես նրա հետ ծանոթացա տեղական Ներսիսյան դպրոցում, քանի որ իմ բացակա-

[45] Նկատի ունի Բորչալուի գավառի Իգահատ (Այգեհատ) գյուղը (ներկայումս՝ Լոռու մարզում):

[46] Հարություն Սարգիսի Շահվերդովը լիժինյան գործով Հովի. Թումանյանի դեմ հիմնական ցուցմունք տվող վկան է: 1909թ. մայիսի 26-ի ցուցմունքում նա նշում էր, որ Հովի. Թումանյանը Արտեմ Քոչարյանի հետ իրենց գյուղում կազմակերպել է ՀՅԴ կառույց, մարտական ջոկատ, իրականացրել ՀՅԴ օգտին դրամահավաքներ, հորդորել չենթարկվել ցարական իշխանություններին և իրեն պահել որպես «նահանգապետ», և անգամ իրենից ՀՅԴ-ի համար մահվան սպառնալիքով գումար պահանջել: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թթ. 428-429:

[47] Ակնհայտ է, որ այստեղ Հովի. Թումանյանը քողարկում է իրականությունը, քանի որ խոսքն արդեն վերաբերվում է ոչ թե «Դաշնակցության գործակալներ» անվան տակ իր կողմից վկայաբերվող միհրանականներին, այլ Սեքարեցի Սաքոյին մատնող գյուղապետին հենց դաշնակցականների կողմից պատժելու միջադեպի մասին է, որում նաև՝ ինքն էր մեղադրվում:

[48] Ոստիկանական պաշտոնյա:

[49] Զոլոտարյով Վասիլի Ալեքսանդրի:

[50] Ճիշտը՝ Ռեզանով Նիկոլայ Կոնստանտինի: 1905թ. նոյեմբերից մինչև 1906թ. հունիսը եղել է Բորչալուի գավառապետ:

[51] Այս պնդումներն, անկասկած, Հովի. Թումանյանի ընտրած պաշտպանական մարտավարության մասն էին և իրականությանը չէին համապատասխանում, ինչում դժվար չէ համոզվել՝ հետաքննության նյութերին ծանոթանալով:

[52] Մանասյան Սարգիս (՞-1920) – մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ: Դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել ՀՅԴ Արևելյան Բյուրոյի Զինական մարմնի անդամ: Լիժինյան գործով ձերբակալվել է Ռոստովի բանտում, ապա դատապարտվել տաժանակիր աքսորի մինչև 1916թ.: 1918թ. մայիսին մասնակցել է Ղարաքիլիսայի հերոսամարտին: 1920թ. որպես ՀՅԴ լիազոր մեկնել է Դիլիջան բանակցելու բոլշևիկների հետ, սակայն ձերբակալվել է և ուղարկվել Բաքու, ապա աքսորվել Նարգեն կղզի, ուր գնդակահարվել է:

յությամբ և առանց իմ համաձայնության՝ ինձ ընտրեցին այդ դպրոցի հոգաբարձու, որտեղ Մանասյանցը նույնպես ընտրվել էր հոգաբարձու: Դպրոցում քանի հոգաբարձու կար՝ ես չգիտեմ: Ես նույ - նիսկ բողոքել եմ այդ ընտրության դեմ: Ես հիշում եմ, որ ինձ հետ՝ բացի Մանասյանցից, հոգաբարձուներ էին՝ Ղազար Աղոյանը[53], Եղիշե Թոփչյանը[54], Ղազար Տիգրանյանը[55], Մինաս Մուրադյանը[56], Իգիթյանը[57] և Ամիրխանյանը[58]: Ինչ վերաբերում է «Դաշնակցություն» կուսակցությանը այդ անձանց մասնակցությանը կամ ոչ՝ ինձ ոչինչ հայտնի չէ: Ավելացնում եմ, որ հոգաբարձու էր նաև բժիշկ Ալեքսանդր Իվանի Խատիսովը՝ տեղի քաղաքագ - լուխը[59]: Մանասյանցի հետ մոտիկից ծանոթ չեմ եղել և երբեք նրա տանը չեմ եղել: Ոչ նրանից և ոչ էլ «Դաշնակցություն» կուսակցության այլ ներկայացուցիչներից ոչ մի դրամ չեմ ստացել:

Արտյուշ Քոչարյանցին ես ճանաչում եմ, սակայն մոտիկից ծանոթ չեմ: «Դաշնակցություն» կուսակցության մեջ նրա մասնակցության վերաբերյալ ինձ ոչինչ հայտնի չէ: Նա միայն մեկ անգամ անցյալ տարի է եղել ինձ մոտ՝ խնդրելով տեղ[60] իր համար: Վահրամ Նալբանդովին ես մոտիկից չգիտեմ, սակայն ստիպված էի ծանոթանալ նրա հետ որպես Մեծ Ղարաքիլիսա գյուղում ապրող վաճառականի: [«Դաշնակցություն»] Կուսակցության մեջ նրա մասնակցության վերաբերյալ ոչինչ չգիտեմ: Ձեր կողմից ցույց տրված Թումանյանի ստորագրությամբ 1907թ. հունիսի 15-ի N. 7546 հեռագիրը Սերգեյ Եդիգարովին Թիֆլիսից ուղարկվել է իմ կողմից: Այն վերաբերում էր Եդիգարովի հետ իմ փողային հարաբերություններին: Սերգեյ Եդիգարովի երաշխավորությամբ ես ցանկանում էի բանկում հաշվառել իմ վեքսիլը, սակայն վերջինս մեկնեց Ղարաքիլիսա՝ չկատարելով իմ խնդրանքը: Դրա համար էլ ես հեռագրեցի նրան, և նա վերադառնալով՝ երաշխավորեց ինձ համար: Այն ժամանակ ես հաշվառեցի իմ վեքսիլը Փոխադարձ վարկի ընկերությունում, որտեղ տնօրեն էր Գեորգի Միխայիլի Թումանովը[61]:

Ձեր կողմից ներկայացված 1907թ. օգոստոսի 2-ի N. 37 երկրորդ հեռագիրը բժիշկ Բուդուգովին ուղարկվել է Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Ստեփան Լիսիցյանի[62] կողմից նրա ստորագրությամբ, ինչպես նաև իմ անունից, իմ համաձայնությամբ և Երևանի դպրոցի ուսուցիչ Լևոն Շանթի[63] անունից: Շանթը իմ ընկերն է, նա նույնպես համաձայն էր այդ հեռագրին: Հեռագրում նշված Շխիյանցը[64]

---

[53] Ճիշտը՝ Ղազարոս Աղայան:

[54] Թոփչյան Եղիշե Թադևոսի (1872-1909) – գրող, հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ: 1905թ. Թիֆլիսում մասնակցել է հայ-թաթարական կռիվներին, 1907թ. ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովում ընտրվել Արևելյան Բյուրոյի անդամ:

[55] Հավանաբար Հովհաննես Տիգրանյանն է:

[56] Բժիշկ Մինաս Մուրադյանը (Մուրադով) դեռևս 1890-ականներից հարել է ՀՅԴ-ին և զբաղվել է Մոսկվայից ու Ռուսաստանի այլ քաղաքներից զենքի տեղափոխման գործով: Տե՛ս Խուդինյան Գ., նշվ. աշխ., էջ 338:

[57] Փաստաթղթում գրված է Егитян: Հավանաբար Հովհաննես Իգիթխանյանն է (Քաջազունի):

[58] Հիշատակվող անունների կապակցությամբ առկա է որոշակի շփոթ: Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներ են եղել այդ ժամանակ հետևյալ անձինք. 1. Հովհաննես Տիգրանյան, 2. Հովսեփ Ամիրյանց, 3. Ավետիք Սահակյան, 4. Ղազարոս Աղայան, 5. Մանաս Մուրադյան, 6. Ալեքսանդր Խատիսյան, 7. Եղիշե Թոփչյան, 8. Հովհաննես Տեր-Միքայելյան, 9. Սարգիս Մինասյան: Մկրտիչ Ա. Խրիմյանի 1906թ. հուլիսի սկզբի կոնդակով հաստատվել է դպրոցի հոգաբարձության նոր կազմ. 1. Նազարեթ Տիգրանյան, 2. Հարություն Չախմախազյան, 3. Եղիսաբեթ Զորյան (Ռոստոմի կինը), 4. Գրիգոր Սարյան, 5. Նիկողայոս Կաճկաճյան, 6. Հովհաննես Իգիթխանյան, 7. Շավարշ Դեմիրջազլյանց, 8. Վարդան Եմիկոլոփյան, 9. Արշակ Թումանյան, 10. Հովհաննես Թումանյան, 11. Հայկ Սողոմոնյան, 12. Ստեփան Տեր-Ավետիքյան: Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1906, հուլիսի 10:

[59] Խատիսյան Ալեքսանդր Հովհաննեսի (1874-1945) – պետական-քաղաքական գործիչ: 1909-1917թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ և Քաղաքների միության կովկասյան կոմիտեի նախագահ, 1919թ. օգոստոսից մինչև 1920թ. մայիսը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ:

[60] Փաստաթղթում գրված է место, ինչը պետք է հասկանալ գործ, աշխատանք իմաստով:

[61] Թումանով Գեորգի Միխայիլի (1853-1920) – հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ: 1891-1904թթ. եղբայրների հետ հրատարակել է «Նովոյե օբոզրենիե» ռուսերեն թերթը: Եղել է Ռուսաստանի պետական դումայի անդամ: Կինը՝ նշանավոր հասարակական և մշակութային գործիչ իշխանուհի Մարիամ Թումանյանը, եղել է Հովհ. Թումանյանի աջակիցն ու մտերիմ բարեկամը:

[62] Լիսիցյան Ստեփան Դանիելի (22.09.1865, Թիֆլիս-4.01.1947, Երևան) – մանկավարժ, բանաստեղծ, աշխարհագրագետ, պատմաբան, ազգագրագետ: 1894թ.-ից դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1905-1916թթ. հրատարակել է «Դասկեր» մանկական ամսագիրը: Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի հետ կազմել և հրատարակել է «Լուսաբեր» հայոց լեզվի դասագիրքը: 1928-1947թթ. եղել է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի վարիչը:

[63] Շանթ Լևոն Սեղբոսի (1869, Կ. Պոլիս-29.11.1951, Բեյրութ) – անվանի գրող, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ: 1899-1909թթ. դասավանդել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց և Երևանի թեմական դպրոցներում: Մասնակցել է «Վերնատան» աշխատանքներին: 1911թ.-ից հետո գործել է Կ. Պոլսում, 1920թ. գլխավորել է Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Մոսկվայում: 1929թ.-ից հետո ապրել և ստեղծագործել է Բեյրութում:

[64] Շխյան (Շխյանց) Սիմոն Գեորսիմի (1865-1947) – 1890-ական թվականներից՝ ժնևում սովորելու շրջանից, ակտիվորեն մասնակցել է ՀՅԴ գործունեությանը, եղել է Ռոստոմի մտերիմ ընկերը: Տե՛ս «Ռոստոմ: Նամականի». մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 9-11: Այս շրջանում եղել է Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, զբաղվել գրական, թարգմանչական աշխատանքով: Ձերբակալվել է լիժինյան գործով:

փոխանցեց 300 ռուբլի Լիսիցյանին հայոց լեզվի մեր ուղեցույցի[65] հրատարակության համար: Դրա համար էլ մենք հնարավորություն չունենալով այդ գումարով հրատարակել մեր աշխատանքը՝ որոշեցինք Լիսիցյանի խորհրդով, որը բժիշկ Բուդուգովի ծանոթն էր, դիմել վերջինիս խնդրանքով՝ պարտքով մեզ գումար տալ հրատարակության համար, և այդ առթիվ հեռագիր ուղարկեցինք: Բայց Բուդուգովից ոչ մի պատասխան չստացանք: Հետո նրանից պատասխան ստացանք, բայց ինչ՝ չեմ հիշում:

Ինչ վերաբերում է երրորդ հեռագրին, ապա այդպիսին ես ստացել եմ Արտեմ Քոչարյանցից՝ «Արտյուշ» ստորագրությամբ: 1907թ. հուլիսի 23-ի N. 9594 այդ հեռագրում նա հաղորդում էր ինձ Մանգլիս, որ Վահրամի [Նալբանդյան] ժամկետը վերջանում է, և հարցնում էր՝ որտեղ է Զարգարյանցը, խնդրելով հաղորդել «Խարիսխ» թերթին: Այդ հեռագիրը վերաբերում է Նալբանդյանցի կողմից զինծառայության կատարմանը: Արտյուշը խնդրում էր ինձ գրել բժիշկ Զարգարյանցին, որպեսզի վերջինս խնդրի Ալեքսանդրապոլում զինվորական բժշկին, որի ազգանունը չեմ հիշում, աջակցել ազատելու Վահրամ Նալբանդյանցին զինծառայությունից, քանզի նա օգտվում էր առաջին կարգի արտոնությունից, որպես հոր սպանությունից հետո ընտանիքի միակ ղեկավար: Կարդացածին ավելացնում եմ՝ ես հանդիպել եմ Սուրենին, երբ մեկնում էի գավառապետի մոտից Դսեղ գյուղ, և ոչ թե՝ մինչ այդ: Զոլոտարյովը ժամանակավոր գեներալ-նահանգապետ չի եղել, այլ միայն Բորչալուի գավառում վերջինիս լիազորը: 1906թ. սկզբում, երբ ես գտնվում է Ղազախի գավառի Բարոնախ[66] գյուղում, մեկնել էի Լոռվա շրջանի հարգարժան անձանց հետ, որպեսզի հաշտեցնեմ հայերին և թաթարներին, քանզի հայերը ... բողոքում էին հայտնի Շիխալիի[67] դեմ, որ «նրանք նեղում են մեզ և բորբոքում կրքեր»: Մենք՝ Լոռեցիներս, Ղազախեցիների[68] հետ միասին առաջարկեցինք Շիխալիին և նրա համախոհներին անմիջապես հեռանալ և նրանք մեկնեցին, ինչը կանխեց թաթարների և հայերի ընդհարումները: Ընթերցված է:

Բնագիրը՝ համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 429-431:
Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 3
ՈՐՈՇՈՒՄ

1909 թվականի մայիսի 26: Քաղաք Թիֆլիս: Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը հարցաքննելով սույն թվով Հովհաննես Տեր-Թադևոսով Թումանիանին (Թումանյանին) [69], 40 տարեկան, որպես «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցություն հանցավոր ընկերակցության մեջ մասնակցության մեղադրյալ, այսինքն՝ Քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով նախատեսվող հանցագործությունների մեջ, ԳՏՍ.

1. Որ Հովհաննես Թումանիանը մերկացվում է սույն հանցագործությունների մեջ, ինչպես 1907թ. հեռագրերում նշված, այնպես և քննության ժամանակ հարցաքննված վկաների ցուցմունքներով, 2. Որ նրան սպառնացող պատիժը զուգորդվում է ունեցվածքի իրավունքից զրկումով:

Ելնելով վերոշարադրյալից Դատական Քննիչը՝ ղեկավարվելով Քրեական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ կետով, 423-րդ եւ 428-րդ հոդվածներով ու Քրեական օրենսգրքի 102-րդ հոդվածով, ՈՐՈՇԵՑ.

Նշված մեղադրյալ Հովհաննես Թումանիանից պահանջել գրավ 5.000 ռուբլի, իսկ մինչ դրա մուծումը՝ պահել կալանքի տակ Մետեխի բանտում, ինչի մասին և հայտնել նրան:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 435:
Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 4
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ՎՃԻՌ

Թիֆլիսի նահանգի ազնվական Հովհաննես Տեր-Թադևոսով Թումանյանը, 40 տարեկան, մեղադրվում է այն բանում, որ.

50. Հովհաննես Թումանյան - եղել է [ՀՅԴ] Թիֆլիսի կազմակերպության անդամ, 1906թ. ընկերակցության մյուս անդամների հետ կազմակերպել է տեղական կոմիտե Բորչալուի գավառի

[65] Նկատի ունի հայոց լեզվի «Լուսաբեր» դասագիրքը:
[66] Ճիշտը՝ Բարանա, այժմ՝ քաղաք Նոյեմբերյան, Տավուշի մարզում:
[67] Ճիշտը՝ Շհալի կամ Շիհ-Ալի - թաթար ավազակապետ:
[68] Փաստաթղթում մեծատառերով են գրված:
[69] Փաստաթղթում ազգանունը նշված է այս երկու տարբերակներով:

Իգահատ գյուղում, իրականացրել է հարկադրական դրամահավաքներ այդ գյուղի բնակիչներից և նույն թվին շրջագայելով կազմակերպության [ՀՅԴ] հանձնարարությամբ Ղազախի գավառի սահմաններում՝ մահմեդական բնակչությանը խռովարարական գործողություններ սարքելու կոչ է արել՝ մահմեդականներին ընկերակցության կողմից զենքով ապահովելու տեսքով աջակցություն խոստանալով:

ք. Նովոչերկասկ, 1911թ. մայիսի 28

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ ԿԱՆՉՎԵԼՈՒ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿ

ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ

51. Հովհաննես Տեր-Թադևոսով Թումանյանց և հտ. 21, գործի թերթ 7455[70], ք. Թիֆլիս:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 243, 255:
Թարգմանություն ռուսերենից:

[70] Սա դատական բնագրային գործի տվյալներն են:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Համո Օհանջանյանի դատական գործը*

Անվանի կուսակցական և պետական գործիչ Համո (Համազասպ) Օհանջանյանը հայ հանրությանը գերազանցապես հայտնի է որպես Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ: Մինչ այդ՝ 20-րդ դարի սկզբներին, ՀՅ Դաշնակցության Անդրկովկասի կազմակերպության կազմում նրա ծավալած գործունեությունը բավականին թերի է ուսումնասիրված: Մինչդեռ, այդ եռանդուն գործունեության արդյունքում ՀՀ ապագա վարչապետը դարձավ ՀՅ Դաշնակցության Մեծ դատավարության հիմնական ամբաստանյալը, ենթարկվեց դաժան հալածանքների, բանտարկության ու աքսորի: Ներկա հրապարակումը նպատակ ունի բացահայտել ՀՅԴ հեղափոխական պայքարի և արևելահայության ինքնապաշտպանության գործի կազմակերպիչներից մեկի՝ Համո Օհանջանյանի հանդեպ ցարական բռնակալության կազմակերպած դատական հաշվեհարդարի մանրամասները: ՀՅԴ Մեծ կամ լիժինյան դատավարության փաստաթղթերը լույս են սփռում Համո Օհանջանյանի գործունեության ողջ 1905-1912թթ. ժամանակահատվածի վրա:

Ռուսաստանում սկիզբ առած հեղափոխության պայմաններում 1905թ. հունիսին հրապարակվեց ՀՅԴ Խորհրդի փետրվարյան և ապրիլյան նիստերում ընդունված՝ «Նախագիծ Կովկասեան գործունեութեան»[1] կամ «Կովկասյան նախագիծ» փաստաթուղթը, որը փաստորեն փոփոխության էր ենթարկում կուսակցության ծրագիրը: ՀՅԴ Խորհրդի ընդունած բանաձևում նշվում էր. «Կովկասեան շարժման հարցում **ինքնապաշտպանութեան** շրջանից անցնել բուն **յեղափոխական** գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական ժողովում արտայայտուած տրամադրութեան, ուղարկել դաշնակցական կովկասեան մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական հաստատումը առաջիկայ Ընդհանուր ժողովին»[2]:

---

* Ընդունվել է տպագրության 22.08.2009:

[1] Տե՛ս Նախագիծ Կովկասեան գործունէութեան, հրատ. ՀՅԴ, Ժընեւ, տպ. ՀՅԴ, 1905:

[2] Տե՛ս Նիիթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հատ.բ., բ. տպագր., Պէյրութ, 1985, էջ 230:

Սա նշանակում էր, որ ՀՅԴ-ն Անդրկովկասում անցնում էր ակտիվ հեղափոխական գործունեության՝ առաջ քաշելով հետևյալ հիմնական նպատակները. «1.Դաշնակցական ռամկավար հանրապետութիւն Անդրկովկասի համար, հիմնուած ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութեան վրայ: 2. Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերի և կրօնական համայնքների, որոնք մտնում են դաշնակցութեան մէջ: 3. Անդրկովկասը կազմում է ազատ Ռուսաստանի անբաժան, դաշնակից մասը, կապուած Ռուսաստանի հետ ընդհանուր պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստէմի ու ընդհանուր քաղաքականութեան խնդիրներում: Նա ուղարկում է վերոյիշեալ սկզբունքներով ընտրուած իր ներկայացուցիչները Ռուսաստանի ընդհանուր պարլամենտին: 4. Անդրկովկասը անկախ է իր բոլոր ներքին խնդիրներում՝ վարչական, տնտեսական ևն»[3]:

Հ. Օհանջանյանը ՀՅԴ Խորհրդի փետրվարյան նիստին ներկա էր որպես ՀՅԴ Արևելյան Բյուրոյի, իսկ ապրիլյան նիստին՝ Կովկասի ինքնապաշտպանության մարմնի ներկայացուցիչ[4] և եռանդուն կերպով պաշտպանում էր «Կովկասյան նախագիծը»: 1905-1907թթ. Ռուսական առաջին հեղափոխությանը ՀՅԴ մասնակցության սկիզբը դրած այս որոշումների իրականացման մեջ մեծ էր Արևելյան Բյուրոյի հերթապահ ու միաժամանակ՝ ՀՅԴ դրամական միջոցները տնօրինող անձանցից մեկի՝ Համո Օհանջանյանի անձնական ներդրումը:

Իսկ արդեն Հ. Օհանջանյանի և ՀՅԴ այլ ղեկավարների բանտարկությունից հետո՝ 1909թ. ապրիլին, Կովկասյան Ռայոնական մարմինների արտակարգ ժողովը ընտրեց Արևելյան «ժամանակավոր Բյուրո», ինչը նշանակում էր, որ մինչև Վառնայի 5-րդ Ընդհանուր ժողովը (1909թ. օգոստոսի 14-սեպտեմբերի 18) փաստացի կերպով ՀՅԴ Բաքվի Կենտրոնական կոմիտեն էր Կովկասի գործերի վարողը[5]:

Համո Օհանջանյանը ձերբակալվեց 1908թ. դեկտեմբերին՝ Թիֆլիսում: Ստանալով այդ լուրը և անտեսելով ոստիկանության կողմից հետախուզվելու հանգամանքը, 1909թ. մայիսին Թիֆլիս է վերադառնում նրա հավատարիմ ընկերուհին՝ Ռուբինա Արեշյանը: Երբ Հ. Օհանջանյանին տեղափոխում են Նովոչերկասկի բանտ Ռուբինան հետևում է նրան[6]: Ի վերջո, այստեղ նա էլ ձերբակալվեց, բայց ազատվեց իր զինվորական եղբոր միջնորդությամբ: Նովոչերկասկից Հ. Օհանջանյանը պետք է աքսորվեր Խարկով կամ Սիբիր: Նա սկզբում ընտրեց առաջինը, սակայն խարկովյան բանտի պայմանները այնքան ծանր էին, որ Հ. Օհանջանյանն, ի վերջո, նախընտրեց սիբիրյան աքսորը: Եվ այս անգամ էլ Ռուբինան հետևեց նրան: 1913-1915թթ. նրանք բնակվեցին հեռավոր Իրկուտսկի մարզի խուլ գյուղերից մեկում և այդ տարիներին էլ ամուսնացան: Սա Հ. Օհանջանյանի երկրորդ ամուսնությունն էր: Աքսորում անգամ Հ.Օհանջանյանը «պարապ» չէր մնում՝ զբաղվում էր բժշկությամբ: Առաջին աշխարհամարտի տարիներին նա ներում ստացավ, վերադարձավ Թիֆլիս: Վանի ազատագրումից հետո Ռուբինայի հետ մեկնեց այնտեղ և իբրև բժիշկ մասնագիտական օգնություն ցուցաբերեց հայ կամավորականներին: 1918թ. մայիսին Ղարաքիլիսայի հերոսամարտում զոհվեց Հ.Օհանջանյանի անդրանիկ զավակը՝ 18-ամյա Մոնիկը, դաշնակցական Աշակերտական միության նախագահը:

---

[3] Տե՛ս Նախագիծ Կովկասեան գործունէութեան, էջ 13:

[4] Տե՛ս Նիիթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, բ. հատ., բ. տպագր., Պէյրութ, 1985, էջ 227:

[5] Տե՛ս Տասնապետեան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, 1985, էջ 62-63:

[6] Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, հտ. գ., ա. տ., ա. թ., էջ 223:

Հ. Օհանջանյանի ղեկավարությամբ են հրատարակվել «Յառաջ»-ի մատենաշարի գրքույկները: Նա է վարել ռուսաստանյան հեղափոխական կուսակցությունների հետ ՀՅԴ հարաբերությունները՝ վայելելով բոլորի հարգանքը:

* * *

Ի՞նչ էին իրենցից ներկայացնում Հ. Օհանջանյանին ներկայացված մեղադրանքները և դրանց հիման վրա ծավալված դատական գործընթացը:

1909թ. մարտի 13-ից ապրիլի 20-ի իր որոշման մեջ քննիչ Ն. Լիժինը նախ և առաջ ներկայացնում էր ՀՅԴ կառույցը՝ շեշտադրումները տեղափոխելով կուսակցության ահաբեկչական ու հակակառավարական գործունեության «մերկացման» վրա: Իսկ Հ. Օհանջանյանն առաջին հերթին մեղադրվում էր «Կովկասյան նախագծի» հետևողական պաշտպանության, այդ նպատակով համապատասխան քարոզչության կազմակերպման, հայկական դպրոցների համար քարոզիչ-ուսուցիչների ուղարկման, կուսակցության ներսում անջատականության դեմ պայքարելու և խմբապետ Միհրանի նկատմամբ ՀՅԴ մահվան դատավճռի իրականացմանը գործուն մասնակցություն ունենալու մեջ (այս մեղադրանքը ներկայացվում էր անունների և հեռագրերի բծախնդիր հիշատակմամբ): Իսկ ահա ավելի որոշակի մեղադրանքների շարքում ամենազավեշտականը կուսակցության գանձարկղ … 15 ռուբլի մուծելու ամբաստանությունն էր[7]:

1909թ. մայիսի 24-ին Թիֆլիսում կայացած հարցաքննության ժամանակ Հ. Օհանջանյանին ներկայացված մեղադրանքների «առյուծի բաժինը» կրկին վերաբերում էր ահաբեկչական ու հակապետական գործունեությանը, դրա ձևերի ու եղանակների հանգամանալից թվարկմանը հատկապես՝ Միհրանի գործի առումով:

Այս հարցաքննության ժամանակ Հ. Օհանջանյանն ընտրել էր քննիչի կողմից ներկայացված մեղադրանքները հետևողականորեն հերքելու մարտավարություն՝ մերժելով իր կողմից հեռագրեր ուղարկելու, «Միերյան» մականունն ունենալու, ՀՅԴ 1905թ. վերջին կայացած ՀՅԴ Ռայոնական ժողովին ներկա գտնվելու փաստերը: Նա պնդում էր, որ իրեն անհայտ է Միհրանի անձը, հրաժարվում էր անգամ՝ Լևոն Թաղևոսյանին ճանաչելու փաստից, իսկ ՀՅԴ պատասխանատու գործիչ Մինաս Մուրադյանին ներկայացնում էր սոսկ որպես բժիշկ: Նա չընդունեց անգամ իր կողմից ՀՅԴ օգտին 15 ռուբլի մուծում կատարելու անմեղ ամբաստանությունը՝ պահանջելով ներկայացնել իրեն տրված մեղադրանքները հաստատող փաստաթղթեր ու վկաներ՝ քաջ հասկանալով, որ այդպիսիք դժվար թե գտնվեն[8]:

Փաստորեն, նախաքննության այս փուլում Հ. Օհանջանյանը որդեգրել էր բավականին կոշտ ու միանգամայն արդարացված պաշտպանողական-հարձակողական մարտավարություն: Դրանով Միհրանի նկատմամբ ահաբեկման մեղադրանքից նա զերծ էր պահում իր անձը, իսկ ահա ՀՅԴ անդամների դեպքում՝ անցնում էր վերջիններիս պաշտպանելու մարտավարությանը: 1909թ. մայիսի 24-ի Լիժինի որոշման մեջ Հ. Օհանջանյանը, այնուամենայնիվ, մեղադրվում է ՀՅԴ գործունեությանը մասնակցելու, ինչպես նաև կուսակցության անունից Միհրանի և այլոց հանդեպ սպանություն սադրելու մեջ, և դրա արդյունքում որոշում է կայացվում Հ. Օհանջանյանին կալանքի տակ պահել Մետեխի բանտում[9]:

[7] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 316-317:

[8] Նույն տեղում, թթ. 416-417:

[9] Նույն տեղում, թ. 417:

1910թ. հոկտեմբերի 26-ին՝ արդեն Նովոչերկասկում կայացած հարցաքննության ժամանակ, Հ. Օհանջանյանը կտրուկ մերժում է իր դրամական փոխանցումների կուսակցական պատկանելությունը, իսկ դրանցից ո՛րն էլ ընդունում է՝ բացատրում է զուտ անձնական-կենցաղային դրդապատճառներով: Շարունակելով ժխտման մարտավարությունը, նա հրաժարվում է հայտնել անգամ «Յառաջ»-ի գրադարանի վարչության գտնվելու վայրը՝ մերժելով նաև նշյալ գրադարանի հրատարակությունների տարբեր հասցեներով իր կողմից առաքման փաստը: Մերժում է անգամ «Միեր» և «Համո» ստորագրություններով ձեռագրերի հեղինակությունը և պաշտպանելով՝ ապահովագրում է իր ընկերներ Արտաշես Չիլինգարյանին և Սիմոն Վրացյանին: Այնուամենայնիվ, նա նույն մարտավարական նկատառումներով ընդունում է որոշ անմեղ, քարոզչական բնույթ ունեցող փաստաթղթերի իր հեղինակությունը (օրինակ՝ «Կովկասում ինքնավարության սկզբունք» և «Անդրկովկասում ինքնավարություն» բառերով սկսվող ձեռագրերը, «Հայ-թաթարական ընդհարումների մեղավորները» վերնագրով ռուսերեն ձեռագիրը): Հարցաքննության ժամանակ Հ. Օհանջանյանը պահանջեց ներկայացնել խուզարկության և առգրավումների արձանագրությունները, ինչպես նաև ՀՅԴ-ին իր պատկանելության մեղադրանքով քննչական վարույթի պատճենները: Ըստ նախաքննության տվյալների՝ Հ. Օհանջանյանը ներկայացվում էր որպես ՀՅԴ կովկասյան հատվածի ֆինանսական պատասխանատու՝ թե՛ դրամի հավաքման, թե՛ կառույցներին բաժանելու առումով: Այս հարցի հետ կապված, հարցաքննության ժամանակ, նա ժխտում է կատարված բոլոր փոխանցումներին իր առնչությունը: Ու միակ բացառությունը, այն էլ վերապահությամբ, կատարում է Գալուստ Ալոյանին կատարած փոխանցման առթիվ («ինչը ես ժամանակի վաղեմության պատճառով ճշգրիտ չեմ հիշում ինչքան և ում եմ փոխանցել և կատարե՞լ եմ այդ բոլոր փոխանցումները՝ չեմ հիշում»), դրանց մի մասի առաքումն էլ պայմանավորելով հայ-թաթարական կռիվների առթիվ տուժված հայերին օգնելու կամ էլ՝ իր անձնական պարտքը վերադարձնելու հանգամանքով[10]:

1911թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը Նովոչերկասկում իր ընդունած որոշման մեջ Ն.Լիժինն անդրադարձավ Հ. Օհանջանյանի հայտարարություններին և փորձեց մերժել դրանք: Մասնավորապես, Հ. Օհանջանյանը շեշտել էր, որ «Միեր» և «Միերյան» ստորագրությամբ փաստաթղթերը ինքը չի գրել և իրեն չեն վերաբերում: Թերևս հաշվի առնելով, որ հայերեն և ռուսերեն փաստաթղթերի փորձաքննությունը կատարվել է ոչ բանիմաց փորձագետների կողմից, նա որպես այդպիսիք առաջարկել էր Նոր-Նախիջևանի հոգևոր ճեմարանի ուսուցիչներին: 1905թ. Կովկասյան Ռայոնական և Վիեննայի Ընդհանուր ժողովի գումարման ժամանակ Թիֆլիսում իր գտնվելու առթիվ նա պահանջեց հարցաքննել որոշ վկաների՝ նշելով դրանց անունները: Այս պարագան պնդեց նաև Միհրանի սպանության հետ կապված ու պահանջեց հստակեցնել, որ «Համո»-ն ոչ թե իր մականունն է, այլ Համազասպ անվան կրճատ ձևը: Ավելին, պահանջեց հարցաքննել իր մատնանշած այն վկաներին, որոնք կարող էին պնդել, որ նա «անկուսակցական է և քաղաքականությամբ չզբաղվող», պահանջեց ներկայացնել խուզարկությունների արձանագրությունները, համեմատության համար իրեն տրամադրել հայերեն փաստաթղթերի պատճենները, պահանջեց ուշադրություն դարձնել հայ-թաթարական ընդհարումների «հսկայական նյութին»: Այս համատեքստում նա ՀՅԴ 1905-1907թթ. գործունեությունը ներկայացրեց որպես «ինքնապաշտպանության կազմակեր-

[10] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4191-4195:

պում», իսկ քննությամբ ներկայացվող ահաբեկչությունները՝ հայ-թաթարական ընդհարումների հիմքի վրա արված սպանություններ: Նա պնդում էր, որ ՀՅԴ գործունեությունը թույլատրվել է կառավարական մարմինների կողմից, որ այն կրել է բացահայտ բնույթ, ուստի ո՛չ մեկը իրեն չի կարող հանցավոր համարել: Հ. Օհանջանյանը պահանջեց այդ առթիվ հարցաքննել բարձրաստիճան ցարական պաշտոնյաների և ապացուցեց «Յառաջ»-ի գրադարանի հրատարակությունների՝ գրաքննության կողմից թույլատրված լինելը: Ի վերջո, Հ. Օհանջանյանն աննկուն կերպով դիմադրեց ցարական քննիչներին և անգամ պահանջեց իրեն գրավի կամ երաշխավորության դիմաց ազատել կալանքից ու տրամադրել դատական ողջ գործի պատճենը: Համանման միջնորդություններ Հ. Օհանջանյանը ներկայացրեց ևս մի քանի անգամ[11]:

Այսուհանդերձ, Ն.Լիժինը չբավարարեց Հ. Օհանջանյանի և ո՛չ մի պահանջ-միջնորդություն՝ հատկապես փորձելով ապացուցել նրա ղեկավար դաշնակցական գործիչ լինելու փաստը ինչպես դրամական փոխանցումների իրականացման, այնպես և «Յառաջ»-ի մատենաշարի հրատարակման առումով: Առանձին հետևողականությամբ նա հիմնավորեց «Համո» և «Միեր» կուսակցական անուն-ծածկանունը կրող անձի նույնականությունը: Ն. Լիժինը բավարարման ենթակա չհամարեց նաև ՀՅԴ 1905-1907թթ. գործունեության օրինական և բացահայտ լինելու մասին Հ. Օհանջանյանի հիմնավորումները՝ բացասական վերաբերմունքի արժանացնելով նաև նրան կալանքից ազատելու մասին միջնորդությունը[12]:

1911թ. մայիսի 28-ի մեղադրական ակտում Ն. Լիժինը Հ. Օհանջանյանին մեղադրեց Կովկասյան Ռայոնական ժողովին մասնակցելու, «Կովկասյան նախագիծը» մշակել-իրականացնելու, ՀՅԴ Բյուրոյի անդամը և կուսակցության գանձապահը լինելու, ուսուցիչ-քարոզիչների գործունեությունը և կուսակցական քարոզչությունը ղեկավարելու, Էջմիածնի Կենտրոնական ժողովին և Վիեննայի Ընդհանուր ժողովին մասնակցելու մեջ[13]:

1912թ. հունվարի 17-մարտի 20-ի դատական վճռում կրկնվեցին Ն. Լիժինի ներկայացրած այս նույն մեղադրանքները[14]:

Ըստ դատական վճռի՝ Հ. Օհանջանյանը դատարանում ընդունել է միայն այն համեմատաբար մեղմ ամբաստանությունները, որոնք ուղղակի անհնար էր հերքել: Այն է՝ իր ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամ լինելը, «Միեր, Միերյան» կուսակցական ծածկանունը կրելը, կուսակցության գործերով գրագրություն վարելը, կազմակերպությունների հաշվետվությունները ստուգելը և «Յառաջ»-ի գրադարանի հրատարակություններ ղեկավարելը: Սակայն նա այդպես էլ մերժել է Թիֆլիսում 1905թ. վերջերին կայացած ՀՅԴ Կովկասյան Ռայոնական ժողովին մասնակցելը[15]:

Ի վերջո, դատական հաշվեհարդարի արդյունքում Հ. Օհանջանյանը դատապարտվեց սեփականության իրավունքի զրկման և շտապ տաժանակիր աքսորի[16]:

---

[11] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4413-4415; գ. 6, թթ. 4442, 4460:

[12] Նույն տեղում, գ. 6, թթ. 4467, 4572-4576, 4603-4607:

[13] Նույն տեղում, թ. 240:

[14] Նույն տեղում, թթ. 279-280:

[15] Նույն տեղում, թ. 295:

[16] Նույն տեղում, թթ. 309, 312:

* * *

ՀՅԴ Արևելյան Բյուրոյի թիֆլիսյան հատվածի հերթապահ Հ. Օհանջանյանը ՀՅԴ դեմ ուղղված ցարական հալածանքների և լիժինյան հետապնդումների շրջանում ստանձնեց մինչ բանտարկությունն ունեցած՝ ղեկավարի իր պատասխանատվությունը՝ թե՛ բանտային դժնդակ լուծը իր կուսակից ընկերների հետ կրելու և թե՛ հատկապես՝ նախաքննության ու դատավարության ժամանակ կուսակցության վարկն ու կշիռը պաշտպանելու առումով: Դատի ժամանակ ևս ստանձնելով կուսակցական ղեկավարի դերը՝ Հ. Օհանջանյանը առաջին հերթին և գերազանցապես պաշպանում էր ՀՅԴ-ի շահերը: Այդ նպատակով նա հերքեց թե՛ Միհրանի ահաբեկման և թե՛ ՀՅԴ գործունեության ապահովման նպատակով դրամական փոխանցումներ կատարելու մասին իրեն ներկայացված ծանր մեղադրանքները: Արդյունքում՝ 1912թ. դատապարտվեց չորս տարվա տաժանակիր աքսորի:

Հուսով ենք, որ ռուսերենից թարգմանությամբ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող փաստաթղթերը կնպաստեն ինչպես Համո Օհանջանյանի գործունեության 1905-1908թթ. ժամանակաշրջանի, այնպես էլ ՀՅԴ Մեծ դատավարության պատմության լուսաբանմանը, ինչը ներկա սերնդի համար պատմաճանաչողականից զատ ունի նաև դաստիարակչական կարևոր նշանակություն:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

Summary

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)
The lawsuit of Hamo Ohanjanyan

Avag A. Harutyunyan

ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄ

1909 թվական, մարտի 13-ից ապրիլի 20: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր վարած նախաքննությունը հայ հեղափոխական կուսակցություն «Դաշնակցություն» հանցավոր ընկերակցության գործով, ԳՏԱՎ.

Որ 1908թ. օգոստոսի 17-ի, հոկտեմբերի 28-ի և 1909թ. փետրվարի 4-ի որոշումներում[17] մանրամասն դիտարկված 1906-1907թթ. [ՀՅԴ] համագումարների կողմից հաստատված վերոանվանյալ «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը և ցույց են տրված նրա կազմի մեջ մտնող բարձրագույն, միջին և ստորին կարգադրիչ և գործադիր մարմինները, Ռուսական պետության մեջ հակակառավարական գործունեության՝ դրանցից յուրաքանչյուրին ենթակա նպատակների նշումով: Նշյալ կուսակցության բարձրագույն մարմիններին են պատկանում Թիֆլիսում գտնվող «Արևելյան Բյուրոն» և նրան կից գործող «Ահաբեկիչ Մարմնի[18] գործունյա գործադիր ահաբեկչական խորհուրդը» ահաբեկիչների գլխավոր ջոկատով («ահաբեկման ջոկատ», «ահաբեկում տարածող ջոկատ»), միջին օղակներն են՝ Թիֆլիսում, Բաքվում, Ելիզավետպոլում, Երևանում, Բաթումում, Կարսում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Վլադիկավկազում, Դոնի Նախիջևանում և Օդեսայում կազմված տասնմեկ կենտրոնական կոմիտեները՝ իրենցից յուրաքանչյուրին կից մահվան դատավճիռների իրականացման համար որոշումների իրավունքով, ահաբեկիչների հատուկ ջոկատներով, վերջապես, ստորին մարմիններով՝ կոմիտեներ, ենթակոմիտեներ, խմբեր[19] և արհմիություններ ու կազմակերպություններ:

Ռուսական պետության մեջ նշյալ կուսակցության բոլոր կոմիտեներն ավելի քան հարյուր հիսուն են, ընդ որում՝ Ս. Պետերբուրգում կոմիտեն կոչվում է «Ուխտավայր», իսկ Մոսկվայում՝ «Եկեղեցի»:

Նախաքննության տվյալներով՝ միանգամայն բացահայտվել է, բացի նախորդ որոշումներում ցույց տրված այդ կուսակցության գործիչներից, Արևելյան Բյուրոյի, Ահաբեկչական գործադիր խորհրդի, կենտրոնական կոմիտեների, ենթակոմիտեների և խմբերի անդամների հետևյալ կազմը.

Ա. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈ.

2. Օհանջանյանց Համազասպ, բժիշկ (կուսակցական կեղծանունները՝ «Համո» որպես Բյուրոյի անդամ, «Մ-յան», «Միեր» և «Միերյան»՝ որպես կուսակցական քարոզիչ): [ՀՅԴ] Բյուրոյի անդամ, կուսակցության մեջ քարոզչական գործունեության վարիչ: 1905թ. նոյեմբերի 13-ից առ 30-ը վերոնշյալ մատյանային որոշումներից[20] հետևում է, որ նշյալ Օհանջանյանցը («Համո» կուսակցական կեղծանունով) գործուն մասնակցություն է ունեցել ժողովում՝ պնդելով Կովկասին ինքնավարության [տալու], դաշնակցային-ժողովրդավարական հանրապետություն հիմնելու, ռուսական կառավարության դեմ պատերազմ մղելու, զինման միջոցով կառավարության դեմ զանգվածների պայքարի ուժեղացման, հանրահավաքների կազմակերպման, դրանց ընթացքում այդ մասին քարոզելու վրա: 1906թ. փետրվարի 28-ի [ՀՅԴ] կուսակցության Բյուրոյի հաշվետվության մեջ նշված է Օհանջանյանցի կողմից այդ առթիվ 15 ռուբլի մուծման մասին: 1906թ. հուլիսի 17-18-ի [ՀՅԴ] Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի որոշումներից հետևում է, որ նշյալ նիստում որոշվել է վարել ճշմարիտ հեղափոխական քարոզչություն Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի շրջանի հայկական դպրոցներում և այդ առթիվ դիմել Արևելյան Բյուրոյի միջոցով նրա անդամ «Միերին»: Համաձայն այդ որոշման՝ [ՀՅԴ Վլադիկավկազի] կենտրոնական կոմիտեի նախագահ Արտաշես Չիլինգարյանի[21] («Դարբին Ռուբեն»)[22] կողմից նույն հուլիսի 19-ին Բյուրո՝ «Միերյանին», հաղորդագրություն է առաքվել նշյալ շրջանի հայկական դպրոցների համար ուսուցիչ-քարոզիչներ շուտափույթ ուղարկելու մասին: Առգրավված հեռագրերով բացահայտվել է, որ Օհանջանյանցը գործուն մասնակցու-

[17] Նկատի ունի քննչական մարմնի որոշումները:

[18] Անվանումը ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

[19] Ըստ ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովի որոշման՝ 1904-1906թթ. այս կառույցներն ունեին քանակական հետևյալ կազմը. խումբ - 7 անդամ, ենթակոմիտե - 5 խումբ (35 անդամ), կոմիտե - 5 ենթակոմիտե (175 անդամ), կենտրոնական կոմիտե - 5 կոմիտե (875 անդամ): Իսկ արդեն Վիեննայի Ընդհանուր ժողովից հետո պատկերն այսպիսին էր. ենթակոմիտե - 50 անդամ, կոմիտե - 200, կենտրոնական կոմիտե - 1000: Տես Տասնապետեան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, 1985, էջ 40:

[21] Դարբինյան Ռուբեն (Արտաշես Չիլինգարյան) (1883-1968) – ՀՅԴ անվանի գործիչ, խմբագիր: 1909թ. գործել է Կ. Պոլսում, 1914-1920թթ.՝ Թիֆլիսում և Բաքվում, 1920թ. եղել ՀՀ Արդարադատության նախարար: Բոստոնում 1922թ. հիմնել ու մինչև մահը խմբագրել է «Հայրենիք» ամսագիրը:

[22] Անունը ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

թյուն է ունեցել «Միհրանի»[23] նկատմամբ [ՀՅԴ] կուսակցության մահվան դատավճռի իրականացման մեջ, քանզի «Միհրանի» գտնվելու վայրի մասին հաղորդման հիման վրա պահանջել է նրա մասին տեղեկություններ կուսակցության այլ անդամներից՝ Լեոնիդ Թափրյանից (Թայիրյանից), «Արտավազդից», «Մեղավորյանից», կարգադրել է ահաբեկիչների ուղարկման և այլնի մասին: Այսպես, Օհանջանյանցի («Մերյան») Թիֆլիսից Պյատիգորսկ բժիշկ Մուրադովին[24] 1907թ. հունիսի 12-ի թ. 6120 հեռագրով և նույն ամսաթվով թ. 2173 հեռագրով Մուրադովը, հաղորդելով «Միհրանի» առողջության վիճակի և նրա առողջացման մասին, խնդրում է «Մերյանին» «Միհրանի» նկատմամբ [մահվան] վճռի իրականացումը նորից ի կատար ածելու համար ուղարկել [ՀՅԴ] Բաքվի կենտրոնական կոմիտեի փորձառու ահաբեկիչների: Օհանջանյանցը, Մուրադովից ստանալով հունիսի 14-ի թ. 2598 հեռագիրը [ՀՅԴ] Արմավիրի ենթակոմիտեին օգնություն ցուցաբերելու մասին, վերջինիս մոտ դրամի և ահաբեկիչների բացակայության պատճառով, նույն ամսվա 15-ի թ. 7628 հեռագրով Մուրադովին տեղեկացրել է, որ կարգադրություններն արված են, իսկ Մուրադովը նույն ամսաթվի թ. 2785 հեռագրով խնդրում էր Օհանջանյանցին հաղորդել ահաբեկիչների մեկնելու օրվա մասին, որպեսզի նրանց դիմավորի Պյատիգորսկի կայարանում: Հունիսի 25-ի և հուլիսի 4-ի թթ. 12755 և 20001 հեռագրերով Օհանջանյանցը կարգադրում է Ս. Պետերբուրգի [ՀՅԴ] տեղական կոմիտեի անդամ Զավրիևին[25], որպեսզի վերջինս իր կարգադրությունը փոխանցի [Պետական] Դումայի և կուսակցության անդամ Սաղաթելյանին[26]՝ ձեռնպահ մնալ նոր հեղափոխական «Անջատականներ»[27] կուսակցության հետ միավորվելու առթիվ փոխզիջումից և բանակցություններից, ինչը պետք է լինի ողջ [ՀՅԴ] կուսակցության ժողովի քննարկման առարկան: 1907թ. օգոստոսի 9-ի, 10-ի և 11-ի թթ. 1232, 1549 և 1594 հեռագրերում [ՀՅԴ] Բաքումի կենտրոնական կոմիտեի անդամ Արմեն Նավյանը հաղորդում է Օհանջանյանցին, որ «Միհրանը» եղել է Նովոռոսիյսկում, ապա մեկնել է Յալթա, և անհրաժեշտ է կարգադրել նրա նկատմամբ վճիռը իրականացնել հետևյալ հասցեով. Յալթա, շուկա, Արմենակ[28]...: Այդպիսի հաղորդումների հիման վրա Օհանջանյանցը նույն ամսի 15-ի թ. 6546 հեռագրով կարգադրություն է հղում Բաքու, որպեսզի Լևոն Թադևոսյանը[29] անմիջապես այդ նպատակի համար ուղարկի Վարդան Արզումանյանին, դրանից բացի՝ նույն թվի հունիսի 8-ի և 14-ի թթ. 700 և 1138 հեռագրերով Երևանից՝ անհայտ մեկից, [ՀՅԴ] կուսակցության Բյուրոյի հասցեով («Ժայռ»-ի[30] խմբագրություն) Օհանջանյանցին խնդրում են ուղարկել ինչ-որ կուսակցական թղթեր: 1907թ. հոկտեմբերի 7-ի առաքման պատրաստված և ոստիկանության կողմից առ-

[23] Այս հատվածում Միհրանի անունը չակերտներում է նշված: Լիժինյան նախաքննության ժամանակ ՀՅԴ-ի դեմ ցուցմունք տված 283 հոգանոց վկաների ցուցակը գլխավորում էին Գաբրիել Քեշիշյանը (Միհրան) և նրա գործակից Հաբեթ Վարդերեսյանը: Միհրանի մահափորձը տեղի է ունեցել 1907թ. հունիսի 10-ին՝ Արմավիրում (Հյուսիսային Կովկաս), համաձայն ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշման: Սակայն նա սպանվել է 1910թ. սեպտեմբերին՝ 20-ամյա «Միշայի» Ասկերանի հերոս Դալի Ղազարի (Բաղալթյոխվյան) կողմից: Վերջինս ոստիկանության հետապնդումներից խույս տալով՝ ապաստանել է այդ ժամանակ Ռոստովում գտնվող Հ. Օհանջանյանի մտերիմ Ռուբինայի մոտ: Այստեղ տեղին է ներկայացնել Միհրանի մասին ՀՅԴ Վենենայի Ընդհանուր ժողովի կողմից (մեկ ձեռնպահով) ընդունված որոշումը. «1. Համարել Միհրանի և իր գործակիցներու վարմունքը ծանր հանցանք կազմակերպության և նրա պաշտպանած թուրքահայ դատի դեմ և այդ հիման վրա ճանաչել նրանց արտաքսված՝ Դաշնակցության շարքերից, 2. Հանձնարարել պատշաճ մարմնին՝ կազմակերպության կանոններով նախատեսված պատիժին ենթարկելու Միհրանը և իր գործակիցները»: Տե՛ս Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հտ. գ., ա. տ., ա. թ., էջ 128:

[24] Բժիշկ Մինաս Մուրադյանը (Մուրադով) դեռևս 1890-ականներից զբաղվել է Մոսկվայից ու Ռուսաստանի այլ քաղաքներից զենքի տեղափոխման գործով: Տե՛ս Խուդինյան Գևորգ, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006, էջ 338:

[25] Զավրիև (Զավրյան) Դավիթ Քրիստափորի 23.06.1889, Թիֆլիս – 11.08.1957, Թբիլիսի – հասարակական գործիչ, քիմիկոս: Պետերբուրգի համալսարանում աշակերտել է Դ. Մենդելեևին: 1921թ. հոկտեմբեր-1922թ. փետրվար եղել է ԵՊՀ ռեկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

[16] Հովհաննես Հակոբի Սաղաթելյանը (1871-1936) եղել է 2-րդ և 3-րդ Պետական Դումաների պատգամավոր: 2-րդ Պետական Դումայում գործող հինգ պատգամավորներից երեքը՝ Հ. Սաղաթելյան, Սիրական Տիգրանյան, Հ. Տեր-Ավետիքյան, ՀՅԴ ընտրյալներն էին:

[27] Նշյալ ժամանակահատվածում ՀՅԴ-ից տարանջատվել էին երկու ծայրահեղ թևերի ներկայացուցիչները՝ ձախանջատականները Լևոն Աթաբեկյանի և Արսեն Ամիրյանի (Մրավյան) ղեկավարությամբ (տե՛ս Վահէ, Անջատուածները, «Յառաջ» գրադարան մատ-շար, թիւ 47, Թիֆլիս, տպ. «Հերմէս», 1907, 43 էջ) և աջ-ազգայնականները՝ խմբապետ Միհրանի գլխավորությամբ: Առաջինը շուտով վերածվեց առանձին ձախլիկ-սոցիալիստական կուսակցության, իսկ երկրորդը՝ հակաբյուրոյական աղանդի, և, ի վերջո, իր առաջնորդի պատուհասումից հետո մարեց:

[28] Այսպես է տեքստում:

[29] Լևոն Թադևոսյան (Պապաշա) (1865-1936) – ծնվել է Ագուլիսում, Քրիստափոր Միքայելյանի քրոջ ավագ որդին էր: 1907թ. Բաքվից ընտրվել է ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր: 1909-1912թթ. ծերբակալված էր Նովոչերկասկի բանտում: Ազատվելուց հետո մինչև 1918թ. գործել է Բաքվում: 1919թ. ընտրվել է Հայաստանի խորհրդարանի անդամ, ապա նաև՝ ՀՅԴ Գերագույն դատական ատյանի անդամ: Խորհրդայնացումից հետո մինչև մահ ապրել է Փարիզում:

[30] «Ժայռ» հասարակական, քաղաքական, տնտեսական օրաթերթը հրատարակվել է Թիֆլիսում 1907-1908թթ.: Խմբագիր-հրատարակիչը Սամսոն Ղազարյանն էր, ապա՝ Արշակ Ղազարյանը:

գրավված նամակում [ՀՅԴ] Դոնի Նախիջևանի կենտրոնական կոմիտեի անդամ, «Նոր կյանք»[31] հայկական թերթի խմբագիր Ղարագուլյանը (Խաչե=Խլեբնիկով)[32] հաղորդում է Օհանջանյանցին և կուսակցության անդամ Աբովյանին՝ 1907թ. դեկ - տեմբերին և 1908թ. հունվարին Դոնի Ռոստովում և Ս. Պետերբուրգում նախատեսվող կուսակցական ժողովների մասին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 316-317: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1909 թվականի մայիսի 24: Քաղաք Թիֆլիս:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների հիման վրա հարցաքննեց որպես մեղադրյալ՝ ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

Իմ անուն, հայրանուն, ազգանուն – Համազասպ Իվանով Օհանջանյան; տարիքս – 35 տարեկան; իմ կոչումը-բժիշկ; Ախալքալաք քաղաքի քաղքենիներից, իմ մշտական բնակավայրը – Թիֆլիս քաղաքում, Գանովսկայա փողոց, տուն 15, ամուսնացած եմ; իմ ծննդավայրը – …[33]; հավատքը – հայ-գրիգորյան, կրթված, իմ զբաղմունքը – բժիշկ,անշարժ սեփականություն ունեմ Ախալքալաք քաղաքում–տուն, հատուկ նշաններ չունեմ, առնչությունը տուժյալին– …[34]; զինապարտությունս – կատարել եմ, քննության տակ – չեմ գտնվել, դատի տակ – չեմ գտնվել:

Քննիչի կողմից ներկայացված հարցերին. [ստորև շարադրվում են Հ. Օհանջանյանին քննի - չի կողմից ներկայացված մեղադրանքները]

Արդյոք ճանաչում եմ ես ինձ մեղավոր[35] այն բանում, որ ես պատկանել եմ 1905-1908 թվական - ներից[36] Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության նպատակ էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի է ունեցել 1905-1908թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ՝ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների[37] հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի[38] խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցավոր նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ [է կատարել] հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դա-

[31] «Նոր կյանք» գրական և քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել է Նոր-Նախիջևանում 1906-1907թթ.: Խմբագիրը Գր. Անոփյանն էր, ապա՝ Հ. Խարագյոզյանը:

[32] Ճիշտը՝ Հովհաննես Խարագյոզյան:

[33] Այսպես է տեքստում:

[34] Այսպես է տեքստում:

[35] Սա մեղադրականը կազմողի և ընդհանրապես՝ ցարական դատաքննությանը բնորոշ ամբաստանությունն առաջ տանելու գրելաձևն է և ոչ թե՝ Հ. Օհանջանյանի ցուցմունքը, ով մինչև վերջ էլ իրեն մեղավոր չճանաչեց:

[36] Ակնհայտ է, որ ՀՅԴ ձևավորման այս ոչ ճիշտ ժամկետների մատնանշումը պատահականություն չէր՝ ցարական քննիչների գործելակերպի առումով, քանզի սրանով փորձ էր արվում ջախջախել հենց այդ շրջանից Անդրկովկասում ՀՅԴ-ի շուրջը ձևավորված մարտական, դատական և այլ կառույցները, որոնք 1905-1906թթ. հայ-թաթարական պարտադրված կռիվների արդյունքում վերածվել էին հայկական գավառների փաստացի ինքնավարության ամբողջական և կուռ համակարգի:

[37] Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:

[38] Ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

տական իշխանության իրավասությունը՝ իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ, և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես՝ Համազասպ Օհանջանյանս [սա կրկին քննիչի կողմից ներկայացված մեղադրանքի տեքստն է], անդամակցելով նշյալ կուսակցությանը, կրելով կուսակցական «Համո», «Միերյ» և «Միերյան» կեղծանունները, լինելով նշյալ ընկերակցության Արևելյան Բյուրոյի անդամ՝ վարել եմ նրանում քարոզչական գործունեություն, 1905թ. նոյեմբերի 13-ից մինչև 30-ը մասնակցել կուսակցության շրջանային ժողովին, [ուր] նա՝ Օհանջանյանը, պնդել է Կովկասի ինքնավարության, դաշնակցային-ժողովրդավարական հանրապետության հիմնման և ռուսական կառավարության դեմ պայքարող զանգվածների զինման և հանրահավաքներում կռվի ու պայքարի քարոզչության ուժեղացման վրա: 1906թ. փետրվարի 20-ի [ՀՅԴ] կուսակցության Բյուրոյի հաշվետվության համաձայն նշված է Օհանջանյանի մուծումը կուսակցական կարիքների համար 15 ռուբլի: Իսկ 1906թ. հուլիսի 17-18-ի [ՀՅԴ] Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի որոշումից հետևում է, որ ի տես նշյալ կոմիտեի որոշման՝ Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի շրջանի հայկական դպրոցներում ճշմարիտ հեղափոխական քարոզչության կիրառման մասին վերջինիս նախագահ «Դարբին Ռուբենը»[39] կուսակցության Բյուրոյին հաղորդել է «Միերյանի» կողմից տեղական հայկական դպրոցների համար ուսուցիչ-քարոզիչներ շուտափույթ ուղարկելու մասին: 1907թ. հունիսից օգոստոս ամիսների առգրավված հեռագրերով բացահայտվել է, որ Օհանջանյանը գործուն մասնակցություն է ունեցել Միհրանի նկատմամբ կուսակցության մահվան վճռի իրականացման մեջ՝ կուսակցության այլ անդամների դրա կատարմանը դրդելով: Այսպես, հունիսի 12-ի թ. 6120 հեռագրով Թիֆլիսից կուսակցության Բյուրոյի անդամ բժիշկ Մուրադովին կարգադրում է անմիջապես հաղորդել տեղեկություններ Միհրանի մասին, իսկ նույն ամսվա թ. 7628 հեռագրով նույն Մուրադովի պահանջին՝ օգնություն ցուցաբերել [ՀՅԴ] Արմավիրի ենթակոմիտեին՝ Միհրանի նկատմամբ ահաբեկման համար դրամ և Բաքվի կենտրոնական կոմիտեից փորձառու ահաբեկիչներ ուղարկելով, ի տես նրա առողջացման, հաղորդում է Մուրադովին, որ կարգադրությունները արված են, հունիսի 25-ի և հուլիսի 4-ի թթ. 12755, 20001 հեռագրերով, Թիֆլիսից Ս. Պետերբուրգ, Օհանջանյանը կարգադրում է կուսակցության անդամ Զավրիևին, որպեսզի վերջինս փոխանցի նույն ընկերակցության անդամներին ձեռնպահ մնալ «Անջատականների» կուսակցության հետ միավորման առթիվ փոխզիջումներից և բանակցություններից: Նովոռոսիյսկում և Յալթայում Միհրանի գտնվելու մասին [ՀՅԴ] Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ Նավյանի օգոստոսի 9-ից մինչև 11-ը թթ. 1232, 1549 և 1594 հեռագրական հաղորդումների առթիվ Օհանջանյանը նույն օգոտոսի 15-ի կարգադրությամբ, թ. 6546 Բաքու՝ կարգադրում է [ՀՅԴ] Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ Թադևոսյանին կուսակցության անդամ Վարդան Արզումանյանին անհապաղ Թիֆլիս ուղարկել, այսինքն, Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով, Պատիժների մասին կանոնադրության 13-րդ և 1453-րդ հոդվածներով ինձ մեղավոր - ճանաչում[40]:

Ի արդարացում ինձ՝ ես պարզաբանում եմ: Ձեր ներկայացրած 1907թ. օգոստոսի 15-ի թ. 6546, 1907թ. օգոստոսի 22-ի թ. 10141, 1907թ. հուլիսի 4-ի թ. 20001, 1907թ. հունիսի 17-ի թ. 6110 հեռագրերը իմ կողմից չեն գրված և իմ կողմից այդպիսիք չեն ուղարկվել: Ես բոլորովին էլ «Միերյան» մականուն չունեմ և վերոնշյալ հեռագրերի ձեռագիրն իմը չէ: «Դաշնակցություն» հայ հեղափոխական միություն կուսակցության 1905թ. նոյեմբերի 13-ից մինչև 30-ը համագումարում ես ներկա չեմ եղել: Նշյալ ժամանակ ես ապրել եմ Թիֆլիս քաղաքում: «Միհրանի» անձը ինձ կտրականապես անհայտ է[41]: Ես միայն հիշում եմ, որ «Մշակ» թերթում կարդացել եմ ոմն Միհրանի անգրագետ հոդվածները, սակայն ով է Միհրանը՝ ես չգիտեմ: Ես հիշում եմ, որ այդ հոդվածներում պարունակվում էին հարձակումներ «Դաշնակցություն» կուսակցության դեմ: Լևոն Թադևոսյանի, Նավյանի և Վարդան Արզումանյանի անձերը ինձ անհայտ են: Դավիթ Զավրիևին ես գիտեմ, ծանոթացել եմ Թիֆլիսում 1905թ. ամռանը, սակայն նրա հետ մոտիկից ծանոթ չեմ եղել: Բժիշկ Մինաս Մուրադովին ես գիտեմ որպես բժշկի և հանդիպել եմ նրա հետ տեղական բժշկական ընկերությունում, սակայն նրա հետ մոտիկից ծանոթ չեմ եղել: Արդյո՞ք Զավրիևը և Մուրադովը «Դաշնակցություն» կուսակցության մեջ որևէ մասնակցություն ունեցել են թե ոչ՝ ինձ հայտնի չէ:

Կարդացված է [քննիչի կողմից]:

Հավելեմ:

Զավրիևի Թիֆլիս գալով՝ ես նրա հետ ծանոթացա շատ մոտիկից, սակայն մոտիկ ծանոթություն պահպանել չկարողացա, որովհետև նրա հետ մենք ապրում էինք տարբեր քաղաքներում:

[39] Ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

[40] Այսպես է տեքստում, ինչն ակնհայտ սխալ և վրիպակ է:

[41] Ինչ խոսք, Հ. Օհանջանյանի ինչպես այս, այնպես էլ հետագա բոլոր վկայությունները նրա պաշտպանական մարտավարության հիմքն էին կազմում: Միհրանի պարագայում՝ իր անձը վերջինիս նկատմամբ ահաբեկման կազմակերպման մեղադրանքից զերծ պահելու, իսկ ՀՅԴ անդամների դեպքում՝ վերջիններիս պաշտպանելու նպատակով:

Ինձ վերագրվող «Դաշնակցություն» կուսակցության օգտին 15 ռուբլի մուծումը իմ կողմից չէր կարող կատարվել, և հազիվ թե մուծում կատարած որևէ մեկը հաշվետվության մեջ իր ազգանվան դիմաց գրառեր: Հետո ես խնդրում եմ ինձ ներկայացնել 1906թ. կուսակցության Բյուրոյի այն հաշվետվությունը, որտեղ նշված է բժիշկ Օհանջանյանի կողմից 15 ռուբլի մուծումը «Դաշնակցություն» կուսակցության օգտին: Այդպիսի փաստաթղթի առնչությամբ դուք ինձ ասում եք, որ ներկայումս դուք չեք կարող ներկայացնել ինձ տեսնելու համար: Իմ խնդրանքին՝ ցույց տալ ինձ վկաներ, որոնք պնդում են, թե ես մասնակցել եմ կուսակցության համագումարին այն բանի համար, որպեսզի հնարավորություն ունենամ փաստարկված կերպով ժխտելու այդ ցուցմունքները, Դուք, պ. Դատական Քննիչ, հայտարարում եք, որ այժմ այդպիսի ցուցմունքներ ներկայացնել չեք կարող:

Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 416-417: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 3
ՈՐՈՇՈՒՄ

1909 թվականի մայիսի 24: Քաղաք Թիֆլիս:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը սույն թվականին հարցաքննելով Համազասպ Իվանով Օհանջանյանին (Ահաջանով), 35 տարեկան, որպես «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցություն հանցավոր ընկերակցության մեջ մասնակցության [համար] մեղադրվող, ինչպես նաև կուսակցության անունից վերջինիս անդամներին Միհրանի, Վարդապետյանի[42] և այլոց սպանության համար սադրելու մեջ, այսինքն՝ Պատժի մասին կանոնադրության 13-րդ, 120-րդ, 1453-րդ հոդվածներով և Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններում, ԳՏԱՎ.

1. Որ Համազասպ Օհանջանյանը մերկացվում է նշյալ հանցագործություններում՝ ինչպես խուզարկության ժամանակ գտնված «Դաշնակցություն» հայ հեղափոխական միություն կուսակցության փաստաթղթերով, այնպես և 1907թ. հունիս և օգոստոս ամիսներին առգրավված հեռագրերով, ինչպես նաև՝ քննության ժամանակ հարցաքննված վկաների ցուցմունքներով,

2. Որ նրան սպառնացող պատիժը կապակցված է սեփականության իրավունքից զրկման հետ: Վերոշարադրյալի ուժով Դատական Քննիչը, ղեկավարվելով Քրեական դատավարության կանոնադրության 416-րդ հոդվածի 6-րդ կետով, 419-րդ և 420-րդ հոդվածներով և Պատժի մասին կանոնադրության 13-րդ, 120-րդ, 1453-րդ հոդվածներով և Քրեական կանոնադրության 120-րդ հոդվածով, ՈՐՈՇԵՑ.

Նշյալ մեղադրյալ Համազասպ Օհանջանյանին կալանքի տակ պահել Մետեխի բանտում, ինչի մասին և հայտարարել նրան:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 417: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 4
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910թ. հոկտեմբերի 26: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը հարցաքննեց ներքոանվանյալին, ով ցուցմունք տվեց.

Համազասպ Իվանով Օհանջանյան – լրացուցիչ ցուցմունք եմ տալիս.

Հայերեն լեզվով ներկայացված ձեռագրում՝ որպիսին Դուք, Դատական Քննիչ, ասում եք առգրավված է Սարգիս Մանասյանցից[43] և վերնագրված է «Թմբուկի[44] հաշվետվություն», «1906թ. հուլիսի 1-ին փոխանցված է Միերին Թիֆլիս 1000 ռուբլի» գրառումը ինձ հետ ոչ մի առնչություն չունի: Հայտարարում եմ, որ ես խնդրել էի ներկայացնել ինձ խուզարկության արձանագրությունը, որի ժամանակ առգրավված է այդ հաշվետվությունը, որպեսզի համոզվեմ, թե համարակալվա՞ծ է արդյոք այդ հաշվետվությունը նշյալ արձանագրության մեջ, սակայն Դատական Քննիչը ինձ մերժեց: Ինձ ներկայացված Ախալքալաքի գանձապետա-

[42] Թերևս՝ Վարդերեսյանի:

[43] Մանասյան Սարգիս (°-1920) – մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ: Դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել ՀՅԴ Արևելյան Բյուրոյի Ձինական մարմնի անդամ: Լիժինյան գործով բանտարկվել է Ռոստովի բանտում, ապա դատապարտվել տաժանակիր աքսորի մինչև 1916թ.: 1918թ. մայիսին մասնակցել է Ղարաքիլիսայի հերոսամարտին: 1920թ. որպես ՀՅԴ լիազոր մեկնել է Դիլիջան՝ բանակցելու բոլշևիկների հետ, սակայն ձերբակալվել է և ուղարկվել Բաքու, ապա աքսորվել Նարգեն կղզի, ուր գնդակահարվել է:

[44] «Թմբուկը» Ախալքալաքն է:

րանի 1906թ. հուլիսի 1-ի թ. 521847 փոխանցման տոմսում ես տեսնում եմ, որ «Խ. Դիլանյանի» կողմից Ախալքալաք քաղաքից Թիֆլիս քաղաք բժիշկ Համազասպ Իվանի Օհանջանյանին փոխանցվել է 1000 ռուբլի, ընդ որում այդ տոմսի դարձերեսին կա [հետևյալ] գրությունը և ստորագրությունը. «Հազար ռուբլի ստացել եմ 1906թ. հուլիսի 6-ին Համազասպ Օհանջանյանից»: Այդ թարգմանության կապակցությամբ հայտարարում եմ, որ այդ տոմսի դարձերեսին «հազար ռուբլի 1906թ. հուլիս Հ. Օհանջան...» 1000 ռուբլի ստանալու գրությունը և ստորագրությունը գրված են իմ կողմից: Այդ թարգմանության առիթով հայտարարում եմ, որ Խ. Դիլանյանը իմ փեսան է և փողն իմն է՝ անձամբ ինձ պատկանող: Ներկայացված «ՀՅԴ 1-ին կենտրոնական կոմիտեի հաշվետվություն 1906թ. հունվարի 1-ից առ 1906թ. նոյեմբերի 1» վերնագրով ձեռագրի 7-րդ էջի 23 թվի դիմաց հայերեն լեզվով «Միերին–10-355-21» գրառումը, որպիսի ձեռագիր Դուք, Դատական Քննիչ, ասում եք՝ գտնվել է Սարգիս Մանասյանցի մոտ՝ ինձ հետ ոչ մի առնչություն չունի: Հայտարարում եմ, որ խուզարկության արձանագրությունը ներկայացնելու մասին իմ խնդրանքը, ե՞րբ է գտնվել այդ ձեռագիրը՝ նրա համար, որպեսզի համոզվեմ՝ արդյոք այնտեղ է գտնվել այդ փաստաթուղթը, Ձեր կողմից, Դատական Քննիչ, ինձ մերժվեց: Ինձ մոտ խուզարկության ժամանակ ժանդարմական ռոտմիստր Պ. Լոմիաշվիլին և Թիֆլիս քաղաքի 4-րդ տեղամասի պ. պրիստավը[45], չնայած իմ խնդրանքին, ինձնից խլված փաստաթղթերը օրենքի պահանջի համաձայն չեն համարակալել և արձանագրել, և դրա համար էլ ես իրավունք ունեմ ենթադրել, որ այնտեղ ոչ ինձնից առգրավված և ինձ չպատկանող փաստաթղթեր կարող են գտնվել: Իսկ եթե պ. Դատախազի հայտարարությամբ հետագայում կազմվել է այդ փաստաթղթերի ցուցակը, ապա ես այդ դեպքում ներկա չեմ եղել:

Ձեր կողմից ներկայացված տարբեր փաստաթղթերի առիթով, որոնց մասին Դուք, Դատական Քննիչ, ասում եք, որ այդպիսիք առգրավվել են բժիշկ Հ. Օհանջանյանից, հայտարարում եմ.

1. «Մարիա Ալեքսանդրի Սունդուկյանցի գրատուն և «Գործավոր» թերթային գործակալություն» բլանկով «Յառաջ» գրադարանի[46] վարչության անունով «Գրախանութի վարիչ Օհանջանյան» ստորագրությամբ 1907թ. փետրվարի 5-ից ներկայացված նամակը – ըստ կցված ցուցակի հայերեն լեզվով գրքույկներ կամ գրքեր ուղարկելու խնդրանքով, և նույն բլանկով «Մ. Սունդուկ...» «Մեծարգո Համազասպ Իվանի» անունով 1907թ. փետրվարի 5-ից ռուսերեն լեզվով նամակը–ըստ կցված ցուցակի «Յառաջ» գրադարանի գրքույկներ ուղարկելու խնդրանքով, այդ երկու նամակները գտնվել են ինձ մոտ, ընդ որում, առաջին նամակը՝ որպես հասցեագրված «Յառաջ» գրադարանի վարչության անունով, ես պետք է հանձնեի «Յառաջ» գրադարանի հրատարակիչ Խաչիկյանցին, որի անունը չեմ հիշում: Որտեղ է գտնվել «Յառաջ» գրադարանի վարչությունը՝ ես չգիտեմ:

2. «Սիրելի Համո»-ի անունով «Քո Մկրտիչ» ստորագրությամբ անթվակիր հայերեն նամակը – 100 օրինակ, «Ս. Ֆեդորովիչ, Ժողովրդական փողեր», 100 օրինակ – «Լերան նոր քարոզ» և «Յառաջ»-ի «Հարուստներ և աղքատներ» գրքույկները և այլն ուղարկելու խնդրանքով «Մկրտիչ» ստորագրած նամակի հեղինակը իմ հորեղբոր տղա Մկրտիչ Օհանջանյանն է:

3. «Կ. Պոլսում Պ. Պալենց գրատուն» բլանկով «Պ. Պալե...» ստորագրությամբ «Յառաջ» գրադարանի վարչության անունով գրքույկների և գրքերի ուղարկման մասին 1908թ. նոյեմբերի 15-28-ի հայերեն նամակը և այն նամակը, որը ենթակա է Խաչիկյանցին փոխանցման, առգրավվել է ինձնից:

4. «Կովկասյան Ռազմիկ» խմբագրություն» բլանկով «Ռոստոմ»[47] դիմումով նոյեմբերի 26-ի նամակը «Ռազմիկ» թերթի բաժանորդների մասին հաղորդելու խնդրանքով՝ ինձնից չի առգրավվել:

5. «Թանկագին, անգին իմ Օլեչկա»-ի անունով «Շուշիկ» ստորագրությամբ անթվակիր ռուսերեն նամակը ինձ հետ ոչ մի առնչություն չունի և չէր կարող առգրավվել իմ թղթերից: Դատելով դիմումից՝ այն վերաբերում է իմ կնոջը: Այդ նամակի բովանդակության մասին ես ոչ մի բացատրություն տալ չեմ կարող:

6. «Կովկասում ինքնավարության սկզբունք» բառերով սկսվող մեծ չափերի կես էջանոց ձեռագիրը առգրավվել է ինձնից և գրված է իմ կողմից:

7. «Անդրկովկասում ինքնավարություն» բառերով սկսվող մեծ չափերի կես էջանոց ձեռագիրը առգրավվել է ինձնից և գրված է իմ կողմից:

8. «Սիրելի Համո»-ի անունով «Խ. Դիլանյան» ստորագրությամբ 1908թ. հուլիսի 15-ի հայերեն նամակը առգրավված է ինձնից և Խաչատուր Դիլանյանն իմ փեսան է:

9. «Հարգարժան Համո»-ի անունով «Ս. Եդիգարյան»[48] ստորագրությամբ «Ռազմա-վիրական Սղնախյան և Թելավյան փոստային կետերի պահպանման գործակալ Պ. Ա. Եդիգարով» բլանկով

[45] Ոստիկանական պաշտոնյա:

[46] «Յառաջ» գրադարանի մատենաշարով հրատարակված գրքերի ամբողջական ցանկը տե՛ս «Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան, 1890-1950», հրատ. ՀՅԴ Բիւրո: Պօսթըն, տպ. «Հայրենիք», 1950, 636 էջ:

[47] Խոսքը ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմի (Ստեփան Զորյան) մասին է:

[48] Սարգիս (Սերգեյ) Փաշոյի (Պողոսի) Եդիգարյանը կուսակցական գործիչ էր, զբաղվում էր Թիֆլիսի «Հերմես» տպարանում ՀՅԴ գրականություն հրատարակելով: Ձերբակալվել է լիժինյան գործով:

Մելիք-Ազարյանցի անունով վեքսիլի ուղարկման մասին 1908թ. մայիսի 8-ի նամակը առգրավվել է ինձնից: Այդ նամակում հիշատակվող Մանասի[49] ով լինելը ինձ հայտնի չէ: Այդ նամակը ինձ գրված է թյուրիմացաբար՝ ծագած Սերգեյ Եդիգարովի և այդ նամակում հիշատակված անձանց՝ Թոփչյանի[50], Նազարյանի[51] և Գալստյանի միջև, «Հերմես» տպարանում «Գործ»[52] թերթի տպագրման կապակցությամբ, որպես անձի՝ ներկա գտնված բանավոր պայմանագրի կնքման ժամանակ՝ երրորդ անձի կարգավիճակով:

10. «Արևելյան Բյուրոյի ընկերոջ» անունով «Հայկո» ստորագրությամբ 1906թ. հոկտեմբերի 11-ի հայերեն նամակը–նոյեմբերին դրամի քանակի փոխանցման մասին հաղորդելու խնդրանքով՝ խուզարկությամբ ինձ մոտ չի հայտնաբերվել:

11. «Ընկերներ» դիմումով և «Պարույր[53]» ստորագրությամբ անթվակիր դեկտեմբերի 25-ի հայերեն նամակը չէր կարող առգրավվել ինձնից: Ժանդարմական վարչությունում ռոտմիստր Պրիգորան հայտնեց ինձ, որ իբր թե այդ նամակը գտնվել է իմ քույր Սաթենիկին[54] պատկանող առանձին թղթապանակում՝ իմ բնակարանում:

12. [ՀՅԴ] Վրեժի[55] կենտրոնական կոմիտեի «Շահե…» ստորագրությամբ 1908թ. հոկտեմբերի 26-ի թ. 72 անդորրագիրը չէր կարող առգրավվել ինձնից:

13. «Թանկագին Համո»-ի անունով «Դ. Զավրիև», «Դավիթ» ստորագրությամբ ռուսերեն նամակը առգրավվել է ինձնից:

14. «Սիրելի Համո»-ի անունով 1906թ. հուլիսի 9-ի հայերեն անստորագիր նամակը չէր կարող հայտնաբերվել ինձ մոտ:

15. «Սիրելի Շուշանիկ»-ի անունով «Մայրուշա» ստորագրությամբ, մասամբ ռուսերեն, մասամբ հայերեն նամակը չի գտնվել իմ թղթերի մեջ, իսկ ժանդարմական վարչությունում ինձ հայտնեցին, որ այդ նամակը գտնվել է իմ կնոջ թղթերում:

16. «Ընկերներ»-ի անունով «Բաբկեն» ստորագրությամբ 1908թ. դեկտեմբերի 6-ի հայերեն նամակը խուզարկությամբ ինձ մոտ չի գտնվել:

17. Էջմիածնի ժողովի[56] բանաձևերից մեկի նախագիծ ներկայացնող մատիտով գրված հայերեն ձեռագիրը առգրավվել է ինձնից, ես չեմ գրել, իսկ ով՝ չգիտեմ:

18. «Արշակ» ստորագրությամբ Բեռլինից 1907թ. դեկտեմբերի 14-ի հայերեն երեք էջանոց նամակը՝ դիմումով, որը թանաքով ջնջված է, և «Արշակ Իսահակյանց»[57] ստորագրությամբ «ՀՅ Դաշնակցություն. Կովկասյան գործունեության մասին հարցը և նրա բաժանման մասին» 139 կիսաէջանոց հայերեն ձեռագիրը առգրավել են ինձնից: Դրանք ես ստացել եմ «Գործ» թերթի խմբագրությունից՝ Լիպարիտ Նազարյանից, նայելու համար, իմ ձերբակալությունից քիչ առաջ և դրանք նայել ես չհասցրի:

Ձեր ներկայացրած հետևյալ վերնագրերով հայերեն 13 ձեռագրերի առթիվ.

Ա. Կաբանով Ն., Հողային հարցը Նոր Զելանդիայում,

Բ. Շիշկո, Որտեղի՞ց է ծագել հողային սեփականությունը,

Գ. Ինչպիսի՞ կարգեր են մեզ անհրաժեշտ,

Դ. Գոլուբև, Ինչպիսի՞ զեմստվո է անհրաժեշտ և ինչ պետք է նա անի,

Ե. Ինչպե՞ս պետք է ծախսվեն ժողովրդական փողերը,

Զ. Ինքնակալությունը և սովը,

Է. Ի՞նչ է համընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի ընտրական իրավունքը,

Ը. Ի՞նչ է անհրաժեշտ գյուղացուն,

Թ. Ալեքսեև, Պետիցիաների իրավունքը,

Ժ. Պրոկոպովիչ, Ի՞նչ է անհրաժեշտ բանվորներին,

Ի. Տարնովսկի, Հայրենասիրությունը և նրա նշանակությունը ժամանակակից պետության մեջ,

Լ. Ինչպե՞ս են բանվորները պաշտպանում

[49] Սարգիս Մանասյանն է:

[50] Թոփչյան Եղիշե Թադևոսի (1872-1909) – գրող, հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ: 1905թ. Թիֆլիսում մասնակցել է հայ-թուրքական կռիվներին, 1907թ. ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում ընտրվել Արևելյան Բյուրոյի անդամ: 1909թ. հոկտեմբերի 23-ին Կ. Պոլսից Կարին վերադարձի ճանապարհին՝ Բաբերդի շրջակայքում, սպանվում է Միհրանի եղբոր՝ Հաբեթի կողմից:

[51] Լիպարիտ Նազարյանը «Յառաջ»-ի խմբագրակազմի անդամ էր:

[52] «Գործ» հասարակական, քաղաքական օրաթերթը հրատարակվել է Թիֆլիսում 1908-1909թթ.: Խմբագիրը Ա. Դոշոյանն էր:

[53] Անդրանիկ Օզանյանն է:

[54] Սաթենիկ Օհանջանյանը խորհրդակցական ձայնով հրավիրված էր 1911թ. օգոստոսի 17-սեպտեմբերի 17-ին Կ. Պոլսում գումարված ՀՅԴ 6-րդ Ընդհանուր ժողովին:

[55] ՀՅԴ «Վրեժի» կամ՝ «Վրեժստանի» կենտրոնական կոմիտեությունն ընդգրկում էր Ատրպատականի շրջանը:

[56] Էջմիածնի Ազգային կենտրոնական ժողովը Մկրտիչ Ա. Խրիմյանի հովանավորությամբ նշանակվել է 1906թ. օգոստոսի 15-ին, գումարվել է 1906թ. օգոտոսի 17-29-ին: Նախագահը Ս. Զավարյանն էր: Ժողովի 60 պատգամավորներից 54-ը ներկայացնում էին ՀՅԴ-ն: Ժողովը ցրվել է ցարական ոստիկանության կողմից:

[57] Զամալյան (Իսահակյան) Արշակ (1882-1940) – ՀՅԴ անվանի գործիչ: 1905թ. ձերբակալվել է ցարական ոստիկանապետի ահաբեկման համար: 1906թ. Գերմանիայում հիմնել է «Եվրոպայի հայ ուսանողական միությունը»: Եղել է ՀՀ դեսպանը Վրաստանում, 1920թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի հետ կնքել է համաձայնագիր, մասնակցել է 1921թ. բոլշևիկների հետ Ռիգայի բանակցություններին:

իրենց շահերը – նույն բովանդակության ռուսերեն տպագիր թերթիկով,

Խ. Կամենև Յու., Ի՞նչ բան է լիբերալը և պահպանողականը – նույն բովանդակությամբ ռուսերեն գրքույկով,

հայտարարում եմ. ես չգիտեմ՝ արդյոք դրանք ինձնից են առգրավվել, թե՞ ոչ, քանի որ «Գործ»-ի խմբագրությունից նայելու համար ինձ ուղարկվել են մի քանի ձեռագրեր, բայց քանի հատ՝ չեմ հիշում: Փոստային թղթի վրա «Հայ-թաթարական ընդհարումների մեղավորները» վերնագրով 6 կիսաթղթերի վրա ռուսերեն ձեռագիրը առգրավվել է ինձնից և գրվել իմ կողմից: Ձեր կողմից ներկայացված անդորրագրերում հայերեն ձեռագիր տեքստը, առգրավված, ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, Վլադիկավկազ քաղաքում՝ 1908թ. դեկտեմբերին Արամ Աջայխանյանից և Ալեքսանդր Մարտիրոսովից, «Դաշնակցություն» կուսակցության Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի գրագրության մեջ – «34 գիրք Ժլատի[58] կենտրոնական կոմիտեին 500 ռուբլի (հինգ հարյուր ռուբլի), Արևելյան Բյուրո, Միեր, 2 օգոստոսի 1906թ.» – իմ կողմից չի գրվել: Ձեր կողմից ներկայացված «Միեր» ստորագրությամբ հայերեն գրությունը, առգրավված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, Մեծ Ղարաքիլիսա գյուղում էվոյանց եղբայրների մոտ՝ ես չեմ գրել: Ձեր կողմից ներկայացված «Համո» ստորագրությամբ «Մանաս»-ի անունով հայերեն գրությունը, գտնված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, 1907թ. սեպտեմբերի 2-ին Թիֆլիսում Եդիգարովների գրասենյակում՝ ես չեմ գրել: Ձեր կողմից ներկայացված հայերեն նամակի վերաբերյալ, գտնված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, 1907թ. օգոստոսին Կորյուն վարդապետի մոտից Ելիզավետպոլում «Համ. Օհանջան...» ստորագրությամբ, Թիֆլիս՝ «Սուրբ Հայր»-ի անունով, հայտարարում եմ, որ ես չեմ հիշում, որ գրեի այդպիսի նամակ, սակայն այդ նամակի ձեռագիրը մի քիչ նման է իմինին: Ձեր կողմից ներկայացված «Դաշնակցություն հայ հեղափոխական կուսակցության Ժլատի կենտրոնական կոմիտե» բլանկով 1906թ. հուլիսի 19-ի հայերեն «Ի տեղի Կ. Կոմիտեի Ռ. Դարբի...» ստորագրությամբ Արևելյան Բյուրոյի անունով նամակի առնչությամբ և ինձ ներկայացված «Ժլատի շրջանային ժողով. «Դաշնակցության» մասնակցությունը հասարակական բոլոր գործերում» վերնագրով հայերեն ձեռագրում գրառումի մեջ ընդունվում է, որ «Դաշնակցությունը» պարտավոր է մասնակցել հասարակական գործերին, ընտրություններին, թե «Դաշնակցությունը» չի կարող անցկացնել զուտ կուսակցական անձանց, նա պարտավոր է աջակցել առավել գիտակիցներին, քան այլ թեկնածուների, այլ վայրերի մարմինները պարտավորվում են գրել «Ալիք»-ի խմբագրության միջոցով՝ Արևելյան Բյուրոյին, Միերին՝ ուսուցիչներ գտնելու համար, որպիսի նամակ և ձեռագիր Դուք, Դատական Քննիչ, ասում եք՝ գտնվել են 1907թ. սեպտեմբերի 2-ին Թիֆլիս քաղաքում Պավել և Սերգեյ Եդիգարովների փոստային գրասենյակում՝ հայտարարում եմ, որ այդ նամակը և դրանում գրառումը ինձ հետ ոչ մի առնչություն չունի: «ՀՅԴ» անդորրագրի կազմի դարձերեսի վրայի գրառումները և ստորագրությունները «ՀՅԴ Արևելյան Բյուրո» կարմիր կնիքի կիսադրոշմով, անդորրագրային գրքույկի կոճղերում, որպիսին Դուք, Դատական Քննիչ, ասում եք՝ գտնված է Դոնի Ռոստով քաղաքում 1909թ. ապրիլին Սեմեվոն[59] Գռուզինյանի մոտ. Ա. «Շաումենի խմբին չի հանձնված անդորրագիր 15 ռուբլու, ինչպիսին ներառված է դրամական մատյանում, 1907թ. սեպտեմբերի 1», «Խ-ր-ին չի հանձնված անդորրագիր 15 ռուբլու 50 կոպեկի, ինչպիսին ներառված են դրամական մատյանում, Միեր, սեպտեմբերի 1»– գրված և ստորագրված չեն իմ կողմից: Ես հայտարարում եմ, որ խուզարկության արձանագրությունները ինձ ներկայացնելու մասին իմ խնդրանքում, որի ժամանակ գտնվել են ինձ ներկայացված փաստաթղթերը, համոզվելու համար արդյո՞ք դրանք [ինձ են պատկանում], Ձեր կողմից, Դատական Քննիչ, ինձ մերժվել է: Ինձ առաջարկվել է այժմ որպես փակված հայկական «Յառաջ»[60] թերթի խմբագիր Ավետիք Սահակովի[61] կողմից մասնակցել խմբագրմանը՝ գիտական հոդվածներ նայելու համար, ինչին ես համաձայնեցի: Սակայն, փաստացի չեմ մասնակցել: Ձեր կողմից ներկայացված երկու ռուսերեն նամակները, առգրավված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, Դավիթ Զավրիևից՝ Պետերբուրգ քաղաքում «Ձեր Համո» ստորագրությամբ, «Թանկագին Դավիթ Քրիստափորի» անունով՝ գրված են իմ կողմից: Կարս քաղաքում ապրող Համբարձում Ղարիբովին ես չեմ ճանաչում: Ա. Մ. Օհանջանյանից Համբարձում Ղարիբովին Կարս 500 ռուբլի փոխանցելու մասին ձեր ներկայացրած Փոխադարձ վարկի թիֆլիսյան ընկերության 1909թ. մայիսի 7-ի անդորրագրից եւս երևում է, որ իմ կողմից նշյալ գումարը փոխանցված է Համբարձում Ղարիբովին: Այդ կապակցությամբ ես հայտարարում եմ, որ դա իմ հանգուցյալ հոր պարտքն էր ոմն Եղիշե Բաստրմաջյանի, ում

[58] ՀՅԴ «Ժլատի» կամ 10-րդ կենտրոնական կոմիտեությունն ընդգրկում էր Հյուսիսային Կովկասի շրջանը:

[59] Ռուսերեն գրված է հենց այդպես՝ Семевон: Խոսքը Սիմոն Վրացյանի մասին է:

[60] «Յառաջ» հասարակական, քաղաքական, տնտեսական օրաթերթը հրատարակվել է Թիֆլիսում 1906թ.: Խմբագիրը Ավետիք Սահակյանն էր, ով ևս ձերբակալվել էր լիժինյան գործով:

[61] Սահակովը նույն ինքը՝ Ավ. Սահակյանն է (Հայր Աբրահամը) - անվանի կուսակցական-պետական գործիչ: Եղել է Հայաստանի Խորհրդարանի նախագահ, խորհրդայնացումից հետո գործել է Լիբանանում:

խնդրանքով ես այդ գումարը փոխանցել եմ Համբարձումն Ղարիբովին: «Երկու հազար չորս հարյուր ռուբլի ստացա, բժ. Հ. Օհանջանյան» 1908թ. օգոստոսի 28-ի «Բերբերովից՝ Մուրադյանին – երկու հազար չորս հարյուր ռուբլի Դոնի Ռոստովից Թիֆլիս» ներկայացված փոխանցման հեռագրի դարձերեսին և «Հազար հինգ հարյուր ռուբլի ստացա 1907թ. փետրվարի 14-ին, բժ. Համ. Օհանջ…», Խարկովից՝ Արիստակես Տեր-Կարապետյանից Թիֆլիս քաղաք բժիշկ Մինաս Մուրադովին 1500 ռուբլի փոխանցման մասին 1907թ. փետրվարի 7-ի Ազով-Դոնյան առևտրական բանկի ներկայացված անդորրագրի դարձերեսի ստորագրությունները և գրառումները՝ գրված են իմ կողմից: Այդ կապակցությամբ ես հայտարարում եմ, որ իմ գրառումները և ստորագրությունները, ինչքան հիշում եմ, գումարը ստացել եմ ես և փոխանցել բժիշկ Մինաս Մուրադովին:

Ձեր կողմից ներկայացված դրամական փոխանցումների կապակցությամբ.

Ա. Թիֆլիսի Առևտրական բանկի միջոցով «Ա. Օհանջ.» ստորագրությամբ 1908թ. հոկտեմբերի 6-ին Երևան Գալուստ Ալոյանին[62] 1000 ռուբլի փոխանցելու մասին,

Բ. Ազով-Դոնյան առևտրական բանկի միջոցով «Հ. Օհանջանյան» ստորագրությամբ Ելիզավետպոլ Միխայիլ Աֆանասևին 1907թ. հոկտեմբերի 27-ին 500 ռուբլի և 1906թ. սեպտեմբերի 1-ին 2000 ռուբլի փոխանցելու մասին,

Գ. Փոխադարձ վարկի Թիֆլիսի ընկերության միջոցով 1906թ. դեկտեմբերի 4-ին Ելիզավետպոլ Միխայիլ Աֆանասևին 1000 ռուբլի, 1906թ. մայիսի 23-ին Շուշի Թեոդորոս Խաչիևին 4000 ռուբլի, 1907թ. փետրվարի 28-ին Ելիզավետպոլ հոգևորական Բաբյանին 500 ռուբլի, 1906թ. հոկտեմբերի 19-ին և 23-ին Երևան Աբրահամ Տեր-Արիստակեսյանին 2300 ու 1000 ռուբլի փոխանցումների մասին ես հայտարարում եմ, որ բացառությամբ Գալուստ Ալոյանի անվամբ առաջին փոխանցումից, ինչը ես ժամանակի վաղեմության պատճառով ճշգրիտ չեմ հիշում ինչքան և ում եմ փոխանցել և կատարե՞լ եմ այդ բոլոր փոխանցումները՝ չեմ հիշում, որ հայ-թաթարական ընդհարումների և նրա ավարտին հետևող ժամանակահատվածում ես, իմ պարտքը համարելով օգնել տուժած հայերին, իմ մուծումներով մասնակցել եմ նրանց օգտին [կատարվող] դրամահավաքներին, ինչպես նաև այլ անգամ փոխանցել եմ հավաքված գումարները նվիրատուների հանձնարարությամբ: Ինչ վերաբերում է Գալուստ Ալոյանի անվամբ 1908թ. հոկտեմբերի 6-ի փոխանցմանը՝ ես նույնպես չեմ հիշում դրա ծագումը, հավանաբար այն վերաբերում է նույն կարգավիճակին: Ձեր կողմից ներկայացված Փոխադարձ վարկի թիֆլիսյան ընկերության հայտարարության առնչությամբ 1906թ. դեկտեմբերի 13-ին «Ա. Օհանջանյան» ստորագրությամբ Ալեքսանդրապոլ Սիմոն Խոյեցյանին 800 ռուբլի փոխանցման մասին, հայտարարում եմ, որ այդ փողերը փոխանցված են մասամբ՝ ի հաշիվ Սիմոն Խոյեցյանին իմ հորեղբայր Արտաշես Օհանջանյանի պարտքի, իսկ մասամբ՝ իմ հորեղբորը հանձնելու համար: Ձեր ներկայացրած Երևանից Թիֆլիս 1907թ. հունիսի 8-ի և 1907թ. հունիսի 14-ի «Թիֆլիս, «Ժայռ»-ի խմբագրություն, Համո Օհանջանյանին: Ուղարկեք թուղթ…», «Թիֆլիս, «Ժայռ»-ի խմբագրություն, Համո Օհանջանյանին: Թուղթը ուղարկված է, հեռագրեցեք» երկու հեռագրերի առնչությամբ հայտարարում եմ, որ ես չեմ հիշում, որ ստացած լինեմ նման հեռագրեր և դրանց տեքստի ձեռագիրն ինձ անծանոթ է: Խնդրում եմ ներկայացնել ինձ քննչական վարույթի խուզարկության և առգրավումների արձանագրությունների, ինչպես նաև՝ «Դաշնակցություն» կուսակցությանը իմ պատկանելության մեղադրանքով քննչական վարույթի պատճենները:

Արձանագրությունն անձամբ կարդացել եմ: Համազասպ Իվանի Օհանջանյան:

Դատական թարգմանիչ Նադիրաձե:

Դատական քննիչ Ն. Լիժին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4191-4195: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 5
ՈՐՈՇՈՒՄ

1911թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր կատարած նախաքննությունը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործով, ԳՏԱՎ.

Որ ներքոանվանյալ մեղադրյալներին՝ սույն գործով ներկայացված Քրեական Դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդված-

[62] Գալուստ Հակոբի Ալոյան–ազգային-ազատագրական պայքարի հայտնի գործիչ: Կրել է Թորոս, Դարվիշ հեղափոխական կեղծանուններ: Ծնվել է 1864թ. Երևանում, ավարտել է տեղի ծխական դպրոցը: Եղել Մրգաստանի (Երևան) Կենտրոնական կոմիտեի ղեկավար դեմքերից մեկը: Թավրիզում հիմնել է ՀՅԴ «Խարիսխ» զինագործարանը, եղել Խանասորի արշավանքի գլխավոր զինագործը: 1908թ. մասնակցել է իրանական հեղափոխությանը, ապա գործել է Բայազետում, ուր և դավադրաբար սպանվել է երիտթուրքերի կողմից՝ Կովկաս անցնելու փորձի ժամանակ 1914թ. կեսերին:

ների հիման վրա, նրանց նախաքննությամբ արված են հետևյալ հայտարարությունները.

XXXXXXXXI. Համազասպ Իվանով Օհանջանյան.

1. «Միեր» և «Միերյան» ստորագրությամբ փաստաթղթերը իր կողմից չեն գրված և իրեն չեն վերաբերում, իսկ քանի որ թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն փաստաթղթերի փորձաքննությունը կատարվել է ոչ բանիմաց փորձագետների կողմից, դրա համար էլ նշանակել փորձաքննություն՝ գերազանցապես ռուսերեն և հայերեն լեզուների տիրապետող փորձագետների միջոցով, ինչպիսիք կարող են լինել Դոնի Նախիջևանի հոգևոր ճեմարանի ուսուցիչները,

2. Ի հաստատումն այն ամենի, որ ինքը 1907թ. ողջ ամառը մշտապես ապրել է Թիֆլիսի նահանգի Ծղնեթ գյուղում, դրա համար էլ չէր կարող «Միերյան» ստորագրությամբ հեռագիր գրել–հարցաքննել Ալեքսանդր Բայսոգալովին, Աշոտ Աթանասյանին, Աստվածատուր Երիցյանին և Գրիգոր Վարդանյանին,

3. Ի հաստատումն այն բանի, որ Քեշիշյանը և Վարդերեսյանը նենգաշորթ են, նրանց ցուցմունքները կեղծ են և որ նրանք իր դեմ ցուցմունք են տվել՝ ելնելով թշնամությունից– հարցաքննել Մկրտիչ Բարդուղիմեոսի Մաղաքովին և Հարություն Ցելյանովին,

4. Քեշիշյանի և Վարդերեսյանի բնութագրերը՝ որպես նենգաշորթների, բնութագրման համար հարցաքննել Յալթայի տեղամասի դատախազի տեղակալ Միլեանտին, Յալթայի դատական քննիչին, որ քննություն է կատարել 1907թ. սեպտեմբերին Պատժի մասին կանոնադրության 924-րդ հոդվածով՝ նրանց [ուղղված] մեղադրանքով, և սույն գործին կցել ինչպես նշյալ գործը, այնպես և այդ գործը դադարեցրած քննիչի որոշումը,

5. Հարցաքննել հայերեն լեզվին գիտակ անձանց, որ «Համո»-ն ոչ թե մականուն է, այլ Համազասպ անվան կրճատ ձևը,

6. Ներկայացնել այն փաստաթղթերը, որոնց հիմամբ իր վրա ծանրագույն մեղադրանքներ են սարքվել և որոնք իրեն չեն ներկայացվել (փաստաթղթերը Գրուզինյանի մոտ են՝ Արևելյան Բյուրոյի անդամ Համոյի ընտրության մասին, Եդիգարովի փաստաթղթերը՝ Համոյի կողմից 22 ռ. մուծելու մասին, և վերջապես՝ 1905թ. շրջանային ժողովում Համոյի ներկայության մասին), բայց դրանք իրեն ներկայացնելու հարցում մերժել են,

7. Ի հաստատումն այն բանի, որ ինքը չէր կարող ներկա գտնվել 1905թ. նոյեմբերի շրջանային ժողովին- հարցաքննել Կլավդիա Արղուտինսկայային, Էմմա և Վասիլի Մայկովներին, Տիգրան Թադևոսյանին և այլոց,

8. Ի հաստատումն այն բանի, որ Օհանջանյանը անկուսակցական է և քաղաքականությամբ չզբաղվող – հարցաքննել Կլավդիա Արղուտինսկայային, Վասիլի և Էմմա Մայկովներին, Ստեփան Դոնդուրովին, Տիգրան Թադևոսյանին, Հովսեփ Խունունցին, Սերգեյ Տեր-Մանասյանցին, Ալեքսանդր Քալանթարովին և այլոց,

9. Ի հաստատումն այն բանի, որ Համազասպ Օհանջանյանը էջմիածնի համագումարի պատգամավոր է ընտրվել Բաքու քաղաքից որպես անկուսակցական առաջադիմական,

10. Ի տես այն բանի, որ նրան մինչ այժմ չեն ներկայացվել թե՛ իր և թե՛ ուրիշ անձանց մոտ եղած խուզարկությունների արձանագրությունները, դրա համար ներկայացնել իրեն այդպիսիք, քանի որ քննության ժամանակ այդ արձանագրությունները չեն կարդացվել: Համազասպ Օհանջանյանին ներկայացված փաստաթղթերը հայտնաբերվել են այն թղթերում, որոնք նրա մոտ չեն գտնվել, և որ այդ առթիվ քննիչի և պրիստավի ներկայացրածի ու ցուցմունքի միջև հակասություններ կան,

11. Զավրիևի բացատրությունը, որ Համազասպ Օհանջանյանը «Դաշնակցություն» կուսակցության կողմնակից է – ներկայացնում է ոչ մի բանի վրա չհիմնված ենթադրություն,

12. Ի տես հայերեն փաստաթղթերում սխալ թարգմանության–նոր թարգմանություն կատարել հայ ուսուցիչների միջոցով և համեմատության համար տրամադրել իրեն հայերեն փաստաթղթերի պատճենները,

13. Տրամադրել իրեն քննչական վարույթի գործի բնագիրը՝ մեքենագիր տեքստի վրիպակների պատճառով,

14. Դատական Քննիչի կարծիքով՝ «Դաշնակցություն» կուսակցությունը մինչև 1905թ. գոյություն չի ունեցել, մինչդեռ Դատական Քննիչը ներկայացնում է մինչև 1905թ. կատարված սպանությունների մի ողջ շարք, դրա համար էլ կուսակցության բնութագրումը իրականությանը չի համապատասխանում: Ապա, Դատական Քննիչի կողմից անուշադրության է մատնվել հայ-թաթարական ընդհարումների հսկայական նյութը, ընդորում, փաստաթղթերի թարգմանության ժամանակ ուշադրություն է դարձվել հայերի հարձակումներին և անուշադրության են մատնվել հայերի վրա հարձակումների, կազակների գործողությունների, կառավարական իշխանության գործակալների մասին [փաստերը], դրա համար էլ այդ փաստաթղթերը և գրքերը ենթարկել լրացուցիչ թարգմանության,

15. 1905թ.-ից մինչև 1907թ. «Դաշնակցություն» կուսակցությունը ինքնապաշտպանության կազմակերպություն էր և այդ ժամանակի ողջ քննության ընթացքում ցույց չի տրված ոչ մի հեղափոխական ելույթ, իսկ քննությամբ ներկայացվող ահաբեկչությունները հայ-թաթարական ընդհա-

ռումների հիմքի վրա սպանություններ են՝ գերագույն իշխանության դեմ խռովության հասկացողության ներքո դիտարկվելու համար անհիրավազոր, ինչի [որպես] հաստատում կցել Կովկասի փոխարքայի կողմից հրավիրված հայ-թաթարական համագումարի արձանագրությունը և սենատոր Կուզմինսկու հաշվետվությունը,

16. Ի հաստատումն այն բանի, որ «Յառաջ» գրադարանի հրատարակությունները լեգալ են, որ այդ գրադարանի հրատարակած 60 գրքերից մամուլի գծով կոմիտեի կողմից բռնագրավված է միայն հինգ-վեցը, իսկ մնացածը հասարակության մեջ շրջանառության է թույլատրված, քանի որ ինքը՝ Օհանջանյանը, նշյալ «Յառաջ» գրադարանի հետ ոչ մի առնչություն և մասնակցություն չի ունեցել, հաղորդել իրեն, թե ինչում է ինքը «Յառաջ» գրադարանի առնչությամբ մեղադրվում,

17. Ի հաստատումն այն բանի, որ 1905թ.-ից մինչև 1907թ. «Դաշնակցություն» կուսակցությունը զբաղվել է միայն հայ-թաթարական ընդհարումների հարցերով, որ նրա գործունեությունը թույլատրվել է կառավարական իշխանության կողմից՝ որպես ոչ մի հակակառավարական բան չներկայացնող, որ փոխարքայի կարգադրությամբ գեներալ-նահանգապետերը, գավառապետերը զենք են տրամադրել սպանություններից և թալանից խաղաղ բնակչության պաշտպանության համար, որ զորքերը և ոստիկանությունը գործել են «Դաշնակցություն» կուսակցության հետ համերաշխ, որ կուսակցության գործունեությունը կրել է բացահայտ բնույթ և ոչ մեկը առիթ չուներ նրան հանցավոր համարել – հարցաքննել գեներալ Մալամային, Սուլթան Ղրիմ-Գիրեյին, փոխարքայի գրասենյակի կառավարիչ Պետերսոնին, Ջունկովսկուն, Խատիսովին[63], Սամսոն Հարությունովին[64], Երմոլաևին, Չրելաևին, Բաքվի քաղաքագլուխ Մարտինովին, Վեսելովզորովին և Ելիզավետպոլի հայկական առաջնորդարանի արխիվից պահանջել ռուսական կառավարության գործակալների և հայկական ինքնապաշտպանության անդամների գրագրության մասին գործը,

18. Նշյալ ժամանակահատվածում կուսակցությունը ծրագիր չի ունեցել, որպեսզի նրա գործունեությունը ենթարկվի Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածին, իսկ 1905թ. նրա նախագիծը օրինական ուժ չուներ, իսկ ինչ վերաբերում է 1907թ. հետո կուսակցության գործունեությանը, ապա ողջ քննության ընթացքում Ռուսաստանում կառավարման կերպի փոփոխության հավակնող ոչ մի հեղափոխական ելույթ չկա՝ բացառությամբ գործադուլների, իսկ Դատական Քննիչի կողմից Գրյազնովի, Կարանգուլովի և Ալիխանովի սպանությունները «Դաշնակցություն» կուսակցությանը վերագրելը [անհիմն է, քանի որ]. առաջինը՝ կատարված է սոցիալ-դեմոկրատական կազմակերպության, երկրորդը՝ սոցիալիստ-հեղափոխականների, և երրորդը՝ վրացիների կողմից, ինչի մասին հաղորդվել է թռուցիկներում, ինչպիսիք պահանջել և կցել գործին,

19. Ազատել կալանքից գրավի կամ երաշխավորության դիմաց և տրամադրել ողջ գործի պատճենը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4413- 4415: Թարգմանություն ռուսերենից:

* * *

XXXXXXXXIX. Համազասպ Օհանջանյան (Լրացուցիչ հայտարարություն)

Կրկին ներկայացնել «Յառաջ» գրադարանի առնչությամբ նրա մեղադրանքի կետերը, գտնված նամակի առթիվ («Հերմես» տպարանի մասին) Սերգեյ Եդիգարովի ցուցմունքը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4422: Թարգմանություն ռուսերենից:

* * *

CXCIII. Համազասպ Օհանջանյան (Լրացուցիչ հայտարարություն)

1. Ներկայացնել իր քննչական [գործի] վարույթի պատճենները,

2. Ազատել կալանքից:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4442: Թարգմանություն ռուսերենից:

* * *

28. Համազասպ Օհանջանյան.

Ի տես հայերեն փաստաթղթերում թարգմանությունների անճշտության՝ իրականացնել դրանց նոր թարգմանություն միջնակարգ ուսում-

[63] Խատիսյան Ալեքսանդր (1874-1945) – անվանի պետական-քաղաքական գործիչ: 1909-1917թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ–Քաղաքների միության կովկասյան կոմիտեի նախագահ, 1915-1917թթ.՝ Հայ Ազգային խորհրդի փոխնախագահ: Մասնակցել է 1918թ. Տրապիզոնի և Բաթումի բանակցություններին: 1918թ. նոյեմբերից եղել է ՀՀ արտգործնախարար, 1919թ. օգոստոս-1920թ. մայիս՝ ՀՀ վարչապետ: Կնքել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը, մասնակցել Լոգանի խորհրդաժողովի աշխատանքներին:

[64] Հարությունյան Սամսոն (1869, գ. Վերին Աղդամ-1941) – անվանի հասարակական-քաղաքական գործիչ: Եղել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ, Ազգային Բյուրոյի նախագահ, Հայ ժողովրդական կուսակցության փոխնախագահ, պատերազմից վնասվածներին օգնող Հայկական Կենտրոնական կոմիտեի նախագահ:

նական հաստատությունների հայ ուսուցիչների միջոցով և տրամադրել իրեն դրանց համեմատության պատճենները:

Տրամադրել քննչական [գործի] վարույթի բնագիրը՝ ի տես մեքենագիր պատճեններում որոշ սխալների, քանի որ այդպիսի պատճենները չեն կարող օրինավոր ուժ ունենալ:

Տրամադրել երեք փաստաթղթեր, որոնց հիման վրա նրա նկատմամբ ծանրագույն մեղադրանք է ներկայացվել և որոնք մինչ այժմ չեն տրամադրվել (փաստաթղթերը Գռուզինյանի մոտ են) – Համոյին Արևելյան Բյուրոյի անդամ ընտրելու, Եդիգարովի փաստաթղթով Համոյի կողմից 22 ռուբլի մուծելու և վերջապես Համոյի՝ 1905թ. շրջանային ժողովին [մասնակցելու վերաբերյալ], սակայն դրանում իրեն մերժվել է:

Ի տես այն բանի, որ մինչ այժմ իրեն չեն տրամադրվել ինչպես իր, այնպես էլ ուրիշների մոտ [կատարված] խուզարկությունների արձանագրությունները, տրամադրել այդպիսիք, քանզի կարդացված քննչական [գործի] նյութում չեն եղել խուզարկության արձանագրություններ, իսկ Համազասպ Օհանջանյանին ներկայացված փաստաթղթերը՝ իբր նրա մոտ գտնված, հայտնաբերվել են իր մոտ չգտնված թղթերում: Այսպես, Դատական Քննիչի կողմից ներկայացվել է «Պարույր» ստորագրությամբ մեծ չափերի հայերեն ձեռագրեր՝ իբր գտնված իր բնակարանի վառարանում, այնինչ խուզարկություն իրականացրած պրիստավ Պոպովը իր ցուցմունքում հաստատում է, որ վառարանում գտնվել են միայն թղթի պատռված և այրված կտորներ:

Տրամադրել «Յառաջ» գրադարանի առնչությամբ մեղադրանքի կետերը:

ՀԱԱ, Ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4460: Թարգմանություն ռուսերենից:

* * *

[Դատական Քննիչի խոսքերը]

Մեքենագիր պատճեններում կոպիտ սխալների առատության առիթով մեղադրյալ Օհանջանյանի ցուցմունքները, որոնց հետևանքով այդ պատճենները չեն կարող օրինական ուժ ունենալ, հիմնազուրկ են, քանզի պատճեններում հանդիպել ենք վրիպակներ տարբեր բառերում, սակայն այդ վրիպակները ուղղվել են քննության ներկայացումից առաջ կամ էլ ընթերցման բուն ընթացքում, ընդ որում այդ վրիպակները գործի համար էական նշանակություն չունեն: Մեքենագիր պատճեններում սխալների մասին մեղադրյալ Օհանջանյանի ցուցմունքները հիմնված են այն բանի վրա, որ մեղադրյալները քննչական [գործի] ընթերցման ժամանակ տեսել են մեքենագիր պատճեններում կատարված ուղղումները և հարցնում էին դրանց պատճառների մասին: Այդ ամենը միասին վերցրած վկայում են, որ մեղադրյալների նման պահանջները բավարարման ենթակա չպետք է լինեն: Համազասպ Օհանջանյանի հայտարարությունն այն մասին, որ Դատական Քննիչի կողմից «Պարույր» ստորագրությամբ մեծ չափի թուղթ է իրեն ներկայացվել իբր գտնված իր՝ Օհանջանյանի մոտ, բնակարանի վառարանում, այնինչ այդ խուզարկությունն իրականացրած պրիստավ Պոպովը իր ցուցմունքում հաստատում է, որ վառարանում գտնվել են միայն այրված թղթի կտորներ …[65], չեն համապատասխանում իրականությանը, քանի որ 1910թ. սեպտեմբերի 26-ին Համազասպ Օհանջանյանին, ինչպես հետևում է նրա հարցաքննության արձանագրությունից, ներկայացվել է այլ թղթերի թվում և գրելու թղթի թերթ՝ «Ընկերներ» դիմումով, «Պարույր» ստորագրությամբ դեկտեմբերի 25-ից և Օհանջանյանը հայտարարել է, որ նման նամակ չէր կարող իրենից առգրավվել, ընդ որում, ոչ մի ցուցում այն փաստի առթիվ, որ այդ փաստաթղթի ներկայացման ժամանակ Դատական Քննիչի կողմից բացատրվել է, որ այդպիսի փաստաթուղթ գտնվել է նրա՝ Օհանջանյանի վառարանում, բնակարանում, նշյալ արձանագրությունում չկա, իսկ պրիստավ Պոպովը, ում իր փաստարկները հաստատելու համար հղում է անում մեղադրյալ Օհանջանյանը, չի հաստատում այդ և 1909թ. մայիսի 19-ի իր ցուցմունքում բացատրում է, «որ Համազասպ Օհանջանյանի մոտ ես հայտնաբերել եմ հայերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով մեծ գրագրություն, իսկ մեկ ձեռագիրը (բայց ոչ նամակը) պատռված կտորներով գտնվել է վառարանում և առանց նշյալ այրված թղթի կտորների»:

ՀԱԱ, Ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4467: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Մեղադրյալ Համազասպ Օհանջանյանը միջնորդություն ներկայացրեց.

Ա. Վկաների հարցաքննության մասին՝ ի հաստատումն այն բանի.

1. Որ 1907թ. ողջ ամառը առանց բացակայելու նա ապրել է Թիֆլիսի գավառի Ծղնեթ գյուղում, դրա համար էլ չէր կարող «Միերյան» ստորագրությամբ հեռագիր գրել,

2. Որ 1905թ. նոյեմբերին նա չէր կարող Թիֆլիս քաղաքում [ՀՅԴ] շրջանային ժողովին ներկա լինել,

3. Որ ինքը՝ Համազասպ Օհանջանյանը, անկուսակցական առաջադիմական է, քաղաքականությամբ չզբաղվող,

[65] Այսպես է տեքստում:

4. Որ ինքը էջմիածնի համագումարի պատ - գամավոր է ընտրվել որպես անկուսակցական-առաջադիմական,

Բ. Հայերեն լեզվի գիտակ անձի հարցաքննություն այն մասին, որ «Համո»-ն նրա «Համա - զասպ» անվան կրճատված անունն է և ոչ թե նրա մականունը:

Սակայն, այս բոլոր միջնորդությունները ենթակա չեն բավարարման, քանի որ.

Առաջին, մեղադրյալ Համազասպ Օհանջանյանի հղումը իր՝ 1907թ. ողջ ամառը Ծղնեթ գյուղում առանց բացակայելու ապրելու մասին իրականությանը չի համապատասխանում, քանզի 1907թ. Ազովո-Դոնյան առևտրական բանկի թիֆլիսյան բաժանմունքի փոխանցումների մասին հայտարարությունների դիտումով և փորձաքննությամբ հաստատվել է, որ Համազասպ Օհանջանյանն իր ձեռքով գրած հայտարարությամբ 1907թ. հուլիսի 24-ի թ. 1142646 անդորրագրով Թիֆլիսից Ելիզավետպոլ փոխանցել է 500 ռուբլի, ինչպիսի փաստն արդեն ինքնին բացառում է մեղադրալ Օհանջանյանի հայտարարության հավաստիությունը Ծղնեթ գյուղում իր անբացակա մնալու մասին, դրա համար էլ այդ հիմնավորմամբ վկաների հարցաքննությունն ի հաստատումն իրականությանը չհամապատասխանող տվյալ հանգամանքի՝ չի կարող տեղի ունենալ,

Երկրորդ, 1905թ. նոյեմբերի 12-ից մինչև դեկտեմբերի 1-ը Համազասպ Օհանջանյանը բնակվել է Թիֆլիս քաղաքում և հենց այդ նույն ժամանակ ք. Թիֆլիսում տեղի է ունեցել «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովը, ընդ որում այդ նիստերը գումարվել են թե՛ ցերեկով, թե՛ երեկոյան ժամը 10-ից և այլն, դրա համար էլ տարօրինակ է, ինչ ձևով մեղադրյալ Օհանջանյանի կողմից նշված վկաները, ընդ որում՝ նրա հետ նույն բնակարանում չապրող, կարող են վկայել, որ նա՝ Օհանջանյանը, ներկա չի եղել ավելի քան հինգ տարի առաջ տեղի ունեցած այդ ժողովում: Դրանից զատ, մեղադրալ Օհանջանյանի մեկ հղումը, որ իր նշած վկաները կարող են վկայել այդ շրջանային ժողովում իր բացակայության փաստը, զուրկ է որևէ հիմքից, քանի որ մեղադր - յալ Օհանջանյանը չի ներկայացնում ոչ մի տվյալ, որոնք կապացուցեին նրա վկաների բերած այդ - պիսի հանգամանքը հավաստիացնելու հնարավո - րությունը, [քանի] որ կարող են վկայել միայն այն անձինք, որոնք ներկա են եղել այդ ժողովում և տեսել այդտեղ մեղադրյալ Օհանջանյանին, հակառակ դեպքում՝ նման փաստը չի կարող ապացուցվել վկաների ցուցմունքներով,

Երրորդ, Համազասպ Օհանջանյանի ցուցմունքն այն մասին, որ ինքն անկուսակցական առաջադիմական է, վկայում է միայն մեղադրյալ Օհանջանյանի ցանկության մասին՝ այդ միամիտ հնարքով հերքել «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության մեջ իր մասնակցու - թյունը, ինչպիսին [նրա մասնակցությունը] վկայվել է ինչպես գրավոր փաստաթղթերով, այնպես և բավական մեծաքանակ վկաների երդվյալ ցուցմունքներով: Մի կողմ թողնելով վկաների ցուցմունքները՝ անհրաժեշտ է նախ և առաջ ուշադրություն դարձնել 1908թ. դեկտեմբերի 12-ին Համազասպ Օհանջանյանի մոտ խուզարկությամբ հայտնաբերված փաստաթղթերին, որոնք իրենց ողջ լրիվությամբ ապացուցում են, որ Օհանջանյանը ոչ միայն եղել է «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության անդամ, այլև նույնիսկ այդ կուսակցության գլխավոր մարմին «Արևելյան Բյուրոյի» անդամ, ինչի հետևանքով նույնիսկ անհասկանալի է՝ ինչպե՞ս նման մերկացնող փաստաթղթերի առկայության դեպքում Օհանջանյանը նույնիսկ հնարավորություն ունի հղում կատարել վկաների վրա, որոնք կարող են հաստատել, որ ինքը՝ Համազասպ Օհանջանյանը, անկուսակցական առաջադիմական է, մինչդեռ անկուսակցական առաջադիմական անվանվող մեղադրյալ Համազասպ Օհանջանյանի մոտ գտնվել են խուզարկությամբ հետևյալ փաստաթղթերը.

1. «Հայկունի» (ներկա գործով մեղադրվող Հակոբ Չիլինգարյան[66]) ստորագրությամբ 1906թ. հոկտեմբերի 11-ի նամակը Ելիզավետպոլից «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամների անունով՝ Արևելյան Բյուրոյից կուսակցության Ելիզավետպոլի կոմիտեին 1905թ.-ից մինչև 1906թ. հոկտեմբերը դրամի քանակի փոխանցման մասին հաղորդելու խնդրանքով, ինչն անհրաժեշտ է կուսակցական հաշվետվության կազմման համար,

2. Ֆիլիպոպոլից 1905թ. նոյեմբերի 28-ի Ռոստոմի («Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամ մեղադրյալ Ստեփան Զորյան) անունով նամակը՝ կուսակցական նոր հուսալի հասցեի [հաղորդման] խնդրանքով, քանի որ Աբովյանը (նույն կուսակցության անդամ և մե - ղադրյալ Լևոն Աբովյան) լքում է իր փոստարկղը,

3. 1906թ. հուլիսի 9-ի «Համոյի» (այսինքն՝ Համազասպ Օհանջանյան) անունով «Կարո» ստորագրությամբ նամակը 1300 ռուբլի և 200 ռուբլի երկու հաշիվների ուղարկման մասին, փոխանցված Մանասի (այսինքն՝ այդ կուսակցության անդամ մեղադրյալ Սարգիս Մանասյանցի) կողմից, ցուցումով, որ վերջինից ստացված մարտական փամփուշտները գտնվում են իր՝ Կարոյի մոտ,

[66] Հակոբ Չիլինգարյանը 1900-ական թվականներին եղել է Կարսի շրջանի ՀՅԴ «ճակատային գծի ղեկավար գործիչ»: Մահացել է 1912թ. Վլադիկավկազի բանտում՝ ծանր հիվանդությունից հետո:

4. «Շուշիկ» ստորագրությամբ «Համոյի» (այսինքն՝ Համազասպ Օհանջանյան) անունով նամակ, ուր վերջինս հաղորդում է, որ նա՝ Համազասպ Օհանջանյանը, իր կողմից հարգված մարդ է, դաշնակցական է, և որ ինքը՝ Շուշիկը, նախկինում եղել է միայն դաշնակցականուհի, բայց այժմ ոչ, ինչով ինքը շատ բան է կորցրել՝ թողնելով «Դաշնակցություն» կուսակցությունը իր համոզմունքների պատճառով,

5. «Դավիթ Ջավրիև» (սույն գործով մեղադրյալ Դավիթ Ջավրիև) ստորագրությամբ «Համոյի» (Համազասպ Օհանջանյան) անունով նամակը, որպեսզի վերջինիս նամակը ներկայացնող «Ազատ միություն» ամսագրի խմբագրին ծանոթացնի «Դաշնակցության» կազմակերպության անդամների հետ,

6. 1908թ. դեկտեմբերի 6-ի «Բաբկեն» ստորագրությամբ կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամների անունով նամակը՝ հրազենի ստացման և երկրորդ՝ զինվորական դատարանին հանձնման մասին հաղորդագրությամբ, ինչի հետևանքով անհրաժեշտ է դատապաշտպան վարձելու միջոցներ ձեռնարկել,

7. «Մկրտիչ» («Դաշնակցություն» կուսակցության անդամ և մեղադրյալ Մկրտիչ Մելիքյանց) ստորագրությամբ «Համոյի» (Համազասպ Օհանջանյան) անունով նամակը՝ հայերեն հեղափոխական գրքույկներ 100 օրինակ ու Ֆեդորովիչի «Ժողովրդական փողեր» և «Լերան նոր քարոզ» 100 օրինակ «Յառաջ» գրադարանի հրատարակություններ ուղարկելու խնդրանքով, քանի որ այդ գրքույկները ունեն մեծ տարածում և ծառայում են կուսակցական քարոզչության նպատակին,

8. 1907թ. փետրվարի 5-ի Բաքվից «Դպրոցի աշխատակից» գրատնից «Յառաջ գրադարանի վարչության» անունով նամակը՝ «Յառաջ» գրադարանի հրատարակություններից մինչև 30 տեսակի գրքույկ և ամեն տեսակից 30-50 օրինակ ուղարկելու խնդրանքով,

9. 1908թ. նոյեմբերի 15-ի Կ. Պոլսից «Յառաջ» գրադարանի վարչության անունով նամակը՝ այդ գրադարանի յուրաքանչյուր հրատարակությունից 10 օրինակ ուղարկելու խնդրանքով,

10. 1907թ. փետրվարի 5-ի «Սունդուկյանց» գրատնից «Համազասպ Իվանովիչի» անունով նամակը՝ ինչքան հնարավոր է, ըստ կից ցուցակի, «Յառաջ» գրադարանի շատ գրքույկներ ուղարկելու խնդրանքով,

11. 1908թ. մայիսի 28-ի «Գ. Ա.» ստորագրությամբ «Ընկեր Համո» (այսինքն՝ կուսակցության անդամ Համո–Համազասպ Օհանջանյան) անունով նամակը, [հետևյալ] ցուցումով, որ գրքույկը անհրաժեշտ է տպագրել Ս. Պետերբուրգում Չարիխյանի միջնորդությամբ, իսկ «Յառաջ»-ի խմբագրության հանձնաժողովի անդամներին հարկավոր է ուշադրություն դարձնել այդ ձեռագրի ընթերցմանը,

12. Տասնյոթ կասկածելի և հեղափոխական հայերեն ձեռագրեր՝ մեծ մասամբ իրենցից ռուսերեն արգելված գրքույկների թարգմանություններ ներկայացնող և հավանաբար «Յառաջ» գրադարանի կողմից դրանք հրատարակելու համար նախատեսված:

Այսպիսով, թվարկված փաստաթղթերը հաստատում են ոչ միայն Համազասպ Օհանջանյանի անկասկած՝ պատկանելությունը «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցությանը որպես նրա Արևելյան Բյուրոյի անդամ, այլև նույնիսկ վկայում են նաև այն մասին, որ Համազասպ Օհանջանյանը՝ որպես «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամ, եղել է այդ կուսակցության գրքույկների հրատարակման գծով համապատասխան ծրագրերի գլխավոր կարգադրիչներից մեկը՝ լինելով նույն կուսակցության Արևելյան Բյուրոյին կից մարմին «Յառաջ» գրադարանի հանձնախմբի անդամ:

«Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության Չորրորդ ընդհանուր ժողովի[67] արձանագրությունից և որոշումներից ու 1907թ. ծրագրից հետևում է, որ «Յառաջ»-ի խմբագրության կազմումը Արևելյան Բյուրոյի գործն է: Դրանից բացի, հայերեն «Ժամանակ»[68] թերթի ընթերցումից հետևում է, որ դրա 1907թ. հունվարի 26-28-ի թ.19 և 20-ի համարներում նշվում է, որ որպես դաշնակցականների կողմից Թիֆլիսում Պետական Դումայի պատգամավորների ընտրողների թեկնածու երրորդ տեղամասում ընտրվել է բժիշկ Համազասպ Օհանջանյանը, իսկ «Ալիք» թերթի, ինչպես արդեն վերևում նշվեց՝ «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի օրգան, թիւ 22-ում նշվում է, որ 1906թ. հունիսի 10-ին քաղաքային դումայի շենքում, քաղաք Թիֆլիսում, տեղի ունեցավ գործադուլավոր հացթուխների ժողով «Դաշնակցություն» կուսակցության անդամներ օրիորդ Շուշիկի, Եղիշե Թոփչյանի և այլոց մասնակցությամբ՝ բժիշկ Համազասպ Օհանջանյանի նախագահությամբ: Վերոնշյալ և Օհանջանյանի մոտ գտնված Դավիթ Ջավրիևի Ս.Պետերբուրգից ուղարկված նամակից հետևում է, որ Օհանջանյանի հեռագրերը հացթուխների հանրահավաքի մասին նա Ջավրիևին ուղարկել է բոլոր պրոլետարական

[67] Գումարվել է Վիեննայում 1907թ. փետրվար-ապրիլ ամիսներին: Այստեղ Հ. Օհանջանյանը Ս. Ջավարյանի, Արմեն Գարոյի, Եղ. Թոփչյանի և Ա. Վռամյանի հետ ընտրվել է Արևելյան Բյուրոյի անդամ:

[68] «Ժամանակ» հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթը հրատարակվել է Թիֆլիսում 1906-1907թթ., արդեն իսկ հիշատակված «Հերմես» տպարանում: Խմբագիր-հրատարակիչն էր Հովհաննես Տեր-Միքայելյանը, ապա՝ Սարգիս Մանասյանը:

թերթերին [հաղորդելու համար], բայց այդպիսիք դադարել են լույս ընծայվել: Հայերեն «Յառաջ» թերթի ընթերցումը, որը ինչպես արդեն վերևում սույն որոշման մեջ ցույց տրվեց՝ Անդրկովկասում «Դաշնակցություն» կուսակցության օրգանն էր, հաստատել է, որ 1905թ.-ից մինչև կառավարական իշխանության կողմից այդ թերթի փակումը, բժիշկ Համազասպ Օհանջանյանը եղել է դրա խմբագրակազմի անդամ:

Համազասպ Օհանջանյանի հայտարարությունն այն մասին, որ «Յառաջ» թերթը և «Յառաջ» գրադարանը ինքը չի համարել և չի համարում կուսակցական՝ միանգամայն նույնական է այն բանին, որ ինքը՝ Համազասպ Օհանջանյանը, լինելով «Դաշնակցություն» կուսակցության ամենից գործունյա և երևելի անդամներից մեկը, որպեսզի ինչոր կերպ թաքցնի իր անկասկած մասնակցությունը, հայտարարում է, որ ինքը անկուսակցական առաջադիմական է, սակայն նրա այդպիսի հայտարարությունները զուրկ են որևէ հիմքից:

Նույն Օհանջանյանի հղումը հայերեն լեզվի գիտակ անձի վրա՝ ի հաստատումն այն բանի, որ «Համո»-ն մականուն չէ, այլ հակիրճ անունը «Համազասպ» անունից, շատ միամիտ է, քանի որ ոչ ոք չի կարող նույնիսկ հերքել նրա այդպիսի փաստարկներն այն մասին, որ «Համո»-ն նրա «Համազասպ» անվան փոքրացուցիչն է, սակայն դա, այդուհանդերձ, չի բացառում և այն, որ Համազասպ Օհանջանյանը կուսակցական գաղտնապահությամբ նշվում էր նրանում իր փոքրացուցիչ «Համո» անունով, ունենալով ի հավելումն և «Միեր» («Միերյան») գաղտնապահ կեղծանուն-մականուն:

Վերջին հանգամանքը միանգամայն հաստատվել է այն բանով, որ 1908թ. դեկտեմբերի 12-ին խուզարկության ժամանակ գտնված «Դաշնակցություն» կուսակցության այլ կուսակցական թղթերի և հաշվետվությունների մեջ վերջինիս անդամ Սարգիս Մանասյանցի մոտ «Թմբուկի» (Ախալքալաք) կոմիտեի 1905-1906թթ. հաշվետվությունում նշվում է, որ 1906թ. հուլիսի 1-ին Ախալքալաքից Թիֆլիս Միերին փոխանցվել է 1000 ռուբլի, իսկ փոստային փոխանցումների և Ախալքալաքի գանձապետության փոխանցումների դիտումից պարզվեց, որ 1906թ. հուլիսի 1-ին Ախալքալաքից միայն մի փոխանցում է կատարվել տեղական գանձապետարանի միջոցով թ. 521849 անդորրագրով Խաչատուր Դիլանյանից՝ քաղաք Թիֆլիս, Համազասպ Օհանջանյանին 1000 ռուբլի, որոնք ստացվել են վերջինիս կողմից ստացականով՝ 1906թ. հուլիսի 6-ին պետական բանկի թիֆլիսյան բաժանմունքից:

Քննության ժամանակ հարցաքննված վկա Քեշիշյանը բացատրեց, որ «Համազասպ Օհանջանյանը, լինելով «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամ և ղեկավարելով քարոզչական գործունեությունը, հայտնի էր կուսակցությունում «Համո» անունով և «Միերյան» մականունով:

Մեղադրյալ Համազասպ Օհանջանյանի «Միեր» («Միերյան») կուսակցական մականունի պատկանելությունը ցույց են տալիս նաև հետևյալ կուսակցական փոխանցումները. հենց նույն Սարգիս Մանասյանցի մոտ գտնված կուսակցության Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ «Դարվիշի» (այսինքն՝ Գալուստ Ալոյան) ստորագրությամբ 1908թ. դեկտեմբերի 8-ի «Լեոնիդի» (մեղադրյալ Սարգիս Մանասյանց) անունով նամակում նշվում է, որ «Դարվիշը», հաղորդելով «Լեոնիդին» իր կողմից կուսակցության Երևանի (Մրգաստան) կոմիտեի հաշվետվությունների պատրաստման մասին, տեղեկացնում է, որ նախկինում «Միերից» ստացած 4300 ռուբլին ծախսվել է կոմիտեում, դրա համար էլ հարկավոր է փոխանցել «Միերին», որպեսզի նա էլի փող ուղարկի, իսկ բանկերի անդորրագրերի դիտումից հետևում է, որ 1908թ. փետրվարի 21-ին Համազասպ Օհանջանյանը Թիֆլիսից Երևան փոխանցել է 500 ռուբլի, որոնք և ստացվել են Գալուստ Ալոյանցի կողմից՝ 1908թ. փետրվարի 28-ին, որ 1908թ. մարտի 28-ին նույնի կողմից նշյալին փոխանցվել է 1000 ռուբլի, որոնք և ստացվել են վերջինիս կողմից 1908թ. մարտի 31-ին, որ 1908թ. հոկտեմբերի 6-ին նույնի կողմից փոխանցվել է նշյալին 1000 ռուբլի, որոնք և ստացվել են վերջինիս կողմից 1908թ. հոկտեմբերի 11-ին, որ 1908թ. նոյեմբերի 13-ին նույնի կողմից նշյալին փոխանցվել է 900 ռուբլի, որոնք և վերջինս ստացել է նույն նոյեմբերի 18-ին, որ 1908թ. դեկտեմբերի 1-ին նույնի կողմից նշյալին փոխանցվել է 900 ռուբլի, որոնք և վերջինս ստացել է դեկտեմբերի 4-ին: Իսկ ընդհանրապես նշյալ անդորրագրերով 1908թ. Համազասպ Օհանջանյանի կողմից Թիֆլիսից Երևան Գալուստ Ալոյանցին փոխանցվել է 4300 ռուբլի, իսկ «Դարվիշի» (Գալուստ Ալոյանց) նշյալ կուսակցական նամակով 1908թ. դեկտեմբերի 8-ից նշվում է «Միերից» (Համազասպ Օհանջանյան) 1908թ. կուսակցության Երևանի կոմիտեի համար 4300 ռուբլի ստացած լինելու մասին: Այդպիսով, վերոբերյալ փաստաթղթերը միանգամայն ապացուցելով «Դաշնակցություն» կուսակցության մեջ «Միեր» («Միերյան») մականունի անկասկած պատկանելությունը Համազասպ Օհանջանյանին, հերքում են նույն Օհանջանյանի փաստարկները, որ իր կողմից կատարվել են դրամական փոխանցումներ որպես ինքնապաշտպանության համար դրամահավաքներ՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, մինչդեռ Գալուստ Ալոյանցին կուսակցական փոխանցումները կատարված

են Համազասպ Օհանջանյանի կողմից ոչ թե 1908թ., այլ ողջ 1908թ. ընթացքում[69]:

Դիտարկված այլ տվյալներից հաստատվում է Համազասպ Օհանջանյանի անհերքելի մասնակցությունը նշյալ «Դաշնակցություն» կուսակցությանը: Աչքի է զարնում հետևյալ ակնառու փաստը: Ահավասիկ, երդվյալ հավատարմատար Կլանկի ցուցմունքով բժիշկ Համազասպ Օհանջանյանը 1907թ. ներկայացել է իրեն՝ առաջարկելով Կլանկին զինվորական դատարանում և Թիֆլիսի դատական պալատում պաշտպանել հայերին, որոնք մեղադրվում են «Ելիզավետպոլ» երկաթգծի կայարանում, ոստիկանական սենյակում, ռումբ նետելու մեջ և Ելիզավետպոլ քաղաքում պայթուցիկ նյութերի պատրաստման լաբորատորիայի հայտնաբերման գծով, ընդ որում այդ երկու գործերով պաշտպանության համար Օհանջանյանը վճարել է յուրաքանչյուր գործի համար՝ 500-ական ռուբլի, իսկ մեղադրյալ Սարգիս Մանասյանցի մոտ խուզարկությամբ գտնված կուսակցության Արևելյան Բյուրոյի 1907թ. ապրիլի և հունիսի հաշվետվություններում նշվում է, որ ապրիլի 20-ին հանձնվել է դատապաշտպան Կլանկին Այգեստանի (այսինքն՝ Ելիսավետպոլի) հաշվով 500 ռուբլի:

Որպես Համազասպ Օհանջանյանի՝ «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամ նշյալ հեղափոխական կազմակերպությանը «Միր» և «Միերյան» մականուններով անհերքելի մասնակցության եզրակացություն հարկ է ուշադրություն դարձնել.

Առաջին, այն հանգամանքի վրա, որ ռուս և հայ փորձագետների կողմից հաստատվել է, որ.

1. Արևելյան Բյուրոյի գանձապահ «Միր» ձեռագիր տեքստը և ստորագրությունը՝ գտնված «Դաշնակցություն» կուսակցության Վլադիկավկազի կոմիտեի կուսակցական թղթերում, նշյալ կուսակցության Արևելյան Բյուրոյի 1906թ. օգոստոսի 2-ի թ. 34 անդորրագիրը Ժլատի (Վլադիկավկազի) կենտրոնական կոմիտեից 5600 ռուբլի ընդունելու մասին,

2. Նույն կուսակցության Անտառապատի[70] պահեստում կուսակցական փողերը տալու մասին «Միր» ստորագրությամբ Սարդարի անունով գտնված գրությունը,

3. Գաղտնապահական հեռագրեր՝ ինչպես Միհրանի նկատմամբ ահաբեկչությանն առնչվող, այնպես էլ կուսակցության կարիքներին վերաբերող և այլն՝ անկասկած մեղադրյալ Համազասպ Օհանջանյանի կողմից գրված և ստորագրված,

Երկրորդ, որ «Միր», «Միերյան» անունը որպես «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամի և երևելի գործչի՝ անցնում է տարբեր մեղադրյալների մոտ և տարբեր քաղաքներում հայտնաբերված կուսակցության բազմաթիվ փաստաթղթերով: Այսպես օրինակ.

Ա. Մեղադրյալ Հովհաննես Խարագյոզով-Խլեբնիկովի 1907թ. հոկտեմբերի 7-ի և 8-ի կուսակցական երկու նամակներում, որոնցից մեկում՝ Աբովյանի անունով «Միերյանին» փոխանցելու համար, իսկ մյուսում՝ մեղադրյալ Գռուզինյանի անունով, հիշատակվում է «Դաշնակցություն» կուսակցության առաջիկա ժողովը և «Միերյանից» կուսակցական փողեր ուղարկելու պահանջը,

Բ. «Դաշնակցություն» կուսակցության Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի կուսակցական թղթերի մեջ հայտնաբերված 1906թ. հուլիսի 17-ի որոշումից հետևում է, որ կոմիտեի անդամների կողմից որոշվել է ուսուցիչ-քարոզիչներ ուղարկելու համար «Ալիք»-ի խմբագրության միջոցով դիմել Արևելյան Բյուրոյի անդամ «Միերին»: Վերջապես, Երևանի նահանգապետի և փոխարքայի գրասենյակի 1906թ. օգոստոսի հայկական պատգամավորների էջմիածնի համագումարի մասին գործերի դիտումից և այդ համագումարի որոշ անդամների ստորագրություններից, ինչպես նաև երդման ներքո հարցաքննված վկաներ Ֆրենկելի, Լեմերմանի, Հարություն Թումանյանի և Տեր-Միքայելյանցի ցուցմունքներով միանգամայն հաստատված է, որ Համազասպ Օհանջանյանն այդ համագումարում եղել է ոչ թե անկուսակցական առաջադիմական, այլ «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության անդամ, և այդ կուսակցության անդամ մյուս պատգամավորների հետ ստորագրությամբ բողոք է արտահայտել կառավարական իշխանության մարմինների կողմից այդ համագումարի փակման դեմ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4572-4576: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Մեղադրյալներ Սարգիս Մանասյանցը, Համազասպ Օհանջանյանը, Պողոս Չուբարյանը, Հա-

[69] Պաշտպանական մարտավարության հետևելով՝ Հ. Օհանջանյանը ձգտում էր 1908թ . Գալուստ Ալոյանին մեծաթիվ դրամական փոխանցումներ կատարելու փաստը կապել հայ-թաթարական ընդհարումների հետ: Ակնհայտ է, որ այդ թվականին նման ընդհարումներ չեն եղել: Ամենայն հավանականությամբ «Մրգաստան» ուղարկվող դրամական միջոցները կապված էին իրանական հեղափոխությանը մասնակցելու նախապատրաստությունների հետ:

[70] «Անտառապատը» ՀՅԴ Լոռու կոմիտեն էր: Տես «Վէմ» համահայկական հանդես, 2009, թիւ 1, էջ 162:

մազասպ Սրվանձտյանցը[71] և Արիստակես Դավիդյանցը (Տեր-Դավիդյանց), ժխտելով Ռուսական պետության մեջ «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության հեղափոխական և հակակառավարական գործունեությունը, ցույց են տալիս Ռուսաստանյան կայսրության սահմաններում այդ կազմակերպության գործունեության լեգալ բնույթը, փորձում են ապացուցել, որ «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցությունը ոչ միայն ռուսական կառավարության ակտիվ հակառակորդ չի եղել, այլև կատարել է այն պարտականությունները, որոնք ընկած էին վերջինիս վրա:

Դրա հետ միասին, այդ մեղադրյալները, ապացուցելով կուսակցության [ձեռնարկած] որևէ հեղափոխական ելույթի բացակայությունը նույնիսկ՝ Ռուսաստանում ազատագրական շարժման ժամանակահատվածում, բացատրում են, որ 1905թ.-ից մինչև 1907թ. «Դաշնակցություն» կուսակցությունը ինքնապաշտպանության կազմակերպիչ էր, և ինչպես ժամանակի այդ հատվածում, այնպես և հետագա տարիներին, «Դաշնակցություն» կուսակցության կողմից չի կատարվել ոչ մի սպանություն, որն իր հիմքում չունենար հայ-թաթարական ընդհարումները, իսկ քննչական նյութերում չկա ոչ մի փաստ, որը վկայեր այն մասին, որ «Դաշնակցություն» կուսակցության որոշմամբ սպանությունների մի ողջ շարք իրականացվել էր հակակառավարական նպատակներով: Այդ կուսակցության ծրագրերը և կանոնադրությունները ինքնին ավելին չէին, քան մեռյալ տառ, իսկ նշյալ կուսակցության գործունեությունը կրել է բացարձակապես բացահայտ բնույթ, և ոչ ոք իրավունք և հիմք չուներ այդ կուսակցությանը հանցավոր ընկերակցություն համարել: Ողջ քննչական նյութում Ռուսաստանում գոյություն ունեցող կառավարման ձևի փոփոխության դեմ ուղղված՝ այդ կուսակցության 1907թ. հետո հեղափոխական ելույթ ցույց տվող ոչ մի փաստ չկա: Ամեն դեպքում թաթարներից ինքնապաշտպանության մասնակիցները հայտնի հարաբերակցության մեջ էին «Դաշնակցություն» կուսակցության հետ, որը ինքնապաշտպանության գլուխ էր կանգնած, և երկրամասում բարձրագույն վարչակազմը գիտեր, որ այդ ինքնապաշտպանությունը մղվում է նշյալ կուսակցության ղեկավարության ներքո, գումարում էր համագումարներ հայերից և թաթարներից, այդպիսի համագումարները տեղի էին ունենում կառավարական իշխանության տեղական բարձրագույն ներկայացուցիչների անմիջական հսկողության ներքո: Դրանից բացի, կառավարական իշխանության ներկայացուցիչները հայ բնակչության ծայրահեղ ձախ տարրերի օգնությամբ ձգտում էին հայ-թաթարական կոտորածով բռնկված վայրերի բնակչությանը խաղաղեցնել: Բուն քննչական նյութերում չկա ոչ մի փաստ, որը «Դաշնակցություն» կուսակցությանը կարողանար բնութագրել որպես հեղափոխական և Ռուսական պետության դեմ գործող կուսակցություն: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության ընթացքում վարչակազմը և բնակչությունը փոխադարձ ծառայություններում իրենց գործողությունները այդ կուսակցության պահանջների հետ էին համաձայնեցնում և կուսակցության ձեռք բերած զենքը ուղղվում էր միայն ինքնապաշտպանության համար, իսկ Կովկասի փոխարքայի կողմից 1905թ. այդ նույն նպատակի համար բաժանվել էր մինչև 500 ռուբլի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչներին: Ընդորում, ի հաստատումն նշյալ բոլոր փաստարկների՝ մեղադրյալները մի ամողջ շարք վկաների հարցաքննության մասին միջնորդություն ներկայացրին, պահանջեցին փոխարքայի կամ նրա օգնականի նախագահությամբ նրա պալատում հայ-թաթարական կոտորածների առիթով գումարված հայ-թաթարական համագումարի բանաձևերը և արձանագրությունները, սենատոր Կուզմինսկու հաշվետվությունը[72], Ելիզավետպոլի հայոց առաջնորդարանի գործերը:

Սակայն, այս բոլոր միջնորդությունները ենթակա չեն բավարարման, քանի որ.

Մեղադրյալ Համազասպ Օհանջանյանը ձգտելով ապացուցել, որ կառավարական իշխանության ներկայացուցիչների բոլոր սպանությունները՝ կատարված 1907թ. և 1907թ. հետո, ծագել էին ոչ թե «Դաշնակցություն» կուսակցությունից, այլ ուրիշ հեղափոխական կազմակերպություններից, ինչպես օրինակ՝ Ալեքսանդրապոլ քաղաքում Ալիխանովի սպանությունը, իրականացված Օհանջանյանի խոսքերով՝ վրաց սոցիալ-դեմոկրատների կողմից[73], խնդրել է պահանջել այն կոչերը, որոնք կապացուցեն նրա փաստարկների արդարացիությունը, սակայն Օհանջանյանի այդպիսի ցուցումը իրականությանը չի համապատասխանում, քանզի «Դաշնակցություն» կուսակցության օրգան «Դրոշակ» ամսագրի 1910թ. թ. 5-6-ում հստակ ցույց է տրված, որ Ալիխանովի սպանությունը իրականացվել է 1907թ. հուլիսի 2-3-ի գիշերը «Դաշնակցություն» կուսակցության որոշմամբ՝

[71] Համազասպ Սրվանձտյանց (1873-1921) – հայ ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ: Ծնվել է Վանում, 1905թ. եղել է Ասկերանի ինքնապաշտպանության ղեկավարը: Լիժինյան դատավարությունից հետո աքսորվել է Սիբիր, որտեղից փախել է Կ. Պոլիս: Եղել է 3-րդ կամավորական գնդի հրամանատարը: Գործում մասնակցություն է ունեցել 1918թ. Բաքվի հերոսամարտին, Հայաստանի առաջին Հանրապետության օրոք դարձել է Նոր Բայազետի զորամասերի հրամանատար: Հայաստանի խորհրդայնացումից հետո կացնահարվել է Երևանի բանտում:

[72] Բաքվում հայ-թաթարական կռիվների հետաքննության վերաբերյալ:

[73] Վրաստանի դահիճ թաթար Ալիխանովի սպանության համար վրաց սոցիալ-դեմոկրատները շնորհակալագիր ուղարկեցին ՀՅԴ-ին:

վերջինիս գլխավոր ահաբեկիչներ Մարտիրոս Չարուխչյանի[74] և «նրա անբաժան ընկերոջ»[75] կողմից, որոնք իրականացրել էին նաև 1905թ. [մայիսի 11-ի] նահանգապետ Նակաշիձեի սպանությունը: Այսպես, այդ համարից հետևում է, որ գեներալ Ալիխանովն իր վրա [կատարված] վրաց հեղափոխականների հարձակումից հետո դարձել էր շատ զգույշ և անորսալի, բայց միայն [ՀՅԴ] կուսակցությունից Մարտիրոսը Ալեքսանդրապոլի փողոցում կարողացավ հօդս ցնդեցնել այդ «բռնակալ Ալիխանովին»: Դրանից բացի, «Դրոշակ»-ի հենց նույն համարում նշվում է, որ Երևան քաղաքում 1910թ. փետրվարին սպանված ռոտմիստր Բուրկատսկին ահաբեկչության է ենթարկվել «Դաշնակցություն» կուսակցության Մրգաստանի (Երևանի) կենտրոնական կոմիտեի որոշմամբ: Քննության տվյալներով հաստատվել է, որ թեպետ գեներալ Ալիխանովի մահափորձը Քութայիս քաղաքում բխում էր վրաց սոցիալիստ-ֆեդերալիստներից, սակայն այդ կազմակերպության ահաբեկիչները այդուհանդերձ ռումբերով մատակարարվել են «Դաշնակցություն» կուսակցության կողմից: «Դաշնակցություն» կուսակցության համատեղ գործունեությունը այլ հեղափոխական կազմակերպությունների հետ ապացուցվում է նաև «Դաշնակցություն» կուսակցության Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի հաշվետվությունների և գրագրության մեջ գտնված տարբեր կուսակցական թղթերով, օրինակ՝ «Դաշնակցություն» կուսակցության կողմից օսեթական «Ֆադիսաթա» հեղափոխական կազմակերպությանը ահաբեկչական գործողություն կատարելու համար ռումբերի մատակարարում, Համառուսաստանյան հեղափոխական զինվորական միությանը, ինչպես նաև նրա Վլադիկավկազի մասնաճյուղին և սոցիալիստ-հեղափոխականների Վլադիկավկազի խմբին անվերադարձ օգտագործման համար փողի տրամադրում:

Ինչ վերաբերում է Համազասպ Օհանջանյանի ցուցմունքին, որ Դատական Քննիչի կարծիքով «Դաշնակցություն» կուսակցությունը Ռուսաստանում մինչև 1905թ. գոյություն չի ունեցել, ապա այդ ցուցմունքը իրականությանը չի համապատասխանում և նշյալ մեղադրյալի կոպիտ ծաղրանքն է[76], որով ինքն էլ հենց ցույց է տալիս, որ քննչական նյութերում նշված է մինչև 1905թ. «Դաշնակցություն» կուսակցության վճիռներով իրականացված սպանությունների շարքը: Քննչական նյութերից միանգամայն պարզ է, որ «Դաշնակցություն» կուսակցությունն առաջին անգամ իր գործունեությունը Կովկասում ծավալել է 1903թ. հայ ժողովրդի շահերի պաշտպանության դիմակի տակ, հայ ժողովրդական զանգվածներին ներքաշելով ռուսական կառավարության դեմ կռիվներում, դրա համար էլ այդ խավարամիտ զանգվածները ամենևին էլ «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության մասնակիցներ չեն, այլ միայն այդ կուսակցության կողմից մոլորության մեջ ներքաշված անձինք, ինչի հետևանքով ժողովրդական զանգվածների գործունեությունը չի կարող հավասարեցվել «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչների գործունեությանը[77]: «Դաշնակցություն» կուսակցության վճիռներով իրականացված 1905թ. գանձապետարանի պաշտոնյա Բարդինցևի սպանությունը և հաշվետար Կովտունովի մահափորձը՝ նրանից 40.000 ռուբլի պետական փողերի թալանով, 1906թ. Արմավիրում Շահնազարովի, 1906թ. Զաքաթալայում՝ անտառապահ Կլիմենկոյի, 1906թ. Կոշ գյուղում՝ Սաֆերյանցի, 1907թ.՝ ենթասպա Լոլոաձեի սպանությունները, 1907թ. հունիսի 10-ին Անդրեաս Վարդապետյանի և Խեչո Մուխտարովի ու Գաբրիել Քեշիշյանի մահափորձը, 1907թ. Թիֆլիսում Վասիլի Շահնազարովի և Մուշեղ Առաքելյանցի, 1907թ. օգոստոսի 27-ին Յալթայի մերձակայքում՝ Գասպար Նազարովի, 1907թ. օգոստոսի 14-ին Արմավիրի մերձակայքում՝ վաճառական Տեր-Ավետիսյանցի, 1907թ. սեպտեմբերի 14-ին՝ Մարտիրոս Առաքելյանի, 1907թ. դեկտեմբերի 10-ին՝ Ավագ Հախվերդովի, 1907թ. նոյեմբերի 8-ին՝ Սողոմոն Կիզիրյանցի, 1907թ. դեկտեմբերի 16-ին՝ Հովհաննես Անտոնյանցի, 1908թ. հուլիսին՝ վերակացուներ Կալաշնիկովի և Գրինի, 1908թ. ապրիլի 7-ին՝ գավառապետ Ավալիանիի, 1908թ. նոյեմբերի 3-ին՝ Մեսրոպ Մինասովի, 1909թ. մարտի 6-ին՝ Սարդար Տեր-Հարությունյանի, 1909թ. ապրիլի 8-ին՝ Արշակ Վարդապետովի, 1909թ. հունվարի 26-ին՝ Աշտարակ գյուղի տանուտեր Ազադովի, 1909թ. սեպտեմբերին՝ Մովսես Վարդանովի, 1909թ. հոկտեմբերին՝ Սարուխան Գևորգովի, 1909թ. նոյեմբերին՝ Բարիկ Դարման-

[74] Մարտիրոս Չարուխչյան (՞-1909) – ՀՅԴ նվիրյալ գործիչ, հանդուգն ահաբեկիչ: Բանտարկվել է Բաթումի և Ալեքսանդրապոլի բանտերում: 1905թ. եղել է Բաքվի հայության ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկը, մասնակցել է Նակաշիձեի ահաբեկմանը: Ալեքսանդրապոլում ահաբեկել է գեներալ Ալիխանովին 1905թ.: Մասնակցել է իրանական հեղափոխությանը և 1909թ. փետրվարի 9-ին նահատակվել Ալվարի կռվում: Նրա մասին տե՛ս Ռոստոմ, Կազմակերպական ընկերը, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1979, էջ 67-72:

[75] «Անբաժան ընկերը» Դրոն է՝ Դրաստամատ Կանայանը:

[76] Այս ձևակերպումն ինքնին վկայում է քննչական մարմինների կամայականության մասին:

[77] Նման ձևակերպումն անուղղակի կերպով հիշեցնում է հետագա տարիներին բոլշևիկների կողմից բոլոր ոչ կոմունիստական կուսակցություններին (առաջին հերթին՝ ՀՅԴ-ին) վերագրվող կուսակցություն-ժողովրդական զանգվածներ շինծու հակաթեզը:

յանի, 1910թ. փետրվարին՝ ռոտմիստր Բուրկատսկու, 1910թ. սեպտեմբերին՝ Գաբրիել Քեշիշյանի սպանությունները և այլն. այս բոլոր սպանությունները չեն իրականացվել հայ-թաթարական ընդհարումների և եկեղեցու գույքի առգրավման հիմքի վրա և դրանց հետ ոչ մի առնչություն չունեն, այլ ռուսական կառավարության դեմ «Դաշնակցություն» կուսակցության կատարած գործողություններ են:

Ինչ վերաբերում է Համազասպ Օհանջանյանի միջնորդություններին՝ իրեն կալանքից ազատելու մասին, ապա այդպիսի միջնորդությունները՝ դրանց համար օրինական հիմքերի բացակայության պատճառով, չեն կարող բավարարվել:

Դատական Քննիչ Ն. Լիժին:

Բնագիրը համապատասխան ստորագրությամբ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4603-4607: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 6
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԱԿՏ

18. Համազասպ Օհանջանյան – 1905թ. մասնակցել է «Դաշնակցություն» ընկերակցության Կովկասյան շրջանային ժողովին, որտեղ Ռուսաստանի սահմաններում ընկերակցության ակտիվ հեղափոխական գործունեության ծրագիր է մշակվել: 1906թ. եղել է Արևելյան Բյուրոյի անդամ և կրելով «Միեր», «Միերյան» պայմանական անունները՝ Բյուրոյի կնիքով ընկերակցության տարբեր կազմակերպությունների դրամի ստացման մասին անդորրագրեր է տրամադրել, ղեկավարել է ուսուցիչ-քարոզիչների գործունեությունը, որոնց ուղարկման մասին «Ալիք» թերթի խմբագրության միջոցով նրան դիմում էին տեղական մարմինները: 1907թ. ընկերակցության տարբեր անդամների հետ կազմակերպչական հարցերի առիթով հեռագրական գրագրություն է վարել, եղել է ընկերակցության նպատակներին համապատասխանող բնագիր և թարգմանչական երկեր հրատարակող «Յառաջ» գրահրատարակչական վարչության նախագահ: Որպես «Դաշնակցություն» ընկերակցության պատգամավոր՝ մասնակցել է իրեն Ռուսաստանի ողջ հայ բնակչության օրինական ներկայացուցիչ հռչակած և դպրոցական, տնտեսական, վարչական և այլ հարցերով նրա բոլոր գործերի լուծման համար լիազորված, հակապետական նշանակություն ունեցող էջմիածնի համագումարի ժողովներին: 1907թ. պարտականություն է ստանձնել և կատարել Ռուսաստանում «Դաշնակցության» սոցիալիստական ծրագիրը և հեղափոխական մարտավարությունը հաստատած Վիեննայի 4-րդ ընդհանուր ժողովին ներկա գտնվելու ընկերակցության հանձնարարությունը: Ընդ որում, նշված ընդհանուր ժողովում կրկին ընտրվել է Արևելյան Բյուրոյի անդամ: 1908թ. իր մոտ է պահպանել էջմիածնի համագումարի ընդունած բանաձևերի սևագրերը, «Դաշնակցության» ծագման, նրա զարգացման և կայսրության սահմաններում հեղափոխական ելույթների պատմությունը բովանդակող ձեռագիրը, Արևելյան Բյուրոյին հասցեագրված Ելիզավետպոլի կազմակերպության նամակը, որն ուղարկված էր փողերի մասին հայտնելու խնդրանքով և այլ փաստաթղթեր:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 240: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Նշյալ հանցագործությունները նախատեսված են Սարգիս Մանասյանցի, Համազասպ Օհանջանյանի, Արտեմ Թաիրյանի, Գևորգ Առաքելյանի և Վահան Ղարիբյանի առնչությամբ Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասով, Պատժի մասին կանոնադրության 1457-րդ հոդվածի 13-րդ և 2-րդ մասերով:

Համաձայն Հատուկ Բարձրագույն վճռի՝ ըստ Քրեական դատավարության կանոնադրության 1032-րդ հոդվածի 2-րդ կետի և 1034-րդ հոդվածի 3-րդ կետի՝ նշյալ անձինք [159 հոգի, այդ թվում՝ Համազասպ Օհանջանյանը] ենթակա են Կառավարող Սենատի Հատուկ Ներկայացուցչության դատին:

ք. Նովոչերկասկ, 28 մայիսի[78] 1911թ.

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 250- 251: Թարգմանություն ռուսերենից:

ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ

44. Համազասպ Իվանով Օհանջանյան – հտ. 21, գործի թերթ 7392; հտ. 129, գործի թերթ 42443[79]:

Դոնի Ռոստովի բանտ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 255: Թարգմանություն ռուսերենից:

[78] Ինչպիսի զուգադիպություն. ընդամենը 9 տարի հետո Հ. Օհանջանյանը դառնալու էր Մայիս 28-ի շնորհիվ ստեղծված Հայաստանի անկախ հանրապետության վարչապետը:

[79] Սրանք դատական գործի բնագրային տվյալներն են:

ԹԻՎ 7

ՎՃԻՌ

17 հունվար-20 մարտ 1912թ.

2. Բժիշկ Համազասպ Իվանով Օհանջանյան, 35 տարեկան.

Ա. Կրելով «Միեր», «Միերյան» կուսակցական ծածկանուններ՝ եղել է Ռուսաստանում ընկերակցության կենտրոնական մարմիններից մեկի՝ «Արևելյան Բյուրո»-ի անդամ, դրանում կատարել է գանձապահի պարտականություններ՝ ստանալով և ծախսելով ընկերակցության փողերը և հսկելով ընկերակցության տեղական կազմակերպությունների հաշվառման ճշտությունը՝ ինչպես դրամով, այնպես էլ զենքով ու մարտական պաշարներով: Վարել է ընկերակցության կազմակերպչական գործերով գրագրությունը և հայկական ուսումնական հաստատություններում «Դաշնակցության» նպատակների համար իրենց գործունեությամբ օգտակար լինելու կարողունակ ուսուցիչների նշանակման միջոցներ է ձեռնարկել,

Բ. 1905թ. նոյեմբերին և դեկտեմբերին, որպես ընկերակցության կազմակերպություններից մեկի ներկայացուցիչ, մասնակցել է Թիֆլիս քաղաքում տեղի ունեցած հայ հեղափոխական «Դաշնակցության» շրջանային ժողովին, որտեղ մշակվել է այլ հեղափոխական կուսակցությունների հետ ընկերակցության համատեղ հեղափոխական ակտիվ գործունեության ծրագիր,

Գ. 1905թ. Թիֆլիս քաղաքում անդամակցել է հայերեն հրատարակվող «Յառաջ» թերթի խմբագրակազմին, իսկ հետագա տարիներին եղել է Թիֆլիս քաղաքում «Յառաջ» գրահրատարակչության վարչության նախագահը, որի հրատարակություններում նրա իմացությամբ տեղադրվել են «Դաշնակցության» գաղափարների տարածմանը ծառայող հոդվածներ, ինչպես նաև միջնորդ է հանդիսացել «Յառաջ»-ի հրատարակությունների տարածման համար:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 279-280: Թարգմանություն ռուսերենից:

* * *

2. Համազասպ Օհանջանյանը իրեն դատարանում մեղավոր է ճանաչել առ այն, որ եղել է հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամ, կրել է «Միեր, Միերյան» կուսակցական ծածկանուն, կուսակցության գործերով գրագրություն է վարել, ստուգել է նրա կազմակերպությունների հաշվետվությունները և ղեկավարել է «Յառաջ» գրադարանի հրատարակությունները: Օհանջանյանի բացատրությունը, թե ինքը չի մասնակցել քաղաք Թիֆլիսում 1905թ. վերջին հայ հեղափոխական «Դաշնակցության» շրջանային ժողովին՝ չի կարող ճանաչվել ճշմարիտ, քանզի նշյալ ժողովի արձանագրություններից երևում է, որ ընկեր «Համոն» (Համազասպի կրճատ անունը) ֆեդերացիայից առաջ ինքնավարության հասնելու անհրաժեշտության թեմայի մասին ելույթներ է ունեցել, իսկ Օհանջանյանի մոտ խուզարկությամբ գտնվել են երկու ձեռագրեր, որոնք նա ճանաչեց իր կողմից գրված՝ «Կովկասում ինքնավարության սկզբունք» և «Անդրկովկասում ինքնավարություն» բառերով սկսվող, իսկ արդեն «Դաշնակցության» թիֆլիսյան կազմակերպություններում Օհանջանյանի զբաղեցրած դիրքը, ինչպես դա պարզվել է դատի ժամանակ, անկասկած նրան պարտավորեցնում էր մասնակցել տեղական շրջանային ժողովին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 295: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ե. Անցնելով դատապարտյալների համար հետևանքների քննարկմանը նրանց մեղավորության մասին վերոնշյալ ձևակերպմանը՝ Հատուկ Ներկայացուցչությունը գտնում է.

II. Հանցագործությունները, որոնցում մեղավոր են ճանաչված. 2. Համազասպ Օհանջանյան–պատժվում է Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասով սեփականության իրավունքի զրկմամբ և շտապ տաժանակիր աքսորով, որով և ընդունվում է նրան համապատասխանաբար նշանակել չորս տարի:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 309: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Համաձայն վերոհարադրյալի՝ Կառավարող Սենատի Հատուկ Ներկայացուցչությունը որոշում է. 2. Բժիշկ Համազասպ Իվանով Օհանջանյանին, 35 տարեկան, ենթարկել տաժանակիր աքսորի չորս տարով սեփականության իրավունքի զրկմամբ և նրա համար Քրեական կանոնադրության 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 34-րդ և 35-րդ հոդված -

ների հետևանքներով, բայց հանցագործությունների մեջ Պատժի մասին կանոնադրության 1457-րդ հոդվածի 2-րդ մասով Համազասպ Օհանջանյանի մեղադրանքով նախատեսում է համարել նրան Քրեական դատավարության կանոնադրության 771-րդ հոդվածի 1-ին կետի ուժով դատարանով արդարացված[80]:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 312: Թարգմանություն ռուսերենից:

[80] Պետք է փաստել, որ դատավարության վերջնական փուլում Հ. Օհանջանյանի վրայից հանվեց ամենածանր մեղադրանքը՝ խմբապետ Միհրանի սպանության կազմակերպումը: Թողնվեց միայն ՀՅԴ կազմակերպչական, քարոզչական, հրատարակչական և ֆինանսական գործունեության համակարգողը լինելու մեղադրանքը, ինչի արդյունքում նրա նկատմամբ որոշվեց համեմատաբար «մեղմ» պատժաչափ: Մեր կարծիքով, այստեղ որոշիչ դեր խաղաց Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտական շրջանակներում վերաաշխուժացման գործոնը: Այդ կապակցությամբ Ռուսաստանը կրկին սկսում էր սիրաշահել հայ ազգային ուժերին:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Գարեգին Նժդեհի դատական գործը

Նշանավոր ազգային և պետական գործիչ Գարեգին Նժդեհի քաղաքական գործունեության վաղ շրջանը համեմատաբար թերի է ուսումնասիրվել: ՀՅ Դաշնակցության Մեծ դատավարության ընթացքում ստեղծված նրա դատական գործի հրապարակումը գալիս է լրացնելու այս բացը:

Գարեգին Նժդեհը (Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ. հունվարի 1-ին Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում՝ քահանա Տեր-Եղիշեի ընտանիքում: Նրա նախնիները՝ Գուլոյենք, Նախիջևանի գավառ են տեղափոխվել Պարսկահայքի Սալմաստ գավառի Ղզըլջա (Կիզիլճա) գյուղից՝ 1829-1830 թվականներին: 1894-1895թթ. Կզնութ գյուղի ծխական դպրոցում սովորելուց հետո, պատանի Գարեգինը 1902թ. ավարտել է Նախիջևանի քաղաքային ռուսական դպրոցը, իսկ 1903 թվականին՝ Թիֆլիսի ռուսական գիմնազիան: Հենց Թիֆլիսում ուսանելու տարիներին էլ նա հավանաբար ընդունվել է ՀՅ Դաշնակցության շարքերը: Ինչպես ինքն էր հետագայում վկայում՝ «Հայոց Հեղափոխական շարժմանը միացել եմ 17 տարեկան հասակից՝ իբրև գիմնազիստ»[1]:

Թեև Նժդեհի ՀՅԴ շարքերն ընդունվելու հստակ թվականը հայտնի չէ, բայց տրամաբանորեն պետք է եղած լինի 1903-1904թթ., այսինքն՝ մինչև Բուլղարիա և Պարսկաստան (հատկապես՝ վերջինը) անցնելը, ինչի օգտին է խոսում նաև վերը նշված վկայությունը, քանզի «Հայոց Հեղափոխական շարժում» ասելով՝ Նժդեհը նկատի ուներ հենց ՀՅԴ-ն: Այս առիթով հիշատակենք նաև Կարո Գևորգյանի կարծիքը. «Արդեն իսկ դաշնակցական (Նժդեհը-Ա. Հ.) 1904թ. ղրկված է Սալմաստ իբրեւ կուսակցական քարոզիչ»[2]: Վերջին շրջանի ուսումնասիրողներից Կարո Հովհաննիսյանը նույնպես պնդում է, որ Նժդեհը «1904-ին կընդունվի ՀՅԴ շարքերը, կանցնի Սալմաստ իբրև կուսակցական քարոզիչ»[3]:

Ինչո՞ւ Նժդեհն ընդունվեց հենց ՀՅԴ շարքերը: Հայտնի է, որ այն ժամանակ հայ քաղաքական կյանքում կային նաև այլ կառույցներ և ուժեր: Վերջիններիս դերը և գործունեությունը ստվերելու մտադրություն չունենալով՝ հարկ ենք գտնում նշել, որ հայոց ազատագրական պայքարում իր ունեցած առաջատար դերակատարումով 20-րդ դարի սկզբներին ՀՅԴ-ն դարձել էր այն քաղաքական առանցքը, որի շուրջն էին համախմբվում ազգային նպատակների համար պայքարող անհատները:

1 Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 276:
2 «Ամենուն Տարեգիրք», Պէյրութ, 1958, էջ 669:
3 Նժդեհ Գ., Լեռնահայաստանի գոյամարտը, Պէյրութ, 1999: Առաջաբան, էջ 15:

1904թ. անցնելով իր նախնիների հայրենիքը՝ Ատրպատականի Սալմաստ գավառը, «Վրեժի» կենտրոնական կոմիտեության առանցքային դեմքի՝ Ստեփան Թադևոսյանի (Սամսոնի) հետ համախորհուրդ, նա սկսեց գործել իբրև կուսակցական քարոզիչ: Փաստորեն, Սալմաստը դարձավ Նժդեհի կազմակերպական ունակությունների թրծման առաջին դարբնոցը:

Այս առթիվ հարկ է ընդգծել, որ թեև Պարսկաստանը հայ ազատամարտի պատմության վաղորդայնից կարևոր հենակետ է եղել, բայց նրա ու մանավանդ՝ Սալմաստի շրջանի դերն առանձնապես կարևորվեց հենց 1903-1904թթ.: Այդ տարիներին Սասունին օգնության հասնելու համար կազմակերպված մի շարք անհաջող հայդուկային անցումներից հետո, Երկրի հետ կապը պահպանվում էր առաջին հերթին Սալմաստ-Վան գծով: Ինչ խոսք, նման մթնոլորտը Նժդեհի համար դարձավ հեղափոխական պայքարի իսկական դպրոց: Ավելին, անհրաժեշտ է նշել, որ մարտական գործից զատ, նա ակտիվորեն մասնակցեց նաև շրջանի կուսակցական աշխատանքներին՝ մասնավորապես «Վրեժի» 1904թ. Շրջանային ժողովին[4]:

Սալմաստում ստանալով առաջին մարտական կոփվածությունը՝ Նժդեհը հետագայում՝ 1906-1907թթ., Բուլղարիայում մասնագիտորեն հմտացավ ռազմական արվեստում: Մինչ այդ արդեն հայ և բուլղար-մակեդոնական շարժման գործիչների միջև սերտ համագործակցություն գոյություն ուներ: Ռոստոմի ջանքերի և բուլղար հեղափոխականների աջակցության շնորհիվ Բուլղարիայում դաշնակցական մարմինների տրամադրության տակ էր դրվել մի զինվորական վարժարան: Ուստի, ՀՅԴ Արևմտյան Բյուրոն և Բալկանների կենտրոնական կոմիտեն Ներքին մակեդոնական հեղափոխական կազմակերպության (ՎՄՌՕ-ի) համաձայնությամբ (և Բուլղարիայի կառավարության գաղտնի հավանությամբ) որոշել էին հայ երիտասարդներին ուղարկել Սոֆիայի մոտակայքում գտնվող Կնյաժևոյի Ֆերդինանդ թագավորի անվան Պահեստի սպաների ռազմական վարժարան: Ավելին, շուտով բուլղար-մակեդոնական շարժման առաջնորդ Բորիս Սարաֆովի աջակցությամբ Դուբնիցայի շրջանում (թուրք-բուլղարական սահմանի մոտ) հիմնվեց ՀՅԴ գաղտնի Զինվորական դպրոցը, որը, սակայն, գործեց միայն 1906-1907թթ.[5]:

ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի նյութական աջակցության շնորհիվ Կնյաժևոյի սպայական դպրոց ուղարկվեցին 4 հայեր[6], որոնցից մեկը Նժդեհն էր, որն այնտեղ էր ընդունվել իր վկայությամբ՝ «Մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի եւ Լիապով Գուրինի միջնորդությամբ ... Դմիտրի Նիկոլովի անունով»[7]:

Իսկ ՀՅԴ Զինվորական դպրոցի ղեկավարը բուլղարական բանակի հարյուրապետ Պողոս Պողոսյանն էր, նրա օգնականը՝ Նժդեհի ծննդավայր Կզնութի երկրորդ քահանայի որդի Ռաշիդը: Ի դեպ, Զինվորական դպրոցում Ռաշիդի գործունեությունը բավականին տխուր ավարտ ունեցավ, փաստ, որը խստորեն քննադատվեց նաև ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում[8]:

Զինվորական դպրոցում ուսուցումը ընթանում էր զորանոցային պայմաններում՝ օրական 15 ժամ տևող դասերով: Ուսումնասիրվող առարկաներից նշենք

4 Աւօ, Նժդեհ, Պէյրութ, 1968, էջ 20:

5 Մանրամասն տե՛ս Մարտիկ Յովհաննիսեան, Հ. Յ. Դաշնակցութեան զինուորական դպրոցը, «Հայրենիք», Պոսթըն, 1931, փետրուար, թ. 4:

6 Կնյաժևոյի բուլղարական պետական զինվորական դպրոց Գ. Նժդեհից զատ ընդունվեցին Թռուցիկ Գևորգը (Աբրահամյան), Արշակը, Թորգոմը (զորավար Թորգոմ), Ռաշիդը (Տեր-Մաթևոսյան – Պանով)

7 Նժդեհ Գ., Երկեր, հ. 2, էջ 276:

8 Տե՛ս Նիւթեր ՀՅԴ պատմութեան համար, հ. 3, էջ 158: Դպրոցի փակման մեղավորը Ռաշիդն էր, ով վաճառել էր դպրոցի գույքի հիմնական մասն ու սննդամթերքը և փախել: ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեն մահապատիժ էր վճռել, բայց այդպես էլ նա չգտնվեց: Նժդեհի և Ռաշիդի տարաձայնությունների մասին տե՛ս Աւօ, Նժդեհ, էջ 22:

հետևյալները. 1. հետախուզություն, 2. զինվորական լրտեսություն, 3. ռազմավարություն, 4. մարտավարություն, 5. զինվորական պատմություն, 6. հայոց և հեղափոխական պատմություն, 7. պայթուցիկ նյութեր, 8. մանկավարժություն: Ընդ որում, հիշատակելի է, որ այս ծրագիրը վավերացրել էր Բուլղարիայի զինվորական նախարարը: Դպրոցի ծախսերը հոգում էր ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեն[9]:

Այստեղ տեղին ենք գտնում հիշատակել 1906թ. հոկտեմբերի 16-ին Սոֆիայից մորը և եղբորը՝ Լևոնին, Նժդեհի գրած նամակի մասին: Ոգևորությամբ նշելով դպրոցում տիրող դրության մասին նա մասնավորապես նշում էր, որ ինքը իրավունք չունի մինչև հինգ տարի ամուսնանալ, քանզի «Դաշնակցությանը երդում է տվել»[10]:

Այսպիսով, հիշյալ վարժարաններում Նժդեհը ստանում է հիմնավոր զինվորական կրթություն, ինչն էլ հետագայում նրա մարտական գործունեության հաջողության հիմքն է դառնում: Արդեն որպես համակողմանիորեն պատրաստված գործիչ, նա 1907թ. նոյեմբերին վերադառնում է Կովկաս՝ Սեբաստացի Մուրատի հետ Երկիր անցնելու համար: Սակայն, նկատի ունենալով Իրանական հեղափոխությանը ՀՅԴ ակտիվ մասնակցության հեռանկարը, նրան կրկին ուղարկում են Պարսկաստան՝ Թավրիզ-Սալմաստի շրջան, իբրև կուսակցական գործիչ և ֆիդայական խմբերի կազմակերպիչ: Պարսկաստանում Նժդեհի գործունեությունը բարձր է գնահատվել այդ շրջանում Թավրիզում գտնվող Սեբաստացի Մուրատի, Եփրեմ Խանի և Ստեփան Թաղևոսյանի (Սամսոնի) կողմից[11]:

Ուսումնառության ավարտից հետո ՀՅԴ Արևելյան Բյուրոյի որոշմամբ Նժդեհը նշանակվել էր Ստեփան Թաղևոսյանի օգնական: Նրանց պարտականությունն էր Սալմաստում կատարվող աշխատանքների ղեկավարումը և գործունեության ընդհանուր ուղղության որոշումը: Նվիրյալների այս զույգին սկիզբ առած հեղափոխության պայմաններում հաջողվեց 60 հոգանոց խմբով Սալմաստի հայությանը զերծ պահել քրդերի թալանից և տեղական իշխանությունների կամայականություններից: Ուշագրավ է այն փաստը, որ 1908թ. հուլիսին եղբորը՝ Լևոնին գրած նամակում անկեղծորեն բնութագրելով իր գործունեությունը, նշում էր, որ ինքը «հեղափոխական անհատներից մեկն է եւ այժմ աշխատում է հեղափոխության ասպարեզում»: Ըստ այդմ, Նժդեհը իրեն անչափ կապված էր համարում իր վրա դրված պարտականությանը՝ ինչի հետևանքով անկարող էր թողնել և հեռանալ գործից, ինչը նրա խորին համոզմամբ «աքսիոմա է»[12]:

Սակայն, Սալմաստում նկատվող զենքի պակասը լրացնելու համար Նժդեհը 1908թ. օգոստոսի վերջին վերադարձավ Կովկաս և Արաքսն անցնելուց հետո, սեպտեմբերի 6-ին ձերբակալվեց Հին Ջուղայի մոտ գտնվող Վերին Ազա գյուղում, իր եղբոր՝ Լևոնի տանը[13]: Ձերբակալությունը տեղի ունեցավ Նժդեհի հետ տարաձայնություններ ունեցող գյուղապետի օգնական Մեսրոպ Շահնազարովի[14] ամբաստանությամբ, ինչը, սակայն, կարծում ենք, ցարական ոստիկանության համար սոսկ հարմար պատրվակ էր: Նժդեհի նման դաշնակցականին լիժիններն ամենևին չէին կարող ազատության մեջ թողնել:

Նժդեհը բանտարկվում է Նախիջևանում, ուր ավելի քան մեկ և կես տարի մնա-

9 Տե՛ս մանրամասն՝ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 49, թթ. 1-2:
10 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 533:
11 Աւօ, Նժդեհ, էջ 25:
12 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 554:
13 Ավոն իբրև Նժդեհի ձերբակալման թվական է նշում 1909-ը: Տե՛ս Աւօ, Նժդեհ, էջ 34: Նրան հետևելով՝ նույնն է կրկնում նաև Վարագ Առաքելյանը: Տե՛ս Առաքելյան Վ., Նժդեհ, Եր., 1989, էջ 9: Մինչդեռ, ստույգ թվականն ըստ դատական գործի՝ 1908թ. սեպտեմբերի 6-ն է:
14 Այս մատնիչին ՀՅԴ տեղական խմբի ջանքերով փոխարինեց Նժդեհի ազգական Անդրեաս Ներսիսյանը:

լուց[15], և Երևանի միջանկյալ բանտից[16] հետո, 1910թ. հոկտեմբերի կեսին փոխադրվում է Նովոչերկասկի, իսկ վճռի կայացման համար՝ Սանկտ Պետերբուրգի բանտ: Նժդեհին Լիժինը գրեթե մեկ տարի «անտեսել էր» և միայն 1909թ. հունիսի 22-ին որոշեց ներառել ՀՅԴ Մեծ դատավարության մեջ ընդգրկված ամբաստանյալների ցանկում[17]: Եվ արդեն 1909թ. հուլիսի 8-ին Նախիջևանում Նժդեհին ներկայացվեց մեղադրանք ու որոշվեց իբրև նրա խափանման միջոց պահպանել կալանքը[18]: Որպես մեղադրանքի հիմք ներկայացվում էին Նժդեհի նամակները, նրա մոտ գտնված ՀՅԴ Մրգաստանի (Երևանի) շրջանային ժողովի բանաձևերը, Մ. Շահնազարովի ամբաստանությունները:

Դատական գործում Նժդեհին վերաբերվող նյութերը ձերբակալության և հարցաքննությունների արձանագրություններ են, ամբաստանյալի կատարած միջնորդություններ, վկաների ցուցմունքներ, 1906-1910թթ. մորը և եղբորը գրած նամակների թարգմանություններ, պաշտոնական մեղադրանք, դատական որոշումներ:

Այդ նյութերը լուսաբանում են Նժդեհի կուսակցական գործունեության և բանտային կյանքի որոշ դրվագներ, ինչն իր հերթին հնարավորություն է ընձեռում նախնական պատկերացում կազմել Գարեգին Նժդեհ գործչի մասին:

Դատաքննության ընթացքում Նժդեհն ընդհանրապես մերժում էր իրեն ներկայացված բոլոր մեղադրանքները, ժխտում ՀՅԴ Զինվորական դպրոցում ուսումնառության փաստը (միաժամանակ ընդունելով բուլղարական պետական ռազմական դպրոցում սովորելու հանգամանքը), ձգտում էր քողարկել ՀՅԴ-ին իր պատկանելության վերաբերյալ գլխավոր մեղադրական կետը (չընդունելով գործում առկա նամակների՝ իր հեղինակությունը և պնդելով, որ Մ. Շահնազարովի կողմից դրանք կեղծվել են): Ուշագրավ է այն հանգամանքը, որ կուսակցական ծածկագրության դպրոցով անցած Նժդեհն անգամ՝ 1910թ. մարտի 27-ին մորը գրած նամակում նշում էր, որ ինքը ՀՅԴ-ից «այնքան է հեռու եղել, որքան երկինքը՝ երկրից»[19]: Ինչ վերաբերում է Մ. Շահնազարովի ամբաստանություններին, ապա նույնիսկ վերջինիս ազգականները Նժդեհի դեմ ցուցմունք չտվեցին: Ավելին, 175 կզնուցիներ Նժդեհի գործունեության վերաբերյալ ցարական իշխանություններին ուղղված դրական հանրագիր էին ստորագրել: Անշուշտ, այս հանգամանքը պետք է բացատրել Նժդեհի և ՀՅԴ կառույցի վայելած հեղինակությամբ:

Ինչևէ, նաև՝ Նժդեհի որդեգրած պաշտպանական մարտավարության շնորհիվ, 1911թ. մայիսի 28-ին Ն. Լիժինի կազմած մեղադրական ակտում նրան առաջադրվեցին համեմատաբար մեղմ մեղադրանքներ: ՀՅ Դաշնակցության Մեծ դատավարության մեջ Նժդեհը գլխավոր մեղադրյալներից չէր և նա սոսկ ամբաստանվում էր 1908թ. պետականի փոխարեն՝ մասնավոր դպրոց բացելու մասին համագյուղացիներին կոչ անելու, ՀՅԴ օգտին հարկադիր դրամահավաքներ կատարելու և ՀՅԴ Մրգաստանի շրջանային ժողովի բանաձևերը պահպանելու մեջ[20]:

1912 փետրվարի 23-25 Պետերբուրգում լսվում է Նժդեհի դատական գործը: Այս մասին ուշագրավ վկայություն է հաղորդում ժամանակակից Հակոբ քահանա Սառիկյանը. «Փետրվարի 23-25-ը իրար ետևից կանչվեցին 20-25-րդ խմբերը: Սրանցից Գարեգին Տեր-Հարությունյանը հայտնեց, որ ճիշտ է, ինքն ավարտել է զինվորական արհեստը Բուլղարիայում՝ Դաշնակցության միջոցներով, սակայն

15 Եվ ոչ թե մի քանի ամիս՝ ինչպես նշում է Ավոն, տե՛ս Աւօ, Նժդեհ, էջ 34-35:
16 Այդտեղ նրան անձամբ հարցաքննում է հայատյաց գավառապետ Սարսկին: Ինչպես ականատեսն է հիշում՝ Նժդեհը բանտում միշտ խանդավառ էր և արդարության հանդեպ՝ միշտ հավատացյալ: Նման պահվածքով նա օրինակ է եղել և ոգևորել այլոց: Տե՛ս Աւօ, Նժդեհ, էջ 34-35:
17 ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թ. 555:
18 ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թ. 601:
19 ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 2278:
20 ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 249:

միայն Տաճկաստանում[21] գործելու համար, ուր և աշխատել է մինչև Սահմանադրության հաստատվելը, որից հետո վերադարձել է Կովկաս և իր ծննդավայրում պարապել է միայն կուլտուրական գործերով, երբեմն էլ թղթակցել է հայերեն թերթերին «Նժդեհ» ստորագրությամբ, որը բնավ կուսակցական անուն չէ»[22]:

Դատարանի վճռով 93 մեղադրյալների թվում, Նժդեհը ՀՅԴ-ին անդամակցության վերաբերյալ մեղադրանքների չապացուցման պատճառով անմեղ ճանաչվեց ու արդարացվեց[23]:

1912թ. մարտին ազատվելով բանտից[24]՝ Նժդեհն անցավ Բուլղարիա: Նա վկայում էր, որ «Բանտերում՝ Ջուղայից մինչեւ Պետերբուրգ, մնացել եմ ավելի քան երեք տարի, 163 դաշնակցականների ծանոթ դատավարությունից հետո՝ Սիբիր չընկնելու համար, անցել եմ Բուլղարիա»[25]: Այստեղ նա ծառայության է անցնում բուլղարական բանակում որպես սպա՝ տեղակալի աստիճանով: Շուտով Նժդեհը ակտիվորեն մասնակցում է Բալկանյան առաջին պատերազմին, ապա՝ կամավորական շարժմանը, հերոսանում է 1918թ. Ղարաքիլիսայի ճակատամարտում, իսկ 1919-1921թթ. առաջնորդում Լեռնահայաստանի գոյամարտը:

Նժդեհը միշտ եղավ հայրենապաշտ ու Հայրենիքը սիրեց, հերոսամարտի վերածված կյանքում սեփական անձը զոհաբերեց՝ գիտակցելով, որ հայ ժողովրդի հավիտենականացումը դա է պահանջում: Արդյունքում՝ օրինակելի եղավ գործով, գաղափարով և նրա նկատմամբ անխախտ հավատքով:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

Summary

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The lawsuit of Garegin Nzhdeh

Avag A. Harutyunyan

21 Այսինքն՝ Նժդեհը շրջանցում է Պարսկաստանը: Մինչդեռ Թուրքիայի հիշատակումն ամենևին վտանգահարույց չէր. ռուսներն այս շրջանում արդեն նախապատրաստվում էին Առաջին աշխարհամարտին:
22 ՀԱԱ, ֆ. 1457, g. 2, գ. 11, թ. 152:
23 ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թթ. 289-292, 314, 316:
24 Ավոն նշում է 1911թ.: Տե՛ս Աւօ, Նժդեհ, էջ 36:
25 Նժդեհ Գ., Երկեր, հտ. 2, էջ 276:

ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄ

1909թ. հունիսի 22: Քաղաք Նովոչերկասկ: Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը դիտարկելով իր իրականացրած նախաքննությունը «Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության մասին» գործով, ԳՏԱՎ.

Որ ինչպես նշված է 1908թ. սեպտեմբերի 6-ի հետաքննության մեջ, Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Վերին Ազա գյուղում ոստիկանության կողմից խուզարկվել է Լևոն Տեր-Հարությունովի[26] բնակարանը, ում մոտ գտնվում էր Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնութ գյուղի բնակիչ, նրա հարազատ եղբայր Գարեգին Տեր-Եղիշեի Տեր-Հարությունովը: Այդ բնակարանում խուզարկության ժամանակ գտնվել են 1906թ.-ից մինչև 1908թ. հայերեն գրված նամակներ և տետրեր: Ըստ նշյալ նամակների թարգմանության՝ դրանցից երկուսը վերոանվանյալ Գարեգին Տեր-Հարությունովինն էին՝ եղբոր՝ Լևոն Տեր-Հարությունովի և նրանց մոր[27] անունով: Այդ նամակներում Գարեգին Տեր-Հարությունովը հաղորդում էր մորը և եղբորը, որ նա սովորում է կուսակցական դաշնակցական սպայական ուսումնարանում, որտեղ ուսանողների դասընթացը մեկ տարով է, որ սովորում է «Դաշնակցության» հաշվին և որ ուսումնարանում և Բալկանյան թերակղզում հայերը շատ-շատ են, և որ ինքը՝ Գարեգին Տեր-Հարությունովը, նվիրվելով կուսակցական գործունեությանը՝ նույնիսկ ամուսնանալու իրավունք չունի, քանզի դրա համար «Դաշնակցությանը» ստորագրություն է տվել: Ապա, նա տեղեկացնում է, որ ինքը գործում է այդ հեղափոխական ասպարեզում և ամուր թելերով կապված է կուսակցության գործերի հետ ..... և ոչ մի դեպքում չի թողնի իր հեղափոխական գործունեությունը, որպեսզի ընկերների շրջանում, կուսակցության կոմիտեում, սրբապղծված անդամ չլինի .....[28]: Այլ գրություններից երևում է, որ 1908թ. սեպտեմբերին նույն Գարեգին Տեր-Հարությունովը (կուսակցական մականունը՝ «Նժդեհ») կուսակցության օգտին դրամահավաքներ է իրականացրել և նույնիսկ Կզնութի տանուտերի օգնականի անունով պահանջ է ուղարկել, որպեսզի կուսակցության տեղական մարմնի կարգադրությամբ, որի ներկայացուցիչն էր նա՝ «Նժդեհը», տեղական եկեղեցու շրջակա հրապարակում պետք է գումարվի հասարակական ժողով, ուր պարտավոր է ներկա լինել տանուտերի նշյալ օգնականը: Դրանից զատ, հենց այնտեղ գտնվել է ինչպես դպրոցներում, այնպես էլ ժողովրդի շրջանում քարոզչական հեղափոխական գործունեությանը վերաբերող [ՀՅԴ] Երևանի Կենտրոնական կոմիտեի 1906թ. մայիսի 21-ից 27-ը նիստերի հայերեն ձեռագիր մատյանը:

Վերոշարադրյալի ուժով և ղեկավարվելով Քրեական դատավարության կանոնադրության 396-րդ հոդվածով, Դատական Քննիչը ՈՐՈՇԵՑ. նշյալ Գարեգին Տեր-Հարությունովին որպես մեղադրյալի Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն պատասխանատվության ենթարկել:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, էջ 555:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ձննման և թարգմանության

1909թ. հունիսի 22/23: Քաղաք Դոնի Ռոստով: Նովոչերկասկի օկրուգի դատական դալատի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչ Ն. Ի. Լիժինը նույն դալատի Դատախազի Տեղակալ Վ. Ս. Ակսակովի ներկայությամբ՝ ներfոusnրագրյալ ընթերակաների մոs, երդվյալ թարգմանիչ Նադիրաձեի միջոցով, իրականացրին Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի օգնական ռոsմիusr Սիսոևի կողմից ուղարկված Գարեգին և Լևոն Տեր-Հարությունովների բնակարանում խուզարկությամբ առգրավված հայերեն գրագրության զննում և թարգմանություն, ընդ որում դարզվեց.

1. Թանաքով հայերեն փոստային թղթի վրա գրված հետևյալ բովանդակությամբ նամակը.

«Թանկագին մայր և եղբայր,

Վերջապես ստացա Ձեր նամակը, որն ինձ շատ ուրախացրեց: Փառք Աստծո, որ Դուք ողջ-առողջ եք: Ես նույնպես ողջ-առողջ եմ, միայն իմ սիրտն է երգում այսպես. «Թույլ տվեք ինձ, ինչպես մետաքսագործ թրթուր, ինքս պատրաստեմ ինձ գերեզման: Եթե իմ երգը ձեզ դուր չի գալիս, ասացեք՝ հեռացի՛ր, քեզ համար մեզ մոտ տեղ չկա: Այնժամ, ես կգնամ թափառելու՝ աշխարհով, սարերով ու դաշտերով երգելու իմ վիշտը: Եթե և այնժամ տեղ չգտնեմ լայնարձակ դաշտերում, ապա այնժամ իմ գերեզմանը կգտնեմ»:

Թանկագին մայր, ինչքան եմ ուրախ, որ ինձ ծնել ես այսպես դարդոտ ու տխուր: Այն հոգևորականը, որ մկրտել է ինձ, շատ է սխալվել, որ ինձ «Դարդոտ»[29] անունը չի տվել:

Լևոն ջան, շուտով լույս պիտի տեսնեն[30]

26 Նժդեհը փոքրն էր, ուներ մեկ եղբայր, երկու քույր: Նրա եղբայրը՝ ծնվել է 1884թ.: Վերին Ազայի ծխական դպրոցի ուսուցիչն էր:

27 Մայրը՝ Տիրուհի-Տիրոխնի (Խաթայի) Նազարի Գյուլնազարյանն էր: Ծնվել է 1850-ական թվականներին, մահացել է 1938թ. փետրվարի 21-ին Դիլիջանում: Կզնութում հայտնի տոհմից էր:

28 Այս և հետագա բոլոր բազմակետերը փաստաթղթինն են:

29 Գ. Նժդեհի գրական ծածկանունը Դարդունի էր:

30 Նշյալ բանաստեղծությունները չեն հրատարակվել:

իմ բանաստեղծությունները՝ թվով 70, որոնց մի մասը գրել եմ Սոֆիայի ազատ մթնոլորտի ազդեցությամբ: Ես գտնվում եմ սպայական ուսումնարանում, որտեղ ուսանողների համար դասընթացը միայն մեկ տարով է: Սովորում եմ «Դաշնակցության» հաշվին:

Այստեղ, Բալկանյան թերակղզում, հոծ հայություն կա: Այստեղ է Անդրանիկը: Թիֆլիսից Սոֆիա կարելի է հասնել ծովով 8 օրում, իսկ ցամաքով՝ 6 օրում: Խոնարհումս՝ Ջումշուդին և Գևորգին[31]:

Լևոն ջան, ո՞ւմ հետ ես ուզում ամուսնանալ: Եթե դու ամուսնանաս գյուղի աղջկա հետ, ապա ես այդ տուն այլևս չեմ մտնի, թեպետ լավ կլինի մայրիկի համար, եթե դու ամուսնանաս:

Ես իրավունք չունեմ ամուսնանալ մինչև 5 տարի, քանզի ստորագրություն եմ տվել «Դաշնակցությանը»[32]:

Հրաչուկը[33] ավարտել է ուսումնարանը, որտեղ ես պետք է սովորեի: Նա այստեղ է, ոչինչ չի անում:

Լևոն: Դու անպայման ասա իմ ընկեր Հայկո Նախիջևանցուն[34], որպեսզի նա գա այստեղ Սոֆիա, ես կարող եմ դասավորել նրան ընդունվել որևէ ուսումնարան, ես նրան գրել եմ, բայց նրանից պատասխան չունեմ:

Լևոն: Ես կգրեմ ավելի հաճախակի, միայն դու գրիր Սալիյանցին[35], որպեսզի նա նամակ գրի, իսկ ես կպատասխանեմ և կուղարկեմ իմ լուսանկարը, այլապես ես ամաչում եմ գրել առաջինը: Ես նկարվել եմ մակեդոնական հագուստով, չգիտեմ ձեզ դուր կգա թե ոչ: Ահա, ուղարկում եմ ձեզ քարտ: Հաճախակի նամակներ գրեք: Քո Գարեգին: Սոֆիա, 1906թ., հոկտեմբերի 15: Իմ հասցեն է .....[36]

Լևոն, լավ կանես, եթե ուղարկես ինձ մեկ տասնյակ ռուբլի, միայն շուտափույթ»:

2. Մեծ չափսի փոստային թղթի վրա թանաքով հայերեն հետևյալ բովանդակությամբ նամակը.

«Թանկագին Լևոն: Կրկնում եմ այն բառերը, որոնք գրել եմ 20 օր առաջվա նամակում:

Ես հեղափոխական անհատներից մեկն եմ և այժմ աշխատում եմ հեղափոխական ասպարեզում: Ես շատ եմ կապված ինձ վրա դրված գործերով, ինչի համար էլ չեմ կարող թողնել ու հեռանալ գործերից: Դա աքսիոմա է:

Մայրիկը հիվանդ է, ես դա գիտեմ, և հիվանդ եմ հոգով, խիստ եմ սիրում նրան, ես պաշտում եմ իմ տառապյալ մորը, բայց ... Բայց միթե մայրիկը ցանկանում է, որպեսզի ես լքեմ հեղափոխական գործը և վերադառնամ, իսկ հետո որպեսզի դառնամ ողջ կազմակերպության, բոլոր ընկերներիս առջև ատելի, արհամարհված անհատ: Ես հուսով եմ, որ մայրիկը կառողջանա: Ազատության և հավասարության բոլոր աստվածները կգթան և օգնության կգան իմ մայրիկին[37]: Հոգևորականը թալանում է գյուղը, հարուստները՝ քայքայում, սակայն ոչինչ, և նրանց երգը կերգվի:

(Ինչու իմ նամակը ընթերցման համար չես ուղարկել Կզնութի երիտասարդությանը)[38]:

Սմբուլն[39] իմ հասցեով փախուստ է ձեռնարկել: Սմբուլներ: Ովքեր են դրանք, նրանց համար գոյություն չունի ոչ բարի, ոչ չար, նրանք ծնվել են կեղտում, և նրանց ճակատագիրը պետք է ավարտվի կեղտի մեջ:

Սմբուլներ, Սաշաներ ..... նրանք մտավոր աղքատներ են, նրանք ստրուկներ են, նրանք հասարակության և երիտասարդության բուն տականքներն են:

Ուղարկում եմ իմ լուսանկարը, որը ուղարկել է քույրս[40] Սոֆիայից: Գրիր Թազագյուղ քո քեռակալին, որպեսզի նա կարգավորի քո գործերը, ես այսօր նրան նամակ եմ ուղարկել: Ես շուտով կգրեմ քո ժամանման օրվա մասին: Հաճախակի նամակներ գրիր: Յուրաքանչյուր նամակով ինձ հաղորդիր մայրիկի առողջության մասին: Իմ ողջույնները բոլորին: 1908թ. հուլիս»: «Նժդեհ» ստորագրությամբ:

3. Սովորական փոստային թղթի կես էջի չափսով թանաքով հայերեն հետևյալ բովանդակությամբ նամակը.

«Կզնութի մելիքին.[41]

Սույնով տեղական հայ հասարակության կողմից ընտրված և լիազորված Կզնութի տեղական մարմինները հայտարարում են ձեզ, որ. Ա. Այսօր տեղական հասարակությունը պետք է հավաքվի եկեղեցու շրջակա հրապարակում, Բ. Հիշյալ մարմինները պարտավորում են ձեզ ներկա լինել հասարակական այդ հավաքին»:

Տեղական մարմինների փոխարեն (ստորագրությունն անընթեռնելի)

Կզնութ, 1908թ. սեպտեմբեր: «Նժդեհ»

31 Անձինք պարզել չհաջողվեց:
32 Այսպիսի ստորագրություն տալիս էին ՀՅԴ ռազմական դպրոցում սովորողները, քանզի պարտավոր էին ավարտելուց հետո 5 տարի գործել Երկրում:
33 Անձը պարզել չհաջողվեց:
34 Անձը պարզել չհաջողվեց:
35 Անձը պարզել չհաջողվեց:
36 Այս և հետագա բոլոր բազմակետերը փաստաթղթինն են:
37 Այստեղ ակնհայտորեն երևում է Նժդեհի թե՛ մայրապաշտությունը, թե՛ հեղափոխական գործին անվերապահ նվիրվածությունը:
38 Մեր կարծիքով՝ պետք է հասկանալ Կզնութում իր իսկ կողմից հիմնած՝ ՀՅԴ խմբի անդամներին:
39 Անձը պարզել չհաջողվեց:
40 Նկատի ունի էփիմե Սուքիասի Սուքիասյանին: Նժդեհը 1913թ. Սոֆիայում նշանվում է էփեմիայի հետ, իսկ 1935թ. նրանք ամուսնանում են:
41 Նկատի ունի տանուտերին:

ստորագրությամբ:

4. Թղթի կտորի վրա թանաքով հայերեն հետևյալ բովանդակությամբ գրությունը.

«Կզնութ, Մեսրոպին[42]:

Եթե վաղը չուղարկես այն 100 ռուբլին, այնժամ ես ինքս կգամ և քանի դեռ չեմ բռնագանձել 150 ռուբլի՝ հանգիստ չեմ թողնի ձեզ: Ես ձեզ կսպասեմ մինչև երեկո»:

5. Գրելու թղթի կես էջի չափսով հետևյալ բովանդակությամբ հայերեն տպագիր կոչ.

«Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Մրգաստանի [Երևան] շրջանային ժողովի (տեղի է ունեցել 1906թ. մայիսի 21-ից 27-ը) բանաձևեր.

I. ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական կոմիտեն իր շրջանում իրազեկ մարդկանցից քարոզչության համար հիմնում է կենտրոնական մարմին, որը քարոզչությանը վերաբերող գործերում պետք է լայն իրավասություններով օժտված լինի: Քարոզչության մարմնի տրամադրության տակ ժողովը փոխանցում է քարոզչության կարիքների համար որոշակի գումար: Քարոզչության մարմնի վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

1. «Դաշնակցության» հիմնական ծրագրի և Կովկասյան գործունեության նախագծի ժողովրդականացման նպատակով բանավոր և գրավոր քարոզչություն վարում՝ անդադար ընդգծելով, որ հայ հեղափոխական «Դաշնակցությունը» հայ աշխատավոր ժողովրդի տնտեսական և քաղաքական իրավունքների պաշտպանն է, և որ հայ աշխատավոր ժողովրդի շահերը պահանջում են հայ ազգի քաղաքական իրավունքների երաշխիքներ,

2. Շրջաններում հիմնել գրադարաններ,

3. Աշխատավոր ժողովրդի տնտեսական և սոցիալական դրության գիտական նպատակներով ուսումնասիրում (վիճակագրական տվյալների հավաքում):

II. ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

.....[43] շրջիկ և գրավոր հրատարակությունների միջոցով վերոնշյալ դրույթների ժողովրդականացման համար քարոզչության ուժեղացում և մեր շարքերի մաքրում այն բոլոր տարրերից, որոնք իրենց համոզմունքներով և գործունեությամբ «Դաշնակցության» վերոնշյալ դրույթներին չեն համապատասխանում: Առաջիկա ընտրությունների ժամանակ անհրաժեշտ է ձգտել անցկացնել հեղափոխական ջիղ ունեցող մարդկանց, որոնք ընդունակ կլինեն պաշտպանել աշխատավոր ժողովրդի շահերը: Ընտրությունները պետք է տեղի ունենան .....

III. ՄՐԳԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ

Քանի որ Մրգաստանի Կենտրոնական կոմիտեի համար շրջանի ընդարձակության և գործերի բարդության պատճառով միայնակ անհնարին է ղեկավարել գործերը, և քանի որ կոմիտեի որոշ տեղամասեր շատ հեռու են գտնվում կենտրոնական քաղաքից[44], դրա համար սկզբունքորեն ցանկալի համարվեց Մրգաստանի շրջանը բաժանել 2 կամ 3 Կենտրոնական կոմիտեների: Կենտրոնական կոմիտեն մինչև հաջորդ շրջանային ժողովը, հնարավորության դեպքում, իր հայեցողությամբ, կարող է հիմնել նոր Կենտրոնական կոմիտեներ և ընդունված կարգով հաստատման ներկայացնել:

IV. ԲՅՈՒՋԵ

Շրջանային ժողովն իրեն իրավասու համարելով հաստատել Կենտրոնական կոմիտեի և շրջանային կոմիտեների ելումուտի նախահաշիվները՝ հանձնարարեց Կենտրոնական կոմիտեին ներկայացնել հաջորդ տարվա նախահաշվի մանրամասն դրամական հաշիվները: Շրջանային ժողովը նախորդ տարիների ծախսերին ու մուտքերին համապատասխան կհաստատի նախահաշիվը:

Մինչև առաջիկա շրջանային ժողովի կողմից նախահաշվի հաստատումը՝ տեղական կոմիտեները իրավունք ունեն ծախսել իրենց մոտ եղած միջոցների երկու տոկոսը, ավելիի համար պետք է Կենտրոնական կոմիտեի թույլտվությունը ստանան:

V. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Որպեսզի Մրգաստանի ներկայացուցիչը կարողանա «Դաշնակցության» առաջիկա ընդհանուր ժողովին ներկայացնել ողջ շրջանի կարծիքը, Կենտրոնական կոմիտեն պետք է առնվազն ժողովից երկու ամիս առաջ ընդհանուր ժողովին ուղարկի բոլոր կոմիտեների հարցերի ցուցակը, որոնք պետք է բարձրացվեն ժողովում: Կոմիտեներն այդ հարցերի առթիվ իրենց տեղամասային ընկերների հետ պետք է խորհրդակցեն և իրենց տեղամասերի կարծիքը ներկայացնեն Մրգաստանի շրջանային ժողովին, որը պետք է ստեղծվի գոնե ընդհանուր ժողովից երեք շաբաթ առաջ: Մրգաստանի շրջանային ժողովն այդ տեղամասերի կարծիքների մշակումից հետո դրանք իր ներկայացուցչի հետ ուղարկում է ընդհանուր ժողովին:

42 Նկատի ունի Կզնութի տանուտերի օգնական Մեսրոպ Շահնազարովին:
43 Այս և հետագա բոլոր բազմակետերը փաստաթղթինն են:
44 Նկատի ունի Երևանը:

VI. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆԵՐ

Ցանկալի է ճանաչվել, որպեսզի մարմինների հեղափոխական գործունեությանը հետևելու և շրջանային կոմիտեների գործերի ճիշտ ուղղորդման համար Կենտրոնական կոմիտեն ուղարկի վերատեսուչներ, որոնք պետք է մասնակցեն կոմիտեների ժողովներին մեկ ձայնի իրավունքով:

VII. ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շրջանային կոմիտեներին պարտավորեցրել ենք, գոնե երկու ամիսը մեկ անգամ, իրենց հեղափոխական և խմբերի գործունեության, ինչպես նաև դրամական հաշվետվությունների մասին Կենտրոնական կոմիտեին ներկայացնեն մանրամասն տեղեկություններ:

Այս բանաձևերով պետք է ղեկավարվեն մեր շրջանի բոլոր դաշնակցական մարմինները և ընկերները:

Հայ հեղափոխական «Դաշնակցություն»
կուսակցության Մրգաստանի
Կենտրոնական կոմիտե

14 հունիսի 1906թ.
Մրգաստան

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, էջ 553-555:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 3
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1909թ. հուլիսի 8: Քաղաք Նախիջևան: Դատական Քննիչ Սիդավան[45] բանտում որոշես մեղադրյալի՝ Քրեական դատավարության կանոնադրության 40-րդ հոդվածի համաձայն հարցաքննեց ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

Ազգանուն, անուն և հայրանուն – Տեր-Հարությունով Գարեգին Տեր-Եղիշեի, կոչումը– հոգևորականի որդի, գրանցման և ծննդյան վայր - Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնութ գյուղ, զբաղմունքը – մինչև ձերբակալությունը սովորել է Սոֆիայի ուսումնարանում, տարիքը – 22 տարեկան, ծնունդը – օրինական, հավատքը – հայ-գրիգորյան, կրթությունը - ավարտել է Երևանի գիմնազիան[46], ընտանեկան դրությունը - ամուրի, գոյության միջոցները – հողակտոր Կզնութում, հատուկ նշաններ – չկա, ինչպիսի հարաբերությունների մեջ է տուժողի հետ .....[47], դատվածությունը – չի դատվել:

Ինձ ներկայացվող հանցագործության առթիվ ըստ էության ցուցմունք եմ տալիս: Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում այն բանում, որ ես պատկանել եմ 1905-1908 թվականներից Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն[48] իր գործունեության խնդիր էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպչական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնի ոտնձգությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի են ունեցել 1905-1908թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ՝ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների[49] հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի[50] խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և՝ մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցավոր նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության

45 Դատելով ազգանունից՝ ունի վրացական կամ մեգրելական ծագում:
46 Երևանի գիմնազիայի ավարտման մասին հստակ և ապացուցված փաստ չկա:
47 Փաստաթղթում այսպես է:
48 Չևակերպումները դատական քննիչինն են:
49 Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:
50 Ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

իրավասությունը՝ իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ, և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես նշյալ հանցավոր ընկերակցության անդամ եմ եղել և վերջինիս միջոցների հաշվին սովորել եմ Սոֆիայի կուսակցական հեղափոխական ռազմական ուսումնարանում, որպեսզի հետագայում դասընթացների ավարտից հետո մնամ նշյալ հանցավոր ընկերակցության ռազմական կազմակերպության շարքերում, այսինքն՝ Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ:

Ներկա գործի առթիվ կարող եմ բացատրել հետևյալը. 1904թ. ես ավարտել եմ Երևանի գիմնազիան և նկատի ունենալով Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղի ունեցող գործադուլները և անկարգությունները՝ մեկնեցի արտասահման: Վիեննայում[51] ես ծանոթացա Սոֆիայի բնակիչ դաշնակցական Սուքիաս Սուքիասյանի հետ: Վերջինս իմանալով ուսումս շարունակելու իմ ցանկության մասին և լինելով շատ հարուստ մարդ՝ առաջարկեց ինձ իր հաշվին ընդունվել Սոֆիայի համալսարան[52], ինչին և ես համաձայնեցի: Ես համալսարանում սովորեցի երկու տարի: 1907թ. համալսարանը երեք ամսով փակվեց և այդ ժամանակ ես ցանկացա ընդունվել Սոֆիայի ռազմական ուսումնարանին կից սպայական դասընթացներ, սակայն շուտով համալսարանը բացվեց և ես շարունակեցի ուսումս այնտեղ, ընդ որում ես պետք է ասեմ, որ Սոֆիայում գոյություն ունի պետական ռազմական ուսումնարան, և ոչ թե «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության ուսումնարանը[53]:

Ստորագրություն այն մասին, որ ես պարտավոր եմ չամուսնանալ և ինձ նվիրել հեղափոխական գործունեությանը՝ ես ոչ մեկին չեմ տվել: Սոֆիայից ես նամակներ եմ գրել մորս և եղբորս, սակայն ոչ այն բովանդակության նամակներ, ինչպիսիք դուք ինձ ներկայացնում եք (ներկայացված են մոր և Լևոնի անուններով երկու նամակների բովանդակությունը), ում կողմից են գրված այդ նամակները՝ չգիտեմ: 1908թ. սեպտեմբերին Կզնութի տանուտերի օգնականի անունով նամակը գրված է իմ կողմից՝ որպես հասարակության ընտրյալի, [ծխական] դպրոցի բացման և ոռոգման ջրանցքի անցկացման առիթով: Մեսրոպի անունով նամակը գրված է թուրքական զինվորի[54] կողմից 1905թ., ինչպե՞ս է այդ զինվորի անունը՝ ես չգիտեմ[55]: Ներկա մեղադրանքը սարքված է Կզնութի տանուտերի օգնական Մեսրոպ Շահնազարովի զրպարտությամբ, քանի որ մենք պատկանում ենք միմյանց հետ թշնամություն ունեցող երկու կուսակցությունների: Այդ կուսակցությունները հեղափոխական չեն, այլ սովորական գյուղական, որոնք գոյություն ունեն յուրաքանչյուր գյուղում և որոնք ստեղծվում են գյուղական հասարակական գործերի հիման վրա: Ասվածին անհրաժեշտ եմ համարում հավելել, որ Սոֆիայի ռազմական ուսումնարանում սովորում էին բուլղարացիներ և մակեդոնացիներ, որոնք ավարտելուց հետո դառնում էին բուլղարացի սպաներ: Այդ ուսումնարանը հետապնդում է այն նույն նպատակները, ինչ և բոլոր մյուս ռազմական ուսումնարանները: Ռուսաստանից ես հեռացել եմ 1904թ. երկրորդ կեսին, իսկ վերադարձել՝ միայն 1908թ. վերջին, ինչի պատճառով ես չեմ կարող պատկանել Ռուսաստանում 1905-1908թթ. գործած «Դաշնակցություն» կուսակցությանը[56]: Իմ ցուցմունքում սխալ է սպրդել. Սոֆիայի ռազմական ուսումնարանում ես սովորել եմ տասնմեկ ամիս, բայց դասընթացը չեմ ավարտել: Ուսումնարան ես ընդունվել եմ, քանի որ այն ժամանակ զբաղմունք չունեի՝ համալսարանը փակված էր: Խնդրում եմ, որպես վկաների, հարցաքննել իմ համագյուղացիներ Բագրատ Գևորգովին[57], Մեսրոպ Շահնազարովին, Դոգաջին, Գևորգ Հարությունովին, Սահակ Գյուլնազարովին[58], Ստեփան Խոջաևին և Նիկոլայ Մնացականովին այն բանի հաստատման համար, որ Մեսրոպի անունով 100 ռուբլի հանձնելու մասին նամակը գրված է 1905թ. Կզնութում ապրող զինվորի[59] կողմից: Ի հաստատումն նույն հանգամանքի՝ խնդրում եմ հարցաքննել ևս հետևյալ համագյուղացիներիս՝ Ալեքսան Ավակովին, Ղազար Ավակովին[60]:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 600-601:
Թարգմանություն ռուսերենից:

51 Նժդեհն իրականում մեկնել է Պարսկաստան: Վիեննան նշելով՝ նա պարզապես քողարկում է իրանական հեղափոխությանն իր մասնակցությունը:

52 Սոֆիայի համալսարանում սովորելու մասին վկայությունը հավանաբար դատական մարմինների ուշադրությունը շեղելուն է միտված: Համենայն դեպս, դրա մասին առայժմ ոչ մի փաստ չկա:

53 Այս պարագայում ևս Նժդեհը ՀՅԴ-ին ձգտում է զերծ պահել դատական անհարկի մեղադրանքներից:

54 Պետք է հասկանալ «թուրքահպատակ»: Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:

55 Զինվորի անունը Սայդո (Սեյդո Պողոս) է:

56 Այստեղ Նժդեհը ոչ թե հրաժարվում կամ ժխտում է ՀՅԴ-ին իր պատկանելիությունը, այլ ուղղակիորեն ցույց է տալիս ցարական քննիչների կողմից ՀՅԴ-ի ձևավորման ժամկետներին տրված սխալ գնահատականը:

57 Բագրատ Գևորգի Սահակյանց – Նժդեհի հորեղբոր որդի:

58 Սահակ Գյուլնազարյան – Նժդեհի քեռի:

59 Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:

60 Նշյալ բոլոր անձինք Նժդեհի պահանջի համաձայն հարցաքննված են:

ԹԻՎ 4
ՈՐՈՇՈՒՄ

1909թ. հուլիսի 8: Քաղաք Նախիջևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան հարցաքննելով Գարեգին Տեր-Եղիշեի Տեր-Հարությունովին որպես Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ մեղադրվող, և ուշադրության առնելով նրան սպառնացող պատժի խստությունը և Նովոչերկասկի օկրուգային դատական պալատի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի պահանջը, ինչպես նաև ղեկավարվելով Քրեական դատավարության կանոնադրության 416-րդ հոդվածի 6-րդ կետով ՈՐՈՇԵՑԻ. մեղադրյալ Տեր-Հարությունովի պատժամիջոց ընտրել կալանքի տակ պահելը, ինչի մասին և հայտարարել նրան:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 601:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 5
ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1910թ. փետրվարի 8: Քաղաք Նախիջևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան հարցաքննեց ներքոանվանյալներին և նրանք ցուցմունք տվեցին.

Քերբալայ Մուխթարով Հաջի Զաֆարով-Օղլի (և ոչ թե՝ Ֆարզա-Օղլի), Նեհրամի համայնքի տանուտեր, 40 տարեկան, շիա մահմեդական, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ, գրագետ:

1908թ. սեպտեմբերին Նախիջևանի գավառապետն եկավ Կունգուտ[61] գյուղ, որտեղ ուզում էր ձերբակալել Գարեգին Տեր-Հարությունովին, բայց վերջինս տանը չէր: Իսկ ըստ տվյալների, Գարեգինը պետք է գտնվեր եղբոր մոտ՝ Վերին Ազա գյուղում: Գավառապետն ինձ կարգադրագիր տվեց Նախիջևանի 3-րդ տեղամասի ուրյադնիկ[62] Մուրավյովի անունով և առաջարկեց անմիջապես մեկնել Զուղա գյուղ: Զուղայից ես և ուրյադնիկ Սագինովը մեկնեցինք Վերին Ազա գյուղ: Ազայի պահակակետից վերցնելով ուրյադնիկ Մուրավյովին՝ մենք ժամանեցինք Լևոն Տեր-Հարությունովի տուն: Լևոնը և նրա եղբայր Գարեգինը տանն էին և ճաշում էին: Ուրյադնիկ Սագինովը Գարեգինին հայտարարեց գավառապետի կարգադրության մասին և ձեռնարկեց խուզարկության: Պատուհանի գոգին դրված էին հայերեն նամակներ և տետրեր: Ու՞մ էին դրանք պատկանում՝ չգիտեմ: Սագինովը վերցրեց դրանք և Տեր-Հարությունովի հետ ուղեկցեց գավառապետի մոտ: Արդյո՞ք Լևոն և Գարեգին Տեր-Հարությունովները պատկանում էին հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությանը թե ոչ՝ չգիտեմ: Այդ կուսակցության գործունեության մասին ես ոչինչ չեմ կարող ասել: Մինչև 1905թ., այսինքն՝ մինչև հայ-թաթարական անկարգությունները, լուրեր կային, որ գոյություն ունի «Դաշնակցություն» կուսակցություն, որը կարծես թե ձգտում էր Հայկական թագավորության վերականգնմանը, բայց 1905թ.-ից հետո այդ կուսակցության գործունեության մասին ոչինչ լսելի չէր[63]:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թթ. 1635-1636:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Բագրատ Գևորգի Սահակյանց, Կունգ[64] գյուղի բնակիչ, 28 տարեկան, հայ-գրիգորյան, Գարեգին Տեր-Հարությունովի զարմիկ[65], գրագետ, հարցաքննված եմ թ. 37 պահանջագրով:

1908թ. սեպտեմբերին Գարեգին Տեր-Հարությունովի կողմից ես տանուտերի օգնական Մեսրոպ Բաբայի Շահնազարովին գրություն չեմ տարել: Այդպիսի դեպք ես չեմ հիշում, և ինչպիսի գրությունների մասին է խոսք գնում՝ չգիտեմ: Ես չեմ հիշում, որ մեր գյուղում գյուղական հավաք գումարվի, որտեղ Գարեգին Տեր-Հարությունովը կամ որևէ ուրիշ անձ «Դաշնակցություն» կուսակցության քարոզչություն անի կամ էլ բնակչությանը կառավարության դեմ գրգռի: Հիշում եմ, որ 1908թ. սեպտեմբերին ոռոգման ջրանցքի կառուցման առթիվ գյուղական հավաք գումարվեց: Այդ հավաքում ներկա էր և տանուտերի օգնականը:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1636:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ռոման Դմիտրիի Սագինով, Նախիջևանի գավառի 3-րդ տեղամասի ուրյադնիկ, ապրում եմ Զուղայում, 30 տարեկան, ուղղափառ, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

61 Պետք է լինի Կզնութ:
62 Ոստիկանական պաշտոնյա:
63 Այստեղ թաթար վկան ակնհայտորեն ստում է, քանզի ՀՅԴ անունն Անդրկովկասում առավել հայտնի դարձավ հենց 1905թ. հետո:
64 Պետք է լինի Կզնութ:
65 Նժդեհի հորեղբոր որդի:

1908թ. սեպտեմբեր ամսին ինձ մոտ Ջուղա եկավ Նեհրամի համայնքի տանուտեր Ք. Մուխթար-Հաջի Ֆերզալի օղլին՝ բերելով [Վերին] Ազայի ծխական դպրոցի ուսուցիչ Լևոն Տեր-Հարությունովի եղբայր Գարեգին Տեր-Հարությունովի ձերբակալման մասին Նախիջևանի գավառապետի կարգադրագիրը: Ես անհապաղ Նեհրամի համայնքի տանուտերի հետ մեկնեցի Վերին Ազա գյուղ, տեղի պահակակետից վերցրի ուրյադնիկ Մուրավյովին և ուղղվեցի Լևոն Տեր-Հարությունովի տուն: Լևոն և Գարեգին Տեր-Հարությունովները գտնվում էին տանը և ճաշում էին: Ես մտա տուն, Գարեգինին հայտարարեցի գավառապետի կարգադրության մասին, և ըստ այդմ ես նրան առաջարկեցի ցույց տալ իր իրերը: Նա ցույց տվեց ճամպրուկը: Այնտեղ, պատուհանի գոգին, դրված էին հայերեն տետրեր և նամակներ: Գարեգինը հայտարարեց, որ նամակները և երկու տետրերը իրենն են: Ես դրանք վերցրի, կապեցի և կնքեցի: Այնտեղ էին գտնվում նաև Ազայի դպրոցի աշակերտական տետրերը, որոնք ես իհարկե չվերցրի: Նշյալ նամակների և երկու տետրերի առնչությամբ Տեր-Հարությունովները ոչ մի պարզաբանում չտվեցին, քանի որ ես չհարցաքննեցի նրանց: Հենց նույն օրը ես մեկնեցի Ազայից և Գարեգին Տեր-Հարությունովին նամակներով ու տետրերով հասցրի Նախիջևանի գավառապետին:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 1636:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ստեփան Հովհաննեսի Մոսեսով (նույն ինքը Խոջաև), Կունգուտ[66] գյուղի բնակիչ, 35 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ, հարցաքննված եմ թ. 37 պահանջագրով:

1908թ. սեպտեմբերին (օրը չեմ հիշում) ես իսկապես ներկա եմ եղել մեր գյուղի գյուղական հավաքին, որը քննարկել է մոտ 4000 ռուբլի արժողությամբ ոռոգման նոր ջրանցքի կառուցման հարցը: Այդ հավաքը գումարվել էր մեր գյուղի լիազորներ Ղուկաս Բաբաևի, Նիկոլայ Իսաբեկովի և Ստեփան Ազիզովի կողմից: Այդ հավաքում, ինչքան հիշում եմ, ներկա էին տանուտերի օգնական Մեսրոպ Բաբայի Շահնազարովը և Գարեգին Տեր-Հարությունովը: Վերջինս հավաքում խոսում էր՝ համագյուղացիներին համոզելով գումար հավաքել և կարգավորել անհրաժեշտ ջրանցքը, որն այժմ իրականում և կառուցվում է: Տեր-Հարությունովը «Դաշնակցություն» կուսակցության անունից քարոզչություն չի արել: Տեր-Հարությունովը Մեսրոպ Շահնազարովի մոտ որևէ մեկին գրությունով ուղարկել է թե ոչ՝ չգիտեմ: «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության գործունեության մասին ինձ ոչինչ հայտնի չէ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 1637-1638:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Մեսրոպ Բաբայի Շահնազարով, Կզնութ գյուղի բնակիչ, 50 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ, հարցաքննված եմ թ. 37 պահանջագրով:

Ես տանուտերի օգնական եմ եղել 1902-1905թթ. և 1908թ.: Իմ համագյուղացի Գարեգին Տեր-Հարությունովը սովորաբար ապրել է Կզնութ գյուղից դուրս, ուր ամեն տարի կարճ ժամանակով էր վերադառնում: Որտեղ է մասնավորապես ապրել և ինչով զբաղվել Գարեգինը՝ չգիտեմ, բայց լսել էի, որ նա մշտապես շրջում է Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Մինչև 1908թ. Տեր-Հարությունովն իրեն սովորականի պես է պահել և նրա գործողություններում ոչ մի կասկածելի բան չեմ նկատել: Կարծես թե 1908թ. օգոստոսի վերջին Տեր-Հարությունովը եկավ Կզնութ, մոտ հարաբերություններ հաստատեց իր համագյուղացիներ Հունան Հարությունովի, Բագրատ Գևորգովի, Սահակ Գյուլնազարովի[67] և Ստեփան Հովհաննեսովի հետ, և նրանց հետ միասին սկսեց խառնվել գյուղական գործերին: Գարեգինը սկսեց գործել այնպես ազատ և ինքնուրույն, որ գյուղում լուր տարածվեց, թե նա «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչն է, ինչի պատճառով էլ նրանից բոլորը սկսեցին վախենալ և լսել:

Կզնութ Գարեգինի ժամանումից մոտ 7 օր անց, երբ ես գտնվում էի Չենգմաբասարում (Կզնութի թաթարական մաս), ինձ մոտ եկավ իմ համագյուղացի Բագրատ Գևորգովը, փոխանցեց ինձ հայերեն երկու գրություն, միաժամանակ հայտնելով, որ այդ գրությունները Գարեգին Տեր-Հարությունովից են, ով ինձնից պահանջում է հավաքի ներկայանալ: Ես պատասխանեցի, որ հավաքին չեմ գա և Գևորգովը հեռացավ: Ես թերի գրագետ եմ և Գևորգովի մոտի գրությունները չկարդացի: Նույն օրվա երեկոյան ինչ որ գրագետ տղայի տվեցի կարդալ այդ գրությունները և այն ժամանակ իմացա դրանց բովանդակության մասին: Գրություններից մեկում ինձ առաջարկվում էր ներկայանալ հավաքի, իսկ մյուս գրությունով պահանջվում էր հանձնել 100 ռուբլի: Թե ում ստորագրությամբ էին գրությունները՝ չեմ

66 Պետք է լինի Կզնութ:
67 Սահակ Գյուլնազարյան – Նժդեհի քեռի:

հիշում[68]: Ով է գրել այդ նամակները՝ չգիտեմ, բայց լսել եմ, որ դրանք գրել է Գարեգին Տեր-Հարությունովը: Հաջորդ օրն ևեթ նշյալ գրությունները ես ներկայացրի Նախիջևանի գավառապետ Սորոկինին, ով 2-3 օր անց ձերբակալեց Տեր-Հարությունովին, և նրա գործունեությունը դադարեցվեց: Գյուղացիներից, որոնց չեմ հիշում, ես լսել եմ, որ հավաքը կայացել է տեղական եկեղեցու շրջակա հրապարակում, ընդ որում այդ հավաքում Գարեգին Տեր-Հարությունովը համոզել է գյուղացիներին փակել պետական դպրոցը և բացել մասնավորը: Այդ առթիվ կազմվել է վճռագիր, որ ստորագրել են կզնութցիները՝ վախենալով Տեր-Հարությունովից: Ստորագրել եմ վճռագիրը թե ոչ՝ չեմ հիշում, սակայն եթե որևիցե նման վճռագիր իմ կողմից ստորագրվել է, ապա հավանաբար ես այդպես եմ վարվել սպանվելու վախից: Ինչ նպատակով էր Տեր-Հարությունովը ձգտում փակել պետական դպրոցը՝ չգիտեմ, ինչ մասնավոր դպրոցի մասին էր նա հոգում՝ չգիտեմ, մեր գյուղում գոյություն ունի պետական գյուղական վարժարան և ոչ թե եկեղեցական-ծխական:

Տեր-Հարությունովի ձերբակալությունից հետո գյուղում լուրեր տարածվեցին, որ ինձ ցանկանում են սպանել: Թեպետ անձամբ ինձ ոչ մեկը սպանությամբ չի սպառնացել, սակայն ես իմ հանդեպ անբարյացակամության մեջ կասկածում էի Տեր-Հարությունովի կողմնակիցներին՝ Բագրատ Գևորգովին, Սահակ Գյուլնազարովին և ուրիշների, որոնց վրա ես գավառապետին բողոք ներկայացրի, ով կանչեց նրանց և ստորագրություն վերցրեց առ այն, որ եթե ես սպանվեմ նրանք մեղավոր կլինեն դրանում: Ես չեմ լսել, որ Տեր-Հարությունովը դրամ է հավաքել կամ համոզել համագյուղացիներին զինվել կառավարության դեմ պայքարելու համար: Տեր-Հարությունովի վերոհիշյալ կողմնակիցների գործունեությունը դրսևորվում էր նրանով, որ նրանք աջակցում էին վերջինիս և ասում էին նույնը, ինչ որ Տեր-Հարությունովը: Ինչ է նշանակում «Նժդեհ» բառը՝ չգիտեմ[69]: Ինչ անհրաժեշտության համար էր Գարեգին Տեր-Հարությունովը պահանջում 100 ռուբլի՝ չգիտեմ[70]: Տեր-Հարությունովը ներկա պահին գտնվում է բանտում: Ի հաստատումն իմ ցուցմունքի հղում անել վկաների վրա չեմ կարող, քանի որ բոլոր կզնութցիները վախենում են և ոչ մեկը Տեր-Հարությունովի դեմ ցուցմունք չի տա: Ես գիտեմ, որ ինձ կսպանեն այս ցուցմունքի համար, որ տալիս եմ:

«Դաշնակցություն» կուսակցության գործունեության մասին ես ոչինչ չգիտեմ: Պատկանել է Տեր-Հարությունովը «Դաշնակցություն» կուսակցությանը, թե ոչ՝ չգիտեմ, սակայն նա չէր կարող խառնվել գյուղական գործերին և նամակներ գրել, եթե չլիներ «Դաշնակցություն» կուսակցության անդամ: Իրականացվե՞լ են Տեր-Հարությունովի կամ «Դաշնակցություն» կուսակցության կողմից ահաբեկչական գործողություններ՝ չգիտեմ: Տեր-Հարությունովը և նրա կողմնակիցներն իսկապես լուրեր էին տարածել, որ ես գործում եմ «Դաշնակցություն» կուսակցության դեմ: Ստիպե՞լ է Տեր-Հարությունովը սպառնալիքներով կամ բռնությամբ վճռագրերի կազմմանն ու ստորագրմանը, թե ոչ՝ չգիտեմ, սակայն նրա ներկայացրած պահանջներից ոչ մեկը չէր խիզախի հրաժարվել:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է[71]:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1637-1638:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Բագրատ Գևորգի Սահակյան, Կզնութ գյուղի բնակիչ, 28 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ, գրագետ:

1905-1909թթ. իմ համագյուղացի Գարեգին Տեր-Հարությունովը չի ապրել գյուղում, այլ միայն եկել է տարին մեկ անգամ 15-20 օրով: Որտեղ է նա բնակվել և ինչով է զբաղվել նշված ժամանակահատվածում՝ բացատրել չեմ կարող, սակայն ինքը՝ Գարեգինը, ասում էր, որ սովորում է ինչ-որ հարուստ հայի հաշվին, ով ցանկանում է [նրան] կնության տալ իր աղջկան: Ո՞վ է նշված հարուստ հայը և ինչքա՞ն է ճշմարտացի Գարեգինի պատմածը՝ չեմ կարող ասել: Դրամի պահանջով իմ համագյուղացիներից որևէ մեկին նամակների ուղարկման մասին ես ոչինչ չեմ լսել, մեր գյուղի տանուտերի օգնական Մեսրոպ Շահնազարովին ոչ մեկը դրամի պահանջներով նամակներ չի ուղարկել: Շահնազարովն այդ առթիվ զրպարտել է Գարեգին Տեր-Հարությունովին՝ թշնամանքից ելնելով, նրա հորեղբոր որդի Սարգիս Շահնազարովը շատ տարիներ առաջ թունավորել է Գարեգինի հորը[72] և այն ժամանակից սկսած նրանց միջև թշնամանք կա: Գարեգին Տեր-Հարությունովին որպես մոտիկ հարևան ես լավ եմ ճանաչում և հաստատում եմ, որ նա «Դաշնակցություն» կուսակցությանը չի

68 Այստեղ Շահնազարովն ակնհայտորեն ստում է հետևյալ առումներով. 1. իր թերի գրագիտության, 2. իր համար կարևոր ու «վտանգավոր» գրությունների բովանդակությանը մինչև երեկո հասու չլինելու, 3. ստորագրողների անունները չհիշելու: Այդ իսկ պատճառով նա մի շարք անգամներ օգտագործում է «չեմ հիշում» արտահայտությունը, ինչն ամենևին համոզիչ չէ:

69 Նժդեհ – պանդուխտ, օտարական, տարաշխարհիկ: Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 2, Երեւան, 1981, էջ 424:

70 Այստեղ Շահնազարովն արդեն ինքն իրեն հակասում է:

71 Այս ձևակերպումը մեկ անգամ ևս վկայում է Շահնազարովի գրագիտության մասին:

72 Տեր-Եղիշեն թունավորվել է հարսանիքի ժամանակ 1888թ.:

պատկանել. այդ հանգամանքը ինձ հայտնի է Գարեգինի խոսքերից: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության մասին ես ոչինչ չգիտեմ: Կզնուքում «Դաշնակցություն» կուսակցության կոմիտե չի գործել: Գարեգինի քաղաքական հայացքներն ինձ անհայտ են, սակայն նա զրույցների ընթացքում մշտապես խոսում էր «Դաշնակցություն» կուսակցության դեմ[73]:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 1638: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Գևորգ Մուղդուսի Հարությունով, Կզնուք գյուղի բնակիչ, 80 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

1905թ.-ից մինչև 1909թ. Գարեգին Տեր-Հարությունովը մշտապես Կզնուքում չի բնակվել, սակայն ամեն տարի մի քանի օրով գալիս էր: Որտե՞ղ է նա բնակվել և ինչո՞վ է զբաղվել՝ չգիտեմ: Մեսրոպ Շահնազարովի կողմից 100 ռուբլի պահանջով նամակի մասին ես ոչինչ չգիտեմ: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության, այդ կուսակցությունում Գարեգին Տեր-Հարությունովի մասնակցության, որևիցե ահաբեկչական գործողությունների մասին ինձ հայտնի չէ: Տեր-Հարությունովի քաղաքական հայացքների մասին ես ոչինչ չգիտեմ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է: Անգրագետ:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 1639:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Սահակ Գյուլնազարի Մկրտչյան[74], Կզնուք գյուղի բնակիչ, 45 տարեկան, հայ-գրիգորյան, Գարեգին Տեր-Հարությունովի քեռի, չեմ դատվել:

Որտեղ է մասնավորապես ապրել Գարեգին Տեր-Հարությունովը 1905թ.-ից մինչև ձերբակալությունը՝ չգիտեմ: Ամեն տարի Գարեգինը գալիս էր Կզնուք մի քանի օրով: Ասում էին, որ Գարեգինը սովորում է Գերմանիայում, սակայն ինչ էր սովորում՝ չգիտեմ: Մեսրոպ Շահնազարովի կողմից 100 ռուբլի պահանջով նամակի ստացման մասին ոչինչ չգիտեմ: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության, այդ կուսակցությունում Գարեգինի մասնակցության, վերջինիս քաղաքական հայացքների, որևիցե ահաբեկչական գործողությունների կատարման մասին ոչինչ չգիտեմ: Մեսրոպ Շահնազարովը տանուտերի օգնական եղած ժամանակ վիճել է ինձ հետ ոռոգման ջրի պատճառով և գավառապետին բողոք է ներկայացրել, ով հայտարարել է, որ եթե Մեսրոպի հետ ինչ-որ դժբախտություն պատահի, ապա մեղավորը ես կլինեմ: Մեսրոպի բողոքը Գարեգին Տեր-Հարությունովի գործողությամբ էր պայմանավորված:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է: Անգրագետ:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 1639:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ստեփան Հովհաննեսի Մոսեսով (Խաժակ), Կզնուք գյուղի բնակիչ, 35 տարեկան, հայ-գրիգորյան, գործում մասնակից անձանց օտար եմ:

1905-1906թթ. ես ապրել եմ ք.Եկատերինոդարում, որտեղից իմ գյուղ եմ վերադարձել 1907թ.: Գիտեմ, որ 1907-1909թթ. Գարեգին Տեր-Հարությունովը բնակվել է Կզնուքում, սակայն որտեղ և ինչով է զբաղվել՝ չգիտեմ: Ասում էին, որ Գարեգինն ինչ-որ տեղ սովորում է ինչ- որ հարուստ հայի հաշվին, բայց ինչքանով են այդ լուրերը հավաստի՝ չգիտեմ: Մեսրոպ Շահնազարովի կողմից 100 ռուբլի հանձնելու պահանջով նամակի ստացման մասին ոչինչ չեմ լսել: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության, այդ կուսակցությունում Գարեգինի մասնակցության, վերջինիս քաղաքական հայացքների, որևիցե ահաբեկչական գործողությունների կատարման մասին ինձ ոչինչ հայտնի չէ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 3, թ. 1639-1640:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Նիկոլայ Մնացականի Բեկնազարյանց, Կզնուք գյուղի բնակիչ, 40 տարեկան, հայ-գրիգորյան, գործում մասնակից անձանց օտար եմ, չեմ դատվել, անգրագետ:

Որտեղ է մասնավորապես ապրել Գարեգին Տեր-Հարությունովը 1905թ.-ից մինչև 1909թ.՝ չգիտեմ: Ասում են, թե նա սովորում էր Բուլղարիայում, բայց մասնավորապես որտեղ՝ չգիտեմ: Իմ համագյուղացիներից որևիցէ մեկի կողմից դրամի պահանջով նամակներ ստանալու մասին ոչինչ չեմ լսել: Պատկանում էր Գարեգին Տեր-Հարությունովը «Դաշնակցություն» կուսակցությանը թե

73 Այս հանգամանքը Նժդեհի գաղափարակից հարազատի կողմից ուղղակի պաշտպանական մարտավարության դրսևորում է:

74 Ճիշտը՝ Սահակ Մկրտիչի Գյուլնազարյան - Նժդեհի քեռին:

ոչ՝ չգիտեմ: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության, Տեր-Հարությունովի կամ «Դաշնակցություն» կուսակցության կողմից որևիցէ ահաբեկչական գործողությունների կատարման մասին ինձ ոչինչ հայտնի չէ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է: Անգրագետ:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1640:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ալեքսան Աստվածատուրի Ավակով, Կզնուբ գյուղի բնակիչ, 39 տարեկան, հայ-գրիգորյան, գործում մասնակից անձանց օտար եմ, չեմ դատվել, գրագետ:

Որտեղ է մասնավորապես ապրել Գարեգին Տեր-Հարությունովը 1905թ.-ից մինչև ձերբակալությունը՝ չգիտեմ: Ասում են, թե նա բնակվել է Բուլղարիայում, բայց մասնավորապես որտեղ՝ չգիտեմ: Իմ համագյուղացիներից որևիցէ մեկի կողմից դրամի պահանջով նամակներ ստանալու մասին ոչինչ չեմ լսել: «Դաշնակցություն» կուսակցությանը Տեր-Հարությունովի պատկանելության և դրա գործունեության մասին ոչինչ չգիտեմ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1640:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ղազար Աստվածատուրի Ավակով, Կզնուբ գյուղի բնակիչ, 45 տարեկան, հայ-գրիգորյան, գործում մասնակից անձանց օտար եմ, չեմ դատվել, գրագետ:

Որտեղ էր մասնավորապես ապրել Գարեգին Տեր-Հարությունովը 1905թ.-ից մինչև ձերբակալությունը՝ չգիտեմ: Ասում են, թե նա սովորել է Թիֆլիսում, սակայն մասնավորապես որտեղ և ինչ՝ չգիտեմ: «Դաշնակցություն» կուսակցությանը Տեր-Հարությունովի պատկանելության և քաղաքական հայացքների մասին ես ոչինչ չեմ լսել և չգիտեմ: Մեսրոպ Շահնազարովի կողմից 100 ռուբլի պահանջով նամակի ստացման մասին ոչինչ չեմ լսել, բայց գյուղում խոսում էին, որ Շահնազարովից 100 ռուբլի պահանջում էին ինչ-որ թրքահպատակ հայեր: «Դաշնակցություն» կուսակցության գործունեության, Տեր-Հարությունովի կամ «Դաշնակցություն» կուսակցության կողմից որևիցե ահաբեկչական գործողությունների կատարման մասին ինձ ոչինչ հայտնի չէ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1640:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 6
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ձննումի և թարգմանության

1910թ. ապրիլի 5: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով դատական քննիչը Նովոչերկասկի դատական պալատի Դատախազի Տեղակալ Վ. Ս. Ակսակովի և երդվյալ թարգմանիչ Ս. Ա. Նադիրաձեի միջոցով ներքոստորագրյալ ընթերակաների ներկայությամբ իրականացրեց Երևանի օկրուգային դատարանի Նախիջևանի տեղամասի Դատախազի Տեղակալի կողմից 1910թ. մարտի 30-ին ուղարկված հայերեն նամակի զննումը և թարգմանությունը, ընդ որում՝ պարզվեց.

Փոստային թղթի 3 կիսաէջերի վրա գրված և «Բուլղարիա: Կայարան Սոֆիա, փողոց Ցար Բորիս, թիվ 57, տիկին Սուքիասյանին կամ Ստեփանյանին օրիորդ Եփեմիայի համար» հասցեով, ծրարի մեջ դրված, հետևյալ բովանդակությամբ:

«Թանկագին քույր Եփեմիա.

Այո՛, մեր աշխարհն այդպիսին է ……[75]

Ցանկանում ես սուրալ, թռնել ավելի բարձր ու բարձր, հեռու …… դեպի արևը, սակայն այդ անխիղճը քեզ վրա դնում է ծանր կնիք, կվերածի ստրուկի – կստիպի սողալ ……

Ա՜հ, այդ անաստված և անխիղճ աշխարհը ……

Ա՜հ, ես կցանկանայի, որպեսզի որևէ մեկը ինձ ասեր ……, բայց մի մոռացիր, որ այս աշխարհը երբևիցե կմահանա: Ա՜հ, եթե ես ունենայի ատլետիկ ձեռքեր, որպեսզի կարողանայի ինքս փակել և բացել արևի դեմքը, ես կխլեի արևից լույսն ու ջերմությունը, որպեսզի այդ «աշխարհը» մահանա խավարի ու ցրտի մեջ:

Թանկագին քույր, իմ հրեշտակ:

Կցանկանայի և քեզ մոռանալ, ինչպես մոռացա այս ատելի աշխարհը, կցանկանայի մնալ բացարձակապես միայնակ, սակայն չեմ կարող:

Ինչքան ես ատում եմ այս աշխարհը, այնքան սիրում եմ քեզ ……

Քեզ ավելի շատ եմ սիրում, քան արծիվը՝ բարձր լեռները:

Հոգյակս, երբ ես կմահանամ, դու սուգ հագիր, արի ինձ մոտ, գտիր իմ գերեզմանը, լացիր իմ գերեզմանի վրա: Երբ ես կմահանամ՝ դու էլ երկար մի մնա այս մռայլ աշխարհում ……

Համբուրում եմ քեզ, քո եղբայր Նժդեհ»:

75 Այս և հետագա բոլոր բազմակետերը փաստաթղթինն են:

II

«Թանկագին մայրիկ,

Միթե դուք մոռացել եք ձեր որդի Նժդեհին: Ինչու՞ նամակներ չեք գրում, չէ՞ որ ինձ սփոփում են միայն ձեր նամակները:

Թանկագին մայրիկ, ես ձեզ շատ նեղություն եմ պատճառում, սակայն պետք է ուրախությամբ կրեք այդ նեղությունները ձեր որդի Նժդեհի համար:

Թող Եփեմիան դիմի բուլղարական թագուհի էլեոնորային, որպեսզի նա խնդրի ռուսական թագուհուն բանտից իմ ազատման համար: Պ-րն Սուքիասը[76] կարող է դա կազմակերպել, քանի որ նա ծանոթ է ռազմական նախարարի և բարձրաստիճան շատ անձանց հետ: Եթե դուք դիմեք, ապա անպայման բավարար պատասխան կստանաք: Հավանաբար, դուք արդեն գիտեք, որ ինձ մեղադրում են հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությանը պատկանելու համար, չնայած այն բանին, որ ես այդ կուսակցությունից այնքան հեռու էի կանգնած[77], որքան երկինքը՝ երկրից:

Ձերբակալվել են շուրջ 800 հոգի, բայց 600 հոգի ազատվել են, իսկ մնացյալին պետք է դատեն: Թերթերի տեղեկությունների համաձայն՝ մեր գործը դատարան պետք է փոխանցվի մայիս ամսին:

Դրությունը կրիտիկական է, առողջությունս քայքայվում է, ահա արդեն 1,5 տարի է, ես ձերբակալված եմ:

Ա՜հ, ճշմարիտ է, ճշմարիտ:

Խոնարհվում եմ բոլորին:

Ձեր որդի Նժդեհ:

Իմ հասցեն՝

Ռուսաստան, Կովկաս, քաղաք Նախիջևան, Երևանի նահանգ: Բանտում քաղաքական բանտարկյալ Գարեգին Տեր-Հարությունյանցին:

1910թ. մարտի 27»:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 2278:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 7
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910թ. հոկտեմբերի 22: Քաղաք Նովոչերկասկ: Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների հիման վրա հարցաքննեց որպես մեղադրյալ ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

ԳարեգինՏեր-ԵղիշեիՏեր-Հարությունով, լրացուցիչ ցուցմունք եմ տալիս:

Ձեր կողմից ներկայացված 1908թ. սեպտեմբերի հայերեն նամակը «Նժդեհ» ստորագրությամբ Կզնուքի պետի[78] անունով. «Սույնով Կզնուքի հայ բնակչության կողմից լիազորները և ընտրյալները հայտարարում են Ձեզ, որ. Ա. Այսօր եկեղեցու շրջակա հրապարակում տեղի կունենա հասարակական ժողով, Բ. Նշյալ մարմինները պարտավորեցնում են ձեզ ներկա լինել հասարակական ժողովին: Տեղական մարմինների փոխարեն՝ «Նժդեհ»: Գրված է իմ կողմից և փոխանցված է Կզնուք գյուղի ներկայացուցչին, ում անունը և ազգանունը չեմ հիշում[79], Կզնուքի տանուտերի օգնականին հանձնելու համար: Ձեր ներկայացրած երկու նամակները և գրությունը.

1. 1908թ. հունիսի «Լևոնի անունով» «Նժդեհ» ստորագրությամբ [հայերեն նամակը]. «Կրկնում եմ այն խոսքերը, որոնք կային 20 օր առաջ ուղարկած իմ նամակի տողերում: Ես մեկն եմ հեղափոխականներից և այժմ գործում եմ հեղափոխական ասպարեզում: Ես կապված եմ հանձնարարված մեծ գործերի, դրա համար էլ իմ ասպարեզը կարճ ժամանակով ես չեմ կարող թողնել, չեմ կարող առանձնանալ որպես գործիչ - դա աքսիոմա է .....[80] ուղարկում եմ իմ լուսանկարչական քարտը, որն ուղարկված է Սոֆիայից քրոջիցս: Կնգտեմ ուսուցիչ լինել Թազագյուղում[81]:

2. Առանց ամսաթվի նշման «Նժդեհ» ստորագրությամբ «մոր և եղբոր» անունով և նշումով [հայերեն նամակը], ըստ որի նամակի հեղինակը Սոֆիայում «Դաշնակցության» հաշվին սովորում է սպայական դպրոցում,

3. Մեսրոպովի[82] անունով գրություն «100 ռուբլու պահանջով և սպառնալիքով, եթե նամակի հեղինակը մինչև հաջորդ օրը չստանա, ապա կգա և կստանա 150 ռուբլի» – իմ կողմից չեն գրված, ումից են դրանք խլվել – ինձ անհայտ է:

Վերոհիշյալ գրությունը 100 ռուբլու պահանջի մասին Մեսրոպին գրված է 1905թ. հայ- թաթարական անկարգությունների ժամանակ «Սայդո» անունով թուրքական հայ զինվորի[83] կողմից, իսկ այդ հայի ազգանունը ես չգիտեմ: Որտեղ է ապրում այդ հայը – ես նույնպես չգիտեմ: Մատնանշված երկու նամակները գտնվել են Կզնուքում, դատարկ տանը, որտեղ 4 կամ 5 տարի շարունակ ոչ մեկը չի ապրել: Այդ նամակները խեղաթյուր-

76 Եփեմիայի հայրը՝ Սուքիաս Սուքիասյան:
77 Այս մասը գրված է անցյալ ժամանակով:
78 Տանուտերի օգնական Շահնազարով:
79 Այստեղ Նժդեհն ակնհայտորեն քողարկում է իր գաղափարակցի անունը:
80 Փաստաթղթում այսպես է:
81 Ռուսերեն գրված է в Тазюках.
82 Սա նույն Շահնազարովն է:
83 Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:

ված են, այսինքն՝ կեղծված են Կզնութ գյուղի տանուտերի օգնական Մեսրոպ Բաբաևի[84] կողմից: Այդ նամակներում ես իմ ձեռագրի հետ ոչ մի նմանություն չեմ գտնում: Այդ նամակները կազմվել և գաղտնաբար գցվել են նշյալ Մեսրոպ Բաբաևի կողմից: Մեսրոպ Բաբաևն իմ երդվյալ թշնամին է, իմ հայր Տեր-Եղիշեն թունավորվել է Բաբաևի զարմիկ Թադևոս Շահնազարյանի կողմից, ինչի առթիվ կարծեմ նույնիսկ գործ է վարվել: Կզնութցիների խնդրանքով իմ կողմից կազմվել է խնդրագիր որպես կաշառակերի [պաշտոնից] Մեսրոպ Բաբաևի ազատման մասին: Նա ազատվեց: Դրանից զատ ես նրան անձնապես վիրավորեցի: Այն ժամանակ, երբ գրվել է Մեսրոպ Բաբաևի անունով գրությունը, վերջինս արդեն Կզնութ գյուղի տանուտերի օգնական չէր, և ես այդ գրությունը նրան որպես մասնավոր անձի եմ գրել: Նշյալ ժողովում այդ գրության մեջ ծխական դպրոցի բացման համար հաշտարար վճռագիր է գրվել: Այդ գրության մեջ նշյալ մարմինները կզնութցիների կողմից ընտրված և լիազորված հոգաբարձուներն են: Ես սխալմամբ Բաբաևի զարմիկին անվանեցի Թադևոս, նրա անունը Ստեփան է:

Կարդացված է:

Հավելեմ. խնդրում եմ որպես վկա հարցաքննել Կզնութի հոգևորական Տեր-Թադևոս Տեր-Մաթևոսովին, Կզնութ գյուղում ապրող Ղուկաս Բաբաևին, նույն գյուղի տանուտերի օգնական Անդրեասին[85], որի ազգանունը չեմ հիշում, ի հաստատումն այն բանի, որ Բաբաևի և մեր ընտանիքի միջև գոյություն ունի դարավոր թշնամանք, որ 100 ռուբլի պահանջով գրությունը Մեսրոպ Բաբաևին գրված է հայ-թաթարական անկարգությունների ժամանակ վերոնավանյալ զինվոր Սայդոյի[86] կողմից:

Կարդացված է:

Գարեգին Տեր-Հարությունով
Երդվյալ թարգմանիչ Նադիրաձե
Դատական Քննիչ Լիժին,
Դատական պալատի Դատախազի
Տեղակալ Սերգեև

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4178-4179:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 8
ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1910թ. դեկտեմբերի 1: Քաղաք Նախիջևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների համաձայն հարցաքննեց ներքոանվանյալներին և նրանք ցուցմունք տվեցին.

Հոգևորական Տեր-Թադևոս Տեր-Մատթևոսի Տեր-Հովհաննիսյանց[87], Կզնութ գյուղի բնակիչ, հայ-գրիգորյան, չեմ դատվել, Մեսրոպ Բաբաևն իմ զարմիկն է[88], իսկ մյուսները՝ օտար:

Մեսրոպ Բաբաևի և հոգևորական Տեր-Եղիշե Տեր-Հարությունովի ընտանիքների միջև հնուց գոյություն ունի թշնամանք, և նրանք պատկանում են իրար թշնամի երկու կուսակցությունների: Ինչն է նման թշնամանքի պատճառ ծառայել՝ չգիտեմ, քանի որ թշնամանքի սկիզբն առնչվում է դեռ այն ժամանակին, երբ Բաբաևի և Տեր-Հարությունովի նախնիները ապրում էին Պարսկաստանում89: Մեսրոպ Բաբաևի կողմից սկզբում 100 ռուբլի, իսկ հետո 150 ռուբլի պահանջով նամակի ստացման մասին ինձ ոչինչ հայտնի չէ: Գարեգին Տեր-Հարությունովի մոտ արդյո՞ք գտնվել է ինչ-որ գրություն դրամի պահանջով, թե ոչ՝ չգիտեմ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

Հոգևորական Տ. Թ. Հովհաննիսյանց
Քննիչ Սիդավա
Դատախազի Տեղակալ (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4350:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ղուկաս Բաբայի Բեկնազարյանց, Կզնութ գյուղի բնակիչ, 32 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

Մեսրոպ Բաբաևին և հոգևորական Եղիշե Տեր-Հարությունովի ընտանիքին ես լավ եմ ճանաչում: Ինչքան հիշում եմ՝ ես մշտապես Բաբաևների և Տեր-Հարությունովների թշնամանքի վկան եմ եղել, որոնք պատկանում են իրար միջև թշնամություն անող երկու կուսակցությունների: Ի՞նչն է առիթ ծառայել նման թշնամանքի՝ չգիտեմ, բայց ասում են, որ նրանց նախնիները թշնամություն են արել դեռևս

84 Նկատի ունի Շահնազարովին:
85 Անդրեաս Հովհաննեսի Ներսիսյան - Նժդեհի երրորդ ճյուղի եղբայր (պապի եղբոր թոռ՞):
86 Սեյդո Պողոս (1874-1907) – ֆիդայի, ծնունդով Մշո Ալվարինջ գյուղից: Հայ-թաթարական կռիվների շրջանում ղեկավարել է Նախիջևանի Խանըխլար շրջանի ինքնապաշտպանությունը:
87 Սա Բուլղարիայում Նժդեհի հետ ուսանած, ապա դավադիր դեր խաղացած Ռաշիդի (տե՛ս ծան. թ. 8) հայրն է:
88 Քրոջ որդին:
89 Նժդեհի տոհմը (Գուլոյենք) 1829-1830թթ. գաղթել է Պարսկահայքի Սալմաստ գավառի Ղզըլջա (Կիզիլճա) գյուղից:

Պարսկաստանում՝ մինչև Ռուսաստան նրանց վերաբնակեցումը: Մեսրոպ Բաբաևի անունով 150 ռուբլի պահանջով գրության առնչությամբ ինձ ոչինչ հայտնի չէ, բայց այդպիսին գրված է Գարեգին Տեր-Հարությունովի կողմից հետևյալ պարագաներում: 1908թ. Կզնութ գյուղի տանուտերի օգնական Մեսրոպ Բաբաևը գյուղացիներից հավաքել է 200 ռուբլի միրաբից[90] ոռոգման ջուր գնելու համար, բայց հետագայում պարզվեց, որ ջուր գնելու անհրաժեշտություն չկա: Այդ ժամանակ ես, Ստեփան Ազիզովը և Նիկոլայ Բաբաևը ոռոգման ջրանցքի անցկացման համար լիազորներ ընտրվեցինք: Քանի որ նոր ջրանցքի [կառուցման] աշխատանքներ սկսելու համար անհրաժեշտ էր ունենալ որոշակի գումար, մենք որոշեցինք Մեսրոպ Բաբաևից նախկինում նրա հավաքած գումարից վերցնել 150 ռուբլի: Քանի որ Մեսրոպ Բաբաևն այն ժամանակ գտնվում էր գյուղ Չենգմաբասարում, դրա համար մենք խնդրեցինք Գարեգինին գրել նրան նամակ մեզ՝ լիազորներիս 150 ռուբլի հանձնելու մասին, ինչը և Գարեգինը կատարեց: Նամակը գրվեց Գարեգինի կողմից, քանի որ լիազորները թերի գրագետ էին: Թե ինչպիսի գրություն է գտնվել Գարեգին Տեր-Հարությունովի իրերում՝ չգիտեմ: Լիազորները Մեսրոպ Բաբաևից գումար չեն ստացել, քանի որ նա մեր գրությամբ չժամանեց Կզնութ և գումար չտվեց:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4350:
Թարգմանություն ռուսերենից:

Մեսրոպ Բաբայի Շահնազարյան, Կզնութ գյուղի բնակիչ, 50 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, հոգևորական Տեր-Թադևոսն իմ քեռին է, գրագետ:

Սույն գործի առնչությամբ ներկա տարվա սկզբին ես արդեն ձեզ ցուցմունք եմ տվել: Իմ և Տեր-Եղիշե Տեր-Հարությունովի ընտանիքների միջև սկզբում ոչ մի թշնամանք չի եղել, իսկ մեր նախնիները երբեք թշնամություն չեն արել: Թշնամանքը սկսվել է Գարեգին Տեր-Հարությունովից սկզբում 100, ապա 150 ռուբլի պահանջով երկու գրությունների իմ կողմից ստանալուց հետո[91]: Այդ երկու գրություններն էլ փոխանցված են Գարեգին Տեր-Հարությունովից: Այդ գրությունները ես ներկայացրել եմ Նախիջևանի գավառապետին: Գարեգինի իրերի մեջ ինչպիսի գրություն է գտնվել՝ չգիտեմ: Գուցե՞ նա գրել է երրորդ գրությունը, բայց չի հասցրել ինձ ուղարկել: Հասարակության լիազորները չէին կարող ինձնից դրամ պահանջել, քանի որ այդպիսիք իմ մոտ չէին կարող լինել, ոռոգման ջրանցքի կառուցապատման համար գումարը տանուտերի և հարկահավաքների մոտ էր:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

(Ստորագրությունը ռուսերեն չէ)
Դատական Քննիչ Սիդավա
Դատախազի Տեղակալ (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4351:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Անդրեաս Հովհաննեսի Ներսեսյան, Կզնութ գյուղի տանուտերի օգնական, 48 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, Գարեգին Տեր-Հարությունովն իմ երրորդ ճյուղի եղբայրն է:

Մեսրոպ Բաբաևին և Տեր-Եղիշե Տեր-Հարությունովի ընտանիքին ես ճանաչում եմ: Նրանք վաղուց թշնամություն են անում իրար հետ և պատկանում են երկու իրար թշնամացող կուսակցությունների: Ինչն է այդ թշնամանքի պատճառ ծառայել՝ չգիտեմ, քանի որ նրանց նախնիները, ինչպես ասում են, թշնամություն են արել դեռ Պարսկաստանում՝ մինչև Ռուսաստան վերաբնակեցումը: Մեսրոպ Բաբաևի կողմից սկզբում 100, իսկ հետո 150 ռուբլի պահանջով նամակների ստացման մասին ինձ հայտնի չէ: Ինչպիսի գրություն է գտնվել Գարեգին Տեր-Հարությունովի իրերում՝ չգիտեմ:

Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Կարդացված է: Անգրագետ:

Դատական Քննիչ Սիդավա
Դատախազի Տեղակալ (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4351:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 9
ՈՐՈՇՈՒՄ

1911թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը քննության ենթարկելով իր կատարած նախաքննությունը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործով, ԳՏԱՎ.

Որ ներքոանվանյալ մեղադրյալներին սույն գործով՝ ներկայացված Քրեական Դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդվածների հիման վրա, նրանց նախաքննությամբ արված են հետևյալ հայտարարությունները.

XXXXXXXVII. Գարեգին Տեր-Եղիշեի Տեր-Հարությունով.

1. Գործին կցել Կզնութ գյուղում տան դատարկ սենյակում գավառապետ Սորոկինի [կատարած] խուզարկության արձանագրությունը, որտեղ գտնվել են 1906թ. կոչերը և այդ առթիվ հարցաքննել Սորոկինին,

2. Հարցաքննել Կզնութ գյուղի տանուտերին, Բաբաևի ազգական Կզնութի

90 Զրաբաշխ պաշտոնյա:
91 Շահնազարովը կրկին ակնհայտորեն խեղաթյուրում է իրականությունը:

հոգևորական Տեր-Թադևոս Տեր-Հովհաննեսովին – ի հաստատումն Բաբաևի գրագիտության, որը դրա պատճառով իբր չի կարողացել ոչ մեկի ընթերցման համար տալ իր ստացած նամակները,

3. Գործին կցել բանաստեղծություններով նրա տետրը, դպրոցի բացման առթիվ հաշտարար վճիռը, դպրոցի բացման առթիվ հաշտարար միջնորդական խնդրագիրը, անձնագիր ստանալու համար տանուտերի վկայականը և 175 կգնութցի հայերի վճռագիրը,

4. Ի հաստատումն այն փաստերի, որ իր դեմ ցուցմունք տվող Մեսրոպ Բաբաևը նրա երդվյալ թշնամին է, որ նրա հայր Տեր-Հարությունովը՝ հոգևորական Տեր-Եղիշեն, թունավորվել է Բաբաևի կուսակցության կողմից, որ 100 ռուբլի պահանջով նամակը Բաբաևը ստացել է թուրքահպատակից և 1905թ. մինչև 1908թ. Գարեգին Տեր-Հարությունովը Ռուսաստանում չի եղել – հարցաքննել Քրիստափոր Մովսեսովին, Աբրահամ Ամիրխանովին, Իվան Մովսեսովին և ուրիշների,

5. Փոփոխել պատժամիջոցը և տրամադրել դատական վարույթի պատճենները:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թթ. 4409-4410: Թարգմանություն ռուսերենից:

* * *

CXXXXXIV. Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունով.

(խնդրագրում լրացուցիչ հայտարարություն)

1.. Ընդունում է, որ երկու նամակները, որոնցում մատնանշվում է այն մասին, որ նա սովորում է «Դաշնակցություն» կուսակցության հաշվին – գրված են իր կողմից,

2. Խնդրում է պատժամիջոցը փոխել ոստիկանության հատուկ հսկողությամբ:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 4438: Թարգմանություն ռուսերենից:

* * *

CCXIV. Գարեգին Տեր-Եղիշեի Տեր-Հարությունով.

(հեռագրով լրացուցիչ հայտարարություն)

Նվազեցնել գրավը մինչև 1000 ռուբլի:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 4444: Թարգմանություն ռուսերենից:

* * *

Մեղադրյալ Գարեգին Տեր-Եղիշեի Տեր-Հարությունովի միջնորդությունը.

Ա. Կգնութ գյուղում գտնված 1906թ. կոչերի խուզարկության արձանագրությունները գործին կցելու և այդ առթիվ գավառապետ Սորոկինի հարցաքննության մասին,

Բ. Վկա Մեսրոպ Բաբաևի գրագիտությունը հաստատող վկաների հարցաքննության մասին,

Գ. Գյուղական վճռագրի և Կգնութ գյուղում դպրոցի բացման առթիվ խնդրագրի գործին կցման մասին,

Դ. Տեր-Հարությունովի բանաստեղծությունների տետրերի և նրա կողմից անձնագրի ստացման մասին տանուտերի վկայականի գործին կցում,

Ե. Տեր-Հարությունովի գործունեության մասին 175 կգնութցի հայերի վճռագրի գործին կցումը,

Զ. Վկաներ Մովսեսովի, Ամիրխանյանի և այլոց հարցաքննությունների մասին՝ ի հաստատումն, որ մեղադրության վկա Մեսրոպ Բաբաևը Տեր-Հարությունովի երդվյալ թշնամին է, և որ Տեր-Հարությունովի հայրը թունավորվել է Բաբաևի կուսակցության մարդկանց կողմից, որ Գարեգին Տեր-Հարությունովը 1905թ.-ից մինչև 1908թ. Ռուսաստանում նույնիսկ չի եղել, դրա համար էլ 1905-1906թթ. ոմն թուրքահպատակից Մեսրոպ Բաբաևի ստացած 100 ռուբլու պահանջով նամակը Գարեգին Տեր-Հարությունովի հետ ոչ մի առնչություն չունի – ենթակա չէ բավարարման, քանզի.

Առաջին, խուզարկության արձանագրությունում վերոնվանյալ հաշտարար վճիռները գտնվում են գործում և կցված են դրան, բացի մեղադրյալ Գարեգին Տեր-Հարությունովի կողմից դրա համար պահանջած միջնորդությունից, իսկ վերջինիս բանաստեղծությունների տետրերի և անձնագրի ստացման մասին տանուտերի վկայականի գործին կցումը չի դիտարկվում՝ դրանցում գործի համար ինչ-որ կերպ անհրաժեշտ էական նշանակության բացակայությամբ,

Երկրորդ, բոլոր վկաները՝ այդ թվում և մեղադրյալ Գարեգին Տեր-Հարությունովի հղումով ներկա հայտարարության մեջ ցույց տրված, բացառությամբ վկա Սորոկինի, արդեն հարցաքննված են նույն հանգամանքով, և այդ վկաների կողմից այդ առթիվ արդեն տրված են որոշակի ցուցմունքներ, ինչ վերաբերում է վկա Սորոկինի հարցաքննությանը, ապա այդպիսինի բավարարման համար էական ոչ մի անհրաժեշտություն չկա, որ նույն հանգամանքով՝ ի հաստատումն որի մեղադրյալ Գարեգին Տեր-Հարությունովը խնդրում է հարցաքննել վկա Սորոկինին, հարցաքննված են ինչպես նշյալ խուզարկության ժամանակ ներկաների, այնպես և նշյալ վկա Սորոկինի կարգադրությամբ դա կատարողների առումով, խուզարկության ժամանակ բացակաների և դրա վկաների կողմից տրված են միանգամայն որոշակի և հանգամանալից բացատրություններ:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թթ. 4566-4567: Թարգմանություն ռուսերենից:

* * *

135. Գարեգին Տեր-Հարությունով – 1908թ. Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կգնութ գյուղում իր համագյուղացիներին կոչ է արել փակել պետական դպրոցը և կազմակերպությունից [ՀՅԴ] կախված, ընկերակցության [ՀՅԴ] շահերից բխող մասնա-

վոր դպրոց բացել, կատարել է հարկադիր դրամա հավաքներ ընկերակցության կարիքների համար և իր բնակարանում պահել է 1906թ. մայիսի 21-ից 26-ը «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության Մրգաստանի շրջանային ժողովի բանաձևեր» խորագրով տպագիր կոչը:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 249:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

92. Գարեգին Տեր-Եղիշեի Տեր-Հարությունով – հտ. 30, գործի թերթ 10843, հտ. 129, գործի թերթ 42403, Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Վերին Ազա[92]:

ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 6, թ. 257:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

[Դատական Քննիչի խոսքերը]

1908թ. օգոստոսի վերջին Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնութ գյուղ եկավ վերջին տարիներին ժամանակի մեծ մասը հարազատ գյուղից դուրս ապրած և այնտեղ միայն կարճ ժամանակով վերադարձած այդ գյուղի բնակիչ Գարեգին Տեր-Հարությունովը: Վերադառնալով Կզնութ՝ Գարեգինը սկսեց խառնվել գյուղական գործերին և գործել այնպես ազատ և ինքնուրույն, որ գյուղում լուր տարածվեց, թե Գարեգինը «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչ է հանդիսանում, ինչի պատճառով բոլորը սկսեցին նրան լսել և վախենալ: Գարեգինի գալուց շուրջ մեկ շաբաթ անց Կզնութ գյուղի տանուտերի օգնական Մեսրոպ Շահնազարովի մոտ գնաց այդ գյուղի բնակիչ Բագրատ Գևորգի Սահակյանցը և Շահնազարովին փոխանցեց հայերեն երկու գրություն՝ հաղորդելով, որ այդ գրությունները Գարեգինից է, ով պահանջում է նրան հավաքի [ներկայանալ]: Շահնազարովը պատասխանեց, որ հավաքի չի գնա, և ստացված գրությունները գրագետ անձի կարդալու տալով իմացավ, որ դրանցից մեկում իրեն առաջարկվում էր ներկայանալ հավաքի, իսկ մյուսում՝ հանձնել 100 ռուբլի: Հաջորդ օրն այդ գրությունները Շահնազարովը ներկայացրեց Նախիջևանի գավառապետին, ում կարգադրությամբ Գարեգին Տեր-Հարությունովը 1908թ. սեպտեմբերին ձերբակալվեց իր եղբայր Լևոն Տեր-Հարությունովի տանը: (Բնագրային դատական գործ, հատոր 59, թթ. 1637-1639)

Այդ գրությունների զննումից և թարգմանությունից հետո բացահայտվեց, որ դրանք հետևյալ բովանդակության են. «Նժդեհ» ստորագրությամբ 1908թ. սեպտեմբերի «Կզնութի տանուտերի օգնականի (մելիք)» անունով նամակն այն մասին, որ հայ հասարակության կողմից ընտրված և լիազորված Կզնութի տեղական մարմինները հայտարարում են եկեղեցու շրջակա հրապարակում ժողովի նշանակման մասին և պարտավորեցնում հասցեատիրոջը ներկա լինել դրան: (Բնագրային դատական գործ, հատոր 23, թ. 554, փաստաթուղթ 3)

Անստորագիր գրություն այսպիսի բովանդակությամբ. «Կզնութ, Մեսրոպին: Եթե վաղը չուղարկես այն 100 ռուբլին, ապա ես ինքս կգամ և քանի դեռ չեմ բռնագանձել 150 ռուբլի, հանգիստ չեմ թողնի ձեզ: Ես ձեզ կսպասեմ մինչև երեկո»: (Բնագրային դատական գործ, հատոր 23, թ. 554, փաստաթուղթ 4)

Ըստ Շահնազարովի ցուցմունքի՝ նա լսել է իր համագյուղացիներից, որ [գյուղական] հավաքում, որին իրեն կանչում էր Գարեգինը, վերջինս համոզել է փակել պետական դպրոցը և բացել մասնավորը, այդ առթիվ կազմվել է վճիռ, որը և գյուղի բնակիչները ստորագրել են՝ վախենալով Գարեգինից: Ըստ Շահնազարովի խոսքերի՝ նրա համագյուղացիներից և ոչ մեկը դատական իշխանության առջև չի հաստատի այդ հանգամանքը՝ երկյուղելով վրեժից, և որ ինքը իր տված ցուցմունքից հետո լավ գիտի, որ դրա համար կսպանվի: Համոզմունք հայտնելով, որ Գարեգին Տեր-Հարությունովը պատկանում է «Դաշնակցություն» կուսակցությանը՝ վկան պարզաբանեց, որ եթե Գարեգինը չպատկաներ այդ կուսակցությանը, նա չէր կարող այդպիսի խիզախությամբ խառնվել գյուղական գործերին: (Բնագրային դատական գործ, հատոր 59, թ. 1638)

Վերին Ազա գյուղում իր եղբոր տանը Գարեգինի ձերբակալման ժամանակ խուզարկություն կատարելու նպատակով ոստիկանական ուրյադնիկ Սագինովը առաջարկեց նրան ցույց տալ իր իրերը: Գարեգինը ցույց է տվել ճամպրուկը, որի մոտ պատուհանի գոգին դրված էին նամակներ ու տետրեր, որոնք Գարեգինը նույնպես ճանաչել է [որպես] իրեն պատկանող իրեր:

Այդ փաստաթղթերի զննման և հայերենից թարգմանության ժամանակ պարզվել է, որ այդպիսիք ունեն հետևյալ բովանդակությունը.

1. «Գարեգին» ստորագրությամբ մոր և Լևոն եղբոր անունով «Սոֆիա, 1906թ. հոկտեմբերի 15» թվագրումով նամակում Գարեգինը հաղորդում է, որ ինքը գտնվում է ք. Սոֆիայում, որտեղ սովորում է «Դաշնակցության» հաշվին, ում ստորագրություն է տվել, որ ինքը հինգ տարվա ընթացքում ամուսնանալու իրավունք չունի: (Բնագրային դատական գործ, հատոր 23, թ. 553-555)

2. «Նժդեհ» ստորագրությամբ Լևոնի անունով 1908թ. հուլիսի նամակը: Նամակի հեղինակը հաղորդում է, որ ինքը աշխատում

92 Սրանք դատական գործի բնագրային տվյալներն են:

է հեղափոխական ասպարեզում և շատ է կապված իր վրա դրված գործերով, որոնք չի կարող թողնել: «Մի՞թե մայրիկը ցանկանում է,- շարունակում է նամակի հեղինակը,- որպեսզի ես թողնեմ հեղափոխական գործը և վերադառնամ, դառնամ բոլոր ընկերների, ողջ կազմակերպության առաջ ատելի, նողկալի ...»: Նամակն ավարտվում է ք.Սոֆիայից քրոջն ուղարկած Գարեգինի լուսանկարը՝ մորը և եղբորը փոխանցելու մասին հեղինակի ծանուցումով, և Լևոնին հարցով՝ թե ինչո՞ւ վերջինս հեղինակի նամակը ընթերցման համար չի հանձնել Կզնութի երիտասարդությանը:

3. 1906թ. մայիսի 21-ից 27-ը տեղի ունեցած «Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Մրգաստանի (այսինքն՝ Երևանի) շրջանային ժողովի բանաձևեր» խորագրով տպագիր կոչը: «Քարոզչության» մասին բաժնում կոչը ծանուցում է, որ Կենտրոնական կոմիտեն իր շրջանում քաջատեղյակ մարդկանցից հիմնում է քարոզչության համար մարմին, որի վրա պարտականություն է դրվում այդպիսի գործի բանավոր և գրավոր վարումը «Դաշնակցության» հիմնական ծրագրի և Կովկասյան գործունեության նախագծի ժողովրդականացման նպատակներով՝ անընդհատ ընդգծելով, որ «Դաշնակցությունը» հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական իրավունքների պաշտպանն է, և որ հայ աշխատավոր դասակարգի շահերը պահանջում են հայ ազգի քաղաքական իրավունքների երաշխիքներ: Կոչի վերջում շարադրված է, որ ժողովի բանաձևերով պետք է ղեկավարվեն Մրգաստանի շրջանի բոլոր դաշնակցական մարմինները:

4. Երեք հաշտարար վճիռներ, երկուսը հայերենով. 1. ծխական դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու մասին (Զուղա գյուղի բնակիչների), և 2. միադասյա ծխական ուսումնարանի բացման մասին (Կզնութ գյուղի բնակիչների 1908թ. հուլիսի 25), և մեկը ռուսերենով Կզնութ գյուղի բնակիչների հայերեն ստորագրությամբ 1908թ. օգոստոսի 30-ից միադասյա ծխական ուսումնարանի բացման մասին: (Բնագրային դատական գործ, հատոր 17, թթ. 6077, 6085, 6087, 6089)

Որպես մեղադրյալ հարցաքննված Գարեգին Տեր-Հարությունովն իրեն մեղավոր չճանաչելով հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությանը պատկանելու մեջ՝ պարզաբանեց, որ 1904թ. Երևանի գիմնազիան ավարտելուց հետո նա Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում անկարգությունների արդյունքում կրթությունը շարունակելու համար մեկնեց արտասահման, ընդ որում՝ Վիեննայում ծանոթացել է հարուստ դաշնակցական, Սոֆիայի բնակիչ Սուքիասյանի հետ, ով առաջարկել է իրեն իր հաշվին ընդունվել Սոֆիայի համալսարան: Ընդունելով այդ առաջարկը՝ նա երկու տարի սովորել է այդ համալսարանում, իսկ 1907թ. համալսարանի փակման արդյունքում տեղափոխվել է Սոֆիայի զինվորական ուսումնարանին կից սպայական դասընթացներ, ուր սովորել է 11 ամիս, մինչև համալսարանում պարապմունքների վերսկսվելը: Ստորագրություններ այն մասին, որ ինքը պարտավոր է չամուսնանալ և իրեն նվիրել հեղափոխական գործի՝ ինքը ոչ մեկի չի տվել: Սոֆիայից մորը և եղբորը նամակներ գրել է, բայց ո՛չ այն բովանդակության, ինչպես իրեն ներկայացված երկու նամակներն են, որոնք, նրա կարծիքով, խեղաթյուրված են իր հետ հին թշնամանքի մեջ գտնվող վկա Շահնազարովի կողմից և գաղտնաբար գցվել են խուզարկության ժամանակ:

«Մելիքի»[93] անունով «Նժդեհ» ստորագրությամբ նամակը գրված է մեղադրյալի կողմից և հանձնված է Կզնութի բնակիչներից մեկին՝ տանուտերի օգնականին փոխանցելու համար: Ուղարկելով այդ նամակը՝ ինքը գործել է որպես հասարակության ընտրյալ: 100 ռուբլի հանձնելու մասին Մեսրոպի անունով գրությունը գրված է 1905թ. հայ-թաթարական անկարգությունների ժամանակ այժմ բնակության տեղն անհայտ «Սայդո» անունով թուրքական զինվորի[94] կողմից: Որ նրա՝ Գարեգինի, մեղադրանքը ստեղծված է բացարձակապես Մեսրոպ Շահնազարովի զրպարտությամբ և որի կաշառակերության վերաբերյալ նա գյուղացիների խնդրանքով կազմել է խնդրագիր ղեկավարությանը՝ պաշտոնից վերջինիս հեռացման մասին: (Բնագրային դատական գործ, հատոր 30, թթ. 600, 601, հտ. 129, թթ. 4178-4179)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 214-216:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 12

ՎՃԻՌ
1912թ. հունվարի 11-մարտի 20

[Կառավարող Սենատը] Հատուկ Ներկայացուցչությունը անմեղ է ճանաչում՝ «Դաշնակցություն» ապօրինի ընկերակցությանը մասնակցության մեջ նրանց վերագրվող գործողությունների անապացուցելիության պատճառով, 144 հոգի ..... (N. 127, հոգևորականի որդի Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունով):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 289:
Թարգմանություն ռուսերենից:

93 Նկատի ունի գյուղի տանուտերի օգնական Շահնազարովին:
94 Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում նորից գրված է ռուսերեն՝ зинвор:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Գարեգին Խաժակի դատական գործը*

1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխությունից հետո ՀՅ Դաշնակցության դեմ սկիզբ առած հալածանքների պայմաններում երկու անգամ ձերբակալվել և ընդհանուր առմամբ՝ մեկ ու կես տարի ցարական բանտերում է անցկացրել 1915-ի **Հայոց Մեծ Եղեռնի** զոհերից մեկը՝ ՀՅԴ նշանավոր գործիչ Գարեգին Խաժակը:

Լինելով ՀՅԴ Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի անդամ՝ Գարեգին Խաժակը ՀՅ Դաշնակցության Մեծ դատավարության ընթացքում մեղադրվել է հակակառավարական գրքույկներ, կոչ-թռուցիկներ կազմելու և քարոզչական նպատակներով դասախոսություններ կարդալու համար: Հետաքննության և բուն դատական գործընթացի ժամանակ նա մերժել է իրեն ուղղված բոլոր մեղադրանքները և ցարական բանտից ազատվելուց հետո՝ 1912թ. ամռանը, Ավ. Ահարոնյանի և Ավ. Իսահակյանի հետ մեկնել է Կ. Պոլիս, իսկ 1913թ. ստանձնել Սամաթիայի ազգային վարժարանի տնօրենի պաշտոնը: Եվ ահա այդ ամենից ընդամենը երկու տարի անց՝ 1915թ., ցարական բանտերում տառապած անվանի մտավորականն ու դաշնակցական գործիչը դարձել է թուրքական բանտերի, աքսորի և եղեռնագործության զոհը:

Հասարակական-քաղաքական անվանի գործիչ, ՀՅԴ հայտնի տեսաբան ու եռանդուն քարոզիչ Գարեգին Կարապետի Խաժակը (Խաժակյան-Չագալյան) ծնվել է 1867թ. օգոստոսի 6-ին Ալեքսանդրապոլում (Գյումրի): Նրա ընտանիքը քաղաքում կոչվել է «Չախալ օղլի», այսինքն՝ Չախալյան կամ Չագալյան, որը հետագայում վերանվանվել է Խաժակի կամ Խաժակյանի: Ալեքսանդրապոլում իր նախնական կրթությունը ստանալուց հետո պատանի Գարեգինը 1883-1886թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, 1886-1893թթ.՝ յոթ տարի շարունակ, ուսուցիչ է աշխատել Բաքվի, Գանձակի և Վերին Ագուլիսի ծխական դպրոցներում: Նա ՀՅԴ Հիմնադիր ժողովների նախօրեին 1889-1890թթ. դպրոցական տարեշրջանի համար Քրիստափոր Միքայելյանի հորդորով Վերին Ագուլիսում մանկավարժական գործունեության անցած երիտասարդ ուսուցիչներից մեկն էր:

1893-1896թթ. Ժնևի համալսարանի փիլիսոփայության բաժնում սովորելու ընթացքում, ինչպես նաև այն ավարտելուց հետո, Գարեգին Խաժակը որպես

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.03.2010:

դաշնակցական գործիչ եղել է Եգիպտոսում ու Բուլղարիայում, իսկ հետագայում՝ նաև Իզմիրում ու Կ. Պոլսում: Հասարակագիտական առարկաների ոլորտում տիրապետելով խոր ու բազմակողմանի գիտելիքների, նա օժտված էր նաև քաղաքական հակառակորդների հետ բանավիճելու սրամտությամբ ու լեզվական բացառիկ ունակություններով: Գյումրեցուն բնորոշ՝ այդ հայտնի առավելությունն ունեցող Գ. Խաժակը սովորաբար բանախոսում էր ոչ շատ գրական, բայց ժողովրդին մատչելի լեզվով՝ իր խոսքը համեմելով սրամտություններով և առածներով: Տարբեր ժողովներում, հանրահավաքներում և լրագրային հոդվածներում անխնա էր հակառակորդների հանդեպ՝ ձգտելով երբեք տեղի չտալ: Գ. Խաժակի այս անժխտելի ունակությունները բարձր է գնահատել հատկապես ՀՅԴ հիմնադիրներից՝ Ռոստոմը: Այսպես, երբ Եգիպտոսում հայտնված մի քանի աղմկարար ու լեզվանի հնչակյան գործիչներ սկսում են նեղել տեղի դաշնակցականներին, Ժնևում գտնվող Ռոստոմը Գարեգին Խաժակին հանձնարարում է. «Իսկը քո տեղն է, Խաժակ... Գնա՛ մի լաւ դաս տուր այդ անպիտաններին»[1]:

1895թ. Բաբա-Գասպար կեղծանունով գործուղվելով Բուլղարիա (Ռուշչուկ, Վառնա, Յամբոլ), Գ. Խաժակը իր մեծ եռանդի, բուռն խառնվածքի և քաղաքական բանակռվի ասպարեզում դրսևորած ունակությունների շնորհիվ կարողացավ ամուր հիմքերի վրա դնել ՀՅԴ տեղական կառույցների գործունեությունը և տարածել «Դրոշակը»:

Նույն նպատակով 1897թ. գործուղվելով Իզմիր՝ նա բանակռիվ է վարել Մատթեոս Մամուրյանի հետ՝ վերջինիս զարմացնելով իր փիլիսոփայական խորը գիտելիքներով: Հետագայում Միքայել Վարանդյանն այս կապակցությամբ գրում էր, որ բազմափորձ Մամուրյանը «...անզոր էր իրեն անծանօթ Դաշնակցութեան գիտուն առաքեալին հանդէպ...»[2]:

Այնուհետև, շուրջ երկու տարի, Գ. Խաժակը եղել է Շուշիի թեմական դպրոցի վարիչը, իսկ 1903թ. տեղափոխվելով Թիֆլիս՝ անդամակցել է «Մշակ»-ի խմբագրակազմին, վարել ներքին լուրերի բաժինը և սրբագրությունը: Միաժամանակ՝ 1904-ից եղել է նաև Ներսիսյան դպրոցի պատմության, ֆրանսերենի և քաղաքատնտեսության ուսուցիչը:

1906թ. Գ. Խաժակը Ավ. Ահարոնյանի և Ե. Թոփչյանի հետ Թիֆլիսում հիմնել է «Յառաջ» և «Ալիք» թերթերը, դարձել է «Յառաջ»-ի գրադարանի վարչության անդամ:

Բավականին բեղուն է եղել Գ. Խաժակի գրիչը. առաջին հոդվածը նա հրատարակել է 1887թ. մայիսին «Մշակ»-ում՝ «Գավառացի երիտասարդություն» վերնագրով: Ապա աշխատակցել է «Մուրճ»-ին և «Տարազ»-ին: Գ. Խաժակը պարբերական մամուլում հանդես է եկել մի շարք կեղծանուններով. Արծիվյան, Արմեն Գասպար, Բաբա Գասպար, Գասպար, Էմին, Խ. Սլաք: Նա աշխատակցել է հայկական բազմաթիվ պարբերականների՝ «Ազատամարտ», «Առաջամարտ» (Կ. Պոլիս), «Հայրենիք» (Բոստոն), «Յառաջ», «Հորիզոն», «Վտակ», «Ալիք», «Մշակ», «Տարազ», «Գեղարվեստ», «Մուրճ» (Թիֆլիս), «Դրոշակ» (Ժնև), «Ռազմիկ» (Վառնա):

---

1 Ռոստոմի խորհուրդը Խաժակին, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 428:

2 Վարանդեան Մ., ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, հատ. առաջին, Պարիզ, 1932, էջ 448-449:

Գ. Խաժակի աշխատություններից ուշագրավ են հատկապես 1903-1904թթ. հրապարակված «Հարկերը Տաճկաստանում», «Հայրենիք և ազգային շարժումներ», «Հայկական շարժման պատճառները», 1905թ. «Ռուսական Զեմստվոն և Կովկասի պահանջները», 1907թ. «Դեպի ֆեդերացիա», 1912թ. «Ի՞նչ է ազգությունը», «Տառապանքի գիշերը», 1913թ. «Ի՞նչ է դասակարգ», «Հին Արևելք» գրքերը: Նա ռուսերենից թարգմանել է Վինոգրադովի երեք հատորանոց «Ընդհանուր ազգաց պատմություն» աշխատությունը, ականավոր գրողներ Ֆ. Դոստոևսկու, Ն. Օստրովսկու և այլոց երկերը:

Դասակարգերի վերաբերյալ իր աշխատության մեջ[3] Գ. Խաժակը, վերլուծելով մարդկության պատմությունը, առանձնացրել է հասարակության դասակարգային շերտավորումների հետևյալ հանգրվանները. սկզբնական համայնք, ստրկատիրություն, դասակարգեր Հին Հռոմում և Աթենքում, ճորտատիրություն, քաղաքներ և դրա արդյունքում՝ վարձու բանվորություն: Իր տեսակետները փորձելով հիմնավորել Ա. Սմիթի, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Կ. Կաուցկու աշխատություններով, նա մանրամասնորեն քննել է գյուղացիություն, բանվորություն, բուրժուազիա, մտավորականություն հասկացությունները, առանձնացրել է դրանց տարբերությունները, գնահատել դասակարգային կռվի նշանակությունը, ազգ-դասակարգ հարաբերակցությունը, ազգային հարցի լուծման դասակարգային ելևէջները: Նրա համոզմամբ՝ ցանկացած ազգի մեջ գոյություն ունեցող դասակարգերի շահերը համերաշխ են ազգային հարցերում, իսկ նյութական խնդիրներում դրանք հակամարտ են:

Ազգամիջյան հարաբերությունների կարգավորումը դիտարկելով դասակարգային հայեցակետից՝ Գ. Խաժակը գտնում էր, որ պետք է ստեղծել հասարակական, պետական և միջազգային այնպիսի կարգեր, որոնց մեջ այլևս հնարավոր չլինի ազգերի բռնի ձուլումը, ազգային հալածանքը, նույնիսկ՝ ազգերի միջև պատերազմը:

Առանձնակի վերաբերմունք ցուցաբերելով ազգային հարցի նկատմամբ՝ Գ. Խաժակը այս թեմային[4] նվիրել է առանձին ուսումնասիրություն: Նա ազգության նշաններից է համարում ընդհանուր սովորույթները, ավանդույթները: Գ. Խաժակի կարծիքով՝ ազգությունը սկիզբ է առել և զարգացել շնորհիվ աշխարհագրական, երկրաբանական ու այլ բնական պայմանների և պատմական միջավայրի: Ուստի նա կարող է որոշ պայմանների կուտակման շնորհիվ կորցնել ուրույն գոյության գիտակցությունը: Նա հանգամանալից ներկայացրել և խստորեն քննադատել է հատկապես Կ. Մարքսի տեսակետները ազգային հարցում:

Մանկավարժության բնագավառում ևս Գ. Խաժակը նկատելի ավանդ ունի: Մասնավորապես, 1913-ին Կ.Պոլսում նա հրատարակել է Հին Արևելքի պատմության վերաբերյալ պատկերազարդ դասագիրք[5]: Թեպետ մոռացության մատնված և պատմագիտական տեսանկյունից հնացած, այդուհանդերձ, այս դասագիրքը հայերեն լեզվով հրապարակված եզակի աշխատանքներից է: Իր մանկավարժական արժանիքներով հանդերձ՝ այն գրված է ժամանակի իշխող եվրոպական պատմագիտության ազդեցությամբ:

3 Տես՝ Գ. Խաժակ, Ի՞նչ է դասակարգը, Կ. Պոլիս, 1912:
4 Տես՝ Գ. Խաժակ, Ի՞նչ է ազգութիւնը: Գիտական հետազոտութիւն, Կ. Պոլիս, 1912:
5 Տես՝ Գ. Խաժակ, Ազգերու պատմութիւն. հտ. ա., Հին Արևելք, Կ. Պոլիս, 1913:

Կուսակցական և ապա գիտամանկավարժական բուռն գործունեություն ծավալած Գ. Խաժակը պոլսահայ մյուս մտավորականների հետ 1915-ին ձերբակալվում է և իր աքսորավայրում դառնում թուրքական հայակեր քաղաքականության զոհը:

Անհնար է առանց հուզմունքի և ցավի ընթերցել եղեռնաբախտ մտավորականի վերջին նամակները: 1915թ. մայիսին, ապա հուլիսի 4-ին Դիարբեքիրի աքսորավայրից կնոջն ուղղված նամակներում Գ. Խաժակը մասնավորապես գրում էր. «**Ինձ հետ են Այաշի բանտարկեալներից հետեւեալները. Ակնունի, Զարդար, Սարգիս Մանասեան, Տաղաւարեան, Ճիհանկիւլ: Չենք իմանում, թէ ինչի՞ մեզ տանում են, բայց մեծ յոյս ունիմ, որ նորից կտեսնենք միմեանց: Ահա շուտով կլրանա 48 տարիս, բայց 48 օր հանգիստ վայրկեաններ չեմ ունեցած. հայութեան անիծեալ ճակատագիրը միշտ հալածած է ինձ, կարծես նա կենտրոնացած է եղել ինձ եւ իմ ընկերների վրայ: Դառն, խիստ դառն է այսպէս ապրելը եւ մանաւանդ այսպէս մեռնելը: Ջղայնացած եմ, բայց ոչ հուսահատուած: Կախաղանի առջեւ, հաստատ համոզուած եղիր, երկու պատկեր պիտի լինի աչքիս առջեւ. նախ՝ հայ ազգի տառապանքը, երկրորդ՝ ձեր պատկերները: Երբ զաւակներս մեծնան՝ տուր նրանց կարդան այս տողերս եւ հետեւեն իրենց հոր շաւղին, նուիրուեն իրենց ազգի եւ տառապող ժողովրդի ցաւերուն: Թող զաւակներս երթան իմ ճամբայով, դառն, բայց ազնիվ ճամբայով**»[6]:

Հենց նույն 1915թ. հուլիսին Դիարբեքիրում թուրքական եղեռնագործության նահատակը դարձավ լիժինյան բանտերին դիմակայած Գարեգին Խաժակը:

ԱՎԱԳ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The lawsuit of Garegin Khajak

Avag A. Harutyunyan

6 Տես՝ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 96, թ. 1:

ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄ

1909 թվական, մարտի 13-ից ապրիլի 20: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր վարած նախաքննությունը հայ հեղափոխական կուսակցություն «Դաշնակցություն» հանցավոր ընկերակցության գործով, ԳՏԱՎ.

Բ. ԱՀԱԲԵԿԻՉ-ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

137. Խաժակյան Գարեգին (մականունը «Խաժակ») - [ՀՅԴ] Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտեի անդամ, հակակառավարական գրքույկների, կոչերի կազմման գործի վարիչ և կուսակցության անդամների ու կոմիտեների համար քարոզչության վարման եղանակների և հնարքների մասին դասախոսություններ կարդացող: 1905թ. նոյեմբերի 10-13-ին կայացած Ընդհանուր ժողովի[7] մատյանային որոշումներից երևում է, որ Խաժակյանն այդ ժողովին գործուն մասնակցություն է ունեցել՝ ապացուցելով, որ հայերին ռուսական կառավարությունից ինքնավարություն և ֆեդերացիա է հարկավոր պահանջել: 1907թ. հուլիսի 2-ի N. 7 հեռագրով՝ Ղարաքիլիսայից[8] Դիլիջան, կուսակցության անդամ Սերգեյ Եդիգարովը[9] խնդրել է Խաժակյանին իմանալ, թե երբ է [ՀՅԴ] Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտեի նախագահ Սերգեյ Մանասյանցը[10] կուսակցության անդամների հետ լինելու Ղարաքիլիսայում (բնագիր գործի թերթեր 2195 հակ., 2196, 2341, 2344, 2365, 2371 հակ., 5138, 5157 հակ.):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 340: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թվականի հոկտեմբերի 26: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների հիման վրա հարցաքննեց որպես մեղադրյալ ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

Գարեգին Կարապետով Խոժակյան[11], լրացուցիչ ցուցմունք եմ տալիս.

Ձեր կողմից, պ. Դատական Քննիչ, ներկայացված և իմ կողմից կարդացած,

7 Խոսքը Կովկասյան ռայոնական ժողովի մասին է:
8 Այժմ՝ Վանաձոր քաղաք ՀՀ Լոռու մարզում:
9 Սարգիս (Սերգեյ) Փաշոյի (Պողոսի) Եդիգարյան–կուսակցական գործիչ: Թիֆլիսի «Հերմես» տպարանում հրատարակել է ՀՅԴ գրականություն: Ձերբակալվել է լիժինյան գործով:
10 Մանասյան Սարգիս (՞-1920) –ՀՅԴ Արևելյան Բյուրոյի Զինական մարմնի անդամ: Լիժինյան գործով ձերբակալվել է Ռոստովի բանտում, ապա դատապարտվել տաժանակիր աքսորի մինչև 1916թ.: 1918թ. մայիսին մասնակցել է Ղարաքիլիսայի հերոսամարտին: 1920թ. որպես ՀՅԴ լիազոր մեկնել է Դիլիջան՝ բանակցելու բոլշևիկների հետ, սակայն ձերբակալվել է և ուղարկվել Բաքու, ապա աքսորվել Նարգեն կղզի, ուր գնդակահարվել է:
11 Այսուհետ «Խոժակյան» և «Խոժակ» գրելաձևերը դատական գործի բնագրային տարբերակ են:

1907թ. դեկտեմբերի 14-ին Բեռլինից «Արշակ»[12] ստորագրությամբ լրոզված թանաքով հայերեն նամակը, որպիսի նամակ Ձեր խոսքերով, պ. Դատական Քննիչ, բռնագրավված է բժիշկ Համազասպ Օհանջանյանից[13], և ըստ թարգմանիչների թարգմանության՝ նամակում ի միջիայլոց նշված է հետևյալը. «Անցյալ կամ նախանցյալ տարի հայ-թաթարական ընդհարումների մասին իմ կողմից հոդված է գրվել, և բեռլինյան ուսանողության առջև այն կարդալուց հետո ուղարկվել է «Դրոշակ»-ի խմբագրություն, որպեսզի իմանամ նրանց կարծիքը: Վերջինս [«Դրոշակ»] այդ հոդվածը ստուգման և կարծիք հայտնելու համար փոխանցել է Խոժակին: Խոժակի կարծիքում կային կետեր, որոնցից ես անպայման օգտվեցի՝ բացառապես տեխնիկական և հոդվածի ստուգման տեսանկյունից: Այդ ստուգումն իրենից ներկայացնում է հետաքրքիր պատկեր: Նախ և առաջ, ես անհրաժեշտ եմ համարում բացատրել որոշ տերմինների իմաստը: Եթե համաձայն Խոժակի դիտողության, մոնիզմի կամ դուալիզմի իմաստով, մենք փոխենք այդ հայացքները և միտումը, ապա այդ դեպքում իմ պատմափիլիսոփայական հայեցակարգից վերանում է ողջ հիմքը և իմ ամբողջ հոդվածը լցվում է հակասություններով …»:

Այդ նամակը ինձ հետ ոչ մի առնչություն չունի, իսկ նրա թարգմանության առթիվ ես հայտարարում եմ, որ վերոբերյալ «Վերջինս այդ հոդվածը փոխանցել է Խոժակին» արտահայտության մեջ «փոխանցել է» բառը հայերենից սխալ է թարգմանված, և պետք է փոխարինվի «հանձնված է նրան անձամբ» բառերով: Ինձ ներկայացված նամակում հիշատակված «Խոժակը» ինձ անհայտ այլ անձնավորություն է և ոչ բոլորովին ես: Ձեր կողմից, պ. Դատական Քննիչ, ներկայացված և Արմավիրում Արամ Չինչինյանից[14] բռնագրավված, ինչպես Դուք ասում եք հայերեն նամակում, թարգմանչի թարգմանությամբ իմիջիայլոց նշված է հետևյալը. «1906թ. սեպտեմբերի 2, Ն. Նախ[15]… Երեկ երեկոյան՝ ժամը 8-ին, ես ծանոթներիս հետ գնացի ժողովի: Այդտեղ ներկա էր «պարոն Խոժակ» անունով դաշնակը, ով շատ լավ էր խոսում և ինչպես երևում էր՝ եղել էր բազմաթիվ վայրերում: Նա կրթված մարդ է, ժամանել է արտասահմանից և երեկոյան ժամը 12-ին պետք է մեկներ Կովկաս: Ժողովում տեղի ունեցան բուռն քննարկումներ: Մի խոսքով շատ հետաքրքիր էր …»:

Ես հայտարարում եմ, որ այդ նամակն ինձ հետ ոչ մի կապ չունի, քանի որ ես ոչ մի անգամ չեմ եղել Դոնի Նախիջևան քաղաքում: Ռ. Խան-Ազատի[16] հայերեն «Դաշնակցությունը և նրա ղեկավարները» գրքույկի[17] առթիվ ես լսում եմ, որ դրանում թարգմանիչների թարգմանությամբ իմիջիայլոց նշված է հետևյալը. «Իրականում «Դաշնակցությունը» կազմակերպվել և հիմնադրվել է դեռևս 1890թ., սակայն այն մինչև 1896թ. Թուրքիայում ոչ մի գործունեություն չէր ցույց տվել: Դա կարող են հաստատել այդ կուսակցության ազնիվ անդամները, որոնք առավել մոտիկից ծանոթ են նրա պատմությանը, քան

12 «Արշակը» թերևս Արշակ Ջամալյանն է (Իսահակյան), որը ուսանում էր Բեռլինում:

13 Համազասպ Օհանջանյանի դատական գործի մասին տես՝ «Վէմ», 2009, հուլիս-սեպտեմբեր, N. 2, էջ 144-170:

14 Արամ Չինչինյանը նույնպես լիժինյան դատական հաշվեհարդարի է ենթարկվել:

15 Նոր Նախիջևանն է:

16 Խան-Ազատ Ռուբեն [Նշան Կարապետյան] (1862-1929) – հասարակական-քաղաքական գործիչ, Հնչակյան կուսակցության հիմնադիրներից: Ժամանակին փորձել է միավորել հնչակյաններին և դաշնակցականներին:

17 Տե՛ս Խան-Ազատ Ռ., Դաշնակցութիւնը եւ իր ղեկավարները: Ալէքսանդրապօլ, Տպ. «Շիրակ», 1907, 52 էջ:

տարբեր Թոփչյաններ[18] և Խաժակներ, որոնք այդ ժամանակ դեռևս գտնվում էին աշակերտական աթոռներին, իսկ վերջին ժամանակներս զբաղված էին «մեծ» գործերով, և ժամանակ չունեին ծանոթանալ իրենց կուսակցության անցյալի հետ և ամենից անազնիվ կերպով խեղաթյուրում են անցյալը տարբեր աղավաղված գովազդներով» ….

Ես հայտարարում եմ, որ նշյալ «Դաշնակցությունը և նրա ղեկավարները» գրքույկի վերոբերյալ տեքստը ինձ չի վերաբերում, քանի որ 1890թ. ես աշակերտական աթոռին չէի, այլ դեռևս 1880-ական թվականներից ուսուցչություն էի անում[19]: Ձեր կողմից ներկայացված երկու մատյաններում, որոնք Ձեր խոսքերով, պ. Դատական Քննիչ, ներկայացնում են «Դաշնակցություն» կուսակցության պահեստից զենքի բաց թողնման գրքույկներ, և որոնք բռնագրավվել են 1907թ. ապրիլին Մ. Ղարաքիլիսա գյուղում Էվոյանց եղբայրների տանը, որտեղ հայտնաբերվել է զենքի պահեստ և «Դաշնակցություն» կուսակցության գրագրությունը, իմիջիայլոց նշված են հետևյալ գրառումները. «17.05.05 թվական, 1 N. 22-10ա, Գ. Խաժ…», իսկ մյուս գրքույկի 48 շրջերես էջի վրա. «1 Վելդ. 10[20], Խոժակ (1905թ. մայիսի 1-ի և հուլիսի 5-ի միջև)»: Ընդ որում, Ձեր խոսքերով, պ. Դատական Քննիչ, երկրորդ գրքույկը ներկայացնում է հավանաբար առաջինի սևագրությունը: Այդ գրառումների առթիվ ես հայտարարում եմ, որ 1905թ. հայ-թաթարական ընդհարումներից առաջ Թիֆլիս քաղաքում ես 7 ռուբլով ինձ անհայտ ոմն երիտասարդից գնեցի 1 փոքր ատրճանակ: Այդ երիտասարդը ատրճանակներ էր վաճառում՝ դրանք տնետուն բաժանելով: Միգուցե ատրճանակը փամփուշտներ ուներ: Ես հայկական «Յառաջ» թերթի[21] խմբագրության անդամ չեմ եղել, սակայն քանի որ այդ թերթի խմբագիր Ավետիք Սահակյանը[22] հայտարարեց, որ իմ անունն արդեն նշված է խմբագրության անդամների անունների կազմում, ես հայտնեցի նրան, որ թող այդպես էլ մնա: Սակայն ես [սոսկ] համագործակցել եմ այդ թերթին, թեպետ գրել եմ ոչ շատ հաճախ: Ես բացարձակապես չգիտեի, որ «Յառաջ» թերթը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության օրգանն էր[23]: Ինձ ներկայացված «Դրոշակ» թերթի 1907թ. N. 1 համարից տեսնում եմ, որ 16-րդ էջում կա փոքրիկ հաղորդում. «Կովկասյան վարչակազմի հետապնդումները դաշնակցական թերթերի դեմ գնալով աճում են: 10 ամիսների ընթացքում փակել են 4 օրգան. «Յառաջ», «Ալիք»[24], «Զանգ»[25] և «Երկիր»[26]: Այդ փաստն

18 Թոփչյան Եղիշե Թադևոսի (1872-1909) – գրող, հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ: 1905թ. Թիֆլիսում մասնակցել է հայ-թուրքական կռիվներին, 1907թ. ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովում ընտրվել Արևելյան Բյուրոյի անդամ: Դավադրաբար սպանվել է Կ. Պոլսից Կարին վերադարձի ճանապարհին:

19 1886-1893թթ. Գ. Խաժակը ուսուցիչ է աշխատել Բաքվի, Գանձակի և Վերին Ագուլիսի ծխական դպրոցներում:

20 Նկատի ունի՝ «1 Վելլոդոգ ատրճանակ և 10 փամփուշտներ»:

21 «Յառաջ» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. Քուրթաթելաձե, 1906: Խմբագիր Ա. Սահակյան, հրատարակիչ՝ Մնացական Նալբանդյան:

22 Սահակյան Ավետիք [Հայր Աբրահամ] (1865, Ստեփանավան–1933, Բեյրութ) – կուսակցական-պետական անվանի գործիչ: 1909թ. ձերբակալվել է լիժինյան գործով, ազատվել է 1912թ.: Եղել է ՀՀ Խորհրդարանի նախագահը: 1921թ. տարագրվել է Պարսկաստան, ապա՝ Լիբանան:

23 Այս մոտեցումը պայմանավորված էր թերթը լիժինյան հետապնդումներից զերծ պահելու մարտավարությամբ:

24 «Ալիք» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. Քուրթաթելաձե, 1906: Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Թադևոսյան:

25 «Զանգ» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. Մ. Վարդանյան, 1906: Խմբագիր-հրատարակիչ՝ Եվգենիա Մելիք-Քալանթարյան:

26 «Երկիր» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. Քուրթաթելաձե, 1906-1907: Խմբագիր-հրատարակիչ՝ բժիշկ Մ. Մուրադյան:

իհարկե ներկայիս «Ժամանակ»[27] թերթին երկար կյանք չի խոստանում»: Իսկ 1910թ. հունվարի 15-ին քաղաք Շուշիում Հակոբովի տանը գտնված, ինչպես Դուք պ. Դատական Քննիչ, ասում եք, 1906թ. հունվարի 24-ի «Ղարաբաղյան գյուղական դաշնակցական բոլոր մարմիններին» վերնագրով տպագիր կոչում նշվում է, որ [ՀՅԴ] կոմիտեն առաջարկում է գյուղական մարմիններին բաժանորդագրվել դաշնակցական «Յառաջ» թերթը, իր վրա՝ թերթը սուրհանդակով տեղ հասցնելու պարտավորություն ստանձնելով: Այդ փոքրիկ հոդվածների առթիվ ես հայտարարում եմ, որ դրանք տեսնում եմ առաջին անգամ, Ձեր, պ. Դատական Քննիչ, մոտ, և որ իմ համոզմամբ՝ «Յառաջ» թերթը դաշնակցական օրգան չի հանդիսանում: Մնացական Նալբանդյանցին[28] ես հպանցիկ գիտեի՝ որպես փայտի առևտրականի և «Յառաջ»-ի հրատարակչի, սակայն երբեք նրա հետ ոչ մի տեղ չեմ մեկնել: Ավագ քահանա Աբուլյանցի կնոջը ես ընդհանրապես չգիտեմ: Ոչ մի կին ինձ չի դիմել անհայտ կորած իր Սերգեյ որդու հետախուզման համար «Վտակ»[29] թերթում ծանուցում տեղադրելու խնդրանքով: «Վտակ» թերթի խմբագրության անդամ ես երբեք չեմ եղել: Միգուցե այդ թերթում երբեմն իմ հոդվածներն եմ հրատարակել: 1907թ. ես ընդհանրապես չեմ այցելել և չէի կարող այցելել «Վտակ»-ի խմբագրություն, քանզի դասերով չափից ավելի զբաղված էի և այդպիսով Աննա Աբուլյանցը, ով հայտարարում է, որ ինքը «Վտակ» թերթի խմբագրությունում դիմել է ինձ՝ Գարեգին Խոժակյանին, վերոնշյալ խնդրանքով, ակնհայտ է, որ դիմել է մի ինչ-որ ուրիշ անձի՝ նրան ընդունելով իմ փոխարեն: Ավելացնում եմ. ես միջնորդում եմ ինձ հնարավորություն ընձեռելու ծանոթանալ իմ դեմ բերված վկաների ցուցմունքներին, այսինքն՝ մինչև քննության ներկայացումը հերքել նրանց ցուցմունքները, քանզի համոզված եմ, որ այդ վկաների ցուցմունքները չեն կարող ինձ վերաբերել: Խնդրում եմ Ձեզ, պ. Դատական Քննիչ, ինձ տրամադրել հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությանը պատկանելու մեղադրանքով ներկա գործի պատճենը: Խնդրում եմ նաև, պ. Դատական Քննիչ, սույն արձանագրության մեջ գրանցել, որ ներկա գործով քննության ներկայացված իմ դեմ բերված վկաների ցուցմունքներին ծանոթանալու հնարավորություն տալու մասին իմ միջնորդությանը պատասխանեցին ինձ մերժումով: Ցուցմունքը ինձ կարդացված է: Գարեգին Կարապետի Խոժակնյան:

Երդվյալ թարգմանիչ՝ Նադիրաձե
Դատական քննիչ՝ Ն. Լիժին
Պալատի դատախազի տեղակալ՝ Ակսակով

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4198-4200: Թարգմանություն ռուսերենից:

27 «Ժամանակ» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. «Հերմես», 1906-1907: Խմբագիր-հրատարակիչ՝ Հովհ. Տեր-Միքայելյան, Սարգիս Մանասյան:
28 Եղել է «Յառաջ» թերթի հրատարակիչը:
29 «Վտակ» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. «Հերմես», 1907-1908: Խմբագիր-հրատարակիչ՝ Մուշեղ Խուդադյան:

ԹԻՎ 3
ՈՐՈՇՈՒՄ

1911թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր կատարած նախաքննությունը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործով, ԳՏԱՎ.

Որ ներքոանվանյալ մեղադրյալներին՝ սույն գործով ներկայացված Քրեական Դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդվածների հիման վրա, նրանց նախաքննությամբ արված են հետևյալ հայտարարությունները.

X. Գարեգին Կարապետով Խաժակյան.

1. Ի հաստատումն այն բանի, որ նա՝ Գարեգին Խաժակյանը, չէր կարող ներկա լինել Թիֆլիս քաղաքում գումարված 1905թ. նոյեմբերի 17-ի Շրջանային ժողովում, քանի որ 1905թ. նոյեմբերի 10-ից 23-ը գտնվում էր Ելիսավետպոլ[30] քաղաքում – հարցաքննել վկաներ Արշակ Ստեփանովին, Միխայիլ Ստեփանովին և Ամիր Ամիրխանովին:

2. Գործին կցել Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի պետի 1908թ. դեկտեմբերի 23-ի որոշումը Կասպար Խաժակյանի փոխարեն իր՝ Գարեգին Խաժակյանի ձերբակալության մասին,

3. Հարցաքննել պաշտոնական անձանց (գյուղ Շուլավերի տանուտերին, դատավորին, հարգված անձանց) ի հաստատումն այն բանի,որ ինքը՝ Խաժակյանը, այնտեղ ոչ ոքի չի ճանաչում և այնտեղ ոչ մի քարոզչություն չի վարել,

4. Ի հաստատումն այն բանի, որ ինքը՝ Խաժակյանը, հայկական Ներսիսյան դպրոցում [ուսուցիչ] էր նշանակվել կղերականների և մշակականների կողմից[31] – հարցաքննել հոգևորական Գյուտ Աղանյանին[32], Կարապետ Ստեփանովին և գեներալ Բեբութովին,

5. Խաժակյանի կողմից Բաքում, Երևան, Ելիսավետպոլ, Ալեքսանդրապոլ[33] և Բաքու քաղաքներում կարդացած դասախոսությունների բնույթը պարզաբանելու համար տեղեկանքներ վերցնել ժամանակավոր գեներալ-նահանգապետ Ֆոն Պարկաուի, Ելիսավետպոլի նահանգապետ Կովալյովի, ժամանակավոր գեներալ-նահանգապետ Յացկևիչի և Բաքվի քաղաքագլուխ Մարտինովի գրասենյակներից,

6. Ի հաստատումն այն բանի, որ Գարեգին Տեր-Աստվածատուրյանի բնակարանում Բագրատովին [ուղղված] 1.000 ռուբլու սպառնալից պահանջով «Ջինվորական Խորհրդի» կողմից «Միհրան» ստորագրությամբ [գրությամբ] Աննա Աբուլյանցի նման կնոջ հետ հայտնվել է Հաբեթ Վարդերոսյանցը[34], բայց ինքը՝ Գարեգին Խաժակյանը, հանդիմանելով Հաբեթ Վարդերոսյանցին և այդ կնոջը՝ վռնդել է, սպառնալով ոստիկանությամբ,

30 Գանձակ:
31 Պաշտպանական մարտավարության նկատառումով Գ. Խաժակը զանց է առնում ՀՅԴ կողմից իր ուսուցիչ նշանակվելու հանգամանքը, ինչը որպես մեղադրանք էր ներկայացվում:
32 Աղանյան Գյուտ քահանա (1856-1920) – անվանի բանասեր, խմբագիր, հրատարակիչ: Հրատարակել է «Դիվան հայոց պատմության» հատորները:
33 Գյումրի:
34 «Վարդերեսյանց» - Վարդերեսյանը Միհրանի մերձավոր աջակիցն էր:

7. Ի հաստատումն այն բանի, որ Միհրանը և նրա շրջապատը նենգաշորթներ են – հարցաքննել Հարություն Սեյլանովին, Համբարձում Էնֆիաջյանցին և Հակոբ Բասենցևին,

8. Ի հաստատումն այն բանի, որ 1907թ. մայիսին Զարուհի Ղազանչյանը սպառնացել է իրեն՝ Խաժակյանին, մեղադրել դպրոցից իր որդու հեռացման համար – հարցաքննել Ն. Քարիմյանին,

9. Ի հաստատումն այն բանի, որ Գարեգին Խաժակյանը վիճել է Թոփչյանի և Լիպարիտ Նազարյանի[35] հետ և 1907թ. մայիսից չի այցելել այն թերթերի («Վտակ» և «Գործ»[36]) խմբագրություններ, որտեղ գտնվում էին այդ անձինք – հարցաքննել Գևորգ Ղազարյանին,

10. Իրեն կրկին հիշեցնել Աննա Աբուլյանցի ցուցմունքը,

11. Տեղեկություններ հավաքել վկա Շահնազարովայի բարոյական հատկանիշների մասին, ով հաստատում է, որ Խաժակյանը հայտնի կուսակցական գործիչ է և կցել գործին, քանզի նա նենգաշորթ է,

12. Փոխել կալանման միջոցը,

13. Ներկա գործին կցել Հաբեթ Վարդերոսյանցի նամակը Էրզրումի բանտից, ինչի մասին 1910թ. մարտի 19-ի ցուցմունքում հիշատակում է Միհրանը, իսկ Հաբեթ Վարդերոսյանն այդ նամակում Միհրանին հաղորդում է Թիֆլիսից Խաժակյանի նախատեսվող փախուստի մասին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4383: Թարգմանություն ռուսերենից:

***

Մեղադրյալ Գարեգին Խոժակյանը խնդրում է տեղեկություններ հավաքել իր դեմ ցուցմունք տվող վկա Մելիք-Շահնազարովայի բարոյական հատկանիշների մասին՝ ի հաստատումն այն բանի, որ նա նենգաշորթ է և այդպիսիք կցել ներկա գործին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4488: Թարգմանություն ռուսերենից:

***

Մեղադրյալ Գարեգին Խոժակյանի կողմից հետևյալ միջնորդություններն են հայտարարված.

1. Ներկա գործին կցել. Ա. Թիֆլիսի ժանդարմական վարչության պետի 1908թ. դեկտեմբերի 23-ի որոշումը Կասպար Խոժակյանի, այլ ոչ թե Գարեգին Խոժակյանի ձերբակալության մասին, և Բ. Հաբեթ Վարդերոսյանի նամակները, ինչի մասին վկա Միհրանը վկայում է 1910թ. մարտի 19-ի իր ցուցմունքում, և որի մեջ Հաբեթ Վարդերոսյանը Էրզրումի բանտից հաղորդում է Թիֆլիսից Գարեգին Խոժակյանի նախատեսվող փախուստի մասին,

35 Նազարյան Լիպարիտ (1868, Զալալօղլի–1947, Եգիպտոս) – հրապարակախոս, կուսակցական-հասարակական գործիչ: Մասնակցել է Բեռլինում ու Ռուսաստանում ՀՅԴ-ի կողմից վարվող բանակցություններին:

36 «Գործ»-հասարակական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. Զանգակ, 1908-1909: Խմբագիր-հրատարակիչ Ա. Դոշոյան:

2. [Տեղեկություններ] Հավաքել Բաքումի գեներալ-նահանգապետ Ֆոն Պարկաուի, Ելիսավետպոլի նահանգապետ Կովինևի և այլոց գրասենյակներում Բաքումում, Երևանում, Ելիսավետպոլում, Ալեքսանդրապոլում և Բաքվում իր՝ Խոժակյանի, կողմից կարդացված հայերեն դասախոսությունների բնույթի մասին,

3. Հարցաքննել վկաներ.

Ա. Ստեփանովներին և Ամիրխանովին, որ 1905թ. նոյեմբերի 10-ից մինչև 23-ը ինքը գտնվել է Ելիսավետպոլում, դրա համար էլ չէր կարող ներկա գտնվել 1905թ. նոյեմբերի 17-ին քաղաք Թիֆլիսում «Դաշնակցություն» կուսակցության Շրջանային ժողովին[37],

Բ. Գյուղ Շուլավերի տանուտերին, դատավորներին և հարգարժան անձանց այն մասին, որ իրեն՝ Խոժակյանին այնտեղ չեն ճանաչում, և նա այնտեղ ոչ մի քարոզչություն չի վարել,

Գ. Վկա Գևորգ Ղազարյանին, որ Խոժակյանը վիճել էր Թոփչյանի և Լիպարիտ Նազարյանի հետ, դրա համար էլ 1907թ. մայիսից չի այցելել այն խմբագրություններ («Վտակ», «Գործ»), որտեղ գտնվում էին այդ մարդիկ,

Դ. Գյուտ Աղանյանին, Բեբութովին և Ստեփանովին, որ Խոժակյանը Ներսիսյան ճեմարանի ուսուցիչ է ընտրվել կղերականների և մշակականների կողմից:

Սակայն այդ բոլոր միջնորդությունները հետևյալ պատճառներով ենթակա չեն բավարարման: Առաջին, Խոժակյանի ձերբակալության մասին պահնորդական գրագրությունը և հետաքննությունը նշյալ որոշմամբ գործում արդեն առկա են: Ինչ վերաբերում է նույն մեղադրյալ Գարեգին Խոժակյանի կողմից հիշատակված Հաբեթ Վարդերոսյանի նամակին, որում նա Էրզրումի բանտից հաղորդում էր Խոժակյանի նախատեսվող փախուստի մասին և ինչի մասին 1910թ. մարտի 19-ի ցուցմունքում հիշատակում է վկա Միհրանը, ապա՝ մի կողմից մեղադրյալ Խոժակյանի հայտարարությունն իրականությանը չի համապատասխանում, քանզի վկա Քեշիշյանը 1910թ. մարտի 19-ի իր հարցաքննության ժամանակ ներկայացրեց Հաբեթ Վարդերոսյանի նամակը, ուր նշվում էր Թիֆլիսից Խոժակյանի նախատեսվող փախուստի մասին, իսկ արձանագրության մեջ այդ մասին նշված է. «Ներկայացնում եմ ձեզ Թուրքիայից Հաբեթ Վարդերոսյանի եղբորից իմ ստացած նամակը, որ գաղտնի ուղարկել էր Էրզրումի բանտից: Այդ նամակում մանրամասն շարադրված է Հաբեթ Վարդերոսյանին ձերբակալած «Դաշնակցություն» կուսակցության անդամների գործունեությունը»: Ներկա գործին կցված նշյալ նամակի զննումից երևում է, որ դրանում Գարեգին Խոժակյանի մասին ոչ մի բառ չի հիշատակվում: Հաբեթ Վարդերոսյանի ուրիշ նամակներ Քեշիշյանը չի ներկայացրել: Երկրորդ, նշյալ քաղաքներում Գարեգին Խոժակյանի կողմից կարդացված հայերեն դասախոսությունների բնույթի մասին տեղեկանքները գործի համար ոչ մի նշանակություն չունեն: Երրորդ, ալիբի[38] ունեցող վկաների հարցաքննություններն՝ ի հաստատումն 1905թ. նոյեմբերի 10-ից մինչև 23-ը քաղաք Թիֆլիսում անբացակա գտնվելու, գյուղ Շուլավերում Խոժակյանի անհայտ լինելը հաստատող վկաների և այնտեղ նրա կողմից քարոզչության վարման, վկայի

37 Ինչպես նշեցինք՝ խոսքը վերաբերում է 1905թ. նոյեմբերյան Կովկասյան ռայոնական ժողովին:
38 Ալիբի - անմեղության ապացույց:

ցուցմունքն ի հաստատումն Խոժակյանի՝ Եղիշե Թոփչյանի և Լիպարիտ Նազարյանի հետ վիճելու, որպես Խոժակյանի կողմից այդ թերթերի խմբագրություններ չայցելելու պատճառ, որտեղ գտնվում էին այդ անձինք, և վկաների ցուցմունքները կղերականների և մշակականների կողմից Ներսիսյան ճեմարանի ուսուցիչ ընտրվելու մասին - ենթակա չեն բավարարման, քանզի ինչպես վերն արդեն նշվել էր՝ հաստատվել է Գարեգին Խոժակյանի կողմից նույնիսկ գոյություն չունեցող փաստերի [շուրջ] վկաների ներկայացումը, որոնք պետք է հաստատեին նրա նկատմամբ վկա Ղազանջյանի չարացումը՝ ճեմարանի աշակերտների թվից դրանում չսովորող նրա որդի Կասպարի հեռացման համար: Դրան զուգահեռ դժվար է ենթադրել, որ ալիբի ունեցող վկաները կկարողանային հաստատել Գարեգին Խոժակյանի գտնվելու փաստը՝ հենց նրա ցանկացած ժամանակահատվածում 1905թ. նոյեմբերի 10-ից մինչև 23-ը, ինչը տեղի է ունեցել ավելի քան հինգ տարի առաջ, որպեսզի դրանով ապացուցվի Թիֆլիսում նրա ներկայության անհնարինությունը «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովում, որտեղ 1905թ. նոյեմբերի 17-ին ժամը 10-2-ի միջև Խոժակյանը ելույթ է ունեցել «Ֆեդերացիայի մասին» թեմայով: Ավելին, Գարեգին Խոժակյանի կողմից նույնիսկ գրվել է «Դաշնակցություն» կուսակցության օրգան «Յառաջ»-ի գրադարանի հրատարակած «Դեպի ֆեդերացիա» գրքույկը[39]: Ինչ վերաբերում է Խոժակյանի կողմից 1906 թ. գյուղ Շուլավեր այցերին, որտեղ նա ռուսական կառավարությանը դիմադրություն ցուցաբերելու մասին ելույթով դիմել էր որոշ բնակիչների և այլն, ապա այդ փաստը հաստատված է վկաներ Կագրիցևի և Տեր-Պողոսովի երդվյալ ցուցմունքներով, իսկ Շուլավեր գյուղի բնակիչների համար Խոժակյանի անհայտ լինելը ցույց է տալիս միայն այն զգուշությունը, որով նա վարել է այդ քարոզչությունը: Խոժակյանի վեճն այժմ արդեն հանգուցյալ Թոփչյանի և Թուրքիայում թաքնվող Լիպարիտ Նազարյանի հետ Գարեգինի համար չէր բացառում «Դաշնակցություն» կուսակցության օրգանների խմբագրություններ այցելելու հնարավորությունը, քանի որ դժվար է ենթադրել, որ «Դաշնակցություն» կուսակցության այնպիսի գլխավոր գործիչներ, ինչպիսիք եղել են Թոփչյանը, Նազարյանը և Խոժակյանը, իրենց անձնական շահերի պատճառով արհամարհեին կուսակցական գործերը, առավել ևս, որ վկա Աբուլյանցը երդման ներքո հաստատել է Թիֆլիսում՝ հայկական թերթի խմբագրությունում Գարեգին Խոժակյանի հետ իր հանդիպումը, որտեղ 1908թ. սկզբին, այլ ոչ թե 1907թ., նրա [Խաժակի] կողմից նրան [Աբուլյանցին] հայտարարվել է իր որդու սպանության առթիվ. «դա ձեր գործը չէ, այլ կուսակցության...»: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե ով է մասնավորապես օգնել Խոժակյանին տեղավորվել ճեմարանի ուսուցիչ – կղերականները, մշակականները, թե դաշնակցականները, ապա դա չի կարող էական նշանակություն ունենալ գործի համար, քանի որ այդ պարագան բոլորովին չի բացառում «Դաշնակցություն» կուսակցության մեջ Գարեգին Խոժակյանի մասնակցության փաստը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4515-4516: Թարգմանություն ռուսերենից:

39 Տե՛ս Գ. Խաժակ, Դէպի ֆեդերացիա: «Յառաջ»-ի գրադարան, թ. 42, Թիֆլիս, Տպ. «Աղանեան», 1907, 371 էջ:

ԹԻՎ 4
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԱԿՏ

1907թ. հրատարակված «Ժամանակ» թերթի համարների զննման ճանապարհով հաստատվել է, որ ինչպես Մնացական Մոիսեև Նալբանդյանը – տեխնիկ, այնպես էլ և Գարեգին Կասպարով[40] Խաժակյանը – լրագրող, իրենց քաղաքական հայացքներով հարում են «Դաշնակցություն» կուսակցությանը, և նրանց անունները, որպես այդ կուսակցության թեկնածուների, 3-րդ գումարման Պետական Դումայի անդամի ընտրության համար, հրապարակված են ընտրողների թեկնածուների շարքում (բնագիր գործի հտ. 52, թ. 1479):

Հարցաքննության ժամանակ որպես մեղադրյալ Մնացական Մոիսեև Նալբանդյանը, ժխտելով «Դաշնակցություն» կուսակցության Թիֆլիսի [Կենտրոնական] կոմիտեին իր պատկանելությունը, պարզաբանեց, որ ինքը զբաղված լինելով իր առևտրական գործերով, երկաթգծում կապալներով և ածուխի գործով, ժամանակ չուներ քաղաքականությամբ զբաղվելու, որ 1905թ. նա երկու ամիս գոյատևած «Յառաջ» թերթի հրատարակիչն էր, որը հետագայում վարչական իշխանության կողմից փակվեց: Թե ինչի համար է փակվել թերթը՝ չգիտի, քանի որ թերթի պահպանության պատասխանատուն խմբագիր-գյուղատնտես Սահակովն[41] էր: Այն մասին, որ «Դաշնակցություն» կուսակցությունը «Յառաջ» թերթը համարել է իր կուսակցական օրգանը և միջոցներ է ձեռնարկել դրա տարածման համար 7 ռուբլի հատկացման մասին կոչերով՝ ինքն առաջին անգամ իմացել է միայն իրեն ներկայացված վերոնշյալ կոչից, ինչպես նաև «Դրոշակ» թերթի փոքրիկ հոդվածից այն մասին, որ ի թիվս այլ թերթերի՝ փակված «Յառաջ» թերթը «Դաշնակցություն» կուսակցության օրգանն էր (բնագիր գործի հտ. 129, թ. 4179):

Վկաներ Կագրիցևի և Վարդան Տեր-Պողոսովի ցուցմունքներում հիշատակված ուսուցիչ Գարեգին Խաժակյանը՝ նույն ինքը Խոժակը, նաև լրագրությամբ զբաղվող, «Դաշնակցություն» կուսակցության օրգան «Յառաջ» թերթի խմբագրության անդամ էր և այդ կուսակցության կողմից առաջադրված էր, ինչպես այդ մասին արդեն նշվել է, որպես 3-րդ գումարման Պետական Դումայի անդամի ընտրության համար ընտրողի թեկնածու: Վկա Քեշիշյանի[42] բացատրությամբ Խաժակյանը «Դաշնակցություն» կուսակցության Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի անդամ էր, զբաղվում էր հակակառավարական բովանդակության գրքույկների և կոչերի կազմմամբ, որպես դասախոս հանդես էր գալիս կուսակցության կազմակերպած ժողովներում, այդ նպատակի համար ստանալով գործուղումներ տարբեր քաղաքներ և լինելով «Յառաջ» գրադարանի կուսակցական վարչության անդամ: Նախաքննության հետագա ընթացքում Քեշիշյանի այդ բացատրությունները գտան իրենց լիակատար հաստատումը (բնագիր գործի հտ. 52, թ. 1486, հտ. 7, թ. 149, հտ. 50, թ. 1344):

Վերոհիշյալ «Յառաջ» թերթի 1905թ. առաջին համարի զննումից երևում է, որ դեկտեմբերի 11-ին Թիֆլիսում՝ Հավլաբարի թատրոնում, հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությունը հանրահավաք-դասախոսություն է

40 Ճիշտը՝ Կարապետի:
41 Ավետիք Սահակյան:
42 Գաբրիել Քեշիշյան – Միհրան:

կազմակերպել: Դասախոսության թեման եղել է նշյալ կուսակցության Կովկասյան գործունեության ծրագիրը[43], ընդ որում, դասախոս «Ընկ. Խ.»-ն մանրամասն կանգ է առել «Դաշնակցության» Կովկասյան գործունեության ծրագրի քաղաքական մասի վրա, պարզաբանել կենտրոնական կառավարության ընտրությունների անկատարությունը և միութենական կամ ֆեդերատիվ կազմակերպության մեծ առավելությունը: Ընդհանրապես պարզելով, թե ինչ է նշանակում ֆեդերացիա և ինչպիսի քաղաքական կարգ է պահանջում «Դաշնակցության» ծրագիրը, դասախոսը նշել է, որ «Կովկասում ֆեդերացիան Ռուսաստանի անբաժանելի մասն է», և որ միայն այդպիսի կարգը կարող է Ռուսաստանը դուրս բերել քայքայված վիճակից և երկրամասն ազատել բյուրոկրատական չինովնիկական անկարգությունից: Այդ դասախոսությունը կարդացած անձը, ինչքանով կարելի է ենթադրել Գարեգին Խաժակյանի գրական երկերից, հենց նա է, քանի որ «Յառաջ» գրադարանի հրատարակած երկերի մեջ գտնվում է Գարեգին Խաժակյանի «Դեպի ֆեդերացիա» գրքույկը: Ճիշտ այդպես հարկավոր է եզրակացնել, որ 1905թ. Թիֆլիսում «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովում ներկա գտնված, հակակառավարական մի ամբողջ շարք բանաձևերի մշակող և բացառապես՝ ֆեդերացիայի մասին հանդես եկած «Ընկ. Խաժ.» անունով անձը Գարեգին Խաժակյանն էր: Ինչպես երևում է այդ [ժողովի] արձանագրությունից՝ Անդրկովկասի քաղաքական կառուցվածքի մասին վիճաբանություններից հետո ընդունվել է բանաձև այն մասին, որ հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությունն անհրաժեշտ է գտնում Անդրկովկասի համար ֆեդերատիվ սկզբունքների վրա հիմնված կարգը, դա ներկայացնելով որպես քաղաքական նպատակ և որպես Անդրկովկասի ինքնավարության անմիջական պահանջ՝ հիմնված դեմագոգիկ սկզբունքների վրա և կապված Ռուսաստանի հետ ֆեդերատիվ եղանակով:

1908թ. Արմավիրում Չինչինյանի մոտ Դոնի Նախիջևանից 1906թ. սեպտեմբերի 3-ին «Անյա» ստորագրությամբ խուզարկությամբ գտնված նամակից երևում է, որ հեղինակը նամակի գրման նախօրեին գտնվել է մի հավաքում, որտեղ խոսել է «շատ կրթյալ, բազմաթիվ վայրերում եղած և նույն երեկոյան Կովկաս վերադարձած Խոժակ անունով դաշնակցականը»: Այդ նամակը հաստատում է «Դաշնակցություն» կուսակցության ծրագրի շուրջ դասախոսություններ կարդալու համար այլ քաղաքներ Գարեգին Խաժակյանի այցելությունների մասին վկա Քեշիշյանի ցուցմունքների ճշմարտացիությունը (բնագիր գործի հտ. 47, թ. 1170):

Զբաղվելով գրական գործունեությամբ՝ Գարեգին Խաժակյանը, ինչքանով կարելի է ենթադրել մեղադրյալ Համազասպ Օհանջանյանի մոտ գտնված Արշակ Իսահակյանի[44] նամակից, «Դաշնակցություն» կուսակցության տեսանկյունից հայտնի հարցերի լուսաբանման խնդիրը հավատարմորեն լուծելուն իրազեկ անձ էր: Արշակ Իսահակյանը «Գործ» թերթի խմբագրությանն ուղարկելով Ռուսաստանում և Թուրքիայում «Դաշնակցություն» կուսակցության

43 Տե՛ս Նախագիծ Կովկասեան գործունէութեան, հրատ. ՀՅԴ, Ժընեւ, տպ. ՀՅԴ, 1905:

44 Զամալյան (Իսահակյան) Արշակ (1882-1940) – ՀՅԴ անվանի գործիչ: 1905թ. ձերբակալվել է ցարական ոստիկանապետի ահաբեկման համար: 1906թ. Գերմանիայում հիմնել է «Եվրոպայի հայ ուսանողական միությունը»: Եղել է ՀՀ դեսպանը Վրաստանում, 1921թ. մասնակցել է Ռիգայի բանակցություններին:

գործունեության մասին իր ձեռագիրը՝ անջատականների[45] խմբի մասին իր հայացքի շարադրման մասում նշում է զուտ խմբագրական կրճատման հնարավորությունը, հաղորդելով, որ ինքը չի կարող համաձայնել այն տեսակի որոշումների հետ, ինչպիսիք թույլ էին տրվել Խաժակի կողմից, ում «Դրոշակ»-ի խմբագրությունից կարծիքի համար փոխանցվել էր հայ-թաթարական ընդհարումների մասին Իսահակյանի գրքույկը (բնագիր գործի հտ. 49, թ. 1230):

Այդ կարծիքի հաստատմանն է ծառայում 1907թ. «Մշակ» թերթում տեղադրված և հետագայում առանձին գրքույկով հրատարակված «Դաշնակցությունը և նրա ղեկավարները» հոդվածը[46], որտեղ ի միջի այլոց միտք է արտահայտվում, որ «Դաշնակցություն» կուսակցությունն ո՛չ Թուրքիայում և ո՛չ Կովկասում այժմ չի համապատասխանում ժամանակի պահանջներին: Ինչ վերաբերում է Կովկասյան գործունեության նախագծի ծրագրին և մարտավարությանը, ապա գրքույկում ցույց է տրվում, որ բացի դասակարգային պայքարից՝ ազգային հողի վրա ոչ մի հեղափոխական գործունեություն չի կարելի նախաձեռնել, ինչի համար էլ գրքույկի հեղինակը խորհուրդ է տալիս Թոփչյանին և Խոժակին՝ որպես կուսակցության ղեկավարների, ավելի լավ ծանոթանալ նրա պատմությանը, այլ ոչ թե խեղաթյուրել այն տարբեր գովազդներով (բնագիր գործի հտ. 75, թ. 1966):

«Դաշնակցություն» կուսակցության գործունեությանը Խաժակյանի լիակատար տեղեկացվածության մասին վկայում է խուզարկությամբ նրա մոտ գտնված իր կողմից ֆրանսերենով գրված հոդվածը, ուր նա շարադրում է նշյալ կուսակցության կազմավորման, Թուրքիայում նրա հեղափոխական գործունեության, ողջ Եվրոպային իր խիզախությամբ զարմացրած Կոստանդնուպոլսում Օտոմանյան բանկի հարձակման կազմակերպման և Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի և այլ պետությունների հայ բնակչության շրջանում այդպիսի գաղափարների լայն տարածման մասին:

1907թ. ապրիլ ամսին Մեծ Ղարաքիլիսա գյուղում Էվոյանցների տան գաղտնի պահեստում խուզարկությամբ հայտնաբերված կուսակցական փաստաթղթերի մեջ գտնվել են բաց թողնված և ստացված զենքի ու զինամթերքի մատյանները: Ինչպես զննմամբ պարզվեց՝ երկու մատյաններում գտնվեցին 1905թ. փետրվարի 11-ի և մայիսի 11-ի գրություններ. «վելլոդոգ համակարգի ատրճանակների և դրանց փամփուշտների հանձնում Գ. Խաժ.» (այսինքն՝ Գարեգին Խաժակի մասին) (բնագիր գործի հտ. 50, թ. 1411):

«Դաշնակցություն» կուսակցության մեջ Գարեգին Խաժակյանի մասնակցությունը վկայվել է նաև թիֆլիսյան ավագ քահանայի կին Աննա Աբուլյանցի կողմից: Այդ վկայի ցուցմունքներից երևում է, որ 1907-1908թթ. իրականացնելով Թիֆլիսում հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության մեջ ներգրավվելու վախից Արմավիր ուղարկված և կորած իր որդի Սերգեյի փնտրտուքը, նա եկել է հայկական ինչ-որ թերթի խմբագրություն (հրատարակման ժա-

45 Նշյալ ժամանակահատվածում ՀՅԴ-ից տարանջատվել էին երկու ծայրահեղ թևերի ներկայացուցիչները՝ ձախ- անջատականները Լևոն Աթաբեկյանի և Արսեն Ամիրյանի (Մրավյան) ղեկավարությամբ (տե՛ս Վահէ, Անջատուածները, «Յառաջ» գրադարան մատ-շար, թիւ 47, Թիֆլիս, տպ. «Հերմէս», 1907, 43 էջ) և աջազգայնականները՝ խմբապետ Միհրանի գլխավորությամբ: Առաջինի ներկայացուցիչները հետագայում համալրեցին էսեռների ու բոլշևիկների շարքերը, իսկ երկրորդը վերածվեց հակադաշնակցական աղանդի, և իր առաջնորդի պատուհասումից հետո մարեց:

46 Տե՛ս Խան-Ազատ Ռ., Դաշնակցութիւնը եւ իր ղեկավարները: Ալէքսանդրապօլ, Տպ. «Շիրակ», 1907, 52 էջ:

մանակով դա «Վտակ» թերթն էր), որտեղ և դիմել է իր որդու փնտրտուքի մասին հայտարարության տպագրման վերաբերյալ միջնորդությամբ: Մերժում ստանալով՝ վկան իր որդու սպանության մեջ սկսել է մեղադրել Խաժակյանին, քանի որ նրա հավաքած տեղեկություններով՝ իր որդին սպանվել էր «Դաշնակցություն» կուսակցության վճռով, Խաժակյանն էլ պատկանել էր, ինչպես նրան հայտնի էր, այդ կուսակցության հայտնի գործիչների թվին, սակայն վերջինս նրան չէր լսել, ասելով . «Դա կուսակցության գործն է, այլ ոչ թե՝ ձեր» (բնագիր գործի հտ. 21, թ. 404):

Ինչպես հետագայում պարզվեց, Սերգեյ Աբուլյանցը «Դաշնակցություն» կուսակցության վճռով կուսակցության կողմից հետապնդվող Գաբրիել Քեշիշյանին՝ նույն ինքը Միհրան, համակրելու համար 1907թ. Արմավիրում սպանվել էր (բնագիր գործի հտ. 77, թթ. 2060-2062):

«Դաշնակցություն» հեղափոխական ընկերակցությանը պատկանելու մեջ մեղադրվող և հետաքննության մեջ ներքաշված Գարեգին Խաժակյանը իրեն մեղավոր չճանաչելով այդ հանցանքի մեջ, բացատրեց, որ այդ կուսակցության գործունեության մեջ ինքը ոչ մի մասնակցություն չի ունեցել, այլ իր ժամանակը նվիրել է միայն գրական աշխատանքների և ուսուցչական պաշտոնի, որ ամենայն հավանականությամբ իրեն շփոթում են ինչ-որ ուրիշ Խաժակյանի հետ, քանի որ իր ձերբակալության ժամանակ ոստիկանական պաշտոնյաները հարցրել են ոչ թե Գարեգին, այլ Կասպար Խաժակյանի, որ «Յառաջ» և «Վտակ» հայկական թերթերի խմբագրակազմի անդամ ինքը չի եղել, թեպետ համագործակցել է դրանց հետ՝ չիմանալով, որ այդ թերթերը կուսակցական են, որ «Վտակ» թերթում որդու փնտրտուքի մասին հաղորդագրության տպագրման խնդրանքով ոչ մի կին իրեն չի դիմել, որ իրեն Բեռլինից ներկայացված 1907թ. դեկտեմբերի 14-ի «Արշակ» ստորագրությամբ նշյալ նամակում հիշատակվող «Խաժակը» ակնհայտորեն որևէ այլ անձ է, այլ ոչ թե նա՝ Խաժակյանը, որ Դոնի Նախիջևանում տեղի ունեցած ժողովի առիթով Արամ Չինչինյանից առգրավված նամակում «Խոժակի» մասին հիշատակումը իր՝ մեղադրյալի հետ ոչ մի առնչություն չունի, քանզի նա այդ քաղաքում չի եղել, և որ Մեծ Ղարաքիլիսա գյուղում գտնված կուսակցական մատյաններում գրառումներին վերաբերող «Գ. Խաժ.» անվամբ անձին փամփուշտներով ատրճանակի հանձնման առթիվ մեղադրյալը կարող է նշել, որ 1905թ. հայ-թաթարական անկարգությունների ժամանակ անհայտ երիտասարդից 7 ռուբլով ատրճանակ է գնել, որի հետ գուցե և եղել են փամփուշտներ, սակայն ինքը դա չի հիշում, և որ վկաների այն ցուցմունքները, որ ցույց են տալիս իր կողմից «Դաշնակցություն» կուսակցության կարիքների համար գումարի ստացման մասին՝ բացարձակապես վստահության արժանի չեն (բնագիր գործի հտ. 21, թ. 415, հտ. 129, թ. 4198):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 87-89: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 5
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ՎՃԻՌ
17 հունվար-20 մարտ 1912թ.

Երևանի նահանգի ք. Ալեքսանդրապոլի քաղքենի Դարեգին Կասպարով Խաժակյան, 42 տարեկան, մեղադրվում է այն բանում, որ.

31. Դարեգին Խաժակյան - եղել է [ՀՅԴ] Թիֆլիսի կազմակերպության անդամ: 1905թ. մասնակցել է նրա [ՀՅԴ] Կովկասյան շրջանային ժողովին, որտեղ մշակվել է Ռուսական կայսրության սահմաններում ակտիվ հեղափոխական գործունեության ծրագիր: Եղել է [ՀՅԴ] ընկերակցության շրջանային օրգան «Յառաջ» թերթի խմբագրության և գրքույկների հրատարակման «Յառաջ» գրադարանի վարչության անդամ: [ՀՅԴ] Կազմակերպության հանձնարարությամբ 1905թ. Թիֆլիսում և 1906թ. Դոնի Նախիջևանում որպես դասախոս ելույթ է ունեցել ընկերակցության ծրագրի տարածման և նոր անդամների ներգրավման նպատակներով: 1906թ. ընկերակցության այլ անդամների հետ Շուլավեր գյուղում ստացել է ընկերակցության կարիքների համար ստիպողական ճանապարհով հավաքված դրամները և պահպանել իր մոտ ընկերակցության պատմությունը շարադրող իր իսկ գրած հոդվածը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 235: Թարգմանություն ռուսերենից:

***

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻՆ ԿԱՆՉՎԵԼՈՒ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿ

ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ

43. Դարեգին Կարապետով Խաժակյան – հտ. 21, գործի թերթ 7389, հտ. 75, թ. 24023, հտ. 129, թ. 42458[47], ք. Թիֆլիս:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 255: Թարգմանություն ռուսերենից:

***

Համաձայն վերոշարադրյալի՝ Կառավարող Սենատի Հատուկ Ներկայացուցչությունը որոշում է. 2. քաղքենի Դարեգին Կասպարով Խաժակյանին, 42 տարեկան, համարել անմեղ և արդարացված՝ մեղադրանքների չապացուցման պատճառով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 251: Թարգմանություն ռուսերենից:

47 Սրանք դատական գործի բնագրային տվյալներն են:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Համազասպ Սրվանձտյանցի դատական գործը*

ՀՅ Դաշնակցության նշանավոր գործիչ Համազասպ Սրվանձտյանցի հերոսական էջերով լի կենսագրության ամենավառ դրվագները կապված են 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվներում և 1918թ. Բաքվի հերոսամարտում նրա ունեցած ծանրակշիռ ներդրման հետ:

Համազասպ Խաչատուրի Սրվանձտյանցը ծնվել է 1873 թվականին Վանի մեծահամբավ Սանդենց (Սրվանձտյանց) գերդաստանում՝ ականավոր հոգևորական ու գիտնական-բանահավաք Գարեգին Սրվանձտյանցի եղբոր ընտանիքում: Դեռևս պատանեկության տարիներից Համազասպն ընդգրկվել է ազատագրական շարժման մեջ, իսկ հետագայում՝ 1890 թվականին, խուսափելով թուրքական իշխանությունների հետապնդումներից, մեկնել է Երևան և ապա գործունեության կենտրոն է ընտրել Արցախը:

Առաջին մեծամասշտաբ մարտական մկրտությունը Համազասպը ստացել է 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ՝ թե՛ իր անմիջական մասնակցությամբ և թե՛ հատկապես Ասկերանի, Խաչենի և Գանձակի շրջաններում հայոց ինքնապաշտպանությունը ղեկավարելով: Համազասպի կազմակերպչական և զորավարական տաղանդը փայլատակեց հատկապես Ասկերանում: Առանց չափազանցության կարելի է փաստել, որ միայն Ասկերանի կիրճը փակած Համազասպի հմուտ մարտավարության շնորհիվ էր, որ 1905-ի ամռանը հնարավոր եղավ պահպանել ուժերի հաշվեկշիռը՝ տափաստաններից Աղդամում կենտրոնացող և այնտեղից էլ հեղեղի նման Ղարաբաղի խորքերը շտապող թաթարական գերակշիռ ուժերի դեմ: Համազասպի հմտորեն մշակած մարտավարության արդյունքում՝ Շուշիից Ասկերանի միջով Աղդամ վերադարձող թաթար բեկերի ջոկատները 1905 թ. օգոստոսի 22-ին ծուղակն ընկան, որից փրկվեց 200-ից միայն 6-ը: Այս դեպքից հետո Մ. Վարանդյանի բնորոշմամբ՝ «Համազասպի հռչակը տարածուեցաւ Ղարաբաղի մէջ: Թուրք խուժաններու համար վանեցի կտրիճը ճշմարիտ հոգէառ սաթայէլ մըն էր: Անոնք կը յիշատակէին «Համազօնփ» անունը անէծքով ու զարհուրանքով: Իսկ հայ աշխատաւոր ժողովուրդը կերգէր խանդավառ իր «Համազանցը պանծալի...»»[1]:

Սակայն 1905թ. ամռան ու աշնան ամիսներին Ղարաբաղի լեռնային հատվածում ձեռք բերված հաղթանակներից հետո էլ Գանձակի նահանգի դրությունը խիստ վտանգավոր էր: Դրաստամատ Կանայանի կողմից ահաբեկված Բաքվի նահանգապետ Նակաշիձեի քրոջ որդին՝ Գանձակի նահանգապետ Տակայշվիլին ժամանակավորապես հաշվի էր նստում հայերի ուժի հետ: Վարանդայի ու Դիզակի գավառների առանձին գյուղերում ուժերի հարաբերակցությունը փոխվել էր հօգուտ հայերի: Շուշիում պաշարված թաթարների համար խիստ ծանր վիճակ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 17. 06. 2010:

1 Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 339:

էր ստեղծվել, քանզի Մ. Վարանդյանի բնութագրմամբ՝ «Անդրկովկասի ոչ մէկ գաւառի մէջ հայ-թուրքական ընդհարումը այնքան կատաղի և արիւնահեղ եղաւ, ինչպէս Ղարաբաղում և անոր մայրաքաղաք Շուշիի մէջ»[2]:

Նման պայմաններում, 1905թ. նոյեմբերի 13–ից մինչև դեկտեմբերի 1–ը Թիֆլիսում տեղի ունեցած ՀՅԴ Կովկասյան շրջանային ժողովում «Ապառաժ»-ի (Ղարաբաղ) կենտրոնական կոմիտեության պատգամավոր Համազասպը բարձրացրեց Կովկասում կուսակցության ունեցած զենքի քանակությունն անբավարար լինելու հարցը և առաջադրեց մինչև 5 հազար հրացան ունենալու պահանջ[3]: Որոշվեց ժամանակավորապես վերականգնել «Փոթորիկ»-ի գործը, որի միջոցով «... ձեռք բերած գումարները յանձնուելու են «ֆոնդի» Մարմնին, միմիայն ընդհանուր զինման եւ ինքնապաշտպանութեան գործին յատկացնելու համար»[4]:

ՀՅԴ Կովկասյան շրջանային ժողովի աշխատանքները դեռևս շարունակվում էին, երբ 1905 թ. նոյեմբերի 18-ին սկսվեց Գանձակի հայության ջարդը: Նահանգապետ Տակայշվիլին համոզվելով, որ Ղարաբաղի լեռնային հատվածն ու Զանգեզուրը լավ են պաշտպանված, սադրանքի իրականացումը տեղափոխել էր Գանձակ: Այդ սադրանքի նպատակը Ղարաբաղի լեռնային հատվածում ու Զանգեզուրում հայերի ձեռք բերած հաղթանակները Գանձակ քաղաքում ու Դաշտային Ղարաբաղում պարտությունների վերածելու մտադրությունն էր: Ուստի, լքելով կովկասյան շրջանային ժողովը՝ Գանձակ վերադարձան Ա. Գյուլխանդանյանն ու Համազասպը, որոնցից առաջինը նշանակվեց Գանձակի զինվորական շտաբի ղեկավար, իսկ Համազասպին հանձնվեց ռազմական գործողությունների ընդհանուր ղեկավարումը: Այս ճակատում «Համազասպն ալ շարունակ դիրքէ դիրք թռչելով, հրահանգներ կուտար մեր շրջանապետներուն ու խմբապետներուն»[5]:

Չնայած այն հանգամանքին, որ Գանձակում և շրջակա գյուղերում թաթարները քանակական մեծ առավելություն ունեին և ստանում էին նաև ցարական վարչության քողարկված աջակցությունը, Բաքումից, Թիֆլիսից և այլ վայրերից ժամանած ջոկատների և տեղական ուժերի մտածված գործողությունների հետևանքով 1905 թ. դեկտեմբերի, 1906 թ. հունվարի ընթացքում հաջողվեց մի շարք ջախջախիչ հարվածներ հասցնել հակառակորդին: Համազասպի հրահանգով ավերվեցին ավազակաբների վերածված Թոփալ-Հասանլու, Մոլլա-Ջալլու, Սոգյութլու և այլ խոշոր բնակավայրերը: Դրանից հետո՝ 1906 թ. փետրվարին կայացած ՀՅԴ Զինվորական խորհրդակցությունը որոշեց. «... նախայարձակ լինել եւ ջնջել այն բոլոր որջերը, լինեն դրանք մեծ կամ փոքր, որոնք աւազակային կենտրոններ էին: Բացի այդ, անհրաժեշտ համարուեց վերացնել խոչընդոտ հանդիսացող այն թաթարական գիւղերը, որոնք խանգարում էին Գանձակից Շուշի, Շուշուց՝ Գորիս եւ Նոր Բայազիտից՝ Գորիս հաղորդակցութեան»[6]:

Արևելահայության ֆիզիկական գոյությունը պաշտպանելու գործում նշանակալի ներդրում ունեցած Համազասպ Սրվանձտյանցը հայ-թաթարական կռիվների շրջանից արդեն հայտնվել էր ցարական Օխրանայի ուշադրության կենտրոնում, ուստի բնական է, որ նա զերծ չմնաց ՀՅԴ գործիչների զանգվածային

2 Նույն տեղում, էջ 321:
3 Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հտ. բ., էջ 237:
4 Նույն տեղում, էջ 240:
5 Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 349:
6 Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հտ. բ., էջ 251:

ձերբակալություններից: 1908 թ. Համազասպը ձերբակալվեց Գանձակի ոստիկանական մարմինների կողմից, իսկ 1909 թ. մարտի 13-ապրիլի 20-ի որոշմամբ որպես ՀՅԴ «Ահաբեկիչ-Մարմնի» ահաբեկչական խորհրդի անդամ՝ վերջնականապես կալանավորվեց: Դաշնակցական լինելուց փաստից բացի՝ նա մեղադրվել է որպես «Շուշիի և Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեներին կից ահաբեկիչների ղեկավար»: Համազասպը հարցաքննությունների ժամանակ իրեն մեղավոր չի ճանաչել: Ավելին, նա ըստ ամենայնի պաշտպանել է նաև իր գործում հիշատակվող գործիչներին (Խանասորի Վարդան, Կորյուն վարդապետ), ձգտելով նրանց ևս զերծ պահել դատական հետապնդումներից: Արդյունքում՝ Համազասպ Սրվանձտյանցը դատապարտվեց մահապատժի, սակայն Գևորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսի միջնորդությամբ վճիռը փոխարինվեց Սիբիրում 15 տարվա աքսորով: 1913 թ. Համազասպը փախավ աքսորից, անցավ Եվրոպա, ապա՝ Կ. Պոլիս:

Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում Համազասպը 3-րդ հայկական կամավորական ջոկատի հրամանատարն էր: Նա մասնակցել է բազմաթիվ մարտերի, վճռորոշ դեր խաղացել Բասենի և Ալաշկերտի շրջանների հայության փրկության և Արևելյան Հայաստան գաղթեցման գործում: 1915 թ. մայիսին նրա ջոկատն առաջիններից մեկը մտավ ազատագրված Վան, հետո մարտնչեց Բիթլիսի և Խիզանի շրջաններում: 1917 թ. փետրվարին Ալաշկերտի շրջանում ղեկավարել է ժողովրդական աշխարհազորի ջոկատը: 1918 թ. ակտիվորեն մասնակցել է Նուրի փաշայի ռոմակներից Բաքվի հայության ինքնապաշտպանությանը, եղել է 3500 զինվորներից բաղկացած բրիգադի հրամանատար:

Հայաստանի առաջին Հանրապետության օրոք Համազասպը Նոր Բայազետի զորախմբի հրամանատարն էր: Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1921 թ. փետրվարի 18-ի նախօրեին, Համազասպ Սրվանձտյանցը կացնահարվել է Երևանի բանտում:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The Lawsuit of Garegin Srvandztyants

Avag A.Harutyunyan

ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄ

1909թ. մարտի 13-ից մինչեւ ապրիլի 20-ը Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի.

Բ. ԱՀԱԲԵԿԻՉ-ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ.

106. Համազասպ Սուրվասյանց[7] (կուսակցական մականունը «խմբապետ Համազասպ», «հայոց իշխան Համազասպ») – [ՀՅԴ] կուսակցության 1905թ. նոյեմբերի 13-30-ի շրջանային ժողովի որոշումներից երևում է, որ նա որպես [ՀՅԴ] Շուշիի կենտրոնական կոմիտեի պատգամավոր՝ «խմբապետ Համազասպ» անունով, ներկա է եղել այդ ժողովին: Նա մատնանշել է, որ իր տրամադրության տակ փամփուշտներ և դրամ չկա, և որ իր շրջանի համար անհրաժեշտ է մինչև 600.000 փամփուշտ և 5.000 հրացան, իսկ ծախսերի համար՝ ոչ պակաս, քան 50.000 ռուբլի: Ինչպես երևում է կուսակցության բյուրոյի թղթերից, նա անդամակցել է Շուշիի կենտրոնական կոմիտեի Ջևանշիրի[8] կոմիտեին, և 1906թ. օգոստոսի 1-ին որպես նշյալ կոմիտեի անդամ կուսակցության բյուրոյին գրած նամակում խնդրել է «Հովսեփ[9]» անունով [ՀՅԴ] անդամի կողմից իրեն զրպարտելու առթիվ միջնորդական դատարան նշանակել: Նույն թվին, ինչպես նշված է նույն բյուրոյի մեկ այլ փաստաթղթում, նա եղել է [ՀՅԴ] Ելիզավետպոլի[10] կենտրոնական կոմիտեի գծով Կորյուն վարդապետի[11] աշխատակիցը և արդեն անվանվել է «հայոց իշխան Համազասպ»: Նա գլխավորապես եղել է Շուշիի և Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեներին կից ահաբեկիչների ղեկավարը, և 1907թ. նրա ղեկավարությամբ ու անձնական մասնակցությամբ Կրասնովոդսկում իրականացվել է ահաբեկչություն Մուշեղ Օհանյանի[12] նկատմամբ, ով մերկացրել էր «Դաշնակցության» նոր կուսակցության[13] գործունեությունը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 334-335:
Թարգմանություն ռուսերենից:

Վերոշարադրյալի հիման վրա և հաշվի առնելով, որ Համազասպ Սերվոսյանցը միանգամայն մերկացվում է [ՀՅԴ-ին մասնակցության գործով], որ Համազասպ Սերվոսյանցը դրանից զատ մեղադրվում է սպանությունների կատարման գործում սադրանքի և մեղսակցության համար, այսինքն՝ Պատժի մասին կանոնադրության 13-րդ, 120-րդ, 1453-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններում, Որոշեցի. Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածի հիման վրա նրան որպես մեղադրյալի կալանավորել:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 342-344:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեղադրյալ Համազասպ Սուրվասյանցի՝ համաձայն Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի 1909 թ. մայիսի 30-ի թ. 1209 պահանջի:

1909 թ. հունիսի 3: Հարցաքննության վայր–Ելիզավետպոլի բանտ: Ելիզավետպոլի օկրուգային դատարանի Դատական Քննիչի

7 Այսուհետ Համազասպի իսկական ազգանվան բոլոր աղավաղումները դատական գործից են:
8 Ջևանշիր - գավառ Գանձակի նահանգում:
9 Անձը պարզել չհաջողվեց:
10 Գանձակ:
11 Կորյուն վարդապետ Սահակյանը 1905-1906թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ կարևոր դեր է կատարել Գանձակի գավառում, լիժինյան գործով մինչև 1917թ. մայիսը դատապարտվել է աքսորի Իրկուտսկի մարզ:
12 Մուշեղ Օհանյանը խմբապետ Միհրանի աջակիցներից էր:
13 Նկատի ունի «Կովկասյան նախագծով» ՀՅԴ որդեգրած սոցիալիստական քաղաքականությունը:

պաշտոնակատար Սոլովյովը Քրեական դատավարության կանոնադրության 403-407-րդ և 1037-րդ հոդվածներում նշված կանոնների պահպանմամբ որպես մեղադրյալի հարցաքննեց ներքոանվանյալին, ով իրեն ներկայացված հարցերին հետևյալ ցուցմունքը տվեց.

Իմ անուն, հայրանուն, ազգանուն–Համազասպ Խաչատուրի Սիրվասյան; հանցանք կատարելու ժամանակ տարիքը–36 տարեկան; ծննդյան վայրը և մկրտությունը–ք.Վան, Թուրքիայում; գրանցման վայրը – ք.Երևանի քաղքենի; մշտական բնակության վայրը – Շուշի, Ելիզավետպոլի նահանգ; ծնունդը – օրինական; կոչումը – հարկատու; ազգությունը – հայ; կրոնը–հայ-գրիգորյան; ինչպիսի կրթություն է ստացել – ծխական դպրոց Թուրքիայում; զբաղմունքը – ժամագործ վարպետ և ոսկերիչ; գույքային ապահովվածության աստիճանը – անձնական աշխատանք; ընտանեկան հարաբերությունները – ամուսնացած, երկու անչափահաս երեխաներս ապրում են իմ հետ; քննության տակ լինելը կամ նախկին դատվածությունը – դատապարտված բանտում, հատուկ իրավունքների զրկմամբ, պատիժը կրում եմ Կովկասյան ռազմաօկրուգային դատարանի վճռով; հատուկ նշաններ – չկան; մեղադրյալն արդյոք բացատրվում է ռուսերեն – վատ, բացատրվում է հայերեն:

Ապա, ըստ մեղադրանքի ներկայացված հարցերին, մեղադրյալը պարզաբանեց:

Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում այն բանում, որ պատկանել եմ 1905-1908 թվականներից Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության նպատակ էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի է ունեցել 1905-1908 թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ՝ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908 թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների[14] հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի[15] խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908 թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցավոր նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ [է կատարել] հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության իրավասությունը, իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ, և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես՝ Համազասպ Սուրվասյանցս [սա կրկին քննիչի կողմից

14 Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:
15 Ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

ներկայացված մեղադրանքի տեքստն է], անդամակցելով նշյալ կուսակցությանը և նրա Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեին, Կորյուն վարդապետի հետ ղեկավարել եմ կոմիտեի բոլոր գործերը, կրելով «հայոց իշխան Համազասպ» մականունը, իսկ «խմբապետ Համազասպ» մականվան ներքո 1905թ. նոյեմբերի 13-30-ին գործուն մասնակցություն եմ ունեցել կուսակցության շրջանային ժողովում, մատնանշելով հանուն ռուսական կառավարության դեմ պայքարի կուսակցության Ելիզավետպոլի շրջանի համար զենքի հայթայթման նպատակով ավելի քան 50.000 ռուբլու անհրաժեշտության վրա:

Որպես արդարացում պարզաբանեմ: Ես երբեք «Դաշնակցություն» կուսակցությանը չեմ պատկանել[16]: Երբ 1905-1906 թթ. հայերի և թաթարների միջև ընդհարումներ էին տեղի ունենում, ես որպես տեղական բարքերին ու թաթարերենին և հայերենին լավատեղյակ, հարգարժան հայ և թաթար անձանց խնդրանքով մեկնեցի Ջևանշիրի գավառ, որպեսզի երկու ազգերին խաղաղության մղեմ: 1905 թ. սեպտեմբերին ես տիֆով հիվանդացա և Ելիզավետպոլում բժիշկներ Ամիրխանովի և Զալիևի մոտ բուժվեցի, իսկ 1905 թ. նոյեմբերի 20-ին ընտանիքիս մոտ՝ Ելիզավետպոլ մեկնեցի: Չպատկանելով «Դաշնակցություն» կուսակցությանը՝ ես այդ կուսակցության ոչ մի ժողովի չէի կարող մասնակցել: Ես հետապնդելով իմ ժողովրդի շահերը՝ նույնիսկ հակադարձել եմ այդ կազմակերպության նպատակներին և թույլ չեմ տվել նրան հայ ժողովրդի շրջանում իր ազդեցությունը դրսևորել, ինչի համար այդ կուսակցության հետ թշնամանքի մեջ էի: Ծնունդով նույնպես Թուրքիայից՝ իմ դպրոցական ընկեր Կորյունի հետ ես բարեկամական հարաբերությունների մեջ էի: Նա նույնիսկ իմ երեխաների կնքահայրն է: Ես չգիտեի, որ նա հեղափոխական կուսակցության է պատկանել, սակայն տեսնում էի, որ մասնակցում է բարեգործական գործերի, օրինակ՝ աղքատներին հաց բաժանելով: Ես «հայոց իշխան Համազասպ» և «խմբապետ Համազասպ» մականուններ չեմ կրել և այդ անվանումներով ոչ մի հանցավոր կազմակերպության գործեր չեմ կառավարել: Ես գիտեմ, որ «Համազասպ» անուն ունեցող մի քանի անձինք կան, ովքեր հայ-թաթարական կոտորածի ժամանակ սպանությունների են մասնակցել և միգուցե այդ անձինք պատկանել են «Դաշնակցություն» կուսակցությանը: Հնարավոր է, դրա համար էլ ինձ շփոթում են այդ մարդկանց հետ: Որպես արդարացում ավելին բացատրել չեմ կարող: Ցուցմունքը տրվել է հայերեն: Թարգմանել է Ելիզավետպոլի օկրուգային դատարանին կից դատական կատարածու Ա. Մելիքովը:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 550-551:

Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 3

ՈՐՈՇՈՒՄ

1909 թ. հունիսի 3: Ելիզավետպոլի բանտ: Ելիզավետպոլի օկրուգային դատարանի Դատական Քննիչի պաշտոնակատար Սոլովյովը Քրեական դատավարության կանոնադրության 416-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա և Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի 1909թ. մայիսի 30-ի թ. 1209 առանձին պահանջի համաձայն՝ սույն թվին հարցաքննելով ըստ Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածի որպես մեղադրյալ Համազասպ Սուրվասյանցին, ՈՐՈՇԵՑ. Երևանի քաղաքենի Համազասպ Խաչատուրի Սուրվասյանցի պատժի միջոց նշանակել կալանավորումը Ելիզավետպոլի բանտում, ինչի մասին և հայտարարել նրան:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 551:

Թարգմանություն ռուսերենից:

16 Այստեղ ներկայացված է միայն Համազասպին վերաբերող հատվածը:

ԹԻՎ 4
ԶՆՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1909 թ. օգոստոսի 2: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Նովոչերկասկի Դատական պալատի Դատախազի տեղակալի և ներքուստորագրյալ ընթերակաների ներկայությամբ իրականացրեց Քրեական կանոնադրության 126-րդ հոդվածով նախատեսված հանցանքներում մեղադրվող Ելիզավետպոլի հայոց թեմական առաջնորդ Կորյուն վարդապետի մասին Կովկասյան օկրուգային դատարանի Զինվորական Դատախազի ուղարկած՝ Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի օգնականի կատարած հետաքննության գործի զննումը: Ընդ որում, զննմամբ պարզվեց հետևյալը: Այս գործը սկսվել է 1907 թ. սեպտեմբերի 12-ին և ավարտվել 1908 թ. փետրվարի 11-ին: Նրանում ընդամենը կա 209 թերթ:

Համազասպ Խաչատուրի Սերվաստյանց – որոշակի բնակավայր չունի:

Ինձ ներկայացված հարցերին պատասխանում եմ: 1905 թ. օգոստոսին Շուշի քաղաքում հայ-թաթարական ընդհարումից հետո՝ ի թիվս այլ հարգարժան հայերի, բնակչության կողմից ես սկզբում ընտրվեցի հաշտեցման, ապա ինքնապաշտպանության հանձնաժողովի անդամ: Ինքնապաշտպանության այդպիսի հանձնաժողովները, ստեղծված մասամբ՝ 1905 թ. վերջին, մասամբ՝ 1906 թ. սկզբին, Ելիզավետպոլի ողջ նահանգում, գերազանցապես նրա խոշոր կենտրոններում, ղեկավարում էին թաթարների հարձակումներից հայ բնակչության ինքնապաշտպանության ուղղությամբ գործունեությունը: Շուշիի ինքնապաշտպանության հանձնաժողովն ինձ ուղարկել էր ղեկավարելու Խաչենի ինքնապաշտպանությունը: 1906 թ. նոյեմբերին, երբ անկարգությունները, այսինքն՝ ընդհարումները դադարեցին, ես մեկնեցի Բաքու, քանի որ Ելիզավետպոլի նահանգում մնալն ինձ համար համարում էի վտանգավոր, ի տես այն բանի, որ ինձ վրա չարացած մահմեդականները որոշել էին ինձ սպանել: Անցնելով Ելիզավետպոլի միջով՝ ես կանգ առա Կորյուն վարդապետի մոտ, ում ես լավ եմ ճանաչում մանկուց՝ դեռևս Թուրքիայից, [ում մոտ թողել էի] իմ երկու մաուզեր ատրճանակները և մեկ «նագանը»: Այդ զենքերն ինձ չէին պատկանում, այլ ինձ հետ գնացող երեք երիտասարդ հայերի: Վերջիններս վախենալով զենքը ձեռքին ձերբակալվելուց՝ ինձ խնդրեցին իրենց զենքը պահպանության համար տեղավորել որևէ տեղ: Ես նրանց Կորյունին մատնանշեցի, ում անձամբ փոխանցեցի այդ երիտասարդներիի ցանկությունը:

Բաքվում այդ ժամանակ զենք ձեռք բերելը դժվար էր: Երիտասարդները ցանկանում էին այնտեղի հարուստների մոտ որպես պահակ և թիկնապահ ծառայության անցնել: Նրանք ինձ խնդրեցին Կորյունին իրենց հանձնած զենքը հետ ստանալու հարցում աջակցել: Ես Կորյունին նամակ գրեցի և հանձնեցի այդ երիտասարդներից Արտեմ Պետրոսյանցին, ում ես միայն ազգանունով եմ ճանաչում: Ձեր կողմից ինձ ներկայացված նամակը գրված է իմ ձեռքով և իմ կողմից փոխանցված է նշյալ Պետրոսյանցին՝ Կորյունից նրան պահպանության հանձնված զենքը հետ ստանալու համար: Ինձ հայտնի է, որ Կորյուն վարդապետը Ելիզավետպոլի ինքնապաշտպանության հանձնաժողովի ղեկավարն էր, սակայն այդ հանձնաժողովում նրա գործունեության մասին ես ոչինչ չգիտեմ: Վերոնշյալ զենքը նրան պահպանության էր հանձնված որպես իմ լավ ծանոթի, այլ ոչ թե՝ որպես ինքնապաշտպանության հանձնաժողովի նախագահի: Այն մասին, որ ինքնապաշտպանության հանձնաժողովները ենթարկվել են հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությանը՝ ես միայն թերթերից գիտեի: Այդ հանգամանքի մասին 1906 թ. վերջին և 1907 թ. սկզբին «Մշակ» թերթից իմացա: «Դաշնակցություն» կուսակցությանը Կորյունի պատկանելության մասին ինձ ոչինչ հայտնի չէ, սակայն կարծում եմ, որ նա այդ կուսակցությանը

չի պատկանել[17]: Վերադարձրել է իմ գրությամբ զենքը Կորյունը, թե՞ ոչ – ինձ անհայտ է: Ով էր գտնվում Ելիզավետպոլի ինքնապաշտպանության հանձնաժողովի կազմում՝ ես չգիտեմ, և այդ առթիվ ինձ ոչինչ հայտնի չէ: Հավելեմ, որ Շուշի քաղաքում բնակչության կողմից հաշտեցման հանձնաժողովի կազմում ես 1905թ. հունիսին ընտրվեցի, իսկ ինքնապաշտպանության հանձնաժողովի կազմում ինձ ընտրեցին հայ-թաթարական կոտորածից հետո՝ 1905թ. օգոստոսին: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Ներկա արձանագրությունն ինձ ընթերցված է:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 653-654:

Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 5
ԶՆՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1909 թ., օգոստոսի 7-10: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Նովոչերկասկի Դատական պալատի Դատախազի տեղակալի և ներքոստորագրյալ ընթերակաների ներկայությամբ իրականացրեց Ելիզավետպոլ քաղաքում «Երևան քաղաքի բնակիչ Համազասպ Խաչատուրով Սերվոնասյանցի մասին» ժամանակավոր զինվորական դատարանի գործի զննումը:

Ըստ այդմ, զննմամբ պարզվեց:

155 թերթ պարունակող այդ գործը սկսվել է 1908թ. ապրիլի 20-ին:

Այդ գործի 4-րդ թերթում կա հետևյալ բովանդակությամբ մեղադրական ակտը.

«Երևան քաղաքի բնակիչ Համազասպ Խաչատուրով Սերվոնասյանցի մասին գործով: 1906 թ. հունիսի 19-ին ատրճանակներով և նորագույն համակարգի զենքերով զինված մի քանի հարյուր հայեր՝ ղեկավար ունենալով մեկ հայի, Քևային-Քայա, Քուշնազար և Նարիշտար վայրերում նախապես սկսեցին գնդակոծել շիխովենդցիների[18] թաթարական քոչատեղիները՝ սպանելով մեկ և վիրավորելով մի քանի թաթարի, ապա երբ քոչվորները փախան, վրաններից գողացան նրանց գույքը և քշեցին նրանց անասունները: Այս դեպքը հետաքննություն և նախաքննություն կատարելու առիթ ծառայեց, ընդ որում պարզվեց հետևյալը: 1906 թ. հունիսի 19-ի առավոտյան քոչուն-ամիլյարցի և նարիշտարցի՝ շիխովենդցիների թաթարական քոչատեղիների վրա Էյլան-Թայէթիում, Քևային-Քայա վայրի մոտ, հարձակվել են երեք խմբերով, ատրճանակներով և նորագույն համակարգի զենքերով զինված մոտ երեք հարյուր հեծյալ և հետիոտն հայեր, ունենալով կարմիր դրոշներ, շեփորահարներ և թմբուկներ յուրաքանչյուր խմբում, և մեկ ընդհանուր առաջնորդով՝ Երևանի բնակիչ Համազասպ Սերվոնասյանց: Մոտենալով այդ քոչատեղիներին՝ հայերը նախապես սկսեցին դրանք համազարկով գնդակոծել, ապա հետո, երբ թաթար քոչվորներն իրենց ընտանիքներով վախից ցրվեցին, թաքնվելով մերձակա սարերի ժայռերում, նրանց գույքը վրաններից գողացան և շատ անասուններ փախցրին: Հայերի կրակով սպանվեց Քոչուն-Ամիլյար գյուղի մի բնակիչ, վիրավորվեց Նարիշտար գյուղից մեկը և Նայիբլի գյուղից երկուսը: Դրանից զատ գերվեց մեկը: Հայերը թալանելով Նարիշտարի և Շիխովենդի քոչատեղիները՝ սկսեցին քշել անասուններին: Զինված քութուրլինցիների հետ փոխհրաձգության ժամանակ սպանվել է վերոհիշյալ խմբերից մեկի առաջնորդը, շեփորահարը և ևս մեկ հայ, սակայն շուտով հայերը թալանված գույքով և անասուններով ուղղվեցին Նարիշտարի ձմեռատեղի, ապա հետապնդումից թաքնվեցին անտառում: Այդ հարձակման ժամանակ հայերի կողմից փախցվեց 829 գլուխ եղջերավոր անասուն, 400 ոչխար, 22 ձի, և վրաններից տարան տարբեր տնային իրեր՝ տուժողների գնահատմամբ շուրջ 5.000 ռուբլի գումար և փողով 70.000 ռուբլու, իսկ ընդհանուր առմամբ

17 Իրականում Կորյուն վարդապետն անդամակցել է ՀՅԴ-ին, իսկ Համազասպն ուղղակի փորձում էր նրան զերծ պահել դատական հետապնդումներից:
18 Թաթարական քոչվոր ցեղ:

նույն գնահատմամբ՝ 43.377 ռուբլի արժեքի[19]: Բազմաթիվ վկաների [թաթարներ և ռուս ոստիկաններ] ցուցմունքների համաձայն՝ հայերի առաջնորդը եղել է հանրահայտ Համազասպը, ում ճանաչել են Համազասպ Խաչատուրով Սերվանսաստյանի (նույն ինքը Սերվոնասյանց) լուսանկարչական քարտով, ով հայկական դիրքերից ոտքի է կանգնել և ցանկանալով վախ սփռել թաթարների վրա՝ նրանց ասել է. «Ինչ եք քիթներդ խոթում այստեղ, չեք տեսնում, որ այս դիրքը զբաղեցված է իմ՝ Համազասպի կողմից»: Նա ունեցել է մաուզեր համակարգի զենք և փամփուշտներով բաճկոն[20]: Նա հարձակումից առաջ ժամանել է թաթարների գյուղ և բնակիչներին խորհուրդ տվել հայերի հետ չվիճել և նրանց վրա չհարձակվել: Որպես մեղադրյալ հարցաքննված Համազասպ Սերվոնասյանցն իրեն մեղավոր չի ճանաչել և բացատրել է, որ 1905 թ. նա ոչ մի ավազակախումբ չի կազմակերպել, իսկ հայ-թաթարական անկարգությունների ժամանակ Շուշիում կազմակերպել է ինքնապաշտպանություն: Հարձակման օրը՝ հունիսի 19-ին, գտնվել է Շուշիի գավառի Խաչեն գյուղում, որտեղ թաթարների հետ խաղաղ բանակցություններ է վարել: Նշյալ մեղադրյալի վրա գործում գրավոր տվյալներ չկա:

Վերոշարադրյալի հիման վրա Երևան քաղաքի բնակիչ Համազասպ Սերվանոսյանցը (նույն ինքը Սերվանաստյան) մեղադրվում է.

1. Այն բանում, որ 1905 թ. ռազմական դրության մեջ գտնվող Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառում սադրանքի կատարման և թաթարներից գույքի բացահայտ գողացման նպատակով կազմակերպել է նորագույն զենքերով և ատրճանակներով զինված մի քանի հետևակ և հեծյալ հայերից կազմված ավազակախումբ, ինչը նախատեսված է Պատժի մասին կանոնադրության 13-րդ և 924-րդ հոդվածներով:

2. Այն բանում, որ ի կատարումն վերոհիշյալ ավազակախմբի նպատակադրումների՝ նա 1906 թ. հունիսի 19-ի առավոտյան Ջևանշիրի գավառի Քևային-Քայա և Քոշուն-Ամիլյար վայրերում բացահայտ հարձակվել է թաթարական քոչատեղիների վրա, շրջապատել նրանց և քոչվորների վրա սարսափ սփռելու և նրանց գույքին հեշտ տիրանալու նպատակով նախապես ռմբակոծելով այդ քոչատեղիները՝ սպանել է մի թաթարի, վիրավորել երեքի, ապա գերել մեկի, սեփականացման նպատակով քոչվորներին պատկանող գույքից բացահայտ ուժով զավթել 829 գլուխ եղջերավոր անասուն, 400 ոչխար, 22 ձի, 70.000 ռուբլի փող և տարբեր տնային իրեր՝ ընդհանուր առմամբ 43.377 ռուբլի գումարի, որից հետո գողոնով թաքնվել է, ինչը նախատեսված է նույն կանոնադրության 1627-րդ, 1629-րդ, 1632-րդ, 1633-րդ, 1634-րդ հոդվածներով:

Երեք նշյալ զանցանքների համար Երևան քաղաքի բնակիչ Համազասպ Խաչատուրով Սերվանոսյանցը (նույն ինքը Սերվանաստյան) 1892 թ. հրատարակված օրենքների հավաքածուի 2-րդ հատորի 23-րդ հոդվածի 19-րդ հավելվածի հիման վրա Ելիզավետպոլի ժամանակավոր նահանգապետի կողմից հանձնվել է Կովկասյան ռազմական օկրուգային դատարանին: Մեղադրական ակտը կազմվել է 1907 թ. հոկտեմբերի 20-ին Ելիզավետպոլ քաղաքում: Ռազմական Դատախազի օգնական կապիտան Սոկոլսկի»:

Այդ գործի 125-րդ թերթում կա Ելիզավետպոլ քաղաքում Ժամանակավոր Ռազմական դատարանի 1909թ. փետրվարի 23-ի վճիռը: Այդ վճռից երևում է, որ Երևան քաղաքի բնակիչ Համազասպ Սերվոնասյանցը (նույն ինքը Սերվոնաստյան) Պատժի մասին կանոնադրության 269-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն մեկ տարի ժամկետով դատապարտվել է ուղղիչ կալանավորման բաժանմունք հանձնման՝ անձնապես ըստ սեփականության կամ կոչման նրան շնորհված բոլոր հատուկ իրավունքներից ու արտոնություններից զրկմամբ:

Սույն գործի 50-րդ էջում առկա է մեղադրյալ Համազասպ Խաչատուրով Սերվա-

19 Դատական մարմիններն անհասկանալի և ակնհայտորեն սխալ հաշվարկ են կատարել:
20 Նկատի ունի այսպես կոչված՝ «պատրոնդաշը»:

նաստյանի հարցաքննության արձանագրությունը, որից պարզվում է, որ մեղադրյալ Սերվանաստյանը իրեն մեղավոր չի ճանաչել:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թ. 668-669, 675:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 6
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. հոկտեմբերի 25: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների հիման վրա որպես մեղադրյալ հարցաքննեց ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

Համազասպ Խաչատուրով Սուրվասյանց – լրացուցիչ ցուցմունք եմ տալիս:

«Հարգարժան Սուրբ Հայր»-ի անունով հղված-ընթերցված հայերեն նամակում՝ գտնված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, Թիֆլիսում 1906 թ. հոկտեմբերի 25-ին, Կորյունի շտաբի կազմում «Դաշնակցություն» կուսակցությունից մտած անձանց ցանկում նշվում է «իշխան Համազասպ» անունով մեկը: Հայտարարում եմ, որ նման նամակ ինձ վերաբերել չի կարող, քանի որ ես այդպիսի մականուն երբեք չեմ կրել: Ձեր կողմից ներկայացված հայերեն նամակում՝ գտնված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, վարդապետ Կորյունի մոտ Ելիզավետպոլ քաղաքում՝ 1907 թ. օգոստոսին վարդապետ Կորյուն Սահակյանի անունով «Քո Համազասպ» ստորագրությամբ, նագան ատրճանակ ուղարկելու մասին – իմ կողմից չի գրված, և այդ առթիվ ես հայտարարում եմ, որ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, իրենց ընտանիքների պաշտպանության համար Բաքվից եկած Վանք և Դավշանլու գյուղերում գտնվող հայերը բերել էին Բաքվի իրենց տերերին պատկանող ատրճանակները: Այդ ընդհարումների ավարտից հետո այդ անձինք պետք է գնային Բաքու՝ իրենց ծառայության վայրերը: Նրանք էին Արտեմ Բոգդանի Երեմյանը և Լևոն Մելիք-Նուբարյանը[21]: Նրանք պետք է իրենց հետ զենքերը վերցնեին, որպեսզի վերադարձնեին տերերին, սակայն ռազմական դրության պատճառով նրանք դա չկարողացան անել: Նրանք ցանկանում էին զենքը որևէ վստահելի անձի մոտ պահպանության թողնել և այդ հարցով ինձ դիմեցին, քանզի ես Կորյուն վարդապետի համաքաղաքացին էի: Երկուսս էլ Վան քաղաքից էինք, դրանից զատ՝ Կորյուն վարդապետն իմ քավորն է: Ես նախազգուշացրի Կորյուն վարդապետին, որ նրան պահպանության համար նշյալ անձինք ատրճանակներ կբերեն, ինչին նա համաձայնեց: Այդ անձինք զենքը Կորյուն վարդապետի մոտ տարան: Որոշ ժամանակ անց Երեմյանցն այդ ատրճանակները վերցնելու համար դիմեց ինձ: Ես նշյալ գրությունը Կորյուն վարդապետին գրեցի: Բանվոր Երեմյանցը տարավ այն և ստացավ նրա մոտ պահպանվող ատրճանակները, որոնք Երեմյանցին Բաքվում նենգաշորթներից պաշտպանվելու համար էին անհրաժեշտ[22]: Ինձ ներկայացված և իմ կողմից ընթերցված հայերեն նամակը՝ գտնված ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, նույն Եդիգարովի[23] մոտ՝ «Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի ինքնապաշտպանության մարմին» ստորագրությամբ, 1906 թ. օգոստոսի 1-ին՝ Ջևանշիրից «Ընկերներ»-ի անունով – իմ կողմից չի գրված և ինձ հետ ոչ մի առնչություն չունի: Այդ նամակի առթիվ ես դատարանում բացատրություն կտամ, ընդ որում «Համազասպ» ստորագրությունն այդ նամակում կեղծված է:

21 Ակնհայտ է, որ նշյալ անձինք Բաքվի ՀՅԴ կենտրոնական կոմիտեից ուղարկվել էին ինքնապաշտպանությանը մասնակցելու համար: Համազասպն այս անձանց դատական հետապնդումից զերծ պահելու համար նրանց գործունեությունն անձնական հենքի վրա է ներկայացնում:
22 Ավելի ճիշտ՝ հայության ինքնապաշտպանության համար:
23 Սարգիս (Սերգեյ) Փաշոյի (Պողոսի) Եդիգարյանը կուսակցական գործիչ էր, զբաղվում էր Թիֆլիսի «Հերմես» տպարանում ՀՅԴ գրականություն հրատարակելով: Ձերբակալվել է լիժինյան գործով:

Ձեր կողմից ներկայացված հայերեն հինգ նամակները՝ գտնված, ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք՝ Շուշի քաղաքում, Հակոբովների տանը, «Համազասպ» ստորագրությամբ, «Վարդանի»[24] անունով, իմ կողմից չեն գրված և ինձ հետ ոչ մի առնչություն չունեն: Վարդանի անձն ինձ հայտնի է, բայց նրա անուն-ազգանունը չգիտեմ[25]: Վարդանը Ղարաբաղի շրջանում թաթարներից հայերի ինքնապաշտպանության ղեկավարն էր:

Կարդացված է: Հավելում եմ: Խնդրում եմ ինձ տրամադրել «Դաշնակցություն» կուսակցությանն իմ պատկանելության մեղադրանքի գործի պատճենը:

Ստորագրություն – հայերեն:

Երդվյալ թարգմանիչ՝ Նադիրաձե

Դատական Քննիչ՝ Ն. Լիժին

Պալատի Դատախազի տեղակալ՝ Ակակով

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4214-4215:

Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 7

ՈՐՈՇՈՒՄ

1911 թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործով իր կատարած նախաքննությունը, ԳՏԱՎ.

Որ ներքոանվանյալ մեղադրյալները՝ սույն գործով ներկայացված Քրեական դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդվածների հիման վրա, նախաքննությամբ արել են հետևյալ հայտարարությունները.

30. Համազասպ Մերվոսյանց.

Հնարավորություն տալ մեկ անգամ էլ ծանոթանալ [իրեն] վերագրվող փաստաթղթերին և համեմատել թարգմանությունների հետ, որպեսզի տա սպառիչ բացատրություններ:

Մինչև քննչական նյութի և բնագիր փաստաթղթերի հետ ծանոթանալն ավելին հավելել չեմ կարող:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4460:

Թարգմանություն ռուսերենից:

Մեղադրյալ Համազասպ Մերվոսյանցի կողմից.

Վկաներ Միհրանի, Ալեքսանդր Միխայլովի (ըստ երևույթին՝ Միքայելյան) և Պեստիչի առթիվ կարող եմ հայտարարել, որ առաջին երկուսի առնչությամբ և՛ վարչակազմի, և՛ դատարանի[26] կողմից հաստատվել է, որ նրանք ենթագաշորթներ են:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4476:

Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 8

ՈՐՈՇՈՒՄ

1911 թ. փետրվարի 11-24: Քաղաք Նովոչերկասկ: Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը ԳՏԱՎ, որ ներքոանվանյալ մեղադրյալը Քրեական դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդվածների համաձայն՝ ներկայացված սույն գործի նախաքննությամբ, կատարել է հետևյալ հայտարարությունները.

XXXXXXXXV. Համազասպ Խաչատուրով Մերվոսյանց.

1. Կրկին ծանոթացնել քննչական նյութին:

2. Կրկին ծանոթացնել իրեն վերագրվող փաստաթղթերին և դրանք թարգմանությունների հետ համեմատել, որպեսզի հետագայում պարզաբանում տա:

---

24 Վարդան, Խանասորի Վարդան (Մեհրաբյան Սարգիս) – ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ: Ծնվել է Շուշիում: 1897 թ. Խանասորի արշավանքի ընդհանուր հրամանատար: 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ ղեկավարել է Արցախի հայության ինքնապաշտպանությունը: 1915 թ. ղեկավարել է Արարատյան գունդը: Մահացել է 1943 թ. Երևանում:

25 Վարդանին իրեն նվազ ծանոթ համարելով՝ Համազասպը ցանկացել է նրան ևս զերծ պահել դատական հետապնդումից:

26 Նկատի ունի ցարական դատարանը:

3. Ելիզավետպոլ քաղաքում Դատական Քննիչ Սոլովյովի կողմից 1909թ. հունիսին թարգմանչի միջոցով հարցաքննության ժամանակ Սերվոսյանցին հարց էր տրվել Ելիզավետպոլում 1905 թ. նոյեմբերի 18-30-ին «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովին նրա մասնակցության առնչությամբ, սակայն ընթերցման ժամանակ պարզվել է, որ այդ ժողովը տեղի է ունեցել Թիֆլիս քաղաքում: Ճիշտ այդպես՝ Դատական Քննիչ Սոլովյովի կողմից գրառված է, որ Սերվոսյանցը ասել է, թե դեմ է եղել «Դաշնակցություն» կուսակցությանը, բայց նա այդպիսի բան չի հայտարարել, քանզի Սերվոսյանցը դեմ չէր «Դաշնակցություն» կուսակցությանը, այլև նույնիսկ 1905 և 1906 թվերին հայ-թաթարական ընդհարումներում նրա դերը նկատի առնելով՝ կուսակցությանը վերաբերվել է մեծ հարգանքով:

4. Որպես հաստատում այն բանի, որ Դատական Քննիչ Սոլովյովը Սերվոսյանցին հարցաքննել է հայերեն լեզվին անծանոթ թարգմանչի միջոցով՝ ինքը խնդրում է այն բանի վրա ուշադրություն դարձնել, որ թարգմանչի թելադրանքի ներքո իր կողմից գրված նամակը հայերեն նամակի բնագիր տեքստին չի համապատասխանում:

5. Քանի որ մեղադրման նպատակներով Դատական Քննիչի կողմից նպատակահարմար է գտնվել հայ ժողովրդի և հայ եկեղեցու բնութագրումն ընդհանրացնել Էջմիածնի հայկական սինոդի նախկին դատախազ Ֆրենկելի հաղորդման հիման վրա՝ Սերվոսյանցը խնդրում է հայ ժողովրդի բնութագրման համար սույն գործին կցել Կովկասի փոխարքայի հետ արքայազն Նապոլեոնի ողջ գրագրությունը:

6. Որպես հաստատում այն բանի, որ թաթարները զինված էին ամենից կատարելագործված զենքով, իսկ հայերը կառավարության վրա հույս դնելով՝ նման լուրջ պայքարի պատրաստ չէին և վատ էին զինված, որ մարտական փամփուշտները, որոնց հաշիվը Դատական Քննիչի կողմից հասցվում է տասնյակ հազարների՝ նպատակաուղղված էին թաթարների դեմ պայքարի համար, հայտարարում է հետևյալը: Շուշիի երկրորդ կոտորածի տաս օրերի ընթացքում հայերի կողմից ծախսվել է 310.000 փամփուշտ, և որ թաթարները՝ ինչպես հազար տարի առաջ, այնպես էլ այժմ, մնացել են նույն անկիրթ ազգը, և որ թաթարական խաժամուժին գազանությունների մեջ չի կարելի կասկածել՝ Սերվոսյանցը ներկա գործին կցելու համար կներկայացնի Ալիբեգովի «Արյունոտ օրեր Ելիզավետպոլում» գրքույկը[27]:

7. Որպես ապացույց այն բանի, որ բոլոր խորհրդակցությունները և ժողովները, որտեղ խոսվել է ինքնապաշտպանության տնտեսական հարցերի և կարիքների մասին, լեգալ էին, և որ 1905-1906թթ. հայ-թաթարական կոտորածների ժամանակահատվածում «Դաշնակցություն» կուսակցության գործունեությունը միանգամայն լեգալ էր, առաջարկում է. Ա. Կցել ներկա գործին հայ-թաթարական կոտորածների ժամանակ պետական-կառավարական անձանց և հայ ժողովրդի ներկայացուցիչների գրագրությունը; Բ. Ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ չնայած սոցիալ-դեմոկրատական կուսակցության[28] հակակառավարական ծրագիրը Կովկասի փոխարքային հայտնի լինելուն, Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը[29] հայ-թաթարական կոտորածի ծագման առթիվ դիմել էր սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչ Ռամիշվիլուն[30], և անկարգությունները կանխելու համար նրան 500 պետական բերդանկա[31] հանձնել: Ընդ որում, սոցիալ-դեմոկրատները թևքի վրա իրենց նշանով, դաշնակցականները՝ իրենց

27 Նկատի ունի հետևյալ գիրքը. Алибегов И. Елисаветопольские кровавые дни перед судом общества. Зарвавшиеся ‘‘публицист’’ и его общественные сподвижники.- Тифлис: К. П. Козловский, 1906, 181 с.

28 Նկատի ունի վրաց սոցիալ-դեմոկրատներին:

29 Վորոնցով-Դաշկով Իլլարիոն (1837, Պետերբուրգ–1916, Ալուպկա) - ռուս պետական գործիչ: 1905-1915 թթ. եղել է Կովկասի փոխարքա:

30 Նոյ Ռամիշվիլին հետագայում դարձավ անկախ Վրաստանի առաջին վարչապետը:

31 Հրացանի տեսակ:

կուսակցական նշանով – սպիտակ կտավի վրա, և այլն, քաղաքում զինված զբոսնում էին, և նրանց չէին ձերբակալում, իսկ առանց կուսակցական նշանների զինված անձանց զինվորներն անմիջապես ձերբակալում էին, և այդ ամենը տեղի էր ունենում փոխարքայի օգնականներ գեներալներ Շիրինկինի և Մալամայի աչքի առջև: Ապա, Ելիզավետպոլում 1905 թ. նոյեմբերի 28-ին՝ ինքնասպան զինվորի թաղման ծեսին, գերեզմանոցում ներկա էին սպաները և զինվորները[32] գեներալ Ֆլեյշերի գլխավորությամբ, զինվորական նվագախումբը, ում կողքով տանում էին «Դաշնակցության» դրոշը «Մահ կամ ազատություն» մակագրությամբ, և քայլում էին այդ կուսակցության 400 զինված զինվորներ: Այդ թաղման թափորը լուսանկարվել է, և լուսանկարը Սերվոսյանցը գործին կցելու համար կներկայացնի; Գ. Սույն գործին կցել հայ-թաթարական կոտորածների հարցի առթիվ 1906 թ. փետրվարին Կովկասի փոխարքայի պալատում նրա օգնական Մալամայի նախագահությամբ տեղի ունեցած համագումարի որոշումները, քանի որ նշյալ համագումարի բանաձևերում պարզաբանվում է «Դաշնակցության» մանրամասն դերը՝ որպես ոչ միայն ռուսական կառավարության ոչ ակտիվ հակառակորդի, այլ նույնիսկ՝ այն պարտականությունը կատարողի, որն ընկած էր ռուսական կառավարության վրա:

8. Թիֆլիսում 1905 թ. նոյեմբերի 13-30-ին գումարված շրջանային ժողովի առնչությամբ Սերվոսյանցը հավաստում է, որ ինչ-որ անհայտ անձի հետ եղել է ինչ-որ ժողովում, որտեղ գտնվել են հոգևորականներ, վաճառականներ, և որ Սերվոսյանցն այդ ժողովում ասել է այն ամենը, ինչ առկա է ներկա գործում գտնվող «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովի արձանագրության մեջ, սակայն նրան անհայտ էր, որ դա եղել է «Դաշնակցություն» կուսակցության նիստը, ընդ որում նա ներկա է եղել մինչև նոյեմբերի 16-ը, և ըստ նրա՝ այնտեղ ոչ մի հակակառավարական բան տեղի չի ունեցել և չի ասվել: 1905 թ նոյեմբերի 17-ին Սերվոսյանցը Չրելաևի և Արարատյանցի հետ մեկնել է Ելիզավետպոլ, և միջնորդում է իր այդ մեկնման մասին հարցաքննել Չրելաևին և Արարատյանցին:

9. Եդիգարովի մոտ գտնված «Համազասպ» ստորագրությամբ Ջևանշիրից 1906 թ. օգոստոսի 1-ի նամակը Սերվոսյանցի կողմից չի գրված, այլ միայն նրա կողմից ստորագրված է «Հանուն Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի ինքնապաշտպանության մարմնի, Համազասպ», այլ ոչ թե «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի կոմիտեի անդամ», ինչպես Սերվոսյանցն անվանվում է Դատական Քննիչի կողմից: Առավել ևս, որ Ջևանշիրի գավառում ոչ մի հեղափոխական կոմիտե գոյություն չի ունեցել, իսկ որպես նշյալ գավառում որևիցե հեղափոխական կոմիտեի լրիվ բացակայության հաստատում – հարցաքննել Ջանդիերիին, Պողոս Տեր-Սարգիսովին, Զախարբեկովին, Աբրահամ Ջալալովին, Աթաբեկ Ջալալովին և Բախշի Յուզբաշևին, որոնք նույնպես կապացուցեն, որ Համազասպ Սերվոսյանցը ոչ մի հեղափոխական գործի չի մասնակցել, այլ նրա ողջ գործունեությունը միայն ինքնապաշտպանությանն է նվիրված եղել:

10. Շուշիի պահեստում Համազասպ Սերվոսյանցի ստորագրությամբ գտնված նամակների առնչությամբ նա հայտարարում է, որ թեպետ իր կողմից այդպիսի նամակներ են գրվել, սակայն նա կազակների վրա հարձակվելու մտադրություն չի ունեցել, ինչպես պահանջում էր հայ ժողովուրդը[33], այլ միայն ցանկացել է կանխել նմանատիպ հարձակումը, և այդպիսի նամակ իր կողմից Գրիգոր Քալանթարովի միջոցով փոխանցվել է ինքնապաշտպանության գլխավոր պետ Վարդանին հանձնելու համար, ինչի առթիվ միջնորդում է Գրիգոր Քալանթարովին հարցաքննել:

11. Որ Եդիգարովի մոտ 12-13 չարդախլվեցիների ստորագրություններով գտնված նամակում Համազասպ Սերվոսյանցի

32 Նկատի ունի ցարական բանակի զինվորներին:
33 Փաստաթղթում բառացի այսպես է:

անունը հիշատակվում է նրա համար վիրավորական իմաստով՝ «իշխան Համազասպ» անվան տակ – հարցաքննել Չարդախլու գյուղի բնակիչներին առ այն, թե լսե՞լ է արդյոք նրանցից որևէ մեկը, որ Համազասպ Սերվոսյանցն իրեն երբևիցէ անվանած լինի «իշխան Համազասպ», ինչպես նաև որպես հաստատում այն բանի, որ այդ նամակը որպես անստորագիր՝ ոչ մի նշանակություն չունի, կցել զինվորական դատարանի կողմից կազմված Կորյուն վարդապետի մեղադրական գործին:

12. Վկաներ Միհրանի, Ալեքսանդր Միխայլովի (Ալեքսանդր Միքայելյանց), Եգորովի և Պեստիչի ցուցմունքների առթիվ [Հ. Սրվանձտյանցը] հայտարարում է, որ առաջին երկուսի առնչությամբ և՛ դատարանի և՛ վարչակազմի կողմից հաստատվել է, որ նրանք նենգադուլներ են, իսկ վերջին երկուսի ցուցմունքներն իրականությանը չեն համապատասխանում:

13. Հանձնել գործից պատճեններ:

14. Կատարել այն 240 փաստաթղթերի թարգմանությունը, որոնք թարգմանված չեն և որոնք միգուցե կարող են «Դաշնակցություն» կուսակցության մեջ իր չմասնակցությունը հաստատել, քանզի քննչական վարույթում ասված է, որ գտնված է 946, մինչդեռ թարգմանված է միայն 664 փաստաթուղթ:

15. Մինչև քննչական նյութի բնօրինակ փաստաթղթերի հետ նոր ծանոթացումը՝ հավելելու ոչ մի բան չունի:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4419-4421:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցի դիտողություններն այն մասին.

1. Որ Ելիզավետպոլ քաղաքում 1909 թ. հունիսին ներկա գործով Դատական Քննիչ Սոլովյովի կողմից թարգմանչի միջոցով հարցաքննության ժամանակ հարց է տրվել– մասնակցե՞լ է արդյոք մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցը 1905 թ. նոյեմբերի 18-30-ին Ելիզավետպոլ քաղաքում «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովին, սակայն քննչական նյութի ընթերցման ժամանակ պարզվել է, որ այդ ժողովը տեղի է ունեցել Թիֆլիսում:

2. Որ թարգմանիչը, ում միջոցով իրեն հարցաքննել է Դատական Քննիչ Սոլովյովը, բացարձակապես ծանոթ չէր հայերենին, քանի որ Սերվոսյանցի կողմից թարգմանչի թելադրման ներքո էր գրվել ձեռագիրը, որի տեքստը հայերեն բնագիր նամակի տեքստին չի համապատասխանում: Բացի դրանից, հարցաքննության ժամանակ Սերվոսյանցի կողմից Դատական Քննիչ Սոլովյովին իբր ասվել է, որ ինքը հեղափոխական գործունեության անընդունակ և անպատրաստ է, մասնավորապես «Դաշնակցություն» կուսակցությանը անդամակցելու համար, որին Սերվոսյանցը վերաբերվել է հարգանքով՝ ի տես 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումներում նրա դերակատարության, իսկ Դատական Քննիչ Սոլովյովի կողմից գրված է, որ իբր՝ Սերվոսյանցը դեմ էր «Դաշնակցություն» կուսակցությանը:

3. Որ թաթարները զինված էին ամենից նոր արտադրության զենքերով, իսկ հայերը պատրաստված չլինելով և կառավարության օգնությանը հուսալով՝ ոչ միայն թաթարների դեմ պայքարի պատրաստ չէին, այլև նույնիսկ վատ էին զինված:

4. Որ մեղադրման նպատակով քննության ընթացքում հարմար է գտնվել հայ ժողովրդի և հայ եկեղեցու բնութագիրը ներկայացնել նախկին դատախազ Ֆրենկելի հաղորդման հիման վրա, ինչի հետևանքով Սերվոսյանցը խնդրում է հայ ժողովրդի բնութագրման համար ներկա գործին կցել Կովկասի փոխարքայի հետ արքայազն Նապոլեոնի ողջ գրագրությունը:

5. Որ Եղիգարովի մոտ գտնված 1906 թ. օգոստոսի 1-ի Ջևանշիրից «Համազասպ» ստորագրությամբ նամակը գրել է Սերվոսյանցը, սակայն իր կողմից ստորագրված միայն բնագրի վրա կա այսպիսի ստորագրություն. «Հանուն Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի ինքնապաշտպանության մարմնի, Համազասպ», այլ ոչ թե «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի կոմիտեի անդամ», ինչպես անվանում է Դատական Քննիչը: Դրա համար

էլ որպես Ջևանշիրի գավառում երբևէ հեղափոխական կոմիտեի բացակայության և այդ գավառում որևէ մեկի կողմից հեղափոխական գործունեություն չդրսևորելու ապացույց, ինչպես նաև [որևէ] հեղափոխական կուսակցության մեջ մեղադրյալ Սերվոսյանցի չմասնակցելու առթիվ՝ նա միջնորդում է նշյալ վկաների հարցաքննության մասին:

6. Որ զենքի և ռումբերի Շուշիի պահեստում «Համազասպ» ստորագրությամբ գտնված նամակները Սերվոսյանցի կողմից Վարդանի անունով գրված են միայն կազակների վրա հարձակվելու՝ հայ ժողովդի պահանջների և ոչ թե հարձակում կատարելու՝ Սերվոսյանցի ցանկության առթիվ: Հարձակման կանխարգելման նպատակով Սերվոսյանցի կողմից այդպիսի նամակ Վարդանին որպես ինքնապաշտպանության ղեկավարի է գրվել: Այդ նամակը Վարդանին հանձնելու համար փոխանցվել է Գրիգոր Քալանթարովի միջոցով, ում և միջնորդում է այդ առթիվ հարցաքննել:

Սակայն մեղադրյալի այս բոլոր դիտողություններն իրականությանը չեն համապատասխանում, այլ միայն վկայում են իր ցուցմունքները ձևափոխելու նրա ընդունակության մասին՝ կախված այս կամ այն պայմանից, որոնք նա իր համար առավել ձեռնտու է համարում, որպեսզի ինչ-որ կերպ իրենից շեղի որևէ հեղափոխական կուսակցության գործունեությանը մասնակցելու մեղադրանքը՝ հղում անելով նմանաբնույթ գործերին իր անընդունակությունը, քանի որ.

Առաջին, 1909 թ. հունիսի 3-ին Դատական Քննիչ Սոլովյովի կողմից մեղադրյալ Սերվոսյանցի հարցաքննության արձանագրության մեջ նույնիսկ փոքր հիշատակում չկա, որ Քննիչի կողմից Սերվոսյանցին հարց տրված լինի, թե արդյո՞ք նա մասնակցել է «Դաշնակցություն» կուսակցության 1905 թ. նոյեմբերի 13-30-ի Ելիզավետպոլի շրջանային ժողովին, քանզի այդ արձանագրության մեջ նշված է. «Խմբապետ Համազասպը 1905թ նոյեմբերի 13-ից մինչև 30-ը գործուն մասնակցություն է ունեցել կուսակցության շրջանային ժողովին, մատնանշելով կուսակցության Ելիզավետպոլի շրջանի համար ավելի քան 50.000 ռուբլու անհրաժեշտության վրա...[34]»:

Երկրորդ, թարգմանիչը, ում միջոցով Դատական Քննիչ Սոլովյովը հարցաքննել է մեղադրյալ Սերվոսյանցին, Ելիզավետպոլի օկրուգային դատարանին կից պետական ծառայության մեջ գտնվող դատական կատարածու կիրք հայ Մելիքովն էր, ով կատարելապես տիրապետում է ինչպես ռուսերենին, այնպես էլ հայերենին: Այսպես, տարօրինակ է, որ ռուս-հայկական[35] դպրոցում որևէ կրթություն չստացած, բացարձակապես անկիրթ մեղադրյալ Սերվոսյանցը հայերենի չիմացության մեջ կարող է կիրթ հային մեղադրել: Մեղադրման պատճառները ոչ միայն միամիտ են, այլև նույնիսկ ոչ մի հիմք չունեն, քանի որ թարգմանիչ Մելիքովը որևէ բանում բոլորովին մեղավոր չէ: Այդ ամենը միասին վերցրած՝ միայն վկայում է մեղադրյալ Սերվոսյանցի ձգտման մասին՝ ինչ-որ կերպ նսեմացնել բոլոր այն անձանց արժանիքները, որոնք ներկա գործում որպես թարգմանիչ ինչ-որ մասնակցություն են ունենում:

Երրորդ, Սերվոսյանցի կողմից մեղադրումը Դատական Քննիչ Սոլովյովին՝ հարցաքննության արձանագրության մեջ «Դաշնակցություն» կուսակցության վերաբերյալ իր ասածները սխալ գրառելու առթիվ, այսինքն՝ որ [ինքը] հեղափոխական գործունեությանն անընդունակ և անպատրաստ է, մասնավորապես՝ «Դաշնակցություն» կուսակցությանն անդամակցելու համար, որին Սերվոսյանցը վերաբերվում է մեծ հարգանքով, մինչդեռ Դատական Քննիչի կողմից արձանագրության մեջ գրված է, որ իբր՝ Սերվոսյանցը «Դաշնակցություն» կուսակցությանը դեմ է եղել–ոչ

34 Ժողովի արձանագրության մեջ նշված է. «Ապառաժ (Շուշի, Ղարաբաղ)՝ խմբապետ Համազասպ.- Կարիք կայ 600.000 ծայրի, 5.000 հրացանի եւ 50.000 ռ. դրամի՝ ընթացիկ ծախսերի համար»: Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հտ., բ., Պէյրութ, 1985, էջ 237:

35 Բնագիր տեքստում բառացիորեն այսպես է նշված, հավանաբար նկատի ունի՝ արևելահայ:

միայն իրականությանը չեն համապատասխանում, այլև նույնիսկ ցույց են տալիս այն պատճառը, որը Սերվոսյանցին մղել է այդպիսի դիտողություն անելու, հատկապես որպեսզի [ինքը] ստրկորեն հետևի ներկա գործով կիրթ մեղադրյալներ Համազասպ Օհանջանյանին[36] և Աբրահամ Գյուլխանդանյանին[37], ովքեր Նովոչերկասկում հարցաքննության արձանագրություններում իրենց ասածների ոչ ճիշտ գրառման առթիվ նմանատիպ դիտողություններ էին արել, չնայած այն բանին, որ իրենց արդարացման օգտին բոլոր բացատրությունները կամ նրանց ներկայացված փաստաթղթերը երդվյալ թարգմանչի և Դատական պալատի Դատախազի տեղակալի ներկայությամբ էին գրառվել, բառացիորեն՝ Գյուլխանդանյանի և Օհանջանյանի թելադրանքով, իսկ բուն արձանագրությունները հանձնվել են նրանց՝ անձամբ ընթերցելու համար և ընթերցելուց հետո ոչ մի առարկություն չի արվել, իսկ քննության ներկայացման ժամանակ հայտնվել են այս կամ այն բացատրությունները՝ հարցաքննությունների մեջ ոչ ճիշտ գրառումների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Սերվոսյանցին, ապա նա, հետևելով վերոնշյալ օրինակին, ուշադրությունից բաց է թողնում այն հանգամանքը, որ եթե նրա բոլոր երեք բացատրությունները համեմատվեն, ինչպես օրինակ՝ 1909 թ. հունիսի 3-ին Ելիզավետպոլ քաղաքում, 1910 թ. հոկտեմբերի 28-ին և 1911 թ. հունվարի 9/13-ին՝ Նովոչերկասկ քաղաքում, ապա այդ բոլոր բացատրությունները միմյանց հետ ուղղակի հակասության մեջ են գտնվում, ինչը վկայում է այս կամ այն պայմաններից կախված՝ իր բացատրությունները փոխելու Սերվոսյանցի ընդունակության մասին, որոնք նա իր համար տվյալ դեպքում առավել ձեռնտու է համարում:

Չորրորդ, հայ ժողովրդին որպես ոչ հեղափոխականների բնութագրող Կովկասի փոխարքայի հետ արքայազն Նապոլեոնի ողջ գրագրությունը ներկա գործին կցելու մասին մեղադրյալ Սերվոսյանցի միջնորդության առթիվ, [և] որ հարմար է գտել ներկա գործով քննության ընթացքում մեղադրման նպատակներով հայ ժողովրդի և հայ եկեղեցու բնութագրումը Էջմիածնի սինոդի նախկին դատախազ Ֆրենկելի ցուցմունքների ու հաղորդումների հիման վրա տալ – ոչ մի հիմք չունի, դրա համար էլ չի կարող բավարարման ենթակա լինել, քանի որ Համազասպ Սերվոսյանցն իրեն և «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչներին ողջ հայ ժողովրդի հետ նույնացնելու մեծ խիզախություն է ստանձնում: Հայ ժողովուրդն, ըստ քննության տվյալների, բոլորովին էլ հեղափոխական չէ, այլ ընդհակառակը՝ հեղափոխականներին հակահարված տալու ձգտում ունեցող:

Մեղադրյալ Սերվոսյանցի դիտողությունն այն առթիվ, որ թաթարներն ամենից կատարյալ զենքով էին զինված, իսկ հայերը թաթարների դեմ լուրջ պայքարի համար բոլորովին պատրաստ չէին – իրականությանը չի համապատասխանում, քանզի ո՛չ նրանք, ո՛չ մյուսները միմյանց դեմ պայքարի պատրաստ չէին: Ո՛չ առաջինների, ո՛չ վերջինների մոտ այդ պայքարի համար զենք չկար, սակայն հայ ժողովրդի միջավայր ներխուժած «Դաշնակցություն» կուսակցությունը ցանկանալով իր հեղափոխական գործունեության ճանապարհին խոչընդոտ կանգնած թաթարների նկատմամբ ուժերը փորձել, նախապատրաստել էր այդ պայքարը, քանզի եթե թաթարների մոտ, որոնք Կովկասում քանակով հայերից երկու անգամ շատ էին, ամենից կատարյալ զենք լիներ՝ ինչպես հաստատում է մեղադրյալ Սերվոսյանցը, և եթե թաթարներն այդ պայքարին պատրաստված լինեին, ապա հայերը ոչ մի կերպ չէին կարողանա թաթարների նկատմամբ առավելության հասնել, սա-

36 Համազասպ Օհանջանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2009, հուլիս-սեպտեմբեր, թիւ. 2, էջ 144-170:

37 Գյուլխանդանյան Աբրահամ (1875-1945) – անվանի կուսակցական-հասարակական գործիչ: 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ Գանձակի հայության ինքնապաշտպանության ղեկավարներից: Դատվել է ՀՅԴ Մեծ դատավարության գործով:

կայն քննության տվյալներից երևում է, որ «Դաշնակցություն» կուսակցությունն այդ պայքարում հանդես է եկել իր տրամադրության ներքո ունենալով կատարյալ զենքի մեծ քանակ և թաթարների դեմ անգամ պայթուցիկ արկերով է գործել:

Հինգերորդ, մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցի հղումն այն առթիվ, որ 1906 թ. օգոստոսի 1-ի Ջևանշիրից նրա ստորագրությամբ բնագիր նամակ-փաստաթղթում առկա է իր կողմից արված գրառում և «Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի ինքնապաշպանության մարմին, Համազասպ» ստորագրություն, այլ ոչ թե այնպես, ինչպես ցույց է տալիս նրան Դատական Քննիչը. «Դաշնակցություն» կուսակցության Ջևանշիրի կոմիտեի անդամ»: Որ Ջևանշիրի գավառում ոչ մի հեղափոխական կոմիտե չկար, որ Սերվոսյանցը ոչ մի հեղափոխական գործում որևէ մասնակցություն չի ունեցել–հերքվում է Եդիգարովի գրասենյակում «Դաշնակցություն» կազմակերպության կուսակցական փաստաթղթերի մեջ գտնված մեղադրյալ Սերվոսյանցի ստորագրած 1905 թ. օգոստոսի 1-ի նամակով, քանզի այդ փաստաթղթերում, ինչպես հաստատվել է դրա թարգմանությամբ, առկա է «Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության զինվորական ինքնապաշպանության Ջևանշիրի կոմիտեի մարմին, Համազասպ» ստորագրություն: Հետաքննությամբ այդ գրության և ստորագրության մեջ «կոմիտե» բառի բացակայության առթիվ մեղադրյալ Սերվոսյանցի դիտողությունն իրականությանը չի համապատասխանում: Միակ բանը, որ մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցի հայտարարության մեջ ճշմարտության բաժին է ներառում – հիշյալ նամակի ներքո նշյալ գրառման և ստորագրության առթիվ նրա դիտողությունն է, ինչը հաստատված է և փորձաքննությամբ: Ժխտելով որևէ հեղափոխական կուսակցության մեջ իր մասնակցությունը ու մատնանշելով Ջևանշիրի գավառում «Դաշնակցություն» կուսակցության կոմիտեի և հեղափոխական գործունեության բացակայությունը՝ մեղադրյալ Սերվոսյանցը հակասում է իր նշյալ նամակին, որտեղ հստակ գրված է, որ Ջևանշիրի գավառում 1906 թ. գործել է «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության կոմիտե, որ Համազասպ Սերվոսյանցը եղել է դրա անդամ, որ Ջևանշիրի գավառում դրսևորվել է «Դաշնակցություն» կուսակցության հեղափոխական գործունեությունը, որ մեղադրյալ Սերվոսյանցի ողջ գործունեությունը հեղափոխական ասպարեզում խստորեն ենթակա էր կենտրոնից (այսինքն՝ կուսակցության Արևելյան բյուրոյից, Թիֆլիս քաղաքից) ելնող «Դաշնակցություն» կուսակցության ծրագրին և մարտավարությանը: Հետևաբար, մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցը, որպեսզի ապացուցի իրականությանն այդ ամենի անհամապատասխանությունը, իր մատնանշած վկաների օգնությամբ ցանկանում է հերքել այն ամենը, ինչ իրականում տեղի է ունեցել:

Վեցերորդ, թեպետ մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցի դիտողությունն այն մասին, որ զենքի և ռումբերի Շուշիի պահեստում գտնված բոլոր նամակներն իր կողմից գրվել և ստորագրվել են «Համազասպ» մականունով՝ համապատասխանում են իրականությանը, և մինչև հայտարարությունը կատարված փորձաքննությամբ միանգամայն հաստատվում է այդ հանգամանքը, սակայն նրա այդ դիտողությունը չի կարող այնուամենայնիվ հաստատել, որ իր գրած նամակը կազակների վրա իր կողմից նախատեսվող հարձակման մասին պայմանավորված էր նման հարձակում կատարելու՝ հայ ժողովրդի ցանկությամբ: Նման արարքի նախազգուշացման և կանխարգելման հնարավորության մասին Սերվոսյանցը թաթարներից հայ ժողովրդի ինքնապաշտպանության ղեկավար «Վարդանին» նամակ է գրել, որպեսզի նման հարձակում թույլ չտա: Քանզի նշյալ նամակից բոլորովին էլ չի երևում, որ հայ ժողովուրդը ցանկանար կազակների վրա հարձակվել, իսկ Վարդանի անունով «Քո Համազասպ» ստորագրությամբ այդ նամակում Սերվոսյանցը Վարդանից կազակների վրա հարձակվելու թույլտվություն է խնդրում, որ իբր նա իր զինվորներով ցանկացել է

հարձակվել ռուսական կազակների ճամբարի վրա և բոլորին կոտորել[38]: Վարդանի անունով մեղադրյալ Համազասպ Սերվոսյանցի 1906 թ. ապրիլի 30-ի մեկ ուրիշ նամակից միանգամայն հստակ երևում է, որ մեղադրյալ Սերվոսյանցը «Դաշնակցություն» կուսակցության մեջ գործուն մասնակցություն է ունեցել՝ տեղյակ լինելով կուսակցության Մռավի, Ելիզավետպոլի և Շուշիի կոմիտեների կուսակցական գործերին, մինչդեռ դրանց գոյությունը և իրեն հայտնի լինելը Սերվոսյանցը հայտարարությամբ ժխտում է:

Հարցաքննության մասին մեղադրյալ Սերվոսյանցի միջնորդություններն առ այն, որ.

1. Չարդախլու գյուղի բնակիչներին – լսե՞լ է որևէ մեկը, որպեսզի Համազասպ Սերվոսյանցն իրեն վիրավորական իմաստով անվանի «Համազասպ Սերվոսյանց», ինչպես այդ նշվում է Եդիգարովների գրասենյակի կուսակցական թղթերում գտնված 12-13 չարդախլվեցիների ստորագրությամբ նամակում:

2. Որպես հաստատում վկաներ Չրելևի և Արարատյանցի հետ Թիֆլիսից Ելիզավետպոլ 1905 թ. նոյեմբերի 17-ին Սերվոսյանցի մեկնման փաստի, որի արդյունքում Սերվոսյանցը 1905 թ. նոյեմբերի 13-16-ին Թիֆլիսում իրեն անհայտ անձանց հրավերով վաճառականներից, հոգևորականներից և իրեն անծանոթ նման անձանցից բաղկացած ինչ-որ հավաքի է մասնակցել, և խոսել է այն ամենը, ինչ նշված է «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովի արձանագրության ներկա գործում, չիմանալով, որ այդ նշյալ կուսակցության ժողովն էր:

3. Ներկա գործին Ալիբեգովի «Արյունոտ օրեր Ելիզավետպոլում» գրքի կցման մասին միջնորդությունը բավարարման ենթակա չէ, որովհետև վկա Քեշիշյանի և այլոց վկայություններով հաստատված է, որ Համազասպ Սերվոսյանցը հայտնի էր «խմբապետ Համազասպ», «հայոց իշխան Համազասպ» անուններով: Անհրաժեշտություն չկա Ալիբեգովի գրքի կցման, քանզի Ելիզավետպոլում հայ-թաթարական արյունոտ ընդհարումների փաստը միանգամայն հաստատված է:

«Դաշնակցություն» կուսակցության նոյեմբերի 13-16-ին շրջանային ժողովին այցելելուց հետո Թիֆլիսից 1905 թ. նոյեմբերին իր մեկնելու մասին մեղադրյալ Սերվոսյանցի դիտողությունը գործի համար ոչ մի նշանակություն չունի, քանի որ «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովի արձանագրություններից երևում է, որ Համազասպ Սերվոսյանցը 1905 թ. նոյեմբերի 13-14-ի ժողովին «խմբապետ Համազասպ» անունով է մասնակցել, և որ ժողովում ոչ մի վաճառական, ոչ մի հոգևորական և համանման անձինք չեն եղել, այլ իրենց կուսակցական մականուններով ներկա են եղել միայն «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության քսան պատգամավորներ: Այսպես, օրինակ՝ «խմբապետ Համազասպ», «Ընկեր Խաժ.» (այսինքն Խաժակյան[39]), «Ընկեր Համօ[40]», «Ընկեր Դարիք[41]», և այլն: Հետևաբար, մեղադրյալ Սերվոսյանցի դիտողությունն առ այն, որ նա իրեն անհայտ անձի կողմից հրավիրված լինելով՝ այդ ժողովին պատահաբար է մասնակցել, և որ իրեն անհայտ է եղել «Դաշնակցություն» կուսակցության անդամների այդ նիստ-ժողովների մասին–իրականությանը չի համապատասխանում, քանզի այդ ժողովի 1905 թ. նոյեմբերի 13-14-ի արձանագրություններում Սերվոսյանցը նշվում է «խմբապետ Համազասպ», որպես «Ապառաժ»-ի, այսինքն՝ «Դաշնակցություն» կուսակցության Շուշիի կոմիտեի պատգամավոր:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4580-4585:

Թարգմանություն ռուսերենից:

38 Խոսքը թերևս վերաբերում է Վարանդայի գավառում կազակների կատարած գազանություններին հակադարձելու՝ Համազասպի ցանկությանը:

39 Գարեգին Խաժակի դատական գործը տե՛ս «Վէմ», 2010, թիւ 1, էջ 149-165:

40 Նկատի ունի Համո Օհանջանյանին:

41 Նկատի ունի Ավետիս Ահարոնյանին:

ԹԻՎ 9
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԱԿՏ

Մեղադրյալներ Սարգիս Մանասյանցը, Համազասպ Օհանջանյանը, Պողոս Չուբարյանը, Համազասպ Սերվանստյանցը և Արիստակես Դավթյանը (Տեր-Դավթյանց) ժխտելով ռուսական պետության մեջ հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության հեղափոխական և հակակառավարական գործունեությունը՝ ցույց են տալիս Ռուսական կայսրության սահմաններում այդ կազմակերպության գործունեության լեգալ բնույթը, փորձում են ապացուցել, որ հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցությունը ոչ միայն ռուսական կառավարության ակտիվ հակառակորդ չի եղել, այլև կատարել է այն պարտականությունները, որոնք ընկած էին վերջինիս վրա:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4603:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

Ինչ վերաբերում է մեղադրյալ Համազասպ Սերվանստյանցին (Համազասպ Օհանջանյանի, Աբրահամ Գյուլխանդանյանի և Սարգիս Մանասյանցի հետ) կալանքից ազատելու մասին միջնորդություններին, ապա այդպիսի միջնորդությունները դրանց համար օրինական հիմնավորումների բացակայության պատճառով չեն կարող բավարարվել:

Շարադրյալի հիման վրա Դատական Քննիչը որոշեց. բոլոր վերոնշյալ միջնորդություններում նշված հիմքի վրա հիշյալ մեղադրյալներին սույն որոշման մեջ մերժել:

Դատական Քննիչ՝ Ն. Լիժին
ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4607:
Թարգմանություն ռուսերենից:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Աբրահամ Գյուլխանդանյանի դատական գործը*

Նշանավոր քաղաքական ու պետական գործիչ Աբրահամ Գյուլխանդանյանը 19-րդ դարի վերջին -20-րդ դարի սկզբին հայ ազգային-ազատագրական պայքարի ասպարեզ մտած ՀՅԴ Անկախության սերնդի վառ ներկայացուցիչներից մեկն է:

Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյանը ծնվել է 1875 թ. օգոստոսի 13-ին Վաղարշապատում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի նախակրթարանում, իսկ 1894 թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնի վեցամյա շրջանը: 1895 թ. անդամակցել է ՀՅ Դաշնակցությանը: 1898 թ. ավագ եղբոր՝ Անդրեասի հետ տեղափոխվել է Բաքու և աշխատել նավթարդյունաբերության ոլորտում՝ այդ հանգամանքն օգտագործելով որպես կուսակցական գործունեության քողարկում: Բաքվում ծանոթացել է Քրիստափոր Միքայելյանի հետ և ակտիվորեն մասնակցել նրա ղեկավարած «Փոթորիկի» գործին: 1902 թվականից եղել է ՀՅԴ Բաքվի (Ոսկանապատի) կենտրոնական կոմիտեի անդամ և աստիճանաբար դարձել է քաղաքի դաշնակցական կազմակերպության ամենագործուն ու ճանաչված դեմքը:

Տեղին է հիշատակել, որ այդ ժամանակ Բաքուն Անդրկովկասի հայության տնտեսական, ինչու չէ, նաև մշակութային և հասարակական-քաղաքական կենտրոններից մեկն էր: ՀՅԴ գործունեության մեջ և հատկապես կուսակցությանն անհրաժեշտ դրամական միջոցների հանգանակության ասպարեզում այն խիստ կարևոր դեր էր խաղում:

Ա. Գյուլխանդանյանի կուսակցական գործունեության ու մանավանդ՝ նրա կազմակերչական ունակությունների դրսևորման ակտիվ փուլը 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների շրջանն էր: Անդրկովկասի հայության ինքնապաշտպանությունը առաջնորդում էր ՀՅԴ-ն և Ա. Գյուլխանդանյանը՝ որպես պատասխանատու գործիչ ղեկավար դերակատարություն ունեցավ Բաքվում:

1905թ. փետրվարին՝ Բաքվում հայերի կոտորածները սկսվելուց հետո, Ոսկանապատի կենտրոնական կոմիտեն ստեղծում է ստուգող մարմին, որի նպատակը հանցագործության կազմակերպիչներին հայտնաբերելն էր: Նիկոլ Դումանի հետ միասին այդ մարմնին անդամակցում էր նաև Աբրահամ Գյուլխանդանյանը: Հստակեցնելով այն փաստը, որ կոտորածի գլխավոր կազմակերպիչ-մեղավորներից մեկը նահանգապետ Նակաշիձեն է, ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն նախազգուշական նամակ ուղարկեց տխրահռչակ նահանգապետին: Նրանում մասնավորապես նշվում էր. «Հարկաւոր չդատելով ապացոյցներ բերել ձեր յանցագործ վարմունքի համար, որը բազմաթիւ անմեղներու կորստեան պատճառ եղաւ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կենտ. Կոմիտեն, նախքան իր վրայ դրած սրբազան պարտականութեան կատարման ձեռնարկելը՝ պաշտպան հանդիսանալ անմեղ զոհերուն, աւելորդ չի համարեր յայտարարել Ձեզ, Պրն. Նահանգապետ, որ եթէ արիւնահեղութիւնը չէք դադարեցներ, Ձեր ձեռքը եղած բոլոր միջոցներով, այդ դէպ-

* Ընդունվել է տպագրության 13.09.2010:

քին դուք պատասխանատու էք Ձեր արիւնով, այլ եւ Ձեր մեղսակիցներու արիւնով»[1]:

Ուշագրաւ է, որ այս հայատյաց ոճրագործի պատուհասումը կազմակերպելու պատասխանատվությունը ևս հանձնարարվեց Ա. Գյուլխանդանյանին: Քաջ հայտնի է, որ 1905 թ. մայիսի 11-ին այդ առաջադրանքն իրականացրեց Դրոն, որին գործողությանը նախորդած ակնթարթներին նահանգապետի կառքի մոտենալու մասին տեղեկացրել է հենց ինքը՝ Աբրահամ Գյուլխանդանյանը:

1905 թ. նոյեմբերին Ա. Գյուլխանդանյանը մասնակցել է Թիֆլիսում տեղի ունեցած ՀՅԴ Կովկասյան շրջանային ժողովին: Այն դեռ չէր ավարտվել, երբ նոյեմբերի 18-ին սկսվեցին Գանձակի հայության ջարդերը: Շրջանային ժողովից անմիջապես Գանձակ են մեկնում Ա. Գյուլխանդանյանն ու Համազասպը, որոնցից առաջինը նշանակվում է Գանձակի զինվորական շտաբի ղեկավար, իսկ երկրորդը ստանձնում է ռազմական գործողությունների ընդհանուր հրամանատարությունը: Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիից այստեղ է ժամանում նաև ՀՅԴ առաջնորդ Ռոստոմը: 1905 թ. վերջերին-1906 թ. սկզբներին տեղի ունեցած դաժան կռիվներն ավարտվում են հայության հաղթանակով: Գանձակի ինքնապաշտպանության ընթացքում իր դրսևորած կազմակերպական ունակությունների շնորհիվ է, որ Ա. Գյուլխանդանյանը դարձավ «համակովկասեան չափանիշով գործիչ»[2]:

Հայ-թաթարական կռիվների ավարտից հետո՝ 1906թ. վերջից Ա. Գյուլխանդանյանը խմբագրել է ՀՅԴ անլեգալ «Գրոհ» պաշտոնաթերթը, որը տպագրվում էր Բաքվի կուսակցական գաղտնի տպարանում:

1902-1908 թթ. ընթացքում լինելով ՀՅԴ Ոսկանապատի կենտրոնական կոմիտեի անդամ, Ա. Գյուլխանդանյանը 1908-ից շարունակաբար ընտրվել է ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամ: Նրա հեղինակությունը զգալի էր Բաքվի մտավոր և գործարար շրջանակներում: Ակնհայտ էր Ա. Գյուլխանդանյանի ղեկավար մասնակցությունը Բաքվի շրջանի ազգային-հանրային բոլոր գործերում:

Բնակաբար, Աբրահամ Գյուլխանդանյանի նման անհատը չէր կարող անուշադրության մատնվել ցարական իշխանությունների կողմից. ղեկավար դաշնակցական գործիչը, չնայած հմուտ քողարկմանը, 1910թ. ապրիլի 1-ին այնուամենայնիվ ձերբակալվեց:

Ո՞րն էր նրան վերագրվող մեղադրանքը: Ա. Գյուլխանդանյանն ամբաստանվում էր ՀՅԴ «գլխավոր անդամներից» մեկը լինելու, 1905-1908 թթ. Ելիզավետպոլի, Թիֆլիսի և Բաքվի կենտրոնական կոմիտեների գործունեությանը մասնակցելու, ահաբեկչական ակտերի նախապատրաստումը ղեկավարելու և իր տնօրինության տակ եղած դրամական միջոցները կոմիտեներին բաշխելու համար: Այսինքն՝ մեղադրանքները վերաբերում էին գերազանցապես Ա. Գյուլխանդանյանի կուսակցական առօրյա գործունեությանը, ինչը, սակայն, լիժինների համար արդեն իսկ բավական էր՝ նրան դատական հետապնդման ենթարկելու համար:

Լիժինյան բռնաճնշումների ենթարկված ՀՅԴ մեկ այլ ղեկավար գործիչ՝ Հ. Օհանջանյանը հետագայում վերհիշում էր, որ «Բանտին մէջ եւս ան եղաւ ղեկավար դեր մը կատարող ընկեր եւ ուղղութիւն տուաւ դատը վարելու եղանակին: Յայտնի է, թէ ինչպէս պատուով տարին իրենց դատը բանտարկուած ընկերները, որ մինչև անգամ ռուս դատաւոր-սենատէօրներու հիացմունքը առաջ բերաւ, եւ այս բանին մէջ եւս Աբրահամի խաղացած դերը խոշոր էր»[3]: Ուստի պատահական չէր, որ Ա. Գյուլխան-

1 Յեղափոխական ալպոմ, Ե. հտ., 1964, թիւ 4, էջ 99-100:
2 Նույն տեղում, էջ 105:
3 Նույն տեղում, էջ 106:

դանյանը ներկայացված «հանցագործություններում» իրեն մեղավոր չի ճանաչել:

Բանտից Ա. Գյուլխանդանյանն ազատվել է 1912 թ.: Դրանից հետո նա ավարտել է Յարոսլավլի Դեմիդովյան բարձրագույն վարժարանի իրավաբանական բաժինը: Այնուհետև անդամակցել է Ազգային Բյուրոյին կից գործող պատասխանատու մարմնին, որն ստեղծվել էր Արևմտահայաստանի բարեռնորոգումների ծրագիրը մշակելու համար: Իսկ ավելի ուշ՝ Առաջին աշխարհամարտի օրերին, Հայ կամավորական գնդերի կազմակերպիչ մարմնի անդամ էր: 1916 թ. վերադարձել է Բաքու և շուտով ցարական ինքնակալության տապալումից հետո ընտրվել է Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ, ինչը Ա. Գյուլխանդանյանի ունեցած վաստակի և հեղինակության առհավատչյան էր:

Աբրահամ Գյուլխանդանյանը Ռոստոմի և ՀՅԴ այլ գործիչների հետ միասին ղեկավարել է 1918 թ. Բաքվի հերոսամարտը: Ամենաճակատագրական օրերին՝ Բաքվի Կոմունայի տապալումից մինչև Յենտրոկասպիի դիկտատուրայի հաստատումը, Հայոց ազգային խորհրդի նախագահը իրականացրել է քաղաքի ինքնապաշտպանությունը ղեկավարող դիկտատորի լիազորությունները:

Բաքվի անկումից հետո Աբրահամ Գյուլխանդանյանը տարագրվել է Պարսկաստան: 1919 թ. հունիսին նա ՀՅԴ ցուցակով ընտրվել է Հայաստանի խորհրդարանի անդամ, 1919 թ. օգոստոսին Ալ. Խատիսյանի կառավարության կազմում դարձել է ներքին գործերի և արդարադատության նախարար: 1920թ. մայիսին Բյուրո-կառավարության կազմում ստանձնել է առևտրի նախարարի պաշտոնը: Հայաստանի խորհրդայնացումից հետո տարագրվել է Կ. Պոլիս, Ռումինիա, ապա վերջնականապես հաստատվել Փարիզում: 1933 թ. ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողովում ընտրվել է Գերագույն մարմնի անդամ: Փարիզում գլխավորապես զբաղվել է գրական աշխատանքով, դասակարգել է ՀՅԴ Դիվանի վավերագրերը, գրել հուշեր[4] ու հոդվածներ՝ Ա. Մեւեան ստորագրությամբ:

Երկրորդ աշխարհամարտի ավարտին՝ 1944 թ. հոկտեմբերի 20-ին, երբ Փարիզն ազատագրվեց գերմանական բռնագրավումից, Ա. Գյուլխանդանյանը ձերբակալվել է «անանուն հայ բոլշևիկի» մատնությամբ, սակայն, 1945 թ. սեպտեմբերի 26-ին ազատվել է բանտից: Մահացել է 1946 թ. հունվարի 1-ին և թաղվել Փարիզի Մոնմորանսի գերեզմանատանը: Նրա գերեզմանին հրաժեշտի վերջին խոսքեր են արտասանել Բաքվի հերոսամարտի օրերից իր անբաժան ընկեր Գերասիմ Բալայանը, Հ. Սամուելը, Ա. Չխենկելին:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The Lawsuit of Abraham Gyulkhandanyan

Avag A.Harutyunyan

4 Տե՛ս Հայ-թաթարական ընդհարումները, հտ. Ա, Բագուի առաջին ընդհարումները, Փարիզ, 1933: Յեղափոխական հայուհիներ, մաս Ա., Փարիզ, 1939: Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939: Կովկաս. Երկիրը, ժողովուրդը, պատմութիւնը, Փարիզ, 1943: Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ծրագիրը եւ նրա հեղինակները, Աթէնք, 1987:

ԹԻՎ 1

ՈՐՈՇՈՒՄ

1910թ. մայիսի 17: Քաղաք Նովոչերկասկ: Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը սույն թվին հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության մեջ, այսինքն՝ Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ մասնակցության համար մեղադրվող, 36 տարեկան Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյանին հարցաքննելով՝ ԳՏԱՎ. 1. նշյալ Գյուլխանդանյանը մերկացվում է ինչպես հարցաքննված վկաներ Ֆրենկելի, Քեշիշյանի[5], Ղազանջյանի, Շահնազարովայի և այլոց ցուցմունքներով, այնպես էլ Եդիգարովի[6], Օհանջանյանի[7] և նախկին Կորյուն վարդապետի[8] մոտ խուզարկությամբ առգրավված հեռագրերով: Աբրահամ Գյուլխանդանյանը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գլխավոր անդամներից էր և 1905-ից մինչև 1908թ. մասնակցել է նշյալ կուսակցության Ելիզավետպոլի, Թիֆլիսի և Բաքվի կենտրոնական կոմիտեների գործունեությանը, եղել է նույն կուսակցության Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի ղեկավար Կորյուն վարդապետի մերձավոր աշխատակիցը, ղեկավարել ահաբեկչական ակտերի նախապատրաստումը, կուսակցական կարիքների համար իր տնօրինության ներքո կուսակցության կոմիտեներից դրամական միջոցներ է ստացել և այլն, 2. նրան սպառնացող պատիժը ուղեկցվում է սեփականության իրավունքի զրկմամբ: Համաձայն վերոշարադրյալի՝ Դատական Քննիչը, ղեկավարվելով Քրեական դատավարության կանոնադրության 416-րդ հոդվածի 6-րդ կետով, 419-րդ և 421-րդ հոդվածներով և Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով, ՈՐՈՇԵՑ. նշյալ մեղադրյալ Աբրահամ Գյուլխանդանյանին կալանավորել Նովոչերկասկի բանտում, ինչի մասին և հայտնել նրան:

Բնագիրը համապատասխան ստորագրությամբ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 4, թ. 2692:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. մայիսի 17: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների հիման վրա որպես մեղադրյալ հարցաքննեց ներքոանվանյալին և նա ցուցմունք տվեց.

Իմ անունը, հայրանունը, ազգանունը - Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյանց:

36 տարեկան:

Իմ կոչումը - պատվավոր քաղաքացի, Վաղարշապատ գյուղից սարկավագի որդի:

Բնակության մշտական վայրը – վերջին ժամանակ ապրել եմ Թիֆլիսում:

Իմ ծննդավայրը - Երևանի նահանգի Էջմիածնի գավառի Վաղարշապատ գյուղ:

Հավատքը - հայ-գրիգորյան:

Կրթված եմ:

Ամուսնացած չեմ:

Իմ զբաղմունքը - Յարոսլավլի Դեմիդովյան լիցեյի ուսանող:

Անշարժ սեփականություն չունեմ:

Հատուկ նշաններ չունեմ:

Զինապարտություն - երկրորդ կարգի աշխարհազորային:

Քննության տակ չեմ եղել:

Դատված չեմ եղել:

Ներկայացված հարցերին՝ ճանաչում եմ

5 Խմբապետ Միհրան:
6 Սարգիս (Սերգեյ) Փաշոյի (Պողոսի) Եդիգարյան – կուսակցական գործիչ: Թիֆլիսի «Հերմես» տպարանում հրատարակել է ՀՅԴ գրականություն: Ձերբակալվել է լիժինյան գործով:
7 Համազասպ Օհանջանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2009, հուլիս-սեպտեմբեր, N 2, էջ 144-170:
8 Կորյուն վարդապետ Սահակյանը 1905-1906թթ. կարևոր դեր է կատարել Գանձակի գավառում: Եղել է ՀՅԴ անդամ: Մեղադրվել է լիժինյան գործով և մինչև 1917 թ. մայիս դատապարտվել է աքսորի՝ Իրկուտսկի մարզ:

ինձ մեղավոր այն բանում, որ [ստորև շարադրվում են Ա. Գյուլխանդանյանին դատական քննիչի կողմից ներկայացված մեղադրանքները] ես պատկանել եմ 1905-1908 թվականներից Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության նպատակ էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի է ունեցել 1905-1908 թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ՝ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908 թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների[9] հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի[10] խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908 թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրությունների ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցագործ նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ [է կատարել] հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության իրավասությունը, իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ, և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում նա՝ Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյանը, կրելով «Աբրահամ», «Աբրամովիչ» կուսակցական ծածկանունները, եղել է հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գլխավոր անդամներից, և 1905-ից մինչև 1908 թ. մասնակցել է նշյալ կուսակցության Ելիզավետպոլի, Թիֆլիսի և Բաքվի կենտրոնական կոմիտեների աշխատանքներին, ընդ որում 1905-1906 թթ. եղել է Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի գլխավոր ղեկավար Կորյուն վարդապետի մերձավոր աշխատակիցներից, և դրանից զատ Երևանի ու Էջմիածնի գավառներում կուսակցության անունից ղեկավարել է ահաբեկչական բոլոր գործողությունների նախապատրաստումը, իր տրամադրության տակ [ՀՅԴ] կոմիտեներից կուսակցական ծախսերի և իր շտաբի պահպանման համար դրամական միջոցներ ստացել, ինչպես նաև փոխանցել է կուսակցության մյուս անդամներին և կոմիտեներին իր տրամադրության տակ գտնվող դրամական միջոցներ կուսակցական ծախսերի համար, ինչի մասին վկայում են. 1. 1907 թ. սեպտեմբերին խուզարկությամբ կուսակցական գրագրության մեջ գտնված երկու փաստաթղթերը: Առաջինից երևում է, որ 1906 թ. Կորյուն վարդապետի շտաբին բաց է թողնվել 6.508 ռուբլի, իսկ «Աբրահամի» շտաբին՝ 7.664 ռուբլի, որ «Աբրահամի» տրամադրության տակ դրանից զատ գտնվել է 8.873 ռուբլի կուսակցական գումար: Կուսակցության Արևելյան Բյուրոյի անդամ «Համազասպ Օհանջանյանի» ստորագրությամբ 1907 թ. հունվարի 10-ի երկրորդ նամակից երևում է, որ Օհան-

9 Փաստաթղթում զինվոր բառը փակագծերում գրված է ռուսերեն՝ зинвор:
10 Ռուսերեն տառերով հենց այսպես է գրված:

ջանյանի կողմից կուսակցության անունից Կորյուն վարդապետի միջոցով Աբրահամ Գյուլխանդանյանին («Աբրամովիչին») և նրա աշխատակիցներին կարգադրություններ են արվել: 2. 1907թ. սեպտեմբերի 2-ին Եղիգարովի մոտ նույն կուսակցության կուսակցական գրագրության մեջ գտնված՝ Կորյուն վարդապետի անունով 1906 թ. հոկտեմբերի 25-ին հղված նամակից երևում է, որ Կորյուն վարդապետը և «Դաշնակցություն» կուսակցության գծով նրա աշխատակից «Աբրահամը» եղել են «Դաշնակցություն» կուսակցության ղեկավարներ և իրենց կից ունեցել հատուկ շտաբ, և նույնը [վկայում է] Եղիգարովի մոտ կուսակցական գրագրության մեջ գտնված [ՀՅԴ] Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամների անունով զենքի համար բաքվեցիներից ստացված փողի մասին «Աբրամովիչ» ստորագրությամբ հաղորդագրությունը: 3. 1908թ. դեկտեմբերի 12-ին Համազասպ Օհանջանյանի մոտ խուզարկությամբ նույն կուսակցության կուսակցական գրագրության մեջ գտնված «Շուշիկի» անունով նամակից երևում է, որ «Աբրահամին» հաղորդվել է կուսակցության կոմիտեներում բոլոր իրադարձությունների մասին՝ նրա կողմից համապատասխան միջոցների ընդունման համար, որպեսզի «Դաշնակցություն» կուսակցության ներսում դժգոհության առիթներ չլինեն: 4.Գտնված բանկային ստացականներից և դրամական փոխանցումների մասին բանկային հայտարարագրություններից երևում է, որ՝ Ա. 1905թ. հուլիսի 9-ին Աբրահամ Գյուլխանդանյանը Բաքվից Աստրախան կուսակցական կարիքների համար փոխանցել է 3.000 ռուբլի, որպիսի գումար ստացվել է այդ կոմիտեի գլխավոր անդամ և գանձապահ Հովհաննես Մեղնիկյանի կողմից, Բ. 1905թ. հուլիսի 9-ին Գյուլխանդանյանը Գրիգոր Բեղելյանցին Բաքվից Դոնի Ռոստով փոխանցել է 1.000 ռուբլի, որպիսի գումար նշվում է Նալբանդի[11] կենտրոնական կոմիտեի հաշվետվության մեջ որպես կուսակցական ծախսերի համար ստացված գումար, Գ. նույն թվի հուլիսի 11-ին նույն Գյուլխանդանյանի կողմից Բաքվից Սարատով կուսակցական ծախսերի համար Մնացական Վարդանովին փոխանցվել է 1.000 ռուբլի, Դ. նույն Գյուլխանդանյանը 1906թ. դեկտեմբերի 30-ին Թիֆլիսից Ելիզավետպոլ Կորյուն վարդապետին փոխանցել է 1.700 ռուբլի: 5. Բռնագրավված հեռագրերով հաստատվել է. Ա. 1907թ. հունիսի 15-ին Թիֆլիսից Բաքու է ուղարկվել հետևյալ հեռագիրը. «Մելիքյանի լուսանկարչատուն, Աբրամովիչին: Պյատիգորսկից Նորավանի օգնության համար խնդրում են՝ շտապեցրու Մեղավորյանին փողով ուղարկել Արտավազդին»: Այսինքն՝ այդ հեռագրով «Աբրամովիչից» պահանջվում էր կարգադրել Արմավիրի կոմիտեին ահաբեկիչներին ահաբեկչական ակտեր կատարելու ծախսերի համար իբրև օգնություն գումար ուղարկել, Բ. 1907թ. օգոստոսի 4-ին Թիֆլիսից Աբասթուման հեռագիր էր ուղարկվել, ուր «Արտեմը» (Արտեմ Թայիրյան[12]) Գյուլխանդանյանին տեղեկացնում էր ահաբեկիչների ուղարկումը չեղյալ համարելու մասին՝ հաղորդելով, որ «Սարգիսը» (այսինքն՝ Սարգիս Մանասյանց) ինքն է մեկնում:

Այսինքն՝ Քրեական Դատավարության կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ ինձ մեղավոր չեմ ճանաչում:

Որպես իմ արդարացում բացատրեմ: 1905-1906 թթ. ես եղել եմ Ելիզավետպոլում: Բաքվում կոտորածներից հետո Բալախանիում «Երկաթ» անունով արհեստանոց ունեի: Երբ 1905թ. Բալախանիում կոտորած եղավ, այրվեց և իմ արհեստանոցը: Բալախանիում ապրելու հնարավորություն չկար և ես եկա Թիֆլիս: Չեմ կարող ասել, թե ինչքան ժամանակ ես ապրեցի Թիֆլիսում, բայց ես ապրել եմ «Սևերնիե նոմերա» հյուրանոցում[13]: Քանի որ ինձ անհրաժեշտ էր իմանալ, թե ինչ վիճակում է իմ արհեստանոցը, որը այրվել էր, և հնարավո՞ր էր արդյոք պետական վարկ ստանալ (այդ

11 Հարավային Ռուսաստանի կազմակերպական շրջանի կուսակցական անվանումը:
12 Արտեմ Թայիրյանը նույնպես դատապարտվել է լիժինյան գործով:
13 «Սևերնիե նոմերա» հյուրանոցը ՀՅԴ հիմնադրման շրջանում գլխավոր հավաքատեղիներից էր:

վարկը տրվում էր Բալախանիի նավթարդյունաբերողներին), ապա ես նոյեմբերի 19-ին կամ 20-ին Թիֆլիսից մեկնեցի Բաքու: Դա եղել է 1905 թ.: Ճանապարհին, երբ մենք մոտենում էինք թաթարական շրջաններին, այնտեղ բոլոր ուղևորներին՝ հատկապես հայերին, խուճապ տիրեց, թե թաթարները հարձակվում են գնացքների վրա, սպանում հայ ուղևորներին, որ Եվլախում հրդեհել են կայարանը և ճանապարհը շարունակել վտանգավոր է: Ստիպված ճանապարհին մի անվտանգ տեղ կանգ առանք, իսկ այդպիսի միակ տեղը Ելիզավետպոլն էր: Ուղևորների մի մասը, ի թիվս և ես, մնացինք այդտեղ: Կայարանում էր իմիջիայլոց Շեյխ-Ուլ-Իսլամը[14]: 3-4 ժամ անց կազակների ջոկատի ուղեկցությամբ Ելիզավետպոլի կայարան ժամանեց ոստիկանապետը: Նա ասաց, որ քաղաքում այժմ հանգիստ է և անվտանգ, ու կարելի է մեկնել այնտեղ: Քանի որ կայարանում անհնար էր գիշերել, ապա ուղևորների մի մասը՝ այդ թվում և ես, Շեյխ-Ուլ-Իսլամի հետ մեկնեցինք քաղաք: Շեյխ-Ուլ-Իսլամը և թաթար ուղևորների մի մասը կանգ առան թաթարական թաղում, իսկ հայ ուղևորները և ես մեկնեցինք հայկական թաղ: Ես այնտեղ ապրեցի մինչև նոյեմբերի 27-28-ը: Ես ոչինչ չեմ արել և մտածում էի միայն այնտեղից հեռանալու մասին, բայց երբ հայերի վրա նոյեմբերի 27-28-ին երկրորդ անգամ հարձակվեցին, դրանից հետո ես որոշեցի մնալ այնտեղ և մասնակցել ինքնապաշտպանությանը: Ես այնտեղ՝ քաղաքի ծայրամասում, ապրել եմ մինչև 1906 թ. հունվարի 28-ը: Դրանից հետո ես մեկնեցի Թիֆլիս, ամիս ու կես ապրեցի «Սևերնիե նոմերա» հյուրանոցում: Թիֆլիսում ես ուզում էի իմանալ, թե պետական վարկ կստանա՞մ, թե ոչ, սակայն մերժում ստացա: Բաքու հնարավոր չէր մեկնել, դրա համար էլ ես մեկնեցի ծննդավայր Վաղարշապատ գյուղ: Իմ եղբայր Անդրեյ[15] Իսահակի Գյուլխանդանյանը այնտեղ սկսել էր նավթի առևտրով զբաղվել և պահեստ ուներ, և ես նրա հետ մասնակցեցի այդ գործին: Այնտեղ ես մնացել եմ մինչև 1907 թ. հունվար կամ փետրվար, երբ մեկնեցի Բաքու: Վաղարշապատում ապրելու ժամանակ մեկ կամ երկու անգամ մեկնել եմ Թիֆլիս՝ Միխայլովյան հիվանդանոցում տեղավորել իմ հոգեկան հիվանդ եղբորը՝ Համազասպ[16] Իսահակի Գյուլխանդանյանին: Թիֆլիսում ես այդ ժամանակ մնացել եմ մի քանի օր: Դրանից զատ ես մի անգամ եղել եմ Բաքվում, ուր ապրել եմ «Ռոսիա» հյուրանոցում: Բալախանիում արդեն վերաշինվել էր իմ արհեստանոցը, որին ես տիրում էի Սիմոն Տեր-Գրիգորյանցի, Նիկոլայ Դավթյանցի, իմ եղբայր Անդրեյի, Գևորգ Վարշամյանցի և այլոց ընկերակցությամբ: Ես որոշեցի բնակության մեկնել Բաքու, ուր վերջնականապես հաստատվեցի 1907 թ. փետրվարին: Բաքվում «Երկաթ» արհեստանոցում ես վարում էի հաշվապահությունը: Երբ իմացա, որ համալսարան են ընդունում նրանց, ովքեր հոգևոր ճեմարան են ավարտել, ես դիմեցի Յարոսլավլի Դեմիդովյան լիցեյ և ընդունվեցի լատիներենից լրացուցիչ քննություն հանձնելու պայմանով: Մինչև 1908 թ. ես ամբողջ ժամանակ ապրել եմ Բաքվում, և ապա 1908 թ. փետրվարին վերադարձա տուն՝ Վաղարշապատ, վերցրի իմ հիվանդ Համազասպ եղբորը, տարա նրան Խարկով, տեղավորեցի պրոֆեսոր Գրեյդենբերգի հիվանդանոցում, ապա այնտեղից մեկնեցի Յարոսլավլի լիցեյ: Այնտեղ հանձնեցի քննությունները, ապա վերադարձա տուն, երբ հայրս մահացավ: Դա մոտավորապես 1908 թ. օգոստոսի 20-ն էր: Այդ ժամանակ Երևանի նահանգապետից բարեհուսության վկայական ստացա, որը և ներկայացրի լիցեյ: 1908 թ. սեպտեմբերին Վաղարշապատից մեկնեցի Բաքու: Հոկտեմբերին մեկնեցի Յարոսլավլ, քննություն հանձնեցի, իսկ դեկտեմբերին այնտեղից վերադարձա Թիֆլիս, ուր ապրում էի «Անգլետեր» հյուրանոցում: Լրացնեմ, որ Յարոսլավլից մի քանի օրով մեկնեցի Բաքու, ապա Թիֆլիս: Մինչև

14 Շեյխ- ուլ-իսլամը Անդրկովկասի մահմեդականների հոգևոր առաջնորդն էր:
15 Անդրեասն Աբրահամի ավագ եղբայրն էր, անկուսակցական:
16 Համազասպը (Հայկ) Աբրահամի կրտսեր եղբայրն էր, ուսանող, ՀՅԴ անդամ, մահացել է երիտասարդ տարիքում:

1909 թ. ապրիլը ես ողջ ժամանակ ապրել եմ կամ Բաքվում, կամ Թիֆլիսում: Իմիջիայլոց, մտածում էի Թիֆլիսում տպարան բացել: 1909 թ. ապրիլին ես կրկին մեկնեցի Վաղարշապատ, որտեղ, ինչպես նաև Երևանում, ապրեցի մինչև նույն թվի հոկտեմբեր: Երևանում ես ապրել եմ իմ ազգական Աղաբեկ Ամատունու մոտ: 1909 թ. հոկտեմբերին ես ժամանեցի Թիֆլիս՝ մի քանի օր մնալու նպատակով, սակայն քանի որ երկարացվեց իմ բնակության ուսանողական թույլտվությունը, ես այնտեղ ապրեցի Ազիզ Թովմասի Պետրոսյանցի անվամբ՝ ուրիշի անձնագրով: Այդ անձնագիրը ես գնել էի Երևանում, որն այնտեղ ինձ համար ճարել էր անծանոթ մեկը, ում հետ ծանոթացել էի Երևանի ճանապարհին: Անձնագրի համար վճարել եմ 5 ռուբլի: Այդ մարդն անձնագիրն ինձ է հանձնել փողոցում: 1909 թ. հոկտեմբերից մինչև 1910 թ. ապրիլի 1-ը, երբ ձերբակալվեցի, ես Թիֆլիսում ապրել եմ «Վետցել» հյուրանոցում: Թիֆլիսում մինչև իմ ձերբակալությունը համագործակցել եմ «Հորիզոն» թերթին: «Դաշնակցություն» կուսակցության գործունեությանը ես չեմ մասնակցել[17], նշանակում է ոչ մի կարգադրություն չէի կարող ստորագրել, այսինքն՝ կարգադրություններ ահաբեկչական գործողությունների կապակցությամբ: Ընթերցված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

Ձեր առաջարկած հարցերին պատասխանում եմ: Ձեր ներկայացրած Աբասթումանից՝ Բաքու 1907 թ. հունիսի 13-ի հետևյալ հեռագիրը. «Բաքու, Մելիքյանի լուսանկարչատուն[18]: Բուժումը շարունակվում է, եթե անհրաժեշտ է՝ անհապաղ կմեկնեմ: Աբրահամ» – ես եմ գրել: Ինչ առիթով եմ գրել այդ հեռագիրը՝ չեմ հիշում: Ես այն ժամանակ մոտ մի ամիս ապրել եմ Աբասթումանում, ուր բուժվում էի: Ապրում էի Միրաքովի հյուրանոցում: Մելիքյանն իմ լավ ծանոթն է: Նա լուսանկարչատուն ունի Բաքվի Առևտրական փողոցի վրա: Նրա հետ ծանոթացել եմ լուսանկարչատանը, ուր հաճախ էի լուսանկարվում: Նրա հետ ոչ մի գործնական կապերի մեջ չեմ եղել: Ձեր ներկայացրած 1907 թ. հուլիսի 28-ի Աբասթումանից Թիֆլիս հետևյալ հեռագիրը. «Թիֆլիս, «Խարիսխ»-ի[19] խմբագրություն: Շարաֆյանին: Պատասխան չի եղել: Աբրահամ» – ես չեմ գրել և նման հեռագիր չեմ ուղարկել: Շարաֆյանին ես չեմ ճանաչում: Ես չեմ հիշում, որ ստացած լինեմ Ձեր ներկայացրած 1907թ. օգոստոսի 4-ի Թիֆլիսից Աբասթուման հետևյալ հեռագիրը. «Աբասթուման, Միրաքովի հյուրանոց: Գյուլխանդանյանին: Ուղարկել պետք չէ, Սարգիսը[20] վաղը մեկնում է: Արտեմ»: Միգուցե այդպիսի հեռագիր ես ստացել եմ, միգուցե և չեմ ստացել: Այդ հեռագրի բովանդակության առթիվ ոչինչ չեմ կարող պատասխանել, թե ովքեր են այդ հեռագրում հիշված «Սարգիսը» և «Արտեմը» - ես չգիտեմ: Սարգիս Մանասյանին չգիտեմ: Ես գիտեմ, որ Արտեմ Թայիրյանը 1905-1906 թթ. Բաքվում ծառայել է նավթարդյունաբերողների համագումարի խորհրդում: Նրա հետ ծանոթ էի, սակայն ոչ մի գործնական հարաբերություններ չեմ ունեցել: Ձեր ներկայացրած 1907 թ. հուլիսի 15-ի Թիֆլիսից Բաքու հետևյալ հեռագիրը. «Բաքու, Մելիքյանի լուսանկարչատուն: Աբրամովիչին: Պյատիգորսկից Նորավանի համար օգնություն են խնդրում: Շտապեցրեք Մեղավորյանին մեկնել կատարողներով և գումարով: Արտավազդ» - ինձ հետ ոչ մի առնչություն չունի և բոլորովին ինձ չի վերաբերում: Ձեր ներկայացրած 1907 թ. հուլիսի 28-ի Թիֆլիսից Աբասթուման հետևյալ հեռագիրը. «Աբասթուման, Միրաքովի հյուրանոց: Գյուլխանդանյանին: Ինչպիսին է Ելիզա-

17 Այս ձևակերպումը վերաբերում է ոչ թե անդամակցությունից հրաժարվելուն, այլ ահաբեկչական գործողությունների պարագային:
18 Իսահակ Մելիքյանի լուսանկարչատունը գտնվել է Բաքվի Առևտրական և Մարինսկայա փողոցների անկյունում, հայկական եկեղեցուց 200-250 քայլ հեռու:
19 «Խարիսխ» օրաթերթը 1906-1909թթ. ընթացքում հրապարակված ՀՅԴ Արևելյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջ»-ի անվանափոխումներից մեկն էր: «Խարիսխ»-ը հրատարակվել է Թիֆլիսում 1907 թ., 44 համար, 4 էջ ծավալով: Խմբագիր-հրատարակիչը շուլավերցի Արշակ Պետրոսի Մեհրաբյանն էր, ով նույնպես ձերբակալվել էր լիժինյան գործով և դարձել առաջին մեղադրյալը:
20 Սարգիս Մանասյան:

վետպոլի պատասխանը, պատասխանեք խմբագրությանը: Շարաֆյան» – ինչ-որ ուսուցիչ Շարաֆյան խնդրում էր ինձ Ելիզավետպոլի հայկական ծխական ուսումնարանում ուսուցչի պաշտոնի համար միջնորդել Կորյուն վարդապետին: Կորյուն վարդապետին ես ճանաչում եմ դեռ այն ժամանակից, երբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանող էի, իսկ նա կաթողիկոսի[21] քարտուղարն էր: 1907 թ. օգոստոսի 21-ի Ելիզավետպոլից Թիֆլիս հետևյալ հեռագրի առնչությամբ. «Թիֆլիս, «Խարիսխ»-ի խմբագրություն: Գյուլխանդանյանին: Բազմաթիվ վիրավոր հայեր հեռանում են քաղաքից: Մանրամասները փոստով: Բաբաքյոխվով» - ես կարող եմ միայն ասել, որ այդ հեռագիրն ուղարկվել է սպանված մի կազակի պատճառով կազակների կողմից Ելիզավետպոլում կատարած կոտորածների առթիվ:

Բաբաքյոխվովին ես անձամբ չգիտեմ և անծանոթ եմ: Ինչու է Բաբաքյոխվովը հեռագիրն իմ անունով հասցեագրել - ես կարող եմ միայն պատասխանել, որ գուցե «Խարիսխ»-ի խմբագրությանը այդ կոտորածի առթիվ ես հարցում էի արել՝ գուցե Բաբաքյոխվովի անունով, ամենայն հավանականությամբ «Խարիսխ»-ի խմբագրության ցուցումով, և նա ինձ պատասխանել է այդ հեռագրով: Ես ինքս «Խարիսխ»-ի խմբագրությունում չեմ ծառայել, այդ թերթի վարիչ չեմ եղել, բայց այդ կամ մեկ այլ թերթում - ճիշտը չեմ հիշում, ես «.....»[22] կեղծանունով հոդվածներ եմ հրապարակել՝ դրանցում քաղաքական կյանքին չանդրադառնալով: Արդյոք Բաբաքյոխվովը 1907 թ. օգոստոսին ապրել է Աբասթումանում - ես չգիտեմ: Դոնի Ռոստովում բնակվող Գրիգոր Բեղելյանցին ես չգիտեմ: Ձեր ներկայացրած պետական բանկի Բաքվի բաժանմունքի 1905 թ. հուլիսի 9-ի թերթիկը Աբրահամ Գյուլխանդանյանցի կողմից Բաքվից՝ Ռոստով Գրիգոր Բեղելյանցին 1.000 ռուբլի փոխանցելու մասին ես չեմ գրել, սակայն նշված «Բոնդարնայա 139» հասցեն իմն է, որտեղ ես իրականում այն ժամանակ ապրել եմ Բաքվում: Այդ թարգմանության առթիվ ես ոչինչ չեմ հիշում: Ձեր ներկայացրած 1905 թ. հուլիսի 9-ի թերթիկը Բաքվից՝ Աստրախան Աբրահամ Գյուլխանդանյանի կողմից հոգևորական Սեղրակ Աղաբուլյանցին 3.000 ռուբլի փոխանցելու մասին – նույնպես ես չեմ գրել և 3.000 ռուբլի չեմ ուղարկել: Հովհաննես Մեղնիկյանին ես փող չեմ ուղարկել: Հովհաննես Մեղնիկյանին ես ճանաչում եմ, նրա հետ սովորել եմ Էջմիածնի հայկական հոգևոր ճեմարանում: Նա ինձ դուր չէր գալիս և նրա հետ նույնիսկ մոտ չեմ եղել: Բաքվից՝ Սարատով Մնացական Վարդանովին 1.000 ռուբլի ես չեմ փոխանցել, նրա անձն ինձ անհայտ է: Ես չեմ հիշում՝ 1906 թ. մարտի 9-ին Թիֆլիսից Ելիզավետպոլ Կորյուն վարդապետին 1.700 ռուբլի արդյոք ուղարկե՞լ եմ, թե ոչ: Ձեր ներկայացրած Թիֆլիսի Առևտրական բանկի 1905 թ. դեկտեմբերի 30-ի թերթիկը Թիֆլիսից՝ Ելիզավետպոլ Կորյուն վարդապետին 900 ռուբլի փոխանցելու մասին, ըստ որի այդ գումարը փոխանցված է Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյանի կողմից «Ժամանակ» թերթի[23] խմբագրությանը - գրված է իմ ձեռագրով, գուցե ես այդ գումարը «Ժամանակ» թերթի խմբագրության հանձնարարությամբ եմ ուղարկել: Ձեր ներկայացրած «Աբրամովիչ» ստորագրությամբ «Մեծ Քաղաքի[24] ընկերներ»-ի անունով հայերեն նամակը զենքի համար 110 ռուբլի հանձնելու վերաբերյալ - ես չեմ գրել, այդ նամակը նույնիսկ անգրագետ է գրված:

Բժիշկ Համազասպ Օհանջանյանին ես չեմ ճանաչում[25]: 1907 թ. հունվարի 10-ի Թիֆլիսից Կորյուն վարդապետի անունով հայերեն հետևյալ նամակը. «Մեծարգո Սուրբ Հայր: Խոնարհաբար խնդրում եմ 1.500 ռուբլի փոխանցել Աբրամովիչին կամ նրա ընկերներին: Հարգանքով՝ Համազասպ Օհանջան-

21 Նկատի ունի Մկրտիչ Խրիմյանին:
22 Դատական բնագիր գործում այսպես է նշված:
23 «Ժամանակ» – հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթ: Թիֆլիս, Տպ. «Հերմես», 1906-1907: Խմբագիր-հրատարակիչ Հովհ. Տեր-Միքայելյան, Սարգիս Մանասյան:
24 Թիֆլիսի շրջանը:
25 Հասկանալի պատճառով այստեղ Ա. Գյուլխանդանյանը պարզապես ձգտում է Հ. Օհանջանյանին զերծ պահել դատական լրացուցիչ մեղադրանքներից:

յան»: Այդ նամակն ինձ չի վերաբերում: 1907 թ. հունվարին ես նույնիսկ Ելիզավետպոլում չէի: Հայերեն հետևյալ գրառումը. «Հավաքված գումարը Մ. Նվագին»[26]: Գրառումներում նշված են հետևյալ գումարները. «Աբրահամ - 8873», «Աբր. շտաբին - 7664» և «Աբրահամ - 528» - բոլորովին ինձ չեն վերաբերում:

Ընթերցված է: Ընթերցման ընթացքում ես կհավելեմ - եթե հիշատակված Շարաֆյանը ուսուցիչ է, ապա ես հիշում եմ, որ ինչ-որ ուսուցիչ դիմել էր ինձ՝ Ելիզավետպոլի հայկական ուսումնարանում ուսուցչի պաշտոնի համար խնդրելու Կորյուն վարդապետին: Ավելին հավելել չեմ կարող:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 2688-2692:

Թարգմանություն ռուսերենից:

<u>ԹԻՎ 3</u>

ՈՐՈՇՈՒՄ

1911թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը դիտարկելով հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործով իր կատարած նախաքննությունը՝ ԳՏԱՎ.

Որ ներքոանվանյալ մեղադրյալը սույն գործով ներկայացված Քրեական դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդվածների հիման վրա նախաքննությամբ կատարել է հետևյալ հայտարարությունները.

XXXXXXXV. Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյան

1. Հնարավորություն տալ ծանոթանալ բնագիր գործին և դրան վերաբերող բոլոր փաստաթղթերին, քանզի առաջին անգամ անուշադիր է նայել դրանք:

2. Դիտման համար տրամադրել բոլոր փաստաթղթերը կամ դրանց պատճենները, քանզի փաստաթղթերի թարգմանության մեջ առկա են բազմաթիվ սխալներ, և թարգմանիչները հայերեն լեզվին անբավարար են ծանոթ եղել:

3. Կատարել հայերեն փաստաթղթերի նոր թարգմանություններ՝ հայերեն լեզվին և գրականությանը միանգամայն ծանոթ թարգմանիչների միջոցով:

4. Որպես Զարուհի Ղազանջյանի ցուցմունքի հերքում, ըստ որի նա Գյուլխանդանյանին ճանաչում է որպես Թիֆլիսի հայկական Ներսիսյան դպրոցի ուսուցչի[27] - պահանջել տեղեկանք այդ դպրոցից, որ Գյուլխանդանյանն այդ դպրոցում ուսուցիչ չի եղել:

5. Հաբեթ Վարդերեսյանը[28] նշում է մինչև 200 դաշնակցականների, իսկ Միհրանը՝ 600, ընդ որում Միհրանը շեշտում է՝ «Աբրահամ Սահակի Գյուլխանդանյան», ինչը նշված է անձնագրային գրքույկում, այնպես որ՝ դա կարծես թե մեկի կողմից թելադրված է Միհրանին:

6. Միհրանը, Հաբեթը և Զարուհին կեղծ վկայություններ են տալիս, քանզի նրանք ընդունակ են ցանկացած խարդախության ու զբաղվում են նենգաշորթությամբ, ինչի առթիվ հարցաքննել Սեյլանովին և Բասենցևին:

7. Ֆրենկելի ցուցմունքը, ըստ որի Գյուլխանդանյանը եղել է կուսակցության Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ և Կորյունի աջակից, իսկ 1905 թ. ձևի համար է Վաղարշապատում նավթի կրպակ ունեցել՝ ոչ մի քննադատության չի դիմանում և կեղծ է, քանի որ 1905 թ. նա ապրել է Բալախանիում, այնտեղ ունենալով «Երկաթ» արհեստանոց, ինչի մասին կարող են հաստատել «Մասնակից» ընկերության բոլոր ծառայողները: Ապա նա 1905 թ. օգոստոսից ապրել է Բաքվում Բոնդարնայա 139 տանը, ինչի հաստատումը կարող ենք տեսնել անձնագրային գրքույկում: 1905 թ. սեպտեմբերին կամ հոկտեմբերի սկզբին մեկնել է Թիֆլիս՝ այնտեղ ապրելով «Սևերնիե նոմերա» հյուրանոցում, իսկ 1905 թ. նոյեմբերի 20-ին մեկնել է Ելիզավետպոլ: Վաղարշապատ մեկնել է միայն տոներին և 1906 թ. մարտից հետո հաստատվել է Վաղարշապատում, ինչի մասին

26 Հավանաբար դատական գործի բազմաթիվ սխալներից մեկն է, պետք է լինի «Մ.[եծ] Քաղաք»:
27 Ա. Գյուլխանդանյանը երբեք Ներսիսյան դպրոցում չի աշխատել:
28 Վարդերեսյանը Միհրանի մերձավոր աջակիցն էր:

հարցաքննել Գարեգին Ենգիբարյանին, ինչպես նաև նայել վանքապատկան կալվածքների կառավարման մատյանները - նավթի պահեստի համար տարածքի վարձակալման ժամկետի պարզման նպատակով:

8. Նավասարդ Միրումյանի ցուցմունքները կեղծ են՝ Ա. որ իբր Գյուլխանդանյանն ասել է նրան, թե ինքը ձերբակալվել է «Ազիզ Պետրոսյանցի» անունով, Բ. որ իբր Գյուլխանդանյանի հրամանով սպանվել է [Ելիզավետպոլի] գավառապետ Ավալիանին, Գ. որ իբր Գյուլխանդանյանից էր կախված, թե ում ենթարկել ահաբեկչության կամ ազատել դրանից, իսկ Ավալիանիի սպանությունը տեղի է ունեցել 1908 թ. մարտ-ապրիլին, երբ Գյուլխանդանյանն ապրել է Յարոսլավլում՝ լինելով Դեմիդովյան լիցեյի ուսանող, իսկ ողջ 1908 թ. անց է կացրել. ծննդավայր Էջմիածնում, ապա հիվանդ Համազասպ եղբոր հետ մեկնել է Խարկով, ինչի առթիվ միջնորդում է տեղեկանքներ վերցնել Էջմիածնի գավառապետից, Խարկովի հյուրանոցից և հիվանդանոցից, Դեմիդովյան լիցեյից:

9. Կորյուն վարդապետը ձերբակալվել է 1907 թ., և 1908 թ. գտնվում էր բանտում, դրա համար էլ 1907 թ. և 1908 թ. Նավասարդ Միրումյանի նշած ահաբեկչության առիթով խորհրդակցություններ չէին կարող տեղի ունենալ:

10. «Աբրամովիչ» ծածկանունը Գյուլխանդանյանին վերագրվել է Դատական Քննիչի կողմից: Ըստ Միհրանի՝ «Աբրամովիչ» ծածկանունը Սամսոն Հարությունովինն[29] էր, իսկ Գյուլխանդանյանին Դատական Քննիչն իրավունք չուներ նման ծածկանուն վերագրել:

11. Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյանի կողմից Ելիզավետպոլ՝ Կորյուն վարդապետին 1906 թ. դրամական երկու փոխանցումները կատարվել են իր կողմից խմբագրության[30] խնդրանքով, իսկ որ այդ գումարները գտնվում էին խմբագրության տրամադրության տակ - կարելի է համոզվել նշյալ թերթի խմբագրության մատյանների և փաստաթղթերի զննմամբ:

12. Քննչական նյութում նշվում է, որ Կորյուն վարդապետն Աբրահամից ստացել է 10.000 ռուբլի, իսկ մնացել է 500 ռուբլի, դրա համար էլ որպես հաստատում այն բանի, որ «Աբրահամ» ծածկանունն իրեն չի վերաբերում՝ հարցաքննել նախկին Կորյուն վարդապետին, գործին կցել ինքնապաշտպանության համար գումարի հանգանակության առթիվ Ելիզավետպոլի քաղաքացիների կազմած արձանագրությունը և հարցաքննել արձանագրության մեջ նշված բոլոր անձանց՝ հաստատելու համար, որ Գյուլխանդանյանն այդ գումարի հանգանակմանը չի մասնակցել:

13. Սույն գործին կցել Կորյունից առգրավված բոլոր փաստաթղթերը և ներկայացնել Գյուլխանդանյանին՝ ծանոթանալու համար:

14. Ինչ վերաբերում է փաստաթղթին, ուր նշված է հետևյալը. «Կորյունի շտաբի վրա ծախսված է 15.852 ռուբլի 40 կոպեկ, Աբրահամի շտաբի վրա – 9401 ռուբլի», ապա նշյալ Աբրահամը - ինքը Գյուլխանդանյանը չէ, այդ փաստաթուղթն իր հետ ոչ մի առնչություն չունի, փաստաթուղթը թարգմանված է սխալ, և միջնորդում է փաստաթուղթն իրեն ներկայացնել:

15. Արտեմ Թայիրյանի հետ Գյուլխանդանյանը ծանոթացել է 1907 թ.: Առաջինը նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի հաշվապահն էր, իսկ երկրորդը՝ «Դրուժբա» ընկերության հաշվապահը, ինչում կարելի է համոզվել՝ պահանջելով «Դրուժբա» ընկերության և համագումարի խորհրդի գրասենյակի հաշիվները:

16. Նոր փորձագետների միջոցով Բաքվից Աստրախան և Դոնի Ռոստով դրամական փոխանցումների փորձաքննություն կատարել, քանի որ ռուս փորձագետները սխալվել են՝ իրեն վերագրելով այդ դրամական փոխանցումները:

17. Իր բացատրությունները հնարավոր է լրացնի, եթե հանգամանորեն ծանոթանա քննչական վարույթում գտնվող գործի հետ, քանզի 1910 թ. նոյեմբերի 13-ից մինչև դեկտեմբե-

29 Հարությունյան Սամսոն (1869, գ. Վերին Աղդան-1941) – անվանի հասարակական-քաղաքական գործիչ: Եղել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ, Ազգային Բյուրոյի նախագահ:
30 Նկատի ունի «Խարիսխ» թերթը:

րի 20-ը առանց ընդմիջման 6 ժամ թռուցիկ ընթերցման պատճառով ինքը չի հասցրել քննչական գործի հետ մանրամասն ծանոթանալ:

Փոխել կալանման միջոցը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4404-4406: Թարգմանություն ռուսերենից:

* * *

CCXV. Աբրահամ Գյուլխանդանյան

(լրացուցիչ հայտարարություններ հեռագրով և խնդրագրով)

1. Նշանակել դատաբժշկական զննություն և ազատել կալանքից:

2. [Դատական] Ողջ գործից տրամադրել պատճեններ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4444: Թարգմանություն ռուսերենից:

* * *

25. Աբրահամ Իսահակի Գյուլխանդանյան

(Դիտել բնագիր վարույթը, ինչպես նաև հայերեն փաստաթղթերը, որոնք առնչվում են իրեն, քանզի առաջին անգամ անուշադիր է նայել դրանք):

Դիտման համար ներկայացնել բոլոր փաստաթղթերը կամ դրանց պատճենները, քանզի թարգմանության մեջ առկա են բազմաթիվ սխալներ և թարգմանիչներն անբավարար են ծանոթ եղել հայերեն լեզվին և նրա ոգուն, կատարել հայերեն փաստաթղթերի նոր թարգմանություն հայերեն լեզվին, հին ու նոր գրականությանը միանգամայն ծանոթ թարգմանիչների միջոցով:

Ներկայացնել փաստաթուղթը, որտեղ նշվում է, թե նրա ղեկավարությամբ կուսակցական կարիքների համար ծախսվել է 35.295 ռուբլի 70 կոպեկ կուսակցական գումար: Ներկայացնել իրեն Կորյունից առգրավված բոլոր փաստաթղթերը: Ինչ վերաբերում է այն փաստաթղթին, որտեղ նշված է հետևյալը. «Կորյունի շտաբի վրա ծախսված է 15.852 ռուբլի 40 կոպեկ, Աբրահամի շտաբի վրա - 9401 ռուբլի» - ապա այդ փաստաթուղթը սխալ է թարգմանված և այդտեղ նշված անձն ինքը չէ: Իր բացատրությունները հնարավոր է լրացնի, եթե հնարավորություն տրվի ծանոթանալ քննչական վարույթի գործի հետ, քանզի 1910 թ. նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 20-ը օրական 6 ժամ անընդմեջ թռուցիկ ընթերցման դեպքում չի կարողացել մանրամասն ծանոթանալ քննչական նյութի հետ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4459: Թարգմանություն ռուսերենից:

* * *

9. Մեղադրյալ Աբրահամ Գյուլխանդանյանը՝ վրդովված վկա Ֆրենկելի դեմ այն բանի համար, որ վերջինս նշում է, թե իբր Աբրահամ Գյուլխանդանյանը եղել է Կորյունի աջակիցը, մասնակցել է «Դաշնակցության» գործունեությանը, եղել նրա Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամը, 1905 թ. աչք փակելու համար Վաղարշապատում ունեցել նավթի կրպակ, ուր լինում էին նաև ուրիշ անձինք - հայտարարում է, որ նման ցուցմունքը քննադատության չի դիմանում և կեղծ է: Սակայն, քանի որ մեկ այլ վկա՝ Նավասարդ Միրումյանը, հաստատում է վկա Ֆրենկելի փաստարկները Գյուլխանդանյանի՝ որպես Կորյունի աջակցի և կուսակցության նույն կոմիտեում մասնակցության վերաբերյալ՝ Գյուլխանդանյանին վերագրելով ահաբեկչության գծով ոչ միայն Ելիզավետպոլ քաղաքում, այլև Ելիզավետպոլի նահանգում ղեկավար դերակատարություն, ապա մեղադրյալ Գյուլխանդանյանն այդ վկային ևս անվանում է ստախոս՝ նրա ցուցմունքը կեղծ համարելով: Ընդ որում, որպես վկա Ֆրենկելի փաստարկների հերքում՝ Գյուլխանդանյանը խնդրում է հարցաքննել Բալախանիում «Մասնակից» ընկերության ծառայողներին, զննել իր անձնագիրը, նավթի կրպակի համար վարձակալության համար վանքապատկան կալվածքների կառավարման մատյանները, վերցնել տեղեկանք նրա բարեհուսության մասին, հարցաքննել վկա Ենգիբարյանին և իր եղբայր Անդրեյ Գյուլխանդանյանին ի հաստատումն 1905 թ. իր՝ Բալախանիում, Թիֆլիսում, Բաքվում, Վաղարշապատում, Ելիզավետպոլում ապրելու

մասին: Սակայն, մեղադրյալի այս միջնորդությունը բավարարման ենթակա չէ, քանզի այդ փաստերի առթիվ նույն մեղադրյալի հղումով հարցաքննվել են բազմաթիվ վկաներ, ովքեր հաստատել են այն հղումը, որն ըստ էության Գյուլխանդանյանի արդարացման օգտին ոչինչ չի տալիս, այլ միայն ամրապնդում է մեղադրող կողմի վկաներ Քեշիշյանի և Վարդերեսյանի փաստարկները, ովքեր ցույց են տվել կուսակցության մեջ Գյուլխանդանյանի շրջիկ դերակատարությունը[31] և ըստ այդմ՝ նրա մասնակցությունը տարբեր կենտրոնական կոմիտեներում՝ մեկ Բաքվի, մեկ Թիֆլիսի, մեկ Ելիզավետպոլի: Հավասարապես հարգման արժանի չէ նույն մեղադրյալ Գյուլխանդանյանի միջնորդությունը նրան մերկացնող վկա Միրումյանի ցուցմունքների հերքման առթիվ հետևյալ պատճառներով.

Ա. Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետից և Ելիզավետպոլի նահանգի գծով նրա օգնականից տեղեկանքների ստացման մասին, ըստ որի Գյուլխանդանյանը Թիֆլիսում իր ձերբակալության ժամանակ հայտարարել է իր թյուրիմացաբար ձերբակալության մասին և միջնորդել է իր հարցաքննության համար,

Բ. Դեմիդովյան լիցեյից, Էջմիածնի գավառապետից, Խարկովի հիվանդանոցից և հյուրանոցից տեղեկանքների ստացման մասին առ այն, որ ի հաստատումն այն բանի, որ 1908 թ. ապրիլին գավառապետ Ավալիանիի սպանության ժամանակ ինքը՝ Գյուլխանդանյանը Ելիզավետպոլում չի գտնվել,

Գ. Տեղեկանքների ստացում առ այն, որ Կորյունը ձերբակալվել է 1907 թ., և 1908 թ. գտնվում էր բանտում, և ըստ այդմ ինքը՝ Գյուլխանդանյանը 1908 թ. չէր կարող Կորյունի հետ խորհրդակցել,

Դ. Հարցաքննել Նավասարդ Միրումյանի եղբորը՝ Գևորգին առ այն որ առաջինը հղում է կատարել Գյուլխանդանյանի՝ Կորյունի հետ ահաբեկչության առթիվ խորհրդակցություն կատարելու մասին,

Ե. Որ Թիֆլիսում ինքը ձերբակալվել է Ազիզ Պետրոսյանի անվան տակ, որի անունով ապրել է մեկ տարի, և միայն Ելիզավետպոլի բանտում Նավասարդ Միրումյանի վկայությամբ բացահայտվել է իր իսկական անունը:

Մեղադրյալ Գյուլխանդանյանի այս միջնորդություններն անհիմն են և բավարարման ենթակա չեն:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4491-4492:
Թարգմանություն ռուսերենից:

<u>Թիվ 4</u>
ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԱԿՏ

Ինչ վերաբերում է մեղադրյալ Աբրահամ Գյուլխանդանյանին [Համազասպ Օհանջանյանի, Սարգիս Մանասյանցի և Համազասպ Սրվանձտյանցի հետ] կալանքից ազատելու մասին միջնորդություններին, ապա այդպիսի միջնորդությունները՝ դրանց համար օրինական հիմնավորումների բացակայության պատճառով, չեն կարող բավարարվել:

Շարադրյալի հիման վրա Դատական Քննիչը որոշեց. բոլոր վերոնշյալ միջնորդություններում հիշատակվող մեղադրյալներին՝ նշված հիմքով սույն որոշման մեջ մերժել:

Դատական Քննիչ Ն. Լիժին
ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4607:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

134. Հարցաքննված Գաբրիել Քեշիշյանը ցուցմունք է տվել, որ Աբրահամի անվան տակ «Դաշնակցություն» կուսակցության մեջ հայտնի էր Աբրահամ Գյուլխանդանյանը՝ կազմակերպության գլխավոր անդամներից մեկը, ում միջոցով կոմիտեները հաղորդակցվում էին իրար հետ, ով սկզբում անդամակցում էր Ելիզավետպոլի, ապա Բաքվի կենտրոնական կոմիտեներին (բնագիր գործ, հտ. 13, թ. 226):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 134:
Թարգմանություն ռուսերենից

31 Նկատի ունի կուսակցական շրջիկ գործիչ լինելու հանգամանքը:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Հովհաննես Քաջազնունու դատական գործը*

Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին անջնջելի հետք է թողել Հայոց նոր պատմության մեջ՝ դառնալով 20-րդ դարի առաջին տասնամյակներին մեր ազգային երկնակամարի վրա փայլատակած վառ անհատականություններից մեկը:

Հովհաննես Քաջազնունին (Իգիթխանյան) ծնվել է 1868 թ. փետրվարի 1-ին Ախալքալաքի գավառի Գանձա գյուղում՝ քահանայի ընտանիքում: Իգիթխանյանների ընտանեկան միջավայրը և մեծ եղբոր՝ ՀՅԴ հիմնադիրների հետ սերտ կապեր ունեցող Վարդգես Քաջազնունու բարերար ազդեցությունը մանկուց բորբոքել են նրա ազգային-հայրենասիրական զգացմունքները:

Հովհաննես Քաջազնունին 1877-1886 թթ. Թիֆլիսում ստացել է միջնակարգ կրթություն՝ սովորելով մասնավոր դպրոցում, ապա՝ ռեալական ուսումնարանում: 1883 թ. անդամակցել է «Նարոդնայա Վոլյա» կուսակցության ղեկավարած գաղտնի աշակերտական խմբակին: 1885-1886 թթ. ընդգծված ազգային բնույթ ձեռք բերած այս աշակերտական խմբակում նա սերտել է ընդհատակյա աշխատանքի առաջին դասերը: Այնուհետև 1887-1893 թթ. սովորել է Պետերբուրգի Քաղաքացիական ինժեներների ինստիտուտում, մասնակցել տեղի հայ ուսանողների ժողովներին: Եղել է Պետերբուրգի հայ ուսանողների կողմից ժողովրդական ընթերցանության համար նախատեսված գրքույկների մատենաշարի հրատարակման խմբագրական հանձնաժողովի անդամ:

Քաղաքացիական ինժեներների ինստիտուտն ավարտելուց հետո 1893-1895 թթ. ծառայել է Բաքվի նահանգային վարչությունում որպես տեխնիկ: Սիմոն Զավարյանի ջանքերով անդամակցելով ՀՅ Դաշնակցությանը, կապեր է հաստատել գործարանային շրջաններում, ծավալել քարոզչություն, անդամներ հավաքագրել կուսակցության մեջ: 1895-1897 թթ. Բաքումում ծառայել է որպես ինժեներ՝ սահմանապահ պահպանության կորպուսի սևծովյան բրիգադում: Օգտվելով իր դիրքից, ուսումնասիրել է Ճորոխի սահմանագիծը՝ Արևմտյան Հայաստան զենք տեղափոխելու համար լրացուցիչ հենակետեր ստեղծելու նպատակով, սակայն այդ նախագիծը չի իրականացվել: Միաժամանակ աշխատակցել է Գ. Թումանովի «Նովոյե օբոզրենիե» թերթին, գրել փոքրիկ պատմվածքներ, գրաքննադատական ակնարկներ: 1897-1899 թթ. Հովհաննես Քաջազնունին աշխատել է իբրև

* Ընդունվել է տպագրության 25.11.1010:

Թիֆլիսի քաղաքային վարչությանը կից ճարտարապետ: Մասնակցել է Արևմտյան Հայաստանից գաղթած բանվորների կազմակերպման՝ ՀՅԴ աշխատանքներին, զենքի գաղտնի տեղափոխման համար մարդկանց հավաքագրման և նախապատրաստման նպատակով:

1899-1906 թթ. Բաքվում ծառայել է «Նավթարդյունաբերողների խորհրդում» որպես ավագ ինժեներ, նավթաշրջանի գլխավոր վարիչ: Իրեն ենթակա տեխնիկական բաժինը դարձրել է ՀՅԴ կենտրոնատեղիներից մեկը, այնտեղ հավաքել ու ժամանակավոր ապաստան տվել ընդհատակյա գործիչներին: 1901թ. վերջին որպես զբոսաշրջիկ ճանապարհորդել է Արևմտյան Եվրոպայում: Գրել է ճանապարհորդական ակնարկներ, որոնք «Հարյուր տաս օր Եվրոպայում» խորագրի ներքո հրատարակվել են «Բաքու» թերթում, ապա՝ առանձին գրքույկով: Հրապարակայնորեն քննադատել է Հայաստանյայց եկեղեցու գույքի բռնագրավման և հայ-թուրքական կռիվների հրահրման՝ ցարական իշխանությունների քաղաքականությունը: 1906 թ. օգոստոսին մասնակցել է Էջմիածնում կայացած Արևելահայերի (Ռուսահայոց) Կենտրոնական ժողովին, որտեղ հստակորեն ձևակերպվել են Ռուսաստանի հայության կյանքի բարեփոխման՝ ՀՅԴ պահանջները:

1907-1910 թթ. Բաքվում զբաղվել է հայկական տաճարի նախագծման և շինարարության հետ կապված աշխատանքներով: Նույն շրջանում՝ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, կուսակցական գործերով երկու ամսով մեկնել է Կ. Պոլիս:

ՀՅԴ դեմ ուղղված լիժինյան հալածանքներն իրենց շրջանակի մեջ առան նաև Հովհաննես Քաջազնունուն: Հետաքննության ընթացքում նա իրեն մեղավոր չճանաչեց: Ավելին՝ ներկայացված մեղադրանքներն ավելի քան պարզունակ էին. մասնակցություն Էջմիածնում գումարված «հայկական համագումարին», ՀՅԴ օգտին տեսական ուղղվածության հոդվածի հրապարակում՝ օրինական կերպով տպագրվող պարբերականում: Ազատվելով խոշոր չափի գրավի դիմաց և խուսափելով դատից՝ Հովհաննես Քաջազնունին 1910 թ. վերջին հեռանում է արտասահման:

1911-1913 թթ. բնակվել է Փարիզում, Մոնպելյեում, Գենտում և Բրյուսելում: Գոյատևման միջոցներ հայթայթելու համար դարձել է «Բաքու» թերթի սեփական թղթակիցը, հոդվածներ գրել «Ռ. Իվանովիչ» ստորագրությամբ: Հովհաննես Քաջազնունու այս շրջանի հրապարակումների հիմնական թեման բալկանյան պատերազմներն էին:

1913 թ. ամռանը Կ. Պոլսի, Տրապիզոնի եւ Էրզրումի վրայով անցել է Վան, դարձել ՀՅԴ Վասպուրականի կենտրոնական կոմիտեի խորհրդատուն, կատարել կուսակցական որոշ հանձնարարություններ, կարդացել հրապարակային դասախոսություններ: Արևմտյան Հայաստանից շարունակել է թղթակցել «Բաքու» թերթին՝ «Իմ հայրերի երկրում» ընդհանուր խորագրով: Հետաքրքրվել է նաև Վասպուրականի քրդերի բանահյուսությամբ, գրառել բազմաթիվ երգեր ու հեքիաթներ:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո՝ 1914 թ. սեպտեմբերին, գաղտնի կերպով անցել է Թիֆլիս: Կուսակցական շրջանակներում կայացած

հանդիպումներում Հովհաննես Քաջազնունին կտրուկ կերպով դեմ է արտահայտվել կամավորական շարժմանը: 1915 թ. սկզբին Ռուսաստանում տեղի ունեցած ընդհանուր համաներման շնորհիվ անցել է լեգալ գործունեության, անդամակցել Ազգային Բյուրոյին՝ դառնալով նրա քարտուղարը: Եղել է Քաղաքների միության Կովկասյան կոմիտեի անդամ և այդ կարգավիճակով կարճ ժամանակով տեսչության մեկնել Ալաշկերտ:

1917 թ. սկզբին անցել է Բաքու՝ ստանձնելով նավթարդյունաբերող ֆիրմաների միջև դեֆիցիտ նյութերի բաշխման գործը: 1917 թ. Փետրվարյան հեղափոխության առաջին օրերից Հովհաննես Քաջազնունին դարձել է հայ հասարակական ուժերի կազմակերպման աշխատանքների գործունյա մասնակիցը: Բաքվում աշխատել է միջկուսակցական խորհրդակցություններում, պաշտպանել բոլոր հեղափոխական ուժերի սերտ համախմբան գաղափարը: 1917 թ. վերջին ընտրվել է Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի անդամ:

Անդրկովկասյան Սեյմի ձևավորումից հետո եղել է նրա անդամը, աշխատել որպես խնամատարության նախարար՝ Գեգեչկորիի և առանց պորտֆելի նախարար Չխենկելիի կառավարություններում: Անդրկովկասյան Սեյմի պատվիրակությունների կազմում մասնակցել է Տրապիզոնի և ապա՝ Բաքումի հաշտության բանակցություններին: Անդրկովկասյան Սեյմի լուծարումից հետո վերադարձել է Բաքում, որտեղ արդեն՝ Հայաստանի անկախ Հանրապետության անունից, թուրքերի հետ կնքել է խաղաղության պայմանագիրը:

1918 թ. երկրորդ կեսին եւ 1919 թ. առաջին հինգ ամիսներին Երևանում վարել է Հայաստանի Հանրապետության վարչապետի ծանր ու չափազանց պատասխանատու պաշտոնը: 1919 թ. երկրորդ կեսից սկսած մինչև 1920 թ. առաջին եռամսյակը Հայաստանի Հանրապետության համար տնտեսական օգնություն փնտրելու նպատակով մեկնել է Փարիզ, Լոնդոն, ԱՄՆ: Չորս ամիս եղել է Փարիզում, ապա Լոնդոնում, իսկ հետո գլխավորապես՝ Ամերիկայում, որից օգնության առավել մեծ ակնկալիքներ ուներ:

1920 թ. հոկտեմբեր-նոյեմբերին եղել է Հայաստանի Խորհրդարանի նախագահը: 1921թ. փետրվարի սկզբին ձերբակալվել է և բանտարկվել խորհրդային Արտակարգ հանձնաժողովի կողմից: Փետրվարյան ապստամբությունից հետո Լեռնահայաստանով անցել է Պարսկաստան, որտեղից մեկնել է Կ. Պոլիս, ապա՝ Բուխարեստ: Հեղինակել է ազգային-հասարակական հնչեղության գրքեր[1]:

Խորհրդային կարգերի ամրապնդումից հետո, 1925 թ. վերադարձել է Երևան, աշխատել շինարարական նախագծերի հսկողության ոլորտում: 1926-1931թթ. դասավանդել է Երևանի համալսարանում, ապա՝ Շինարարական ինստիտուտում, եղել է Հայկական տեխնիկական ընկերության նախագահության անդամ, ապա՝ նախագահ:

1930-ականների ստալինյան բռնաճնշումների զոհերից մեկը դարձած Հովհաննես Քաջազնունին գիտակցորեն դիմավորեց անխուսափելի մահը՝ 1937 թվականի Մայիսի 28-ը միայնակ տոնելով մայրաքաղաք Երևանում՝ Հրազդանի կիրճում:

---

1 Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, Պուքրէշ, Աղէքսանդրիա, Թիֆլիս, 1923; Եր., 1994: Բաց նամակ Z-ին. Ռուսաստան թէ Թուրքիա: Պուքրէշ, 1924 ; Պէյրութ, 1965, Եր., 1990: Յետ մահու: Պէյրութ, 1965: Ազգ եւ հայրենիք, Պէյրութ, 1979, Եր., 2008: Հայաստանի Հանրապետութիւն, Եր., 1993:

Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին ձերբակալվել է 1937 թ. հոկտեմբերի սկզբին, «լրտեսության» վերաբերյալ խոստովանություն կորզելու համար կուրացվել է 3500 մոմանոց էլեկտրական լամպերի միջոցով ու տանջամահ արվել 1938 թ. հունվարին, չեկայի բանտի ներքնահարկում:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The Lawsuit of Hovhannes Qajaznuni

Avag A.Harutyunyan

ԹԻՎ 1
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. օգոստոսի 19: Քաղաք Բաքու: Բաքվի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչ Պողգորենսկին Քրեական դատավարության կանոնադրության 403-րդ հոդվածում նշված կանոնների պահպանմամբ որպես մեղադրյալի հարցաքննեց ներքոանվանյալին, ով իրեն ներկայացված հարցերին հետևյալ ցուցմունքը տվեց.

Իմ անուն, հայրանուն, ազգանուն – Հովհաննես Մատթևոսի Տեր-Հովհաննեսյանց Քաջազնունի; տարիքը – 42 տարեկան; ծննդյան վայրը – ք. Ախալքալակ, Թիֆլիսի նահանգ; գրանցման վայրը – նույն տեղում; բնակության վայրը – քաղաք Բաքու, Բալախանիի փողոց, Կաշչևի տուն; ծնունդը – օրինական; կոչումը – տոհմիկ պատվավոր քաղաքացի; ազգությունը – հայ; կրոնը – հայ-գրիգորյան; կրթությունը – ք. Պետերբուրգում ավարտել է քաղաքացիական ինժեներների կայսերական ինստիտուտը; զբաղմունքը – քաղաքացիական ինժեներ; գույքային ապահովվածության աստիճանը – ստանում է աշխատավարձ, [եկամտի] այլ միջոցներ չունի; ընտանեկան դրությունը – ամուսնացած, ունի երկու դուստր և չորս որդի; դատվածություն – չի եղել; հատուկ նշաններ – չկան:

Ապա, ըստ մեղադրանքի ներկայացված հարցերին, հետևյալ ցուցմունքն է տալիս:

Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում այն բանում, որ պատկանել եմ 1905-1908 թվականներից Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության նպատակ էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի է ունեցել 1905-1908 թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական ու տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908 թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական

պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908 թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցագործ նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ [է կատարել] հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության իրավասությունը՝ իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես՝ Հովհաննես Քաջազնունիս [սա կրկին քննիչի կողմից ներկայացված մեղադրանքի տեքստն է], կրելով «Հայկազունի» կուսակցական մականուն, 1906-ից եղել եմ հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Բաքվի կոմիտեի անդամ, դրանում ունեցել եմ ամենից գործունյա մասնակցություն հեղափոխական քարոզչության մեջ, ինչպիսի գործունեության մասին [նրա] հաստատված է հետևյալը.

1. [ՀՅԴ] կուսակցության Արևելյան Բյուրոյի օրգան «Ալիք» թերթի զննումից և թարգմանությունից երևում է, որ 1907 թ. հունիսին ք.Թիֆլիսում Ներսիսյան հայկական ճեմարանի հոգաբարձուներ են ընտրվել «Դաշնակցություն» կուսակցության կողմից ներկայացված նրա անդամներ Ավետիս Ահարոնյանը, Սարգիս Մանասյանցը, Մինաս Մուրադովը, ճարտարապետ Հովհաննես Քաջազնունին;

2. «Դաշնակցություն» կուսակցության Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի օրգան «Ժամանակ» թերթի զննումից երևում է, որ նշյալ թերթի 1907 թ. հունվարի 13-ի թիւ 9-ում «Հովհաննես Քաջազնունի» ստորագրությամբ «Ի՞նչ կլինի «Դաշնակցության» հետ» հոդվածում Քաջազնունին առարկում է «Մշակ» թերթում տպված Մարկոսյանի հոդվածների դեմ, որոնցում վերջինս փորձել է ցույց տալ, թե իբր «Դաշնակցություն» կուսակցությունը ստեղծված է Թուրքիայում գործելու համար, և որ նա պետք է տեղ ունենա Թուրքիայում, այլ ոչ թե Ռուսաստանում, սակայն այդ կուսակցության ղեկավարները դրա գործունեության կենտրոնը փոխադրել են Ռուսաստան: Այդ հոդվածում Հովհաննես Քաջազնունին առարկելով Մարկոսյանին՝ ցույց է տալիս, որ ռուսական հեղափոխությունը և դրա հետ կապված կովկասյան հայերի հարցը «Դաշնակցություն» կուսակցության վրա նոր պարտականություններ են դրել, որոնք բխում են հայ հեղափոխության ընթացքից: Ըստ նրա՝ երբ Ռուսաստանը կանգնեց հեղափոխական ուղու վրա, «Դաշնակցությունը» չկարողացավ ձեռնպահ մնալ այդ հեղափոխական պայքարին մասնակցությունից, քանի որ այդ հեղափոխության հետ է կապված Ռուսաստանում մեկ ու կես միլիոն հայ ժողովրդի բախտը:

3. Բաքվում 1908 թ. փետրվարի 25-ին Պողոս Ավագյանից և Մկրտիչ Բալայանցից խուզարկությամբ առգրավված կուսակցական թղթերից երևում է, որ այդ թղթերի մեջ հայտնվել են՝

Ա. 1907 թ. դեկտեմբերի 10-ից «Հայ Հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Բաքվի շրջանի երկրորդ կոմիտե» բլանկով հաղորդագրություն կոմիտեի «Ավո» անդամի ստորագրությամբ այն մասին, որ կոմիտեի շրջանից պատգամավոր է ընտրվել նրա անդամ Հայկազունին,

Բ.«Նախագահ Հովհաննես Վարդանյան» և «քարտուղար Հայկազունի» ստորագրությամբ 1907 թ. դեկտեմբերի 21-ի հաղորդագրությունը «Դաշնակցություն» կուսակցության Բաքվի Կենտրոնական կոմիտեին այն մասին, որ Սև և Սպիտակ քաղաքներից դաշնակցական շրջանային ժողովի պատգամավոր է ընտրվել կուսակցության անդամ Մկրտիչումը[2],

4.Էջմիածնում 1906 թ. օգոստոսին գումարված հայկական համագումարի մասին Երևանի նահանգապետի և Էջմիածնի Սինոդի դատախազի գործի զննումից երևում է, որ Հովհաննես Քաջազնունին այդ համագումարում հանդես է եկել որպես «Դաշնակցություն» կուսակցության պատգամավոր, ընդ որում նաև՝ Հովհաննես Քաջազնունին, երբ 1906 թ. օգոստոսի 30-ին այդ համագումարը փակվել է իշխա-

2 Փաստաթղթի բնագրում այսպես է նշված: Պետք է լինի Մկրտում: Անձը պարզել չհաջողվեց:

նությունների կողմից, մնացած 37 դաշնակցական պատգամավորների հետ բողոքել է Էջմիածնի գավառապետին. «Բողոքում ենք այդպիսի կարգադրության դեմ, որպես յուրաքանչյուր քաղաքացու խոսքի և ժողովների ազատության խախտող, յուրաքանչյուրի ազգային գործերը լուծելու իրավունքը ոտնահարող քայլ»:

Որպես արդարացում հայտարարում եմ, որ ես «Դաշնակցություն» կուսակցությանը չեմ պատկանել և չեմ պատկանում[3]: «Հայկազունի» կուսակցական մականուն, ինչպես և ընդհանրապես որևէ մականուն և ոչ մի կեղծանուն ես երբեք չեմ ունեցել և չունեմ: Չպատկանելով «Դաշնակցություն» կուսակցությանը, ես չեմ եղել և չէի կարող լինել կուսակցական քարոզիչ: Ինձ ներկայացված մեղադրանքի առաջին կետում նշված հոդվածը «Ժամանակ» թերթում ես տպել եմ: Երբ եմ ես գրել այդ հոդվածը և ինչպիսի վերնագիր է նա կրել՝ այժմ չեմ հիշում: Գիտեմ միայն, որ այդ հոդվածը «Ժամանակ» («Ալիք») թերթում իմ կողմից գրվել է այն ժամանակ, երբ «Դաշնակցությունը» տեղական կյանքում ուներ այնպիսի ակնառու դերակատարություն, որ նրանով հետաքրքրված էին բոլորը: Ես անձամբ նույնպես հետաքրքրված լինելով, խորապես ուսումնասիրել եմ այդ կուսակցության ծրագիրը, հետևել նրա գործունեությանը, քանի որ այն դառնում էր հասարակական երևույթ: Ես այդ կուսակցության մասին որոշակի կարծիք կազմեցի, որը և արտահայտել եմ նշյալ հոդվածում: Այդ հոդվածը բացարձակապես պատահական և եզակի էր: Այն հրատարակվել է լեգալ օրգանում իմ լրիվ ստորագրությամբ: Արդյոք եղել է այդ թերթը կուսակցական՝ ես չգիտեմ, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա՝ դա ինձ անհայտ է[4]: Դրա ուղղվածությունը՝ տոնը ընդհանուր էր ողջ արմատական մամուլի համար: «Ժամանակ» թերթի հետ ես կապեր չեմ ունեցել և չունեմ: Ներսիսյան ճեմարանի հոգաբարձուների խորհրդի անդամ ես իսկապես ընտրվել եմ, թեպետև առանց իմ իմացության: Դա պատահել է այսպես: Թիֆլիսում ճեմարանի համար նոր մեծ շենքի կառուցման մասին հարց կար օրակարգում (այդ շենքը հիմա կառուցվում է): Ընտրողները, ինչպես ինձ հետագայում հայտարարեցին, ցանկացել են հոգաբարձուների խորհրդի կազմում ունենալ ինժեներ ճարտարապետի, որպիսի կարգավիճակում և առաջադրել են իմ թեկնածությունը: Այն ժամանակ ես ընտանիքով ցանկանում էի տեղափոխվել Թիֆլիս: Ես հետագայում որոշեցի չտեղափոխվել Թիֆլիս և հոգաբարձության անդամությունից հրաժարվեցի: Հոգաբարձուների խորհրդի կազմում 9 հոգի են, իսկ մեղադրականում նշված են միայն 4-ը - ես, Ահարոնյանը, Մանասյանցը և Մուրադովը: Նրա համար, որպեսզի դառնայի հոգաբարձուների խորհրդի անդամ, ինձ անհրաժեշտ չէր «Դաշնակցություն» կուսակցության անդամ լինել, քանի որ ես Բաքվի հայկական դպրոցների հոգաբարձու էի, այժմ էլ՝ թեմական խորհրդի անդամ եմ: Այդ մարմինների մոտ «Դաշնակցություն» կուսակցությանն իմ պատկանելու առնչությամբ երբեք կասկած չի առաջացել: Ընտրված պատգամավորը ես չեմ, նա անկասկած այլ անձ է, ում հետ ինձ թյուրիմացաբար նույնացնում են: Կրկնում եմ, որ «Հայկազունի» մականուն ես երբեք չեմ ունեցել: Նույնը ես հայտարարում եմ Վարդանյանի և Հայկազունու ստորագրությամբ 1907 թ. դեկտեմբերի 21-ի հաղորդագրության առնչությամբ:

1906 թ. Էջմիածնի կենտրոնական համագումարում ներկա եմ եղել, բայց պատգամավոր ընտրվել էի ոչ թե «Դաշնակցություն» կուսակցության կողմից, այլ Բաքվի նահանգի Շեմախայի գավառի հայ բնակչության կողմից: Շեմախայի գավառում ինձ ճանաչում են, քանի որ ես այնտեղ ժամանակին ճանապարհների ինժեներ-շինարար եմ աշխատել: Կենտրոնական համագումարը հրավիրվել է կաթողիկոսի[5] օրհնությամբ և Փոխարքայի թույլտվությամբ: Այդ համագումարի պատգամավորների ընտրությունները անցկացվել են բաց և ոստիկանության պաշտոնյաների ներկայությամբ: Համագումարը միանգամայն լեգալ էր: Այդ համագումարի նպատակն էր մշակել եկեղեցական գույքի ու եկեղեցական-ծխական դպրոցների վարչական կառավարման հարցերը: Հայկական բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները գլխավորապես պահպանվում են եկեղեցական և վանքապատկան գույքի եկամուտների հաշվին: Համագումարը զբաղվել է միայն դպրոցների և դրանց պահպանման մասին հարցերով, այլ հարցեր այնտեղ չեն բարձրացվել և պետությունից եկեղեցու անջատման մասին հարց չի եղել: Երբ համագումարը մինչև աշխատանքների ավարտը փակվեց, ապա ես մնացյալ ներկա պատգամա-

3 Այս դրվագը, ինչպես պարզվում է հետագա դատական նյութերից, կեղծված է քննիչի կողմից:
4 Սրանով Հ. Քաջազնունին ձգտում է «Ժամանակ» թերթը զերծ պահել հետապնդումներից:
5 Նկատի ունի կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին:

վորների հետ միասին բողոքեցի փակման դեմ միանգամայն օրինական ձևով, քանի որ գտնում էի և այժմ էլ գտնում եմ, որ համագումարը իշխանությունների կողմից տրամադրված արտոնությունների շրջանակներից դուրս չէր եկել:

Հովհաննես Մատթևոսի
Տեր-Հովհաննեսյանց Քաջազնունի
/ստորագրություն/

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 3543-3545:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. օգոստոսի 19: Քաղաք Բաքու: Բաքվի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչ Պոդգորենսկին Նովոչերկասկի օկրուգային դատարանի դատական պալատի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի 1910 թ. հուլիսի 24-ի թ. 3131 պահանջով հարցաքննելով մեղադրյալ Հովհաննես Մատթևոսի Քաջազնունուն ըստ Քրեական կանոնադրության 102–րդ հոդվածի, Քրեական դատավարության կանոնադրության 421-րդ հոդվածի 5-րդ կետի հիման վրա, և Դատական Քննիչ Լիժինի պահանջով, ՈՐՈՇԵՑ. քննությունից և դատից խուսափելու եղանակի կանխման միջոց ընտրել 10.000 ռուբլի դրամական գրավը, իսկ մինչև դրա ներկայացումը Հովհաննես Քաջազնունուն կալանավորել:

Դատական Քննիչ /ստորագրություն/
Հովհ. Քաջազնունուն հայտարարվել է:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3545: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 3
ԵՐԱՇԽԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. օգոստոսի 19: Քաղաք Բաքու: Ես՝ ներքոստորագրյալս, բաքվեցի վաճառական, «Գործակից և ընկ.» գրասենյակի տնօրեն Մինաս Սերգեյի Կաչկաչևս, տալիս եմ սույն ստորագրությունը Դատական Քննիչ Պոդգորենսկուն առ այն, որ վերցնում եմ 10.000 ռուբլի գումարով գրավի տակ քաղաքացիական ինժեներ Հովհաննես Մատթևոսի Քաջազնունուն (նույն ինքն՝ Տեր-Հովհաննեսյանց), մեղադրվող Քրեական կանոնադրության 102–րդ հոդվածով, և պարտավորվում եմ բերել տեղ հասցնել նրան դատական իշխանության յուրաքանչյուր պահանջով, և չներկայացնելու դեպքում պատասխանում եմ վերոնշյալ գումարով, ընդ որում ներկայացնում եմ Բաքվի գանձապետարանի 10.000 ռուբլու օգոստոսի 19-ի թիւ 310132 անդորրագիրը: Բաքվի 2–րդ գիլդիայի վաճառական Մինաս Սերգեյի Կաչկաչև:

Դատական Քննիչ /ստորագրություն/

Տեղեկանք - թիւ 1 անդորրագիրը 1910 թ. օգոստոսի 19-ին ստացել եմ՝
Մինաս Կաչկաչև:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3545: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 4
ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. օգոստոսի 19: Քաղաք Բաքու: Բաքվի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչ Պոդգորենսկին նկատի առնելով Մինաս Կաչկաչևի կողմից ներկայացրած Բաքվի գանձապետարանի օգոստոսի 19-ի թիւ 310132 անդորրագիրը, որը վկայում է, թե պահանջվող գրավը տաս հազար ռուբլի գումարի չափով, մուծված է Հովհաննես Քաջազնունու համար որպես ապահովում նրա քննության և դատի ներկայանալու համար, ՈՐՈՇԵՑ. ազատել նշյալ Քաջազնունուն անձնական կալանքից:

Դատական Քննիչ /ստորագրություն/

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3545:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 5
ՉԵՌԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. օգոստոսի 25: Քաղաք Նովոչերկասկ: Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Նովոչերկասկի Դատական պալատի դատախազի տեղակալի և ներքոստորագրյալ ընթերակաների ներկայությամբ, մշտապես Թիֆլիսում բնակվող տիտղոսակիր խորհրդական, հրավիրված փորձագետ Իվան Արտեմի Սրաբովի միջոցով իրականացրեց մեղադրյալ

Հովհաննես Մատթևոսի Քաջազնունուն (նույն ինքը՝ Տեր-Հովհաննեսյանց), մականունը «Հայկազունի», անկասկած պատկանող ձեռագրի համեմատությունը, որով գրված են արձանագրությամբ զննված 1910 թ. հունիսի 10-ից մինչև 23-ը, հայերեն «Հայկազունի» ստորագրությամբ, ինչպես նաև հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Սև և Սպիտակ քաղաքների կոմիտեների նույն կուսակցության Բաքվի Կենտրոնական կոմիտեին 1907 թ. դեկտեմբերի 27-ին ուղղված հաղորդագրության տեքստը՝ նշյալ կոմիտեից շրջանային ժողովի պատգամավոր Մկրտումին ընտրելու մասին (գործի թերթ 34294):

Ձեռագրերի նշյալ համեմատության վարույթով փորձագետը պարզեց հետևյալը:

Ողջ ձեռագրային տեքստը և «քարտուղար Հայկազունի» ստորագրությունը անկասկած լրիվ նմանություն ունի Հովհաննես Մատթևոսի Քաջազնունու (նույն ինքը՝ Տեր-Հովհաննեսյանց) ձեռագրի հետ, ինչպիսի նմանություն դրսևորվում է նամակի ընդհանուր բնույթի և առանձին տառերի, արտահայտությունների և բառերի մեջ, օրինակ՝ «կ» (փափուկ), «ա», «ռ» (փափուկ), «ղ», «ի», «մ», «ն», «զ», «Հայկազունի», դրա համար էլ փորձագետի եզրակացությամբ նշյալ գրության տեքստը և «քարտուղար Հայկազունի» ստորագրությունը գրված և ստորագրված են անկասկած Հովհաննես Մատթևոսի Քաջազնունու (նույն ինքը՝ Տեր-Հովհաննեսյանց) կողմից:

Բնագիրը՝ համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 3987-3988:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 6
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. սեպտեմբերի 11: Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-րդ և 1037-րդ հոդվածներում նշված կանոնների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալին, ով հետևյալ ցուցմունքը տվեց.

Ես՝ Հովհաննես Մատթևոսի Տեր-Հովհաննեսյանց Քաջազնունիս, լրացուցիչ ցուցմունք եմ տալիս.

Էջմիածնից մեկնման առնչությամբ 1906 թ. օգոստոսի 30-ի բողոքագրի «6» թվի դիմաց «Հովհ. Քաջազնունի» ստորագրությունը գրված է իմ կողմից: Հայերեն տեքստը, ինչպես նաև հավասարապես «քարտուղար Հայկազունի» ստորագրությունը՝ ներկայացված 1907 թ. դեկտեմբերի 21-ի գրության վրա, Մկրտումին շրջանային ժողովի անդամ նշանակելու վերաբերյալ, իմ կողմից չեն գրված: Հավելեմ, որ ոչ Սպիտակ քաղաքում, ոչ Սև քաղաքում ես երբեք չեմ ապրել և ոչ մի գործ չեմ ունեցել: Ոչ 1905 թ., ոչ 1906 թ., ոչ Դոնի Ռոստով քաղաքում, ոչ Դոնի Նախիջևան քաղաքում ես չեմ եղել: Մինչև 1901 թ. ես կրել եմ քաղաքացիական ինժեների հագուստ: Դոնի Նախիջևան քաղաքի հետ ես բացարձակապես անծանոթ եմ: Ավելին հավելելու բան չունեմ: Հավելեմ, որ 1905 թ. ջարդերից կարճ ժամանակ հետո Պետերբուրգից երթանցով մի քանի ժամ անց եմ կացրել Դոնի Ռոստովում: Ավելին հավելելու բան չունեմ:

Հովհաննես Մատթևոսի
Տեր-Հովհաննեսյանց Քաջազնունի:

Խնդրում եմ տրամադրել «Դաշնակցություն» կուսակցությանը իմ պատկանելու մեջ մեղադրական գործի քննչական վարույթի պատճեն:

Հ. Քաջազնունի:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

Քաղաք Նովոչերկասկ, Դոնի մարզ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3873:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 7
ՈՐՈՇՈՒՄ

CXXVIII. Հովհաննես Մատթևոսի Տեր-Հովհաննեսյանց Քաջազնունի

1. Որպես հաստատում այն բանի, որ 1907 թ. դեկտեմբերի 21-ի կուսակցական հաղորդագրությունը «քարտուղար Հայկազունի» ստորագրությամբ իր կողմից չի գրված՝ փորձաքննություն կատարել, որը մինչ այժմ չի կատարվել, ընդ որում փորձաքննությունը կատարել Ս. Պետերբուրգի օկրուգային դատարանի դատախազին կից լուսանկարչական կաբինետում,

2. Իր դեմ Քեշիշյանի[6] ցուցմունքները մերկապարանոց և կեղծ են, քանզի նա կամ հոգեկան հիվանդ է կամ՝ կատաղած բանսարկու, քանի որ իր Քաջազնունի ազգանունը շրջանառվում է Քեշիշյանին դուր չեկած հայկական հարյուրավոր և հազարավոր ազգանունների մեջ,

3. Որպես հաստատում այն բանի, որ նա Ներսիսյան ճեմարանի հոգաբարձու ընտրվել է ոչ թե «Դաշնակցություն» կուսակցության կողմից, այլ որպես ճարտարապետ – հարցաքննել Ղազարոս Աղայանին, Ղազարոս Տիգրանյանին, Իսահակ Լիսիցյանին, ովքեր իր թեկնածությունն էին առաջադրել,

4. Կեղծ է գավառապետ Լեմմերմանի ցուցմունքը, որտեղ Քաջազնունին Էջմիածնի համագումարի 57 պատգամավորներից անվանված է «Դաշնակցություն» կուսակցության անդամ, ինչպես նաև միտումնավոր և կեղծ են Ֆրենկելի ցուցմունքներն այդ համագումարի հակակառավարական բնույթի, այնտեղ հեղափոխական ելույթների և բանաձևերի մասին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4428:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

CCXXII. Հովհաննես Քաջազնունի

(լրացուցիչ հայտարարություն խնդրանքում)

Նվազեցնել գրավի գումարը 10.000 ռուբլուց 5.000 ռուբլի:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4445:
Թարգմանություն ռուսերենից:

* * *

21. Հովհաննես Քաջազնունի – 1906 թ. եղել է [ՀՅԴ] ընկերակցության Բաքվի կազմակերպության անդամ և մասնակցել Էջմիածնի համագումարի նիստերին, որը իրեն հռչակել էր ողջ հայ ժողովրդի օրինական իշխանություն, լիազորված լուծելու նրա բոլոր գործերը, և 1907 թ. «Ժամանակ» թերթում հրապարակել է «Ի՞նչ կլինի «Դաշնակցության» հետ» վերնագրով հոդվածը, որտեղ նշում էր ընկերակցության ընտրած հեղափոխական ուղղվածության ճշմարտացիությունը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 240:
Թարգմանություն ռուսերենից:

6 Նկատի ունի խմբապետ Միհրանին:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Ավետիք Սահակյանի դատական գործը*

Նշանավոր քաղաքական ու պետական գործիչ Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ) հայ հանրությանն առավելապես հայտնի է որպես Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի խոսնակ[1]: Մինչդեռ, իր երկարատև կյանքի ընթացքում նա եղել է ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի աչքի ընկնող դեմքերից մեկը, մասնակցել է 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ ազգային-ազատագրական պայքարին և վերջապես՝ լուրջ հետազոտություններ է կատարել գյուղատնտեսության բնագավառում[2]: Իսկ Ավետիք Սահակյանի՝ հայ հանրությանը համեմատաբար նվազ հայտնի լինելու փաստը, ի թիվս այլ պատճառների, թերևս պայմանավորված էր նրա անօրինակ համեստությամբ:

Ավետիք Հովհաննեսի Սահակյանը ծնվել է 1863 թ.[3] Զալալօղլիում (Ստեփանավան): Ծննդավայրում նախնական կրթություն ստանալուց հետո ավարտել է Շուշիի ռեալական դպրոցը: 1887 թ. Ռոստոմի (Ստեփան Զորյան) և Մարտին (Մարտիրոս) Շաքիրյանի հետ միասին ընդունվել է Մոսկվայի հանրահայտ Պետրովսկայա գյուղատնտեսական ակադեմիա, որտեղ ուսանում էր նաև նրա հայրենակից Սիմոն Զավարյանը: Պետրովսկայա ակադեմիան դարձավ Ավ. Սահակյանի հեղափոխական գործունեության սկիզբը, որտեղ 1890 թ. փետրվար-մարտին տեղի ունեցած ուսանողական հուզումներին մասնակցելու արդյունքում նա «արժանացավ» առաջին ցարական ձերբակալությանը:

Ավ. Սահակյանի ուսանողական ընկերը՝ Մարտին Շաքիրյանը, հետևյալ սպառիչ գնահատականն է տվել իր արտաքինի ու բնավորության պատճառով ՀՅ Դաշնակցության հիմնադիր սերնդի շրջանում «Հայր Աբրահամ» կուսակցական անունը ստացած Ավ. Սահակյանին. «Անշուշտ, բնութիւնը նրան չէր ստեղծել յեղափոխական. նա մշակոյթի մարդ էր իր մտային ու հոգեկան կառուցվածքով: Նա չուներ Քրիստափորի անդիմադրելի յեղափոխիչ միտքը, Զաւարեանի անհանգիստ ու կրակոտ խիղճը, կամ Ռոստոմի ծրագրուած գործի համառ

* Ընդունվել է տպագրության 7. 03. 2011:

1 Ավ. Սահակյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ հրապարակում առկա միակ ուսումնասիրությունը 2003 թ. Երևանում հրատարակված Աշոտ Ներսիսյանի «Ավետիք Սահակյան» աշխատությունն է, որտեղ ամփոփ կերպով ներկայացված է վաստակաշատ գործչի անցյալը:

2 Այդ կապակցությամբ արժե հիշատակել, որ նա գտել է գիտությանն անհայտ նոր մակաբույծ, որը կոչել է Telenomus Saakowi անվամբ:

3 Ներկա դատական գործը վկայում է, որ 1910 թվականին Ավ. Սահակյանը 47 տարեկան էր:

հետեւողականութիւնը»:[4] Այդուհանդերձ, իր ողջ գործունեության ընթացքում Ավ. Սահակյանը բոլորի համար մնաց իբրև Հայր Աբրահամ, ով իր բարոյական հեղինակությամբ հարթեցնում էր կուսակցության ներսում ծագած վեճերը՝ Քր. Միքայելյանի օրինակով հաճախ կատարելով յուրատեսակ հաշտարարի դեր:

Ավ. Սահակյանի մեծ հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ 1898 թ. Թիֆլիսում կայացած ՀՅԴ երկրորդ Ընդհանուր ժողովում նա ընտրվել է Արևելյան Բյուրոյի անդամ: Այնուհետև ներկա է եղել կուսակցական գրեթե բոլոր պատասխանատու ժողովներին և իր համեստ կեցվածքով, բայց հիմնավոր խոսքի կշռով արժանի ներդրում է ունեցել ՀՅԴ վճիռների կայացման գործում:

1899 թ. հունվարի 16-26-ին «Լալվար» կեղծանունով Ավ. Սահակյանը մասնակցել է ՀՅԴ Արևելյան Բյուրոյի ժողովին: Որպես Արևելյան Բյուրոյի անդամ, Հարություն Շահրիկյանի (Նիթրա) հետ միասին նա դարձել է Բաքվի և Ռուսաստանի կուսակցական մարմինների պատասխանատուն: 1904թ. փետրվար-մարտին Սոֆիայում գումարված ՀՅԴ երրորդ Ընդհանուր ժողովին Ավ. Սահակյանը մասնակցում էր որպես Արևելյան Բյուրոյի ներկայացուցիչ:

Բեղմնավոր է եղել նաև Ավ. Սահակյանի հրատարակչական-խմբագրական գործունեությունը: Այսպես, 1905 թ. դեկտեմբերի 13-ից Թիֆլիսում նրա խմբագրությամբ սկսեց հրատարակվել «Յառաջ»-ի «Լրատուն» կամ «Լրատու թերթիկները»: 1906 թ. մարտ-ապրիլին կայացած ՀՅԴ Արևելյան մարմինների Ռայոնական ժողովը որոշեց «Յառաջ»-ը հռչակել Արևելյան Բյուրոյի պաշտոնական օրգան և ապրիլից այն սկսեց լույս տեսնել որպես կանոնավոր հրատարակություն: Պատահական չէր, որ ՀՅԴ կովկասյան գլխավոր պարբերականի խմբագրումը վստահվեց հենց Ավ. Սահակյանին: Հիշատակենք, որ թերթի հիմնական աշխատակիցներից էին Ավ. Ահարոնյանը, Գ. Խաժակը, Ե. Թոփչյանը, Մ. Վարանդյանը: «Յառաջ»-ի հետ կապված մի ուշագրավ հանգամանք ևս. ՀՅԴ հիմնադիրներից Ս. Զավարյանը ցանկություն էր հայտնել լինել խմբագիրներից մեկը, ինչին խիստ հակառակվում էր Ավ. Ահարոնյանը, արդյունքում. «Պէտք եղաւ Հայր Աբրահամի հայրական միջամտութիւնը այդ անախորժ վեճը յարդարելու համար: Սիմոնը մտաւ խմբագրութեան մէջ, մնաց քանի մը շաբաթ, ինք իսկ համոզուեցաւ, որ իր տեղը չէր եւ հեռացաւ»:[5]

1906 թ. մարտի 26-ապրիլի 8-ին գումարված ՀՅԴ Ռայոնական ժողովը քննարկեց Ռուսաստանի առաջին Պետական դումայի ընտրությունների, հայ-թաթարական կռիվների, Արևմտյան Հայաստանի վիճակի և կուսակցության կովկասյան գործունեության հարցերը: Մասնավորապես, Պետական դումայի ընտրությունների առնչությամբ որոշվեց. «Հէնց սկզբից եւէթ բոյկոտի ենթարկել լայն պրոպագանդայով, գիտակցութեան հրավիրել ժողովուրդը եւ ընդհանրապէս բոլոր յեղափոխական պահանջների թոյլ տուած հնարաւոր միջոցներով խանգարել բոլոր աստիճաններում»:[6]

Այս ռայոնական ժողովում, որին մասնակցում էին ՀՅԴ ժամանակի բոլոր անվանի գործիչները՝ Ս. Զավարյան, Ռոստոմ, Արմեն Գարո, Հ. Դավթյան, Հ. Օհանջանյան, Ավ. Ահարոնյան, Ե. Թոփչյան, Գ. Խաժակ, Մ. Վարանդյան, Սեբաստացի Մուրադ, Ա. Գյուլխանդանյան, Վ. Փափազյան, Համազասպ, Ավ.

4 Տե՛ս Տարագիր, Հայր Աբրահամի մասին (իր մահուան առթիւ), «Հայրենիք», 1933, նոյեմբեր, N 1, էջ 84:
5 Տե՛ս Սիմոն Զաւարեան. մահուան եօթանասունամեակին առթիւ, Պէյրութ, հտ. Ա., 1983, էջ 40:
6 Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հտ. Բ, Պէյրութ, 1985, էջ 261:

Սահակյանը հանդես եկավ «Կովկասյան նախագծի» շուրջ առկա երկու հիմնական տեսակետները ուշադիր ուսումնասիրելու առաջարկով: Նա Ս. Զավարյանի, Ռոստոմի, Հ. Օհանջանյանի, Հ. Դավթյանի հետ կրկին ընտրվեց Արևելյան Բյուրոյի անդամ:

20-րդ դարի սկզբներին արևելահայության քաղաքական ճակատագրի հստակեցման առումով կարևոր նշանակություն ունեցավ 1906 թ. օգոստոսին Էջմիածնում գումարված Կեդրոնական ժողովը կամ՝ Արևելահայոց համագումարը, որի 60 պատգամավորներից 54-ը ՀՅԴ անդամներ էին: Զանգեզուրից պատգամավոր Ավ. Սահակյանն ընտրվեց Կեդրոնական ժողովի առաջին փոխնախագահ (նախագահը Ս. Զավարյանն էր): Նշյալ տարիներին Ավ. Սահակյանի կուսակցական գործունեության արժևորման տեսանկյունից հարկ է հիշատակել ՀՅԴ ներսում նրա մղած հետևողական պայքարը միհրանականների և ձախ անջատականների (Լ. Աթաբեկյան և ուրիշներ) դեմ:

Թեպետ 1907 թ. կայացած ՀՅԴ չորրորդ Ընդհանուր ժողովում Ավ. Սահակյանը չընտրվեց Արևելյան Բյուրոյի անդամ, այդուհանդերձ նրա ազդեցությունը նկատելի էր կուսակցական բոլոր հարցերի քննարկման ժամանակ:[7] Եվ չնայած այն հանգամանքին, որ Ավ. Սահակյանը «քողարկվել էր» գյուղատնտեսի պաշտոնով, ՀՅԴ-ի ներսում նրա կարևոր դերակատարության փաստը չէր կարող վրիպել ցարական իշխանությունների ուշադրությունից: Այդ պատճառով, թեպետ ոստիկանությունը չհայտնաբերեց Ավ. Սահակյանի դեմ ուղղված որևէ առանձնակի և լուրջ «ահաբեկչական» հանցանք, բայց քննիչ Լիժինի առջև խնդիր էր դրված՝ որքան հնարավոր է շատ դաշնակցականների ձերբակալել: Ուստի դատական հաշվեհարդարին աղմկալից բնույթ տալու[8] առաջադրանքի տեսանկյունից Ավ. Սահակյանի ձերբակալությունը անխուսափելի էր ու տրամաբանական:

Ի վերջո, որո՞նք էին Ավ. Սահակյանին ներկայացված ամբաստանությունները: Նա մեղադրվում էր ՀՅԴ կողմից Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներ գործուղվելու և կուսակցական կարիքների համար 10.000 ռուբլի տանելու, «Էջմիածնի համագումարում» եկեղեցին պետությունից անջատելու և իշխանության դեմ պայքարի կոչեր հնչեցնելու և վերջապես՝ «Յառաջ»-ի խմբագիր եղած ժամանակ որոշ հոդվածներ տպագրելու համար: Ինչ խոսք, այս բոլորից առավել «վտանգահարույցը» առաջին կետն էր, քանզի Լիժինը նպատակ էր դրել ապացուցել, թե իբր՝ Ավ. Սահակյանի գործուղումների միջոցով ՀՅԴ-ն զինել է Նախիջևանի գավառի հայությանը: Դրանով հնարավորություն էր ստեղծվում հայ-թաթարական ընդհարումների հրահրման պատասխանատվությունը ցարական իշխանություններից տեղափոխել դաշնակցականների վրա:

Հարցը դիտարկելով ժամանակի հեռավորությունից՝ միանգամայն հավանական ենք համարում կուսակցության կողմից նման գումարի տրամադրումը Հայր Աբրահամին: Սակայն Ավ. Սահակյանն ինքը, քաջ գիտակցելով, թե Լիժինը հարվածի սլաքը շեղում է կուսակցության ուղղությամբ, բազմիցս հետևողականորեն ժխտում էր ՀՅԴ կողմից իր գործուղվելու փաստը: Ավելին՝ դատական գործով վկաներ Հ. Առաքելյանն ու Ալ. Քալանթարը նույնպես միաբերան պնդեցին, որ նա

7 Որպես ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամ Ավ. Սահակյանի գործունեության մասին մանրամասն տե՛ս Ներսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 40-96:
8 Ա. Սահակյանի դատավարության մեկնաբանությունը տե՛ս նաև՝ Ներսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 97-123:

գործուղված է եղել Կովկասում Հողագործության նախարարության լիազորի կողմից: Իսկ ՀՅԴ-ի վերաբերյալ երկուսն էլ տվեցին նույն խուսափողական պատասխանը. «Ավ. Սահակյանը գործուղված է եղել Հայ հեղափոխական Դաշնակցության կողմից, թե ոչ՝ ինձ անհայտ է»:[9]

1910 թ. օգոստոսի 14-ին Թիֆլիսի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով քննիչ Ռոմաշչևի կողմից հարցաքննության ժամանակ Ավ. Սահակյանն իրեն մեղավոր չի համարել, մերժել է պետական իշխանությունների դեմ պայքարի կոչ անելու ամբաստանությունը և այդ առումով ևս ՀՅԴ-ին զերծ է պահել մեղադրանքից: Նա մատնանշել է «կառավարության կողմից տրված ազատ մամուլ ունենալու իրավունքով» հրատարակվող «Յառաջ» թերթում ոչ միայն ՀՅԴ-ի, այլև մյուս կուսակցությունների որոշումների հրապարակման փաստը, հավելելով, որ նման քայլ կատարել են նաև մյուս թերթերը:[10]

Պետերբուրգում տեղի ունեցած դատավարության արդյունքում Ավ. Սահակյանը ևս դասվեց 52 դատապարտյալների շարքը, սակայն շուտով Հ. Օհանջանյանի, Ս. Մանասյանի, Համազասպի և այլոց հետ միասին վճռաբեկ բողոք ներկայացրեց: Նրանք բողոքում էին, «...որ սենատի առանձին ատեանը բավականաչափ ուշադրութիւն չնուիրեց մի շատ կարևոր հարցի վրայ. թե այս կամ այն դատապարտեալի մասնակցութիւնը և գործունէութիւնը «Դաշնակցութեան» մէջ այդ կուսակցութեան որ շրջանին է վերաբերում: Մեղադրական ակտից էլ արդեն երեւում է, որ Դաշնակցութեան ծրագիրը, որը պարտաւորեցուցիչ էր այս կուսակցութեան բոլոր անդամների համար, մինչեւ նրա վերաքննութիւնը 4-րդ Ընդհանուր ժողովում (փետրուար-մայիս 1907) վերաբերում էր այդ կուսակցութեան գործունէութեանը միայն Թուրքիայում եւ չէր շոշափում Ռուսաստանում գոյութիւն ունեցող կարգի տապալման հարցը: Առանձին ատեանը իր դատավճռի մէջ չի պարզել այն կարդինալ հարցը, թէ արդեոք դաշնակցականների մօտ գտած զենքը նշանակուած էր ապստամբութեան նպատակով, թէ՞ նախապատրաստուած ամբողջովին Թուրքիա ուղարկելու համար սկիզբներում եւ յետո թուրքերի դեմ ինքնապաշտպանութեան համար»:[11]

Սրանով բողոքարկողները դատական հետապնդումից պաշտպանում էին այն անձանց, ովքեր պայքարել էին միայն թուրքական բռնապետության դեմ:

Շուրջ երեք տարվա բանտարկությունից հետո՝ ընդհանուր համաներման արդյունքում՝ 1912 թ. երկրորդ կեսին, Ավ. Սահակյանը ազատվեց բանտից: Այնուհետև նա «Հայոց Գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության» նախագահն էր, խմբագրել ու հրատարակել է «Գյուղատնտես» պարբերականը: Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո Ավ. Սահակյանի գլխավորությամբ այս ընկերությունը զգալի աշխատանքներ է կատարել Արևմտյան Հայաստանի տնտեսության վերականգնման գործում:

1917 թ. ապրիլին Ռոստոմի հետ միասին մասնակցել է ՀՅԴ Կովկասյան մարմինների առաջին ազատ Ռայոնական ժողովին, եղել 1917 թ. ապրիլի 10-13-ին Թիֆլիսում գումարված միջկուսակցական խորհրդակցության նախաձեռնողներից մեկը: 1917 թ. երկրորդ կեսին և 1918 թվականի սկզբներին Ավ. Սահակյանը

9 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5:
10 Տե՛ս նույն տեղում:
11 «Հորիզոն», Թիֆլիս, 1912, մայիսի 29, N 112:

ակտիվորեն մասնակցել է հայության համախմբման և Կովկասյան ճակատի փլուզումը կանխելու ձեռնարկներին, իսկ քիչ անց ընտրվել է Անդրկովկասյան Սեյմի անդամ: 1918 թ. մարտին նա Սեյմի պատվիրակության կազմում մեկնում է Գանձակ՝ 269-րդ գնդի զենքին տիրանալու համար սկիզբ առած հայ-թաթարական վեճերն ու ընդհարումները կանխելու համար:

1918 թ. ապրիլի 7-8-ին Ալեքսանդրապոլի խորհրդաժողովում (ներկա էին Արամը, Ն. Աղբալյանը, Դրոն, Ալ. Խատիսյանը, Ռուբենը, Ս. Վրացյանը, Վ. Փափազյանը, Մ. Սիլիկյանը, Մ. Պապաջանյանը) Ավ. Սահակյանը հանդես է եկել թուրքերին դիմադրելու և ճակատն ուժեղացնելու կոչով: Անդրկովկասյան Սեյմի կառավարության մեջ զբաղեցրել է պարենավորման նախարարի պաշտոնը (Ալ. Խատիսյանը՝ ելևմտական, իսկ Հ. Քաջազնունին խնամատարության նախարարներ էին):

ՀՀ անկախության հռչակումից հետո դիվանագիտական գործունեության անցած Ավ. Ահարոնյանի փոխարեն Ավ. Սահակյանը ընտրվում է Հայոց Ազգային խորհրդի նախագահ, իսկ Հայաստանի խորհրդի ձևավորումից հետո դառնում նրա նախագահը: Ալ. Խատիսյանի կառավարության կազմում զբաղեցրել է խնամատարության և աշխատանքի նախարարի պաշտոնը, եղել փոխվարչապետ: Անուրանալի է Ավ. Սահակյանի ներդրումն ու մեծ վաստակը Հայաստանի առաջին Հանրապետության պետական մարմինների, մանավանդ՝ օրենսդրիր իշխանության ձևավորման գործում: Ի դեպ, ՀՀ խորհրդարանի անդամ էր նաև նրա կինը, նույնպես լոռեցի Վառվառա Սահակյանը (Թադևոսյան), ով ճանաչված էր «Մայր Աբրահամ» կեղծանունով:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Ավ. Սահակյանը ձերբակալվում է չեկայի կողմից: Փետրվարյան ապստամբությունից հետո՝ 1921-1926 թթ. բնակվել է Թավրիզում, ապա Իրանի կառավարության կողմից հրավիրվել է Թեհրան՝ որպես գյուղատնտես-միջատաբան: 1928 թ. նույն պաշտոնով հրավիրվել է նաև Բաղդադ, իսկ 1930 թվականից վերջնականապես հաստատվել Բեյրութում: Մահացել է 1933 թ. ապրիլի 18-ին: 1972 թ. նոյեմբերի 25-ին ՀՅԴ որոշմամբ Ավ. Սահակյանի և նրա կնոջ աճյունները Բեյրութի ազգային գերեզմանատնից վերահուղարկավորվել են Բուրջ Համուդի գերեզմանատան ՀՅԴ Պանթեոնում:

Ռուսերենից թարգմանությամբ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող՝ Ավետիք Սահակյանի դատավարության փաստաթղթերը կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության խորհրդարանի առաջին խոսնակի գործունեության մինչ օրս անհայտ էջերի լուսաբանմանը:

Ավագ Ա. Հարությունյան
պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The Lawsuit of Avetik Sahakyan

Avag A. Harutyunyan

ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. օգոստոսի 14: Քաղաք Թիֆլիս:

Թիֆլիսի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով դատական քննիչ Ռոմաշչևը, հարցաքննելով 102-րդ հոդվածով մեղադրվող գյուղատնտես Ավետիս (Ավետիք) Իվանի (Հովհաննեսի) Սահակովին (Սահակյան), հայկական ապստամբական Դաշնակցություն կուսակցությանը պատկանելու կապակցությամբ, և նկատի առնելով Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով դատական քննիչ Լիժինի 1910 թ. հուլիսի 24-ի N 3113 հատուկ պահանջը[12], ՈՐՈՇԵՑ. մեղադրյալ գյուղատնտես Ավետիս (Ավետիք) Իվանի (Հովհաննեսի) Սահակովին (Սահակյան), 47 տարեկան, հետաքննությունից խուսափելը կանխելու համար, 416-421 հոդվածների հիման վրա շարունակել պահել կալանքի տակ, որի մասին տեղեկացնել նրան:

Դատական քննիչի պաշտոնակատար
(ստորագրություն)

Սույն որոշման գանգատարկման եղանակը հայտնել Ա. Սահակովին:

Դատական քննիչի պաշտոնակատար
(ստորագրություն)
Դատախազի տեղակալ (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. հոկտեմբերի 29: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների պահպանմամբ, հարցաքննեց ներքոանվանյալին, ով ցուցմունք տվեց:

Ավետիք Հովհաննեսով Սահակյանց, լրացուցիչ ցուցմունք եմ տալիս:

Ձեր կողմից ներկայացված կես էջ թղթի վրայի գրառումից՝ առգրավված, ինչպես Դուք, Դատական Քննիչ, ասում եք, 1909 թ. ապրիլին Պետերբուրգում, Դավիթ Զավրիևից, ես տեսնում եմ, որ այդ գրառման մեջ նշված է, որ իբր գյուղատնտես Ավետիս Սահակյանը 1906 թ. գործուղվել է մեկ ամիս դրանից առաջ «Դաշնակցություն» կուսակցության Թիֆլիսի կոմիտեի կողմից Նախիջևանի գավառ՝ հայկական տուժած գյուղերի ուսումնասիրության համար, և սեպտեմբերի 7-ին նա ներկայացրել է շատ հետաքրքիր զեկուցագիր, ըստ որի կոմիտեն բաց է թողել 10.000 ռուբլի: Այդ գրառման առթիվ հայտարարում եմ, որ այն ակնհայտ կեղծիք է: Ձեզ տված իմ առաջին ցուցմունքում արդեն մանրամասն շարադրել եմ, որ ես գործուղվել եմ ոչ թե «Դաշնակցություն» կուսակցության կողմից, այլ հայ-թաթարական ընդհարումներից տուժած հայերին օգնություն ցուցաբերող կենտրոնական հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը հավանություն էր ստացել Կովկասի փոխարքայի կողմից և գործում էր Վրացա-Իմերեթական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Սաթունյանի նախագահությամբ: Այն գրության մեջ, որ Դուք, Դատական Քննիչ, ասում եք, 1908 թ. դեկտեմբերին գտնվել է Վլադիկավկազում Աջանտոնյանցի և Մարտիրոսովի մոտ, «Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության 1905 թ. նոյեմբերի 13-ի շրջանային ժողով» հայերեն ձեռագրի 45, 100 հակ. և 101 հակ. թերթերում՝ կողքից «Ընկեր Սիկ. (Սահակ)» նշումների դիմաց – ինձ հետ ոչ մի առնչություն չունեն, քանզի այդ ժողովին ներկա չեմ եղել և ընդհանրապես ներկա չեմ եղել «Դաշնակցություն» կուսակցության ժողովներին, ինչի մասին ես արդեն ասել եմ իմ առաջին ցուցմունքում: Հավելեմ, որ իմ հայրանունը ոչ թե «Հովհաննեսով» է, այլ «Իվանով»: Արձանագրությունը կարդացված է անձամբ իմ կողմից, Ավետիս Սահակով:

Երդվյալ թարգմանիչ Նաղիրաձե
Դատական Քննիչ Ն. Լիժին
Դատական պալատի Դատախազի
տեղակալ Սերգեև

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4215: Թարգմանություն ռուսերենից:

12 Նկատի ունի Ավ. Սահակյանի դատական գործը:

ԹԻՎ 3
ՈՐՈՇՈՒՄ

XXXVIII. Ավետիք Հովհաննեսով Սահակյան - գյուղատնտես

Ս. Պետերբուրգում Դավիթ Զավրիևի մոտ կուսակցական թղթերի մեջ խուզարկությամբ գտնված գյուղատնտես Ավետիք Սահակյանցի զեկույցից երևում է, որ նա գործուղվել է «Դաշնակցություն» կուսակցության կողմից Նախիջևանի գավառ՝ հայկական գյուղերի տնտեսական վիճակը ուսումնասիրելու համար և որ «Դաշնակցություն» կուսակցության կոմիտեի կողմից, ըստ նրա զեկույցի, իր տրամադրության ներքո բաց է թողնվել 10.000 ռուբլի:

«Վոզրոժդենիե» թերթի 1905 թ. դեկտեմբերի 9-ի թ. 43 համարից երևում է, որ 1905 թ. դեկտեմբերի վերջերին կսկսի լույս տեսնել «Յառաջ» հայերեն թերթը, ընդ որում հրատարակիչ է հաստատվել Մնացական Նալբանդյանցը, իսկ խմբագիր՝ գյուղատնտես Սահակյանցը: Թերթի աշխատակիցները պետք է բացառապես լինեն «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության ներկայացուցիչներ:

«Դաշնակցություն» կուսակցության զենքի և ռումբերի Շուշիի պահեստում 1910 թ. հունվարի 15-ին կուսակցական թղթերի մեջ գտնված Շուշիի գավառային կոմիտեներին ուղղված՝ Շուշիի կենտրոնական կոմիտեի 1906 թ. հունվարի 24-ի շրջաբերականից պարզվել է, որ նշյալ կենտրոնական կոմիտեի կողմից գյուղական կոմիտեներին հրահանգվել է կուսակցական միջոցներից հանգանակել 7-ական ռուբլի, ընդ որում՝ Շուշիի կենտրոնական կոմիտեն պարտավորվել է այդ թերթը կոմիտեներին հասցնել առաջին իսկ փոստով:

«Յառաջ» և «Ալիք» հայերեն թերթերի զննումից և թարգմանությունից երևում է, որ Ավետիս Սահակյանը եղել է «Յառաջ» թերթի խմբագիր, որը տպագրել է հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության հեղափոխական բովանդակությամբ հոդվածներ, որոշումներ, ազդեր և այլ կարգադրություններ:

«Ալիք» թերթի 1906 թ. ապրիլի 27-ի թիվ 1 համարում նշվում է, որ «Դաշնակցություն» կուսակցության կողմից Ներսիսյան հայկական ճեմարանի հոգաբարձուներ են առաջադրվել նրա անդամներ գյուղատնտես Ավետիս Սահակյանը, Եղիշե Թոփչյանը և այլք, ովքեր և ընտրվել են այդ ճեմարանի հոգաբարձուներ:

«Դաշնակցություն» կուսակցության Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի կուսակցական թղթերի մեջ 1908 թ. դեկտեմբերին խուզարկությամբ գտնված նշյալ կուսակցության 1905 թ. նոյեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 1-ը շրջանային ժողովի ձեռագիր տեղեկագրից երևում է, որ այդ ժողովին ներկա կուսակցության անդամ Սահակյանը մատնանշել է, որ «Դաշնակցություն» կուսակցությունը պետք է միշտ պատրաստ լինի ռուսական կառավարության դեմ գործելու, հետևի մյուս հեղափոխական կուսակցություններին, որպեսզի նախապատրաստի ապագա հեղափոխական կազմակերպության և ձգտի իր կողմը թեքել ռուսական զորքերին:

1906 թ. օգոստոսին Էջմիածնում հայկական պատգամավորների համագումարի մասին Երևանի նահանգապետի գործի զննումից, ինչպես նաև վկաներ Ֆրենկելի, Լիմմերմանի, Թումանյանի և այլոց ցուցմունքներից երևում է, որ գյուղատնտես Ավետիք Սահակյանը այդ համագումարին մասնակցել է որպես «Դաշնակցություն» կուսակցության պատգամավոր, ընտրվել այդ համագումարի նախագահի տեղակալ, և որ 1906 թ. օգոստոսի 30-ին նա ստորագրել է կառավարող իշխանության պաշտոնյաների կողմից այդ համագումարի փակման դեմ բողոքը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 4, թթ. 3262-3263:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 4
ԶՆՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. նոյեմբերի 17/18: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Նովոչերկասկի Դատական պալատի Դատախազի տեղակալի և ներքոստորագրյալ ընթերականների ներկայությամբ զննեց Թիֆլիսի Դատական պալատի ուղարկած «Յառաջ» հայկական թերթի խմբագիր Ավետիս Իվանով (Հովհաննեսով) Սահակյանցի գործը, որից ընդ որում պարզվեց.

Թիֆլիսի Դատական պալատի 1-ին քրեական դեպարտամենտի 1906 թ. փետրվարի 23-ին սկսած՝ «Յառաջ» հայկական թերթի դատապարտյալ խմբագիր Սահակյանի մասին գործը, ով մեղադրվում է Քրեական կանոնադրության 129-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական հանցագործության մեջ, ունի երկու համարակալված և կնքված թերթեր:

Նշյալ գործում կա Թիֆլիսի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչ Ն. Ն. Իլյուշենկոյի կողմից «Յառաջ» թերթի խմբագիր Սահակյանի մեղադրման գործը՝ սկսված 1906 թ. փետրվարի 6-ին և ավարտված 1906 թ. փետրվարի 9-ին, տասնմեկ համարակալված և կնքված թերթերի վրա:

2-րդ և 3-րդ թերթերում կա կովկասյան գրաքննչական կոմիտեի 1906 թ. փետրվարի 1-ի թիվ 223 գրությունը Թիֆլիսի Դատական պալատի Դատախազին հետևյալ բովանդակությամբ. «Թիֆլիսում հրատարակվող հայերեն «Յառաջ» ամենօրյա թերթի ս. թ. հունվարի 28-ի թիւ 11 համարում տպագրվել է «Հնչակյան կուսակցության նոր վերակազմավորումը» վերնագրով հոդվածը, որտեղ այդ քաղաքական կուսակցության Երևանի կազմակերպությունը հայտարարում է սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության վերակազմակերպվելու մասին: Կովկասյան գրաքննչական կոմիտեն «Յառաջ» թերթում Ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Երևանի ժամանակավոր կոմիտեի որոշման տպագրումը դիտարկելով հանցավոր արարք, նախատեսված Քրեական կանոնադրության 129-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշեց վերոգրյալի մասին տեղեկացնել Ձեզ՝ Թիֆլիսում Նալբանդյանցի հրատարակած «Յառաջ» ամենօրյա հայկական թերթի խմբագիր Ավետիք Սահակյանի դեմ դատական հետապնդում ներկայացնելու տեսքով: Նշյալ թերթի խմբագրությունը գտնվում է Ֆրեյլինյան փողոցի թիվ 6 հասցեում»:

Ուսումնասիրել Թիֆլիսի Դատական պալատի 1-ին քրեական դեպարտամենտի գործը՝ Թիֆլիսի օկրուգային դատարանի վճռի առթիվ դատապարտյալ Ավետիս Սահակյանի բողոքարկող հայցով: Նա մեղադրվում է 1906 թ. մարտի 18-ի Բարձրագույն հրովարտակի 2-րդ կետով նախատեսված հանցագործության մեջ: Գործը բաղկացած է 18 համարակալված և կնքված թերթերից:

8-րդ թերթում կա Ջալալօղլիի գյուղական հասարակության տանուտերի 1906 թ. մարտի 20-ի թիւ 369 գրությունը «Յառաջ» թերթի խմբագիր Ավետիք Հովհաննեսով Սահակովին հետևյալ բովանդակությամբ. «Հասարակական վճռով Դուք ընտրված եք Բորչալուի գավառի գավառական համագումարի լիազոր, Շուլավեր ներկայանալու օրվա մասին հատուկ կհայտնվի Ձեզ»:

9-րդ թերթում կա թիւ 2119 վկայականը հետևյալ բովանդակությամբ. «Սույն վկայականը հանձնվել է կրտսեր գյուղատնտես Սահակովին՝ Թիֆլիսի Դատական պալատ ներկայանալու համար առ այն, որ հողագործության մինիստրության՝ Կովկասում գլխավոր լիազորը Երևանի նահանգապետի խնդրանքով թույլատրել է պ. Սահակովին գործուղել Երևանի նահանգապետի տրամադրության ներքո՝ 1906 թ. մարտի 16-ից մեկ ամսով, հայ-թաթարական ընդհարումներից տուժած բնակչությանը գյուղատնտեսական օգնություն կազմակերպելու համար: Ընդ որում նշյալ գործուղումից վերադառնալուց հետո Սահակովը ներկայացրել է պատշաճ հաշվետվություն, ինչի մասին ստորագրությամբ և պետական կնիքով վավերացնում եմ: 1908 թ. ապրիլի 1, քաղաք Թիֆլիս: Հողագործության մինիստրության՝ Կովկասում գլխավոր լիազորի փոխարեն՝ իսկական պետական խորհրդական (ստորագրությունն անընթեռնելի է)»:

10-րդ թերթում կա Վրացա-Իմերեթական հայ-գրիգորյան թեմի առաջնորդի 1908 թ. ապրիլի 1-ի թիւ 263 վկայականը հետևյալ բովանդակությամբ. «Սույնը տրված է գյուղատնտես Ավետիս Իվանի Սահակովին Թիֆլիսի Դատական պալատ ներկայացնելու համար առ այն, որ պարոն Սահակովը՝ որպես Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով իմ նախագահությամբ Վրացա-Իմերեթական թեմին կից ստեղծված հայ-թաթարական ընդհարումներից տուժածներին օգնություն ցուցաբերող կենտրոնական հանձնաժողովի անդամ, 1906 թ. մարտի 16-ից մինչև ապրիլի 15-ը կոմիտեի միջոցների հաշվին գործուղվել է Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներում պարենային և գյուղատնտեսական օգնություն կազմակերպելու համար, ընդ որում նշյալ գործուղումից վերադառնալուց հետո նա ներկայացրել է Երևանի նահանգում նշյալ ժամկետում իր գործունեության մասին մանրամասն հաշվետվություն: Թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս»:

12-րդ և 13-րդ թերթերում կա հետևյալ բովանդակությամբ արձանագրություն. «1908 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսի Դատական պալատի դատական նիստում՝ ըստ 1-ին քրեական դեպարտամենտի ներկայացրած գործի, ներկա էին՝ նախագահող Ա. Չեխովսկի, պալատի անդամներ՝ Վ. Օրլովսկի, Կ. Ժանո, պալատի Դատախազի տեղակալ Ա. Մոսկալևի մասնակցությամբ, քննարկվեց դատապարտյալ Ավետիս Սահակյանի բողոքարկման հայցը Թիֆլիսի օկրուգային դատարանի 1907 թ. հոկտեմբերի 31-ի վճռի դեմ, որով նա մեղադրվում է 1906 թ. մարտի 8-ի Բարձրագույն հրովարտակի 2-րդ կետով

նախատեսված հանցագործության մեջ: Հրապարակայնորեն լսված դատական նիստին ներկա գործով ներկայացան դատապարտյալ Ավետիս Սահակյանցը և նրա պաշտպաններ, երդվյալ ատենակալներ Մուրավյովը և Հովհաննիսյանցը: Ա. Չեխովսկին ներկայացրեց երկու գործերը, դրանց հանգամանքները, օկրուգային դատարանի վճիռը, դատական նիստերի արձանագրությունները, դատապարտյալի բողոքարկումները և գործերին վերաբերող օրենքները: Ապա Մուրավյովը, մատնանշելով այն հանգամանքը, ըստ որի երկու գործերի վարույթից երևում է, որ դատապարտյալը ողջ ժամանակ հաստատում է, թե մեղադրանք ներկայացնող հոդվածները թերթում տպագրվել են իր բացակայության ժամանակ և դրանց բովանդակությունը հակասում է նրա անձնական հայացքներին, և խնդրում է Դատախազի տեղակալի համաձայնության դեպքում թույլատրել որպես վկայի հարցաքննել պալատի շենքում գտնվող Ա. Ի. Խատիսովին՝ որպես վերոշարադրյալ հանգամանքների հավաստում:

Խորհրդակցելուց հետո Դատական պալատը որոշեց Խատիսովին թույլատրել ներկա գործով որպես վկայի հանդես գալ՝ դատապարտյալի անմեղսունակությունը վկայելու համար: Վկայի հարցաքննությամբ պարզվեց, որ նա կողմերի հետ ոչ մի հարաբերության մեջ չի գտնվում: Վկան հետևյալ ցուցմունքը տվեց. «1906 թ. սկզբին ես ակտիվ մասնակցություն ունեցա քաղաքական կյանքում, Թիֆլիս քաղաքից Պետական Դումայի ընտրող եղա, հրապարակային դասախոսություններ կարդացի և այդ վերջինների համար նյութեր հավաքեցի, ծանոթացա հասարակական մտքի հոսանքների հետ: Սահակյանի հետ բազմաթիվ զրույցներից ես եզրակացրի, որ նա Դումայի ընտրություններին բնակչության մասնակցության ջերմ կողմնակից էր: Դատապարտյալի հետ հանդիպել եմ տուժած հայերին օգնություն ցուցաբերող կենտրոնական կոմիտեի նիստում: Այդ կոմիտեի միջոցների հաշվին՝ 1906 թ. մարտի որոշմամբ Սահակյանը գործուղվել է Երևանի նահանգ և վերադարձել ապրիլին՝ Պետական Դումայի գումարումից քիչ առաջ, երբ էլ դժգոհել է, որ իր բացակայության ժամանակ իր խմբագրած թերթը տպագրել է հոդվածներ, որոնք իր հայացքների հետ չեն համընկնում»:

Մուրավյովը որպես հաստատում այն բանի, որ դատապարտյալ Սահակյանը իրականում 1906 թ. մարտին և ապրիլին Երևանի նահանգում գտնվել է գործուղման մեջ՝ ներկայացրեց երկու վկայություններ և Երևանի նահանգապետի հեռագիրը ու խնդրեց այդ փաստաթղթերը կցել գործին: Դատախազի տեղակալը չառարկեց: Ներկայացված փաստաթղթերը պալատի որոշմամբ կցվեցին գործին, ինչպես նաև Հովհաննիսյանցի խնդրանքով վկայվեց, որ որպես մեղադրանք ներկայացվող «Ժողովուրդը և Դուման» հոդվածը ստորագրված է թերթի աշխատակից Գուլայանցի[13] կողմից: Դատախազի տեղակալը դատաքննությամբ ձեռք բերված նոր տվյալների հանդես գալով՝ խնդրեց գործի լսումը հետաձգել, այն վերադարձնելով լրաքննության՝ «Յառաջ» թերթում հանցավոր բովանդակության հոդվածների տպագրման մեղավորներին գտնելու համար»:

Մուրավյովը գտնում է, որ «Յառաջ» թերթի խմբագրի մեղադրման գործին կարելի է վերջ տալ՝ հոդվածները գրած անձանց դեմ նոր գործի հարուցումից անկախ և միջնորդեց Սահակյանի մասին գործն ըստ էության լուծել ներկա նիստում: Հովհաննիսյանցը միացավ այս հայտարարությանը:

Խորհրդակցելով՝ Դատական պալատը դատապարտյալ Սահակյանցի հանդեպ վերջնականապես բացահատված ներկա գործի քննության հիմք չգտավ և նկատի առնելով, որ նշյալ հոդվածների տպագրման մեղավոր անձանց ներգրավումը չի կարող վերացնել Սահակյանցի պատասխանատվությունը՝ որոշեց Դատախազի տեղակալի միջնորդությունը մերժել, որից հետո դատաքննությունը հայտարարվեց ավարտված և պալատն անցավ կողմերի եզրափակիչ ելույթների լսմանը:

Դատախազի տեղակալը ենթադրում է հաստատել օկրուգային դատարանների վճիռները, ընդ որում՝ նվազեցնելով պատիժը:

Երդվյալ հավատարմատարներ Մուրավյովը և Հովհաննիսյանցը խնդրեցին դատապարտյալի արդարացման մասին: Դատապարտյալն իր վերջին խոսքում խնդրեց արդարացնել իրեն:

1908 թ. ապրիլի 2: Դատարանը նույն կազմով փոփոխելով դատապարտյալ Ավետիս Սահակյանի վերաբերյալ Թիֆլիսի օկրուգային դատարանի 1907 թ. հոկտեմբերի 31-ի վճիռը՝ որոշեց նրան 200 ռուբլի չափով դրամական տույժի ենթարկել, իսկ նրա անվճարունակ լինելու դեպքում՝ Սահակյանին ենթարկել երկու ամիս կալանքի: Ավետիս Սահակյանի հայցը թողնվեց անհետևանք:

Սահակյանը խնդրում է իր գործողություններում հանցակազմի բացակայության

13 Գուլայանցը կամ՝ Ավ. Գալոյանցը նույն անձն է, որի ինքնությունը չհաջողվեց պարզել:

պատճառով իր հանդեպ չկիրառել 1905 թ. նոյեմբերի 24-ի օրենքը և ազատել իրեն այն փաստերի հիման վրա, որ կներկայացնի գործի քննության օրը: Դատական պալատը գտնում է, որ «Յառաջ» հայկական թերթում, որի պատասխանատու խմբագիրը Սահակյանն էր, տպագրվել են հոդվածներ, որտեղ քաղաքացիներին Պետական Դումայի ընտրություններից մասսայաբար խուսափելու, ինչպես նաև պետական իշխանությունների նկատմամբ թշնամական վերաբերմունքի կոչեր էին արվում: Սակայն, քանի որ դատական գործով անկասկած ապացուցվել է, որ թերթի վերոնշյալ համարների տպագրման ժամանակ դատապարտյալ Սահակյանը Թիֆլիսում չի եղել և անձամբ չի մասնակցել հոդվածների կազմմանն ու դիտմանը, որ Սահակյանն անձամբ Պետական Դումայի ընտրություններին կողմ է եղել, սակայն թույլատրել է տպագրել հակառակ կարծիքի հոդվածներ՝ այդ հարցի բազմակողմանի պարզաբանման համար, որ նշյալ հոդվածը ստորագրված է Ավ. Գալոյանցի կողմից, իսկ դատապարտյալ Սահակյանը ոչ այդ հոդվածի կազմմանը, ոչ էլ դրանց դիտմանը չի մասնակցել որպես «Յառաջ» թերթի պատասխանատու խմբագիր, այլ թույլատրել է իր բացակայության դեպքում այլ անձանց խմբագրել «Յառաջ»-ի թողարկումը, և որպես պատասխանատու խմբագիր բացահայտ անզգույշ արարք է թույլ տվել, ինչի համար ենթակա է 200 ռուբլի դրամական տույժի, իսկ անվճարունակության դեպքում ենթակա է 2 ամիս կալանքի: Դրա համար էլ Դատական պալատը ՍԱՀՄԱՆՈՒՄ Է՝ որպես Թիֆլիսի օկրուգային դատարանի 1907 թ. հոկտեմբերի 31-ի նախնական վճռի դատապարտյալ Ավետիս Սահակյանին ենթարկել 200 ռուբլի դրամական տույժի, իսկ անվճարունակության դեպքում՝ կալանել երկու ամսով: Ավետիս Սահակյանի հայցը թողնվեց անհետևանք:

Ա. Չեխովսկի
Վ. Օռլովսկի
Կ. Ժանո

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4312-4316:
Թարգմանություն ռուսերենից:

<u>ԹԻՎ 5</u>
ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. նոյեմբերի 19: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչն ուշադրության առնելով այն հանգամանքը, որ նոյեմբերի 17-18-ին արձանագրությամբ զննված «Յառաջ» հայկական թերթի խմբագիր Ավետիս Իվանով Սահակյանցի մասին դատական գործի՝ որպես իրեղեն ապացույց կամ «Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության մասին» սույն գործին հավելվածի տեսքով կցելն էական անհրաժեշտություն չէ, ՈՐՈՇԵՑ՝ «Յառաջ» հայկական թերթի խմբագիր Ավետիս Իվանով Սահակյանցի մասին գործն ըստ պատկանելության վերադարձնել Թիֆլիսի Դատական պալատ:

Դատական Քննիչ Լիժին

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թ. 4317:
Թարգմանություն ռուսերենից:

<u>ԹԻՎ 6</u>
ՈՐՈՇՈՒՄ

1911 թ. փետրվարի 11-ից մինչև 24-ը: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր կատարած նախաքննությունը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության գործով, ԳՏԱՎ.

Որ ներքոանվանյալ մեղադրյալներին՝ սույն գործով ներկայացված Քրեական Դատավարության կանոնադրության 448-րդ և 476-րդ հոդվածների հիման վրա, նրանց նախաքննությամբ արված են հետևյալ հայտարարությունները.

XXXXXXXXIV. Ավետիս Իվանով Սահակով

1. Հնարավորություն ընձեռել տեսնելու իրեն վերաբերող հայերեն հետևյալ փաստաթղթերը. Ա. «Յառաջ» թերթի մասին «Դրոշակ» ամսագրի համարը, Բ. «Յառաջ» թերթի մասին [ՀՅԴ] Ապառաժի կոմիտեի տպագիր գրությունը, Գ. «Դաշնակցություն» կուսակցության 1905 թ. շրջանային ժողովի արձանագրությունները, որպեսզի դրանք համեմատի ռուսերեն թարգմանությունների հետ,

2. Կրկին ներկայացնել Նախիջևանի գավառ իր այցելությանը վերաբերող Զավրիևի մոտ գտնված փաստաթուղթը,

3. Ներկայացնել նախիջևանյան գործուղմանը վերաբերող իր կնոջ տրամադրած բոլոր

փաստաթղթերը,

4. Որպես հաստատում այն բանի, որ 1905 թ. հուլիսին ինքը՝ Ավետիս Իվանով Սահակովը, Կովկասում հողագործության մինիստրի լիազոր Մեդվեդևի թույլտվությամբ, հայ-թաթարական ընդհարումներից տուժած հայերին օգնություն ցուցաբերող գլխավոր հանձնաժողովի կողմից գործուղվել է Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներ, որ այդ գավառներում իր գործունեությունը եղել է օրինական, ինչպես նաև նշյալ հանձնաժողովի կողմից այդ կարիքների համար 10.000 ռուբլի բաց թողնելու, այդ գավառներում նշյալ օգնության ցուցաբերման ուղղությամբ իր աշխատանքի մասին – հարցաքննել արքայազն Նապոլեոնին, Երևանի նահանգապետ Տիզենհաուզենին, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառապետերին, այդ օգնության գավառային կոմիտեների անդամներին, հողագործության մինիստրության Կովկասում լիազոր Մեդվեդևին, նշյալ օգնության ցուցաբերման կենտրոնական հանձնաժողովի անդամներ Քալանթարին, Առաքելյանին և այլոց,

5. Որպես հաստատում այն բանի, որ «Յառաջ» թերթը «Դաշնակցություն» կուսակցության օրգանը չէր՝ քննչական նյութից երևում է, որ «Դաշնակցություն» կուսակցությունն ուներ միայն մեկ պաշտոնական կենտրոնական օրգան՝ «Դրոշակ» թերթը, իսկ մեղադրյալ Բալուղյանի և վկա, «Պրիազովսկի կրայ» թերթի խմբագիր-հրատարակիչ Հարությունյանի ցուցմունքներն այն մասին, որ «Յառաջ» թերթը կուսակցական էր և «Դաշնակցություն» կուսակցության կողմից ֆինանսավորվող – հնարովի են և նշանակություն չունեն,

6. Գործին կցել Համբարձում Առաքելյանի քարտուղարությամբ Թիֆլիսում գումարված կենտրոնական հանձնաժողովի նիստերի արձանագրությունը, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի կոմիտեների արձանագրությունները, Սահակովի զեկույցը արքայազն Նապոլեոնին, Սահակովի 1906 թ. գարնան հաշվեկշիռը Երևանի նահանգապետին, Սահակովի նշյալ գործուղման աշխատանքների, իրեն բաց թողնված դրամական միջոցների վերաբերյալ նահանգապետին, գեներալ-նահանգապետին, գավառապետներին, կենտրոնական հանձնաժողովի նախագահին ուղղված հեռագրերը,

7. Թիֆլիսում Սահակովի հարցաքննության արձանագրության մեջ գրված է, որ Դավիթ Զավրիևի մոտ խուզարկությամբ գտնվել է Սահակյանի զեկույցը, սակայն իրեն ներկայացնելու ժամանակ նման զեկույց չի եղել,

8. Որպես հաստատում այն բանի, որ 1907 թ. հունվարից մինչև նույն տարվա վերջն ինքը ղեկավարության կարգադրությամբ զբաղված էր Կովկասյան երկրամասում դաշտային մկների դեմ պայքարով, և ոչ թե գնացել էր արձակուրդ կամ արտասահման – հարցաքննել Լոզինո-Լոզինսկուն, Մեդվեդևին, Սղնախի գավառապետին, հաշտարար միջնորդ Ջուրջաձեին, գյուղատնտես Տիմոֆեևին, Ջունկովսկուն, Պավլովին, Բոգարկոյին, Ալշևսկուն, փոխարքայի օգնական Միցկևիչին և այլոց, ինչպես նաև պահանջել մորեխի դեմ պայքարի վերաբերյալ Սահակովի հաղորդագրությունները, նախագծերը,

9. Վկա Ֆրենկելի ցուցմունքը միակողմանի և միտումնավոր է, քանզի նա պետության շահերին նվիրված համեստ գործիչ Սահակովին դարձրել է հեղափոխական, իսկ վկա Միհրանի ցուցմունքները զուրկ են որևէ փաստացի հիմքից, քանզի նա հանգիստ չի թողել ոչ մի հասարակական գործչի՝ բոլորին անվանելով դաշնակցականներ կամ հեղափոխականներ,

10. Քանի որ «Դաշնակցություն» կուսակցության շրջանային ժողովում Սահակովին վերագրվող ելույթը ռուսերեն սխալ է թարգմանված ու խեղաթյուրված է, քանզի բնագրում առկա են միայն «Ս. Խ. Կ.» հայերեն տառերը, իսկ թարգմանության մեջ հիշատակվում է նրա՝ Սահակովի ազգանունը, և որ բնագրում խոսք չի եղել զորքի ու կառավարության դեմ գործողությունների մասին, իսկ թարգմանության մեջ այդ ելույթի հեղինակը պահանջում է զորքի և կառավարության դեմ պայքարել, դրա համար էլ այդ փաստաթուղթը՝ որպես իր դեմ մեղադրական կետերից մեկը, տրամադրել իրեն տեսության համար և համեմատել ռուսերեն թարգմանության հետ,

11. Վարդապետ Տեր-Միքայելյանի այն ցուցմունքը, ըստ որի Էջմիածնի համագումարում Ավետիս Սահակյանն իրեն անվանել է «Դաշնակցություն» կուսակցության պատգամավոր, սարկավագ Չեորեքչյանի[14] այն ցուցմունքը, ըստ որի այդ ժողովում Ավետիս Սահակյանի նախագահությամբ բարձրացվել է պետությունից եկեղեցու անջատման հարցը, ինչպես նաև այդ մասին Ֆրենկելի ցուցմունքը իրականությանը չեն համապատասխանում,

12. Որպես հաստատում այն բանի, որ կառավարական և հասարակական հիմ-

14 Հետագայի Գևորգ Զ Չեորեքչյան Ամենայն Հայոց կաթողիկոսն է:

նարկներում Ավետիս Սահակյանի ողջ գործունեությունն այնքան տարաբնույթ է եղել և նրանից այնքան շատ ժամանակ է խլել, որ նա ոչ մի հնարավորություն չի ունեցել որևէ ընդհատակյա գործունեությամբ զբաղվելու և քսանամյա ծառայության ընթացքում նրա ողջ գործունեությունը եղել է բացահայտ և օրինական, հարցաքննել Մեղվեդևին, Վասիլևին, Շիմանովսկուն, Արխիպովին, Ռուխիվածեին, Եվանգուլովին, Իոսելիանիին, Տիմոֆեևին, Արղութինսկուն, Գրուզինսկուն, Ղրիմ-Գիրեյին և այլոց,

13. Հնարավորություն տալ տեսնել բնագիր գործը՝ հայերեն փաստաթղթերի բնագրերը և համեմատել դրանք ռուսերեն թարգմանությունների հետ,

14. Ներկայացնել Մեղվեդևի ցուցմունքը,

15. Պահանջել Կովկասում հողագործության մինիստրության լիազորի գրասենյակից Սղնախի գավառում Սահակովի աշխատանքի մասին հաշվետվությունը, այդ գործուղման մասին գրությունը և այդ հարցի առթիվ Թիֆլիսի նահանգապետի կարծիքը,

16. Նովոչերկասկի բանտում 1910 թ. դեկտեմբերի 20-ին իրեն ներկայացված քննչական նյութի հետ Սահակովը դեռ չի հասցրել ծանոթանալ,

17. Կատարել զննում և ներկա գործին որպես իրեղեն ապացույցներ կցել իրենից առգրավված հետևյալ փաստաթղթերը.

Ա. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանի նախագահությամբ, Համբարձում Առաքելյանի քարտուղարությամբ, Քալանթարի, Եղիշե Թոփչյանի և այլոց անդամությամբ գործող հայ-թաթարական անկարգություններից տուժածներին օգնություն ցույց տվող կենտրոնական հանձնաժողովի 1905 թ. հուլիսի 5-ի և սեպտեմբերի 7-ի երկու արձանագրությունները՝ Ավետիս Սահակովին Նախիջևանի գավառ տուժյալ բնակչության կարիքներին ծանոթանալու համար գործուղելու մասին,

Բ. Նշյալ հանձնաժողովին իր հետազոտության արդյունքների մասին Ավետիս Սահակովի զեկուցագիրը՝ այդ կարիքների համար 18.000 ռուբլի բաց թողնելու միջնորդությամբ և հանձնաժողովի կողմից ըստ այդ զեկուցագրի Նախիջևանի գավառի կարիքների համար 10.000 ռուբլի տրամադրելու մասին,

Գ. «Մշակ» թերթի 1905 թ. սեպտեմբերի 10-ի թ.182 համարի «Գյուղերի վիճակը Նախիջևանի գավառում» (Նախիջևանի գավառի տուժյալ գյուղերում Ավետիս Սահակովի այցի առթիվ) հոդվածը,

Դ. Նույն թերթի 1905 թ. հուլիսի 10-ի թ.133 համարի «Օգնության ոլորտում» (հանձնաժողովի կողմից մասնագետ Սահակովին Նախիջևանի գավառ բնակչության ընթացիկ կարիքների ուսումնասիրման համար գործուղման առթիվ) հոդվածը,

Ե. Օգնության Թիֆլիսի կոմիտեի Հին Նախիջևանի հանձնաժողովին 1905 թ. հուլիսի 19-ին ուղղված թ. 283 գրության պատճենը՝ տուժած հայերին օգնելու մասին,

Զ. Գյուղատնտեսական կայսերական կովկասյան ընկերության 1905 թ. հուլիսի 20-ի թ. 639 նամակը Նախիջևանի գավառում գյուղատնտեսության դրության վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով Ավետիս Սահակյանի գործուղման մասին,

Է. Երևանի նահանգապետի 1905 թ. օգոստոսի 1-ի նամակը Սահակյանին Նախիջևանի գավառում ոստիկանության պաշտոնյաների կողմից նրան ամեն տեսակ աջակցություն ցուցաբերելու մասին,

Ը. Շարուր-Դարալագյազի գավառի չորս գյուղերի հաշտարար վճիռները պարենային օգնության ստացման մասին,

Թ. ժամանակավոր գեներալ-նահանգապետի միջնորդությամբ Ավետիս Սահակյանի գործուղման ժամկետի երկարացման մասին հողագործության մինիստրության Կովկասում լիազորի 1905 թ. հոկտեմբերի 14-ի թ. 5446 թույլտվությունը,

Ժ. Երևանի նահանգապետի 1906 թ. հունվարի 24-ի թ. 314 գրությունը 10.030 ռուբլու ծախսման հաշվետվության մասին,

ԺԱ. Սահակովի գրությունը Շարուր-Դարալագյազի գավառապետին անասունների գնման համար դրամի փոխանցման մասին,

ԺԲ. 15.984 ռուբլի պարենի գնման համար ծախսելու մասին 1906 թ. փետրվարի 24-ի գրությունը Երևանի նահանգապետին,

ԺԳ. Սահակովի 1905 թ. սեպտեմբերի 19-ի զեկուցագիրը Նախիջևանի գավառում գյուղատնտեսության օգնության կազմակերպման մասին,

ԺԴ. Սահակովի 1908 թ. հունվարի 30-ի թ. 203 դրամական հաշվետվությունը՝ 883 ռուբլի 62 կոպեկ ծախսման մասին,

ԺԵ. Նախիջևանի գավառապետի կարգադրությունը Նախիջևանի գավառում Սահակովին օգնություն և աջակցություն ցուցաբերելու մասին,

ԺԶ. Տուժած բնակչությանը օգնություն ցուցաբերող Նախիջևանի հանձնաժողովի 1905թ. սեպտեմբերի 26/30-ի նիստի արձանագրությունը,

ԺԷ. Տուժած բնակչությանը օգնություն ցուցաբերող Շարուր-Դարալագյազի հանձնաժողովի 1905 թ. հոկտեմբերի 11-ի նիստի արձանագրությունը,

ԺԸ. Թիֆլիսից 1905 թ. սեպտեմբերի 3-ի

հեռագիր Սահակովի անունով գութաններ գնելու մասին,

ԺԹ. Զավրիևի 1905 թ. սեպտեմբերի 14-ի հեռագիրը Նախիջևանի գավառում օգնության կազմակերպման վերաբերյալ տեղեկություններ ստանալու մասին,

Ի. Ալեքսանդրապոլից 1905 թ. սեպտեմբերի 24-ի հեռագիրը Նախիջևանի գավառ գութաններ ուղարկելու մասին,

ԻԱ. Թիֆլիսից Թովմա վարդապետի 1905 թ. հոկտեմբերի 7-ի հեռագիրը կոշիկ ուղարկելու մասին,

ԻԲ. Երևանից 1905 թ. հոկտեմբերի 6-ի հեռագիրը Սահակովին Երևանի նահանգապետի կողմից Շարուր-Դարալագյազի գավառում տուժածներին 100.000 ռուբլի փոխանցելու մասին,

ԻԳ. Նախիջևանից 1905 թ. հոկտեմբերի 13-ի հեռագիր Սահակովին անասուն գնելու մասին,

ԻԴ. Երևանից Նապոլեոնի 1905թ. հոկտեմբերի 23-ի հեռագիրը Սահակովի գործուղումը հողագործության լիազորի կողմից երկարացնելու թույլտվության մասին,

ԻԵ. 1906 թ. հունվարի 16-ի հեռագիր Սահակովին տուժած բնակչությանը դրամական միջոցներ բաժանելու մասին,

ԻԶ. Հողագործության մինիստրության Կովկասում լիազորի 1907 թ. հունվարի 1-ի կարգադրությունը Սահակովին՝ խաղողի վազերի վնասների հաշվառման համար Գյոկչայի և Շամախիի գավառներ մեկնելու մասին,

ԻԷ. Սահակովի զեկույցը հողագործության մինիստրության Կովկասում լիազորին 1907 թ. Սղնախի գավառում աշխատանքների արդյունքների մասին,

ԻԸ. Հողագործության մինիստրության Կովկասում լիազորի 1907 թ. փետրվարի կարգադրությունը Այսրկովկասի երկրամասի հողային գումարներից ավանսի ծախսման հաշվետվություն ներկայացնելու մասին,

ԻԹ. Ռազմաբժշկական լաբորատորիայի վարիչի 1907 թ. ապրիլի 29-ի նամակը Սահակովին հակամոծակային շիճուկ ուղարկելու մասին,

Լ. Անդրկովկասում 1907 թ. մորեխների դեմ աշխատանքի մասին գյուղատնտես Սահակովի հաշվետվությունը,

18. Որպես հաստատում այն բանի, որ Սահակովն իր ողջ ժամանակը և ուժերը նվիրել է երկրամասի գյուղատնտեսության և մշակութային ժառանգության զարգացման գործին, և որ բնակչության հասարակական կյանքի առաջընթացի մասին նրա հայացքները քաջ հայտնի են գյուղատնտեսական հասարակության անդամներին և արտահայտված են «Անդրկովկասում զեմստվային հիմնարկությունների մտցման անհրաժեշտության մասին» գրքույկում, թույլատրել նրան նշյալ գրքույկը ներկայացնել ներկա գործին կցելու համար և հարցաքննել Ցինամագարովին և Ալիբեգովին,

19. Որպես հաստատում Ախալքալակի գավառում և Թուրքեստանում մորեխների դեմ պայքարի աշխատանքներին Սահակովի մասնակցության՝ ներկա գործին կցելու համար թույլատրել ներկայացնելու նրա ուսումնասիրությունները,

20. Որպես երկրամասում մորեխների դեմ պայքարի ոլորտում Սահակովի աշխատանքների հաստատում՝ հարցաքննել Մեղվեդևին, Արխիպովին, Վասիլևին, Շիմանովովսկուն, Ջունկովսկուն, Վեյդենբաումին, Պետերսոնին, ինչպես նաև՝ հողագործության մինիստրության Կովկասում լիազորի գրասենյակից պահանջել Անդրկովկասում 1907 թ. և 1909 թ. մորեխների դեմ պայքարի ուղղությամբ Սահակովի աշխատանքների մասին հաշվետվությունները, դրանք կցել գործին և լիազորին հարցնել 1910 թ. աշնանը Ս. Պետերբուրգ Սահակովի նախատեսվող գործուղման մասին:

1. Փոխել կալանման միջոցը գրավի կամ երաշխավորության,

2. Տրամադրել քննչական վարույթի գործի պատճենը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 6, թթ. 4417-4419:
Թարգմանություն ռուսերենից:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

Հայ հոգևորականների դատական գործերը*

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայ հոգևորականության բազմաթիվ ներկայացուցիչներ դարձել են ազատամարտի ակտիվ մասնակիցներ ու ջերմ աջակիցներ:

Արևմտյան Հայաստանում ծավալված հայդուկային կռիվներում կարևոր դեր են խաղացել Տարոնում՝ Հակոբ Սարկավագ Տեր-Ղևոնդյանը, Մշո Ս. Կարապետի վանքի վանահայր Ներսես վարդապետ Խարախանյանը, Ատրպատականում՝ Դերիկի Ս. Աստվածածին վանքի վանահայր Բագրատ վարդապետ Թավաքալյանը և ուրիշներ: Խանասորի արշավանքին մասնակցել և ծանր վիրավորվել է Բաշկալեի Վարդան վարդապետ Նալբանդյանը:

Հայ հոգևորականությունն ակտիվորեն մասնակցել է նաև 1903 թ. սկսված՝ հայ եկեղեցական գույքի բռնագրավման դեմ պայքարին: Այդ պատճառով ցարական իշխանությունների կողմից աքսորվել են Երևանի փոխթեմակալ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցը, Նոր Բայազետի առաջնորդական փոխանորդ Խորեն վարդապետ Մուրադբեկյանը, Մխիթար վարդապետ Տեր-Մկրտչյանը, Իսահակ վարդապետ Տեր-Միքայելյանը, Կարսի Ս. Նշան եկեղեցու Առաքել քահանա Առաքելյանը, Մանգլիսի Անդրեաս քահանա Արշակունին, Խարկովի Սրապիոն քահանա Սամվելյանը:

1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ Անդրկովկասի հայության ինքնապաշտպանության ղեկավարներից էին. Նախիջևանում՝ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը, Զանգեզուրում՝ Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանը, Շուշիում՝ Գարեգին քահանա Հովհաննիսյանը, Գանձակում՝ Կորյուն վարդապետ Սահակյանը:

Նման պայմաններում հասկանալի է, որ հայ հոգևորականները նույնպես չէին կարող զերծ մնալ ՀՅ Դաշնակցության դեմ ուղղված լիժինյան համատարած հաշվեհարդարից: Ցարական պաշտոնյաները քաջ գիտակցում էին, որ հայ եկեղեցականը զորավիգ է հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Այդ պատճառով, թեպետ ՀՅԴ Մեծ դատավարության ընթացքում հայ հոգևորականության շրջանում դատական բռնաճնշումները զանգվածային բնույթ չկրեցին, սակայն ձերբակալվեցին մի շարք հոգևորականներ, իսկ տասնյակները ենթարկվեցին հարցաքննության ու խուզարկության: Հայ հոգևորականների դատապարտումը հայատյաց լիժինների մտահղացմամբ պետք է ծառայեր

* Ընդունվել է տպագրության 6. 06. 2011:

որպես ռուսական հասարակության շրջանում հակահայ տրամադրություններ ստեղծելու «փաստարկ»:

Ուստի՝ ՀՅԴ Մեծ դատավարության ընթացքում ձերբակալվել ու հարցաքննվել են բազմաթիվ հոգևորականներ, որոնց մի մասը եղել է կուսակցության անդամ, իսկ մյուսները՝ համակիրներ: Բայց եղել են նաև ՀՅԴ այս կամ այն գործչի հետ համագործակցելու պատճառով ձերբակալվածներ, որոնք իրենց ցուցմունքներում սահմանազատվել են կուսակցությունից:

Սակայն, չնայելով սկիզբ առած հալածանքներին, ՀՅԴ Մեծ դատավարության ժամանակ Ամենայն Հայոց Գևորգ Ե. կաթողիկոսը հատուկ խնդրանքով դիմեց ցարական վերնախավին և նպաստեց ձերբակալվածների մեծ մասի ազատ արձակմանը: Կաթողիկոսի կարգադրությամբ Պետերբուրգի Շլիսելբուրգյան բանտում կալանվածներին այցելեց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի կոնսիստորիայի նախագահ Տիրայր վարդապետ Հովհաննիսյանը:

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող՝ լիժինյան հալածանքներին արժանացած հայ հոգևորականների դատական հետապնդման փաստաթղթերը կարող են նպաստել 20-րդ դարասկզբի հայ իրականության մեջ առանցքային դերակատարություն ունեցած ՀՅ Դաշնակցության և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմության անհայտ էջերի լուսաբանմանը և այդ երկու ազգային կառույցների փոխհարաբերությունների համակողմանի քննությանը:

Դատական գործերի մեջ իբրև մեղադրյալներ կամ վկաներ ներառված յուրաքանչյուր հոգևորականին վերաբերող փաստաթղթերը խմբավորվել են որպես մեկ ամբողջություն, որոնց կցվել են մեր կողմից ձեռք բերված՝ նրանց ավելի ուշ շրջանի լուսանկարները:

Ավագ Ա. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The Lawsuits of the Armenian Clergymen

Avag A. Harutyunyan

ԹԻՎ 1
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910թ. օգոստոսի 10: Քաղաք Վլադիկավկազ:

Վլադիկավկազի օկրուգային դատարանի Վլադիկավկազ քաղաքի 1-ին տեղամասի Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-րդ հոդվածի պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալ մեղադրյալին, և նա ցուցմունք տվեց.

Տեր Հակոբ Արզումանի Սառիկյանց[1], 37 տարեկան, ծնվել եմ Ղազախի գավառի Վերին Աղդան գյուղում, գրանցված եմ Ելիզավետպոլի նահանգում, բնակվում եմ Վլադիկավկազում, Վորոնցովյան փողոց, Առաքելովի տանը, ամուսնացած եմ, հայ, հայ-գրիգորյան հավատքի, ավարտել եմ հայկական հոգևոր ճեմարան, ունեմ 5 անչափահաս երեխա, Վլադիկավկազի հայկական եկեղեցու հոգևորական, սեփականություն չունեմ, հատուկ նշաններ չունեմ, չեմ դատվել, գործում մասնակիցներին օտար եմ:

Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում այն բանում, որ ես պատկանել եմ 1905-1908 թվականներից Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության նպատակ էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի է ունեցել 1905-1908 թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908 թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար, սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908 թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամա-

1. Հակոբ Արզումանի Սառիկյան (20.12.1872, գ. Գանձաքար, Իջևան - 1945, Երևան) - մշակութային գործիչ, գրող, մանկավարժ, հոգևորական, Խանասորի արշավանքի մասնակից, ՀՅԴ 10-րդ (Ժլատի) կենտրոնական կոմիտեության ակտիվ գործիչ, հայ ազգային-ազատագրական շարժման պատմության վերաբերյալ անտիպ հուշերի հեղինակ:

հավաք՝ հանցավոր նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ [է կատարել] հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության իրավասությունը՝ իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ, և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես՝ Հակոբ Սառիկյանս, իբր՝ եղել եմ «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության անդամ, Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի համար իմ անունով հասցեագրված դրամական միջոցների և կուսակցական գրագրության փոխանցման միջնորդ: «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցությանը ես երբեք չեմ անդամակցել և չեմ անդամակցում: Այդ կուսակցության գոյության մասին ես գիտեմ: Ինձ հայտնի է, որ այն ձևավորվել է 1895-1896 թթ.: Այդ ժամանակից ես գիտեմ Թուրքիայում նրա գործունեության մասին: Ես գիտեի, որ այդ կուսակցությունը հեղափոխական է և ստեղծվել է Թուրքիայում հայերի նկատմամբ կատարվող բռնություններին դիմակայելու նպատակով: Գիտեմ, որ այդ կուսակցությունը հետագայում վերակազմավորվեց սոցիալիստականի: Այդ բոլոր տեղեկությունները ես ձեռք եմ բերել հայկական և ռուսական թերթերից: «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության անդամների հետ ես ծանոթություն չեմ ունեցել, դրա համար էլ այդ կուսակցությանը ծանոթանալու այլ աղբյուր չեմ ունեցել: Բացի վերոնշյալից՝ այդ կուսակցության մասին ուրիշ ասելիք չունեմ: Գուցե և իմ ծանոթներից ինչ-որ մեկը անդամակցել է այդ կուսակցությանը, սակայն դա ինձ անհայտ է: Իմ ծանոթությունների շրջանակը շատ մեծ է, քանի որ ես ծառայել եմ Կովկասի բազմաթիվ վայրերում, աշխատակցել «Մշակ» և «Արձագանք»[2] թերթերին, մանկական հանդեսներին: Որպես տեղական հայկական ծխի քահանա՝ ես այստեղ շատ երևելի տեղ եմ զբաղեցնում, դրա համար էլ իմ միջոցով է անցնում տարբեր մարդկանց հանձնելու համար ինձ հասցեագրված դրամական փոխանցումների, ծանրոցների և նամակների զանգվածը: Թե Ստեփան Տեր-Մկրտչյանը, Ջևադ Բեկ-Բալուղյանը, Գրիգորյանը եղել են «Դաշնակցություն» հայ հեղափոխական կուսակցության անդամներ, թե ոչ՝ չգիտեմ: Երբ 1908 թ. ես հրավիրվեցի բանտ՝ հուղարկավորելու տիֆից մահացած Գրիգորյանին, իմացա, որ նրա ազգանունը եղել է Չիլինգարյան: Դավիթ Զավրիևին[3] ես չգիտեմ: «Նոր կյանք» թերթի[4] խմբագրությունում գտնված ինձ հասցեագրված և «Սիգ»-ին փոխանցելու համար նամակի առթիվ ոչինչ հաղորդել չեմ կարող: Ո՛չ Սիգին, ո՛չ Սիմոն Գրուզինյանին[5] չեմ ճանաչել և նրանց մասին ոչինչ չեմ լսել: Իմ կարծիքով՝ նամակն իմ անունով է հասցեագրվել այն պատճառով, որ ես բազմաթիվ դեպքերում, ինչպես արդեն բացատրել եմ, փոխանցիկ կետ եմ եղել նամակների, ծանրոցների և դրամական փոխանցումների հանձնման համար՝ այն անձանց, ում հասցեներն ամենայն հավանականությամբ, ուղարկողներին անհայտ են եղել: Որպես իմ արդարացում՝ ավելին ասել չեմ կարող:

Ընթերցված է:
Հոգևորական Հ. Սառիկյան:
Դատական Քննիչ:
Դատախազի տեղակալ (ստորագրություն):
ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 3471-3473:
Թարգմանություն ռուսերենից:

2 «Արձագանք» գրական և քաղաքական լրագիրը հրատարակվել է Թիֆլիսում 1882-1898 թթ., խմբագիր-հրատարակիչը Աբգար Հովհաննիսյանն էր:
3 Զավրիև (Զավրյան) Դավիթ Քրիստափորի (23.06.1889, Թիֆլիս - 11.08.1957, Թբիլիսի) – հասարակական գործիչ, քիմիկոս: Պետերբուրգի համալսարանում աշակերտել է Դ. Մենդելեևին: 1921թ. հոկտեմբերից մինչև 1922 թ. փետրվարը եղել է ԵՊՀ ռեկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:
4 «Նոր կյանք» գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել է Նոր Նախիջևանում 1906-1907 թթ.: Խմբագրել են Գր. Անոփյանը, Հ. Խարագյոզյանը, հրատարակիչը՝ Գր. Բեդելյանը:
5 Նկատի ունի ՀՅԴ հայտնի գործիչ Սիմոն Վրացյանին: «Սիգ»-ը և Սիմոն Գրուզինյանը նրա կուսակցական կեղծանուններն էին:

ԹԻՎ 2

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. սեպտեմբերի 4[6]: Քաղաք Վլադիկավկազ: Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 403-405-րդ հոդվածների հիման վրա որպես մեղադրյալի հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Իմ անուն, հայրանուն, ազգանուն – Տեր Հակոբ Արզումանի Սառիկյան:

Առաջադրված հարցերին լրացուցիչ պատասխանում եմ.

Ձեր կողմից ներկայացված բացիկի վրա պատկերված անձին՝ Ձեր ասելով, Հակոբ Չիլինգարյանին, ճանաչում եմ «Միքայել Գրիգորյան» ազգանունի տակ: Արդյոք Չիլինգարյանը անդամակցել է «Դաշնակցություն» կուսակցությանը՝ ինձ հայտնի չէ: Առաջին անգամ Չիլինգարյանի հետ ծանոթացել եմ 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների սկզբում: Նշյալ Չիլինգարյանն ինձ անհայտ լինելով՝ ինձ մոտ եկավ ք. Վլադիկավկազ, անվանելով իրեն Միքայել Գրիգորյան, որպես վլադիկավկազցի գինու առևտրական Սերգեյ Ավագի Վարդիզորովի ներկայացուցիչ, և խնդրեց ինձ ստանալ Ղզլյարից Պետական բանկ փոխանցված 500 ռուբլի գումարը: Ընդ որում, չգիտեմ թե ինչու էր փոխանցումը կատարված իմ անվամբ: Թե ում կողմից էր այդ փոխանցումը՝ ես այն ժամանակ անդորրագրի վրա ուշադրություն չդարձրի: Սակայն նշյալ Գրիգորյանը ինձ բացատրեց, որ լինելով Ղզլյարից՝ հենց ինքն է իմ անունով փոխանցել, իսկ իր առևտրի գործընկեր Վարդիզորովի անունով չի փոխանցել այն պատճառով, որովհետև հույս չուներ նրան գտնել Վլադիկավկազում: Նրա հետ ես գնացի Պետական բանկ և ստացա 500 ռուբլի փոխանցումը, որը և հենց բանկում հանձնեցի նրան: Ղզլյարի գանձապետարանի ներկայացրած 1905 թ. նոյեմբերի 1-ի N 16882 անդորրագրի դարձերեսի «1905 թ. նոյեմբերի 9-ին հինգ հարյուր ռուբլին ստացել է հոգևորական Հ. Սառիկյանը» ստորագրությունն իմն է, իսկ թե ինչու է նշյալ անդորրագրում փոխանցումը նշված ոչ թե Միքայել Գրիգորյանից, այլ Հովհաննես Եգորյանից, չգիտեմ և բացատրել չեմ կարող: Հովհաննես Եգորյանի անձն ինձ բացարձակապես անհայտ է: Ես չեմ կարող բացատրել, թե ինչու է Գրիգորյանն ասել, որ ինքն է կատարել այդ փոխանցումը, և որ գումարը փոխանցած անդորրագրում նշված անձը ոչ թե Միքայել Գրիգորյանն է, այլ ոմն Հովհաննես Եգորյանը: Ես դրա վրա ոչ մի ուշադրություն չեմ դարձրել: Այդ ժամանակ իմ բնակարանում ներկա էր Վլադիկավկազում բնակվող Միքայել Ստեփանի Աթոռովը[7]: Այդ ամենը տեղի է ունեցել նրա ներկայությամբ, և ինչպես պարզվեց, նա գիտեր Միքայել Գրիգորյանին: Դրանից որոշ ժամանակ անց կրկին իմ բնակարան եկավ նշյալ Միքայել Գրիգորյանը (դա արդեն 1906 թ. էր) և բերեց ինձ նույն գանձապետարանի 700 ռուբլու անդորրագիր՝ խնդրելով դրանով ստանալ դրամը, ասելով, որ ինքն անձամբ իր անունից է այդ փոխանցումը իմ անունով կատարել: Այդ ժամանակ նրա հետ գնացել եմ բանկ և ստացել նշյալ գումարը և փոխանցել նրան: Ձեր ներկայացրած Ղզլյարի գանձապետարանի 1906թ. փետրվարի 4-ի N 1783 անդորրագրում «հոգևորական Տեր Հակոբ Սառիկյան, 1906թ. փետրվարի 14, 701 ռուբլի 85 կոպեկ ստացա» ստորագրությունը Տեր Խաչատուր Շաթիրյանից փոխանցման ստացման առթիվ՝ իմն է: Այդ անդորրագրով գումարի ստացման ժամանակ բոլորովին ուշադրություն չեմ դարձրել, թե ում կողմից էր կատարված փոխանցումը: Տեր Խաչատուր Շաթիրյանին ճանաչում եմ: Նա ք. Ղզլյարի հանգուցյալ հոգևորականն է: Թե ինչու է Գրիգորյանն ասել, որ այդ փոխանցումն իրենից է, իսկ անդորրագրում նշված է Շաթիրյանից, այն ժամանակ ուշադրություն չդարձրի, այլ հավատացել եմ նրան՝ որպես ինձ մոտ անդորրագրով եկած անձի, դրա համար էլ ոչ մի կասկած

6 Բնագրում հարցաքննության ժամկետի նշումն ակնհայտ սխալ է, հավանաբար պետք է լինի օգոստոսի 10:
7 Այսպես է բնագրում:

չունեի: Ինչ վերաբերում է Ստեփան Տեր-Մկրտչյանից 1906 թ. հոկտեմբերին 1000 ռուբլի փոխանցմանը, ապա Ջանգարով եղբայրների գրասենյակի ներկայացրած 1906թ. հոկտեմբերի 10-ի N 10807 անդորրագրի դարձերեսի «Սույն փոխանցումով հազար ռուբլի 1906 թ. հոկտեմբերի 14-ին ստացավ հոգևորական Սառիկյանը» ստորագրությունն իմն է: Նշյալ փոխանցումով այդ գումարը ես ստացել եմ ք. Վլադիկավկազում Ազով-Դոնյան բանկից և փոխանցել դրանք ք. Վլադիկավկազում բնակվող ոչ այն է Բալայանցին, ոչ այն է Բերյանցին՝ համաձայն Ստեփան Տեր-Մկրտչյանից ստացած նամակի, ում ես անձամբ ճանաչում էի որպես նախկին ուսուցչի, սակայն նրա հետ մոտիկից ծանոթ չէի: Ինչ վերաբերում է Ջևադ Բեկ-Բալուղյանից 375 ռուբլի Արմավիրից Ազով-Դոնյան առևտրական բանկի միջոցով չորրորդ փոխանցմանը, ապա Ձեր ցույց տված 1906թ. փետրվարի 8-ի N 982086 անդորրագրի դարձերեսի «հոգևորական Հակոբ Սառիկյան» ստորագրությունն իմն է, և այդ գումարը պատկանում էր ինձ: Ես այն ժամանակ ք. Վլադիկավկազում բնակվող Սերգեյ Յուզբաշևից պարտքով 500 ռուբլի էի խնդրել: Նա տվեց 125 ռուբլի՝ խոստանալով ճանապարհից փոխանցել մնացած գումարը: Սակայն փոխանցումը ստացվեց Բալուղյանից՝ ամենայն հավանականությամբ այդ փոխանցումը կատարած Յուզբաշևի հանձնարարությամբ: Թե ինչի համար էին ուղարկված 500 ռուբլի, 701 ռուբլի 85 կոպեկ և 1.000 ռուբլի փոխանցումները՝ չգիտեմ: Ես խնդրում եմ Ձեզ Ստեփան Տեր-Մկրտչյանի կողմից Բալայանին կամ Բերյանին 1.000 ռուբլի փոխանցման ստացման և հանձնման հանգամանքների առթիվ հարցաքննել Արսեն Վարդանի Դերխարկապյանցին: Ինչ վերաբերում է Ստեփան Տեր-Մկրտչյանի նամակին, ապա դա ես ոչնչացրել եմ, քանի որ նամակներ պահպանելու սովորություն չունեմ: Հավելեմ: Տեր-Մկրտչյանից փոխանցումի անդորրագիրը բերել է իրեն ոչ այն է Բալայան, ոչ այն է Բերյան անվանած ինձ անհայտ անձը: Այդ ժամանակ վկաներից ոչ ոք չկար, իսկ Դերխարկապյանցը միայն տեսել է, թե ինչպես եմ ես այդ անդորրագրով 1.000 ռուբլի ստացել և փոխանցել ոչ այն է Բալայան, ոչ այն է Բերյան ազգանունով անձին: Դերխարկապյանցը չէր ճանաչում նշյալ Բալայանին: Թե որտեղ է բնակվում նշյալ Բալայանը՝ չգիտեմ, սակայն նա ք. Վլադիկավկազում չէ:

Ընթերցված է: Ես խնդրում եմ Ձեզ արձանագրության մեջ գրառել հետևյալը. ես տարբեր հայտնի և անհայտ անձանցից այնքան շատ եմ նամակներ, ծանրոցներ, դրամական փոխանցումներ ստացել, և այդ հանձնարարություններն այն աստիճան էին ինձ ծանրաբեռնել, որ եկեղեցում ներկաներին դիմեցի նման հանձնարարություններով ինձ չծանրաբեռնելու խնդրանքով: Դա կարող են հաստատել հետևյալ անձինք՝ 1. հոգևորական Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը, 2. տեղական եկեղեցու երեցփոխ Մկրտիչ Տեր-Աբրամովը, 3. սաղմոսերգու Հովհաննես Մկրտումյանը:

Ընթերցված է: Խնդրում եմ արձանագրության մեջ գրառել նաև, որ եկեղեցում նշյալ հայտարարությունը ես ունեցել եմ չորս-հինգ տարի առաջ:

Հոգևորական Տեր Հակոբ Սառիկյան:
Դատական Քննիչ Ն. Լիժին:
Պալատի Դատախազի տեղակալ Ակսակով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 3813-3814:
Թարգմանություն ռուսերենից:

<u>ԹԻՎ 3</u>

ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. օգոստոսի 10: Քաղաք Վլադիկավկազ:

Վլադիկավկազի 1-ին տեղամասի Դատական Քննիչը ս. թ. հարցաքննելով Տեր Հակոբ քահանա Սառիկյանին՝ որպես Քրեական դատավարության կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ մեղադրյալի, Նովոչերկասկի օկրուգային դատական պալատի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի 1910 թ. հուլիսի 24-ի N 3095 պահանջի հիման վրա, և ուշադրության առնելով, որ այդ պահանջում պատժի միջոցը քննության և դատի գալուց խուսափելն է ընտրվել և գրավը՝ հինգ

հազար (5000) ռուբլի չափով, Քրեական դատավարության կանոնադրության 416-րդ, 419-րդ, 421-րդ հոդվածների հիման վրա, ՈՐՈՇԵՑԻ. մեղադրյալ հոգևորական Տեր Հակոբ Արզումանի Սառիկյանի համար պահանջել գրավ հինգ հազար (5000) ռուբլի չափով, իսկ մինչև դրա ներկայացումը՝ նրան կալանքի տակ պահել Վլադիկավկազի մարզային բանտում: Դատական Քննիչ (ստորագրություն): Որոշման բովանդակությունը մեղադրյալին հաղորդվել է: Հոգևորական Հ. Սառիկյան: Դատական Քննիչ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3473: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. օգոստոսի 10: Քաղաք Վլադիկավկազ:

Ինձ՝ քաղաք Վլադիկավկազի 1-ին տեղամասի Դատական Քննիչին, ս. թ. այցի եկավ Սղնախի քաղաքացի Սերգեյ Իվանի Յուզբաշևը, որը բնակվում է Վլադիկավկազում, Վորոնցովյան փողոց, սեփական տանը, և ներկայացնելով հինգ հազար (5000) ռուբլի որպես գրավ մեղադրյալ Տեր Հակոբ Սառիկյանի համար, խնդրեց ազատել նրան ներկայացված գրավի դիմաց: Համաձայն ս. թ. իմ որոշման, ՈՐՈՇԵՑԻ. Սղնախի քաղաքացի Սերգեյ Իվանի Յուզբաշևից ընդունել նրա հինգ հազար (5000) ռուբլի գրավը մեղադրյալի համար և մեղադրյալ հոգևորական Տեր Հակոբ Արզումանի Սառիկյանին անմիջապես ազատ արձակել:

Գրավատու Սերգեյ Յուզբաշև:
Դատական Քննիչ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3473: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 5

ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. օգոստոսի 11: Գյուղ Վաղարշապատ:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Միդավան Քրեական դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Սուքիաս արքեպիսկոպոս Պարգյանց[8] (հարցաքննված է):

Թե ինչպիսի հանգամանքներում և ինչ առիթով 1906 թ. հոկտեմբերի 29-ին վանական հյուրանոցի մերձակայքում ինձ անպատվեցին՝ ես իմ սկզբնական ցուցմունքում մանրամասն բացատրել եմ: Ճշգրիտ ասել, թե ով է հավաքել այդ ամբոխին, ով է այն ղեկավարել՝ լարելով իմ դեմ, չեմ կարող: Բայց ես պետք է ասեմ, որ ամբոխում նկատեցի Համազասպ Նորհատյանցին[9], ում ես անձամբ ճանաչում եմ, սակայն նրան չեմ ճանաչում ներկայացված լուսանկարչական քարտում (ներկայաց-

8 Սուքիաս արքեպիսկոպոս Պարգյանց (10.12.1837, Աստապատ - 12.09.1914, Վաղարշապատ) - անվանի հոգևոր գործիչ, բանասեր, մանկավարժ: 1856 թ. ավարտել է էջմիածնի Ժառանգավորաց դպրոցը, 1869 թ. օծվել է վարդապետ, 1875 թ.՝ եպիսկոպոս: 1869-1872 թթ. եղել է Ախալցխայի, 1872-1874, 1875-1877թթ.՝ Ալեքսանդրապոլի, 1881-1883 թթ.՝ Նոր Նախիջևանի, 1883-1886 թթ.՝ Աստրախանի, 1888-1890, 1899-1903 թթ.՝ Երևանի, 1893-1895 թթ.՝ Ատրպատականի թեմերի առաջնորդ, 1888-1891 թթ.՝ Սինոդի անդամ, 1895-1899 թթ.՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1897-1899թթ.՝ «Արարատ»-ի խմբագիր: Հայաստանյայց եկեղեցու իրավունքների պաշտպանության համար 1891-1893 թթ. աքսորվել է Օրյոլ, 1903-1905 թթ.՝ Օրենբուրգ: Նրա նյութական աջակցությամբ են հրատարակվել Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու աշխատությունները:

9 Նորհատյան Համազասպ Գրիգորի (1870, Գյումրի - 1920, Կարս) - 1890-ից՝ ՀՅԴ անդամ, 1920 թ. եղել է Կարսի քաղաքագլուխ, կախվել է թուրքերի կողմից:

ված է Համազասպ Նորհատյանցի լուսանկարչական քարտը): Նորհատյանցը կանգնած էր ամբոխի մեջ՝ իմ դեմ որևէ ակտիվ գործողություններ չցուցաբերելով: Դրանից զատ, նշյալ Նորհատյանցը մինչև դիպվածը մեկ ամիս բնակվել է վանական հյուրանոցում: Պողոս Չուբարյանին ես նույնպես անձամբ ճանաչում էի, ներկայացված լուսանկարչական քարտում (ներկայացված է Չուբարյանի քարտը) ես ճանաչում եմ Չուբարյանին: Ինձ վիրավորած ամբոխում ես Չուբարյանին չեմ տեսել, սակայն, ինչպես ինձ հայտնի է, Չուբարյանն ամբոխի առջև ելույթ է ունեցել և նրան լարել իմ դեմ: Ներկայացված լուսանկարչական քարտի վրայի անձը (ներկայացված է Լևոն Մուշեղյանի քարտը) ինձ անհայտ է: Մուշեղյանին վերոնշյալ ամբոխում ես չեմ տեսել և չեմ լսել, որ նա ինձ վիրավորելու մեջ որևէ մասնակցություն ունենա: Որտեղ են բնակվել Նորհատյանցը, Չուբարյանը և Մուշեղյանը և ինչով են նրանք զբաղվել և անդամակցե՞լ են արդյոք «Դաշնակցություն» կուսակցությանը կամ ոչ՝ ինձ անհայտ է: Պողոս Չուբարյանը հոգևոր ճեմարանի դասախոս երբեք չի եղել: Ինձ անպատվելու առիթն այն հանգամանքն էր, որ ես կաթողիկոսին խնդրել էի, որպեսզի նա Մխիթար, Մեսրոպ և Եղիշե վարդապետներին Սինոդի անդամներ նշանակելու մասին ներկայացումը՝ ներքին գործերի նախարարին, հետ վերցնի: Իմ միջնորդությունը կաթողիկոսը հարգել էր: Վերոնշյալ անձինք Սինոդի անդամության թեկնածուներ են առաջադրվել հետևյալ հանգամանքներում. կաթողիկոսի դիվանում գումարվել է գաղտնի խորհրդակցություն, որտեղ ներկա են եղել աշխարհիկ անձինք: Ովքեր են ներկա եղել այդ խորհրդակցությանը և ով է եղել դաշնակցականների և հնչակյանների թեկնածուն՝ ես չգիտեմ, սակայն այդ խորհրդակցության մանրամասների մասին կարող էր հայտնել դիվանի գրագիր Բարսեղ Ղարիբյանը: Ինձ անպատվելը «Դաշնակցություն» կուսակցության կողմից վրեժ էր, թե ոչ՝ չգիտեմ: Կաթողիկոսին ուղղված իմ խնդրանքը պայմանավորված էր նրանով, որ Մեսրոպը, Մխիթարը և Եղիշեն վանական միաբանության կողմից չէին ընտրվել, ինչպես հարկ էր անել ըստ 1906 թ. կաթողիկոսի հրապարակած կոնդակի: Ինձ վիրավորած ամբոխը թշնամաբար էր տրամադրված նաև Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի[10] դեմ, ով ևս դեմ էր Մեսրոպի, Մխիթարի և Եղիշեի ներկայացմանը: Նշյալ ամբոխը ներխուժել է Կարապետի կացարանը, որտեղ ջարդել է ապակիները և լամպը: Ինձ անպատվելու համար ես վարչակազմին չեմ բողոքել, իմ վիրավորման առթիվ գործի վարույթին ընթացք տալու խնդրանքով չեմ դիմել: Նշյալ ամբոխից ինձ առաջինը վիրավորել է՝ խուլիգան անվանելով, Վաղարշապատի քահանայի փեսա Մեխակը, իսկ ամբոխին, ըստ երևույթին, ղեկավարել է շուրջ մեկ տարի Էջմիածնում բնակված դոկտոր Զավրիևը: Վերոհիշյալ անձանցից բացի, թե էլի ովքե՞ր են մասնակցել ամբոխին՝ չգիտեմ: «Դաշնակցություն» կուսակցության նպատակների, խնդիրների և գործունեության և նշյալ կուսակցությանն անդամակցող անձանց մասին ինձ ոչինչ հայտնի չէ: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց:

Դատական Քննիչ Սիդավա:

Դատախազի տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 3579: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 6
ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. նոյեմբերի 29: Գյուղ Վաղարշապատ: Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական

10 Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան (17.03.1866, գ. Ցղնա, Նախիջևան - 19.11.1915, Բաքու) - անվանի հայագետ, հոգևոր գործիչ: 1889-1894 թթ. ուսանել է Լայպցիգի, Հալլեի և Բեռլինի համալսարաններում, 1895 թ. օծվել է վարդապետ, 1909 թ.՝ եպիսկոպոս: Եղել է Գևորգյան ճեմարանի տեսուչը, «Արարատ» հանդեսի խմբագիրը: 1903-1906 թթ. եղել է Երևանի թեմի փոխանորդը, 1907-1912 թթ.՝ Ատրպատականի, 1914-1915 թթ.՝ Շամախու թեմերի առաջնորդը:

դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց, ապրում եմ Էջմիածնում, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակիցներին օտար եմ:

1907 թ. հունվարին Էջմիածնի սինոդի գործավար Հովհաննես Հովհաննիսյանը Էջմիածնի Սինոդի նախկին դատախազ Ֆրենկելի անունից վերջինիս 300 ռուբլի պարտք տալու խնդրանքով դիմեց ինձ: Պարտքը ամիս ու կես ժամկետով տվեցի առանց ստացականի: Ես ստացական չցանկացա վերցնել՝ հայտարարելով, որ եթե Ֆրենկելը կարգին մարդ է, ապա առանց դրա էլ կվճարի: Նշված ժամկետում ես գումարը չստացա, սակայն 1907 թ. օգոստոսի 17-ին Ֆրենկելի կնոջից նամակ ստացա, որով նա ամենից կարճ ժամկետում խոստանում էր պարտքը վճարել: Էջմիածնի գավառապետը Ֆրենկելի պարտքի հաշվին ինձ 200 ռուբլի տվեց: 100 ռուբլի մինչ այժմ չեմ ստացել, թեպետ գրել եմ Ֆրենկելին, որի պատճենը կից ներկայացնում եմ: Հեռանալով Էջմիածնից՝ Ֆրենկելը զբաղեցրած բնակարանի համար վանքին պարտք է մնացել: Էջմիածնի Սինոդը մի քանի անգամ Ֆրենկելից պահանջել է վճարել, դրանք որպես Սինոդի անդամ ստորագրել է Հուսիկ վարդապետ Զոհրաբյանը: Զոհրաբյան վարդապետին ճանաչում եմ մանկությունից: Նրա կյանքն ու գործունեությունն անցել են իմ աչքի առաջ, և ես կարող եմ վճռականապես հայտարարել, որ Զոհրաբյանը ոչ միայն «Դաշնակցություն» կուսակցությանը չի անդամակցել, այլև եղել է նրա ակնհայտ հակառակորդը: Նա բազմիցս «Մշակ» թերթում «Էլպիս» կեղծանունով դաշնակցականների դեմ հանդես է եկել: Ինչպես հայտնի է, «Մշակ» թերթը «Դաշնակցության» հակառակորդն է: 1908 թ. կաթողիկոսի ընտրություններում Զոհրաբյան վարդապետը ձայն է տվել Օրմանյան պատրիարքին, ով համարվում էր «Դաշնակցություն» կուսակցության ընդգծված հակառակորդը: Եկեղեցական գույքի վերադարձնելուց հետո գումարները ստանալու համար կաթողիկոսը Թիֆլիս գործուղեց Նահապետ եպիսկոպոսին, բայց վերջինիս դաշնակցականներն արգելեցին մեկնել: Այդ առթիվ Զոհրաբյան վարդապետը՝ որպես կաթողիկոսի դիվանապետ, ընդդիմացավ դաշնակցականներին և «Մշակ»-ում նրանց դեմ գրեց, որ խառնվում են կաթողիկոսի կարգադրությանը: Ես կրկին պնդում եմ, որ Զոհրաբյանը ոչ մի ընդհանուր բան չունի «Դաշնակցություն» կուսակցության հետ, և որ նա իր հայացքներով պահպանողական է: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց:

Դատական Քննիչ Սիդավա:

Դատախազի տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4348: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 7
ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. սեպտեմբերի 15: Քաղաք Երևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 403-րդ հոդվածի պահպանմամբ իր բանտախցում որպես մեղադրյալի հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Զոհրաբյան Հուսիկ Մկրտիչի[11], 39 տարե-

կան, վարդապետ, գրանցված եմ Դոնյան զորքի մարզում, Մեծ Սալի գյուղում, ծնվել եմ նույն գյուղում, ծնունդս՝ օրինական, ազգությունս՝ հայ, հայ-գրիգորյան, ավարտել եմ Էջմիածնի հոգևոր ճեմարանը և Լայպցիգի համալսարանը, Էջմիածնի Սինոդի անդամ, անշարժ գույք չունեմ, հատուկ նշաններ չունեմ, չեմ դատվել:

Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում այն բանում, որ պատկանել եմ 1905-1908 թվականներից Ռուսական պետության մեջ ձևավորված հանցավոր ընկերակցությանը՝ «Դաշնակցություն» հայկական հեղափոխական միություն անվանումով կուսակցությանը, որն իր գործունեության նպատակ էր առաջադրել գործադուլների, տնտեսական, կազմակերպական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով բռնությամբ Ռուսական պետության մեջ օրենքներով հաստատված կառավարման հիմնական ձևի փոփոխությունը և դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հաստատման համար գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումը, որ տեղի է ունեցել 1905-1908 թթ., [և որ] նշյալ նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիս քաղաքում և Ռուսական կայսրության ուրիշ քաղաքներում ուներ հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ և ենթակոմիտեներ, խմբեր, 1905-1908 թթ. հրատարակած հակակառավարական ամսագրեր, թերթեր, թռուցիկներ՝ զինված ապստամբության կոչերով, Ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար սարքավորումներով տպարաններ, հրազենի և սառը զենքի մեծ պահեստներ, պայթուցիկ արկեր (ռումբեր), վառոդի, դինամիտի, փամփուշտի և այլնի մեծ պահեստներ, հեղափոխական զինվորների հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ՝ «Ահաբեկիչ Մարմին»-ի խորհրդի գլխավորությամբ, որ կոմիտեների որոշումներով 1905-1908 թթ. Ռուսաստանում իրականացրել է նշյալ հանցավոր կազմակերպության համար վտանգավոր համարվող և նրա կարգադրություններին ենթարկվել չցանկացող՝ ինչպես կառավարող իշխանության ներկայացուցիչների, այնպես և մասնավոր անձանց սպանությունների մի ամբողջ շարք, դրանից զատ [իրականացրել է] տեղական հայ բնակչության ամենամյա պարտադրված դրամահավաք՝ հանցավոր նպատակների համար և մահվան սպառնալիքի ներքո, առավել ևս՝ հատուկ ստիպողական մեծ դրամական շորթումներ [է կատարել] հարուստ անձանցից, որոնց հրաժարման դեպքում նրանց [սպառնացել են] սպանել, դրանից բացի ինքնագլուխ կերպով յուրացնելով դատական իշխանության իրավասությունը՝ իրականացնելով քրեական և քաղաքացիական գործերի քննություններ, և այդ գործերով իր ապօրինի դատավճիռներն արձակելով, ընդ որում ես՝ Հուսիկ Զոհրաբյանս, եղել եմ «Դաշնակցություն» կուսակցության անդամ, ինչի մասին վկայել են երդման տակ հարցաքննված վկաներ Քեշիշյանը, Վարդերեսյանը[12] և Ֆրենկելը, վկայելով, որ ես որպես «Դաշնակցություն» կուսակցության անդամ իմ առջև նպատակ եմ դրել ռուսական պետությունից Հայաստանի ապագա անջատումը: Դրանից զատ, իմ հեղափոխական գործունեության մասին է իբր՝ վկայում Թիֆլիսում 1907 թ. սեպտեմբերի 2-ին Եղիգարովների բնակարանում «Դաշնակցություն» կուսակցության այլ հեղափոխական թղթերի մեջ խուզարկությամբ գտնված, իբրև կաթողիկոսի դիվանապետ-գրաքննիչի իմ թույլտվությամբ, «Դաշնակցություն» կուսակցության անդամի կողմից 1907 թ. հրատարակված հայերեն «Լույս» օրացույցը, այսինքն՝ [մեղադրվում է] Քրեական դատավարության կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ:

Որպես իմ արդարացում պարզաբանեմ հետևյալը: «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցությանը ոչ միայն չեմ անդամակցել, այլև ընդհանրապես դեմ եմ եղել բոլոր հեղափոխական կուսակցություններին, հատ-

11 Զոհրաբյան Հուսիկ արքեպիսկոպոս (5.11.1870, Մեծ Սալա - 23.10.1943, Բուխարեստ) - հոգևոր-մշակութային գործիչ: 1924 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: 1920-ից եղել է Ռումինիայի թեմի առաջնորդ:
12 Նկատի ունի խմբապետ Միհրանի և նրա օգնականի ամբաստանությունը:

կապես «Դաշնակցություն» կուսակցությանը, ինչը կարող եմ ապացուցել ինչպես վկաների ցուցմունքներով, այնպես էլ փաստաթղթային տվյալներով: Ինչ վերաբերում է վկաներ Քեշիշյանին և Վարդերեսյանին, ապա նրանց բոլորովին չգիտեմ և նրանց երբեք չեմ տեսել[13], իսկ Էջմիածնի Սինոդի նախկին դատախազ, վկա Ֆրենկելի ցուցմունքը բացատրում եմ միայն անձնական վրեժով[14], քանզի իմ՝ որպես կաթողիկոսի դիվանապետի, և նրա միջև տեղի են ունեցել թյուրիմացություններ Էջմիածնի վանքում Ֆրենկելի զբաղեցրած տան բնակարանային վարձի պատճառով: Ինչ վերաբերում է «Լույս» օրացույցին, ապա օրացույցների գրաքննությունը պաշտոնական եկեղեցական մասով կաթողիկոսի իրավասությունն էր, ով և թույլատրում էր տպագրությունը, իսկ օրացույցի մնացյալ մասը ենթակա էր ընդհանուր գրաքննության: Ես գրախոսել եմ «Լույս» օրացույցի միայն այն մասը, որը կազմել և ստորագրել էր Խորեն վարդապետ Ղազարյանը: Շարադրվածին խնդրում եմ հավելել հետևյալը. քանի որ ինձ մոտ կան էական նշանակություն ունեցող վավերագրեր, ապա համապատասխան փաստաթղթերով, մանրամասն բացատրություն կներկայացնեմ երկու-երեք օր հետո: Ավելին առայժմ ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Հուսիկ վարդապետ Մկրտիչի Զոհրաբյան:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4036-4037:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 8

ՈՐՈՇՈՒՄ

1910 թ. սեպտեմբերի 15: Քաղաք Երևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան սույն թվին որպես Քրեական դատավարության կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ մեղադրվողի, հարցաքննել է Էջմիածնի վանքի վարդապետ Հուսիկ Մկրտիչի Զոհրաբյանին, և ուշադրության առնելով նրան սպառնացող պատժի խստությունը, Նովոչերկասկի օկրուգային դատական պալատի հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչի ս. թ. հուլիսի 31-ի N 3470 պահանջը, այլև հավասարապես ղեկավարվելով Քրեական դատավարության կանոնադրության 421-րդ հոդվածով, ՈՐՈՇԵՑԻ. մեղադրյալ Զոհրաբյանի համար նշանակել երեք հազար ռուբլի գումարի գրավ, իսկ մինչև դրա ներկայացումը նրան պահել կալանքի տակ:

Բնագիրը համապատասխան ստորագրությամբ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4037: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 9

ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. նոյեմբերի 26: Քաղաք Երևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 403-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Հուսիկ վարդապետ Զոհրաբյան, լրացուցիչ ցուցմունք եմ տալիս.

1. Ինձ ծանր մեղադրանք է ներկայացված առ այն, որ ես իբր՝ անդամակցելով «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցությանը, քարոզել եմ այսպես կոչված՝ «Մեծ Հայաստանի» անջատումը ռուսական կայսրությունից:

Չխոսելով այն մասին, որ բանականությունը չկորցրած ոչ մի հայ նման խելացնոր միտք չի տածում, կտրականապես հայտարարում եմ, որ դեռևս դպրոցական նստարանից իմ

13 Այստեղ մեկ անգամ ևս հաստատվում է այն փաստը, որ Միհրանը և նրա խումբը, լիժիների հետ համագործակցելով, որպես կանոն, առաջնորդվել են անձնական հաշիվներով և ցարական իշխանությունների առջև հաճոյանալու համար «դաշնակցականների» ցուցակում են ընդգրկել նույնիսկ հակադաշնակցական կեցվածքով հայտնի այնպիսի գործչի, ինչպիսին Հուսիկ Զոհրաբյանն էր:

14 Այս Ֆրենկել կոչված ցարական պաշտոնյան ՀՅԴ Մեծ դատավարության ընթացքում բոլոր ծերբակալվածների վերաբերյալ բացասական վկայություններ է տվել՝ առաջնորդվելով իր հայատյացությամբ: Հուսիկ Զոհրաբյանի պարագայում ևս նա ղեկավարվել է հաշվեհարդարի մոլուցքով: Իրենց մեղադրանքները «հիմնավորելու» համար հենց սրա նմաններին էին օգտագործում լիժիները:

հայացքներով, դաստիարակությամբ ես դրան տրամագծորեն հակառակ ուղղության կողմնակից էի, ուղղակի թշնամաբար էի տրամադրված ցանկացած հեղափոխական ուսմունքի: Որպես իմ խոսքերի հաստատում՝ բացատրեմ, որ դեռ 1890 թ. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ուսանողների խմբի կազմում[15] մեր տեսուչ, այժմ հանգուցյալ Նահապետի [եպիսկոպոսի] ազդեցությամբ, որ բոլորին հայտնի էր իր ծայրահեղ պահպանողական հայացքներով, ընդունել էի կուսակրոնության ուխտ, և գերմանական համալսարաններում բարձրագույն աստվածաբանական կրթություն ստանալուց հետո ինձ նվիրեցի հոգևորականությանը հասանելի խաղաղ մշակութալուսավորական աշխատանքի: Մեր գործունեության առաջին իսկ քայլերից մենք իրեն հայ իրականության մեջ լիբերալ կուսակցություն անվանող, գոյություն ունեցող հայ եկեղեցու և հոգևորականության կարգի դեմ պայքարող հայ մտավորականության և մամուլի մի մասի կողմից հանդիպեցինք մեր նկատմամբ թշնական վերաբերմունքի: Սկզբում այդ նույն կուսակցությունը, ապա 1905 թ. հետո բացահայտ գործող հեղափոխական կուսակցությունները, որոնց թվում և «Դաշնակցություն» կուսակցությունը, մեզ՝ Նահապետ եպիսկոպոսի աշակերտներին և մերձավոր բարեկամներին, ոչ այլ կերպ էին անվանում, քան ռեակցիոներներ և խավարամոլներ, և չէին դադարում հետապնդել՝ մեզ ժողովրդի թշնամիներ և իբր թե՝ իրենց առաջադիմական ձգտումների հակառակորդներ համարելով: Մատնանշեմ մի քանի առավել ակնհայտ փաստեր, որ հավաստում են, թե իմ ու իմ ընկերների՝ մի կողմից և հեղափոխական խմբերի՝ մյուս կողմից, միջև առկա է մի ամբողջ անդունդ, ըստ որի մեր և նրանց գործունեության ու մտածելակերպի միջև ոչ մի ընդհանուր բան չկա:

Ա. Այսպես, 1906 թ. գարնանը հանգուցյալ Մկրտիչ Ա կաթողիկոսը[16] Նահապետ եպիսկոպոսի անունով տված մարտի 25-ի N 375 կոնդակով հրահանգեց վերջինիս նախագահությամբ դպրոցական գործի կարգավորման համար հատուկ ուսումնական հանձնաժողով ձևավորել: Հենց որ դրա մասին հայտնի դարձավ հեղափոխականների շրջանում, անմիջապես հարց բարձրացվեց, թե իբր ոտնահարվում են ժողովրդի իրավունքները, որ Էջմիածնում գործում են ժողովրդական սկզբունքների դեմ, և այլն, և այլն: Եվ ահա, մի քանի օր անց, Նահապետ եպիսկոպոսը ապրիլի 28-ին «Դաշնակցություն» կուսակցության Մրգաստանի 3-րդ կենտրոնական կոմիտեից ստացավ առաջին և վերջին «նախազգուշացումը», ինչի մասին նա ինձ հաղորդեց ստացման օրը: Մեր ընկերների մոտ պահպանվող այդ փաստաթուղթն իմ կողմից ներկայացվել է ս. թ. սեպտեմբերի 19-ին: Այժմ խնդրում եմ այդ փաստաթուղթը համեմատել «Դաշնակցություն» կուսակցության «Ալիք» թերթի 1906 թ. մայիսի 3-ի N 25 համարում գրեթե միաժամանակ հայտնված հոդվածի հետ, որը վերաբերում է հենց նույն դպրոցական հարցին: Եվ կարծում եմ, որ կասկած չկա, որ «Դաշնակցության» կենտրոնական կոմիտեի հիշատակված նամակում Նահապետ եպիսկոպոսի «ոռոշ վանականների», «համախոհների» մեջ նկատի ունեին և ինձ: Այո, նախ և առաջ ինձ՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանա-

15 1889 թ. հունիսի 17-ին Արշակ Նահապետյանը (ապագա եպիսկոպոս), Գևորգ Չորեքչյանը (ապագա Գևորգ Զ. Ամենայն Հայոց կաթողիկոս), Գարեգին Հովսեփյանը (ապագա Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա. կաթողիկոս), Կարապետ Տեր-Մկրտչյանը և Հուսիկ Զոհրաբյանը Ներսես եպիսկոպոս Խուդավերդյանի կողմից սարկավագ են ձեռնադրվել: Մինչ այդ ճեմարանի շրջանավարտները հեռու էին մնում հոգևոր կոչում ստանալուց: Այդ որոշումը ճեմարանում կարճատև ժամանակ դասավանդած Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանի ազդեցության արդյունքն էր:

16 Մկրտիչ Ա. Վանեցի Խրիմյան Հայրիկ (4.04.1820, Վան - 29.10.1907, Էջմիածին) - 1854 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1868 թ.՝ եպիսկոպոս: Եղել է Վարագա վանքի վանահայր, հրատարակել հանրահայտ «Արծուի Վասպուրական» հանդեսը, 1862-1868 թթ.՝ Տարոնի թեմի առաջնորդ և Ս. Կարապետի վանքի վանահայր, 1869-1873 թթ.՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք: Ստեղծել է գավառահայության հարստահարությունները քննող հանձնաժողով: 1878 թ. Բեռլինի վեհաժողովում ղեկավարել է հայկական պատվիրակությունը, 1879-1884 թթ. եղել է Վանի թեմի առաջնորդ և նպաստել «Սև խաչ» (Վան) և «Պաշտպան հայրենյաց» (Կարին) ազատագրական կազմակերպությունների ստեղծմանը: 1890 թ. Գում-Գափուի ցույցից հետո թուրքական իշխանությունների կողմից աքսորվել է Երուսաղեմ: Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1892-1907 թթ.:

պետի: «Ալիք» թերթի նշյալ հոդվածում գրված էր. «Միթե ժողովուրդը, որ հզոր բողոքներով, համարձակ զոհողություններով իր իրավունքների հետևողական պաշտպանությամբ կարողացավ գոլիցինների և պլեվեների դեմ հանդես գալ, այժմ ինչ-որ խավարամոլ Նահապետների և խղճուկ Հուսիկների առջև ընկրկում է: Բնականաբար՝ ոչ: Գազանների հետ պայքարածը չի վախենա մկներից…»:

Բ. Կաթողիկոսի թույլտվությամբ և Սինոդի 1906 թ. հունիսի 2-ի որոշմամբ ես բուժման նպատակով արձակուրդ գնացի: Ինձ կաթողիկոսի դիվանապետի պաշտոնում փոխարինեց Տաճատ վարդապետը: Ես արձակուրդից Էջմիածին վերադարձա նույն թվի օգոստոսի 15-ին և երկու-երեք օր անց կաթողիկոսի պնդմամբ ստանձնեցի իմ պաշտոնը, սակայն մի քանի օր անց ստիպված էի վերջնականապես հեռանալ իմ զբաղեցրած պաշտոնից «Դաշնակցություն» կուսակցության պահանջով, ինչը կարող է ապացուցվել հանգուցյալ կաթողիկոսի զարմիկ Խորեն Խրիմյանի 1906 թ. օգոստոսի 26-ին Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանին[17] գրած նամակի հետևյալ խոսքերով, որը վերջինիս կողմից ինձ հաղորդվել է սեպտեմբերի 8-ի նամակով. «Մենք ուրախացանք հայր Հուսիկի գալով, սակայն դեռ չսկսած իր պաշտոնի կատարումը՝ պատգամավորական համագումարի պատվիրակներից վշտացած, վերջնականապես պաշտոնաթող եղավ: Շնորհիվ պատվիրակների միջամտության՝ առայժմ պաշտոնը շարունակում է Տաճատ վարդապետը»: 1906 թ. օգոստոսի 21-ի պաշտոնաթողության մասին իմ որոշումը, որի վավերացված պատճենը ս. թ. սեպտեմբերի 19-ին ներկայացրել եմ, հետևյալ բովանդակության էր. «Ներկա պայմաններում, հնարավորություն չունենալով շարունակել Ձերդ Սրբազնության դիվանապետի պաշտոնի կատարումը, խնդրում եմ Ձեր համաձայնությունը՝ ազատելու ինձ այդ պաշտոնից»: Երեք օր անց՝ հենց օգոստոսի 24-ին, «Դաշնակցություն» կուսակցության «Զանգ» թերթի N 11-ում հայտնվեց հաղորդում Էջմիածնից՝ թվագրված օգոստոսի 22-ով, որը ես ներկայացրել եմ սեպտեմբերի 19-ին ռուսերեն թարգմանությամբ:

Վերոնշյալ տվյալները, որոնք վերաբերում են կենտրոնական պատգամավորական համագումարի գումարման ժամանակաշրջանին, կարծում եմ, նույնպես կասկածի տեղիք չեն թողնի, որ ես ոչ միայն երբեք «Դաշնակցություն» կուսակցությանը չեմ անդամակցել, այլև մշտապես նրա կողմից հետապնդվել եմ:

Գ. 1906 թ. հոկտեմբերի 29-ին Էջմիածնում տեղի ունեցավ տգեղ միջադեպ: Մի քանի սրիկաների կողմից ղեկավարվող ամբոխը ծանր վիրավորանք հասցրեց վաստակաշատ Սուքիաս արքեպիսկոպոսին: Խաժամուժի վայրի բնազդների պոռթկման մեջ ընդհանուր կարծիքը մեղադրում էր հենց նույն դաշնակցականներին: Զայրացած այդ անվայելուչ քայլից՝ «Մշակ» թերթի նոյեմբերի 5-ի N 243 և նոյեմբերի 7-ի N 244 համարներում «Էլպիս» (իմ Հուսիկ անունի հունական թարգմանությունը – հույս) կեղծանունով երկու հոդված տպագրեցի: Այդ առթիվ ներկայացրել եմ «Մշակ» թերթի խմբագրության 1910 թ. մարտի 1-ի վկայությունն առ այն, որ այդ հոդվածները գրված են իմ կողմից: «Դաշնակցության» նկատմամբ իմ թշնամական վերաբերմունքի գնահատումը թողնում եմ ձեր դատին:

Դ. 1907 թ. հոկտեմբերի վերջին վախճանվեց Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա-ն: Սկսվեց նախընտրական պայքար: Բոլորը հիշում [են], թե ինչպիսի էներգիայով էր «Դաշնակցություն»-ը քարոզում Կ. Պոլսի նախկին պատրիարք Օրմանյանի թեկնածության դեմ, ում աթոռից գահընկեց անելը ուղեկցվել է նշյալ կուսակցության ղեկավարությամբ գործող ամբոխի վայրենի գործողություններով: Ակնհայտ է, որ կուսակցության ոչ մի անդամ չէր համաձայնի ձայն տալ հայերի շրջանում հեղափոխական շարժման այնպիսի ընդգծված հակառակորդի, ինչպիսին Օրման-

17 Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյան (1852, Աշտարակ - 3.11.1910, Թիֆլիս) - հոգևոր գործիչ: 1878 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1901 թ.՝ եպիսկոպոս: 1901-1904 թթ. եղել է Սանահինի վանահայր, 1895-1897 թթ.՝ Ղարաբաղի, 1904-1910 թթ.՝ Վրաստանի և Իմերեթիայի թեմերի առաջնորդ:

յան արքեպիսկոպոսն էր, ով մի քանի անգամ ահաբեկիչների կողմից մահափորձի էր ենթարկվել: 1908 թ. հոկտեմբերի 31-ին Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրության ժամանակ շուրջ 100 ձայներից Օրմանյանն ստացավ ընդամենը 10-ը, իհարկե՝ ոչ «Դաշնակցություն» կուսակցության համակիրներից, և ես նրան ձայն տվողներից մեկն էի (տե՛ս Էջմիածնի Սինոդի 1907 թ. N 126 գործը Մկրտիչ Ա-ի մահվան և նոր կաթողիկոսի ընտրության մասին): Հայոց եկեղեցական-հասարակական կյանքին քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք, ով վերջին տասնամյակում թեկուզ և հպանցիկ հետևել է հայ ժամանակակից մամուլին, կհավաստի, որ հայերի շրջանում անիմաստ է պատկերացնել հեղափոխականորեն տրամադրված մի մարդու, ով կաթողիկոսի գահին ցանկանար տեսնել Օրմանյան արքեպիսկոպոսին: Ընդհակառակը, պահանջվում էր անհրաժեշտ քաղաքացիական խիզախություն, որպեսզի բոլորին լսելի կերպով՝ շնորհազրկված նախկին պատրիարքին անվանի Էջմիածնի գահի արժանի թեկնածու և իր կարծիքը ստորագրի պաշտոնական ընտրական արձանագրության մեջ: Այդպիսին էր հանգուցյալ Նահապետի «համակիրների» խմբի կողմից Օրմանյանի նկատմամբ վերաբերմունքը: Դահին Օրմանյանի բարձրացմանն ուղղված մեր ջանքերի արդյունքն էր, իմիջիայլոց, մեր խնդրանքով մեր ընկեր Գարեգին վարդապետի կազմած գրքույկը, որը հրատարակվել էր 1908 թ. նախընտրական պայքարի շրջանում՝ մեր համատեղ ջանքերով:

Ե. Ավելորդ չեմ համարում հիշատակել և մի փաստի մասին, որն, անկասկած, ապացուցում է, որ ես ոչ մի դեպքում չեմ կարող դասվել «Դաշնակցություն» կուսակցության շարքերը: Դա հաստատվում է ինձ ուղղված Հ. Առաքելյանի 1907 թ. հոկտեմբերի 1-ի նամակով: 1907 թ. Ռուսաստանի Պետական Դումայի՝ Երևանի և Ելիզավետպոլի նահանգներից պատգամավորի ընտրության ժամանակ ես ընտրվեցի Էջմիածնի գավառից պատվիրակ և ընտրություններին մասնակցեցի քաղաք Ելիզավետպոլում: Այդ ընտրությունների բոլոր մասնակիցները կարող են հավաստել, որ ես «Դաշնակցություն» կուսակցության հակառակորդների թվում եմ եղել, և այդ մասին վկայում է Առաքելյանի նշյալ նամակը: Այդ առթիվ հղում անեմ նաև ընտրություններին չմասնակցած անձի, ով կվկայի իմ հիշատակած փաստը: Այդ անձը Ելիզավետպոլի օկրուգային դատարանի նախկին անդամ, այժմ Էջմիածնի Սինոդի դատախազ Փ. Գ. Մելիք-Օհանջանովն է, ով կհաստատի և այն, որ ինձ հայ սահմանադիր-ժողովրդական կուսակցության կողմից Դումայի անդամության թեկնածու էին առաջադրում, որից ես հրաժարվել եմ: Վերջին կուսակցությունը, որը «Դաշնակցության» դեմ բուռն պայքար է մղել, ինձ իր թեկնածու չէր առաջադրի, եթե ես լինեի հեղափոխական կուսակցության կողմնակից: Այդ պայքարի մանրամասները կարող է հաղորդել վերոնշյալ Հ. Առաքելյանը, ում ես խնդրում [եմ] հարցաքննել որպես վկայի:

Զ. Վերջապես, իմ և իմ ընկերների նկատմամբ այդ կուսակցության թշնամական վերաբերմունքի, կուսակցություն, որին պատկանելու մեջ ինձ մեղադրում եք, ապացույց ներկայացնեմ 1909 թ.սեպտեմբերի 4-ի «Հորիզոն» թերթի N 28 համարում Տ. Բ. ստորագրությամբ հեղինակի հաղորդումը՝ Վաղարշապատից և խմբագրության հավելումը, որտեղ ինձ և իմ ընկերներին՝ Նահապետ եպիսկոպոսի «համակիրներին», մեղադրում էին որպես հետադիմականների, ժողովրդական իրավունքները ոտնահարողների:

Այս ամենից զատ որպես վկայի խնդրում եմ հարցաքննել ներքոանվանյալներին, ովքեր կհավաստեն, թե ինձ ինչքան օտար է ցանկացած հեղափոխական հակում, թե ես ինչպես եմ դատապարտել ցանկացած հեղափոխական կուսակցության գործողություններն ու մտածելակերպը: Այդ վկաներն են՝ իմ հոգևոր հայր, բարձրաշնորհ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցը, Նախիջևան-Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը[18], որի նստավայրը Քիշինևում է, իմ ընկերները՝ Ատր-

18 Նկատի ունի Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանին:

պատականի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը[19], Էջմիածնի վանական միաբանության անդամներ Գարեգին և Բենիկ[20] վարդապետները և նախկին վարդապետ, այժմ Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի դասախոս Երվանդ Տեր-Մինասյանցը, Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը, Ալեքսանդրապոլում բնակվող իմ ուսուցիչ և Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասախոս Կարապետ Կոստանյանցը[21], իմ ուսուցիչ և այժմ Էջմիածնի Սինոդի քարտուղար Հովհաննես Հովհաննիսյանը[22], ճեմարանում իմ նախկին գործընկերներ, ճեմարանի դասախոսներ Մանուկ Աբեղյանը և Ստեփան Կանայանցը, բաքվեցի երդվյալ հավատարմատար Գարեգին Ենգիբարովը, Դոնի Նախիջևանում բնակվող երդվյալ հավատարմատար Գեորգի Իվանի Չուբարովը[23], «Մշակ» թերթի խմբագիր Ալեքսանդր Քալանթարը[24] և Համբարձում Առաքելյանը, իմ ընկեր Գևորգ սարկավագ Չորեքչյանը, ով հրաժարվել էր մասնակցել 1906 թ. Էջմիածնի կենտրոնական պատգամավորական ժողովին, Էջմիածնի Սինոդի դատախազ Փարսադան Գերասիմի Մելիք-Օհանջանովը, նույն Սինոդի նախկին հաշվապահ կապիտան Մադաթովը և Էջմիածնի գավառապետ Լ. Լ. Լեմերմանը, ում որպես տեղական ոստիկանության պետի և ինձ արդեն երկար տարիներ ճանաչող անձի՝ պետք է որ լավ հայտնի լինի Էջմիածնում իմ գործունեությունը:

2. Ինձ մեղադրանք է ներկայացված նաև առ այն, որ ես Մկրտիչ Ա կաթողիկոսի դիվանապետ եղած ժամանակ թույլատրել կամ որպես հոգևոր գրաքննիչ դրական կարծիք եմ տվել և դրանով իսկ աջակցել Ե. Թոփչյանի հրատարակած «Լույս» օրացույցի տպագրմանը: Այդ մեղադրանքի առթիվ բացատրեմ, որ ես գրաքննիչ երբեք չեմ եղել, որ հոգևոր բովանդակության բոլոր գրքերը, այդ թվում և օրացույցները, մշտապես՝ ինչպես և այժմ, տպագրության թույլատրվում են անձամբ կաթողիկոսի կողմից: Տվյալ դեպքում Թոփչյանը ո՛չ անձամբ, ո՛չ գրավոր նշյալ օրացույցի տպագրության համար ինձ չի դիմել, այլ նրա հանձնարարությամբ ինձ որպես կաթողիկոսի դիվանապետի (անձնական քարտուղար) փոխանցել է Խորեն վարդապետ Ղազարյանցը: «Լույս» օրացույցը կազմվել և ստորագրվել է նույն վարդապետի կազմած Էջմիածնի պաշտոնական օրացույցի նմանությամբ: Ղազարյանցը խնդրել է այդ աշխատանքը ներկայացնել Նորին Սրբության հաստատմանը: Խորեն վարդապետի այդ խնդրանքը ես կատարեցի, կաթողիկոսին ներկայացրի Խորեն վարդապետի ձեռքով գրված տետրակը, որը պարունակում էր բացառապես եկեղեցական-օրացուցային տվյալներ: Այդ օրացույցի մյուս բաժինների մասին ինձ ոչինչ հայտնի չէ, քանի որ դա արդեն աշխարհիկ գրաքննության գործն է: Որպես հաստատում իմ ներկա դիմումի՝ հղում եմ վկաներ Ղևոնդ եպիսկոպոս Հովակիմյանին, Խորեն վարդապետ Ղազարյանցին և Սինոդի գործավար Բարսեղ Ղարիբյանին, որոնց և խնդրում եմ հարցաքննել:

Եզրափակելով՝ չեմ կարող Ձեր ուշադրությունը չհրավիրել, իմ կարծիքով, մի շատ կարևոր հանգամանքի վրա: Սույն թվականի սեպտեմբերի 15-ին, հարցաքննության ժամանակ, Ձեր կողմից հայտարարվեց, որ ես մեղադրվում եմ «Դաշնակցություն» կուսակցությանն անդամակցելու մեջ Էջմիածնի Սինոդի նախկին դատախազ Ֆրենկելի և ինձ բացարձակապես անհայտ ինչ-որ անձանց՝ Քեշիշյանի և Վարդերեսյանի ցուցմունքների հիման վրա: Վերջիններիս ես չգիտեմ, երբեք նրանց չեմ հանդիպել, առաջին անգամ եմ լսում նրանց անունները և չեմ կարողանում հասկանալ, թե

19 Նկատի ունի Կարապետ Տեր-Մկրտչյանին:
20 Նկատի ունի Գարեգին Հովսեփյանին և Բենիկ Եղիազարյանին:
21 Կոստանյան Կարապետ Հովսեփի (14.01.1849, Գյումրի - 1.01.1920, Մոսկվա) - հայտնի բանասեր, մանկավարժ:
22 Հովհաննիսյան Հովհաննես Մկրտչի (14.04.1864, Վաղարշապատ - 29.09.1929, Երևան) - հայտնի բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ:
23 Չուբարյան Գևորգ Հովհաննեսի (1.11.1864, Նոր Նախիջևան - 29.09.1930, Դոնի Ռոստով) - իրավաբան, գրող, թատերական գործիչ:
24 Քալանթար Ալեքսանդր Հայրապետի (20.09.1855, Վերին Ագուլիս, Նախիջևան - 20.10.1913, Թիֆլիս) - հասարակական գործիչ, խմբագիր, գրող:

ինչով են պայմանավորված նրանց ցուցմունքները, որոնք ես այլ կերպ չեմ կարող անվանել, քան կեղծ և զրպարտանք: Ինչ վերաբերում է Ֆրենկելի ցուցմունքին, ապա ես պետք է ասեմ, որ այն վրդովում է մինչև հոգուս խորքը՝ որպես կարգին մարդուն ոչ հարիր չարության և վրեժի արտահայտություն: Ըստ երևույթին, Ֆրենկելը մերկապարանոց զրպարտությամբ որոշել է ինձ վրա՝ որպես Էջմիածնի հայ-գրիգորյան Սինոդի անդամի, ուղղորդել իր չարությունը, որովհետև Սինոդի կողմից նրան Էջմիածնի վանքի տանը բնակարանի վարձակալական գումարի վճարման պահանջ է ներկայացվել: Այդ բնակարանը նա զբաղեցրել է 1904 թ. վերջից մինչև 1907 թ. օգոստոսը՝ տարեկան 200 ռուբլի վարձով, իսկ այդ ողջ ընթացքում վճարել է ընդամենը 3 ռուբլի 50 կոպեկ: Այդ պարտքի մասին ես հիշեցրել եմ դեռևս Սինոդի անդամ եղած ժամանակ: Որ Սինոդի նախկին դատախազին այնքան էլ հաճելի չէ դրա մասին հիշեցումը, երևում է նրանից, որ Էջմիածնի վանական վարչության նախկին նախագահ Ղևոնդ եպիսկոպոսին [Հովակիմյան] Ֆրենկելը սպառնացել է աքսորել տալ Արխանգելսկ, եթե նա պնդի բնակարանի վարձակալական գումարը վճարել: Խնդրում եմ այդ առթիվ հարցաքննել Ղևոնդ եպիսկոպոսին: Նշյալ պարտքի գանձման համար Ֆրենկելին Սինոդի հավատարմատարի միջոցով արդեն հայց է ներկայացվել: Ֆրենկելի բարոյական բնութագրի համար հետաքրքիր կլինի նաև իմանալ, թե ինչքան չվճարված պարտքեր է թողել իրենից հետո Էջմիածնում: 1906 թ. օգոստոսից նա պարտք է Վաղարշապատ գյուղի բնակիչ Թևանոս Մուշեղյանին 530 ռուբլի, որը նա մինչև այժմ չի վճարել: Ֆրենկելը չի վճարել Ներսես Զաքարյանին 470 ռուբլի պարտքը, 1907-ից Սուքիաս արքեպիսկոպոսին պարտք է 100 ռուբլի:

Ներկա ցուցմունքում նշված փաստաթղթերը իմ կողմից ներկայացվել են ս. թ. սեպտեմբերի 19-ին: Իմ ցուցմունքներին որևէ բան հավելելու չունեմ: «Լույս»-ի հրատարակման առթիվ պատասխանատվության է ենթարկվել Երեմիա վարդապետ Ստեփանյանցը:

Ցուցմունքը գրված է իմ ձեռքով:
Էջմիածնի հայ-գրիգորյան Սինոդի
անդամ Հուսիկ վարդապետ Զոհրաբյան:
Քննիչ Սիդավա:
Դատախազի տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4336-4340:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 10
ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. նոյեմբերի 25: Գյուղ Վաղարշապատ:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Գարեգին վարդապետ Հովսեփյան[25], բնակվում եմ Էջմիածնում, 42 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

Հուսիկ վարդապետ Զոհրաբյանին ես վաղուց եմ ճանաչում: Մենք միասին ուսանել ենք Էջմիածնի ճեմարանում և միասին ընդունվել

25 Հովսեփյան Գարեգին Կարապետի (17.12.1867, գ. Մարաղա, ԼՂՀ - 21.06.1952, Անթիլիաս) - Սարդարապատի ճակատամարտի հերոս, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, անվանի հայագետ:

Էջմիածնի վանքի միաբանություն: Մեր համատեղ գործունեությունը շարունակվում է մինչև ներկա պահը, դրա համար էլ ես վճռականապես ու մաքուր խղճով կարող եմ հաստատել, որ Զոհրաբյանը ոչ միայն «Դաշնակցություն» կուսակցությանը չի անդամակցել, այլև եղել է նրա հակառակորդը, ինչն ապացուցվում է հետևյալով. Էջմիածնի ճեմարանի մի քանի շրջանավարտներ, հետագայում վարդապետներ, որոնց թվում և ես ու Զոհրաբյանը, սովորել և գործել ենք Նահապետ եպիսկոպոսի ղեկավարությամբ, ում կողմնակիցներն էինք: Նահապետի հայացքները և ուղղությունը՝ որպես դաշնակցականների հակառակորդի, բոլորին հայտնի էին: Դրանից զատ, Նահապետը «Դաշնակցություն» կուսակցությունից ստացել է սպառնալիքով նամակ, ընդ որում սպառնալիքը հասցեագրված էր նաև Նահապետի կողմնակիցներից ինձ և Զոհրաբյանին: Հետո 1908 թ. կաթողիկոսի ընտրություններից առաջ Թիֆլիսում տեղի ունեցավ մասնավոր խորհրդակցություն, որտեղ ես և Զոհրաբյանը գործում էինք համատեղ: Խորհրդակցության ժամանակ ես զեկուցում կարդացի ի պաշտպանություն Օրմանյան պատրիարքի թեկնածության, իսկ վերջինս, ինչպես հայտնի է, դաշնակցականների ընդգծված հակառակորդն է: Էջմիածնում կաթողիկոսի ընտրությունների ժամանակ Զոհրաբյանը՝ որպես պաշտոնական պատվիրակ, ձայն տվեց Օրմանյանին: Օրմանյանի և կաթողիկոսի ընտրության մասին ի պաշտպանություն Օրմանյանի ես գրքույկ[26] հրատարակեցի, ընդ որում նշյալ գրքույկում առկա էր բոլոր հեղափոխական կուսակցությունների, այդ թվում և «Դաշնակցություն» կուսակցության քննադատությունը: Թեպետ գրքույկում նույն Զոհրաբյանը չի հիշատակվում, սակայն այն հրատարակվել է Զոհրաբյանի հետ համատեղ: 1907 թ. Պետական Դումայի ընտրությունների ժամանակ Զոհրաբյանը գործել է «Դաշնակցության» դեմ: Դեռ ընտրություններից առաջ Զոհրաբյանը «Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանից նամակ էր ստացել, որտեղ նրան առաջարկվում էր «Դաշնակցություն» կուսակցության դեմ համատեղ գործել: Հայտնի է, որ «Մշակը» «Դաշնակցության» հակառակորդն է, իսկ Զոհրաբյանը «Էլպիս» կեղծանունով աշխատակցել է «Մշակ»-ին՝ գրելով հակադաշնակցական հոդվածներ: Վերջապես, 1906 թ. Զոհրաբյանը ստիպված էր թողնել կաթողիկոսի դիվանապետի պաշտոնը՝ որպես «Դաշնակցություն» կուսակցությանը ոչ ձեռնտու անձ: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Գարեգին վարդապետ:

Դատական Քննիչ Սիդավա:

Դատախազի Տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4335-4336:

Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 11

ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. նոյեմբերի 25: Քաղաք Երևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 442-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալներին, և նրանք ցուցմունք տվեցին.

Ստեփան Մկրտչի Կանայանց[27], Էջմիածնի ճեմարանի դասախոս, 50 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակիցներին օտար եմ:

Հուսիկ վարդապետ Զոհրաբյանին ես վաղուց եմ ճանաչում: Ընդ որում, ես կարող եմ համոզված հայտարարել, որ Զոհրաբյանը ոչ միայն «Դաշնակցություն» կուսակցությանը չի անդամակցել, այլև այդ կուսակցության հակառակորդն էր: Դա երևում է հետևյալից. 1905 թ. հայկական եկեղեցական գույքը վերադարձնելուց հետո տարբեր դպրոցական հարցերի կարգավորման համար հանձնաժողովի ստեղծման նպատակով կաթողիկոսը կոնդակ հրապարակեց: Այդ հանձնաժողովը բաղկա-

26 Տե՛ս Յովսէփեան Վարդ. Գարեգին, Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան եւ կաթողիկոսական ընտրութիւն, Թիֆլիս, 1908: Բ. տպագր., Հրատ. Սրբ. Օրմանեանին համակրող Նոր-նախիջեւանցիների, Թիֆլիս, 1911:

27 Կանայան Ստեփան Մկրտչի (25.12.1860, Իգդիր - 8.10.1937, Երևան) – հայտնի մանկավարժ, բանասեր:

ցած էր ճեմարանի ուսուցիչներից, որոնց թվում էր և Զոհրաբյան վարդապետը: Այդ հանձնաժողովը «Դաշնակցություն» կուսակցության կողմից բոյկոտվեց, և այդ կուսակցության պնդմամբ 1906 թ. հրավիրվեց պատգամավորական համագումար, որը փակվեց կառավարության կողմից: Այդ համագումարի պատգամավորների մեծամասնությունը կազմված էր դաշնակցականներից, ինչը բոլորին հայտնի էր: Համագումարի ընթացքում կաթողիկոսի դիվանապետը Զոհրաբյանն էր, սակայն նա, որպես «Դաշնակցության» հակառակորդ, համագումարի պնդմամբ հեռացվեց, իսկ նրա փոխարեն նշանակվեց դաշնակցականների դրածո Տաճատ վարդապետը: Դրանից զատ, Զոհրաբյանը 1908 թ. կաթողիկոսի ընտրության ժամանակ պաշտպանել էր Օրմանյանի թեկնածությունը, որի դեմ քարոզել էր «Դաշնակցություն»-ը: Զոհրաբյանը «Էլպիս» կեղծանունով աշխատակցում էր «Մշակ» թերթին, որը դաշնակցականների հակառակորդն էր, իսկ «Դաշնակցության» օրգան «Ալիք» թերթը բազմիցս հարձակվել է Զոհրաբյանի վրա: Նրա գործունեությունը 1907 թ. Պետական Դումայի ընտրությունների ժամանակ ընթացել է Ելիզավետպոլում: Անձամբ ես այդ գործերի մասին ոչինչ չգիտեմ, բայց ինքը՝ Զոհրաբյանն ասել է, որ գործել է դաշնակցականների դեմ: Ընդհանրապես, Զոհրաբյանը պահպանողական ուղղության մարդ է և մշտապես դեմ է եղել հեղափոխական շարժումներին: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Ստեփան Կանայանց:

Դատական Քննիչ Սիդավա:

Դատախազի տեղակալ (ստորագրություն):

* * *

Մանուկ Խաչատուրի Աբեղյան[28], Էջմիածնի ճեմարանի դասախոս, 45 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակիցներին օտար եմ:

Հուսիկ վարդապետին ես ճանաչում եմ շուրջ 15 տարի: Ես նրա հետ հաճախ հանդիպել և զրուցել եմ, ընդ որում Զոհրաբյանը միշտ հեղափոխական շարժումների, այդ թվում և «Դաշնակցություն» կուսակցության դեմ է եղել: Դա երևում է հետևյալից. 1908 թ. կաթողիկոսի ընտրությունների ժամանակ նա պաշտպանել է «Դաշնակցության» հակառակորդ Օրմանյանի թեկնածությունը, ինչը բոլորին հայտնի է: 1905 թ. հայերին եկեղեցական գույքը վերադարձնելուց հետո կաթողիկոսի կոնդակով դպրոցական գործի կարգավորման համար խորհուրդ նշանակվեց: Այդ խորհրդի անդամներն էին ճեմարանի դասախոսները, ինչպես նաև Հուսիկ վարդապետը և Նահապետը [եպիսկոպոս]: Այդ խորհրդին «Դաշնակցություն» կուսակցությունը բոյկոտ հայտարարեց: Դրա համար էլ 1906 թ. գումարվեց պատգամավորական համագումար, որը հետագայում փակվեց կառավարության կողմից: Այդ ժամանակ կաթողիկոսի դիվանապետը Զոհրաբյանն էր, ով համագումարի ժամանակ պետք է թողներ իր պաշտոնը, քանի որ նա դաշնակցականների սրտովը չէր: Դրանից զատ, Զոհրաբյանն իր խոսքերով՝ «Մշակ» թերթի աշխատակիցն է եղել, իսկ այդ թերթը «Դաշնակցության» հակառակորդն է: Ես լսել եմ, որ 1907 թ. Պետական Դումայի ընտրությունների ժամանակ Զոհրաբյանը գործել է «Դաշնակցության» դեմ: Մինչև ընտրությունները Զոհրաբյանը «Մշակ» թերթի հրատարակիչ Համբարձում Առաքելյանից նամակ էր ստացել, որտեղ նա Զոհրաբյանին առաջարկում էր ընտրություններում դաշնակցականների դեմ համատեղ գործել: Առաքելյանի նամակը ես ինքս եմ կարդացել: Ընդհանրապես պետք է ասեմ, որ Զոհրաբյանը չափավոր պահպանողական է, ինչն ինձ հայտնի է նրա հետ երկարատև ծանոթությունից: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Մանուկ Աբեղյան:

Դատական Քննիչ Սիդավա:

Դատախազի տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4340-4341:

Թարգմանություն ռուսերենից:

28 Աբեղյան Մանուկ Խաչատուրի (5.03.1865, գ. Աստապատ, Նախիջևան - 25.09.1944, Երևան) – նշանավոր հայագետ, մանկավարժ:

ԹԻՎ 12

ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. նոյեմբերի 29: Գյուղ Վաղարշապատ:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Ղևոնդ եպիսկոպոս Հովակիմյան[29], բնակվում եմ Էջմիածնում, 58 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակիցներին օտար եմ:

Էջմիածնի Սինոդի նախկին դատախազ Ֆրենկելի հետ ես ոչ մի առանձնահատուկ հարաբերություններ չեմ ունեցել, այլ ծանոթ էի որպես Սինոդի դատախազի: Էջմիածնում Ֆրենկելը զբաղեցնում էր բնակարան վանքի տանը, սակայն երկու տարվա ընթացքում նա բնակվարձը չի վճարել: Սինոդի հրահանգով, որպես վանական վարչության նախագահ, Ֆրենկելից պահանջեցի գումարը, բայց նա չմուծեց: 1906 թ. կաթողիկոսի նախկին դիվանապետ Կորյուն վարդապետը[30] ասել է ինձ, որ Ֆրենկելն ինձ սպառնացել է աքսորել Արխանգելսկ: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Կաթողիկոսի դիվանապետի վրա հոգևոր գրաքննիչի պարտականություն երբեք չի դրվել, քանի որ հոգևոր բովանդակության գրքերի տպագրությունը թույլատրվում էր և թույլատրվում է բացառապես Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից՝ անձամբ: Կաթողիկոսի դիվանապետը միայն զեկուցող է, սակայն տպագրման ենթակա ստեղծագործությունների վերաբերյալ եզրակացություններ և կարծիքներ հազիվ թե վարիչն է տալիս: Կաթողիկոսի թույլտվությունը պահանջվում է հոգևոր բովանդակության գրքերի, ինչպես նաև օրացույցների եկեղեցական-ժամանակագրական մասերի առնչությամբ: 1906 թ. ես առաջարկեցի Խորեն վարդապետ Ղազարյանցին արագացնել Էջմիածնի օրացույցի կազմումը: Ղազարյանցն ինձ պատասխանեց, որ ինքը Թոփչյանի հանձնարարությամբ կազմում է «Լույս» օրացույցը և այն ավարտելուց հետո կձեռնարկի Էջմիածնի օրացույցի կազմմանը: Ղազարյանցը կազմել է «Լույս» օրացույցի միայն եկեղեցական մասը, և դա է ներկայացվել կաթողիկոսի դիվանին, որի վարիչն այն ժամանակ Զոհրաբյան վարդապետն էր: Ես չգիտեմ, թե նա «Լույս» օրացույցի վերաբերյալ կարծիք տվել է, թե ոչ: Նաև ինձ հայտնի չէ, թե այդ հարցով Թոփչյանը Զոհրաբյանին դիմել է, թե ոչ: Հուսիկ վարդապետ Զոհրաբյանին ես լավ եմ ճանաչում և կարող եմ հաստատել, որ նա չի պատկանել ոչ մի հեղափոխական կուսակցության, իսկ «Դաշնակցություն» կուսակցությանը նա վերաբերվել է թշնամաբար՝ որպես պահպանողական հայացքների տեր մարդ: Զոհրաբյանը՝ որպես Նահապետ եպիսկոպոսի հետևորդ, հետապնդվում էր դաշնակցականների կողմից: Վերջիններս Նահապետին անվանում էին Գոլիցին, իսկ Նահապետի հետևորդներին՝ Գոլիցինի ճտեր: Զոհրաբյանը կաթողիկոսի դիվանապետի պաշտոնից հեռացվեց բացառապես «Դաշնակցություն» կուսակցության պահանջով: 1908 թ. կաթողիկոսի ընտրությունների ժամանակ Զոհրաբյանը ձայնը տվեց դաշնակցականների թշնամի Օրմանյան պատրիարքի օգտին: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Ղևոնդ եպիսկոպոս:

Դատական Քննիչ Սիդավա:

Դատախազի տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4348-4349:

Թարգմանություն ռուսերենից:

29 Հովակիմյան Ղևոնդ եպիսկոպոս (1852, Վաղարշապատ - 14.09.1915, Էջմիածին): 1878 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1901 թ.՝ եպիսկոպոս: 1901-1915 թթ. եղել է Մայր Աթոռի լուսարարապետ:

30 Կորյուն վարդապետ Սահակյանը 1905-1906 թթ. կարևոր դեր է կատարել Գանձակի գավառի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում, լիժինյան գործով մինչև 1917 թ. մայիս դատապարտվել է աքսորի Իրկուտսկի մարզ:՝

ԹԻՎ 13

ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. հոկտեմբերի 21: Դոնի Ռոստով:

Դոնի Ռոստովի օկրուգի 1-ին տեղամասի Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 712-րդ հոդվածի պահպանմամբ հարցաքննեց ներքոնավանյալին, և նա ցուցմունք տվեց.

Գևորգ Չորեքչյան, 42 տարեկան, հայ-գրիգորյան, սարկավագ, բնակվում եմ Դոնի Ռոստովում, չեմ դատվել:

Պողոս Խաչատուրի Չուբարյանին ճանաչել եմ այն օրից, երբ նա սարկավագ եղած ժամանակ հասունության վկայականի քննությանը պատրաստվելու համար եկել էր Դոնի Նախիջևան քաղաք, ապա մեկնել Ս. Պետերբուրգ: Մինչև 1906 թ. ես նրա հետ չեմ հանդիպել: Նույն տարվա ամռանը Պետերբուրգի եկեղեցուց Էջմիածնի համագումարի պատվիրակ էր: Արդյո՞ք Չուբարյանը անդամակցել է «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցությանը և Էջմիածնում 1906 թ. հոկտեմբերի 29-ին զառամյալ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցի անպատվելուն՝ չգիտեմ: Դոնի Նախիջևան քաղաքում Չուբարյանը եղել է պատգամավորների պատվիրակ: Նման պատվիրակների թվում էի նաև ես: Նմաններից հիշատակեմ որոշ անձանց, օրինակ՝ երդվյալ հավատարմատար Գրիգոր Քրիստափորի Չալխուշյան[31], Դոնի Ռոստովում բանկի տնօրեն Դավիթ Եգորի Խոջաև, հայկական հոգևոր ճեմարանի տեսուչ Երվանդ Ակիմի Շահ-Ազիզ: Այլոց չեմ կարող հիշել: Թե ում օգտին է քվեարկել Չուբարյանը՝ չգիտեմ, քանի որ քվեարկությունը գաղտնի էր: Պատգամավորների վերաբերյալ երկու հոսանք կար. մեկը պահանջում էր տեղական որևէ բնակչի ընտրություն, մյուսը պնդում էր, որ կարող է ընտրվել յուրաքանչյուր ոք, անկախ իր ծննդավայրից: Առաջին հոսանքին պատկանում էի ես, ինչպես նաև, ինչքան կարելի է դատել նրա խոսքերից, Չուբարյանը: Թե ինչու է պատգամավոր ընտրվել Մինաս Բերբերովը՝ չեմ կարող ասել: Թե որ կուսակցությանն է պատկանել Չուբարյանը՝ չգիտեմ, սակայն ինչքան կարելի է դատել մտքերի փոխանակության ժամանակ արտահայտված նրա հայացքներից, նա դեմ էր «Դաշնակցություն» կուսակցությանը, ինչի շնորհիվ և դարձավ պատգամավոր: Քանի որ ես սկզբում չէի ցանկանում մասնակցել Էջմիածնի համագումարին, ապա չէի ուզում առաջադրել իմ թեկնածությունը, ինչի մասին բոլորին ամենուր հայտարարում էի: Երբ նկատելի դարձավ, որ պատգամավորների մեջ հայտնվել են ոչ ցանկալի անձինք, ապա ես համախոհների խնդրանքով և նկատի առնելով իմ եկեղեցու շահը, որոշեցի առաջադրվել և պատգամավոր ընտրվեցի: Ես երբեք «Նոր կյանք» թերթի աշխատակից չեմ եղել և դրա համար էլ չեմ կարող ասել, թե ով է եղել դրա հրատարակիչը, խմբագիրը և այլն: Սկզբում թերթը կարդալով՝ ես այն համարում էի անկուսակցական, սակայն հետո նրա ուղղվածությունը սկսեց փոփոխվել, այն կարծես թե սկսեց համակրել «Դաշնակցություն» կուսակցությանը, բայց կրկին չեմ կարող ասել, թե ով է եղել դրա հրատարակիչը, խմբագիրը և այլն, ինչպես նաև՝ երբվանից սկսեցի նկատել թերթի ուղղության փոփոխությունը: Արդյոք «Նոր կյանք» թերթը «Դաշնակցություն» կուսակցության Նալբանդի կենտրոնական կոմիտեի հրատարակությունն էր և գոյություն ունի՞ նման կոմիտե՝ չգիտեմ: Թե Չուբարյանը եղե՞լ է այդ թերթի աշխատակից և երբ՝ չգիտեմ:

Գևորգ սարկավագ Չեորեքչյան:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թ. 4249: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 14

ՎԿԱՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. հոկտեմբերի 30: Սբ. Էջմիածին:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Միղավան Քրեական

31 Չալխուշյան Գրիգոր Խաչերեսի (1.07.1861, Նոր-Նախիջևան - 12.1939, Դոնի Ռոստով) - հասարակական-մշակութային գործիչ:

դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ հարցաքննեց ներքոանվանյալներին, և նրանք ցուցմունք տվեցին.

Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան[32], Էջմիածին գյուղի բնակիչ, 44 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

Էջմիածնի վանքի նախկին սարկավագ Պողոս Չուբարյանին հանդիպել եմ Էջմիածնում որպես 1906 թ. տեղի ունեցած պատգամավորական համագումարի անդամ, սակայն Չուբարյանի հետ մերձավոր ծանոթություն չեմ ունեցել: Իսկապես, ես լսել եմ, որ Կարապետ վարդապետի[33] և Չուբարյանի հարաբերությունները լարված էին, և դրա պատճառով իբր Չուբարյանը զրկվել է կրթաթոշակից, սակայն այդ հարաբերությունների մանրամասներն ինձ հայտնի չեն: 1906 թ. հոկտեմբերին ես Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի Տաթևի վանքում էի: Այդ պատճառով չեմ կարող բացատրել այն հանգամանքները, որ պայմանավորել են ամբոխի կողմից Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանին անպատվելուն: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Մելիք-Թանգյան վարդապետ:

* * *

Բարդուղիմեոս եպիսկոպոս Գևորգյան, բնակվում եմ Էջմիածնում, 63 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

Էջմիածնի վանքի նախկին սարկավագ Պողոս Չուբարյանին ճանաչում եմ, քանի որ նա եղել է Էջմիածնի ճեմարանի շրջանավարտ, և որպես սարկավագ՝ վանական միաբանության անդամ: Կարապետ վարդապետը եղել է ճեմարանի դասախոս, իսկ Չուբարյանը՝ դրա շրջանավարտ, սակայն թե ինչպիսի հարաբերություններ են եղել նրանց միջև՝ ինձ հայտնի չէ: Հավասարապես ինձ հայտնի չէ, թե Չուբարյանը ստացել է կրթաթոշակ կամ զրկվել է արդյոք դրանից: Թե ինչպիսի հանգամանքներում է 1906 թ. հոկտեմբերի 29-ին տեղի ունեցել ամբոխի կողմից Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցի անպատվումը՝ չեմ կարող ասել, քանի որ այդ դեպքի ականատեսը չեմ եղել: Ով է եղել ամբոխի ղեկավարը՝ չգիտեմ: Այդ դեպքին Չուբարյանի, Լևոն Մուշեղյանի և Համազասպ Նորհատյանի որևէ մասնակցության մասին ինձ ոչինչ հայտնի չէ: Այդ դեպքը բխել է «Դաշնակցություն» կուսակցությունից թե ոչ՝ չեմ կարող բացատրել: Ինչն է Պարզյանցին անպատվելու առիթ ծառայել՝ անձամբ չգիտեմ, սակայն ըստ զրույցների՝ ինձ հայտնի է հետևյալը. դեպքից որոշ ժամանակ առաջ հանգուցյալ կաթողիկոսը[34] կոնդակ էր հրատարակել, ըստ որի Էջմիածնի վանքի բոլոր պաշտոնական անձինք պետք է նշանակվեին կաթողիկոսին առընթեր հատուկ խորհրդի գիտությամբ, որի անդամները պետք է ընտրվեին վանական միաբանության կողմից: Կոնդակի հրապարակումից մի քանի օր անց լուր տարածվեց, որ կաթողիկոսն առանց նշյալ խորհրդի գիտության Սինոդի անդամների պաշտոնի հաստատման համար ներկայացրել է Մեսրոպ, Մխիթար և Եղիշե վարդապետների թեկնածությունները: Քանի որ այդ ներկայա-

32 Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան (16.03.1866, Բռնակոթ - 26.09.1948, Թավրիզ) – անվանի հոգևոր-ազգային գործիչ, հայագետ: 1901 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1914 թ.՝ եպիսկոպոս: 1901-1905 թթ.՝ Տաթևի վանքի վանահայր, 1912-1948 թթ.՝ Ատրպատականի թեմի առաջնորդ:

33 Նկատի ունի Կարապետ Տեր-Մկրտչյանին:

34 Նկատի ունի Մկրտիչ Ա. Խրիմյանին:

ցումը հակասում էր հրապարակված կոնդակին, ապա վանական միաբանության դժգոհ անդամները, որոնց ղեկավարն էր Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցը, ներկայացան կաթողիկոսին և հայտնեցին իրենց դժգոհությունը: Դա պատճառ եղավ, որ կաթողիկոսը փոստից հետ վերցրեց նշյալ վարդապետների մասին ներկայացման փաթեթը: Ահա և խոսում էին, որ կաթողիկոսի կարգադրությանը Պարզյանցի միջամտությունը հենց նրան անպատվելու պատճառ հանդիսացավ: Թե ինչ հեղափոխական կուսակցությունների էին պատկանում Մեսրոպ և Մխիթար վարդապետները՝ չգիտեմ, սակայն Եղիշե վարդապետը հնչակյան էր և «Դաշնակցություն» կուսակցությունը չէր սիրում նրան: Հանգուցյալ կաթողիկոսն իր կամքին հակառակ է հետ վերցրել վերոնշյալ ներկայացումը, ինչի ապացույց կարող է ծառայել այն, որ այդ ներկայացումը կրկին ուղարկվել է: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է: Հավելեմ՝ կաթողիկոսը հետ է վերցրել ներկայացման փաթեթը ոչ թե իր կամքին հակառակ, այլ զիջելով Պարզյանցի գլխավորած վանական միաբանության դժգոհ եղբայրների խնդրանքներին:

Վկան ցանկություն հայտնեց իր ցուցմունքը կցել հայերեն լեզվով՝ ռուսերենի չիմացության պատճառով:

Բարդուղիմեոս եպիսկոպոս:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

* * *

Բաբկեն վարդապետ Հարությունի Աղավելյան[35], բնակվում եմ Էջմիածնում, 41 տարեկան, չեմ դատվել, գործում մասնակից անձանց օտար եմ:

Նախկին վարդապետ Պողոս Չուբարյանին ճանաչում եմ, քանզի մենք միաժամանակ ենք ուսանել Էջմիածնի ճեմարանում: Չուբարյանը ճեմարանի տեսուչի նախկին օգնական Կարապետ վարդապետի հետ թշնամական հարաբերությունների մեջ չէր և, ինչքան ինձ

հայտնի է, Չուբարյանը կրթաթոշակից չի զրկվել: Թե ինչպիսի հանգամանքներում է տեղի ունեցել Սուքիաս Պարզյանցի անպատվելը՝ չգիտեմ, քանի որ այդ դեպքի ականատեսը չեմ եղել: Ըստ զրույցների՝ դեպքի պատճառն այն էր, որ տարածվել էր լուր այն մասին, որ Պարզյանցը խառնվել է կաթողիկոսի կարգադրությանը, ով իբր թե Պարզյանցի պնդմամբ հետ է վերցրել Մեսրոպ, Մխիթար և Եղիշե վարդապետներին Սինոդի անդամ նշանակելու մասին ներկայացումը: Ով է ղեկավարել Պարզյանցին անպատվող ամբոխին՝ ինձ հայտնի չէ: Այդ գործում Չուբարյանի, Լևոն Մուշեղյանի և Համազասպ Նորհատյանի մասնակցության մասին ինձ ոչինչ հայտնի չէ, սակայն համենայն դեպս Մուշեղյանը մասնակցել է այդ գործին, քանի որ նա դեմ է եղել ամեն տեսակ բռնության, ինչպես ինձ հայտնի է հենց Մուշեղյանի խոսքերից: Արդյոք Պարզյանցին անպատվելը բխել է «Դաշնակցություն» կուսակցությունից թե ոչ՝ չգիտեմ: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող: Չուբարյանը, որքան ինձ հայտնի է, հեղափոխական կուսակցություններին չի անդամակցել, քանի որ նա խաղաղ կյանք է վարել:

Ընթերցված է:

Բաբկեն վարդապետ Աղավելյան:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

35 Բաբկեն վարդապետ Աղավելյան (10.10.1869, Շուշի - 3.01.1916, Վաղարշապատ) - հոգևոր գործիչ, խմբագիր, հրապարակախոս, հայագետ: 1895 թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը, 1898 թ. ձեռնադրվել է վարդապետ: Եղել է «Արարատ»-ի խմբագիր, Մայր Աթոռի Որբանոցի պատասխանատու, մահացել է տիֆից: Գրել է հոդվածներ արևմտահայ գաղթականների վիճակի բարելավման, Հայկական հարցի հայանպաստ կարգավորման վերաբերյալ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4269-4271:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 15

ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. հունվարի 25: Քաղաք Երևան:

Երևանի օկրուգային դատարանի Դատական Քննիչ Սիդավան Քրեական դատավարության կանոնադրության 714-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ որպես վկայի հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Երվանդ վարդապետ Տեր-Մինասյան[36], ապրում եմ Էջմիածնում, 30 տարեկան, հայ-գրիգորյան, չեմ դատվել, գործին մասնակից անձանց օտար եմ:

Էջմիածնի հոգևոր ճեմարանի նախկին տեսուչ Մինաս Բերբերովին[37] ճանաչում եմ նրա Էջմիածին գալու ժամանակվանից, այսինքն՝ 1907 թ. օգոստոսից մինչև նրա ձերբակալումը: Որպես Էջմիածնի վանքի վարդապետ և նշյալ ճեմարանի դասախոս՝ հաճախ եմ հանդիպել Բերբերովին, նրա հետ մշտական շփում ունեցել և դրա համար կարող եմ հաստատապես հայտարարել, որ Բերբերովը Էջմիածնում գտնվելու ժամանակ «Դաշնակցություն» կուսակցությանը չի անդամակցել: Բերբերովն ընդհանրապես հեղափոխական կուսակցությունների հակառակորդ էր, ինչը հաստատվում է նրանով, որ նա մինչև Էջմիածին գալը «Նոր դար»[38] պահպանողական թերթի խմբագիր էր: Դրանից բացի, Բերբերովը 1908 թ. հոկտեմբերին Էջմիածնում կաթողիկոսի ընտրության ժամանակ հեղափոխական կուսակցությունների հայտնի հակառակորդ Օրմանյան պատրիարքի[39] թեկնածության կողմնակից էր: Բերբերովի քաղաքական հայացքները և համոզմունքները ինձ հայտնի են նրա հետ զրույցից, առանց որի հնարավոր չէ երկու տարվա ընթացքում միասին ապրել: Բերբերովն այժմ ապրում է Բաքվում: Դոնի Նախիջևանում և Դոնի Ռոստովում Բերբերովի գործունեության մասին ոչինչ չգիտեմ, քանի որ մինչև նրա Էջմիածին գալը նրան չէի ճանաչում: Ավելին ցուցմունք տալ չեմ կարող:

Ընթերցված է:

Բնագիրը համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 3, թ. 1625: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 16

ՎԿԱՅԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1910 թ. հունիսի 4: Քաղաք Հին Ղրիմ: Թեոդոսիայի գավառի 2-րդ փեղամասի Դատական Քննիչը Քրեական դատավարության կանոնադրության 712-րդ և 1037-րդ հոդվածների պահպանմամբ որպես վկայի հարցաքննեց ներքոանվանյալին, և նա ցուցմունք տվեց.

Իսահակ վարդապետ Տեր-Միքայելյան[40], 42 տարեկան, հայ-գրիգորյան հավատքի, Հին Ղրիմ քաղաքին մերձակա Սբ. Խաչ վանքի վանահայր:

36 Տեր-Մինասյան Երվանդ Գալուստի (7.11.1879, գ. Հառիճ, Շիրակի մարզ - 12.07.1974, Երևան) - անվանի բանասեր, բանասիրության դոկտոր (1943), պրոֆեսոր (1945), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1964): 1910 թ. հրաժարվել է հոգևոր կոչումից: Եղել է Հայաստանյայց եկեղեցու արմատական բարեփոխման գաղափարախոսներից մեկը: 1956-1970 թթ. աշխատել է որպես ՀՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի վարիչ:

37 Բերբերյան Մինաս Հովհաննեսի (16.04.1871, Նոր Նախիջևան - 11.01.1919, Երևան) - հասարակական գործիչ, գրականագետ, մանկավարժ: Եղել է ՀՅԴ Նալբանդի (Նոր-Նախիջևան) կենտրոնական կոմիտեի անդամ: 1914 թ. ընտրվել է Հայոց Ազգային Բյուրոյի քարտուղար: 1918-1919 թթ. եղել է Հայաստանի առաջին Հանրապետության պետական վերահսկիչ: Մահացել է բծավոր տիֆից:

38 «Նոր դար» քաղաքական և գրական լրագիրը հրատարակվել է Թիֆլիսում 1883-1916 թթ., հրատարակիչը Սպանդար Սպանդարյանն էր:

39 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան (11.02.1841, Կ. Պոլիս - 6.11.1918, Կ. Պոլիս) - նշանավոր հոգևոր գործիչ, աստվածաբան, պատմաբան: 1881-1887 թթ. եղել է Կարնո թեմի առաջնորդը, աջակցել Կարինի Սանասարյան վարժարանի բացմանը և «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործունեությանը: 1889-1896 թթ. եղել է Արմաշի վանահայր և կազմակերպել է տեղի հանրահայտ դպրեվանքը: 1896-1908 թթ.՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարք: Հեղինակել է «Համապատում» ու «Ազգապատում» մեծարժեք աշխատությունները:

40 Տեր-Միքայելյան Իսահակ եպիսկոպոս (1868, գ. Բանանց, Հյուսիսային Արցախ - 1.03.1938): Եղել է Մայր Աթոռի միաբան: Ձերբակալվել է չեկայի կողմից 1936թ.: 1937թ. հուլիսի 21-ին դատապարտվել է 5 տարվա աքսորի, մահացել է աքսորավայրում:

1906 թ. օգոստոսի 15-18-ին որպես պատգամավոր ներկա եմ եղել Էջմիածնի համագումարին: Այն ժամանակ ես ծառայում էի Էջմիածնի վանքում: Համագումարի ծրագիրը բաղկացած էր երեք հարցից՝ հայկական եկեղեցական-ծխական դպրոցների կառավարում, եկեղեցական գույքի կառավարում, տարբեր պաշտոնների հոգևորականության ընտրվելու կարգ: Համագումարի նախագահ ընտրվեց Սիմոն Զավարյանը, տեղակալներ՝ Սամսոն Հարությունյանը[41] և Ավետիս Սահակյանը[42]: Ընթերցված ազգանուններից հիշում եմ Սիմոն Շխիյանցին[43], Արսեն վարդապետ Ղլաթյանին[44] և Պողոս Չուբարյանին, ովքեր ընտրվեցին քարտուղարի տեղակալներ: «Դաշնակցություն» կուսակցությանն անդամակցում էին Եղիշե Թոփչյանը[45], Սիմոն Զավարյանը, Տաճատ վարդապետը, Արսեն վարդապետ Ղլաթյանը, Լևոն Աբաբեգյանը[46], Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը[47], Համազասպ Օհանջանյանը[48], Սմբատ Խաչատրյանը: Այդ անձինք համագումարի նիստերին ելույթներում իրենց բացահայտ հայտարարեցին «Դաշնակցություն» կուսակցության կողմնակիցներ: Ելույթների տեքստերը հետո տպվեցին թերթերում: Այլ պատգամավորների շրջանում այդ անձանց որևէ հատուկ գործունեություն կամ քարոզչություն ինձ հայտնի չէ: Օգոստոսի 16-17-ի նախնական խորհրդակցության վերաբերյալ, որտեղ որոշվել էր լուծարել եկեղեցիները որպես պետական հիմնարկություն[49], ոչինչ չգիտեմ: Օգոստոսի 18-ի նիստում ես հետևյալ պատգամավորների հետ՝ Գևորգ Չորեքչյան[50], Համբարձում Առաքելյան[51], Սամսոն Հարությունյան, Գրիգոր Տեր-Գրիգորյան և Հարություն Թումանյան, հայտարարեցինք, որ համագումարի պատգամավորների ընտրությունը և հենց համագումարը համարում ենք անօրինական և այսուհետ չենք կարող մասնակցել համագումարի աշխատանքներին, քանի որ մենք գտնում էինք, որ ընտրությունները և ինքը՝ համագումարը, գտնվում են «Դաշնակցություն» կուսակցությանը պատկանող մեծամասնության ճնշման ներքո: Տալով այդ հայտարարությունը՝ ես վեց ընկերների հետ լքեցի համագումարը: Ռուսաստանում ազատագրական շարժմանը վերաբերող «Դաշնակցություն» կուսակցության բանաձևն ինձ հայտնի դարձավ հետո՝ թերթերից: Ես համագումարի նիստերին այլևս չեմ հաճախել: «Մշակ» թերթի խմբագրի ելույթը ինձ նույնպես հայտնի է միայն թերթերից: Նա ժամանել էր այն օրը, երբ մենք լքեցինք համագումարը:

Ընթերցված է:

Իսահակ վարդապետ Տեր-Միքայելյան:

Դատական Քննիչ (ստորագրություն):

Դատախազի տեղակալ (ստորագրություն):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 4, թթ. 2883-2884:

Թարգմանություն ռուսերենից:

41 Հարությունյան Սամսոն (1869, գ. Գանձաքար, Իջևան - 1941) - անվանի հասարակական-քաղաքական գործիչ: Եղել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ, Ազգային Բյուրոյի նախագահ, Հայ Ժողովրդական կուսակցության փոխնախագահ:

42 Ավետիս (Ավետիք) Սահակյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2011, N 1, էջ 193-205:

43 Շխյան (Շխյանց) Սիմոն Գերասիմի (1865-1947) - 1890-ական թվականներից՝ Ժնևում սովորելու շրջանից, ակտիվորեն մասնակցել է ՀՅԴ գործունեությանը, եղել է Ռոստոմի մտերիմ ընկերը: Տե՛ս «Ռոստոմ: Նամականի». մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 9-11: Այս շրջանում եղել է Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, զբաղվել գրական-թարգմանչական աշխատանքով: Ձերբակալվել է լիժինյան գործով:

44 Նկատի ունի Արսեն վարդապետ Ղլտճյանին (1868-1944):

45 Թոփչյան Եղիշե Թադևոսի (1872-1909) – գրող, հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ: 1905 թ. Թիֆլիսում մասնակցել է հայ-թուրքական կռիվներին, 1907 թ. ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում ընտրվել Արևելյան Բյուրոյի անդամ:

46 Թերևս նկատի ունի Լևոն Աբաբեկյանին:

47 Տեր-Մարտիրոսյան Հովհաննես Գրիգորի - Ա-Դո (14.01.1867, Նոր Բայազետ - 7.02.1954, Երևան) – հայտնի գրող, վիճակագիր, հրապարակախոս:

48 Համազասպ Օհանջանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2009, N 2, էջ 144-170:

49 Նկատի ունի պետությունից եկեղեցու անջատումը:

50 Գևորգ Զ. Չորեքչյան (2.12.1868, Նոր Նախիջևան - 9.05.1954, Էջմիածին) – 1913 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1917 թ.՝ եպիսկոպոս: 1915 թ. եղել է «Եղբայրական օգնության հանձնաժողով»-ի անդամ, 1916-ից՝ նախագահ, 1922-1927 թթ.՝ Վրաստանի թեմի առաջնորդ, 1938-ից ղեկավարել է Հայաստանյայց եկեղեցու գործերը, 1941-ից՝ կաթողիկոսական տեղապահ: Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1945-1954 թթ.:

51 Առաքելյան Համբարձում Աստվածատուրի (29.04.1855, Շուշի - 6.07.1918, Թիֆլիս) – անվանի հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, գրող, խմբագիր, արևելագետ: 1913-1918 թթ.՝ «Մշակ» թերթի հրատարակիչ-խմբագիր:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

ՀՅԴ մարտական կազմակերպության անվանացանկը՝ ըստ դատական որոշման

«Վէմ» հանդեսն իր տպագրության վերսկսման պահից հրապարակում է ՀՅԴ Մեծ կամ «լիժինյան» դատավարության նյութերի մեկնաբանված-ծանոթագրված թարգմանությունները: Սակայն, մինչ օրս, դրանք ներառել են միայն ՀՅԴ անվանի դեմքերի անհատական գործերը, որի հետևանքով լրացվել ու ամբողջացվել են վերջիններիս վերաբերող նյութերն ու փաստաթղթերը:

Ներկա հրապարակմամբ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ՀՅԴ այն քաղաքական և մարտական գործիչների **ընդհանրական դատական գործը,** ովքեր ներգրավված են եղել 1905 թվականից Ռուսաստանյան կայսրության տարածքում ծավալված հեղափոխական պայքարի մեջ: Ուստի ներկայացվող փաստաթղթում տրվում են այդ ասպարեզում առավել աչքի ընկած դաշնակցականների հակիրճ բնութագրերը, թվարկվում են նրանց կատարած «հանցանքները» և վերջապես՝ շարադրվում է մեղադրական եզրակացությունը:

Ինչ խոսք, Ն. Լիժինի դատական որոշումը չի ընդգրկել Ռուսաստանյան կայսրության տարածքի ՀՅԴ բոլոր հայտնի գործիչներին, առավել ևս՝ կուսակցության շարքային անդամների մեծագույն մասին, սակայն այս գործում որպես մեղադրյալներ հանդես են գալիս ինչպես հեղափոխական պայքարի դաշնակցական առաջնորդները, այնպես էլ ժամանակի հեռավորության ու համապատասխան նյութերի բացակայության պատճառով ուսումնասիրողներին անծանոթ մնացած՝ ՀՅԴ կազմակերպական կառույցի ու մանավանդ՝ նրա մարտական թևի ներկայացուցիչները:

Առաջինների շարքում բավական է հիշատակել ընդամենը մի քանի անուններ՝ Ռոստոմ, Համո Օհանջանյան, Ավետիս Ահարոնյան, Հարություն Շահրիկյան, Սիմոն Վրացյան: Վերջիններս ղեկավար դեր են խաղացել կուսակցության մարտական-հեղափոխական գործունեությունն ուղղորդելու հարցում, ուստիև հայտնվել են լիժինների տեսադաշտում:

Սակայն ներկայացվող ընդհանրական դատական գործը է՛լ ավելի կարևոր սկզբնաղբյուր է մինչ օրս նույնիսկ մասնագետ-պատմաբանների համար անհայտ՝

* ՀՅԴ Մեծ դատավարության թղթածրարների հրապարակման գործընթացը մտնում է եզրափակիչ փուլ: Ներկա և հաջորդ համարներում «Վէմ» հանդեսը ներկայացնելու է Ն. Լիժինի դատական որոշման մեջ ներառված՝ ՀՅԴ մարտական կազմակերպության անդամների մի մասի անվանացանկը, որից հետո հրապարակվելու են նաև նույն դատավարությամբ անցած գրողների ու մտավորականների գործերը: Դրանցից ընթերցողին առայժմ հայտնի է միայն Հովհաննես Թումանյանի թղթածրարը («Վէմ», 2009, N 1): Խմբ.: Ընդունվել է տպագրության 15.09.2011:

ցարական պաշտոնյաների ու դավաճանների ահաբեկմամբ զբաղված բազմաթիվ նվիրյալների մասին Օխրանայի հավաքած խիստ արժեքավոր տեղեկատվության համատեքստում: Վերջիններիս անսահման եռանդի և ինքնազոհության մասին վկայող փաստերը թույլ են տալիս բացահայտել գործիչների այն շրջանակը, որոնց միջոցով, Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՀՅԴ-ն կարողացավ դիմակայել ցարական վարչակազմի հարվածներին և կազմակերպել արևելահայության ինքնապաշտպանությունը:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նաև ընթերցողներին զգուշացնել, որ կուսակցական աստիճանակարգում ՀՅԴ գործիչներին լիժինների կողմից տրված անտեղի և անհասկանալի բնորոշումները, օրինակ՝ «գլխավոր անդամ» կամ՝ «ահաբեկիչների պետ» և այլն, շատ դեպքերում պետք է բացատրել ցարական քննիչների միտումնավորությամբ կամ էլ պարզ անգրագիտությամբ:

Ներկայացվող ընդհանրական որոշմամբ լիժինները նպատակ են ունեցել ի ցույց դնել մանավանդ՝ ՀՅԴ մարտական կազմակերպության ողջ «ահավորությունը»: Սակայն նման «ծառայողական ջանասիրությունը» ակամայից նպաստել է կուսակցության հզոր կառույցի առկայության՝ ակնհայտ փաստի ապացուցմանը:

Ստորև հրապարակվող որոշմամբ ցարական դատական մարմինները նպատակադրվել էին բացահայտել ՀՅԴ Արևելյան Բյուրոյի, «Ահաբեկչական գործադիր խորհրդի», կենտրոնական կոմիտեների, ենթակոմիտեների և խմբերի այն գործուն անդամների կազմը, որոնք կայսրության տարածքում զբաղվել են մարտական-հեղափոխական գործունեությամբ: Ընթերցողն ինքը կարող է համոզվել վերջիններիս պարզ «ահաբեկիչների» շարքը դասելու լիժինյան նպատակադրման սին լինելու մեջ, միաժամանակ հնարավորություն ստանալով առարկայական պատկերացում կազմելու իրենց կյանքը արևելահայերի ինքնապաշտպանության և արևմտահայերի ազատագրության գործին նվիրած մեծ թվով **խոնարհ հերոսների** մասին:

Ավագ Ա. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF ARF (DASHNAKTSUTYUN)

The list of the ARF's military organization according to the court decision

Avag A. Harutyunyan

ՈՐՈՇՈՒՄ[1]

1909 թվական, մարտի 13-ից ապրիլի 20: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր վարած նախաքննությունը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցություն հանցավոր ընկերակցության գործով, ԳՏԱՎ.

Որ 1908 թ. օգոստոսի 17-ի, հոկտեմբերի 28-ի և 1909 թ. փետրվարի 4-ի որոշումներում[2] մանրամասն դիտարկված են 1906-1907թթ. [ՀՅԴ] համագումարների [ընդհանուր ժողովների] կողմից հաստատված վերոանվանյալ «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը, և ցույց են տրված նրա կազմի մեջ մտնող բարձրագույն, միջին և ստորին կարգադրիչ ու գործադիր մարմինները՝ Ռուսական պետության մեջ դրանցից յուրաքանչյուրին ենթակա հակակառավարական գործունեության նպատակների նշումով (բնագիր գործի թերթեր 478-488, 1303, 1332, 4574-4606): Նշյալ կուսակցության բարձրագույն մարմիններին են պատկանում Թիֆլիսում գտնվող «Արևելյան Բյուրոն» և նրան կից գործող «Ահաբեկիչ-Մարմնի[3] գործունյա գործադիր ահաբեկչական խորհուրդը»՝ ահաբեկիչների գլխավոր ջոկատով («ահաբեկման ջոկատ», «ահաբեկում տարածող ջոկատ»), միջին օղակներն են՝ տասնմեկ կենտրոնական կոմիտեները Թիֆլիսում, Բաքվում, Ելիզավետպոլում, Երևանում, Բաթումում, Կարսում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Վլադիկավկազում, Դոնի Նախիջևանում և Օդեսայում, յուրաքանչյուրին կից՝ մահվան դատավճիռների իրականացման համար ահաբեկիչների հատուկ ջոկատներով, վերջապես, ստորին մարմիններով՝ կոմիտեներ, ենթակոմիտեներ, խմբեր[4] և արհմիություններ ու կազմակերպություններ:

Ռուսական պետության մեջ նշյալ կուսակցության բոլոր կոմիտեներն ավելի քան հարյուր հիսուն են[5], ընդ որում՝ Ս. Պետերբուրգում կոմիտեն կոչվում է «Ուխտավայր», իսկ Մոսկվայում՝ «Եկեղեցի» (բնագիր գործի թերթեր 477-488, 1304-1332, 4574-4606 և 5204):

Նախաքննության տվյալներով, բացի նախորդ որոշումներում ցույց տրված այդ կուսակցության գործիչներից, միանգամայն բացահայտվել է Արևելյան Բյուրոյի, «Գործադիր ահաբեկչական խորհրդի», կենտրոնական կոմիտեների, ենթակոմիտեների և խմբերի անդամների հետևյալ կազմը.

Ա. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈ.

ԱՀԱՐՈՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ[6] (կուսակցական ծածկանունը՝ «Ղարիբ») – Թիֆլիսի հայկական Ներսիսյան դպրոցի տեսուչ: Դրանից զատ նա «Գործադիր ահաբեկչական խորհրդի»[7] անդամ է, և ինչպես երևում է 1905 թ. նոյեմբերի 13-30-ի կուսակցության շրջանային ժողովի սղագրական որոշումներից՝ նա այդ ժողովում կուսակցության անդամների հեղափոխական գործունեության, ծրագրի, ռուսական պետության մեջ կառավարող իշխանության

1 Այս որոշումն ընդգրկված է բնագիր դատական գործի 16-րդ հատորում:

2 Նկատի ունի քննչական մարմնի որոշումները:

3 Անվանումը ռուսերեն տառերով հենց այսպես է գրված, բայց խոսքն, անկասկած, ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծված «Տեռորական Գործօն Կոմիտէի» մասին է: Տե՛ս «Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար», հատոր Գ., էջ 302:

4 Ըստ ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովի որոշման՝ 1904-1906 թթ. այս կառույցներն ունեին քանակական հետևյալ կազմը. խումբ - 7 անդամ, ենթակոմիտե - 5 խումբ (35 անդամ), կոմիտե - 5 ենթակոմիտե (175 անդամ), կենտրոնական կոմիտե - 5 կոմիտե (875 անդամ): Իսկ արդեն Վիեննայի (1907 թ.) Ընդհանուր ժողովից հետո պատկերն այսպիսին էր. ենթակոմիտե - 50 անդամ, կոմիտե - 200, կենտրոնական կոմիտե - 1000: Տե՛ս Տասնապետեան Հրաչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հոլովոյթը, Պէյրութ, 1985, էջ 40:

5 Եթե հիմք ընդունենք լիժինյան այս պնդումը, ապա Ռուսաստանյան կայսրության տարածքում պետք է հաշվարկել ավելի քան 26.000 ՀՅԴ անդամ, ինչն, անշուշտ, չի համապատասխանում իրականությանը և վկայում է այն մասին, որ ՀՅԴ կազմակերպության անդամների ճնշող մեծամասնությունը այդպես էլ չէր բացահայտվել ցարական իշխանությունների կողմից:

6 Ահարոնյան Ավետիս Առաքելի (1866, Իգդիր-20.03.1948, Մարսել) – անվանի հասարակական-պետական գործիչ, նշանավոր գրող: 1907-1909 թթ. եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ: 1909-1911թթ. ձերբակալվել է լիժինյան գործով: 1919-1920 թթ. եղել է ՀՀ Խորհրդարանի նախագահ, 1920 թ. որպես ՀՀ պատվիրակության նախագահ ստորագրել է Սևրի պայմանագիրը:

7 Նկատի ունի գործում նշվող ՀՅԴ Արևելյան Բյուրոյին կից «Ահաբեկիչ-Մարմնի» խորհուրդը:

դեմ պայքարի համար հայերի զինման հարցերի քննարկման առնչությամբ ակտիվ մասնակցություն է ունեցել: Որպես կուսակցության բյուրոյի անդամի՝ Ահարոնյանի մասնակցությունը հաստատվում է Եդիգարովների[8] գրասենյակում խուզարկությամբ գտնված փաստաթղթերով, առաջին հերթին՝ «Հայ յեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Արևելյան Բյուրոյի» շրջաբերականի մեքենագիր օրինակով, և [ՀՅԴ Արևելյան Բյուրոյի] անդամ Ահարոնյանի ստորագրությամբ 1906 թ. նոյեմբերի 30-ից «Գործադիր ահաբեկչական խորհրդի» անդամ և «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկիչների ջոկատի գլխավոր կարգադրիչ Սաքո Մեղավորյանի անունով գրությամբ, որը վերաբերում է Մխիթարյանցի և Սևբուրակի կողմից ինքնակամ վերցված կուսակցական զենքերի, դաշույնների, փամփուշտների և այլնի ետ խլմանը: Երկրորդ, 1905-1906 թթ. զենքի գնման մասին [ՀՅԴ] «Ղազախի» («Չականա») [Բարանա՞] շրջանի կուսակցական հաշվետվության գրառումներով, որտեղ նշվում է Ահարոնյանին տրված 2820 ռուբլի գումար (բնագիր գործի թերթեր 2312, 2342, 2334 հակ., 2349 հակ., 2386-2390, 3558-3561, 4497-4498, 5164 և հակ.):

ՕՀԱՆՋԱՆՅԱՆՑ ՀԱՄԱՉԱՍՊ[9] (կուսակցական կեղծանունները «Համո»՝ որպես Բյուրոյի անդամ, «Մ-յան», «Մեր» և «Մերյան»՝ որպես կուսակցական քարոզիչ) – բժիշկ: [ՀՅԴ] Բյուրոյի անդամ, կուսակցության մեջ քարոզչական գործունեության պատասխանատու: 1905 թ. նոյեմբերի 13-ից առ 30-ը վերոնշյալ մատյանային որոշումներից[10] հետևում է, որ նշյալ Օհանջանյանցը («Համո» կուսակցական ծածկանունով) գործուն մասնակցություն է ունեցել ժողովում՝ պնդելով Կովկասին ինքնավարություն [տալու], դաշնային-ժողովրդավարական հանրապետության հիմնման, ռուսական կառավարության դեմ պատերազմ մղելու, զինման միջոցով կառավարության դեմ զանգվածների պայքարի ուժեղացման, հանրահավաքների կազմակերպման, նրանց ընթացքում այդ մասին քարոզելու վրա: 1906 թ. փետրվարի 28-ի [ՀՅԴ] կուսակցության [Արևելյան] Բյուրոյի հաշվետվության մեջ նշված է Օհանջանյանցի կողմից այդ առթիվ 15 ռուբլի մուծման մասին: 1906 թ. հուլիսի 17-18-ի [ՀՅԴ] Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի որոշումներից հետևում է, որ նշյալ նիստում որոշվել է վարել ճշմարիտ հեղափոխական քարոզչություն Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի շրջանի հայկական դպրոցներում և այդ առթիվ Արևելյան Բյուրոյի միջոցով դիմել նրա անդամ «Միերին»: Համաձայն այդ որոշման՝ [ՀՅԴ Վլադիկավկազի] կենտրոնական կոմիտեի նախագահ Արտաշես Չիլինգարյանի («Դարբին Ռուբեն»[11]) կողմից նույն հուլիսի 19-ին [Արևելյան] Բյուրո՝ «Միերյանին», հաղորդագրություն է առաքվել նշյալ շրջանի հայկական դպրոցների համար ուսուցիչ-քարոզիչների շուտափույթ ուղարկման մասին: Առգրավված հեռագրերով բացահայտվել է, որ Օհանջանյանցը գործուն մասնակցություն է ունեցել «Միհրանի»[12] նկատմամբ [ՀՅԴ] կուսակցության մահվան դատավճռի իրականացման մեջ, քանզի «Միհրանի» գտնվելու վայրի մասին հաղորդման հիման վրա պահանջել է նրա մասին տեղեկություններ կուսակցության այլ անդամների՝ Լեոնիդի (Թայիրյանի), «Արտավազդի», «Մեղավորյանի» նման, կարգադրել է ահաբեկիչների ուղարկման և այլնի մասին:

8 Եդիգարովների մասին տե՛ս հետագա շարադրանքում:

9 Հ. Օհանջանյանի դատական գործի մասին մանրամասն տե՛ս «ՎԷՄ», 2009, հուլիս-սեպտեմբեր, թ. 2, էջ 144-170:

10 Նկատի ունի ՀՅԴ մարմինների որոշումները:

11 Անունը ռուսերեն տառերով հենց այսպես է գրված, ինչը «Ռուբեն Դարբինյան» կեղծանունի կրճատված ու շրջված տարբերակն է:

12 Այսուհետ Միհրանի անունը չակերտներում է նշված: Միհրանի ահաբեկման փորձը տեղի է ունեցել 1907 թ. հունիսի 10-ին՝ Արմավիրում (Հյուսիսային Կովկաս) համաձայն ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի որոշման: Սակայն նա սպանվել է 1910 թ. սեպտեմբերին՝ 20-ամյա «Միշայի» (Դալի Ղազարի) կողմից: Վերջինս ոստիկանության հետապնդումներից խույս տալով՝ ապաստանել է այդ ժամանակ Ռոստովում գտնվող Հ. Օհանջանյանի մտերիմ Ռուբինայի մոտ: Այստեղ տեղին է ներկայացնել Միհրանի մասին ՀՅԴ Վիեննայի Ընդհանուր ժողովի կողմից (մեկ ձեռնպահով) ընդունված որոշումը. «1. Համարել Միհրանի և իր գործակիցներու վարմունքը ծանր հանցանք կազմակերպության և նրա պաշտպանած թուրքահայ դատի դեմ և այդ հիման վրա ճանաչել նրանց արտաքսված՝ Դաշնակցության շարքերից, 2. Հանձնարարել պատշաճ մարմնին՝ կազմակերպության կանոններով նախատեսված պատիժին ենթարկելու Միհրանը և իր գործակիցները»: Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հտ. գ., ա. տ., ա. թ., էջ 128:

Այսպես, Օհանջանյանցի («Միերյան») Թիֆլիսից Պյատիգորսկ՝ բժիշկ Մուրադովին [Մինաս Մուրադյան] 1907 թ. հունիսի 12-ի թ. 6120 հեռագրով և նույն ամսաթվով թ. 2173 հեռագրով՝ Մուրադովը, հաղորդելով «Միհրանի» առողջական վիճակի և նրա առողջացման մասին, խնդրում է «Միերյանին» «Միհրանի» նկատմամբ [մահվան] վճռի իրականացումը նորից ի կատար ածելու համար ուղարկել [ՀՅԴ] Բաքվի կենտրոնական կոմիտեի փորձառու ահաբեկիչների: Օհանջանյանցը, Մուրադովից ստանալով հունիսի 14-ի թ. 2598 հեռագիրը [ՀՅԴ] Արմավիրի ենթակոմիտեին օգնություն ցուցաբերելու մասին՝ վերջինիս մոտ դրամի և ահաբեկիչների բացակայության պատճառով, նույն ամսվա 15-ի թ. 7628 հեռագրով Մուրադովին տեղեկացրել է, որ կարգադրություններն արված են, իսկ Մուրադովը նույն ամսաթվի թ. 2785 հեռագրով խնդրում է Օհանջանյանցին հաղորդել ահաբեկիչների մեկնելու օրվա մասին, որպեսզի նրանց դիմավորի Պյատիգորսկի կայարանում: Հունիսի 25-ի և հուլիսի 4-ի թթ. 12755 և 20001 հեռագրերով Օհանջանյանցը կարգադրում է Ս. Պետերբուրգի [ՀՅԴ] տեղական կոմիտեի անդամ [Դավիթ] Զավրիևին, որպեսզի վերջինս իր կարգադրությունը փոխանցի [Պետական] Դումայի և կուսակցության անդամ Սաղաթելյանին[13]՝ ձեռնպահ մնալ նոր հեղափոխական «Անջատականներ»[14] կուսակցության հետ միավորվելու առթիվ փոխզիջումից և բանակցություններից, ինչը պետք է լինի ողջ [ՀՅԴ] կուսակցության ժողովի քննարկման առարկան: 1907 թ. օգոստոսի 9-ի, 10-ի և 11-ի թթ. 1232, 1549 և 1594 հեռագրերում [ՀՅԴ] Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ Արմեն Նավյանը հաղորդում է Օհանջանյանցին, որ «Միհրանը» եղել է Նովոռոսիյսկում, ապա մեկնել է Յալթա, և անհրաժեշտ է կարգադրել նրա նկատմամբ վճիռը իրականացնել հետևյալ հասցեով. «Յալթա, շուկա, Արմենակին …»[15]: Այդպիսի հաղորդումների հիման վրա Օհանջանյանցը նույն ամսի 15-ի թ. 6546 հեռագրով կարգադրություն է հղում Բաքու, որպեսզի Լևոն Թաղևոսյանը անմիջապես այդ նպատակի համար ուղարկի Վարդան Արզումանյանին, դրանից բացի՝ նույն թվի հունիսի 8-ի և 14-ի թթ. 700 և 1138 հեռագրերով Երևանից՝ անհայտ մեկից, [ՀՅԴ] կուսակցության [Արևելյան] Բյուրոյի հասցեով («Ժայռ»-ի[16] խմբագրություն) Օհանջանյանցին խնդրում են ուղարկել ինչ-որ կուսակցական թղթեր: 1907 թ. հոկտեմբերի 7-ի ուղարկման պատրաստված և ոստիկանության կողմից առգրավված նամակում [ՀՅԴ] Դոնի Նախիջևանի կենտրոնական կոմիտեի անդամ, «Նոր կյանք»[17] հայկական թերթի խմբագիր Ղարագյուլյանը (Խաչ=Խլեբնիկով)[18] հաղորդում է Օհանջանյանցին և կուսակցության անդամ Աբովյանին 1907 թ. դեկտեմբերին և 1908 թ. հունվարին Դոնի Ռոստովում և Ս. Պետերբուրգում նախատեսվող կուսակցական ժողովների մասին (բնագիր գործի թերթեր 475, 909, 1011 հակ., 1012 հակ., 1015 հակ., 1021, 1035 հակ., 1036, 1036 հակ., 1064 հակ., 2340-2343 հակ., 2364, 3599, 3685,3698, 3602 հակ., 5148-5149, 5154-5157, 5160-5164 հակ., 5198, 5203-5204 հակ.):

ԶՈՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ (կուսակցական ծածկանունը՝ «Ռոստոմ», «Ռոստոմյանց»): Լինելով [ՀՅԴ Արևելյան] Բյուրոյի[19] անդամ՝ նա

13 Հովհաննես Հակոբի Սաղաթելյան (1871-1936) – 2-րդ և 3-րդ Պետական Դումաների պատգամավոր: 2-րդ Պետական Դումայում գործող հինգ պատգամավորներից երեքը՝ Հ. Սաղաթելյան, Ս. Տիգրանյան, Հ. Տեր-Ավետիքյան, ՀՅԴ ընտրյալներն էին: Հետագայում եղել է Ռուսական կամավորական բանակի և Կուբանի կառավարության մոտ ՀՀ ներկայացուցիչը:

14 Նշյալ ժամանակահատվածում ՀՅԴ-ից տարանջատվել էին երկու ծայրահեղ թևերի ներկայացուցիչները՝ ձախ-անջատականները Լևոն Աթաբեկյանի և Արսեն Ամիրյանի (Մրավյան) ղեկավարությամբ (տե՛ս Վահէ, Անջատուածները, «Յառաջ» գրադարան մատ-շար, N 47, Թիֆլիս, տպ. «Հերմէս», 1907, 43 էջ) և աջ-ազգայնականները՝ խմբապետ Միհրանի գլխավորությամբ: Առաջինը շուտով վերածվեց առանձին ձախլիկ-սոցիալիստական կուսակցության, իսկ երկրորդը՝ հակադաշնակցական աղանդի, և, ի վերջո, իր առաջնորդի պատուհասումից հետո մարեց:

15 Այսպես է տեքստում:

16 «Ժայռ» հասարակական, քաղաքական, տնտեսական օրաթերթը հրատարակվել է Թիֆլիսում 1907-1908 թթ.: Խմբագիր-հրատարակիչը Սամսոն Ղազարյանն էր, ապա՝ Արշակ Ղազարյանը:

17 «Նոր կյանք» գրական և քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել է Նոր-Նախիջևանում 1906-1907 թթ.: Խմբագիրը Գր. Անոփյանն էր, ապա՝ Հ. Խարագյոզյանը:

18 Ճիշտը՝ Հովհաննես Խարագյոզյան:

19 Այսուհետ Բյուրո ասելով՝ դատական գործում նկատի է առնվում միայն Արևելյանը:

կուսակցության ղեկավարներից մեկն է: Երևանում կուսակցական գործերի վիճակի մասին Բյուրոյի անդամներին «Ֆար-Ծաթ»[20] ստորագրությամբ [ՀՅԴ] Երևանի կենտրոնական կոմիտեի անդամի 1906 թ. օգոստոսի 2-ի նամակում նշվում է այդ գործերի առթիվ «Ռոստոմի» կարգադրության և այդ կապակցությամբ՝ «Մուշեղին» «Ռոստոմի» հանձնարարության մասին: Ստեփան Ջորյանը 1907 թ. օգոստոսի 23-ի Թիֆլիսից Երևան N 10567 հեռագրով այժմ հանգուցյալ, Երևանի կոմիտեի անդամ Սուրեն Այվազյանին հրահանգում էր կուսակցական գործերով անհապաղ Թիֆլիս ուղարկել Բաթումի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների և զինվորների պետ «Հաջի Հակոբին» (Հաջի Մուղդուսի Հակոբ Ավետիսյան), իսկ օգոստոսի 28-ի Նոր-Բայազետ հղած N. 1297 հեռագրով նա պահանջում էր, որպեսզի կուսակցության անդամ Հովհաննես Յուսուֆյանն անհապաղ ժամանի Թիֆլիս (բնագիր գործի թերթեր 1022, 1023, 2342, 2343 հակ., 3882 հակ., 4498):

ՇԱՀԲԻԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՎԱՆԻ [Հովհաննեսի][21] (նույն ինքը՝ Շահրիկյան, կուսակցական ծածկանունը «Պարթև») – Արևելյան Բյուրոյի գլխավոր անդամ և «Գործադիր ահաբեկչական խորհրդի» («Ահաբեկիչ-Մարմին») ու Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ: Նրա կարգադրությամբ Բյուրոյի անունից, մահվան սպառնալիքի տակ, հարուստ հայերից մեծ չափերի հարկադիր դրամահավաքներ են կատարվել: 1906 թ. նա կուսակցության այլ անդամների հետ Ռոստով, Դոնի Նախիջևան և Արմավիր քաղաքներում մեծահարուստ հայ առևտրականներից մեծ չափերի դրամահավաք է կատարել: Նույն թվի հուլիսին կուսակցության Բյուրոյի պահանջով 10.000 ռուբլի հանձնելու առաջարկը մերժելու համար Արմավիրում նրա կարգադրությամբ, նրա իսկ ահաբեկիչների կողմից սպանվել է տեղի վաճառական Վասիլի Շահնազարովը: 1907 թ. օգոստոսի 18-ին ահաբեկիչների ջոկատի պետ Համբարձում Աղաջանյանը («Կարո»), ում «Ահաբեկիչ-Մարմնի» կողմից հանձնարարվել էր Յալթայում «Միհրանի» նկատմամբ մահապատիժ իրականացնել, Յալթայից Բաքու, Շահրիկյանին N 4079 հեռագրով հաղորդել է երկու ահաբեկիչների անհապաղ Յալթա ուղարկման մասին, քանի որ հարմար առիթ էր ստեղծվել նշյալ մահապատժի իրականացման համար, իսկ օգոստոսի 25-ի N 5736 հեռագրով խնդրել էր Շահրիկյանին ուղարկել 300 ռուբլի նշյալ մահապատժի իրականացման հետ կապված ծախսերը հոգալու համար, և օգոստոսի 28-ի N 1605 հեռագրով Շահրիկյանը Յալթա «Կարոյին» նշյալ նպատակի համար ուղարկել է այդ գումարը: 1906 թ. հուլիսի 24-ին «Պարթև» ստորագրությամբ Արմավիրից Թիֆլիս ուղարկված նամակից երևում է, որ Շահրիկյանը նշյալ ժամանակ Արմավիրում կուսակցության բյուրոյի օգտին իրականացրել է ավելի քան 40.000 ռուբլի դրամահավաք, որից 5.000 ռուբլի Ազով-Դոնյան հողային բանկի միջոցով փոխանցվել է Թիֆլիս Ալեքսանդր Մելիք-Ազարյանի անունով՝ բյուրոյին հանձնելու համար, իսկ մնացածը փոխանցվել է «Գագիկ» անունով կուսակցության անդամին (բնագիր գործի թերթեր 475 հակ., 476, 1020, 1208 հակ., 2341 և հակ., 2344, 2355 հակ., 2365, 2498, 3549 հակ., 3550 և 4479):

ԲԱՍՏՐՄԱՋՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ[22] (կուսակցական ծածկանունը՝ «Գարո») – լեռնային ինժեներ, Արևելյան Բյուրոյի պահեստային[23] անդամ, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ և ողջ կուսակցության ահաբեկիչների գլխավոր ղեկավարներից մեկը: 1907 թ. հուլիսի 14-ին N 593 հեռագրով Ելիզավետպոլի կոմիտեի անդամ և ահաբեկիչների ղեկավար «Շահենը» Թիֆլիս՝ Բաստրմաջյանին, կուսակցական «Խարիսխ» թերթի հասցեով հաղորդել է, որ կուսակցության համակիրները իր ցանկությանը հակառակ իրեն թույլ չեն տալիս տեղեկացնել նրան, իսկ հուլիսի 21-ի N 8853 հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ

20 Հավանաբար, պետք է լինի «Ֆար-Հատ» - Սարգիս Օհանջանյան:

21 Հարություն Շահրիկյանը («Նիթրա», «Ատոմ») (1860-1915) – ՀՅԴ անվանի գործիչ, հրապարակախոս: Ծնվել է Շապին Գարահիսարում: ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամ, գաղափարախոս, մի շարք գրքերի հեղինակ: Մեծ եղեռնի զոհ:

22 Արմեն Գարո (Գարեգին Փաստրմաճյան) (9.02.1872, Կարին-23.03.1923) – հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: 1894 թ. անդամագրվել է ՀՅԴ-ին: «Բանկ Օտոմանի» գործողության ղեկավարներից: 1905-1906 թթ. Թիֆլիսի հայության ինքնապաշտպանության ղեկավարներից: 1920թ. եղել է ՀՀ դեսպանը ԱՄՆ-ում, ապա՝ «Նեմեսիս» գործողության պատասխանատու մարմնի ղեկավարը:

23 Այսպիսի ձևակերպումը դատական քննիչներինն է, քանի որ դաշնակցական գրականության մեջ կիրառվում է «փոխանդամ» հասկացությունը:

Արտեմ Թայիրյանը Բաստրմաջյանին կուսակցական գործերով անհապաղ հրավիրում էր ժամանել Թիֆլիս: 1905 թ. նոյեմբերի 13-30-ի վերոնշյալ կուսակցական շրջանային ժողովի սղագրական որոշումները վկայում են, որ Բաստրմաջյանը («Գարո») ներկա է եղել այդ ժողովին որպես պատգամավոր: Նա ժողովում զեկուցել է, որ ընկերակցության մյուս անդամների հետ «Դաշնակցություն» կուսակցության համար զենքի ձեռքբերման միջոնոդ է եղել և ժողովներում ապացուցել է, որ ռուսական կառավարության դեմ պայքարի համար հարկավոր է թաքար բնակչության շրջանում հեղափոխական քարոզչություն մղել և հայերին համախմբված զանգվածներով հավաքել, դրանով Անդրկովկասը ապագա դաշնության [ֆեդերացիա] համար պատրաստելով, և որ կառավարության դեմ պայքարի համար հարկավոր է համապատասխան հեղափոխական մարտավարություն ընտրել և ուժերը նախապատրաստել, որպեսզի բռնապետության [ռեակցիա] հարվածներին ի զորու լինեն հակադարձել (բնագիր գործի թերթեր 1016 հակ., 2200, 2325, 2325 հակ., 2343 հակ., 2359 հակ., 5131, 5136, 5146 հակ., 5155 հակ., 5160):

ՄՈՒՐԱԴՈՎ ՄԻՆԱՍ ԻՎԱՆԻ (Մուրադյան)[24] (կուսակցական ծածկանունը՝ «Մրմուռյան», «Սիմոնյանց», «Արա») – բժիշկ, Բյուրոյի գլխավոր անդամներից մեկը: Նրա միջոցով Կովկասում «Դաշնակցություն» կուսակցության բոլոր կոմիտեները կապվել-հաղորդակցվել են նույն կուսակցության արտասահմանյան հայկական հեղափոխական կոմիտեների հետ: 1905-1907 թթ. նա Թիֆլիսում եղել է կուսակցական «Երկիր» թերթի խմբագիրը և ողջ կուսակցության գլխավոր գանձապահը, այնպես որ նրա տրամադրության ներքո 1905-1907 թթ. գտնվել է 2.000.000 ռուբլի[25] կուսակցական գումար: 1905-1907 թթ. նա Պետական Դումայի և «Դաշնակցություն» կուսակցության անդամ Իվան [Հովհաննես] Սաղաթելյանի հետ [միասին] «Դաշնակցություն» կուսակցության հին ներկայացուցիչների[26] հետ պայքարի ժամանակ, որպեսզի վերջիններիս զրկի հայ բնակչության շրջանում գործելու հնարավորությունից, կուսակցական գումարների օգնությամբ հասավ նրան, որ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեն Ռուսաստանում կուսակցության բոլոր կոմիտեների նկատմամբ սկսեց ղեկավար դեր խաղալ, իսկ հին կուսակցության ներկայացուցիչներն իրար հետևից այդ [Թիֆլիսի] կենտրոնական կոմիտեի վճռով ահաբեկվեցին: 1907 թ. մայիս-օգոստոս ամիսներին ք. Պյատիգորսկում գտնված ժամանակ բժիշկ Մուրադովը գլխավոր դեր է խաղացել հին կուսակցության ներկայացուցիչներ «Միհրանի», Խեչո Մուխքարովի, Վարդապետյանի և այլոց նկատմամբ մահապատժի իրականացման գործում, ովքեր փախել էին Թիֆլիսից՝ այդ առթիվ անելով համապատասխան կարգադրություններ, Բյուրոյին հաղորդելով գործի վիճակի մասին և ահաբեկչության անհապաղ իրականացման համար գումար և ահաբեկիչներ պահանջելով: Նրա միջոցով են այդ գործով իրենց հերթին ընթացել Բյուրոյի բոլոր կարգադրությունները: Մահապատիժների իրականացման միջոցների ձեռնարկման մասին նրան հաղորդել են ահաբեկիչների ղեկավարները և կոմիտեների անդամները և այդ առթիվ նրանից հանձնարարություններ հարցրել: Չնայած ձեռնարկած բոլոր միջոցներին, Արմավիրում 1907 թ. հունիսի 10-ին ծուղակից ահաբեկիչները սպանեցին միայն Խեչո Մուխքարովին և Անդրեաս Վարդանովին[27], իսկ «Միհրանին» միայն ծանր վիրավորեցին: Վերջինս իր մերձավորների օգնությամբ հաջողեց Արմավիրից թաքնվել Պյատիգորսկում, ուր բժիշկ Սուբոտինի միջոցով տեղավորվեց հիվանդանոցում: Այդ մասին հաղորդվեց Թիֆլիս՝ Բյուրոյին և վերջինս բժիշկ Մուրադովից հուլիսի 12-ի N 6120 հեռագրով պահանջեց հաղորդել «Միհրանի» գտնվելու վայրի մասին: Նույն օրը N 2173 հեռագրով Մուրադովը, Բյուրոյին հաղորդելով, որ «տուժել է «Միհրանի» ուսը, փորը, ազդրը և կա հույս նրա առողջացման», խնդրում էր «Միհրանի» նկատմամբ նոր մա-

24 Բժիշկ Մինաս Մուրադյանը (Մուրադով) դեռևս 1890-ականներից զբաղվել է Մոսկվայից ու Ռուսաստանի այլ քաղաքներից զենքի տեղափոխման գործով: Տե՛ս Խուդինյան Գևորգ, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 338:

25 Եթե Ն. Լիժինի բերած այս թիվը իրականության հետ թեկուզ հեռավոր կապ անգամ ունենա, ապա արդեն իսկ հնարավոր է մոտավոր պատկերացում կազմել ՀՅԴ հնարավորությունների և գործունեության ծավալների վերաբերյալ:

26 Նկատի ունի այսպես կոչված՝ անջատականներին և միհրանականներին:

27 Պետք է լինի Վարդերեսյան:

հապատժի իրականացման համար ուղարկել Բաքվի կենտրոնական կոմիտեին կից փորձառու ահաբեկիչների («Ոսկանապատի որդիներին»): Մուրադովը, նկատի ունենալով Նորավանի[28] ենթակոմիտեի նախագահ Արամ Չինչինյանի հեռագիրը, հունիսի 14-ին N 2598 հեռագրով Բյուրոյին խնդրում էր Արմավիրի ենթակոմիտեին անհրաժեշտ օգնություն ցույց տալ, քանի որ նա զուրկ էր դրամական միջոցներից և ահաբեկիչներից: Հունիսի 15-ին [Մուրադովը] բյուրոյից ստացավ N 7628 հեռագիրը, ուր ասվում էր, որ «կարգադրություններն արված են» և «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկիչների ղեկավար «Արտավազդի» կողմից հաղորդվել է «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկիչների կարգադրիչ և պետ Սաքո Մեղավորյանին՝ անհապաղ Արմավիրի ենթակոմիտեին դրամ և ահաբեկիչներ ուղարկել: Իմանալով այդ մասին, Մուրադովը նույն օրը N 2785 հեռագրով Բյուրոյին խնդրում էր հայտնել նրանց մեկնելու օրվա վերաբերյալ՝ նշելով անգամ գնացքի համարը, որում պետք է մեկնեին և ուղարկել դրամ, քանի որ «Միհրանն» արդեն առողջանում է և սկսում կուսակցության դեմ քարոզչություն մղել: Հունիսի 16-ին Պյատիգորսկ ժամանեցին ահաբեկիչները՝ նոր ղեկավար Համբարձում Աղաջանյանի («Կարո») գլխավորությամբ, իսկ հունիսի 17-ի N 8755 հեռագրով «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհուրդը հայտնեց Մուրադովին, որ Թիֆլիսից փախել է ահաբեկչության ենթակա «Միհրանի» եղբայր «Հաբեթը», ում հարկավոր է հսկել Պյատիգորսկի կայարանում: Ահաբեկիչների ղեկավար անդամ Լեոնիդ Թայիրյանի 1907 թ. հունիսի 20-ի նամակից երևում է, որ Մուրադովին հրահանգվել է ինչ գնով էլ լինի ի կատար ածել «Միհրանի» և նրա եղբայր Հաբեթ Վարդերեսյանի նկատմամբ մահապատժի վճիռը: Երբ օգոստոսի 1-ին «Միհրանը» Վարդերեսյանի, իր քույր Զարուհի Ղազանջյանի և զարմիկ Գասպարի հետ Եկատերինոդարի ու Նովոռոսիյսկի վրայով փախավ Յալթա, նրան հետևեց ահաբեկիչների ջոկատը բժիշկ Մուրադովի գլխավորությամբ: Վերջինս օգոստոսի 1-ի Պյատիգորսկից՝ Արմավիր N 62 հեռագրով Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանին հանձնարարում էր, որպեսզի նա եղբոր և ընտանիքի հետ փախած «Միհրանի» դեմ ահաբեկիչների հետ միջոցներ ձեռնարկի: «Միհրանին» հետևելու համար ուղարկվել էր «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ավագ ահաբեկիչ Խաչատուր Ամիրի Կևորկովը (Խեչո): Բայց Խեչոն օգոստոսի 11-ին Նովոռոսիյսկում ձերբակալվեց: Այս անգամ ուղարկվեց «Կարոյի» խումբը, որը Նովոռոսիյսկում «Միհրանին» չգտնելով՝ մեկնեց Յալթա: Սակայն վճիռն ամբողջությամբ չհաջողվեց իրականացնել, քանի որ «Միհրանի» զարմիկ Գասպար Նազարովի սպանությունից հետո՝ օգոստոսի 27-ին «Կարոյի» գլխավորած խումբը ձերբակալվեց: Այդ նույն ժամանակ ոստիկանությունը հայտնաբերեց, որ ք. Թիֆլիսում գործող «Հերմես» տպարանը իրենից ներկայացնում է նշյալ կուսակցության գաղտնի[29] կուսակցական տպարան և վերջինիս անդամներ, տպարանի սեփականատերեր Բուդուղովը, Արծրունին, Մուրադովը և այլք շտապեցին լուծարել գործերը և հանձնել նոր սեփականատեր Սերգեյ Եդիգարովին: Դրանից զատ, Խեչո Կևորկովի հուշատետրում նշվում է բժիշկ Մուրադովի կողմից կուսակցության կարիքների համար 450 ռուբլու տրամադրումը, իսկ Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ բժիշկ Մուրադովին («Մրմուռ») և «Արսենին» կուսակցական գործերով Վլադիկավկազ և Պյատիգորսկ գնալ-գալու համար Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեին տրվել է 35 ռուբլի 90 կոպեկ ծախսի գումար: 1906 թ. մարտի 27-ին, այն ժամանակ, երբ ահաբեկիչների ջոկատի պետ Ալեքսանդր Շարաֆյանը Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի կողմից զենք գնելու համար Աբրահամ Ջիլիխովին ուղարկել էր 2.500 ռուբլի, բժիշկ Մուրադովն էլ այդ նույն ժամանակվա համար նույն անձին Թիֆլիսից կուսակցության Բյուրոյից N 766/3003 փոխանցումով նույնպես ուղարկել էր 2.500 ռուբլի (ընագիր գործի թերթեր 470-471, 475, 655, 666, 824 հակ., 826-827, 908-910, 1011, 1019, 1208 հակ., 2022, 2027, 2181 և հակ., 2202 հակ., 2325, 2326 և հակ., 2337, 2343 հակ., 2352, 2358 հակ., 2365, 2372, 4414 հակ., 4898 և 4960):

28 Նորավանը Հյուսիսային Կովկասում գտնվող Արմավիր քաղաքի ՀՅԴ ենթակոմիտեն էր:

29 Այսուհետ «գաղտնի» բառը ռուսերեն «կոնսպիրատիվ» բառի թարգմանության տարբերակ ենք ընդունել, սակայն այն ունի նաև «ընդհատակյա» իմաստը:

Բ. «ԱՀԱԲԵԿԻՉ-ՄԱՐՄԻՆ» ԳՈՐԾԱԴԻՐ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ԴՈՒՄԱՆ[30] (կուսակցական ծածկանունը՝ «Ղարաբաղցի Նիկոլ» – նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի ծառայող, Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ և վերջինիս կողմից «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհրդի անդամ, կուսակցության ահաբեկիչների գլխավոր պետ: 1907 թ. սեպտեմբերից դեկտեմբեր նրա կողմից կուսակցության Բյուրոյի հանձնարարականով ք. Եկատերինոդար է գործուղվել Աղամալովի գլխավորած ահաբեկիչների ջոկատը՝ Եկատերինոդարի բանտից «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ավագ ահաբեկիչ, վերոնշյալ Խեչո Ամիրի Կևորկովի ազատման համար, այդ նպատակով հատկացնելով 10.000 ռուբլի, ինչի արդյունքում կաշառքի շնորհիվ վերջինս 1907 թ. նոյեմբերի 26-ին փախել է նշյալ բանտից (բնագիր գործի թերթեր 2349 հակ., 2365-2366, 2372):

ՄԵՂԱՎՈՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ[31] (կուսակցական ծածկանունը՝ «Սաքո») – «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհրդի անդամ և նշյալ խորհրդին կից ահաբեկիչների պետ ու գլխավոր կարգադրիչ: Խեչոյի հուշատետրի համաձայն՝ նա համարվել է կուսակցության անվանի անդամ, իսկ նրա կողմից և նրա անունով ուղարկված 1907 թ. հեռագրերից երևում է, որ նա Թիֆլիսից ղեկավարել է «Միհրանի» և այլ անձանց նկատմամբ վճիռների իրականացումը: Այսպես, 1907 թ. հունիսի 11-ի N 5516 հեռագրով նա Թիֆլիսից Դոնի Ռոստով՝ «Արաքս» գինետուն կոնսպիրատիվ հասցեով հրահանգել է մի ահաբեկչի գործուղել Արմավիր, իսկ հունիսի 15-ի N 7629 հեռագրով «Արտավազդը» խնդրում էր Մեղավորյանին ահաբեկիչների հետ Բաքու մեկնել և Արմավիրի ենթակոմիտեին օգնել դրամով: Հուլիսի 9-ի N 3427 հեռագրով Թիֆլիսի կոմիտեի անդամ Փամբուկյանը տեղեկացնում էր Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ Նալբանդյանին կուսակցական գործերով Մեղավորյանի անհապաղ մեկնման մասին, նշելով, որ «Մուշեղի» նկատմամբ ահաբեկչական ակտը նախատեսված է հաջորդ օրը («իսկ Մուշեղի գործը նշանակված է հաջորդ օրը»): Օգոստոսի 9-ի N 131 հեռագրով Թիֆլիսից Մեղավորյանը կուսակցական զինապահեստների վարիչ Հաջի Լևոնին Ախալցխա է կանչում: Օգոստոսի 4-ի N 1689 հեռագրով Մեղավորյանը բժիշկ Մուրադովին խնդրում էր հրամայել ահաբեկիչների ղեկավար «Կարոյին», որպեսզի նա «Միհրանի» և նրա ազգականների նկատմամբ կուսակցության մահավճիռը իրականացնելու համար ավագ ահաբեկիչ Խեչո Կևորկովին ուղարկի ք. Նովոռոսիյսկ, իսկ «Կարոն» օգոստոսի 10-ի N 1306 հեռագրով Մեղավորյանին խնդրում էր հաղորդել կուսակցության անդամներ Վարդանի և Էլմասյանի հասցեները: Օգոստոսի 13-ի N 1875 հեռագրով «Կարոն» հաղորդում էր Մեղավորյանին նշյալ Խեչո Կևորկովի ձերբակալման մասին: Մեղավորյանի այդ կուսակցական գործունեությունը հաստատվել է և այլ գրավոր փաստաթղթերով: Այսպես, 1906 թ. նոյեմբերի 30-ին Արևելյան Բյուրոյի անդամ Ահարոնյանը Բյուրոյի կնիքով հանձնարարական է ուղարկել Սաքո Մեղավորյանին նրա կողմից Մխիթարյանցից և Սևբուրակից կուսակցական զենքը հետ վերցնելու մասին: 1907 թ. մարտի 14-ին բժիշկ Մնացականյանցը դիմել է Մեղավորյանին՝ խնդրելով իրեն Գոֆանի օկրուգում կուսակցական բժիշկ նշանակել, իսկ «Անմեղյան», «Անմեղավոր», «Մեղավոր», «Արտազյան» (Սաքո Մեղավորյանի կուսակցական ծածկանունները) գրառմամբ գրությունները Թիֆլիսում, Երևանում, Ղարաքիլիսայում կուսակցական պահեստների վարիչներ «Լիպարիտի», «Արաբոյի» և «Քեռու» անուններով վկայում են զենքի, ռումբերի, դաշույնների, վառոդի, փամփուշտների հսկայական քանակի մասին, որ ստացվել են 1906-1907 թթ. Մեղավորյանի տրամադրության տակ՝ իր հրամանատարությամբ գործող ջոկատի զինման համար: Դրանից զատ, Կարսի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեների հաշվետվություններից երևում է, որ 1906 թ. հուլիսի 2-ին Կարսի կենտրոնական կոմիտեի անդամ Ղարիբովը Մեղավորյանին է հանձնել 788 ռուբլի 04 կոպեկ կուսակցական գումար, իսկ

30 Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) (12.01.1867- 23.09.1914) – ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: Խանասորի արշավանքի մասնակից: 1905-1906 թթ. եղել է Երևանի նահանգի ինքնապաշտպանության ղեկավար:

31 Խոսքը Սևքարեցի Սաքոյի մասին է: Տեղի է ունեցել նրա «Անմեղյան» կամ «Անմեղ» կեղծանվան շփոթումը ազգանունի հետ: Բնականաբար՝ տեղեկությունները վերաբերում են 1906-1907 թթ., այսինքն Երևանում 1908 թ. Սաքոյի հանկարծահաս մահվանը նախորդած տարիներին:

նոյեմբերի 29-ին՝ 200 ռուբլի (բնագիր գործի թերթեր 475, 826 հակ., 1010 հակ., 1012 հակ., 1015 հակ., 1018 և հակ., 1021-1022, 1026 հակ., 2206-2207, 2312, 3524, 2326, 2349 հակ., 2364, 3540 և հակ., 2382 հակ., 3576, 3581, 3585, 3588, 3592-3595, 3602, 3605, 3608-3616, 3574, 3576, 3589-3592, 3596 և հակ., 3603-3608, 3611, 3616 և 4498):

ՄՈՒՐԱԴ[32] – «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհրդի անդամ և կուսակցական զենքի պահապան: Դատելով Բյուրոյի հաշվետվություններից՝ 1906-1907 թթ. նրա մոտ պահպանության տակ է գտնվել զենքի, ատրճանակների, փամփուշտների, վառոդի և այլնի մեծ քանակություն: Դրանից զատ, ըստ նույն հաշվետվության, 1906 թ. նրան կուսակցական կարիքների համար հանձնվել է 1338 ռուբլի, իսկ ծախսվել է 1070 ռուբլի (նրա մոտ 2349 հակ., 2354, 2385-2386, 3555-3561 հակ., 2386-2390, 3592 հակ., 3610):

ՍԵՊՈՒՀ[33] – «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհրդի անդամ: 1906-1907 թթ. Կորյունի [վարդապետ] հետ եղել է Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ: Հաշվետվություններից երևում է, որ 1906 թ. հոկտեմբերի 19-ին Արևելյան Բյուրոյի կողմից նա Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի նախագահ Սարգիս Մանասյանցին[34] կուսակցական կարիքների համար փոխանցել է 500 ռուբլի, իսկ օգոստոսի 30-ին՝ Մեղավորյանի հանձնարարականով, Երևանի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների պետ «Արսենը» Սեպուհին պահպանության է հանձնել կուսակցական զենք (բնագիր գործի թերթեր 2349 հակ., 2354 հակ., 3546-3547 հակ., 3592 հակ., 3599 հակ. և 4497):

Գ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ, ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ ԱՐՄԵՆԱԿ ՆԻԿՈԼԱՅԻ – ուսանողական կազմակերպության անդամ: «Խեչո» գրքույկով[35] կուսակցության անդամ: Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Արամ Չինչինյանի 1907 թ. հունիսի 18-ի N 1603 գաղտնի հեռագիրը Նախիջևան-Երևանսկի[36] Շահնազարովին-«հաղորդել հանգուցյալի եղբոր սպանության մեջ ահաբեկիչ Խաչատուր Ասլանյանցի մասնակցության վերաբերյալ» (բնագիր գործի թերթեր 475, 825, 1563 և 2360):

ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՀԱՆ ՄԱԿԱՐԻ – բժիշկ, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ: Ըստ «Խեչոյի» (Խաչատուր Կևորկով) հուշատետրի նշվում է որպես անվանի կուսակցական գործիչ: Թիֆլիսում կուսակցական գաղտնի «Հերմես» տպարանի բաժնետերերից, ինչի մասին վկայում է կուսակցության անդամ Առաքելյանի՝ Թիֆլիսից 1907թ. հուլիսի 28-ի N. 14121 հեռագիրը Պյատիգորսկ՝ բժիշկներ Բուդուղովին և Արծրունուն նշյալ տպարանի լուծարման առթիվ (բնագիր գործի թերթեր 475, 1014 հակ., 1028 հակ., 2321, 2337, 2360 հակ.):

ԱԲՈՎՅԱՆ ԼԵՎՈՆ ՎԱՐԴԱՆԻ[37]– ազնվական, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ: Կուսակցական «Խարիսխ», «Ժամամակ», «Ժայռ», «Երկիր» և այլ թերթերի աշխատակից: Նրա գաղտնի «Թիֆլիս, փոստարկղ N 23» հասցեն հայտնաբերվել է Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանի մոտ: «Հովիվ» (Նալբանդի կենտրոնական կոմիտեի անդամ Ղարագյոզյան) ստորագրությամբ 1907թ. հոկտեմբերի 7-ի նամակը

32 Սեբաստացի Մուրադ (Խրիմյան) (1874, գ. Կովտուն, Սեբաստիա-4.08.1918) – հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: 1905-1906 թթ. Զանգեզուրի ինքնապաշտպանության մասնակից: Զոհվել է Բաքվի հերոսամարտի օրերին:

33 Սեպուհ (Արշակ Ներսիսյան) (1872-1940) – ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: 1904 թ. Սասունի ապստամբության և կամավորական շարժման մասնակից: ՀՅ Խորհրդարանի անդամ:

34 Մանասյան Սարգիս (՞-1920) – ՀՅԴ նշանավոր գործիչ: Ծնվել է Չարդախլուում: Լիժինյան գործով ձերբակալվել է Ռոստովի բանտում, ապա դատապարտվել տաժանակիր աքսորի մինչև 1916 թ.: 1918թ. մայիսին մասնակցել է Ղարաքիլիսայի հերոսամարտին: 1920 թ. որպես ՀՅԴ լիազոր մեկնել է Դիլիջան՝ բանակցելու բոլշևիկների հետ, սակայն ձերբակալվել է և ուղարկվել Բաքու, ապա աքսորվել Նարգեն կղզի, ուր գնդակահարվել է:

35 Նկատի ունի դատական որոշման մեջ բազմիցս հիշատակվող Խեչոյի հուշատետրը:

36 Նկատի ունի Հին կամ Արաքսի Նախիջևանը:

37 Աբովյան Լևոն Վարդանի (1885-1951) – թարգմանիչ: Ծնվել է Երևանում: Խ. Աբովյանի թոռն է: Ավարտել է էջմիածնի Գևորգյան ճեմարանը, աշխատել ուսուցիչ: Եղել է «Հորիզոն»-ի սրբագրիչ-թարգմանիչը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում, Պետհրատում:

Դոնի Նախիջևանից Թիֆլիս՝ Լևոն Աբովյանին. «Հայտնել կուսակցության անդամ «Միերյանին»[38] 1907 թ. դեկտեմբերին Դոնի Նախիջևանում և Ս. Պետերբուրգում առաջիկա կուսակցական ժողովների մասին» (բնագիր գործի թերթեր 817 հակ., 809, 820, 1935, 2018, 2320 հակ., 2360):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ[39] (կուսակցական ծածկանունները՝ «Ա. Հայկունի», «Դարբին Ռուբեն») – Մոսկվայի կայսերական համալսարանի ուսանող-իրավաբան, Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի նախագահ: Նշյալ կոմիտեի 1906 թ. հուլիսի 17-ի և 18-ի նիստերի արձանագրություններից երևում է, որ «Դարբին Ռուբենի» նախագահությամբ այդ նիստերում որոշվել է ճշմարտացի հեղափոխական-կուսակցական քարոզչության, ռուսական բանակի կազմում գտնվող հայ զինվորների շրջանում «Դաշնակցություն» կուսակցության ռազմական հեղափոխական միություն» անվամբ հեղափոխական բջիջների կազմակերպման և Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի շրջանի անդամների զինման համար 15.000 ռուբլի հատկացման մասին: Համաձայն այդ որոշման, «Դարբին Ռուբենը» 1906 թ. հուլիսի 19-ին հաղորդագրություն ուղարկեց Արևելյան Բյուրոյի անդամ «Միերյանի» հասցեով՝ նշյալ կոմիտեի շրջանի հայկական դպրոցների համար ուսուցիչ-քարոզիչների շուտափույթ ուղարկման մասին (բնագիր գործի թերթեր 3585-3588, 3588 հակ., 3589, 5203-5204): Արտաշես Չիլինգարյանը եղել է Թիֆլիսի, ապա Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեներին կից ահաբեկիչների ղեկավար: Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կուսակցության անդամ Սարգիս Մարգարյանցի ստորագրությամբ 1906 թ. ուղարկված կուսակցական նամակներից երևում է, որ 1906 թ. «Հայկունին» Թիֆլիսի նահանգի Կումիս գյուղում վստահելի անձանց կուսակցական զենք է բաժանել, իսկ 1907թ. հունիսի գաղտնի հեռագրով հաստատվել է, որ «Հայկունին» Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ, մահապատժի իրականացման համար, ահաբեկիչների հետ մասնակցել է «Միհրանի» հետապնդմանը: Այսպես, կուսակցության անդամ «Արտազյանը» 1907 թ. հունիսի 5-ի N 2644 հեռագրով Դոնի Ռոստովից հաղորդել է Բյուրո (Թիֆլիս, «Ժայռ»-ի խմբագրության հասցեով)՝ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ «Լեոնիդին», կուսակցական գործերով «Ա. Հայկունու» Արմավիր մեկնելու մասին, իսկ նույն օրը Թիֆլիսից Դոնի Ռոստով հեռագրով «Լեոնիդը» (Թայիրյան) Հայկունուն հանձնարարում է Թիֆլիս վերադարձնել երեք ահաբեկիչների: «Հայկունին» Արմավիրից հունիսի 7-ի N 600 հեռագրով «Լեոնիդին» հաղորդում է ահաբեկչության ենթակա «Միհրանի» և այլոց մասին և կարգադրություն խնդրում: Թիֆլիսից նույն օրվա N 3790 պատասխան հեռագրում նա հանձնարարական է ստանում. «Չսպասելով հետագա հանձնարարություններ՝ գործել առաջին իսկ հարմար առիթով, իսկ արդյունքի մասին հեռագրել»: Նա Պյատիգորսկից Թիֆլիս հունիսի 11-ի N 1932 հեռագրով հաղորդել է հունիսի 10-ին Արմավիրում «Միհրանի» ու նրա ընկերներ Խեչո Մուխթարովի (Կոփեցի Խեչո[40]) և Վարդապետյանի նկատմամբ կուսակցության մահավճռի իրականացման առիթով հաջողված հարձակման մասին (821 հակ., 908 հակ., 1009-1010, 2360 հակ., 2382-2384,3552-3554):

ԱՐԶՈՒՄՅԱՆ (Ահրումյանց) **ՎԱՐԴԱՆ ԳԱՍՊԱՐԻ** – Բաքվի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Մեղավորյանի 1906 թ. օգոստոսի 30-ի հանձնարարականից երևում է, որ կուսակցության անդամ Սեպուհին հանձնվելիք զենքի, փամփուշտի մեջ [հանձնման] ենթակա են նաև Արզումյանի տեղ հասցրած երկու կուսակցական ատրճանակները: Թիֆլիսից Բաքու 1907 թ. օգոստոսի 15-ի N 6546 գաղտնի հեռագրով Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ «Միերյանը» Արզումյանին կուսակցական գործերով հրավիրում էր Թիֆլիս (բնագիր գործի թերթեր 2360, 1021, 2158, 3599 հակ., 4499):

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ[41] (կուսակցական ծածկանունները՝ «Յակով», «Հակոբ»,

38 Համազասպ Օհանջանյան:

39 Դարբինյան Ռուբեն (Արտաշես Չիլինգարյան) (1883-1968) – ՀՅԴ անվանի գործիչ, խմբագիր: 1914-1920 թթ. գործել է Թիֆլիսում և Բաքվում, 1920 թ. եղել ՀՀ Արդարադատության նախարարը: Բոստոնում 1922 թ. հիմնել ու մինչև մահը խմբագրել է «Հայրենիք» ամսագիրը:

40 Կոփեցի Խեչոն խմբապետ Միհրանի անմիջական թիկնապահն էր:

41 Հակոբ Չիլինգարյանը 1900-ական թվականներին եղել է Կարսի շրջանի ՀՅԴ «ճակատային գծի ղեկավար գործիչ»: Մահացել է 1912 թ. Վլադիկավկազի բանտում՝ ծանր հիվանդությունից հետո:

«Աշոտ», «Հայկունի», «Միքայել Գրիգորյան») – Կարսի, ապա Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեների անդամ և իշխանության ներկայացուցիչների ու անվանի անձանց սպանությունների գծով կուսակցության [տվյալ կոմիտեի] ահաբեկիչների ջոկատի պետ: 1906 թ. «Գագիկը» տեղեկացրել է Բյուրոյին, որ Դոնի Ռոստովից Թիֆլիս զենքի և փամփուշտների մեծ մասը տեղ է հասցվել Աշոտ Հայկունու կողմից, իսկ կուսակցության զինվորներ Վարդանյանցի և Գասպարյանցի անունով 1906 թ. օգոստոսի 1-ին «Աշոտ Հայկունի» ստորագրությամբ Կարսի կենտրոնական կոմիտեի տված վկայականից երևում է, որ Աշոտ Հայկունին նշյալ կոմիտեում նկատելի դեր է խաղացել: 1906 թ. և 1907 թ. Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի կուսակցական հաշվետվություններից երևում է, որ նա գործում մասնակցություն է ունեցել դրա գործունեությանը, ստուգելով նշյալ կենտրոնական կոմիտեի շրջանի մեջ մտնող կոմիտեների, ենթակոմիտեների և խմբերի հաշվետվությունները՝ դրանք վավերացնելով իր ստորագրությամբ և կենտրոնական կոմիտեի կնիքով: Աշոտ Հայկունին կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ Վլադիկավկազից այցելել է նրա շրջաններ՝ Ստավրոպոլ, Արմավիր, Պյատիգորսկ, կուսակցական գումարով Դոնի Ռոստովում զենք և փամփուշտ գնել, դրանք հասցնելով Վլադիկավկազի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեներին: 1906 թ. նա առաջին կոմիտեին հասցրել է 250 ռուբլու, իսկ երկրորդին՝ 400 ռուբլու զենք և փամփուշտ: Արմավիրից 1907 թ. հունիսի 10-ի N 872 հեռագրով Աշոտ Հայկունին «Թիֆլիս, Եղիգարովների գրասենյակ» հասցեով (կուսակցության Բյուրոյի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի գաղտնի հասցե) Լեոնիդ Թայիրյանին վկայում է «Միհրանի» և նրա կողմնակիցների հետապնդման մեջ իր գործուն մասնակցության մասին: Այսպես, նշյալ հեռագրում նա պահանջում է «Միհրանի», Խեչո Մուխթարովի և 15 հոգու նկատմամբ մահապատիժ իրականացնելու համար Արմավիր փոքռառու ահաբեկիչներ ուղարկել, որոնց թվում՝ «Մաչոյին» և «Սուրենին»: 1907 թ. նա [Հակոբ Չիլինգարյան] Վլադիկավկազի բանտում տիֆից մահացել է (բնագիր գործի թերթեր 824, 908, 2360 հակ., 3547-3549, 3572, 4405, 4408, 4412-4414, 4423 հակ., 4498, 5203-5204):

ՄԵԼԻՔ-ԱՅՎԱԶՈՎ ԻՎԱՆ ՎԱՍԻԼԻ (կուսակցական ծածկանունը՝ «Այվազ») – Նովոռոսիյսկի փոստ-հեռագրատան քաղաքային գրասենյակի պաշտոնյա, կուսակցության անդամ: Եղել է Վլադիկավկազ ու Բաքում զենքի և փամփուշտի տրանսպորտային ուղարկման պատասխանատու՝ դրանք պատվիրելով Մոսկվայից և այլ քաղաքներից: Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ Դոնի Ռոստովից Այվազովի միջոցով նշյալ կոմիտեին է հասցվել 1 փութ կամ 1800 հատ փամփուշտ (բնագիր գործի թերթեր 1208 հակ., 2356 հակ., 4414 հակ):

ԱՄԻՐՈՎ (Ամիրյանց) **ԱՐԱՄ ՄԻՆԱՍԻ** – Մոսկվայի կայսերական համալսարանի ուսանող, կուսակցության ուսանողական կազմակերպության անդամ, Բաքվի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների ղեկավարներից մեկը: Ահաբեկիչների ղեկավար «Թադևոսը» (Ամիրյանց) Պյատիգորսկից 1907 թ. հունիսի 24-ին նրան ուղարկել է N 4665 գաղտնի հեռագիրը. «Բժիշկ Մուրադովին 200 ռուբլի ուղարկել Պյատիգորսկ» (բնագիր գործի թերթեր 1991, 1863, 2320 հակ., 2322):

ԱՐԱԲԱՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ (կուսակցական ծածկանունը՝ «Ապառաժյան», «Գևորգ», «Վարդան») – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի և «Խարիսխ», «Ժայռ», «Փայլակ», «Ժամանակ» փակված կուսակցական թերթերի գործավարության վարիչ: 1907 թ. հունիսի 28-ին Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ և ահաբեկիչների գլխավոր ղեկավարներից «Արտավազդը» N 14200 հեռագրով Թիֆլիսից Բաքու պահանջում էր Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ Թադևոսյանից վերոնշյալ «Ապառաժյանի» անունով ուղարկել 2.000 ռուբլի կուսակցական նպատակների համար (բնագիր գործի թերթեր 1014, 2390 հակ.):

ԱՆԻՍՈՆՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄԻ – քաղքենի, Ախալցխայի կոմիտեի անդամ: 1907 թ. մայիսին ղեկավարել է կուսակցության վճռով ք. Ախալցխայում Ասլան Ասլանյանցի սպանությունը: Դրանից զատ, եղել է Թիֆլիսի և այլ կենտրոնական կոմիտեների ահաբեկիչների մատակարարը, ինչի մասին վկայում է Սաքո Մեղավորյանի 1907 թ. օգոստոսի 21-ի N 9599 հեռագիրը, որով նա Անիսոնյանին հանձնարարում էր

ահաբեկիչներ վարձել (բնագիր գործի թերթեր 1021 հակ., 1022, 1659-1660, 1208 հակ., 2320 հակ., 2395 հակ.):

ԱՎԵՏԻՍՈՎ ՀԱՋԻ ՄՈՒՂԴՈՒՍԻ ՀԱԿՈԲ (կուսակցական ծածկանունը՝ «Հաջի Հակոբ») – Բաթումի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների և զինվորների պետ: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ իր ջոկատով գործուղվել է Երևանի նահանգ թաթարների դեմ պայքարի համար: Թիֆլիսից Երևան հղված 1907 թ. օգոստոսի 23-ի N 10567 հեռագրից երևում է, որ կուսակցության Բյուրոյի անդամ «Ռոստոմյանցը» (Ստեփան Զորյան) Երևանի կոմիտեի այժմ հանգուցյալ անդամ Սուրեն Այվազյանի միջոցով պահանջել է կուսակցական գործերով անհապաղ իր մոտ ուղարկել «Հաջի Հակոբին» (բնագիր գործի թերթեր 2342, 1022 հակ., 5204):

ՀԱԿՈԲՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ ԲԱՂԴԱՍԱՐԻ – թուրքահպատակ, Բաթումի կոմիտեի անդամ: 1907 թ. հունիսի 11-ի N 1082 Նովոռոսիյսկից Սոչի և հունիսի 21-ի N 3499 Բաթումից Սոչի հղված հեռագրերից երևում է, որ Հակոբյանը կուսակցական գրագրության և մոտիկ հարաբերությունների մեջ է եղել Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ Հայկ Սողոմոնյանի հետ: Այսպես, երկրորդ հեռագրով Հայկ Սողոմոնյանը Հակոբյանից պահանջում էր Բաթում ուղարկել կուսակցության քարոզիչ, ուսուցիչ Արտաշեսին (Ռոստոմյանց) (բնագիր գործի թերթեր 1025-1026, 1034, 1208 հակ., 1357, 2320, 2360 հակ.):

ԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՐԻԿ[42] – Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ և տեղական ենթակոմիտեի նախագահ: Նրա միջոցով են կատարվել նշյալ կոմիտեի բոլոր որոշումները: Կուսակցության Բյուրոյի և կենտրոնական կոմիտեների կարգադրությամբ նրա վրա էր դրվել ահաբեկիչների վարձումը և ահաբեկչական ակտերի կատարման վայրեր ուղարկումը: Եղիգարովների գրասենյակում խուզարկությամբ Արևելյան Բյուրոյի կուսակցական թղթերի մեջ գտնվել է իր կողմից Բյուրոյին զենք, ատրճանակ և փամփուշտներ ուղարկելու մասին 1906 թ. նոյեմբերի 17-ի՝ Ազարյանի ստորագրությամբ նամակը: Դրանից զատ, նա մասնակցել է «Միհրանի» և նրա ազգականների Յալթայում հետապնդմանը, ինչի մասին վկայում է 1907 թ. օգոստոսի 10-ի N 2085 հեռագիրը, ուր Յալթայի ենթակոմիտեի նախագահ Հակոբ Խաչատուրովը («Սուսերյան») Ազարիկ Ազարյանին տեղեկացնում էր «Միհրանի» և ազգականների Յալթա ժամանելու մասին, վերջիններիս անվանելով ընդհանուր՝ «Բաբերդցի»[43] անունով (բնագիր գործի թերթեր 119 հակ., 2010 հակ., 2320-2321, 2359, 2383, 3546):

ԱԶՆԱՈՒՐՈՎ (Ազնաուրյան) **ԱՎԵՏԻՍ ԲԱՐԱԿԻ**[44] (կուսակցական ծածկանունը՝ «Արամայիս, Շապուհ») – Կարսի [կենտրոնական] կոմիտեի անդամ, դրա առանձին հանձնարարությունների կատարման պատասխանատու: Թիֆլիսից Կարս հղված 1908 թ. հունիսի 7-ի N 3610 հեռագրից երևում է, որ «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ավագ ահաբեկիչ Աբրահամ Սարգսյանցը («Ապրո») պահանջել է [նրանից] անհապաղ Բաթում ուղարկել «Հովե» («Հովո Պողոսով») ահաբեկչին (բնագիր գործի թերթեր 1846-1867, 1010, 2004 հակ., 2235, 2360):

ՀԱԿՈԲՈՎ ԱՐՄԵՆԱԿ – Երևանի օկրուգային դատարանի գրասենյակային ծառայող, Երևանի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Կարսից Դարաչիչակ[45] հղած 1907 թ. հուլիսի 2-ի N. 8 հեռագրով Հակոբովը նախազգուշացրել է կուսակցության անդամ Տիգրան Տեր-Աբրահամյանցին, որպեսզի նա միջոցներ ձեռնարկի ժամանած հակառակորդների, այսինքն՝ հին կուսակցության ներկայացուցիչների[46] դեմ (բնագիր գործի թերթեր 2196, 2345):

ԱՄԻԲԽԱՆՅԱՆՑ ՍՈՂՈՄՈՆ – կուսակցության անդամ: 1906 թ. սեպտեմբերի 23-ի նամակում նա կուսակցության Բյուրոյին և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին խնդրել է միջոցներ ձեռնարկել բանտից իր ազատման, իր քրեական գործը բարեհաջող ավարտելու օգտին դատարանի վրա ազդելու և ընտանիքին օգնելու համար, քանի որ ինքը բանտարկվել և տուժել է «Դաշնակցություն» կուսակցության մեջ գործուն մասնակցության և

42 Սա նշանավոր Ազարիկն է՝ Բաթումի վրայով ֆիդայիների Երկիր անցնելու գործի կազմակերպիչը:
43 Միհրանը ծնունդով Արևմտյան Հայաստանի Բաբերդ քաղաքից էր:
44 Խոսքը ալաշկերտցի նշանավոր հայդուկ Արամայիս Ազնավուրյանի մասին է:
45 Այժմ՝ Ծաղկաձոր:
46 Նկատի ունի միհրանականներին:

կուսակցության կողմից իր վրա դրված հանձնարարությունների կատարման համար (բնագիր գործի թերթեր 2254հակ., 2380, 3542):

ԱԽԱՀՅԱՆ – Բաքվի, ապա Ախալցխայի կոմիտեի անդամ: Մանգլիսից հղած 1907 թ. հուլիսի 7-ի N 131 հեռագրով «Ահաբեկիչ-Մարմնին» կից ավագ ահաբեկիչ «Ստեփանը» («Արտո») Ախաշյանին հայտնում էր, որ նա Բաքվից չմեկնի, այլ կարևոր հանձնարարությամբ նամակի սպասի (բնագիր գործի թերթեր 2205, 2360հակ.):

ՀԱՋԻ ԼԵՎՈՆ[47] – կուսակցական զենքի պահապան և կուսակցության զինապահեստներից մեկի վարիչ: Արևելյան Բյուրոյի 1906 թ. նոյեմբերի 4-ի հաշվետվությունից երևում է, որ նշյալ օրը Հաջի Լևոնին և «Աղեկին» ցուցակով պահպանության են հանձնվել կուսակցական զենքեր, ձիեր, փամփուշտներ և այլն: 1906 թ. դեկտեմբերի 7-ի և 8-ի Բյուրոյի հաշվետվություններում նշվում է ստացականով 21 ահաբեկչի կերակրելու համար նույն՝ Լևոնին 8 ռուբլի 30 կոպեկ տալու մասին: 1907 թ. օգոստոսի 9-ի N 131 հեռագրով «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկիչների ջոկատի պետ Սաքո Մեղավորյանը Թիֆլիսից նշյալ Հաջի Լևոնին անհապաղ կանչում էր Ախալցխա (բնագիր գործի թերթեր 2205 հակ., 3607-3608, 3609):

ԱՐԱՐԱՏՅԱՆՑ ՀՄԱՅԱԿ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից զինվոր-ահաբեկիչ: Նրա 1906 թ. նոյեմբերի 29-ի նամակը նշյալ կոմիտեին բանտից իր ազատման համար միջոցներ ձեռնարկելու խնդրանքով, ուր նա ընկել էր կոմիտեի հանձնարարությունների կատարման համար (բնագիր գործի թերթեր 2254, 2379, 3540 հակ.):

ԱՐԳՈՒՏԻՆՍԿԻ-ԴՈԼԳՈՐՈՒԿԻ ՀՈՎՍԵՓ[48] (Ուսեփ, Հովսեփ), իշխան, (կուսակցական ծածկանունները՝ «Հովսեփ», «Իշխան») – Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ: Ինչպես երևում է 1905 թ. նոյեմբերի 13-30-ի շրջանային ժողովի սղագրական արձանագրություններից նա գործուն մասնակցություն է ունեցել դրանում: 1906 թ. Երևանում լինելով «Նադեժդա» տրանսպորտային գրասենյակի վարիչ, հատուկ զբաղվել է կուսակցության կոմիտեներին զենքի մատակարարմամբ: Այսպես, օրինակ, կուսակցության Բյուրոյի թղթերից երևում է, որ 1906 թ. նշյալ Արղուտինսկուն («Իշխանին») իր հասցրած զենքի, վառոդի և փամփուշտների համար, ըստ հաշվի, վճարվել է 288 ռուբլի: Ի տես հայկական դպրոցներում քարոզչության վարման մասին կուսակցության կոմիտեների որոշման, կոմիտեների անդամները շահագրգիռ էին այն բանում, որպեսզի ուսուցիչների և այդ դպրոցների տեսուչների պաշտոններում լինեին կուսակցական գործիչները: Այդ հանգամանքով էին պայմանավորված 1907 թ. հուլիսի 8-ին և 11-ին Երևանից Թիֆլիս «Խարիսխ» կուսակցական թերթի հասցեով կուսակցության անդամ Քոչարյանցին Արղուտինսկու ուղարկած N 469, 730 հեռագրերը, որտեղ կուսակցության անդամ Սաղաթելյանին առաջարկվում էր զբաղեցնել Երևանի հայկական հոգևոր դպրոցի տեսչի ազատված պաշտոնը (բնագիր գործի թերթեր 1065 հակ., 1066, 2320 հակ., 2360 հակ., 3582, 4498, 3398 հակ., 5135-5136, 5146):

ԱՆՋԵԼՈՎ – Ախալցխայի կոմիտեի անդամ: Կուսակցության անդամ Շահպարոնովին Ախալքալակ հղած 1907 թ. մայիսի 28-ի N 527 հեռագրով նա հայտնում էր ոստիկանության պաշտոնյաների կողմից ահաբեկիչ Սերգեյ Միրաքովի սպանության մասին, ում ուղարկել էին ահաբեկչական ակտերի իրականացման համար (բնագիր գործի թերթեր 2206, 2352 և հակ., 2356):

«**ՍՏԵՓԱՆ**» (կուսակցական ծածկանունը՝ «Արտո», «Արտյուշ», «Արտուշ», «Բագրասեղով»): Խաչատուր Կևորկովի հուշատետրում որպես Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից ջոկատի գլխավոր ահաբեկչի և նույն կենտրոնական կոմիտեի նախագահ Սարգիս Մանասյանցի թիկնապահի՝ «Ստեփանի» անունով նշված է կուսակցական կարիքների համար 10 ռուբլու տրամադրում: Եդիգարովների գրասենյակից գտնված Բյուրոյի գրություններից և հաշվետվություններից հաստատվել է. 1. որ նշյալ «Ստեփանը» կուսակցական ռումբերի պահապան էր, քանի որ «Արշակը» իր նամակում վերոնշյալ Սաքո Մեղավորյանին խնդրում էր «Ստեփանի» հետ ու-

47 Հաջի Լևոնը ծնվել է Ախալցխայում: Եղել է զինագործ, զենք փոխադրող: 1914-1915 թթ. Սարիղամիշում և Վանում վարել է Քեռու գնդի հեծյալ խումբը:

48 Արղության Հովսեփ (1863, Սանահին-1925, Փարիզ) – ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ: Խանասորի արշավանքի մասնակից: Եղել է ՀՅ դեսպանը Պարսկաստանում:

ղարկել ռումբեր, նշելով, որ դրա ողջ պաշարը պահպանվում է միայն նրա մոտ, 2. որ 1906 թ. կուսակցական հաշվետվությունների համաձայն, նշվում է «Ստեփանի» տրամադրության տակ գտնվող հինգ ատրճանակների և նրան 1900 փամփուշտների տրամադրման մասին, իսկ 1906 թ. նոյեմբերի 30-ին – 23 ահաբեկչի երեք օր կերակրելու համար 27 ռուբլի 60 կոպեկ հատկացնելու մասին: Թիֆլիսից Մանգլիս հղած 1907թ. հուլիսի 23-ի N 9594 հեռագրով նշյալ «Արտյուշը» հարցնում է կուսակցության անդամ Հովհաննես Թումանյանցին[49], թե արդյոք վերջացե՞լ է Վահրամի (Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ Վահրամ Նալբանդյան) բանտարկության ժամկետը, ով ձերբակալվել էր Ղարաքիլիսայում հայտնաբերված ռումբի պահեստի գործով, և խնդրում է հաղորդել այդ մասին «Խարիսխ» կուսակցական թերթին: Ելիզավետպոլից հղված 1907 թ. օգոստոսի 25-ի N 2202 հեռագրից երևում է, որ նշյալ «Ստեփանը» կուսակցության մեջ նկատելի դեր է խաղացել, քանի որ Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի կարգադրիչ և գլխավոր կուսակցական գործիչ Կորյուն վարդապետը նշյալ հեռագրում կուսակցության անդամ Եղիշե վարդապետին հայտնում էր «Ստեփանի»՝ Ելիզավետպոլ ժամանման մասին, ուր նա պետք է ապրեր միայն տասը օր (բնագիր գործի թերթեր 181-187, 2325 հակ., 2361, 1017, 3608, 3608 հակ., 3809, 3614, 2202 հակ., 4499):

ԱՂԱՄԱԼՈՎ ՄԿՐՏԻՉ (նույն ինքը՝ Աղամալյան, Մելիք-Աղամալով) – Երևանի նահանգի Պարագա գյուղի բնակիչ, Բաքվի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների ջոկատի պետ: 1907 թ. հոկտեմբերին ողջ կուսակցության ահաբեկիչների գլխավոր պետ «Դումանի» կարգադրությամբ, Թիֆլիսի և Բաքվի կենտրոնական կոմիտեների ահաբեկիչների ջոկատով, ժամանել է ք. Եկատերինոդար տեղի բանտից ավագ ահաբեկչի[50] փախուստի կազմակերպման համար, ինչի համար նրան բաց էր թողնվել 6000-ից 10.000 ռուբլի կուսակցական գումար: Եկատերինոդար ժամանելով, նա «Նյու Յորք» հյուրանոցում խորհրդակցել է տեղի կոմիտեի անդամ, երդվյալ հավատարմատարի օգնական Նիկոլայ Սաթունյանի [և նրա] գլխավորած կոմիտեի անդամների հետ: Նույն թվի նոյեմբերի 26-ին կաշառքի շնորհիվ նրանց հաջողվել է Եկատերինոդարի մարզային հիվանդանոցին կից բանտային բաժանմունքից կազմակերպել նշյալ Խեչոյի փախուստը (բնագիր գործի թերթեր 178, 2351 հակ., 2364 հակ., 2372 հակ., 2471 հակ., 2472):

ԱԼՈՅԱՆՑ ԹՈՐՈՍ[51] – Երևանի (նախկինում՝ Բաքվի) [կենտրոնական] կոմիտեի անդամ: «Ֆարհադի» (Սարգիս Օհանջանյան[52]) Թիֆլիսից Երևան հղած 1907 թ. հունիսի 12-ի N. 5864 գաղտնի հեռագիրը Թորոս Ալոյանցին, ըստ որի կուսակցության հակառակորդներ «Միհրանը», Կոփեցի Խեչոն (Խեչո Մուխթարով) և Վասիլը (Վասիլի Շահնազարով) սպանված են (բնագիր գործի թերթեր 1011, 2364):

«**ԱՐՍԵՆ**» – Երևանի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների պետ և կուսակցական զենքի պահապան: 1906 թ. Բյուրո ուղարկված կուսակցական հաշվետվության մեջ նշված է նրան հանձնված Բորխարդ համակարգի ատրճանակ: Բյուրոյի թղթերից երևում է, որ «Արսենը» կուսակցության մեջ զբաղեցրել է «օկրուգի պետ» կոչվող պաշտոն: Այսպես, Ս. Մեղավորյանը 1906 թ. օգոստոսի 30-ին «օկրուգի պետ Արսենին» հանձնարարում է «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհրդի անդամ

49 Հովհաննես Թումանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2009, N 1, էջ 155-172:

50 Նկատի ունի Մկրտիչ Աղամալյանի (Սարհատ) գործունեությունը՝ Եկատերինոդարի բանտից Դաշնակցական Խեչոյի փախուստի կազմակերպումը: Որոշման մեջ հիշատակվող Խեչո Ամիրի (ռուսերենում՝ Ամիրով) Կևորկովը Դաշնակցական Խեչոն է (Խաչատուր Ամիրյան, 1872-1915), որին չպետք է շփոթել քիչ անց՝ 1910-ին ցարական բանտում նահատակված Սարբազ Խեչոյի հետ (1874-1910):

51 Ալոյան Գալուստ Հակոբի – ազգային-ազատագրական պայքարի հայտնի գործիչ: Կրել է «Թորոս», «Դարվիշ» հեղափոխական կեղծանունները: Ծնվել է 1864 թ. Երևանում, ավարտել տեղի ծխական դպրոցը, ապա մի քանի տարի աշխատել Տուլայի հանրահայտ զինագործարանում: 1890 թ. Թիֆլիսում հիմնել է զինագործարան, զենք տրամադրել Ս. Կուկունյանին: Եղել Մրգաստանի (Երևան) Կենտրոնական կոմիտեի ղեկավար դեմքերից մեկը: Թավրիզում հիմնել է ՀՅԴ «Խարիսխ» զինագործարանը, եղել է Խանասորի արշավանքի գլխավոր զինագործը: 1908 թ. մասնակցել է Իրանական հեղափոխությանը, ապա գործել է Բայազետում, ուր և դավադրաբար սպանվել է երիտթուրքերի կողմից 1914 թ. կեսերին՝ Կովկաս անցնելու փորձի ժամանակ: Գալուստ Ալոյանը «Կարկուտ տեղաց Խանասորա դաշտումը» երգի հեղինակն է:

52 Սարգիս Օհանջանյանը (1869-1918) ծնվել է Վաղարշապատում: ՀՅԴ գործիչ Ատրպատականում, ապա՝ Ագուլիսում և Երևանում: Մասնակցել է Խանասորի արշավանքին: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ եղել է Երևանի ուժերի պետը: 1918 թ. Երևանի Հատուկ կոմիտեի, ապա՝ ՀՀ ՆԳՆ գործավար: Մահացել է Երևանում բծավոր տիֆից:

Սեպուհին հանձնել իր մոտ գտնվող 30 զենքը, 16 ատրճանակը, 5 թուրը և 2300 փամփուշտը (բնագիր գործի թերթեր 2359 հակ., 2385-2386, 3555-3556, 3597 հակ., 3599 հակ.):

ԱԹԱՅԱՆՑ (Առստամյանց) **ՍԱՐԳԻՍ ՄՈՒԽԱՅԵԼԻ** (Մուսայելի) – Շուշիի գավառի Չանախչի գյուղում՝ Բաքվի կենտրոնական կոմիտեից գործուղված Ղազար Ամիրյանի գլխավորությամբ, «Դաշնակցություն» կուսակցության օգտին տեղական բնակիչներից հարկադիր դրամահավաք է կատարել՝ չվճարողներին ծեծի և տանջանքների ենթարկելով: Ղազար Ամիրյանի բնակարանի խուզարկության ժամանակ գտնվել է մեկ կուսակցական զենքի և 120 փամփուշտների ստացման մասին՝ Աթայանցի ստացականը (բնագիր գործի թերթեր 2508-2517, 2557-2558 հակ.):

ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆՑ ԳԵՎՈՐԳ – «Դավիթ Անհողին» ենթակոմիտեի զինվորների պետ (Թիֆլիսի նահանգի Դավիթ Անհողին գյուղում): Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին ուղղված Դավիթ Անհողինի ենթակոմիտեի 1906 թ. փետրվարի 22-ի հաղորդագրության մեջ նշվում է, որ ենթակոմիտեի զինվորների պետ նշանակված Գևորգ Հարությունյանցը կազմակերպել է զինվորների նոր խումբ և նրանց զինվորական հնարքներ է ուսուցանում (բնագիր գործի թերթեր 2379, 3540):

ԵՂԻԵՎ (ծածկանունը՝ «Արաբո») – կուսակցական զինապահեստներից մեկի պետը: Եղիգարովների գրասենյակում խուզարկության առգրավված Բյուրոյի փաստաթղթերի մեջ գտնվել են «Անմեղյան» ստորագրությամբ 18 գրություններ իր կողմից 1906 թ. «Արաբոյից» կուսակցական զենքի, ատրճանակների, ռումբերի և փամփուշտների ստացման մասին: «Անմեղյանի» մի գրություն՝ «Արաբոյից» Նագան համակարգի 50 ատրճանակների ստացման, «Սաքո» (Մեղավորյան) ստորագրությամբ երկու գրություն՝ «Արաբոյից» ռումբի և փամփուշտների ստացման, «Արաբոյի» երկու գրություն՝ կուսակցության կարիքների համար իր պահպանած ատրճանակների և փամփուշտների հանձնման վերաբերյալ (բնագիր գործի թերթեր 3581, 3585, 3592, 3594, 3594 հակ., 3602, 3610 հակ., 3616, 3574, 3575, 3591-3593, 3608, 5203-5204):

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՃԱԿՐԱՏ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից 2-րդ հարյուրյակի զինվոր: Իրեն նպաստ տալու մասին նրա գրավոր դիմումը Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին (բնագիր գործի թերթեր 3574 հակ.):

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՆՈ – նույնը, ինչ և Առաքելյան Ճակրատը (բնագիր գործի թերթեր 3574 հակ.):

ԲԵՐԲԵՐՅԱՆ (Բերբերով) **ՄԻՆԱՍ ԻՎԱՆԻ**[53] – Էջմիածնի հայկական հոգևոր ճեմարանի տեսուչ, իրավաբանության թեկնածու, կուսակցության անվանի անդամ: 1906-1907 թթ. եղել է Նալբանդի (Դոնի Ռոստով-Նախիջևան) կենտրոնական կոմիտեի անդամ: 1906-1907 թթ. օգնել է Այսրկովկասում կուսակցական զենքի տրանսպորտային ուղարկման պատասխանատու Հակոբ Չիլինգարյանին՝ վերառուղարկել դրանք կուսակցության կենտրոնական կոմիտեների տրամադրության տակ: 1906 թ. Ռոստով և Նախիջևան քաղաքներում Համազասպ Նորհատյանցի[54] և երդվյալ ատենակալներ Գևորգ Չուբարյանի[55] ու Գրիգոր Չալխուշյանի[56] հետ գլխավորել է նշյալ կոմիտեն: Բերբերովի ու Նորհատյանցի նախաձեռնությամբ Դոնի Նախիջևանում՝ տեղի ճեմարանում և կուսակցության ֆինանսավորած հայկական «Նոր կյանք» թերթի խմբագրությունում, նշյալ ժամկետում, տեղի են ունեցել մի քանի կուսակցական ժողովներ, ապա նրանց կողմից, մահվան սպառնալիքի տակ, այդ քաղաքներում հարուստ հայ վաճառականներից հարկադիր դրամահավաքներ են կատարվել և հավաքված գումարից 57.000 ռուբլին ծախսվել է Անդրկովկասի համար Ավստրիայում զենք գնելու նպատակով (բնա-

53 Մինաս Բերբերյան (1871-1919) – ծնվել է Նոր Նախիջևանում: Նալբանդի (Դոնի Ռոստովի) կենտրոնական կոմիտեի անդամ: 1914 թ. ընտրվել է Ազգային Բյուրոյի քարտուղար: Եղել է ՀՀ պետական վերահսկիչը: 1919 թ. մահացել է Երևանում բծավոր տիֆից:

54 Նորհատյան Համազասպ (?-1920) – կուսակցական, պետական գործիչ: Ծնվել է Կարսում: ՀՅԴ անգամ՝ 1890 թվականից: Հայաստանի Հանրապետության ժամանակ՝ Կարսի քաղաքապետ, գերվել է թուրքերի կողմից և կախաղան բարձրացվել:

55 Չուբարյան Գևորգ (1864-1930) - գրող, հրաբարակախոս: Նոր Նախիջևանի հայկական թատրոնի կազմակերպիչներից, պիեսների հեղինակ:

56 Չալխուշյան Գրիգոր (1861-1931) – հասարակական, մշակութային գործիչ: Ծնվել է Նոր Նախիջևանում: Հայ իրականության հետ կապված մի շարք գրքերի հեղինակ:

գիր գործի թերթեր 424-425, 1213, 2169-2170, 2179-2180, 2321 հակ., 2324, 2345, 2456 հակ., 2360 հակ.):

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ (նույն ինքը՝ «Հունան» և «Արշակ Բաթովյան[57]») – թուրքահպատակ, կուսակցության անդամ: Առգրավված հեռագրերից երևում է, որ նա գաղտնի գրագրության մեջ է եղել և [կատարել է] ք. Յալթայում «Միհրանի» և նրա ազգականների նկատմամբ կուսակցության մահապատժի իրականացման գծով ահաբեկչական ջոկատների ղեկավարներ «Կարոյի» և «Վարդանի» հանձնարարությունները: Նրա վրա կուսակցության այլ անդամների կողմից էլ են հանձնարարություններ դրվել: Այսպես, Նովոռոսիյսկից Դոնի Ռոստով «Հայկական կաթնատուն» գաղտնի հասցեով հղված 1907թ. մայիսի 26-ի և հունիսի 8-ի N 3015 և N 770 հեռագրերից երևում է, որ Բաթումի կոմիտեի անդամ Հայկ Սողոմոնյանը նրան շտապ կանչել է Նովոռոսիյսկ, իսկ Անապայից Դոնի Ռոստով հղված նույն թվի հուլիսի 8-ի N 327 հեռագրով կուսակցության անդամ Տիգրան Մեսրոպյանը Մանուկյանին տեղեկացնում էր կուսակցության անդամ, հոգևորական Պողոս Տեր-Մանասյանցի Անապա չժամանելու մասին: Նովոռոսիյսկից Բաթում «Ս. Պետերբուրգյան կաթնատուն» գաղտնի հասցեով հղած նույն թվի օգոստոսի 8-ի N 982 հեռագրով Մանուկյանը Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ Արմեն Նավյանին տեղեկացնում էր ահաբեկիչների ղեկավար «Վարդանի» Նովոռոսիյսկ ժամանման մասին: Յալթայից Նովոռոսիյսկ հղված օգոստոսի 21-ի N 4828 հեռագրով ահաբեկչական ջոկատի ղեկավար «Կարոն» Մանուկյանին հանձնարարել է դիմավորել ջոկատին օգնության եկող ահաբեկչին (բնագիր գործի թերթեր 474-476, 598 հակ., 1025-1026 հակ., 1662, 2007 հակ., 2323):

ԲՈՒԴՈՒՂՈՎ (Բուդաղյան) **ԱՐՏԱՇԵՍ ԻՎԱՆԻ[58]** – բժիշկ, կուսակցության անվանի անդամ և կուսակցական գործերում գործուն մասնակցություն ունեցած [անձ]: Խեչո Կևորկովի հուշատետրում բժիշկ Բուդուղովը նշվում է որպես «Դաշնակցություն» կուսակցության անդամ, կուսակցական «Հերմես» տպարանի բաժնետերերից մեկը մինչև դրա՝ ներկա գործով մեղադրյալ Սարգիս Եղիգարովի սեփականություն դառնալը: Թիֆլիսից Պյատիգորսկ կուսակցության անդամ Համբարձում Առաքելյանը[59] 1907 թ. հունիսի 11-ին N. 5383 հեռագիրն է հղել բժիշկ Բուդուղովին «Հերմես» լուծարումից հետո իրեն հասանելիք 320 ռուբլին ուղարկելու մասին: Կուսակցության անդամներ Լիսիցյանը[60], Թումանյանը և Շանթը[61] Մանգլիսից Պյատիգորսկ հղված օգոստոսի 2-ի N 37 հեռագրով բժիշկ Բուդաղովին հայտնում էին, որպեսզի վերջինս Շխիյանցին[62] հանձնի 200 ռուբլի (բնագիր գործի թերթեր 475, 909, 1010, 10-14, 1208 հակ., 2205, 2321, 2360 հակ.):

ԲԻՋ-ՕՂԼԻ ԽԱՉԱՏՈՒՐ (կուսակցական ծածկանունները՝ «Բիջ-օղլի», «Բաջի-օղլի») – «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ահաբեկիչ: 1907 թ. ահաբեկչական ակտերի կատարման նպատակով ուղեկցել է Խեչո Կևորկովին՝ նրա կուսակցական գործուղումների ժամանակ: Դրանից զատ, մասնակցել է Ալեքսանդր Շարաֆյանի գլխավորած ահաբեկչական ջոկատին և Արմավիրում ու Պյատիգորսկում «Միհրանի», Վարդապետյա-

57 Միգուցե՝ «Բաբայան» կամ «Բաբերյան»:

58 Բուդուղյան Արտաշես (1864-1915) – բժիշկ, հասարակական գործիչ, ապրել է Պետերբուրգում:

59 Համբարձում Առաքելյանը ՀՅԴ անդամ չի եղել և ցարական պաշտոնյաների այս սխալմունքի մեջ, թերևս, իր դերն է խաղացել այս հակադաշնակցական գործչի դրսևորած ավելորդ ագահությունը:

60 Լիսիցյան Ստեփան Դանիելի (22.09.1865, Թիֆլիս-4.01.1947, Երևան) – մանկավարժ, բանաստեղծ, պատմաբան, ազգագրագետ: 1894-ից դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: 1905-1916 թթ. հրատարակել է «Դասկեր» մանկական ամսագիրը: Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի հետ կազմել և հրատարակել է «Լուսաբեր» հայոց լեզվի դասագիրքը: 1928-1947 թթ. եղել է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի վարիչը:

61 Շանթ Լևոն Սեղբոսի (1869, Կ. Պոլիս-29.11.1951, Բեյրութ) – անվանի գրող, մանկավարժ, ազգային-քաղաքական գործիչ: 1899-1909 թթ. դասավանդել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց և Երևանի թեմական դպրոցներում: Մասնակցել է «Վերնատան» աշխատանքներին: 1911-ից հետո գործել է Կ. Պոլսում, 1920 թ. գլխավորել է ՀՅ պատվիրակությունը Մոսկվայում:

62 Շխյան (Շխյանց) Սիմոն Գերասիմի (1865-1947) – 1890-ական թվականներից՝ Ժնևում սովորելու շրջանից, ակտիվորեն մասնակցել է ՀՅԴ գործունեությանը, եղել է Ռոստոմի մտերիմ ընկերը: Տե՛ս «Ռոստոմ: Նամականի». Մահուան ութսունամեակին առթիւ, Պէյրութ, 1999, էջ 9-11: Հետագայում՝ Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, զբաղվել գրական, թարգմանչական աշխատանքով: Ձերբակալվել է լիժինյան գործով:

նի և այլոց հետապնդմանը: «Միհրանի» վրա 1907 թ. հունիսի 10-ին «Բիջ-օղլիի» հարձակումը հաստատվում է ահաբեկչական ջոկատներից մեկի հրամանատար «Հայկունիի» հունիսի 7-ի N 600 հեռագրով (բնագիր գործի թերթեր 181-187, 823 հակ., 2325, 2359):

ԲԵՋԱՆՅԱՆՑ ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐԻ – Ս. Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանող, Շուշիի հոգևոր ճեմարանի ուսուցիչ, Շուշիի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Արմավիրից կուսակցության անդամ Գյաջեցյանը 1907 թ. օգոստոսի 6-ի N. 475 գաղտնի հեռագրով Արսեն Բեջանյանցին՝ նրա դատաքննության հետ կապված, հայտնում էր, որ «ձգտում ենք [գործն ավարտել] առանց քննության, իսկ մանրամասները [կհայտնեմ] նամակով» (բնագիր գործի թերթեր 826, 1019 հակ., 1749, 2001, 2005 հակ., 2321 հակ., 2361):

ԲԵԶԵՆԿՅԱՆ – կուսակցության անդամ: Բժիշկ Մուրադովը («Մրմուռյան») Պյատիգորսկից Թիֆլիս հղած 1907 թ. հունիսի 15-ի N 2715 գաղտնի հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ «Մերյանին» հայտնում էր, որ Արմավիրի կոմիտեն օգնություն է խնդրում և անհրաժեշտ է նրան օգնել գումարով ու ահաբեկիչներով, քանի որ «Միհրանը» առողջացել է և կուսակցության դեմ քարոզչություն է մղում, և գումարը հարկ է ուղարկել Բեզենկյանին (բնագիր գործի թերթ 909):

«**ԲԱԽՇԻ**» – Բաքվի կենտրոնական կոմիտեի ահաբեկիչ: «Կարոյի»՝ Պյատիգորսկից Բաքու հղած 1907 թ. հուլիսի 9-ի N 2187 հեռագիրը ահաբեկչական ջոկատի անդամ Հարությունն Մայիլյանցին (նույն ինքը՝ Աբրահամ Սարգսյան), որպեսզի նա հաղորդի բժիշկ Մուրադովին «Բախշիի» գտնվելու վայրի մասին, իսկ Պյատիգորսկից Բաքու հղած հուլիսի 12-ի N 3071 հեռագրով նույն Մայիլյանցից «Բախշին» պահանջում էր իրեն փաստաթղթեր ուղարկել: Բախշին «Կարոյի» ջոկատի կազմում մասնակցել է «Միհրանի» հետապնդմանը (բնագիր գործի թերթեր 910, 2325, 2359 հակ.):

ԲԶՆՈՒՆԻ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՐԳԻՍԻ – պաշտոնաթող պաշտոնյա, Կարսի [կենտրոնական] կոմիտեի անդամ: 1907 թ. օգոստոսի 7, 8, 10, 11-ի N. 2535, 2935, 472, 405 հեռագրերից երևում է, որ նա միջոցներ է ձեռնարկել Կարսի հայկական քաղաքային դպրոցներում կուսակցության հետևյալ անդամներին ուսուցչի և ուսուցչուհու տեղ տրամադրել. 1. Հյուսիսային Կովկասում ահաբեկչական ջոկատի պետ Ալեքսանդր Շարաֆյանին, 2. Անահիտ Փարսադանյանին (բնագիր գործի թերթեր 1018 հակ., 1019, 1062 հակ., 1208 հակ., 1431, 2004 հակ., 2005, 2321 հակ., 2361):

ԲԱԴԱԼՅԱՆՑ ՎԱՆՈ – կուսակցական զենքի պահապան: Մինչև կենտրոնական կոմիտեի պահանջը՝ «Չեչենից» զենքի, փամփուշտների, ատրճանակների պահպանության ընդունման 1906 թ. ապրիլի 10-ի ստացականը (բնագիր գործի թերթ 3574 հակ.):

ՎԱՀԱՆՅԱՆ ՎՌԱՄ (նույն ինքը՝ «Վռամբաշ», կուսակցական ծածկանունները՝ «Համո», «Գոմս») – Թիֆլիսի կոմիտեի անդամ, կուսակցական զենքի պահապան: Կուսակցության Արևելյան Բյուրոյի 1906 թ. հաշվետվությամբ Վահանյանի («Գոմս») մոտ նշված է պահպանության մեջ գտնվող 13 զենք, 8 ատրճանակ, 800 փամփուշտ, 11 ֆունտ վառոդ: «Համո» ստորագրությամբ նրա գրությունը, որպեսզի «Մանասը» (Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի նախագահ Սարգիս Մանասյանց) որպես ճանապարհածախս կուսակցական գումարից զինվորին 5 ռուբլի տա: Ահաբեկչական ջոկատի պետ «Վարդանը» Նովոռոսիյսկից 1907 թ. հունիսի 13-ի N 1234 հեռագրով Վահանյանին հաղորդում էր կուսակցական գործերով զբաղված լինելու պատճառով իր մոտ մեկնելու անհրաժեշտության մասին (բնագիր գործի թերթեր 1026, 2321 հակ., 2345 հակ., 2361, 2385-2386, 3555-3556, 3584 հակ., 4497-4498 հակ.):

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՂԱԶԱՐ – Բաքվի կենտրոնական կոմիտեի շրջանի Ալազանի ենթակոմիտեի զինվոր: Կուսակցության Բյուրոյին 1907 թ. դեկտեմբերի 1-ի հաղորդումը, ըստ որի զինվոր Ղազար Վարդանյանը զինվորական ծառայության[63] ժամանակ [ՀՅԴ] կուսակցական գործին ցույց է տվել իր հավատարմությունը և բազմիցս տուժել պետական իշխանության ներկայացուցիչների կողմից (բնագիր գործի թերթ 3571 հակ.):

ՎԱՐԴԱՆՅԱՆՑ ՄԻՆԱՍ – Կարսի կենտրոնական կոմիտեի զինվոր: Կենտրոնական կոմիտեի անդամ «Աշոտ Հայկունու» ստորագրությամբ և կնիքով հաստատված 1906 թ.

63 Նկատի ունի ցարական բանակը:

օգոստոսի 1-ի վկայականը կուսակցության Բյուրոյին, ըստ որի՝ զինվոր Մինաս Վարդանյանցը տուժել է պետական իշխանությունից՝ կուսակցությանը ծառայության ժամանակ (բնագիր գործի թերթ 3472):

ՎԱՐԴԱՆՅԱՆ – Բաքվի կենտրոնական կոմիտեի շրջանի 3-րդ կոմիտեի («Սև քաղաք») նախագահ: Վարդանյանի 1907 թ. դեկտեմբերի 21-ի հաղորդագրությունը Բաքվի կենտրոնական կոմիտեին, ըստ որի՝ «Սպիտակ» և «Սև» քաղաքներից [կենտրոնական] կոմիտեի պատգամավոր [անդամ] է ընտրվել կոմիտեի անդամ «Մկրտումը» (բնագիր գործի թերթ 3014 հակ.):

ԹԱԹԱՅԱՆՑ ԱՄՊՈՒՏ[64] – Ժլատի (Վլադիկավկազ) կենտրոնական կոմիտեի անդամ (կուսակցական ծածկանունը՝ «Վասյուշին») - Անդրկովկասում կենտրոնական կոմիտեների համար կուսակցական զենքի վերառուղարկման պատասխանատու (բնագիր գործի թերթեր 4412-4415 հակ., 4418 հակ., 4420):

ԹԱԹԱՅԱՆՑ ԵՐՎԱՆԴ – նույնը, ինչ որ և Ամպուտ Թաթայանցը:

ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ԱՐՏԵՄ ԽԱՉԱՏՈՒՐԻ (նույն ինքը՝ Հարություն Գրիգորյան) – Բաքվի կենտրոնական կոմիտեի ահաբեկչական ջոկատի անդամ: Այլ ահաբեկիչների հետ «Միհրանի», Հաբեթ Վարդերեսյանի և այլ անձանց սպանության համար 1907 թ. հուլիսին Բաքվից ուղարկվել է Պյատիգորսկ: 1907 թ. օգոստոսին «Կարոյի» և «Վարդանի» ղեկավարությամբ ժամանել է Յալթա՝ նշյալ սպանության կատարման համար, ինչը չի ստացվել իրենցից անկախ հանգամանքներով, քանի որ տեղական ոստիկանությունը նրանց ժամանումից մի քանի օր անց բացահայտել էր օգոստոսի 27-ին նրանց կողմից «Միհրանի» զարմիկ Գասպար Նազարովի սպանությունը, ինչի արդյունքում «Կարոյի» գլխավորությամբ ջոկատի բոլոր անդամները ձերբակալվել էին և Օդեսայի զինվորական դատարանի 1908 թ. հուլիսի 14-ի վճռով տաժանակիր աշխատանքի դատապարտվել (բնագիր գործի թերթեր 208, 455-456, 456 հակ., 464 հակ., 2357 հակ.):

ՂԱՐԻԲՈՎ ՎԱՀԱՆ (նույն ինքը՝ Ղարիբյանց) – Երևանի կոմիտեի անդամ: Մասնակցել է «Միհրանի», Վարդերեսյանի և այլոց նկատմամբ 1907 թ. օգոստոսին կուսակցության մահվան վճռի իրականացմանը, ինչի մասին վկայում են հետևյալ հեռագրերը. 1. 1907թ. հունիսի 17-ի N 8923 – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ և ահաբեկիչների ղեկավար «Արտավազդը» Թիֆլիսից Բաքում Ղարիբովին հանձարարել է միջոցներ ձեռնարկել Թիֆլիսից փախած Հաբեթ Վարդերեսյանի փնտրտուքի և սպանության համար, 2. օգոստոսի 10-ի N 1511 - Բաքումից Յալթա Ղարիբովը հարցնում է տեղի կոմիտեի անդամ Սելվիյանին. «Յալթայում են արդյո՞ք Միհրանը և նրա ազգականները», և ստանալով հաստատող տեղեկություններ՝ օգոստոսի 11-ի N 1666 հեռագրով հանձնարարում է նրան՝ «Միհրանին» և նրա ազգականներին Յալթայում բռնելու համար միջոցներ ձեռնարկել մինչև Նովոռոսիյսկից «Խեչո Կևորկովի» գլխավորած ահաբեկիչների ժամանումը (բնագիր գործի թերթեր 42, 181-187, 420 հակ., 474 հակ., 760, 1012 հակ., 1021 հակ., 1035 հակ., 1036, 2006 հակ., 2010-2011, 2321, 2325, 2361):

ՂԱՐԻԲՈՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԲԱՐՍԵՂԻ[65] (կուսակցական ծածկանունները՝ «Պիլո», «Պլո», «Պուլո») – Կարսի կենտրոնական կոմիտեի անդամ: Բնակվում է կա՛մ Կարսում, կա՛մ Ալեքսանդրապոլում՝ կուսակցական գործերով: Նրա միջոցով են Կարսի կենտրոնական կոմիտե ընդունվել մասնավոր անձանց բոլոր խնդրանքներն ու դիմումները: 1907 թ. օգոստոսի 31-ին նրա մոտ խուզարկությամբ առգրավվել են հայ յեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության 4-րդ [Ընդհանուր] ժողովի երկու տպագիր ծրագրերը: Յալթայում ահաբեկիչների ղեկավար «Կարոյի» գրության մեջ նշված է 1907 թ. հուլիսի 31-ին Համբարձում Ղարիբովին կուսակցական ծախսերի համար 10 ռուբլի գումարի հանձնումը: Եղիգարովների գրասենյակում առգրավված Բյուրոյի թղթերի մեջ կային Համբարձում Ղարիբովի ստորագրությամբ հաշվետվություններ 1906 թ. հուլիսի 12-21-ին 3551 ռուբլի 66 կոպեկ գումար կուսակցական ծախսի համար ստանալու և մնացորդ 788 ռուբլի 4 կոպեկը կենտրոնական կոմիտեի համար՝ Մեղավորյանին հանձնելու

64 Անունը ռուսերենով բառացի այդպես է գրված:

65 Սա կարսեցի համեստագործ Համբարձում Ղարիբյանն է՝ նշանավոր Պլօ թագավորը: Մալխասի խոսքերով՝ «Պլօն «գործադիր մարմին» է կուսակցութեան: Ան՝ մեծ, Պլօ՝ թագավորը», Մալխաս, Ապրումներ, Ա. հատոր, Թէհրան, 1982, էջ 348:

վերաբերյալ; 2. մայիսի 1-ի «Լեոնիդ» ստորագրությամբ (Սարգիս Մանասյանցի նոր կուսակցական ծածկանունը[66]) նամակը «Պլոյի» անունով, ըստ որի Անտառապատում[67] նոր խուզարկությամբ առգրավված կուսակցական թղթերի առթիվ անհրաժեշտ է կուսակցության անդամների համար շրջանառության մեջ դնել նոր ծածկանուններ (բնագիր գործի թերթեր 468 հակ., 475, 472, 545 և հակ., 1020 հակ., 1028 հակ., 1432, 2005, 2325 հակ., 2341 հակ., 2342, 2861, 3611 հակ., 3532, 4499):

ՀԱԼԱՋՅԱՆՑ ՊԵՏՐՈՍ ԹԱԴԵՎՈՍԻ – Եկատերինոդարի կոմիտեի անդամ: Նույն կոմիտեի անդամ Նիկոլայ Սաթունյանի հետ 1907 թ. օգոստոսին մասնակցել է «Միհրանի» հետապնդմանը: Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանը 1907 թ. օգոստոսի 1-ի N 126 հեռագրով Սաթունյանին հրահանգել է դիմավորել-հետևել «Միհրանին» և հաղորդել Եկատերինոդարով նրա անցնելու մասին (բնագիր գործի թերթեր 596, 598 հակ., 1121-1122 հակ., 1208 հակ., 2009 և հակ., 2321 հակ., 2361):

ԳԱՌՈՒՉՅԱՆ ՍԵՄԵՎՈՆ[68] (նույն ինքը՝ Գառուզով, կուսակցական ծածկանունը՝ «Սիկ») – Դոնի Ռոստով-Նախիջևանի կենտրոնական կոմիտեի անդամ: Մասնակցել է նաև Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի աշխատանքներին: 1906-1907 թթ. եղել է «Դաշնակցություն» կուսակցության ֆինանսավորած Դոնի Նախիջևանի հայկական «Նոր կյանք» թերթի աշխատակից և վարիչ, որի խմբագիրն էր Խարագյոզյանը (Խարագյոզով-Խլեբնիկով): Գրուզինյանի Վլադիկավկազ մեկնումից հետո՝ 1907 թ. հոկտեմբերին, «Նոր կյանք» թերթի խմբագրության գրասենյակում խուզարկությամբ գտնվել են կուսակցության անդամ հոգևորական Հակոբ Սառիկյանի միջոցով «Սիկին» (Սեմեվոն Գառուզյանին) հանձնելու համար 1907 թ. հոկտեմբերի 8-ի «Հովիվ» (Խարագյոզովի ծածկանունը) ստորագրությամբ երկու կուսակցական նամակները: Դրանում Խարագյոզյանը Գառուզյանին հայտնում էր խմբագրությունում ոստիկանության անհաջող խուզարկության մասին, և որ՝ նախօրոք թաքցրել էին կուսակցական թղթերը, և խնդրում էր նրան այսուհետ գրել հետևյալ գաղտնի հասցեով. «Քաղաք Դոնի Ռոստով, Ազով-Դոնյան բանկ, Նալբանդին կամ Բայդարին»: Դրանից զատ, Գառուզյանը Պյատիգորսկում մասնակցել է ահաբեկչական ակտերի կատարմանը: Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանը 1907 թ. հուլիսի 19-ի N 2099 հեռագրով Գառուզյանին խնդրում էր Դոնի Նախիջևանից անհապաղ Պյատիգորսկ ուղարկել «Դասախոս» ահաբեկչին: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված էր գեներալ Կարանգուլովի նկատմամբ ահաբեկչական ակտի կատարմամբ, ով սպանվել է հուլիսի 28-ին՝ Պյատիգորսկում (բնագիր գործի թերթեր 817 հակ., 826, 1288 հակ., 1935 հակ., 1935, 2002 հակ., 2321 հկ., 2374-2375, 1209 հայկ.):

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 316-328:
Թարգմանություն ռուսերենից:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում):

66 «Լեոնիդը» Ս. Մանասյանի կեղծանուն չէր, այլ՝ Թայիրյանի անունը:
67 «Անտառապատը» ՀՅԴ Լոռու կոմիտեի անվանումն էր:
68 «Գառուզյանը», «Գռուզինյանը», կամ «Սիկ»-ը («Սիգ»-ը) Սիմոն Վրացյանն է: Վրացյան Սիմոն (1882, գ. Մեծ Սալա, Նոր Նախիջևան-21.05.1969, Բեյրութ) - անվանի քաղաքական-պետական գործիչ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԸ

ՀՅԴ մարտական կազմակերպության անվանացանկը*

«ՎԷմ»-ի նախորդ համարում ՀՅԴ մարտական կազմակերպության անվանացանկի հրապարակումն ընդհատվեց «Սեմեվոն Գառուզյան»-ով (Սիմոն Վրացյան):

Շարունակելով Ն. Լիժինի կազմած այս ընդհանրական դատական գործի հրապարակումը, որը կարևոր սկզբնաղբյուր է Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՀՅԴ առավել ակտիվ գործիչների շրջանակը հստակեցնելու համար, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ ներկայացվող փաստաթղթում կան որոշակի հակասություններ, կրկնություններ ու դեռևս չբացահայտված կեղծանուններ:

Պատճառն այն է, որ ներկա ընդհանրական դատական գործը ներառում է ՀՅԴ Մեծ դատավարության նախօրեին ձերբակալված կամ էլ ցարական իշխանությունների ուշադրությունը գրաված և հետախուզման մեջ հայտնված դաշնակցականների անունները: Կուսակցության ակնառու գործիչների մի մասին, այնուամենայնիվ, հաջողվել է խուսափել հետապնդումներից և այդպես էլ անհայտ մնալ Օխրանայի համար: Քիչ չեն նաև մասնակիորեն բացահայտված, այսինքն՝ զանազան կեղծանունների միջոցով սեփական ինքնությունը թաքցրած անձինք: Վերջիններիս շարքում են «**Դասախոս**», «**Միհրդատ**», «**Չեչեն**», «**Բախշի**» և Ն. Լիժինի համար այդպես էլ անհայտ մնացած այլ կեղծանուններով հանդես եկած դաշնակցականները: Ներկայացվող անվանացանկում առկա են անգամ հետմահու դատապարտվածների կեղծանուններ: Այսպես, հատկանշական է, որ 1909 թ. մարտ-ապրիլ ամիսներին ընդունված լիժինյան այս որոշման մեջ է ներառվել ժամանակին «Սաքո Մեղավորյան» կեղծանունի տակ թաքնված Սևքարեցի Սաքոն, ով դրանից մոտ 7 ամիս առաջ մահացել էր Երևանում:

Ուշադրության են արժանի նաև Ն. Լիժինի դատական որոշմանը կցված այն 46 անձանց անունները, որոնք 1905-1908 թվականներին ահաբեկման են ենթարկվել ՀՅԴ մարտական կազմակերպության կողմից: Դրանով հանդերձ, ինչպես ամբաստանյալների, այնպես էլ նրանց կողմից ահաբեկման ենթարկված լրտեսների ու մատնիչների անուններն այնքան շատ են, որ անգամ Լիժինի նման բծախնդիր քննիչը չի կարողացել բացահայտել բոլորին:

Ուրեմն, ներկայացվող ընդհանրական դատական գործը՝ որպես ՀՅԴ

* Ընդունվել է տպագրության 6.11.2011:

պատմության սկզբնաղբյուր, արժեքավոր է այլ նյութերի հետ համեմատական քննության համատեքստում, ինչը դյուրացնելու համար առավել աչքի ընկած գործիչների վերաբերյալ փաստաթղթի տողատակերում տրվել են համապատասխան բացատրություններ: Ի դեպ, վերջիններիս դատական գործերի մի մասն արդեն հրապարակվել է ՀՅԴ հայտնի գործիչների անհատական թղթածրարների տեսքով: Օրինակ՝ մեր ընթերցողներին արդեն հայտնի է, որ ցարական Օխրանայի գրություններում վկայակոչվող «Սուրվասյանց Համազասպը» Համազասպ Սրվանձտյանցն է, ուստի ներկա փաստաթղթի հրապարակման ընթացքում անխուսափելի է դարձել որոշ բացատրությունների կամ հիշեցումների կրկնությունը:

Կարծում ենք, որ հրապարակվող ընդհանրական դատական գործն ամփոփում և ամբողջացնում է ինչպես ՀՅԴ Մեծ դատավարության մեջ ներառված գործիչների, այնպես էլ նրանց ներկայացված մեղադրանքների շրջանակը՝ դրանով իսկ բացահայտելով այն իրողությունը, որ չնայած կատարված հսկայական աշխատանքին, Ն.Լիժինի գլխավորած հետաքննությանն իրականում չի հաջողվել «ջրի երես» դուրս բերել ՀՅԴ ամբողջ կառույցի, առավել ևս՝ մարտական կազմակերպության բոլոր օղակները և դրա առանցքային դեմքերի մի մասին:

Դատավարության ընթացքում ցարական ոստիկանների ու քննիչների համար որպես թիրախներ են ծառայել միայն այն դաշնակցականները, որոնց անունները հիշատակվել են առգրավված գրագրության, հեռագրերի և ամենակարևորը՝ Միհրանի տված ցուցմունքների ընթացքում: Ուստի պատահական չէ, որ 169 անձանցից բաղկացած այս ցուցակից դուրս է մնացել անգամ 1905-ին ՀՅԴ առավել մեծ աղմուկ հանած գործողության՝ նահանգապետ Նակաշիձեի ահաբեկման հեղինակը՝ Դրաստամատ Կանայանը (Դրոն):

Ավագ Ա. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

THE FILES OF THE GREAT TRIAL OF THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION

The ARF's Military Organization List

Avag A. Harutyunan

ՈՐՈՇՈՒՄ[1]

1909 թվական, մարտի 13-ից ապրիլի 20: Քաղաք Նովոչերկասկ:

Նովոչերկասկի օկրուգային դատարանին կից հատուկ կարևորության գործերով Դատական Քննիչը, դիտարկելով իր վարած նախաքննությունը հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցություն հանցավոր ընկերակցության գործով, ԳՏԱՎ.

Նախաքննության տվյալներով, բացի նախորդ որոշումներում ցույց տրված այդ կուսակցության գործիչներից, միանգամայն բացահայտվել է Արևելյան Բյուրոյի, Ահաբեկչական գործադիր խորհրդի, կենտրոնական կոմիտեների, ենթակոմիտեների և խմբերի անդամների հետևյալ կազմը.

Գ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ, ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ.

ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ՍԱՄՍՈՆ ԱԲՐԱՀԱՄԻ (կուսակցական ծածկանունը՝ «Աբրամովիչ») – Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ: Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին 110 ռուբլի և երեք ատրճանակ ուղարկելու հաշվետվությամբ «Աբրամովիչ» ստորագրությամբ 1906 թ. նրա նամակը Արևելյան Բյուրոյին: Արևելյան Բյուրոյի 1906 թ. հաշվետվության մեջ նշված է «Աբրամովիչից» 73 ռուբլի 90 կոպեկ ստանալու մասին: Պյատիգորսկից Բաքու 1907 թ. հունիսի 11-ին ուղարկված N 1934 գաղտնի հեռագրով ահաբեկիչների ջոկատի ղեկավար Հակոբ Աբովյանը[2] «Միհրանի» նկատմամբ ահաբեկչության հաջող կատարման պատճառով [sic] «Աբրամովիչին» հայտնել է ահաբեկիչ ուղարկելու անհրաժեշտության բացակայության մասին, իսկ հունիսի 15-ի N 7629 հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ և ահաբեկիչների ղեկավարներից «Արտավազդը» «Աբրամովիչին» հանձնարարել է ահաբեկիչների ղեկավար Մեղավորյանին տեղեկացնել ահաբեկիչներով և գումարով Արմավիրի ենթակոմիտեին անհապաղ օգնության շտապելու մասին (բնագիր գործի թերթեր 908 հակ., 1873 հակ., 1012 հակ., 2321 հակ., 2322, 2361, 2381, 3542 հակ., 3580, 3840-43, 3868-70, 3875, 3882):

ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ՄԿՐՏԻՉ ՆԱԶԱՐԵԹԻ (կուսակցական ծածկանունը՝ «Մկրտիչ») – Ախալցխայի կոմիտեի անդամ: Թիֆլիսից «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկիչների ջոկատի պետ Սաքո Մեղավորյանը 1907 թ. օգոստոսի 21-ի N 9599 գաղտնի հեռագրով Մկրտիչ Գրիգորյանցին հրահանգել է ահաբեկիչներ գտնել (բնագիր գործի թերթեր 1021-1022, 1659-1660, 2322, 2361):

ՂԱՐԻԲՅԱՆ ՍԱՀԱԿ (նույն ինքը՝ Սահակ Ղարիբի Հարությունյան) – Կարսի կոմիտեի անդամ: Ահաբեկիչների պետ Ալեքսանդր Շաբաֆյանը Թիֆլիսից 1907 թ. օգոստոսի 24-ի N 11039 գաղտնի հեռագրով Սահակ Ղարիբյանին հայտնել է, որ կուսակցության անդամներ Շաքարյանները Կարս չեն ժամանելու (բնագիր գործի թերթեր 1022 հակ., 1433, 2322, 2361):

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՏԵՓԱՆ (կուսակցական ծածկանունը՝ «Գագիկ») – նախկին ուսուցիչ: Կուսակցության Արևելյան Բյուրոյի գործավարության վարիչ: Բաքվի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեների 1906 թ. հաշվետվությունների և արդարացման փաստաթղթերի իր կողմից կարգավորման մասին «Գագիկ» ստորագրությամբ նամակը «Զիֆի»[3] անունով: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվության մեջ նշված է «Գագիկի» կողմից վառոդ գնելու համար 100 ռուբլի հատկացնելու մասին: 1906 թ. օգոստոսի 24-ին «Պարքեը» (Շահրիկյան) Արմավիրից Ռուբենին հաղորդել է Արմավիրում հավաքված գումարից կուսակցության Բյուրոյի համար 15.000 ռուբլի ուղարկելու մա-

1 Սկիզբը տե՛ս «Վէմ», 2011, N 3, էջ 221-240:

2 Ճիշտը՝ Հակոբ Չիլինգարյան:

3 Նկատի ունի «Զիֆոնը», քանի որ Ստեփան Տեր-Մկրտչյանը (Գագիկ) այդ կառույցի ղեկավարն էր: ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովին ներկայացված «Զիֆոնի հաշիվը» տե՛ս «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Գ. հատ., էջ 246:

սին: Նովոռոսիյսկից Յալթա 1907 թ. օգոստոսի 29-ի N 4450 հեռագրով «Գագիկը» Սելվիյանի միջոցով «Կարոյին» հաղորդել է «Միհրանի» նկատմամբ մահապատժի իրականացման ժամանակավոր դադարեցման և հետագա կարգադրությունների սպասելու մասին (բնագիր գործի թերթեր 1027 հակ., 3547-3550, 2386-2390, 3558-3561 հակ., 5203-5204):

ԳՅԱՋԵՆՅԱՆՑ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ – Արմավիրում ուսուցիչ, կուսակցության անդամ, կուսակցական գործերում գործունյա մասնակցություն ունեցած: Արմավիրից Շուշի 1907 թ. օգոստոսի 6-ին ուղարկված N 745 հեռագրով նա կուսակցության անդամ Բեջանյանցին հաղորդել է, որպեսզի նա քննությունը խափանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկի: Էջմիածնից Արմավիր 1907 թ. օգոստոսի 16-ին ուղարկված N 82 հեռագրով կուսակցության անդամ Հուսիկ վարդապետը[4] Գյաջենյանցին խնդրել է իր երաշխավորած կուսակցության անդամներ Հայկ Հովակիմյանին և Համբարձում Աբովյանին Արմավիրի ուսումնարանի ուսուցիչ ընդունել:

ԳԱԼԱՆՉՅԱՆՑ ՍԱՄՍՈՆ ԱՐՏԵՄԻ[5] (Հարությունի) – Թիֆլիսի կոմիտեի անդամ: Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության օրգան «Ժայռ» թերթի խմբագիր: Նշյալ թերթի խմբագրության գրասենյակը 1907 թ. կուսակցության Բյուրոյի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի գաղտնի բնակարանն էր: Արմավիրում և Պյատիգորսկում «Միհրանի» և այլոց նկատմամբ ահաբեկչության կատարման ուղղությամբ կարգադրությունների մասին ահաբեկչական ջոկատների պետեր Հայկունու, Հակոբ Չիլինգարյանի[6], Բյուրոյի անդամ բժիշկ Մուրադովի բոլոր գաղտնի հեռագրերը «Ժայռի» խմբագրությանն էին հասցեագրված: Դրանից զատ, այդ առթիվ կարգադրությունները «Ժայռի» խմբագրությունից էին հղվում: 1907 թ. հունիսի 25-ի և հուլիսի 4-ի N 12755 և N 20001 հեռագրերից երևում է, որ նույն խմբագրությունից էր կուսակցության անդամ [Դավիթ] Զավրիևին Ս. Պետերբուրգում «Դաշնակցություն» կուսակցության անդամների և անջատականների[7] բլոկի ձևավորման դեմ միջոցներ ձեռնարկելու մասին հանձնարարություն տրվել (բնագիր գործի թերթեր 908, 909, 1013, 1013 հակ., 1015 հակ., 1552, 2322):

ԳԱԼՍՏՅԱՆ ԲԵՍԱՐԻՈՆ ՄԻԽԱՅԻԼԻ – [ցարական] վարչակազմի կողմից փակված «Ժայռ» թերթի փոխարեն «Դաշնակցություն» կուսակցության հրատարակած «Խարիսխ» թերթի[8] խմբագիր: Թիֆլիսից Պյատիգորսկ 1907 թ. հուլիսի 19-ին և օգոստոսի 3-ի N 8111 և N 1209 հեռագրերով Գալստյանը Բյուրոյի անդամ բժիշկ Մուրադովին խնդրել է Պյատիգորսկում և Կիսլովոդսկում կազմակերպել «Խարիսխ» թերթի վաճառքը: «Ժայռ» թերթի փակումից հետո կուսակցական ողջ գաղտնի գրագրությունը հասցեագրվում էր «Խարիսխ»-ի խմբագրության հասցեով, իսկ 1907 թ. սեպտեմբերի 2-ի խուզարկությամբ նշյալ խմբագրության գրասենյակում գտնվել են. 1. Սարգիս Մանասյանցի գրությունը իր վերցրած կուսակցական զենքի մասին, 2. Ուսուցիչ Վարժապետյանցի գրությունը կուսակցական զենք վերցնելու մասին, 3. Սարգիս Մանասյանցի գրությունը իր կողմից կուսակցական զենքի ուղարկման մասին, 4. «Հայ հեղափոխական

4 Զոհրաբյան Հուսիկ արքեպիսկոպոս (5.11.1870, Մեծ Սալա - 23.10.1943, Բուխարեստ): 1924 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: 1920-ից եղել է Ռումինիայի թեմի առաջնորդ: ՀՅԴ անդամ չի եղել, սակայն ձերբակալվել է լիժինյան գործով: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 5, թթ. 4036-4037, 4336-4340: Ավելի մանրամասն տե՛ս «Վէմ», 2011, N 2, էջ 201-208:

5 Սամսոն Ղալաչյանը եղել է 1907-1908 թթ. Թիֆլիսում հրատարակված «Ժայռ» հասարակական, քաղաքական, տնտեսական օրաթերթի խմբագիր-հրատարակիչը: Ձերբակալումից հետո նրան հաջորդել է Արշակ Ղազարյանը:

6 Հակոբ Չիլինգարյանը 1900-ական թվականներին եղել է Կարսի շրջանի ՀՅԴ «ճակատային գծի ղեկավար գործիչ»: Ձերբակալվել է լիժինյան գործով, ծանր հիվանդությունից հետո 1912 թ. մահացել է Վլադիկավկազի բանտում:

7 Բնագրում ռուսերենով հենց այսպես է գրված:

8 «Խարիսխ» օրաթերթը հրատարակվել է Թիֆլիսում 1907 թ., 44 համար, 4 էջ ծավալով: Խմբագիր-հրատարակիչը Արշակ Պետրոսի Մեհրաբյանն էր, ով նույնպես ձերբակալվել էր լիժինյան գործով: Քննիչներն այստեղ ակնհայտորեն սխալ են թույլ տվել:

«Դաշնակցություն» կուսակցություն» բլանկով «Գալստյան» ստորագրությամբ նամակը Հարություն Մայիլյանցին՝ 1907 թ. կուսակցական զենքի փոխանցումների մասին, 5. Բաքվի բանվորների բողոքագիրը, 6. Հայկական թաղամասերում հրշեջների կազմակերպման վերաբերյալ «Կանչ» գրքույկի[9] 21 օրինակ, 7. «Մուրադի» և «Չամոյի» գլխավորած ահաբեկչական ջոկատների խմբակային լուսանկարները, 8. «Հերմես» տպարանում տպագրված կուսակցության բազմաթիվ հրատարակությունները՝ հեղափոխական գրքույկները (բնագիր գործի թերթեր 1016 հակ., 1018, 2311-2312, 3524-3528, 2361):

ԳԵՎՈՐԳԲԵԿՅԱՆ ԼԵՎՈՆ – 1906-1907 թթ. Երևանի կենտրոնական կոմիտեի գործավարության վարիչ: Գևորգբեկյանի նամակը Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի նախագահ Սարգիս Մանասյանցին, ըստ որի 1906 թ. Երևանում կուսակցական զենքի ու փամփուշտի պահեստի վարիչ եղած ժամանակ իրեն հաջողվել է ոստիկանությունից թաքցնել 9.000 փամփուշտ, սակայն իր թշնամիները՝ կուսակցության որոշ անդամներ, փամփուշտների սեփականացման մեղադրանքով իրեն բանսարկել են (բնագիր գործի թերթեր 3551-3552, 4497):

«**ԳՈՐԳԻՍ**» – Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ: 1906 թ. հունվարի 5-ի նրա հաղորդումը Արևելյան Բյուրոյին՝ 10.000 ռուբլի կուսակցական գումար ստանալու և կոմիտեի ընթացիկ ծախսերի համար իր կողմից 3.000 ռուբլի պահելու մասին (բնագիր գործի թերթ 3571):

ԳԱՍՊԱՐՅԱՆՑ ԱՄԻԽԱՆ – Կարսի կենտրոնական կոմիտեին կից զինվոր: Կարսի կենտրոնական կոմիտեի անդամ Աշոտ Հայկունու ստորագրությամբ 1906 թ. օգոստոսի 1-ի վկայականը, ըստ որի Գասպարյանցը [ցարական բանակում] զինվոր եղած ժամանակ կուսակցությանը ծառայելու համար ռուսական կառավարության կողմից տուժվել է (բնագիր գործի թերթ 3572):

ՂՈՒԿԱՍՅԱՆ (Ղուկասյանց) – 1906 թ. կուսակցության Բյուրոյի կուսակցական հաշվետվությունից երևում է, որ դեկտեմբերին Ղուկասյանը Ելիզավետպոլից կուսակցության Բյուրոյին է հասցրել 50 ռուբլի, իսկ հունվարին կուսակցության հաշվով վճարել է 1904 ռուբլի 42 կոպեկ (բնագիր գործի թերթ 3580):

ԳԱԼՍՏՅԱՆՑ ԳԱԼՈՒՍՏ – կուսակցության զինվոր-ահաբեկիչ: Արևելյան Բյուրոյի թղթերում նշված է, որ նրան կուսակցական ծախսերի համար հանձնվել է գումար՝ 30 կոպեկից սկսած (բնագիր գործի թերթեր 3609 հակ., 4499):

ԳԵՎՈՐԳԲԵԿՅԱՆ[10] – բժիշկ, կուսակցության անվանի գործիչ: Բյուրոյի թղթերից երևում է, որ 1906 թ. հունվարի 25-ին բժիշկ Գևորգբեկյանը նշանակվել է կուսակցական բժիշկ (բնագիր գործի թերթեր 3596-3597, 4499):

ԳԱԼԱԼՅԱՆՑ[11] **Ա.** – կուսակցության անդամ և կոմիտեներին զենք մատակարարող: Կուսակցության Բյուրոյին «Բորխարդ» համակարգի հինգ ատրճանակներ հասցնելու համար 300 ռուբլի ստանալու մասին 1906 թ. մարտի 25-ի նրա ստացականը (բնագիր գործի թերթեր 3605 հակ., 4499 հակ.):

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ – կուսակցության անդամ, անվանի կուսակցական գործիչ: Հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի հրատարակած նրա «Հայրենիքը և ազգային շարժումները» գրքույկը[12] և 1906 թ. օգոստոսին կուսակցական գործուղումների համար 25 ռուբլի 3 կոպեկ գումարի ծախսման հաշվետվությունը (բնագիր գործի թերթեր 2322, 3628

9 Նման գրքույկի գոյությունը ճշտել չհաջողվեց:

10 Նկատի ունենալով լիժինյան դատական գործի շինծու բնույթն ու նրանում առկա բազմաթիվ հակասությունները՝ այս ցանկում «Գևորգբեկյան» ազգանունով 2 անգամ նշված ամբաստանյալներին ամենայն հավանականությամբ պետք է նույնականացնել:

11 Գուցե՝ Ջալալյանց:

12 Նկատի ունի հետևյալ հրատարակությունը՝ «Հայրենիքը եւ ազգային շարժումները», թարգմանիչ՝ Արմէն Գասպարեան, հրատարակիչ՝ ՀՅԴ Թիֆլիսի Կեդրոնական Կոմիտե, Թիֆլիս, 1905:

հակ., 3611 հակ., 3612, 4500):

«**ԳՈՒՐԳԵՆ**» – Ժլատի[13] (Վլադիկավկազի) կենտրոնական կոմիտեի անդամ և գանձապահ: 1906 թ. կոմիտեի հաշվետվությունների վրա կա գանձապահի նրա ստորագրությունը (բնագիր գործի թերթ 4419):

«**ԴԱՍԱԽՈՍ**» – Դոնի Ռոստով-Նախիջևանի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչ: Մասնակցել է 1907 թ. հուլիսի 22-ին Պյատիգորսկում գեներալ Կարանգոզովի սպանությանը: Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանի 1907 թ. հուլիսի 19-ի N 2009 գաղտնի հեռագիրը Դոնի Նախիջևան «Նոր կյանքի»[14] խմբագրությանը՝ Դոնի Նախիջևանի կոմիտեի անդամ Գռուզյանին. «Հուլիսի 21-ին [այստեղ] անհրաժեշտ է «Դասախոսը», հակառակ դեպքում ամեն ինչ կորած է» (բնագիր գործի թերթեր 826, 1209 հակ.):

ԴԱԲԱԽԱՆՅԱՆ (կուսակցական ծածկանունը՝ «Արա») – Եկատերինոդարի կոմիտեի գործավար: Դաբախանյանի 1907 թ. հուլիսի 1-ի N 65 գաղտնի հեռագիրը «Խարիսխի» խմբագրությանը (կուսակցության Բյուրոյի գտնվելու վայրը) իր նախաձեռնությամբ, հայ երիտասարդության ներկայությամբ, ք. Եկատերինոդարում անվանի կուսակցական գործիչներ Գևորգ Չավուշի ու նրա ընկերների սպանության առթիվ[15] հանդիսավոր սգո պատարագի կազմակերպման մասին (բնագիր գործի թերթեր 1208 հակ., 1121, 2361):

«**ՋՈՒՄՇՈՒԴ**» (կուսակցական ծածկանունը՝ «Մարտին») – «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ավագ ահաբեկիչ: «Խեչո Կևորկովի» հուշատետրում նշվում է «Ջումշուդին» գործուղումների համար կուսակցական ծախսերի նպատակով գումարի տրամադրման մասին: Նա մասնակցել է 1907 թ. հուլիսի 3-ին ք. Ալեքսանդրապոլում գեներալ Ալիխանովի նկատմամբ կատարված ահաբեկչական ակտին (բնագիր գործի թերթեր 181-187, 2350):

ԴԱՎԻԹՅԱՆՑ ԼԵՎՈՆ – կուսակցական զենքի պահապան: Կուսակցական զենքի, ատրճանակների, փամփուշտների և վառոդի ընդունման մասին 1906 թ. ապրիլի 8-ի նրա ստացականը՝ մինչև կուսակցության կենտրոնական կոմիտեների կողմից պահանջելը (բնագիր գործի թերթ 3575 հակ.):

ՉԻԼԻԽՈՎ ԱԲՐԱՀԱՄ – Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեին զենքի մատակարարման պատասխանատու: 1906 թ. մարտի 2-ին Սիմոն Եղիազարովի հետ ձերբակալվել է գ. Խառապուլում, որտեղից մտադրվել էին զենք ուղարկել՝ այն գնելով Իժևսկյան գործարանների շրջանից: Այդ նպատակով 1906 թ. մարտի 21-ի և 27-ի N 182/338 և N 766/3003 հեռագրերով փոխանցվել է 5.000 ռուբլի, որից 2.500 ռուբլին Վլադիկավկազից՝ Շարաֆյանի կողմից և նույնքան էլ գումար Թիֆլիսից՝ բժիշկ Մուրադովի կողմից: Ընդ որում, Վլադիկավկազի փոստ-հեռագրատան 1906 թ. մարտի 21-ի N 338 փոստային անդորրագիրը 2.500 ռուբլի փոխանցելու մասին խուզարկությամբ գտնվել է 1908 թ. դեկտեմբերի 26-ին Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեի թղթերի մեջ: Չիլիխովի և Սիմոն Աբրահամի Եղիազարովի մոտ խուզարկությամբ գտնված Ալեքսանդր Շարաֆյանի անունով նամակից երևում է, որ նշյալ 5.000 ռուբլին ուղարկվել է զենքի գնման համար, և որ, մինչ այդ, Ելիզավետպոլի, Կարսի, Վլադիկավկազի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեների համար նրանց կողմից զենքի, ատրճանակների և փամփուշտների մեծ քանակ է ուղարկվել (բնագիր գործի թերթեր 437 և հակ., 4406, 4384-4387, 4962-4964):

ԵՂԻԱԶԱՐՈՎ ՍԻՄՈՆ ԱԲՐԱՀԱՄԻ – նույնը, ինչ որ Աբրահամ Չիլիխովի պարագայում:

ԵՐԵՄՅԱՆՑ ՄՈ[Վ]ՍԵՍ – Ղազախի շրջանի կոմիտեի անդամ: Արևելյան Բյուրոյի թղթերի մեջ գտնված 1906 թ. մայիսի 16-ի նրա նամակը Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի

13 ՀՅԴ «Ժլատի» կամ 10-րդ կենտրոնական կոմիտեությունն ընդգրկում էր Հյուսիսային Կովկասը:
14 «Նոր կյանք» գրական և քաղաքական շաբաթաթերթը հրատարակվել է Նոր-Նախիջևանում 1906-1907 թթ.: Խմբագիրը Գր. Անոփյանն էր, ապա՝ Հ. Խարագյոզյանը:
15 Գևորգ Չաուշը զոհվել է 1907 թ. մայիսի 27-ին Սուլուխում:

անդամ Մնացական Նալբանդյանին, ըստ որի Ղազախի շրջանում կազմակերպության անդամներն իրենց կուսակցական պարտականությունների կատարմանն անհոգ են վերաբերվում (բնագիր գործի թերթեր 2254 հակ., 3539 և հակ.):

ԵՔՈՄՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ (Հեքիմյանց) – Պատուրզուանյան[16] (Կաղզվանի) կոմիտեի անդամ: 1906 թ. հուլիսի 16-ի նրա գրավոր բողոքը կուսակցության Բյուրոյին Պատուրզուանյան կոմիտեի անդամների սխալ գործողությունների, մասնավոր անձանցից կոմիտեում ստացված՝ իրենց անտեղի ձերբակալությունների մասին բողոքների առթիվ (բնագիր գործի թերթեր 2354, 2378 հակ., 3538):

ՄԿՐՏՈՒՄՈՎ (կուսակցական ծածկանունը՝ «Մկրտում») – Բաքվի կենտրոնական կոմիտեի Սև քաղաքի շրջանի կոմիտեի անդամ: Բաքվի կենտրոնական կոմիտեին նշյալ կոմիտեի հաղորդագրությունից երևում է, որ 1907 թ. դեկտեմբերի 21-ին կուսակցության անդամների ժողովում անդամ «Մկրտումը» առաջիկա 1908 թ. կուսակցության շրջանային ժողովի պատգամավոր է ընտրվել: Ելիզավետպոլից Սև քաղաք 1907 թ. օգոստոսի 17-ին ուղարկված N 734 հեռագրով Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ և կուսակցական գործունեության գծով Կորյուն վարդապետի[17] աշխատակից «Մեժլումը» Մկրտումովին հաղորդել է, որ ք. Ելիզավետպոլում ոստիկանությունը ձերբակալում և խուզարկում է կուսակցական գործիչներին, որ կոմիտեի անդամ Աբրահամ Գյուլխանդանյանին[18] ձերբակալել են, և որ անհրաժեշտ է փոխանցել Պավելին[19], որպեսզի նա Բաքվից անհապաղ մեկնի (բնագիր գործի թերթեր 3011 հակ., 3200 հակ.):

ՄԵԼԻՔ-ԱԼԱՀՎԵՐԴՈՎ ՄԵԺԼՈՒՄ ԲԵԿ (Մելենքում) (կուսակցական ծածկանունը՝ «Մեժլում») – Նուխի քաղաքի նախկին ոստիկանական պրիստավ, Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ և նշյալ կոմիտեի գծով Կորյուն վարդապետի աշխատակից: Բյուրոյի թղթերի մեջ գտնված 1906 թ. հոկտեմբերի 25-ի հաղորդագրության մեջ նշված է կոմիտեի աշխատանքներին Կորյունի հետ «Մեժլումի» մասնակցության մասին: 1906-1907 թթ. նա Եղիշե վարդապետի, Նասիբովի և Ղուկասովի հետ մեկնել է Քայաբաշի գյուղ և, մահվան սպառնալիքի տակ, տեղական կոմիտեի անդամների և Թևոս Խաչանովի սպանության վերաբերյալ բնակիչներից պահանջել է իշխանություններին ցուցմունք չտալ, որից հետո Եղիշե վարդապետը եկեղեցու տարածքում բնակիչներին երդվեցրել է (բնագիր գործի թերթեր 2917-2918, 2200 հակ., 3546-3547, 5203-5204):

ԶԱՎՐԻԵՎ ԴԱՎԻԹ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ[20] – Պետերբուրգի կոմիտեի անդամ, տիտղոսակիր խորհրդական և հաղորդակցության ուղիների ինստիտուտի լաբորանտ: «Խեչո Կևորկովի» հուշատետրում նա նշվում է որպես կուսակցության անդամ «Ս. Պետերբուրգ, Զաբալկանսկի տուն 9» հասցեով: Ս. Պետերբուրգում կուսակցական «Երկիր», «Խարիսխ» թերթերի տարածման գործակալն էր: Զավրիևին հղված հետևյալ գաղտնի հեռագրերը. 1. Պյատիգորսկից կուսակցության անդամ Թադևոս Ամիրյանի 1907 թ. հունիսի 24-ի N 4666 հեռագիրը. «[Հայտնել] բժիշկ Մուրադովի հասցեն», 2. «Ժայռ» կուսակցական թերթի խմբագրությունից կուսակցության անդամ Սիերյանի[21] [Հ. Օհանջանյան] 1907 թ. հունիսի 25-ի N 12755 և հուլիսի 4-ի N 20001 հեռագրերը, ըստ որոնց Զավրիևը պետք է միջոցներ

16 Դատական գործում հենց այսպես է գրված:

17 ՀՅԴ անդամ Կորյուն վարդապետ Սահակյանը 1905-1906 թթ. Գանձակի գավառում հայոց ինքնապաշտպանության ղեկավարման գործում կարևոր դեր է կատարել: Ձերբակալվել է լիժինյան գործով և մինչև 1917 թ. մայիս աքսորվել Իրկուտսկի մարզ:

18 Ա. Գյուլխանդանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2010, N 3, էջ 184-196:

19 Անձը պարզել չհաջողվեց:

20 Զավրիև (Զավրյան) Դավիթ Քրիստափորի (23.06.1889, Թիֆլիս–11.08.1957, Թբիլիսի) – հասարակական գործիչ, քիմիկոս: Պետերբուրգի համալսարանում աշակերտել է Դ. Մենդելեևին: 1921 թ. հոկտեմբերից մինչև 1922 թ. փետրվարը եղել է ԵՊՀ ռեկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ:

21 Հ. Օհանջանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2009, N 2, էջ 144-170:

ձեռնարկեր, որպեսզի կուսակցության անդամ Սաղաթելյանին թույլ չտար «Դաշնակցություն» կուսակցության անունից որևէ բանակցությունների և փոխզիջումների մեջ մտնելու «Անջատական» հեղափոխական կուսակցության անդամների հետ, քանի որ դա պետք է լինի կուսակցության անդամների ընդհանուր ժողովի քննարկման առարկան (բնագիր գործի թերթեր 475, 909 հակ., 1667 հակ., 1055, 1013 հակ., 1015 հակ., 2322, 2345 հակ., 2348-2349, 2361 հակ.):

ԶՈՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ – կուսակցության անդամ, անդամակցել է տարբեր կոմիտեների: Երևանում եղել է կուսակցական զենքի պահեստի վարիչ: 1905 թ. խուզարկությամբ նրա մոտ գտնված նամակից երևում է, որ 1905 թ. նա եղել է Վլադիկավկազի, Թիֆլիսի և այլ կենտրոնական կոմիտեների համար հսկայական չափերի զենքի ուղարկման գործի վարիչ: Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ «Ֆաթի»[22] 1906 թ. օգոստոսի 2-ին կուսակցության Բյուրոյին ուղարկած հաղորդագրության համաձայն՝ 1906 թ. Հովհաննես Զարյանը, որպես կիրթ մարդ, մասնակցել է նշյալ կոմիտեի աշխատանքներին (բնագիր գործի թերթեր 3582 հակ., 4498 հակ., 5004-5006, 5203):

«**ԶԱՐՄԻԿ**» – Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ: «Զարմիկի» 1907 թ. հունվարի 5-ի ստացականը՝ որպես նշյալ կոմիտեի անդամի, Արևելյան Բյուրոյից կոմիտեի կարիքների համար 1.000 փամփուշտի ստացման մասին (բնագիր գործի թերթ 3592 հակ.):

ՔԱՐՏԱՇՅԱՆ – Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ և կուսակցական քարոզիչ: Դիլիջանից Քարտաշյանի 1907 թ. օգոստոսի 11-ին Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Թայիրյանին ուղարկած N 9 հեռագիրը և օգոստոսի 5-ին Թիֆլիս վերադառնալու պահանջով վերջինիս պատասխան հեռագիրը (բնագիր գործի թերթեր 1017-1018, 2001 հակ., 2207 հակ., 2342):

ՔՈՉԱՐՅԱՆՑ ՍԱՐԳԻՍ (Քոչարյան) – Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Աշխատել է «Խարիսխ» կուսակցական թերթի խմբագրությունում, կոմիտեում մասնակցել է ահաբեկչության ենթակա անձանց մատնանշմանը: 1907 թ. հուլիսի 8-ի և 11-ի N 469 և N 730 հեռագրերով Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ Արգուտինսկին[23] խնդրել է Քոչարյանցին կուսակցության անդամ Սաղաթելյանին առաջարկել, որպեսզի նա լինի Երևանի հայկական հոգևոր դպրոցի տեսուչ, ինչի արդյունքում Քոչարյանցը և Բյուրոյի անդամ Եղիշե Թոփչյանը 1907 թ. հուլիսի 23-ի N 9669 հեռագրով Մոսկվայում գտնվող Սաղաթելյանին խորհուրդ էին տալիս համաձայնել նշյալ դպրոցի տեսուչի պաշտոնի ընդունմանը, ընդ որում նշելով, որ կուսակցության կողմից Թիֆլիսի հայկական Ներսիսյան հոգևոր դպրոցի տեսուչ է նկատի առնվել Բյուրոյի անդամ Ավետիս Ահարոնյանը (բնագիր գործի թերթեր 1017, 1065 հակ., 1066, 2346, 5203 հակ.):

ՔՈՉԱՐՅԱՆՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (Արտաշես Քոչարյան) (կուսակցական ծածկանունը՝ «Սարդար») – Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Ահաբեկչության ենթակա անձանց նկատմամբ ակտ կատարող ահաբեկիչների ղեկավար, կուսակցական զենքի պահեստի վարիչ: [Այդ մասին են վկայում հետևյալ գրությունները.] 1. Իր վարած պահեստից 1905-1906 թթ. Սաքո Մեղավորյանին, Սարգիս Մանասյանցին և այլոց զենքի, ատրճանակների, վառոդի, ռումբերի և փամփուշտների բաց թողնման մասին գրություն; 2. Դագիկի նամակը կուսակցության պահեստներում զենքի, վառոդի և այլնի առկայության ստուգման մասին, ինչը հնարավոր է անել «Սարդարի» հաշիվների միջոցով; 3. «Սարդարի» անունով գրություն նրանից 2.000 փամփուշտ ստանալու մասին; 4. 1906 թ. մարտի 6-ի և ապրիլի 18-ի «Սարդարի» ստորագրությամբ հաշվետվությունները՝ կուսակցության 2-րդ պահեստում զենքի, ատրճանակների և փամփուշտների առկայության մասին; 5. 1906 թ. դեկտեմբերի 20-ի և 25-ի, 1907 թ. հունվարի 3-ից 18-ը «Սարդարի» ստորագրությամբ

22 Հավանաբար «Ֆարհատն» է՝ Սարգիս Օհանջանյանը:
23 Հովսեփ Արղության:

տասնմեկ անդորրագրերը Անտառապատի[24] պահեստ զենքի, ատրճանակների, փամփուշտների, վառոդի և ռումբերի պահպանման ստանալու մասին: «Սարդարի» ստորագրությամբ 1906 թ. դեկտեմբերի 26-ի և 1907 թ. հունվարի 18-ի հաշիվները Արամին, Ավետիսին և Կորյունին՝ ռումբերի, վառոդի, փամփուշտների, զենքի և ատրճանակների բաց թողնման մասին: Ավագ ահաբեկիչ «Խեչո Կևորկովի» 1907 թ. հունիսի 9-ի գաղտնի հեռագիրը Ամիրյանցին. «Փոխանցել Սարդարին, ստացել եմ» (բնագիր գործի թերթեր 2195 հակ., 2383, 3545 հակ., 3593-3596, 3622-3624, 3606, 3547 հակ.-3549, 3571, 3583 հակ., 3622-3624, 5203 հակ.):

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՂԱՄ (նույն ինքը՝ Մկրտիչ) – «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ահաբեկիչ: Այլ ահաբեկիչների հետ նրա մասնակցությունը 1907 թ. հունիսի 10-ին Արմավիրում «Միհրանի», Վարդերեսյանի[25] և Խեչո Մուխթարովի վրա հարձակման, վերջին երկուսի սպանության և առաջինի վիրավորման մեջ (բնագիր գործի թերթեր 31-32, 103, 2326, 2364):

ՄՈՒՍԱՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ – Թեոդոսիայի ենթակոմիտեի անդամ: Թեոդոսիայում նրա գաղտնի բնակարանը կուսակցության անդամների միջև գրագրության վայր է եղել: Ահաբեկչական ջոկատի պետ «Վարդանը» 1907 թ. օգոստոսի 14-ի N 2196 հեռագրով կուսակցության անդամ Հովհաննես Էլմասյանից խնդրել է Խեչոյի (Խեչո Կևորկով)՝ Նովոռոսիյսկում գտնվելու մասին անհապաղ հարցնել Գառնիկ Մուսայանին, իսկ Նովոռոսիյսկից ահաբեկչական ջոկատի պետ «Կարոն» N 1915 հեռագրով Գառնիկ Մուսայանից և «Վարդանից» հարցնում էր Նովոռոսիյսկում «Խեչո Կևորկովի» ձերբակալության և ահաբեկիչների հետ իր Յալթա մեկնելու մասին և հրահանգում, որպեսզի «Վարդանն» անհապաղ օգնության մեկնի Յալթա (բնագիր գործի թերթեր 420, 598, 1056, 2323, 2362):

ՄԱԿԱՐՅԱՆ ԱՐԱՄ ԳԱԼՈՒՍՏԻ – Բաթումի կոմիտեի անդամ՝ կուսակցության կենտրոնական կոմիտեների հանձնարարությունների կատարման գծով: Նրա բնակարանը և ծառայության վայրը կուսակցական գրագրության գաղտնի հասցեներ էին: Ըստ «Խեչո Կևորկովի» հուշատետրի՝ եղել է կուսակցության անդամ: Հետևյալ գաղտնի հեռագրերը. 1. Թիֆլիսից Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ Հայկ Սողոմոնյանի 1907 թ. հուլիսի 3-ի N 817 հեռագիրը Բաթում Արամ Մակարյանին. ««Խարիսխի» (կուսակցության Բյուրոյի գտնվելու վայր) հասցեով անհապաղ 50 ռուբլի փոխանցիր», 2. Կուսակցական ծախսերի համար Արամ Մկրտչյանի կողմից 50 ռուբլի փոխանցելու վերաբերյալ 1907 թ. հուլիսի 16-ի N 344 հեռագիրը, 3. Յալթայից ահաբեկչական ջոկատի պետ «Վարդանի» 1907 թ. օգոստոսի 10-ի N 2210 հեռագիրը Բաթում Արամ Մակարյանին՝ կուսակցության ահաբեկչությանը ենթակա «Միհրանի» և նրա ազգականների Յալթա ժամանման մասին: Դրանից զատ, «Միհրանի» և նրա աջակիցների նկատմամբ մահապատիժների իրականացման վերաբերյալ Յալթայից և Նովոռոսիյսկից Բաթում՝ տեղի կենտրոնական կոմիտեի անդամ Արմեն Նավյանի անունով բոլոր հեռագրերը ստացվել են նշյալ Արամ Մակարյանի ստորագրությամբ (բնագիր գործի թերթեր 420-421, 475, 760, 829, 1015, 1019 հակ., 1045 հակ., 2010, 2326, 2344, 2362, 2372, 4050-4054):

ՄԻՐԶԻՍՈՎ ՀՈՎՍԱԿԻՄ ԱՎԵՏԻՔԻ – ըստ «Խեչո Կևորկովի» հուշատետրի՝ Դոնի Նախիջևանի կոմիտեի անդամ: [Նրա կուսակցական գործունեության մասին են վկայում] հետևյալ հեռագրերը. 1. Երևանի [կենտրոնական] կոմիտեի անդամ Եղիազարովի 1907 թ. հունիսի 25-ի N 1887 հեռագիրը Միրզիսովին, որպեսզի անհապաղ հաղորդի «Խեչո Կևորկովի» ջոկատի ահաբեկիչ Խաչատուր Ասլանյանցի հասցեն, 2. 1907 թ. հունիսի 26-ի և 30-ի N 16295 և N 19078 պատասխան հեռագրերը (բնագիր գործի թերթեր 475, 821, 1184, 1065, 1674-1675, 2323, 2346, 2362):

ՄԻՐԶՈՅԱՆՑ – կուսակցության անդամ և

24 «Անտառապատը» ՀՅԴ Լոռու կոմիտեն էր:
25 Հաբեթ Վարդերեսյանը Միհրանի մերձավոր աջակիցն էր:

ահաբեկիչ: Պյատիգորսկից Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Արամ Չինչինյանի 1907 թ. հուլիսի 7-ի N 1650 հեռագիրը Միրզոյանցի (Երևան, հյուրանոց «Կովկաս») հասցեով. «Շատ կարևոր գործ կա, անհապաղ արի» (բնագիր գործի թերթեր 909 հակ., 2006):

ՄԵԼԻՔ-ԱԶԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ – կուսակցության գործունյա անդամ: Արևելյան Բյուրոյում գտնված նրան ուղղված կուսակցության բոլոր ահաբեկիչների գլխավոր պետ Շահրիկյանի («Պարթև») ստորագրությամբ 1906 թ. հուլիսի 24-ի նամակը իր կողմից բանկերի միջոցով Ալեքսանդր Մելիք-Ազարյանի անունով Արևելյան Բյուրոյի համար Արմավիրում հավաքված գումարների փոխանցման մասին՝ 500 և 40.000 ռուբլի չափերով: Դրանից զատ, Բյուրոյի թղթերի մեջ գտնվել է Մելիք-Ազարյանի ստորագրությամբ 1906 թ. օգոստոսի 17-ի գրությունն իր կողմից կուսակցության համար փամփուշտների և վեց զենքի ուղարկման մասին: Մելիք-Ազարյանը կուսակցության անդամներ, բժիշկներ Մուրադովի և Բուդուղովի[26] ու Շահպարոնյանի հետ եղել է Թիֆլիսում կուսակցական «Հերմես» տպարանի փայատեր (բնագիր գործի թերթեր 1010 հակ., 1014 հակ., 1018 հակ., 3549 հակ., 3550, 4497):

ՄԵԼՅԱՆՑ ՀՐԱՆՏ – ուսանող (կուսակցական ծածկանունը՝ «Հրանտ»), ուսանողական կազմակերպության անդամ և անվանի կուսակցական գործիչ: Բյուրոյի թղթերի մեջ գտնված նրա 1907 թ. հունվարի 15-ի նամակը «Ահաբեկիչ-Մարմնի» խորհրդի անդամ Սաքո Մեղավորյանի անունով, որպեսզի Բյուրոյում քննարկեն նամակ ուղարկողի գործը: Նրա [կուսակցական գործունեության մասին են վկայում] հետևյալ հեռագրերը. 1. 1907 թ. օգոստոսի 28-ի N 4636 հեռագիրը Բաթումից Թիֆլիս «Խարիսխի» (Բյուրոյի նստավայր) խմբագրություն, կուսակցության անդամ Թադևոսյանին, ըստ որի «Հրանտը» մեկնել է Կարս՝ Ամիրովի մոտ, 2. Կարսից Պյատիգորսկ կուսակցության անդամ, որպես զենքի պահապան՝ ահաբեկիչներին ուղեկցող Անահիտ Փարսադանյանին 1907 թ. հուլիսի 12-ին ուղարկված N 608 հեռագիրը Կարսից իր մեկնման մասին (բնագիր գործի թերթեր 1034 հակ., 1036, 1062, 2323, 2362, 3596 և հակ.):

ՄԱՐՋՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ – «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ահաբեկիչ և ահաբեկչության մեկնող ջոկատներից մեկի կուսակցական զենքի պահապան: «Խեչո Կևորկովի» հուշատետրի համաձայն՝ Մարջյանի մոտ նշված է «Բրաուինինգ» համակարգի չորս ատրճանակ (բնագիր գործի թերթեր 181-187, 2328 հակ.):

ՄԵՇՉԱԴՅԱՆՑ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչ, կուսակցության օգտին նվիրատվությունների հավաքմամբ զբաղվող: Ըստ «Խեչո Կևորկովի» հուշատետրի՝ նշված է 1907 թ. ապրիլ-հունիսին իրեն Մեշչադյանցի կողմից կուսակցական ծախսերի համար 350 ռուբլի տրամադրման մասին (բնագիր գործի թերթեր 181 հակ., 186, 2323):

ՄԵՀՐԱԲՅԱՆ ՋԻՆԱԻԴԱ – կուսակցության անդամ, «Ահաբեկիչ-Մարմնին» կից խորհրդում ահաբեկչության ենթակա անձանց ցուցակների կազմման վարիչ (բնագիր գործի թերթեր 2026, 2323 հակ.):

ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ՋՈՒՄՇՈՒԴ ՄԱԿԻՉԻ –«Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ահաբեկիչ: «Խեչո Կևորկովի» հուշատետրի համաձայն՝ 1907 թ. ապրիլ-հուլիսին նշյալ Ջումշուդին կուսակցական ծախսերի համար և որպես ահաբեկչական ակտերին մասնակցություն 130 ռուբլի պարգևատրում է նշվում (բնագիր գործի թերթեր 2198 հակ., 181-187, 2323 հակ., 2362):

ՄԹԵՐՔՅԱՆՑ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի ահաբեկիչ: Ախալցխայից Ջումշուդը 1907 թ. օգոստոսի 24-ին Թիֆլիսի «Հերմես» տպարանի հասցեով ուղարկված N 442 հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Հարություն Թայիրյանին տեղեկացրել է Մթերքյանցի Ախալքալաք մեկնելու մասին (բնագիր գործի թերթեր 2206, 2323 հակ.):

ՄԱԼԽԱՍՅԱՆ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ՝ հատուկ հանձնարարութ-

26 Բուդուղյան Արտաշես:

յունների գծով և նշյալ կոմիտեին ահաբեկիչներ մատակարարող: Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Լևոն Թայիրյանը 1907 թ. հունիսի 25-ի N 12464 հեռագրով հրահանգել է Ղարաքիլիսայի[27] կոմիտեի անդամ Նալբանդովին, որպեսզի նա փոխանցի Մալխասյանին՝ դադարեցնել ահաբեկիչների երրորդ խմբի ուղարկումը մինչև գործի մանրամասների պարզաբանումը, իսկ Ախալցխայից 1907 թ. հուլիսի 30-ի N 613 հեռագրով կուսակցության անդամ Գանալովը հաղորդել է Մալխասյանին «Խարիսխի» խմբագրությունում Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ Յուսուֆյանի հետ հանդիպման անհրաժեշտության մասին (բնագիր գործի թերթեր 1013 հակ., 2207, 2323, 2323 հակ., 2364):

ՄԱՆՈՒԿՅԱՆ – Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ: Նրա 1906 թ. դեկտեմբերի նամակը Բյուրոյի անդամ Օհանջանյանին («Միերին») զինվորների ջոկատի պետին 60 ռուբլի աշխատավարձի վճարման մասին (բնագիր գործի թերթեր 2254, 3602 հակ.):

ՄԵԼԻՔՅԱՆ ԻՍԱՀԱԿ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ – Բաքվի կոմիտեի անդամ: Ըստ «Խեչո Կևորկովի» հուշատետրի՝ կուսակցության անդամ: Բաքվում նրա բնակարանը և լուսանկարչատունը կոմիտեի անդամների և ահաբեկչական ջոկատների պետերի համար գաղտնի հասցե է ծառայել: Պյատիգորսկից Բաքու 1907 թ. հունիսի 11-ի N 1934 գաղտնի հեռագրով ահաբեկիչների ջոկատի ղեկավար Հակոբ Չիլինգարյանը «Միհրանի» նկատմամբ ահաբեկչության հաջող կատարման պատճառով Մելիքյան-Աբրամովիչին[28] հայտնել է ահաբեկիչ ուղարկելու անհրաժեշտության բացակայության մասին, իսկ հունիսի 15-ի N 7629 հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ, ահաբեկիչների ղեկավարներից «Արտավազդը» «Աբրամովիչին» հանձնարարել է ահաբեկիչների ղեկավար Մեղավորյանին տեղեկացնել ահաբեկիչներով և գումարով Արմավիրի ենթակոմիտեին անհապաղ օգնության շտապելու մասին: Հուլիսի 13-ի N 409 հեռագրով Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ Աբրահամ Գյուլխանդանյանը Մելիքյանին տեղեկացրել է Աբասթումանից իր անհապաղ մեկնման մասին (բնագիր գործի թերթեր 405, 417, 475, 476, 908 հակ., 1012 հակ., 1208, 1873, 1990, 2197, 2361):

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (կուսակցական ծածկանունը՝ «Մելիքզադե») – նախկին ուսուցիչ, Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի անդամ և նշյալ կոմիտեի գծով Կորյունի աշխատակիցը: 1906 թ. Բյուրոյի գրության մեջ նա նշված է որպես «հեռացված ուսուցիչ Մ.» և «Կորյուն վարդապետի համակիր»: Եղել է բոլոր ահաբեկիչների գլխավոր պետ «Նիկոլ-Դումանի» ավագ օգնականը և ահաբեկչական ջոկատների ղեկավարը (բնագիր գործի թերթեր 2325, 2365 հակ., 3546-3547):

«**ՄԻՀՐԴԱՏ**» (կուսակցական ծածկանուն է) – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից զենքի պահապան և բանվորների շրջանում կուսակցական քարոզիչ: Արևելյան Բյուրոյի թղթերի մեջ գտնվել են [նրա կուսակցական գործունեությունը հաստատող] հետևյալ փաստաթղթերը. 1. Թիֆլիսում «Միր» ծխախոտի ֆաբրիկայի բանվորների 1906 թ. բողոքն ուղղված Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին՝ նրա անդամ և կուսակցական քարոզիչ «Միհրդատի» դեմ, ըստ որի վերջինս ձգտել է ֆաբրիկայի վարպետի նկատմամբ կուսակցական ահաբեկչություն կատարել, 2. Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի 1906 թ. հաշվետվությունը «Միհրդատի» մոտ պահպանության գտնվող զենքի, ատրճանակների, փամփուշտների և վառոդի մասին (բնագիր գործի թերթեր 2340, 3601-3602 հակ., 4499):

ՄԱՐԳԱՐՅԱՆՑ ՍԱՐԳԻՍ – Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ, [կուսակցության] զինվորների զինծառայության ուսուցման վարիչ: Կուսակցության Արևելյան Բյուրոյի թղթերի մեջ գտնվել են կուսակցության անդամ «Թադևոսի» (Ամիրյանց) անունով

27 Այժմ՝ Վանաձոր:

28 Այստեղ քննչական մարմինների կողմից ակնհայտ սխալմունք է թույլ տրվել: Պարզաբանելու համար սույն հրապարակման սկզբում տե՛ս «Գրիգորյանց Սամսոն Աբրահամի»:

«Սարգիս Մարգարյանց» ստորագրությամբ երեք նամակներ՝ Կումիսի գյուղի զինվորներին և բնակիչներին զենքի տիրապետման և զինվորական հնարքների ուսուցման, նշյալ գյուղի բնակիչներին [կուսակցության] անդամ Հայկունու կողմից զենքի բաժանման և նրանց զինման մասին (բնագիր գործի թերթեր 2382, 2384, 3552-3554, 4498 հակ.):

ՄԵԼԻՔ-ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի զինվոր և ահաբեկիչ: Բյուրոյի կուսակցական հաշվետվություններում գրառում կա ավագ ահաբեկիչ «Հաջի Լևոնի» կողմից նրան 1906 թ. չորս ահաբեկիչների կերակրման համար 1 ռուբլի 95 կոպեկ տրամադրելու մասին (բնագիր գործի թերթեր 3609 և հակ., 4499 հակ.):

ՆԱՐՀՈՏՅԱՆՑ ՀԱՄԱԶԱՍՊ ԳՐԻԳՈՐԻ[29] – Կարսի կենտրոնական կոմիտեի անդամ, իսկ 1906 թ. վերջին և 1907 թ. Դոնի Նախիջևանի կենտրոնական կոմիտեի անդամ, որտեղ եղել է դրա գլխավոր կարգադրիչը: Բերբերովի, Չուբարովի և Չալխուշյանի հետ 1906-1907 թթ. Դոնի Նախիջևանում՝ տեղի հայկական հոգևոր դպրոցում և «Նոր կյանք» թերթի խմբագրության գրասենյակում ղեկավարել է կուսակցական ժողովները: Ղեկավարել է Ռոստով և Դոնի Նախիջևան քաղաքներում հարուստ հայ վաճառականներից Անդրկովկասի համար կուսակցության կողմից զենք գնելու համար կատարվող դրամահավաքը՝ դրամը պահանջելով մահվան սպառնալիքի տակ, պահանջներն ուղարկելով Դոնի Նախիջևանի կենտրոնական կոմիտեի անունից ու կնիքով, իսկ հավաքված 50.000 ռուբլին ծախսվել է զենք գնելու վրա: 1907 թ. խուզարկությամբ «Նոր կյանք» թերթի խմբագրությունում առգրավված հոկտեմբերի նամակում Նարհոտյանցը անվանվում է Ռոստով և Դոնի Նախիջևան քաղաքներում կուսակցության ղեկավար (բնագիր գործի թերթեր 224-225, 1935, 2169, 2070-2324, 2332, 2341, 2344 հակ., 2356, 2364):

ՆԱԼԲԱՆԴՈՎ («Նալբանդյանց») **ՎԱՀՐԱՄ ՎԱՀՐԱՄԻ** – Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ: Թիֆլիսից 1907 թ. հունիսի 25-ի N 12464 հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ «Լևոնը» (Լեոնիդ Թայիրյան) Ղարաքիլիսա Վահրամ Նալբանդովին հրահանգել է դադարեցնել ահաբեկիչների երրորդ խմբի ուղարկումը մինչև իր գալը: Թիֆլիսից 1907 թ. հուլիսի 9-ի N 3427 հեռագրով Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ Փամբակյանը Ղարաքիլիսա Նալբանդովին հաղորդել է «Մուշեղի[30]» նկատմամբ ահաբեկչության նշանակման («Մուշեղի գործը նշանակված է վաղը») և «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկչական ջոկատի պետ Սաքո Մեղավորյանի շտապ մեկնման մասին (բնագիր գործի թերթեր 1013 հակ., 1015 հակ., 1903-1904, 2019, 2018, 1342 հակ., 730, 2362):

ՆԱՎՅԱՆ (Նովյանց) – Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ՝ կուսակցության Բյուրոյի հանձնարարությունների կատարման համար: Այսպես, 1907 թ. օգոստոսի 9-ի N 1232 հեռագրով Նավյանը Բաթումից կուսակցության Բյուրոյին հաղորդել է «Խարիսխ» թերթի խմբագրության հասցեով, որ ահաբեկչության ենթակա «Միհրանն» արդեն Նովոռոսիյսկում է, իսկ օգոստոսի 10-ի և 11-ի նույն հասցեով ուղարկված N 1549 և N 1594 հեռագրերով նա հաղորդել է, որ «Միհրանն» արդեն ոչ թե Նովոռոսիյսկում է, այլ Յալթայում և կարգադրություններ է խնդրել՝ նշելով Յալթայում կուսակցական հասցեն. «Բազար, Արմենակ Սելվիյանին»: Կոմիտեի անդամներ Լևոն Թայիրյանը և «Արտավազդը» օգոստոսի 11-ի N 4349 և N 4487 հեռագրերով այդ ջոկատի անդամ Կարապետ Հունանյանցի միջոցով հրահանգել էին Նավյանին հաղորդել Նովոռոսիյսկում ահաբեկիչների ջոկատի պետ «Կարոյին» օգնության գործուղված «Վարդանի» հասցեն: Միաժամանակ, «Արտավազդը» կարգադրում էր, որպեսզի Նավյանը շտապ հեռագրի Յալթա՝ տեղի կոմիտեի անդամ Արմենակ Սելվիյանին, որպեսզի նա բոլոր միջոցներով, մինչև ահաբեկիչների խմբով ավագ ահաբեկիչ «Խե-

29 Համազասպ Նորիատյան:
30 Մուշեղ Օհանյանը խմբապետ Միհրանի աջակիցներից էր:

չո Կևորկովի» ժամանումը, «Միհրանին» ազգականների հետ տեղում պահի: Օգոստոսի 15-ի N 6227 հեռագրով Թայիրյանը Թիֆլիսից հանձնարարել է Նավյանին Նովոռոսիյսկում «Խեչո Կևորկովի» ձերբակալության հետևանքով, անհապաղ ահաբեկիչների հետ այնտեղ մեկնել՝ «Կարոյին» օգնության, իսկ Յալթայում ահաբեկչական ջոկատի ղեկավար «Վարդանը» օգոստոսի 18-ի N 3992 հեռագրով խնդրել է Նավյանին կուսակցական ծախսերի համար շտապ հեռագրով գումար փոխանցել (բնագիր գործի թերթեր 1019, 1020, 1020 հակ., 1035 հակ.-1036, 1119, 2010, 2325, 2362):

ՆԱՐԳԻՍ ՎԱՍԻԼԻ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչ և ահաբեկչական ակտեր կատարելու մեկնող ահաբեկիչների ջոկատի զենքի պահապան: «Խեչո Կևորկովի» հուշատետրում նշվում են Վասիլի Նարգիսի մոտ պահպանության գտնվող զենքեր, ատրճանակներ, փամփուշտներ և ռումբեր (բնագիր գործի թերթեր 180-182, 189 հակ.):

ՍՈՒՐՎԱՍՅԱՆՑ ՀԱՄԱԶԱՍՊ[31] (կուսակցական ծածկանունը՝ «խմբապետ Համազասպ», «հայոց իշխան Համազասպ») – կուսակցության 1905 թ. նոյեմբերի 13-30-ը [կայացած] շրջանային ժողովի որոշումներից երևում է, որ նա՝ որպես Շուշիի կենտրոնական կոմիտեի պատգամավոր, «խմբապետ Համազասպ» անունով ներկա է եղել այդ ժողովին: Նա մատնանշել է, որ իր տրամադրության տակ փամփուշտներ և դրամ չկա, և որ իր շրջանի համար անհրաժեշտ է մինչև 600.000 փամփուշտ և 5.000 հրացան, և ծախսերի համար՝ ոչ պակաս, քան 50.000 ռուբլի: Ինչպես երևում է կուսակցության բյուրոյի թղթերից՝ նա անդամակցել է Շուշիի կենտրոնական կոմիտեի Ջևանշիրի[32] կոմիտեին և 1906 թ. օգոստոսի 1-ին, որպես նշյալ կոմիտեի անդամ, կուսակցության բյուրոյին գրած նամակում խնդրել է «Հովսեփ[33]» անունով [ՀՅԴ] անդամի կողմից իրեն զրպարտելու առթիվ միջնորդական դատարան նշանակել: Նույն թվին, ինչպես նշված է նույն բյուրոյի մեկ այլ փաստաթղթում, նա եղել է Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեի գծով Կորյուն վարդապետի աշխատակիցը և արդեն անվանվել է «հայոց իշխան Համազասպ»: Նա գլխավորապես եղել է Շուշիի և Ելիզավետպոլի կենտրոնական կոմիտեներին կից ահաբեկիչների ղեկավարը, և 1907 թ. նրա ղեկավարությամբ ու անձնական մասնակցությամբ Կրասնովոդսկում իրականացվել է ահաբեկչություն Մուշեղ Օհանյանի նկատմամբ, ով մերկացրել էր «Դաշնակցության» նոր կուսակցության[34] գործունեությունը:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ[35] (կուսակցական ծածկանունը՝ «Մացակ») – Թիֆլիսի կոմիտեի անդամ: Նրա կուսակցական գործունեությունը հաստատվում է Արևելյան Բյուրոյի հետևյալ թղթերով. 1. 1906 թ. մայիսի 16-ի նամակում Ղազախի կոմիտեի անդամ Մովսես Երեմյանը հաղորդել է Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Նալբանդյանին Ղազախի շրջանի կուսակցական անդամների անգործության մասին, 2. 1906 թ. մարտի 7-ին կուսակցության Բյուրոյին ուղղված խնդրագրում Գևորգ Կահրիմովը սպառնալով նշել է, որ դիմել է պետական դատարանին, և խնդրում է անհապաղ քննել գործը, քանի որ կուսակցության անդամ Մնացական Նալբանդյանը չարագործների դեմ հանդիման իրեն ոչ մի օգնություն չի ցուցաբերել, 3. 1907 թ. հունվարի 3-ի նամակում Սաքո Մեղավորյանը կուսակցության անդամ Պողոս Վարդանյանից խնդրել է ըստ պատկանելության Եղիգարովների գրասենյակ հասցնել Սարգիս Մանասյանցի և Նալբանդյանի («Մացակ») կուսակցական թղթերը (բնագիր գործի թերթեր 3539 և հակ.,

31 Հ. Սրվանձտյանցի դատական գործը տե՛ս՝ «Վէմ», 2010, N 2, էջ 166-184:
32 Զրաբերդի գավառ Գանձակի նահանգում:
33 Անձը պարզել չհաջողվեց:
34 Այդպես են բնորոշել ցարական քննիչները ՀՅԴ-ին՝ «Կովկասյան նախագծի» ընդունումից հետո, որպեսզի ի դեմս Միհրանի ու նրա կողմնակիցների՝ առանձնացնեն իրենց իսկ հայտնագործած «հին կուսակցությունը»:
35 Մնացական Նալբանդյանը Թիֆլիսում 1906 թ. տպագրված ՀՅԴ «Յառաջ» հասարակական, տնտեսական, քաղաքական և գրական օրաթերթի հրատարակիչ էր, իսկ խմբագիրը Ավետիս Սահակյանն էր:

2380 հակ., 3542, 4496, 4499 հակ.):

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ (կուսակցական ծածկանունը՝ «Ֆահրադ») – Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ: 1907 թ. հունիսի 12-ի N 5864 գաղտնի հեռագրում «Ֆահրադը» տեղեկացրել է Երևանի կենտրոնական կոմիտեի անդամ Թորոս [Գալուստ] Ալոյանցին «Միհրանի», Մուխթարովի (Կոփեցի Խեչո) և «Վասիլիի» (Վասիլի Շահնազարով) նկատմամբ ահաբեկչական ակտերի կատարման մասին (բնագիր գործի թերթեր 2344, 2353, 1011, 2364):

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԹԱԴԵՎՈՍԻ – Բաթումում «Պետերբուրգյան կաթնատան» սեփականատեր, տեղի կոմիտեի անդամ: Ինչպես երևում է Նավյանի անունով Շարաֆյանի և այլոց նամակներից և հեռագրերից՝ «Պետերբուրգ» կաթնատունը 1907 թ. ծառայել է որպես կուսակցական գրագրության համար գաղտնի բնակարան (բնագիր գործի թերթեր 595, 599, 1019-1020, 1026, 2010, 2011, 2345 հակ., 2362):

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ (Փարսադանով) **ՎԱՉԱԳԱՆ ԱՎԵՏԻՍԻ** – կուսակցության անդամ, ահաբեկիչներին զենք հասցնող: Ինչպես երևում է Կարսից, Պյատիգորսկից, Թիֆլիսից, Յալթայից և Նովոռոսիյսկից 1907 թ. օգոստոսի 11-ի, 19-ի, 23-ի, 24-ի, 30-ի, 31-ի NN. 606, 3752, 4448, 5090, 5456, 10643, 11438, 4569, 4967, 910 հեռագրերից, նա «Միհրանի» նկատմամբ մահապատժի իրականացման առթիվ ահաբեկչական ջոկատների պետեր Ալեքսանդր Շարաֆյանի, Վարդանի և Կարոյի հետ կուսակցական գրագրության մեջ է եղել (բնագիր գործի թերթեր 911-912, 1022-1023, 1027-1028, 1062-1063, 2364, 2372):

ՓԱՄԲԱԿՅԱՆ ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐԻ – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ: Թիֆլիսից 1907 թ. հուլիսի 9-ին Ղարաքիլիսայի կոմիտեի անդամ Նալբանդյանին ուղարկված N 3427 հեռագրում նա հաղորդել է, որ «Սաքո Մեղավորյանը անհապաղ մեկնում է, իսկ Մուշեղի գործը (այսինքն՝ Մուշեղ Առաքելյանցի նկատմամբ ահաբեկչությունը) նշանակված է վաղը» (բնագիր գործի թերթեր 1015 հակ., 730, 2346, 2362):

ՊՈՂՈՍՈՎ ՀՈՎՈ (կուսակցական ծածկանունը՝ «Հովո» կամ «Հովե») – Կարսի [կենտրոնական] կոմիտեի անդամ և «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ահաբեկիչ: 1906 թ. Կարսում մասնակցել է կուսակցության դատավճռով ոստիկանական ուրյադնիկ Փալանդովի սպանությանը և ոստիկանական սպա Տրոֆիմովի սպանության փորձին: Թիֆլիսից 1907 թ. հունիսի 7-ին Կարս ուղարկված N 3610 հեռագրով «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ավագ ահաբեկիչ «Ապրոն» (Աբրահամ Սարգսյանց) կուսակցության անդամ «Արամայիս Շապուհին» հրահանգել է, որպեսզի «Հովեն» անհապաղ մեկնի Բաթում, որտեղ կուսակցության հակառակորդների նկատմամբ ահաբեկչական ակտ էր պատրաստվում (բնագիր գործի թերթեր 1010, 1847, 2362):

ՊՈՊՈՎ – կուսակցության անդամ և կոմիտեներին զենք մատակարարող: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվություններից երևում է, որ հոկտեմբերի 29-ին նրա կողմից Թիֆլիսի կենտրոնական կոմիտե է հասցվել 9 ատրճանակ և 1.200 փամփուշտ՝ 823 ռուբլի 50 կոպեկ գումարի արժողության, ապա Շահնազարովի հետ նա այնտեղ է հասցրել 1125 ռուբլի արժողության 15 ատրճանակ (բնագիր գործի թերթ 3581):

ՍԵԼՎԻՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՀԱԿՈԲԻ – Յալթայի կոմիտեի անդամ: «Խեչո Կևորկովի» հուշատետրում Սելվիյանը նշվում է կուսակցության անդամ, իսկ նրա բնակարանը՝ գաղտնի կուսակցական հասցե: 1907 թ. օգոստոսի 11-ին Յալթայում նա «Կարոյի» և «Վարդանի» հրամանատարությամբ ահաբեկչական ջոկատի անդամների հետ մասնակցել է «Միհրանի», Վարդերեսյանի, Ղազանչյանի և Գասպար Նազարովի նկատմամբ կուսակցության մահվան վճիռների իրականացմանը և կուսակցության անդամները նրա միջոցով են հեռագրերով և նամակներով փոխանցել այդ առթիվ բոլոր կարգադրությունները, սակայն սպանությունները կատարել չի հաջողվել, քանի որ 1907 թ. օգոստոսի 27-ին Յալթայում Նազարովի սպանությունից անմիջապես հետո ոստի-

կանությունը ձերբակալել է «Կարոյի» և Սելվիյանի գլխավորած ահաբեկչական ջոկատի բոլոր անդամներին: Օդեսայի ռազմաօկրուգային դատարանի 1908 թ. հունիսի 14-ի վճռով, նշյալ Նազարովի սպանության համար Սելվիյանը դատապարտվել է տաժանակիր աշխատանքների (բնագիր գործի թերթեր 108, 420-421, 453-455, 462-466, 474-476, 598, 826 հակ., 1020, 1027, 1035-1036, 1063, 1119-1120, 2340, 2358, 2370, 2373, 2498):

ՄԱՅԻԼՅԱՆՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (իրեն Աբրահամ Պետրոսի Սարգսյան անվանող և ըստ անձնագրի ք. Յալթայում բնակվող) – Բաքվի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչ: Պյատիգորսկում, Նովոռոսիյսկում և Յալթայում «Միհրանի» և այլոց սպանության համար «Կարոյի» ջոկատի ահաբեկիչներին Բաքվից 1907 թ. հուլիսին և օգոստոսին օգնության է ուղարկվել: Նույն թվի օգոստոսին Յալթա քաղաքում այլ ահաբեկիչների հետ «Կարոյի» հրամանատարությամբ մասնակցել է «Միհրանի», Վարդերեսյանի, Ղազանչյանի և Նազարովի նկատմամբ մահվան վճռի իրականացմանը, սակայն 1907 թ. օգոստոսի 27-ին սպանել հաջողվել է միայն Նազարովին, ինչի արդյունքում նա ոստիկանության կողմից ձերբակալվել է: Օդեսայի զինվորական դատարանի 1908 թ. հունիսի 14-ի վճռով, նշյալ սպանության համար նա դատապարտվել է տաժանակիր աշխատանքների: «Խեչո Կևորկովի» հուշատետրի համաձայն՝ նա Բաքվի կենտրոնական կոմիտեի ահաբեկիչ է, իսկ Պյատիգորսկից Բաքու «Կարոյի» և Բաքվի կենտրոնական կոմիտեի ահաբեկիչ «Բախշիի» 1907 թ. հուլիսի 9-ի և 12-ի N 2187 և N 3071 հեռագրերից երևում է, որ «Կարոն» պահանջել է Մայիլյանցից անհապաղ հաղորդել բժիշկ Մուրադովին «Բախշիի» գտնվելու վայրի մասին, իսկ վերջինս «Կարոյին» օգնության ժամանելով՝ խնդրել է Մայիլյանցին ուղարկել անձնագիրը (բնագիր գործի թերթեր 910, 1208 հակ., 108, 451-464, 476 հակ., 2323, 2342 հակ., 2358, 2358 հակ., 2370):

ՍԱՐԳԻՍՈՎ ԶԱԽԱՐԻ ԱՎԵՏԻՍԻ – կուսակցության անդամ: 1907 թ. մայիսից մինչև սեպտեմբեր մասնակցել է «Միհրանի» և նրա կողմնակիցների հետապնդմանը, և նշյալ ժամանակ Պյատիգորսկում նրա բնակարանը (Սուվորովյան փողոց, տուն 11) կուսակցական գրագրության գաղտնի հասցե է ծառայել Կարսից, Նովոռոսիյսկից, Յալթայից և Թիֆլիսից կուսակցության ահաբեկչական ջոկատների պետեր Ալեքսանդր Շարաֆյանի, Չուբարյանի, Փարսադանովայի, Սելվիյանի ու «Կարոյի» հեռագրերի համար (բնագիր գործի թերթեր 116, 349, 462 հակ., 474, 912 հակ., 1027-1028, 1062, 1063, 2181, 2345 հակ.):

ՍԱՐԳԻՍՈՎ ԱՍԼԱՆ ԿՈՊԻԻ – «Խեչո Կևորկովի» ջոկատի ահաբեկիչ, ինչպես նշված է նրա հուշատետրում: «Ասլան» ստորագրությամբ Նովոռոսիյսկից Արմավիր 1907 թ. օգոստոսի 12-ին Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանին ուղարկված նրա N 1565 հեռագիրը. «Նովոռոսիյսկում «Խեչո Կևորկովի» ձերբակալության և ահաբեկչական ջոկատի պետ «Կարոյի» մեկնման անհրաժեշտության մասին, որպեսզի փոխարինի Խեչո Կևորկովին»: Ասլան Սարգիսովի անձնագիրը 1907 թ. օգոստոսի 27-ին խուզարկությամբ գտնվել է նույն հյուրանոցում՝ «Կարոյի» հետ բնակվող Անահիտ Փարսադանյանի մոտ (բնագիր գործի թերթեր 466, 475, 1026, 1341, 1897-1898):

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՅԿ ՆԻԿԻՏԱՅԻ (կուսակցական ծածկանունը՝ «Հայկ») – ուսուցիչ, ծառայել է Բաթումում «Նադեժդա»[36] տրանսպորտային գրասենյակում, Բաթումի կենտրոնական կոմիտեի անդամ: Մասնակցել է «Միհրանի» և նրա ազգականների հետապնդմանը: Կուսակցական գործերում նրա մասնակցությունը հաստատվում է նաև հետևյալ հեռագրերով: 1907 թ. հուլիսի 14-ի N 3525 հեռագրով կուսակցության Հյուսիսային Կովկասի շրջանի ահաբեկիչների պետ Ալեքսանդր Շարաֆյանը Հայկ Սողոմոնյանից կուսակցական ծախսերի համար պահանջում է անհապաղ հեռագրով գումար ուղարկել: Թիֆլիսից Բաթում հուլիսի 3-ին ուղարկված N 817 հեռագրով Սողոմոնյա-

36 «Հույս»՝ ռուսերեն:

նը Բաթումի կոմիտեի անդամ Արամ Մակարյանից պահանջել է «Խարիսխի» հասցեով իրեն անհապաղ 50 ռուբլի փոխանցել: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. թղթերի մեջ գտնված գրության մեջ նշված է Հայկ Սողոմոնյանին 6 կուսակցական ատրճանակների և փամփուշտների հանձնման մասին (բնագիր գործի թերթեր 475, 910, 1015, 1025-1026, 1034 հակ., 1035, 1066, 2070, 2320 հակ., 2344, 3593):

ՍԱՐԳՍՅԱՆՑ ԱԲՐԱՀԱՄ (կուսակցական ծածկանունը՝ «Ապրո», «Աբրո»)– «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ավագ ահաբեկիչ և կուսակցական զենքի պահապան: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ նրա մոտ պահպանության էին գտնվում կուսակցական ատրճանակներ, ռումբեր և փամփուշտներ: 1906-1907 թթ. նա օգնել է Հակոբ Չիլինգարյանին կուսակցության Անդրկովկասի կոմիտեների համար զենք ուղարկելու հարցում: Կուսակցության Բյուրոյի որոշմամբ Թիֆլիսում նա մասնակցել է հետևյալ սպանություններին. 1906 թ. Շիխալիի, 1907 թ. Շահնազարովի, Մուշեղ Առաքելյանի, ռոտմիստր Ստանոյի, 1908 թ. ոստիկանական հսկիչներ Իզդեբսկու և Պուստովոյտովի, օգոստոսի 8-ին Բաթումում՝ տեղի բանտապետ Պրեխտելի, 1907 թ. հուլիսի 3-ին Ալեքսանդրապոլում՝ գեներալ Ալիխանովի: «Ահաբեկիչ-Մարմնի» խորհրդի անդամ և գլխավոր ահաբեկիչ «Խեչո Կևորկովի» հուշատետրում նշված է «Ապրոյին» ահաբեկչական ակտերի կատարման համար 1907 թ. հանձնված 200 ռուբլի պարգևատրումը, իսկ հունիսի 7-ին Թիֆլիսից Կարս ուղարկված N 3610 հեռագրով «Ապրոն» պահանջում էր «Հովո» (Պողոսով) ահաբեկչի անհապաղ մեկնումը Բաթում՝ այնտեղ ահաբեկչական ակտ կատարելու համար (բնագիր գործի թերթեր 181-187, 1110, 729-730, 1476 հակ., 2362 հակ., 2385-2386, 3585-3586, 4374-4375, 4497):

ՍՏԵՓԱՆՅԱՆՑ ՂԱԶԱՐ – «Խեչո Կևորկովի» ջոկատի ահաբեկիչ և զենքի պահապան: Ինչպես երևում է «Խեչո Կևորկովի» հուշատետրից՝ Ղազար Ստեփանյանցի մոտ 1907 թ. գտնվել են կուսակցական երեք ատրճանակներ (բնագիր գործի թերթեր 181-187, 2362 հակ.):

ՍՈՒԺՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ – Ախալցխայի կոմիտեի անդամ: Մասնակցել է ահաբեկչական ակտերի: Կուսակցության Բյուրոյի վճռով Ախալցխայում 1907 թ. մարտին Թիֆլիսից եկած ահաբեկիչներ Միրաքովի և այլոց հետ մահափորձ է կատարել Ասլանի նկատմամբ և գրեթե նույն ժամանակ մասնակցել է Սերգոյի սպանությանը (բնագիր գործի թերթեր 2356, 2362 և հակ.):

ԻՍԱՀԱԿՅԱՆՑ (նույն ինքը Սահակյանց) **ԱՎԵՏԻՍ** (կուսակցական ծածկանունը՝ «Ավո») – 1906-1907 թթ. մասնակցել է Բաքվի, Վլադիկավկազի և Թիֆլիսի կենտրոնական կոմիտեների աշխատանքներին: 1906 թ. երդվյալ հավատարմատար Բալուգյանի հետ կուսակցության Բյուրոյի կողմից Արմավիրում հարուստ հայերից դրամահավաքներ է կատարել: Նշյալ դրամահավաքներին նրա մասնակցությունը վկայվում է բոլոր ահաբեկիչների ղեկավար և Բյուրոյի անդամ Հարություն Շահրիկյանի («Պարթև»)՝ կուսակցության Բյուրոյին ուղարկած 1906 թ. հուլիսի 24-ի հաղորդագրության մեջ՝ Արմավիրում 40.000 ռուբլի հավաքելու և այդ գումարը կուսակցության Բյուրոյի համար ուղարկելու մասին ցուցումով, և որ կուսակցական թղթակցությունը պետք է հասցեագրվի հետևյալ հասցեով. «Արմավիր, Ավան Դավիդովին՝ հանձնել Սահակյանցին»: 1907 թ. վերջին նա մասնակցել է Բաքվի կենտրոնական կոմիտեի աշխատանքին, ինչը երևում է նրա՝ որպես տեղական 3-րդ կոմիտեի անդամի, 1907 թ. դեկտեմբերի 19-ին Բաքվի կենտրոնական կոմիտեին ուղարկած հաղորդագրությունից, որը վերաբերում էր «Հայկազունի» անդամի կուսակցության շրջանային ժողովի պատգամավոր ընտրվելուն: Դրանից զատ, 1905 թ. նոյեմբերի 13-30-ի կուսակցական շրջանային ժողովի սղագրական հաշվետվություններից երևում է, որ Սահակյանցը շատ գործունյա մասնակցություն է ունեցել այդ ժողովին՝ պնդելով ռեակցիոն ռուսական կառավարությունն դեմ խիստ հեղափոխական պայքար մղելու վրա, որպեսզի պատրաստ լի-

նեն ապագա հեղափոխական կառավարության կազմավորմանը՝ այդ նպատակի համար այլ քաղաքական կուսակցությունների հետ միանալով (բնագիր գործի թերթեր 5203 հակ., 3549 հակ, 3550, 2996, 5162, 5163):

ՍԱՖՅԱՆՑ ՄԱՐԳԱՐ – կուսակցության անդամ և 1906 թ. տեղական կոմիտեներին զենքի ու փամփուշտների մատակարարող: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ նա Սիմոն Բեկ-Ալլահվերդի-Բեկյանի հետ համատեղ հասցրել է 286 ռուբլի 60 կոպեկ արժողության 15 ատրճանակ ու 1552 փամփուշտ, և որ Սաֆյանցը կուսակցությունից ստացել է ևս 310 փամփուշտ (բնագիր գործի թերթեր 3588, 4498 հակ.):

ՍԱՀԱԿՅԱՆ ՄԿՐՏՈՒՄ – Բաքվի [կենտրոնական] կոմիտեի անդամ և Բաքվում ինչ-որ կուսակցական թերթի վարիչ[37]: Նա բնակվել է նշյալ կոմիտեի անդամ լուսանկարիչ Մելիքյանի[38] հետ: Ներկա գործով մեղադրյալ Ներսես Բաբայանցի մոտ խուզարկությամբ գտնված նամակից երևում է, որ Մելիքյանի լուսանկարչատանը կուսակցական գործերով բանակցելու համար 1908 թ. փետրվարի 23-ին Մկրտում Սահակյանը սպասել է Բաբայանցի ժամանմանը (բնագիր գործի թերթեր 2601, 2602, 2608-2629, 3840-3843, 4501):

Իրեն **ԹԱՄԱՆՑԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ** անվանող (կուսակցական ծածկանունը՝ «Վարդան[39]», «Գևորգ, Վարդան») – ահաբեկիչների ջոկատի պետ: «Կարոյի» հետ 1907 թ. օգոստոսին Նովոռոսիյսկում և Յալթայում ղեկավարել է «Միհրանի», Վարդերեսյանի, Ղազանջյանի և Գասպար Նազարովի նկատմամբ կուսակցության մահվան վճռների իրականացումը: Նա «Կարոյի» հետ կազմել է այդ սպանությունների պլանը: Որոշվել էր սկզբում սպանել Նազարովին, ապա ծուղակը գցել ու սպանել Վարդերեսյանին, իսկ հետո՝ հարձակվել բնակարանի վրա ու սպանել այնտեղ գտնվող հիվանդ «Միհրանին» ու նրա քույր Զարուհի Ղազանջյանին: Սակայն այդ պլանն իրականացնել չի հաջողվել, քանի որ 1907 թ. օգոստոսի 27-ին՝ Նազարովի սպանությունից անմիջապես հետո, ոստիկանության կողմից Յալթայում ձերբակալվել են ջոկատի բոլոր անդամները՝ «Կարոյի» գլխավորությամբ, բացառությամբ թաքնվել հասցրած «Վարդանի»: «Վարդանի» ուղարկած և ստացած գաղտնի հեռագրերով միանգամայն հաստատվել է նրա մասնակցությունը ինչպես այդ հանցագործության, այնպես էլ ընկերակցության մյուս անդամների հետ գրագրության մեջ: Այսպես, Նովոռոսիյսկից Անապա 1907 թ. հունիսի 8-ին ուղարկված N 780 հեռագրով «Վարդանը» պահանջել է, որ կուսակցության անդամ Մեսրոպյանն անհապաղ Նովոռոսիյսկ ուղարկի կուսակցական քարոզիչ Գրիգոր Հովսեփյանին («Գրիգոր»), ինչին ստացել է կուսակցական քարոզիչ հոգևորական Մինասյանցի («Տեր Պողոս») դրական պատասխանը: Նովոռոսիյսկից Բաթում 1907 թ. օգոստոսի 8-ի N 928 հեռագրով «Վարդանը» կուսակցության անդամ Նավյանին հաղորդել է, որ «Միհրանը» Նովոռոսիյսկում է: Իսկ նույն օրվա N 3070 և N 3071 հեռագրերով Թիֆլիսից Լևոն Թայիրյանը Արմավիրի ենթակոմիտեի անդամ Բեժանյանին հրահանգել է գլխավոր ահաբեկիչ «Խեչո Կևորկովին» «Վարդանի» տրամադրության տակ՝ Նովոռոսիյսկ ուղարկելու մասին: Ալեքսանդր Շարաֆյանը հաղորդել է «Վարդանին», որպեսզի նա «Խեչո Կևորկովին» հաղորդի «Միհրանի» սպանության պլանը և արդյունքների մասին հեռագրի: 1907 թ. օգոստոսի 10-ի N 1306 հեռագրով «Կարոն» Սաքո Մեղավորյանին խնդրել է Նովոռոսիյսկի ջոկատի անդամ Կարապետ Հունանյանցի միջոցով հաղորդել ջոկատի ղեկավար «Վարդանի» հասցեն: Այդ հեռագրին ի պատասխան հետևել է Թայիրյանի 1907 թ. օգոստոսի 11-ի N 4349 հե-

37 Բաքվում որևէ թերթի նման ազգանունով խմբագիր պարզել չհաջողվեց:

38 Իսահակ Մելիքյանի լուսանկարչատունը գտնվել է Բաքվի Առևտրական և Մարինսկայա փողոցների անկյունում, հայկական եկեղեցուց 200-250 քայլ հեռու:

39 Միհրանի ահաբեկումը նախապատրաստողների շարքում բացի Վարդան Արզումանյանից, թերևս եղել է նաև մեկ այլ Վարդան, ուստի ցարական հետաքննությունը ակնհայտորեն խճճվել է միևնույն «Վարդանի»՝ տարբեր վայրերից ուղարկած հեռագրերի քննության մեջ:

ռագրով հետևյալ կարգադրությունը Բաքում՝ Արմեն Նավյանին. «Հաղորդել «Կարոյին» Հունանյանցի միջոցով «Վարդանի» հասցեն»: Թեոդոսիայից օգոստոսի 12-ին ուղարկված N 2468 հեռագրով «Վարդանը» Էլմասյանին հրահանգել է «Խեչո Կևորկովին» ուղարկել Թեոդոսիա, իսկ Արմավիրից Յալթա ուղարկված N 1507 հեռագրով Չինչինյանը հաղորդել է «Վարդանին», որ «Խեչոն» ժամանել է Նովոռոսիյսկ: N 1940 հեռագրով կուսակցության անդամ Ղարիբյանը հաղորդել է «Վարդանին», որ ահաբեկիչների չժամանելու դեպքում անհապաղ նրանց շտապ հեռագրով հրավիրի Յալթա, իսկ օգոստոսի 13-ին Նովոռոսիյսկ ուղարկված N 1730 հեռագրով կուսակցության անդամ Բեժանյանը տեղեկացրել է «Կարոյին», որ «Վարդանը» Յալթայից հայտնել է իր մոտ ահաբեկիչ Մարտիրոսի[40] ժամանման մասին: Ապա, Թեոդոսիայից և Յալթայից օգոստոսի 14-ին ուղարկված N 2196 և N 2981 հեռագրերով «Վարդանը» խնդրում էր կուսակցության անդամ Էլմասյանին անհապաղ տեղեկացնել Թեոդոսիայում Դառնիկ Մուսայանին գլխավոր ահաբեկիչ «Խեչո Կևորկովի» գտնվելու վայրի մասին և պահանջում, որպեսզի «Կարոն» անհապաղ մեկնի Յալթա: Օգոստոսի 14-ին Յալթա ուղարկված N 2195 հեռագրով «Վարդանը» հարցրել է կուսակցության անդամ Սելվիյանին «Միհրանի» և նրա ազգականների ժամանման մասին, իսկ Յալթայից Բաքում օգոստոսի 16-ին ուղարկված N 3357 հեռագրով «Վարդանը» պահանջել է, որպեսզի Արամ Մակարյանը և Արմեն Նավյանը կուսակցական ծախսերի համար հեռագրով իրեն 40 ռուբլի ուղարկեն (բնագիր գործի թերթեր 108, 420-421, 462, 466, 467, 474, 492, 598, 826-827, 1019-1020, 1119-1120, 1661):

ԹԱՅԻՐՅԱՆ ԼԵՎՈՆ (Լեոնիդ) – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Թայիրյանի 1907 թ. հունիսի 20-ի նամակը բժիշկ Մուրադովին՝ «Միհրանի» և նրա եղբայր Վարդերեսյանի նկատմամբ մահվան վճիռներն անհապաղ ի կատար ածելու մասին: Նովոռոսիյսկում 1907 թ. օգոստոսի 11-ի խուզարկությամբ կուսակցության գլխավոր ահաբեկիչ «Խեչո Կևորկովի» մոտ առգրավված Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի կողմից կարևոր կուսակցական գործերով գործուղման մասին տրված վկայականը ստորագրված է նույն Լևոն Թայիրյանի կողմից: Թայիրյանը Հայկունուն՝ «Դոնի Ռոստով, Արաքս գինետուն» հասցեով 1907 թ. մայիսի 31-ի N 169888 հեռագրով տեղեկացրել է Թիֆլիսից ահաբեկիչների ուղարկման մասին: Թիֆլիսից Դոնի Ռոստով 1907 թ. հուլիսի 5-ի N 2119 հեռագրով Թայիրյանը կարգադրել է, որպեսզի ահաբեկիչների ջոկատի պետ Հայկունին Դոնի Ռոստովից վերադարձնի երեք ահաբեկիչներին: Հունիսի 7-ի N 600 հեռագրով Հայկունին հաղորդել է Լևոն Թայիրյանին, որ «Միհրանը» հակակուսակցական քարոզչություն է վարում, ինչի արդյունքում անհրաժեշտ է նրա դեմ նոր ահաբեկիչներ ուղարկել: Ի պատասխան՝ Թայիրյանը կարգադրել է «Միհրանի» հետ անհապաղ վարվել ինչպես հարկն է՝ հանձնարարությունների չսպասելով, և արդյունքների մասին հաղորդել: Ի պատասխան՝ Հայկունին հունիսի 10-ի N 872 հեռագրով Թայիրյանին հաղորդել է «Միհրանի» և նրա ընկերների դեմ Բաքվի կենտրոնական կոմիտեի փորձառու ահաբեկիչների ուղարկման անհրաժեշտության մասին: Հայկունին հունիսի 14-ի N 8883 հեռագրով տեղեկացրել է Լևոն Թայիրյանին Ռոստովում գործի անհաջողության մասին՝ իր նկատմամբ ոստիկանության հսկողության պատճառով, և կարգադրություն խնդրել, թե ինչպես վարվի: Հունիսի 17-ի N 8755 հեռագրով Լևոն Թայիրյանը կարգադրել է, որպեսզի բժիշկ Մուրադովը միջոցներ ձեռնարկի «Միհրանի» եղբայր Հաբեթ Վարդերեսյանի դեմ, ով Թիֆլիսից փախել էր Պյատիգորսկ, իսկ հունիսի 25-ին Ղարաքիլիսա ուղարկված N 12464 հեռագրով Լևոն Թայիրյանը Նալբանդովին, մինչև հանգամանքների պարզաբանումը, հանձնարարել

40 Մարտիրոս Չարուխչյան (՞-1909): 1905 թ. մասնակցել է Բաքվի ինքնապաշտպանությանը: 1905 թ. Ալեքսանդրապոլում Դրոյի հետ միասին ահաբեկել է գեներալ Ալիխանովին: Մասնակցել է իրանական հեղափոխությանը և 1909 թ. փետրվարի 9-ին նահատակվել Ալվարի կռվում:

է դադարեցնել ահաբեկիչների երրորդ խմբի ուղարկումը: Հունիսի 26-ի N 14201 հեռագրով Լևոն Թայիրյանը հաղորդել է բժիշկ Մուրադովին՝ «Միհրանի» դեմ գործողությունների պլանին իր համաձայնության մասին: Օգոստոսի 11-ին Բաթում ուղարկված N 4349 հեռագրով Լևոն Թայիրյանը հանձնարարել է Նավյանին անհապաղ հաղորդել «Կարոյի» համար Հունանյանցի միջոցով «Վարդանի» հասցեն, իսկ օգոստոսի 15-ի N 6527 հեռագրով Նավյանին հանձնարարել է անհապաղ Նովոռոսիյսկ՝ «Կարոյին» օգնության մեկնել «Խեչո Կևորկովի» ձերբակալության պատճառով: Օգոստոսի 21-ի N 4694 հեռագրով «Կարոն» խնդրել է Լևոն Թայիրյանին ուղարկել 400 ռուբլի, իսկ նույն օրվա N 4537 հեռագրով՝ ևս 300 ռուբլի: Լևոն Թայիրյանը օգոստոսի 24-ի N 11314 հեռագրով հայտնել է «Կարոյին», որ գումարը փոխանցված է (բնագիր գործի թերթեր 420 հակ., 474 հակ., 470-471, 476, 654, 821 հակ., 823 հակ,, 828-829, 908, 1009-1014, 1017-1021, 1147, 1164, 1208 հակ., 2207, 2339, 2344, 4545):

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ[41] – Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամ: «Խեչո Կևորկովի» հուշատետրում Թադևոսյանը նշվում է որպես կուսակցության անդամ: Շուշիից Բաքու 1907 թ. հուլիսի 22-ին ուղարկված N 975 հեռագրով կուսակցության անդամ Վարդգեսյանը Թադևոսյանին հայտնել է կուսակցության ահաբեկչական ջոկատի անդամ Հայրում Կոստանյանի ժամանման մասին: Թիֆլիսից հունիսի 28-ի N 14200 հեռագրով Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ և ահաբեկիչների ջոկատի պետ «Արտավազդը» պահանջել է կուսակցական ծախսերի համար «Ապառաժյանին»[42] 2.000 ռուբլի ուղարկել: Օգոստոսի 15-ի N 6546 հեռագրով Մերյանը (Համո Օհանջանյան) Լևոն Թադևոսյանին հանձնարարել է անհապաղ Թիֆլիս ուղարկել ահաբեկչության գծով Բաքվի կոմիտեի անդամ Վարդան Արզումանյանին, իսկ օգոստոսի 22-ի N 10141 հեռագրով Լեոնիդ Թայիրյանը պահանջել է, որպեսզի Թադևոսյանը հեռագրով անմիջապես հաղորդի տեղեկություններ «Զակավկազյե»[43] թերթում հայ-թուրքական հարաբերությունների մասին ճեպագրի վերաբերյալ (բնագիր գործի թերթեր 745, 1014, 1021, 1022, 1036, 1066 հակ., 1147 հակ., 2155, 2345 հակ., 2362 հակ):

ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ ՆԵՐՍԵՍ ԱՐՏԵՄԻ – կուսակցության անդամ: Դոնի Ռոստովում «Արաքս» գինետան սեփականատեր: Այս գինետունը 1907 թ. կուսակցության անդամների միջև գրագրության համար գաղտնի բնակարան է ծառայել: Նման գրագրության մասին վկայում են հետևյալ հեռագրերը. 1. Թիֆլիսից Դոնի Ռոստով «Արաքս» գինետան հասցեով 1907 թ. մայիսի 13-ին ուղարկված N 16988 հեռագրով Լեոնիդ Թայիրյանը Հայկունուն տեղեկացրել է Թիֆլիսից ահաբեկիչների մեկնման մասին, 2. Նույն հասցեով հունիսի 5-ի N 2119 հեռագիրը՝ երեք ահաբեկիչներին Թիֆլիս վերադարձնելու մասին, 3. Նույն հասցեով հունիսի 6-ի N 3303 հեռագիրը Լեոնիդ Թայիրյանից. «Գործել նամակի համաձայն, իսկ ահաբեկիչները թող սպասեն և արդյունքների մասին հեռագրեք», 4. Նույն հասցեով Թիֆլիսից Մեղավորյանի հունիսի 11-ի N 5516 հեռագիրը. «Դոնի Ռոստովից Արմավիր «Միհրանի» դեմ գործելու համար թեկուզ մեկ ահաբեկչի օգնության ուղարկման մասին», 5. Նույն հասցեով Պյատիգորսկից «Կարոյի» հունիսի 16-ի N 2886 հեռագիրը ահաբեկիչների պետ Հակոբ Չիլինգարյանին, որ վերջինս իրեն դիմավորի կայարանում (բնագիր գործի թերթեր 475, 821 հակ., 909 հակ., 475 հակ., 1019 հակ.-1021, 1261, 1362, 2345 հակ.):

41 Լևոն Թադևոսյան (Պապաշա) (1865, Ագուլիս-1936, Փարիզ): Քրիստափոր Միքայելյանի քրոջ ավագ որդին էր: 1907 թ. Բաքվից ընտրվել է ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր: 1909-1912 թթ. ձերբակալված էր Նովոչերկասկի բանտում, ապա մինչև 1918 թ. գործել է Բաքվում, ղեկավարել Հայոց Ազգային խորհուրդը, իսկ 1919 թ. ընտրվել է Հայաստանի խորհրդարանի, ապա նաև՝ ՀՅԴ Գերագույն դատական ատյանի անդամ:
42 ՀՅԴ Ղարաբաղի կազմակերպության անվանումը:
43 Անդրկովկաս՝ ռուսերեն:

ԱՄԻՐՅԱՆՑ ԹԱԴԵՎՈՍ ՄԻՆԱՍԻ[44] (կուսակցական ծածկանունը՝ «Թադևոս») – կուսակցության անդամ և Բաքվի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկիչների ղեկավար: Կումիս գյուղի բնակիչների զինման և նրանց զենքի տիրապետման ուսուցանելու մասին Սարգիս Մարգարյանցի 1906 թ. երեք նամակները «Թադևոսին»: 1907 թ. հունիսի 24-ի N 4665 և N 4666 հեռագրերով, առաջինը՝ բժիշկ Մուրադովին 200 ռուբլի ուղարկելու մասին և երկրորդը՝ Ս. Պետերբուրգի կոմիտեի անդամ Զավրիևին, ըստ որի «Թադևոսի» հասցեն Պյատիգորսկում բժիշկ Մուրադովն է (բնագիր գործի թերթեր 909 հակ., 2320 հակ., 2332, 3552-3554, 2382-2384):

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍԻ[45] – կուսակցության [ՀՅԴ] նշանավոր անդամ, բոլոր կոմիտեներում մասնակցություն ունեցած: Նրա 1907 թ. հուլիսի 15-ի N 7546 հեռագիրը Թիֆլիսից Ղարաքիլիսա, կուսակցության անդամ Սերգեյ Եդիգարովին[46]՝ «կարգադրություն անել» [նշումով]: Հուլիսի 23-ի N 9594 հեռագրով, Թիֆլիսից Մանգլիս, [ՀՅԴ] Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտեի գլխավոր ահաբեկիչ «Արտյուշը»[47] հարցրել է Թումանյանից կուսակցության անդամ Զարգարյանցի[48] գտնվելու վայրի մասին և խնդրել հաղորդել «Խարիսխ»՝ կուսակցության հասցեով, երբ է վերջանում Վահրամ Նալբանդյանցի կալանքի տակ մնալու ժամկետը: Օգոստոսի 2-ի N 37 հեռագրում, Մանգլիսից Պյատիգորսկ, Թումանյանը խնդրել է կուսակցության անդամ Բուդուղովին փոխանցումով ուղարկել 200 ռուբլի Թիֆլիս՝ հրատարակության համար (բնագիր գործի թերթեր 1012, 1017, 2205, 2205 հակ., 5203, 5203 հակ.):

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆՑ ՏԻԳՐԱՆ – Երևանի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Ղարաքիլիսայից Դարաչիչագ[49] 1907 թ. հուլիսի 2-ին [Ղարաքիլիսայի] կոմիտեի անդամ Հակոբովի N 8 գաղտնի հեռագիրը Տիգրան Տեր-Աբրահամյանցին. «Դաշնակցություն» կուսակցության այդտեղ ժամանած հակառակորդների դեմ միջոցներ ձեռնարկել» (բնագիր գործի թերթեր 2196, 2345):

ՏԵՐ-ԴԱՎԻԴՅԱՆՑ ԱՐԻՍՏԱԿԵՍ – Թիֆլիսի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի նախագահ Սարգիս Մանասյանցի 1906 թ. նամակը կուսակցական կնիք դնելու համար վկայականի ուղարկման պահանջով, քանի որ դրանով հնարավոր կլինի կուսակցության օգտին մեծ դրամահավաք կատարել: Հաշվետվություն կուսակցության Բյուրոյին՝ իր կողմից 1906 թ. 65 ռուբլի կուսակցական գումար ծախսելու մասին (բնագիր գործի թերթեր 3595 հակ, 3613 հակ., 4499):

ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՑ ԱՐՍԵՆ – Ելիզավետպոլի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Կուսակցության Բյուրոյի թղթերի մեջ խուզարկությամբ առգրավված նրա հաղորդագրությունը Բյուրոյին՝ 1906 թ. դեկտեմբերի 12-ին ուսուցիչ Չալյանցին կուսակցական ծախսերի համար 129 ռուբլի վճարելու անհրա-

44 Ամիրյան Թադևոս (1880-1918): 1905-1906 թթ. Գանձակի ինքնապաշտպանության ակտիվ մասնակից դաշնակցական Թադևոս Ամիրյանը (Գիժ Թադոս) հետագայում հարել է անարխիստներին, իսկ ավելի ուշ՝ կուսակցությունից դուրս եկած իր եղբոր՝ Արսեն Ամիրյանի (Մրավյան) հետ միասին նաև՝ բոլշևիկներին: Ակտիվորեն մասնակցել է Բաքվի 1918 թ. հերոսամարտին, կատարել Ստ. Շահումյանի հանձնարարությունները: 1918 թ. օգոստոսի առաջին օրերին ծավալված վճռական ճակատամարտում ենթարկվելով Ռոստոմի հրամանին՝ նա իր 30 մարտիկներով անցել է Գայլի Դրունքը և որպես մահապարտ հարվածել թուրքական բանակի թիկունքին՝ խուճապ առաջացնելով թշնամու շարքերում: Բաքվի անկումից հետո գտնվել է Կրասնովոդսկ մեկնած «Թուրքմեն» նավում, որտեղ էին նաև Ստ. Շահումյանը և Թադևոսի եղբայր Արսեն Ամիրյանը, և գնդակահարվել է նրանց հետ միասին: Տե՛ս Արամ Ալչուջեան, Ռոստոմը Բագուում, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 348-354:

45 Հովհ. Թումանյանի դատական գործը տե՛ս «Վէմ», 2009, N 1, էջ 155-172:

46 Սարգիս (Սերգեյ) Փաշոյի (Պողոսի) Եդիգարյանը Թիֆլիսի «Հերմես» տպարանում հրատարակել է դաշնակցական գրականություն: Ձերբակալվել է լիժինյան գործով:

47 «Արտյուշը» Արտեմ Ստեփանի Քոչարյանն է:

48 Զարգարյան Արիստակես (Ռուստեմ) (1864-1935): Հովհ. Թումանյանի մտերիմ բարեկամներից: 1910 թ. ընտրվել է Հայոց հրատարակչական ընկերության նախագահ:

49 Այժմ՝ Ծաղկաձոր:

ժեշտության մասին, իսկ նամակի շրջերեսին կա նշյալ Տեր-Հարությունյանցի ստացականը իր կողմից նշյալ գումարը Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի նախագահ Սարգիս Մանասյանցից 1906 թ. դեկտեմբերի 25-ին ստանալու մասին (բնագիր գործի թերթեր 3603, 4499):

ՀՈՒՆԱՆՅԱՆՑ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ – կուսակցության անդամ և «Ահաբեկիչ-Մարմնին» կից ջոկատի ահաբեկիչ: Գտնվել է «Խեչո Կևորկովի» տրամադրության տակ: 1907 թ. օգոստոսին «Կարոյի» և «Վարդանի» հրամանատարությամբ Պյատիգորսկում, Նովոռոսիյսկում և Յալթայում մասնակցել է «Միհրանի» և նրա ազգականների հետապնդմանը՝ նրանց նկատմամբ մահապատժի իրականացման համար: Սակայն Յալթայում 1907 թ. օգոստոսի 27-ին հաջողվել է սպանել միայն «Միհրանի» զարմիկ Գասպար Նազարովին, որից հետո ահաբեկչական ջոկատի բոլոր անդամները ձերբակալվել են և Օդեսայի զինվորական դատարանի կողմից 1908 թ. հունիսի 14-ին նշյալ սպանության համար դատապարտվել տաժանակիր աշխատանքների: Պյատիգորսկից Թիֆլիս 1907 թ. օգոստոսի 10-ի N 1906 հեռագրով «Կարոն» խնդրել է «Ահաբեկիչ-Մարմնի» ահաբեկիչների ջոկատի գլխավոր պետ Սաքո Մեղավորյանին հաղորդել Նովոռոսիյսկ՝ Հունանյանցին, թե որտե՞ղ է նա ուղարկվել... «Միհրանի» հետապնդման համար, և հայտնել իրեն կուսակցության անդամ Հովհաննես Էլմասյանի և «Միհրանի» նկատմամբ ահաբեկչության գծով օգնական «Վարդանի» մանրամասն գաղտնի հասցեն: Ըստ այդ հեռագրի՝ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Լևոն Թայիրյանը օգոստոսի 11-ի N 4349 հեռագրով Բաթումի կոմիտեի անդամ Նավյանին «Կարոյի» նշյալ խնդրանքի կատարման հանձնարարական է տվել (բնագիր գործի թերթեր 108, 453-456, 476 հակ., 1019-1020, 1071 և հակ., 2358, 2358 հակ., 2370):

ԽԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ (նույն ինքը՝ Խարագյոզով-Խլեբնիկով) **ԻՎԱՆ** [Հովհաննես] **ԿԱՐՊԻ** (կուսակցական ծածկանունը՝ «Հովիվ») – Դոնի Նախիջևանում փակված հայկական «Նոր կյանք» թերթի խմբագիր: Նշյալ թերթը ֆինանսավորվել է «Դաշնակցություն» կուսակցության կողմից: Նշյալ խմբագրության գրասենյակում 1907 թ. տեղի են ունեցել տեղի կենտրոնական կոմիտեի նիստեր և ժողովներ, և այն կուսակցական գրագրության համար գաղտնի բնակարան է եղել: Արմավիրից Դոնի Նախիջևան 1907 թ. հուլիսի 19-ին ուղարկված N 2009 հեռագրից երևում է, որ Արմավիրի ենթակոմիտեի նախագահ Չինչինյանը («Նորավանով», «Համո») «Նոր կյանքի» խմբագրության հասցեով Գռուզինյանին խնդրել է մինչև հուլիսի 21-ը շտապ ուղարկել «Դասախոս» ահաբեկչին, նշելով, որ հակառակ դեպքում ամեն ինչ կորած է: 1907 թ. հոկտեմբերի 8-ին խմբագրությունում խուզարկությամբ առգրավված չորս նամակներում, որոնցից երկուսը պատրաստ էին ուղարկման համար, իսկ երկուսն էլ ստացվել էին խմբագրությունում, պարզվել է, որ առաջին երկու նամակները Խարագյոզյանի («Հովիվ») ստորագրությամբ էին, ընդ որում առաջինը 1907 թ. հոկտեմբերի 8-ին՝ հոգևորական Հակոբ Սառիկյանի[50] անունով «Սիկին»[51] փոխանցելու համար և վերաբերել է Դոնի Ռոստովում «Դաշնակցություն» կուսակցության արհեստավորների միություն («Արհեստ») կազմակերպելուն, և որ նախօրոք թաքցվել էին խմբագրության թղթերը, իսկ հոկտեմբերի 7-ի երկրորդ նամակում Խարագուլյանը կուսակցության անդամ Լևոն Աբովյանի միջոցով Մհերյանին (Համո Օհանջանյանին) հաղորդել է Դոնի Ռոստովում 1907 թ. դեկտեմբերին և ապա՝ Ս. Պետերբուրգում գումարվելիք առաջիկա կուսակցական ժողովների մասին, իսկ չորրորդում «Սիկը» հաղորդել է Խարագյուլյանին Արմավիրում «Դաշնակցություն» կուսակցության արհեստավորների միության գործունեության մասին (բնագիր գործի թեր-

50 Հակոբ Արզումանի Սառիկյան (20.12.1872, գ. Գանձաքար, Իջևան-1945, Երևան): Խանասորի արշավանքի մասնակից, հոգևորական, ձերբակալվել էր լիժինյան գործով: Տես «Վէմ», 2011, N 2, էջ 195-199:
51 «Սիկ» կամ «Սիգ»- Սիմոն Գռուզինյան - Վրացյան:

թեր 301-302, 1817 հակ, 1016, 1222-1223, 1935 և հակ, 1965, 2002 հակ, 2019-2020, 2340, 2374, 2375):

ԽԱՉԱՏՈՒՐՈՎ ՀԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԻ (կուսակցական ծածկանունը՝ «Սասունյան», «Քյոռ Հակոբ») – Յալթայի կոմիտեի նախագահ, Յալթայում «Սասուն» սրճարանի սեփականատեր: Այդ սրճարանը կուսակցական գրագրության համար գաղտնի բնակարան է ծառայել: Յալթայում 1907 թ. օգոստոսին մասնակցել է «Միհրանի» և նրա ազգականների նկատմամբ մահավճռի իրականացմանը: Յալթայից 1907 թ. օգոստոսի 10-ի N 2085 հեռագրով Բաթումի կոմիտեի անդամ Ազարիկ Ազարյանին հաղորդել է «Միհրանի» և նրա ազգականների ժամանման մասին («բաբերդցիներն այստեղ են») (բաբերդցիներ մականունը տրվել է «Միհրանին» և նրա ազգականներին[52]) (բնագիր գործի թերթեր 464, 466, 1490-1493, 1119, 2364, 2373):

ԽԱԺԱԿՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ[53] (կուսակցական ծածկանունը՝ «Խաժակ») – Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ, հակակառավարական գրքույկների, կոչերի կազմման գործի վարիչ և կուսակցության անդամների ու կոմիտեների համար քարոզչության վարման եղանակների և հնարքների մասին դասախոսություններ կարդացող: 1905 թ. նոյեմբերի 10-13-ին կայացած Ընդհանուր ժողովի[54] մատյանային որոշումներից երևում է, որ Խաժակյանն այդ ժողովին գործուն մասնակցություն է ունեցել՝ ապացուցելով, որ հայերին ռուսական կառավարությունից ինքնավարություն և ֆեդերացիա է հարկավոր պահանջել: Ղարաքիլիսայից Դիլիջան 1907 թ. հուլիսի 2-ին ուղարկված N 7 հեռագրով կուսակցության անդամ Սերգեյ Եդիգարովը խնդրել է Խաժակյանին իմանալ, թե ե՞րբ է Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի նախագահ Սերգեյ Մանասյանցը կուսակցության անդամների հետ Ղարաքիլիսայում լինելու (բնագիր գործի թերթեր 2195 հակ., 2196, 2341, 2344, 2365, 2371 հակ., 5138, 5157 հակ.):

ԽԱՉԱՏՈՒՐՈՎ ԿԱՐԱՊԵՏ – կուսակցության անդամ և նրա կոմիտեներին զենք մատակարարող: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ Կարապետ Խաչատուրովը Երևանի կենտրոնական կոմիտեին հասցրել է 125 ռուբլի արժողությամբ վեց ատրճանակ (բնագիր գործի թերթեր 3581, 3585, 4050-4054):

«**ՀՐԱԾԻՆ**» – Բաքվի[55] շրջանի «Անտառապատի» կոմիտեի անդամ: 1907 թ. դեկտեմբերի 19-ի Անտառապատի կոմիտեի հաղորդագրությունը կոմիտեի անդամ «Հրածինի»՝ կուսակցության շրջանային ժողովի պատգամավոր ընտրվելու մասին (բնագիր գործի թերթ 3014):

ՉՈՒԲԱՐՅԱՆ ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ (կուսակցական ծածկանունը՝ «Չուբար») – Երևանի [կենտրոնական] կոմիտեի անդամ: «Կարոյի» 1907 թ. հուլիսի գրություններում նշվում է Պյատիգորսկում կատարված կուսակցական ծախսերի համար «Չուբարին» 25 ռուբլու տրամադրումը: 1907 թ. հուլիսից օգոստոս Պյատիգորսկում «Կարոյի» հետ նա նույն բնակարանում է ապրել: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվություններում նշվում է Թիֆլիսում կուսակցական ծախսերի համար «Չուբարին» 84 ռուբլի 50 կոպեկ գումարի տրամադրումը: Պյատիգորսկից Կարս, Յալթա և Արմավիր 1907 թ. օգոստոսի 19-ին և 27-ին ուղարկված NN 3682, 3683 և 5090 հեռագրերից երևում է, որ նա նույն կուսակցության անդամներ Ալեքսանդր Շարաֆյանի և Անահիտ Փարսադանյանի հետ գաղտնի գրագրության մեջ է եղել՝ հաղորդելով նրանց միմյանց գտնվելու վայրերի մասին (բնագիր գործի թերթեր 471 հակ., 911-912, 1066 հակ., 2022, 2162, 1138, 2182 և հակ., 2346, 2362 հակ., 3604):

«**ՉԵՉԵՆ**» («Չաչան») – կուսակցական զենքի պահապան: Կուսակցության Արևելյան

52 Միհրանը ծնունդով Բաբերդ քաղաքից էր:
53 Գ. Խաժակի դատական գործը տե՛ս «Վէմ», 2010, N 1, էջ 149-165:
54 Խոսքը Կովկասյան ռայոնական ժողովի մասին է:
55 «Անտառապատի» (Լոռվա) կոմիտեն ընդգրկված էր Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի կազմում: Այստեղ ամենայն հավանականությամբ շփոթմունք է. Բաքվի փոխարեն պետք է լինի Թիֆլիս:

Բյուրոյի թղթերից երևում է, որ. 1. 1906 թ. ապրիլի 10-ին «Չեչենը» ստացականով պահպանության է հանձնել կուսակցական ատրճանակներ, փամփուշտներ, 2. Սարգիս Մանասյանցի 1906 թ. գրությամբ նրան է հանձնվել 50 ռուբ, 3. 1906 թ. ապրիլի 8-ին Դավիթյանցը «Չեչենից» ստացականով պահպանության է ընդունել զենք, փամփուշտներ և վառոդ, 4. «Չեչենի» 1906 թ. հունիսի 4-ի ստացականը՝ Թիֆլիսի կենտրոնական կոմիտեից 1906 թ. 10 զինվորների ծախսը հոգալու համար 324 ռուբլի 5 կոպեկ ստանալու մասին (բնագիր գործի թերթեր 3574 հակ., 3575 հակ., 3609):

ՇԱՀ-ԱԶԻԶ ԱՐՇԱԿ (Արտաշես) **ՓԻԼԻՊՈՍԻ** – կուսակցության անդամ: «Խեչո Կևորկովի» հուշատետրում Շահ-Ազիզը նշված է կուսակցության անդամ: Դոնի Ռոստովում 1907 թ. նույն կուսակցության անդամ Տեր-Հարությունովի հետ ունեցել է «Արաքս» գինետուն, որը կուսակցության անդամների համար գաղտնի գրագրության հասցե է ծառայել: Կարսի, ապա Վլադիկավկազի կենտրոնական կոմիտեների անդամ Չիլինգարյանը նրա հետ մոտ հարաբերությունների մեջ է եղել: Պյատիգորսկից Դոնի Ռոստով «Արաքս» գինետան հասցեով 1907 թ. հունիսի 16-ին ուղարկված N 2886 գաղտնի հեռագրով ահաբեկիչների ջոկատի պետ «Կարոն» Շահ-Ազիզին հայտնել է, որպեսզի վերջինս իրեն դիմավորի Դոնի Ռոստովի կայարանում (բնագիր գործի թերթեր 475, 909 հակ, 1153, 1216, 1673, 1773 հակ., 2298, 2346):

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ ՋՈՒՄՇՈՒԴ ԲԵԿ ՄԵԼԻՔ (կուսակցական ծածկանունը՝ «Շահեն») – 1905-1906 թթ. եղել է Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին կից ահաբեկչական ջոկատում: Ինչպես երևում է կուսակցության Բյուրոյին ուղարկված Այգեստանի կենտրոնական կոմիտեի 1907 թ. հունվարի 5-ի հաղորդագրությունից, նա Այգեստանի շրջանից ընտրվել է կուսակցության հերթական ժողովի պատգամավոր: Ելիզավետպոլից «Շահեն» ստորագրությամբ 1907 թ. օգոստոսի 14-ին Թիֆլիս ուղարկված N 593 հեռագրով Բյուրոյի անդամ «Գարոյին» (Գարեգին Փաստրմաջյան) տեղեկացվել է «կուսակցության անդամների կողմից Գարոյի ցանկության կատարումը իրեն չթույլատրելու մասին» (բնագիր գործի թերթեր 3549, 2342-2344, 2200, 5203-5204):

ՇԱՀՊԱՐՈՆՈՎ ԱՎԵՏԻՍ – Ախալքալաքի կոմիտեի անդամ: Ախալցխայի կոմիտեի անդամ Անջելովը 1907 թ. մայիսի 28-ի N 527 գաղտնի հեռագրով Շահպարոնովին տեղեկացրել է, որ կուսակցության վճիռն իրականացնելու համար ուղարկված ահաբեկիչ Սարգիս Միրաքովը սպանվել է (բնագիր գործի թերթեր 2352, 2352 հակ., 2356):

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ – կուսակցության անդամ և կոմիտեներին զենք մատակարարող: Արևելյան Բյուրոյի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ նա Պոպովի հետ համատեղ 1906 թ. հունվարի 20-ին Թիֆլիսի կենտրոնական կոմիտեին հասցրել է 176 ռուբլի, իսկ դեկտեմբերի 7-ին՝ 1125 ռուբլի արժողության ատրճանակներ և փամփուշտներ (բնագիր գործի թերթեր 3581, 3605):

«**ՇՈՂԻԿ**» («Շուլիկ») (կուսակցական ծածկանունը՝ «Շուշանիկ») – կուսակցության զինվորների յափնջիների և հագուստի պահապան: Կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվությունից երևում է, որ նշյալ տարվա ընթացքում նա կուսակցության և կոմիտեի անդամներ Արսենից, Տիգրանից, Գևորգից և ուրիշներից յափնջիներ և հագուստ է պահպանության ընդունել (բնագիր գործի թերթեր 3595, 3597, 2203-2204):

ՇԱԽՅԱՆ ԹՈՒՄԱՍ – կուսակցության անդամ, Բաքվի կենտրոնական կոմիտեի օգտին դրամահավաքներ կատարող: Նրա 1907 թ. հունվարի 20-ի նամակը Բաքվի կենտրոնական կոմիտեին աջակցելու մասին (բնագիր գործի թերթ 316):

«**ՀԱՋԻ ԳԵՎՈՐԳ**» – կուսակցության անդամ: Նրա 1905 թ. հուլիսի 18-ի ստացականը կուսակցության Բյուրոյին ծախսերի համար կուսակցական գումարից 5 ռուբլի կանխավճար ստանալու մասին: «Մասիս» ճաշարանում զինվորների ճաշի համար 1906 թ. նոյեմբերի 24-28-ի 26 ռուբլի 5 կոպեկ գումարի նրա հաշիվը Թիֆլիսի կենտրոնական կոմի-

տեին: Նշյալ կոմիտեից նրան, Խեչոյին, Մանուկին և Սամսոնին 1906 թ. կուսակցական ծախսերի համար 23 ռուբլի 20 կոպեկ հանձնելու մասին գրությունը (բնագիր գործի թերթեր 3575, 3606 հակ.):

ԱԼԱՀՎԵՐԴԻ-ԲԵԿՅԱՆ ՍԻՄՈՆ ԲԵԿ – կուսակցության կոմիտեներին զենքի և փամփուշտների մատակարար: Կուսակցության Բյուրոյից 1906 թ. նրա կողմից հասցված ատրճանակների և փամփուշտների համար 286 ռուբլի գումարի ստացական (բնագիր գործի թերթեր 3588 հակ., 4498 հակ.):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ – Ելիզավետպոլի [կենտրոնական] կոմիտեի անդամ: Կուսակցության Բյուրոյին տրված 1905 թ. դեկտեմբերի 31-ի նրա ստացականը ֆայտոնչի «Մոսկեսի» միջոցով 10 «Պարաբելում» և 7 «Մաուզեր» համակարգերի ատրճանակների և փամփուշտների ստացման մասին (բնագիր գործի թերթեր 3602, 3602 հակ., 4499 հակ.):

«**ԱՂԱԵԿ**»[56] – կուսակցական զենքի պահապան: Ըստ կուսակցության Բյուրոյի 1906 թ. հաշվետվության՝ նա և «Հաջի Լևոնը» 1906 թ. ապրիլի 17-հոկտեմբերի 5-ին պահպանության են ընդունել զենք, վառոդ, ռումբեր և փամփուշտներ (բնագիր գործի թերթեր 3607-3508):

«**ՀԱՅԿԱԶՈՒՆԻ**»[57] – Բաքվի 3-րդ կոմիտեի (Սև քաղաք) անդամ և քարտուղար: 1907 թ. դեկտեմբերի 19-ի Բաքվի 3-րդ կոմիտեի հաղորդագրությունը Բաքվի կենտրոնական կոմիտեին 1908 թ. շրջանային ժողովի պատգամավոր [sic] «Հայկազունու» ընտրության մասին: Նախագահ «Վարդանյանի» և քարտուղար «Հայկազունու» ստորագրությամբ 1907 թ. դեկտեմբերի 21-ի Բաքվի 3-րդ կոմիտեի հաղորդագրությունը Բաքվի կենտրոնական կոմիտեին՝ Սև և Սպիտակ քաղաքների կողմից անդամ «Մկրտումի» 1908 թ. կուսակցության շրջանային ժողովի պատգամավոր ընտրվելու մասին (բնագիր գործի թերթեր 2996, 3014 հակ.):

«**ԱՐՋԱՆԴԵԼ**»[58] – Բաքվի քաղաքային կոմիտեի անդամ: Կուսակցության կոմիտեների անդամների ընտրության դեպքում երկաստիճան համակարգի ընդունման անհրաժեշտության մասին 1908 թ. հունվարի 4-ի նրա հաղորդագրությունը Բաքվի կենտրոնական կոմիտեին (բնագիր գործի թերթ 3014):

ԱՆՏՈՆՅԱՆՑ ԼԵՎՈՆ ՂԵՎՈՆԴԻ – կուսակցության անդամ, Բաքվի կենտրոնական կոմիտեի օրգան «Գրող» ամսագրի և «Դաշնակցություն» կուսակցության հրատարակած գրքույկների տարածման վարիչ: Նիկոլայ և Ղազար Ղևոնդի Անտոնյանցների հետ Բաքվում Կոնստանտինովյան փողոցում՝ Հովհաննեսովի տանը, նրա զբաղեցրած բնակարանում 1907 թ. հուլիսի 17-ի խուզարկությամբ գտնվել է նշյալ «Գրող» ամսագրի N 14 և N 15 համարների 42 օրինակ (բնագիր գործի թերթեր 3834, 3835, 3849):

ԱՆՏՈՆՅԱՆՑ ՆԻԿՈԼԱՅ ՂԵՎՈՆԴԻ – նույնը, ինչ որ Լևոն Անտոնյանը:

ԱՆՏՈՆՅԱՆՑ ՂԱԶԱՐ ՂԵՎՈՆԴԻ – նույնը, ինչ որ Լևոն Անտոնյանը:

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՌԱՔԵԼ – կուսակցության և կոմիտեի անդամ: Նրա 1906 թ. սեպտեմբերի 3-ի նամակը Կարս՝ Տեր-Անանիկյանին Թեոդոսիայում «Դաշնակցություն» կուսակցության գործերի անհաջող զարգացման մասին: Խաչատուր Քեբաբչյանի միջոցով 1906 թ. սեպտեմբերի 4-ին նա Թեոդոսիայից Բաքում տեղի կենտրոնական կոմիտեի համար ուղարկել է երկու տակառիկ, որոնցում առգրավումից հետո պարզվել է՝ եղել են վառոդ և փամփուշտներ: Պետրոսյանի անունով Բաքումի կենտրոնական կոմիտեի բլանկի վրա նշյալ բեռի ուղարկման մասին 1906 թ. սեպտեմբերի 4-ի նրա գրությունը (բնագիր գործի թերթեր 4568-4571):

ԷԼՄԱՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԻ – թրքահպատակ (կուսակցական ծածկանունը՝ «Հովնան»), Նովոռոսիյսկում թուրքական հյուպատոսի քարտուղար, կուսակցության անդամ և անվանի գործիչ: Կուսակցության անդամ

56 Դատական գործի բնագրում այսպես է գրված:

57 Հիշեցնենք, որ «Հայկազունի» կուսակցական ծածկանունի տակ քննչական մարմինները ժամանակին նկատի են ունեցել Հովի. Քաջազնունուն, ինչից նա հրաժարվել է: Այստեղ քննիչները շփոթել են նաև կոմիտեի շրջանի («Հայկազունի») և շրջանային ժողովի համար ընտրված («Մկրտում») պատգամավորների լիազորությունները: Մանրամասն տե՛ս «Վէմ», 2010, N 4, էջ 186-194:

58 Դատական գործի բնագրում այսպես է գրված:

թրքահպատակներին մատակարարել է օտար անձնագրեր, որպեզի նրանց հնարավորություն տրվի ոստիկանությունից թաքնվել: Ըստ «Խեչո Կևորկովի» հուշատետրի՝ Նովոռոսիյսկում նրա բնակարանը կուսակցության անդամների և գրագրության համար գաղտնի հասցե էր: Այդ ամենը հաստատվում է հետևյալ հեռագրերով, որոնք վերաբերում են «Միհրանի» նկատմամբ կուսակցության մահավճռի իրականացմանը. 1. Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ Արտեմ Թայիրյանը 1907 թ. օգոստոսի 8-ին Արմավիրի ենթակոմիտեի անդամ Բեժանյանին ուղարկած N 370 հեռագրով հրահանգել է, որպեսզի ավագ ահաբեկիչ «Խեչո Կևորկովը» անհապաղ Նովոռոսիյսկ մեկնի («Միհրանի» նկատմամբ մահվան վճռի իրականացման համար) և այնտեղ Էլմասյանից ահաբեկչական ջոկատի պետ «Վարդանին» հարցնի, 2. Թիֆլիսից 1907 թ. օգոստոսի 8-ին ուղարկված N 371 հեռագիրը, որ Հյուսիսային Կովկասի շրջանի ահաբեկիչների պետ Ալեքսանդր Շարաֆյանը «Խեչո Կևորկովի» ժամանման միջոցին վերջինիս բացատրի գործերի վիճակը («Միհրանի» նկատմամբ ահաբեկչության) և արդյունքների մասին հեռագրի, 3. Արմավիրից «Կարոն» 1907 թ. օգոստոսի 10-ի N 3096 հեռագրով «Ահաբեկիչ-Մարմնին» կից ահաբեկիչների ջոկատի պետ Մեղավորյանին խնդրել է Նովոռոսիյսկում ջոկատի անդամ Հունանյանցին հաղորդել «Վարդանի» և Էլմասյանի հասցեն, 4. «Վարդանը» Թեոդոսիայից 1907 թ. օգոստոսի 12-ի N 2196 հեռագրով Հովհաննես Էլմասյանին խնդրել է անհապաղ պատասխանել Գառնիկ Մուսայանին՝ ժամանե՞լ է Նովոռոսիյսկ «Խեչո Կևորկովը», թե՞ ոչ, 5. «Վարդանը» Յալթայից 1907 թ. օգոստոսի 12-ի N 2486 հեռագրով Հովհաննես Էլմասյանին հաղորդել է, որպեսզի եթե «Խեչո Կևորկովը» ժամանել է Նովոռոսիյսկ, ապա թող մեկնի Թեոդոսիա, որտեղ նրան ինքը կսպասի (ընագիր գործի թերթեր 420, 476 հակ., 826 հակ., 827 հակ., 1119, 1209, 2008 հակ., 2342 հակ., 2346, 2363, 2372):

ՅՈՒՍՈՒՖՅԱՆՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԵՄԻ – կուսակցության և կոմիտեի անդամ: Բյուրոյի անդամ «Ռոստոմը» (Ստեփան Զորյանց) Թիֆլիսից 1907 թ. օգոստոսի 26-ի N 12197 հեռագրով պահանջել է, որպեսզի Յուսուֆյանն անհապաղ գործերով Թիֆլիս ժամանի և մեկնման մասին հեռագրի: Կուսակցության անդամ Ղանալալ[ն]ովը Ախալցխայից 1907 թ. հուլիսի 23-ի N 613 հեռագրով հաղորդել է Թիֆլիս՝ կուսակցության անդամ Մալխասյանին, որպեսզի վերջինս «Խարիսխի» խմբագրության մեջ Յուսուֆյանին հանդիպի: Նոր Բայազետից Սմբատը «Խարիսխի» հասցեով 1907 թ. օգոստոսի 26-ի N 126 հեռագրով «Ռոստոմին» հաղորդել է Ախալցխայում Յուսուֆյանի գտնվելու վայրի մասին (ընագիր գործի թերթեր 1023, 2001 հակ., 2346, 1066 հակ., 2207, 2208 հակ.):

Նշյալ ընկերակցության հանցավոր գործունեության բնութագրման համար հարկ է մատնանշել այն ահաբեկչական ակտերը, որոնք նրա վճռով 1905-ից մինչև 1908 թ. ներառյալ կատարվել են ինչպես պետական իշխանության ներկայացուցիչների, այնպես էլ մասնավոր անձանց նկատմամբ: Նման ակտերի ճշգրիտ քանակը առայժմ պարզել հնարավոր չեղավ, սակայն ներկա պահին քննության տվյալներով միանգամայն հաստատվել է, որ նշյալ ժամանակաշրջանում հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության վճռով կատարվել են հետևյալ սպանությունները[59].

1. Ելիզավետպոլի փոխգնդապետ Անդրեևի, 2. գավառապետ Բոգուսլավսկու, 3. գավառապետ Նաշչանսկու, 4. գավառապետ Շմերլինգի, 5. գավառապետ Պավլովի, 6. ոստիկանական պոլիցմեյստեր, գնդապետ Սախարովի, 7. ոստիկանական պրիստավ Ջավախովի, 8. ոստիկանական պրիստավ Շումակևիչի, 9. սահմանապահ սպա Բիկովի, 10. Բաքվի նահանգապետ Նակաշիձեի, 11. Մահմեդ Կիգիրլինսկու, 12. ոստիկանական ռոտմիստր Ստանոյի, 13. ոստիկանական ռոտ-

59 Ներկայացվող ցանկն ամենևին էլ ամբողջական չէ: Մյուս կողմից, միանշանակ չի կարելի փաստել նրանց բոլորի՝ ՀՅԴ անդամների կողմից ահաբեկումը (փաստաթղթի վերջին մասում կատարված ընդգծումները մերն են -Ա.Հ.):

միստր Ապպելի, 14. գեներալ Կարանգոզովի, 15. գեներալ Ալիխանովի, 16. գեներալ Գրյազնովի, 17. գնդապետ Կրավչենկոյի, 18. ոստիկանական հսկիչ Պուստովոյտովի, 19. ոստիկանական հսկիչ Իզդեբսկու, 20. բանտապետ Պրեխտելի, 21. ոստիկանության պաշտոնյա Լազարևի, 22. ենթասպա Լալաձեի, 23. ոստիկանական ռոտմիստր Գնուտովի, 24. Ալիբեգովի, 25. Վասիլի Շահնազարովի (Արմավիրում), 26. Տեր-Ավետիսյանցի, 27. Խեչո Մուխթարովի, 28. Վարդապետյանի, 29. Սերգո Մամուլյանցի, 30. Ենոք Շանյանի, 31. Լյուսիկի, 32. Գասպար Նազարովի, 33. Վասիլի Շիխալիի, 34. Մուշեղ Առաքելյանի, 35. Կարապետ Ավակովի, 36. Մուշեղ Օհանյանի, 37. ոստիկանության պաշտոնյա Պոլեշկոյի, 38. ոստիկանության պաշտոնյա Ուլյանովի, 39. հայ Ասլանի, 40. հայ Սերգոյի, 41. հոգևորական Եղիազարովի, 42. Թևոս Խաչանովի, 43. տանուտեր Ավագ Հախվերդովի, 44. Լալաևի, 45. Եդիգարյանի, 46. ոստիկանական ուրյադնիկ Փալանդովի:

Ըստ վերոշարադրյալի և ուշադրության առնելով, որ՝ **1. Ավետիս Ահարոնյանը, 2. Համազասպ Օհանջանյանը, 3. Ստեփան Զորյանը, 4. Հարություն Շահրիկյանը, 5. Գարեգին Փաստրմաջյանը, 6. Մինաս Մուրադովը, 7. Դումանը, 8. Սաքո Մեղավորյանը, 9. Մուրադը, 10. Սեպուհը, 11. Արմենակ Շահնազարովը, 12. Վահան Արծրունին, 13. Լևոն Աբովյանը, 14. Արտաշես Չիլինգարյանը, 15. Վարդան Արզումյանը, 16. Հակոբ Չիլինգարյանը** (մահացել է), **17.** [Իվան] **Մելիք-Այվազովը, 18. Արամ Ամիրյանցը, 19. Գևորգ Արաբաջյանը, 20. Աբրահամ Անիսոնյանը, 21. Հաջի Մուղդուսի Ավետիսովը, 22. Արամ**[60] **Հակոբյանը, 23. Ազարիկ Ազարյանը, 24. Ավետիս Ազնաուրյանը, 25. Արմենակ Հակոբովը, 26. Սողոմոն Ամիրխանյանը, 27. Ախաշյանը, 28. «Հաջի Լևոնը», 29. Հմայակ Արարատյանցը, 30. Հովսեփ Արղությանը, 31. Անջելովը, 32. «Ստեփանը»** («Արտուշ»), **33. Մկրտիչ Աղամալովը, 34. Թորոս Ալոյանցը, 35. «Արսենը», 36. Սարգիս Աքայանցը, 37. Գևորգ Հարությունյանցը, 38. Եղիևը, 39. Ճակրատ**[61] **Առաքելյանը, 40. Վանո Ավետիսյանը, 41. Մինաս Բերբերյանը, 42. Արշակ Մանուկյանը, 43. Արտաշես Բուդուղովը, 44. Խաչատուր Բիջողլին, 45. Արսեն Բեջանյանցը, 46. Բեզենկյանը, 47. «Բախշին», 48. Խաչատուր Բզնունին, 49. Վանո Բաղալյանցը, 50. Վռամ Վահանյանը, 51. Ղազար Վարդանյանը, 52. Մինաս Վարդանյանցը, 53. Վարդանյանը, 54. Ամպուտ Թաքայանցը, 55. Երվանդ Թաքայանցը, 56. Արտեմ Գրիգորյանը, 57. Վահան Ղարիբովը, 58. Համբարձում Ղարիբովը, 59. Պետրոս Հալաջյանցը, 60. Սեմեվոն Գառուգյանը, 61. Սամսոն Գրիգորյանը, 62. Մկրտիչ Գրիգորյանցը, 63. Սահակ Ղարիբյանը, 64. Ստեփան Մկրտչյանը, 65. Լևոն Գյանջենցյանը, 66. Սամսոն Գալանչանցը, 67. Բեսարիոն Գալստյանը, 68. Լևոն Գևորգբեկյանը, 69. «Գորգիսը», 70. Ամիրխան Գասպարյանցը, 71. Ղուկասյանը, 72. Գալուստ Ղազարյանցը, 73. բժիշկ Գևորգբեկյանը, 74. Ա. Գալալյանցը, 75. Արմեն Գասպարյանցը, 76. «Գուրգենը», 77. «Գասախսոը», 78. Դաբախանյանը, 79. «Ջումշուդը»** («Մարտին»), **80. Լևոն Դավիթյանը, 81. Չիլիխովը, 82. Սիմոն Եղիազարովը, 83. Մոսես Երեմյանցը, 84. Գարեգին Հեքիմյանը, 85. Մկրտումովը, 86. Մելիք-Ալահվերդովը, 87. Դավիթ Զավրիևը, 88. Հովհաննես Զորյանը, 89. «Զարմիկը», 90. Քարտաշյանը, 91. Սարգիս Քոչարյանցը, 92. Հարություն Քոչարյանցը, 93. Գեղամ Մկրտչյանը, 94. Գառնիկ Մուսայանը, 95. Արամ Մկրյանը, 96. Հովակիմ Միրազիզովը, 97. Միրզոյանցը, 98. Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, 99. Հրանտ Մելյանը, 100. Խաչատուր Մարջյանը, 101. Մեշաջանյանցը, 102. Զինաիդա Մեհրաբյանը, 103. Ջումշուդ Աստվածատուրովը, 104. Մթերքյանը, 105. Մալխասյանը, 106. Մանուկյանը, 107. Իսահակ Մելիքյանը, 108. Արտաշես Մելքոնյանը, 109. «Միհրդատը», 110. Սարգիս Մարգարյանը, 111. Միքայել Մելիք-Վարդանյանը,**

60 Հակոբյանի անունը Աբրահամ էր:

61 Դատական գործի բնագրում այսպես է գրված:

112. Համազասպ Նահրատյանցը, 113. Վահրամ Նալբանդյանցը, 114. Նավյանը, 115. Վասիլի Նարգիսը, 116. Համազասպ Սրվասյանցը, 117. Մնացական Նալբանդյանցը, 118. Սարգիս Օհանջանյանցը, 119. Հայրապետ Պետրոսյանը, 120. Վաչագան Փարսադանյանը, 121. Վահան Փամբակյանը, 122. Հովո Պողոսովը, 123. Պոպովը, 124. Արմենակ Սելվիյանը, 125. Հարություն Մայիլյանը, 126. Զաքարիա Սարգիսովը, 127. Ասլան Սարգիսովը, 128. Հայկ Սողոմոնյանը, 129. Աբրահամ Սարգսյանցը, 130. Ղազար Ստեփանյանցը, 131. Արտաշես Սուժյանը, 132. Ավետիս Իսահակյանցը, 133. Մարգար Սաֆյանը, 134. Մկրտում Սահակյանը, 135. Իրեն Թամանցև անվանողը («Գևորգ», «Վարդան»), **136. Լևոն Թայիրյանը, 137. Լևոն Թադևոսյանը, 138. Ներսես Տեր-Հարությունյանը, 139. Թադևոս Ամիրյանցը, 140. Հովհաննես Թումանյանը, 141. Տիգրան Տեր-Աբրահամյանը, 142. Արիստակես Տեր-Դավիդյանցը, 143. Արսեն Տեր-Հարությունյանը, 144. Կարապետ Հունանյանցը, 145. Իվան Խարագյոզյանը, 146. Հակոբ Խաչատուրովը, 147. Գարեգին Խաժակյանը, 148. Կարապետ Խաչատուրովը, 149.** «**Հրածիևը**», **150. Պողոս Չուբարյանը, 151.** «**Չեչենը**», **152. Արշակ Շահ-Ազիզը, 153. Ջումշուդ Բեկ-Մելիք Շահնազարյանը, 154. Շահպարոնովը, 155. Շահնազարովը, 156.** «**Շուշիկը**», **157. Թումաս Շախյանը, 158.** «**Հաջի Գևորգը**», **159. Սիմոն Բեկ Ալահվերդի-Բեկյանը, 160. Հովհաննես Հարությունյանը, 161.** «**Աղաեկը**», **162.** «**Հայկազունին**», **163.** «**Արզանգելը**», **164. Լևոն Անտոնյանը, 165. Նիկոլայ Անտոնյանը, 166. Ղազար Անտոնյանը, 167. Առաքել Առաքելյանցը, 168. Հովհաննես Էլմասյանը, 169. Հովհաննես Յուսուֆյանը**[62] միանգամայն մերկացվում են իրենց միջև նախնական համաձայնությամբ հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության հանցավոր ընկերակցությանը մասնակցության մեջ, ընկերակցություն, որն իր գործունեության խնդիր էր դրել գործադուլների, տնտեսական, կազմակերպչական և քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության [միջոցով], ռուսական պետության մեջ հաստատված հիմնական օրենքներով կառավարման ձևի հանդեպ բռնի ոտնձգության և գոյություն ունեցող հասարակական կարգի տապալման միջոցով դաշնային [ֆեդերատիվ], ժողովրդավարական հանրապետության հիմնման համար, ընդ որում նշյալ հանցավոր ընկերակցությունը նշյալ նպատակների համար 1905 թվականից մինչ այժմ Թիֆլիսում և Ռուսական կայսրության այլ քաղաքներում իր տրամադրության տակ ուներ.

1. Հեղափոխական բյուրո, հեղափոխական կենտրոնական և տեղական կոմիտեներ, ենթակոմիտեներ, խմբեր և այլն, որոնք հրապարակել են հակակառավարական ամսագրեր, թերթեր, գրքույկներ, կոչեր, ծրագրեր՝ ռուսական պետության մեջ հանրապետության ձևավորման համար զինված ապստամբության կոչով,

2. Սարքավորված տպարաններ, հրաձգային և սառը զենքի համար մեծ պահեստներ, պայթուցիկների (ռումբեր), վառոդի, փամփուշտների, դինամիտի և այլնի մեծ պաշարներ,

3. Հեղափոխական զինվորների («Զինվորներ») հատուկ ջոկատներ, «Ահաբեկիչ-Մարմնի» գլխավորությամբ ահաբեկչական ջոկատներ, որոնք կուսակցության որոշմամբ 1905 թվականից մինչև 1908 թ. Ռուսաստանում կառավարող իշխանության և մասնավոր անձանց մի շարք սպանություններ են կատարել, ովքեր չեն ցանկացել ենթարկվել նրա անօրինական կարգադրություններին,

4. Տեղական հայ բնակչության վրա իր հանցավոր նպատակների համար տարեկան

62 Անշուշտ, այս քանակը՝ 169, ճշգրիտ և ամբողջական չէ, մանավանդ՝ չճշտված անունների անհարկի ընդգրկման ու անիմաստ կրկնությունների պատճառով: Մասնավորապես, ցուցակում բացակայում են ՀՅԴ Մեծ դատավարությամբ անցած Գարեգին Նժդեհի, Արշակ Մեհրաբյանի և այլոց անունները:

հարկեր է բռնադատել և մահվան սպառնալիքի տակ հարուստ անձանցից հարկադիր առավել մեծ չափերի գումարների դրամահավաքներ կատարել, ովքեր հրաժարման դեպքում նույն կոմիտեների որոշումներով մահվան են ենթարկվել,

5. Մեխանականացնելով կառավարող իշխանության դատական և վարչական գործառույթները և բնակչությանն արգելելով դիմել իշխանություններին, այդ ընկերակցությունն ինքը, իր Բյուրոյի և կոմիտեների անդամների միջոցով կատարել է քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերի քննություններ և այդ գործերով վճիռներ ընդունել, որոնք իրականացվել են նույն Բյուրոյի և կոմիտեների անդամների միջոցով, այսինքն՝ Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մեջ,

6. Որ Համազասպ Օհանջանյանը, Հարություն Շահրիկյանը, Մինաս Մուրադովը, Դումանը, Սաքո Մեղավորյանը, Արտաշես Չիլինգարյանը, Կարապետ Ղարիբովը, Սամսոն Գրիգորյանը («Աբրամովիչ»), Արմենակ Նավյանը, Համազասպ Սուրվասյանցը, Արմենակ Սելվիյանը, Հայկ Սողոմոնյանը, իրեն Թամանցև անվանողը, Լևոն Թայիրյանը, Հակոբ Խաչատուրովը, «Դասախոսը», Գեղամ Մկրտչյանը, Ասլան Սարգիսովը դրանից զատ [մեղադրվում են] դարանից սպանությունների կատարման գործում սադրանքի և հանցակցության մեջ, Պատժի մասին կանոնադրության 13-րդ, 120-րդ և 1453-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների մեջ,

7. Որ Հակոբ Չիլինգարյանը մահացել է մինչև ներկա գործով որպես մեղադրյալի ներգրավումը,

8. Որ Քրեական դատավարության կանոնադրության 120-րդ հոդվածի համաչայն որպես մեղադրյալներ ներգրավման ենթակա անձինք՝ վերոնշյալ «Ստեփանը» (Արտուշ), «Արսենը», «Բախշին», Բեզենկյանը, «Գորգիսը», Ղուկասյանը, «Դասախոսը», «Զարմիկը», «Զումշուդը», «Գուրգենը», Մեշչադյանցը, «Լիպարիտը», «Հրածինը», «Չեչենը», «Հաջի Գևորգը», «Շուշիկը», «Աղաեկը», «Հայկազունին» և «Արգանգելը» բոլոր չեռնարկված միջոցներով դեռ չեն բացահայտվել, դրա համար էլ Դատական Քննիչը, ղեկավարվելով Քրեական դատավարության կանոնադրության 396-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑ

Նշյալ հայ հեղափոխական «Դաշնակցություն» կուսակցություն ընկերակցությանը մասնակցած վերոնշյալ բոլոր անձանց, բացառությամբ նրանց, ովքեր չեն բացահայտվել, որպես մեղադրյալների ներգրավել Քրեական կանոնադրության 102-րդ հոդվածով, իսկ վերջիններիս այդ մեղադրանքը ներկայացնել նրանց անձանց բացահայտմամբ: Ինչ վերաբերում է Համազասպ Օհանջանյանին, Հարություն Շահրիկյանին, Մինաս Մուրադովին, Դումանին, Սաքո Մեղավորյանին, Արտաշես Չիլինգարյանին, Կարապետ Ղարիբովին, Սամսոն Գրիգորյանին, Արմենակ Նավյանին, Համազասպ Սուրվասյանցին, Արմենակ Սելվիյանին, Ալեքսանդր Շարաֆյանին, Հայկ Սողոմոնյանին, Խաչատուր Կեորկովին, իրեն Թամանցև անվանողին, Լևոն Թայիրյանին, Հակոբ Խաչատուրովին, Ասլան Սարգիսովին, ապա նրանց Քրեական դատավարության 102-րդ հոդվածից բացի որպես մեղադրյալների՝ ներգրավել նաև Պատժի մասին կանոնադրության 13-րդ, 120-րդ և 1453-րդ հոդվածներով:

Բնագիրը՝ համապատասխան ստորագրություններով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 3, գ. 1, թթ. 328-344:
Թարգմանություն ռուսերենից: